ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մակրոտնտեսական իրավիճակը **5**

Փոխհարաբերությունները ՀՀ պետբյուջեի հետ **13**

Արտաքին հատվածը **17**

Դրամավարկային քաղաքականություն **21**

Ֆինանսական շուկա **32**

ՀՀ բանկերի և վարկային կազմակերպությունների գործունեությունը **37**

Վճարահաշվարկային հարաբերություններ **43**

Մակրոտնտեսական ցուցանիշները 2005 թ. հունվար – հունիսին **50**

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ **64**

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վիճակագրության վարչություն
ՀՀ բանկերում իրականացված հարցման արդյունքները (2005 թ. մայիս) **65**

Վիճակագրության վարչություն
ՀՀ ԿԲ կողմից տնային տնտեսություններում, ֆինանսական և ոչ ֆինանսական կազմակերպություններում իրականացված հարցումների արդյունքները (2005 թ. հունիս) **74**

Հարություն Սարգսյան, Վարդան Արամյան
Ռուսաստանի Դաշնության մակրոտնտեսական իրավիճակը 1998-2004 թթ. **86**

Վահագն Գրիգորյան
Մակրոտնտեսական իրավիճակը ԱՄՆ-ում **115**

Մարգարիտ Մամիկոնյան
Եվրոբանկի և Հայաստանի Հանրապետության փոխհարաբերությունները (2004 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ) **140**

Մարգարիտ Մամիկոնյան
Համաշխարհային բանկի և Հայաստանի Հանրապետության փոխհարաբերությունները (2004 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ) **152**

Լուսինե Հարությունյան
ՀՀ արտաքին պարտքը 2004 թվականին **172**

Վիճակագրության վարչություն
Հայաստանի Հանրապետության վճարային հաշվեկշիռն ու միջազգային ներդրումային դիրքը 2004 թվականին **183**

2005 թվականի առաջին կիսամյակում, գնաճի ցածր մակարդակի պայմաններում, շարունակվեցին տնտեսական աճի բարձր տեմպերը, որի արդյունքում տնտեսական աճը, 1 տոկոսային կետով գերազանցելով նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը, կազմել է 10.2%, գնաճը 2004թ. դեկտեմբերի նկատմամբ՝ 1.4%, իսկ ՀՆԱ դեֆլյատորն ավելացել է 6.0%-ով:

Կիսամյակի ընթացքում տնտեսական ակտիվության նման բարձր մակարդակի վրա իր ազդեցությունն է թողել նախորդ տարիներին արձանագրված արտաքին ֆինանսական ներհոսքը՝ մեծածավալ արտաքին ներդրումները և մասնավոր տրանսֆերտները: Վերջինիս արդյունքում որոշակիորեն արժևորվել է դրամի փոխարժեքը՝ նպաստելով տնտեսությունում ընթացող դրամայնացման գործընթացին:

Տնտեսական բարձր աճը համախառն առաջարկի մասով պայմանավորվել է առաջին հերթին շինարարության և գյուղատնտեսության ճյուղերում արձանագրված աննախադեպ բարձր իրական աճով: Ընդ որում, գյուղատնտեսության համախառն արտադրանքի 10.2% իրական աճը պայմանավորվել է բարենպաստ բնակլիմայական պայմանների արդյունքում ստացված բարձր բերքատվությամբ, իսկ կապիտալ շինարարության ծավալների ավելացումը՝ հիմնականում կազմակերպությունների և բնակչության կողմից իրականացվող շինարարության աճով:

Համախառն պահանջարկի մասով շինարարության աճի բարձր տեմպերն արտացոլվեցին մասնավոր ներդրումների աճի տեմպի ցուցանիշում, իսկ գյուղատնտեսության արտադրանքի աճը արտահայտվեց մասնավոր սպառման, ինչպես նաև արտահանման ծավալների ավելացմամբ: Արտահանման ծավալների աճի բարձր տեմպը պայմանավորվել է նաև արտաքին շուկաներում մշտական բարձր պահանջարկ ունեցող գունավոր մետաղների արտահանման ծավալների ավելացմամբ:

2005 թվականին իրականացված հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը ծրագրվածի համեմատ պակաս ընդլայնող էր, իսկ ծախսումների մասով այն խիստ անհավասարաչափ էր բաշխված կիսամյակի ընթացքում (պետական ծախսերի զգալի մասը կատարվել է եռամսյակների վերջին ամիսների կեսից):

Տնտեսական աճի՝ նախատեսվածից բարձր և գնաճի ցածր մակարդակների պարագայում դրամի արժևորման արդյունքում տնտեսությունում սկսված դրամայնացման գործընթացը խթանելու համար ՀՀ կենտրոնական բանկը 2005 թվականի առաջին կիսամյակի ընթացքում պարբերաբար հանդես է եկել արտարժույթի առքի գործառնություններով, որոնք, գնաճային ճնշումներից խուսափելու նպատակով, զուգորդվել են իրացվելիությունը ներքաշող գործիքների կիրառմամբ:

ՀԱՄԱԽԱՌՆ ՊԱՀԱՆՋԱՐԿ[1]

2005 թվականի առաջին կիսամյակում տնտեսական աճը պայմանավորվել է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին պահանջարկի աճով: Ընդ որում, ներքին պահանջարկն աճել է 8.3%-ով, իսկ դրա կառուցվածքում զգալիորեն ավելացել է մասնավոր ներդրումների տեսակարար կշիռը և կազմել 11.4%: Միևնույն ժամանակ, արտաքին պահանջարկի աճը հիմնականում ներքին տնտեսության մրցունակ ճյուղերի, մասնավորապես՝ մետաղագործական և սննդի արդյունաբերության արտադրանքի արտահանման ծավալների ավելացման արդյունք էր:

[1] *«Համախառն պահանջարկ» բաժնում ներկայացված 2005թ. առաջին կիսամյակի տվյալները ԿԲ գնահատումներն են:*

Համախառն պահանջարկի տարրերի իրական փոփոխությունները (%)

Ցուցանիշներ	2004 թվականի առաջին կիսամյակը 2003 թվականի առաջին կիսամյակի համեմատ, փաստ., %	2005 թվականի առաջին կիսամյակը 2004 թվականի առաջին կիսամյակի համեմատ, փաստ., %	2005 թվականի առաջին կիսամյակը 2004 թվականի առաջին կիսամյակի համեմատ, ծրագիր, %
Իրական ՀՆԱ	109.1	110.2	107.4
Ներքին պահանջարկ	110.0	108.3	107.9
Սպառում	110.1	106.4	105.8
Պետական	113.5	100.8	102.1
Մասնավոր	109.6	107.3	106.4
Կապիտալ ներդրումներ	109.2	116.8	118.5
Պետական	66.8	112.1	142.6
Մասնավոր	126.0	117.8	113.4
Ապրանքների և ծառայությունների արտահանում	105.6	119.8	107.8
Ապրանքների և ծառայությունների ներմուծում	105.2	104.0	105.1

Կիսամյակային արդյունքներով՝ ներքին պահանջարկն ավելացել է 8.3%-ով՝ 7.9% կանխատեսված ցուցանիշի փոխարեն: Ընդ որում, մասնավոր հատվածի ծախսերն ավելացել են 9%-ով՝ պայմանավորված ինչպես մասնավոր սպառման, այնպես էլ մասնավոր ներդրումների ավելացմամբ: Ընդ որում, մասնավոր սպառման 7.3% աճը արձանագրվել է նախորդ տարիների բարձր տնտեսական աճի և մեծածավալ մասնավոր տրանսֆերտների ներհոսքի արդյունքում: Մասնավոր սպառման աճին մեծապես նպաստել է նաև բանկային համակարգի կողմից ֆիզիկական անձանց տրված վարկերի ծավալների 45%-ով աճը, որոնց մեծ մասը տրամադրվել է սպառողական վարկերի ձևով:

Մասնավոր ներդրումների իրական աճը կազմել է 17.8%՝ կանխատեսված 13.4%-ի փոխարեն: Նշվածը հիմնականում պայմանավորվել է վերջին տարիներին բնակչության եկամուտների անընդհատ աճով, տնտեսությունում ներդրումային դաշտի բարելավմամբ:

Պետական ծախսերի կառուցվածքում թերակատարվել են ինչպես սպառման, այնպես էլ ներդրումների ծրագրային ցուցանիշները: Պետական ծախսերի փաստացի աճը կազմել է 3.3%, մինչդեռ ակնկալվում էր աճի 11.4% ցուցանիշ: Վերջինիս հիմնական պատճառը արտաքին ֆինանսավորման թերստացմամբ պայմանավորված՝ ծախսերի թերի կատարումն էր:

Կիսամյակի ընթացում զգալի ավելացել է արտաքին պահանջարկը՝ արտահանումը իրական արտահայտությամբ ավելացել է 19.3%-ով՝ նախատեսված 7.8%-ի փոխարեն: Արտահանման աճը հիմնականում տեղի է ունեցել ոչ թանկարժեք մետաղների արտահանման աննախադեպ բարձր՝ 189% աճի հաշվին՝ պայմանավորված համաշխարհային շուկայում մետաղների նկատմամբ պահանջարկի աճով, որի արդյունքում մետաղագործական արդյունաբերության ոլորտում գրանցվել է արտադրության 44.8% աճ: Զգալի՝ մոտ 15%-ով ավելացել են նաև թանկարժեք և կիսաթանկարժեք մետաղների արտահանման ծավալները: Տնտեսությունում ներդրումների աճի միտումը արտահայտվել է նաև ներմուծման կառուցվածքում: Կիսամյակի ընթացքում արձանագրված ներմուծման 4.0% իրական աճը առավելապես պայմանավորվել է ներդրումային և հումքային ապրանքների ներմուծման ծավալների շուրջ 33% աճով:


ՀԱՄԱԽԱՌՆ ԱՌԱՋԱՐԿ

2005 թվականի առաջին կիսամյակում փոփոխվել են տնտեսության ճյուղային միտումները. նախորդ տարվա համեմատությամբ որոշակիորեն դանդաղել է ծառայությունների ոլորտի աճը, որի հետևանքով դրա տեսակարար կշիռը ՀՆԱ-ում նվազել է 2 տոկոսային կետով և կազմել 35.6%, իսկ նպաստումը տնտեսական աճին, նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ, նվազել է 1.8 տոկոսային կետով և կազմել 3.8 տոկոսային կետ:


[2] «Համախառն առաջարկ» բաժնում ներկայացված 2004-2005 թթ. տվյալները հունվար-հունիսի դրությամբ են, իսկ իրական աճերը՝ նախորդ տարվա հունվար-հունիսի նկատմամբ:

Հաշվետու ժամանակահատվածում շինարարության ոլորտում արձանագրված բարձր իրական աճի արդյունքում 3 տոկոսային կետով ավելացել է դրա տեսակարար կշիռը ՀՆԱ-ում, և նպաստումը տնտեսական աճին կազմել է 2.9 տոկոսային կետ՝ նախորդ տարվա 1 տոկոսային կետի փոխարեն:

Զուտ անուղղակի հարկերի նպաստումը տնտեսական աճին կազմել է 0.8 տոկոսային կետ, մինչդեռ դրանց տեսակարար կշիռը ՀՆԱ կառուցվածքում մնացել է գրեթե անփոփոխ:



ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ: 2005 թվականի առաջին կիսամյակում արդյունաբերության ոլորտում կատարվել են զգալի տեղաշարժեր. հանքագործական արդյունաբերության անկման պարագայում էապես ավելացել են էներգետիկայի և մշակող արդյունաբերության իրական աճի տեմպերը, որի արդյունքում արդյունաբերության համախառն թողարկման ֆիզիկական ծավալի աճը կազմել է 5.3%՝ 2004թ. 2.8%-ի փոխարեն: Աճել է մետաղագործական արդյունաբերության տեսակարար կշիռը, իսկ սննդի արդյունաբերության, ոսկերչական իրերի արտադրության և քիմիական արդյունաբերության տեսակարար կշիռները նվազել են:



Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության և բաշխման ոլորտում արձանագրված 10.2% իրական աճը պայմանավորվել է էլեկտրաէներգիայի, տաք ջրի և գոլորշու արտադրության և բաշխման՝ 5.3% և վառելիքի արտադրության ու բաշխման՝ 53.8% ավելացմամբ: Վերջինս հանրապետությունում շարունակվող՝ բնակարանների գազաֆիկացման աշխատանքների ակտիվացման արդյունք է:

Հանքագործական արդյունաբերության ենթաճյուղում, ի տարբերություն նախորդ տարիների, արձանագրվել է 1.9% իրական անկում՝ հիմնականում պայմանավորված ոսկու արդյունահանման էական կրճատմամբ: Չնայած գունավոր մետաղների արդյունահանման ծավալների կայուն աճին, մետաղե հանքաքարերի արդյունահանումը իրական արտահայտությամբ նվազել է 2.1%-ով:

Մշակող արդյունաբերության ճյուղում շարունակվել են տարվա սկզբից ձևավորված զարգացումները, որոնք էապես շեղվել են նախորդ տարվա միտումներից: Այսպես, սննդի արդյունաբերության անկմանը զուգահեռ, արձանագրվել է մետաղագործության զգալի աճ, այնինչ 2004 թվականին պատկերը հակառակն էր:

Արդյունաբերության հիմնական ճյուղերի ցուցանիշները 2004-2005թթ. առաջին կիսամյակում, %

Արդյունաբերության ճյուղ	Տեսակարար կշիռ*		Իրական աճ (+) / նվազում (-) **	
	2004	2005	2004	2005
Էլեկտրաէներգիա, գազ և ջրամատակարարում	20.5	17.5	2.5	10.2
Հանքագործական արդյունաբերություն	15.8	18.8	4.9	-1.9
Մշակող արդյունաբերություն, որից՝	63.7	63.7	4.8	6.1
Սննդի արդյունաբերություն	32.6	27.1	10.4	-1.0
Մետաղագործական արդյունաբերություն	10.9	20.5	-10.2	45.2
Ծխախոտի արտադրություն	2.5	2.5	5.8	29.1
Ոսկերչական արտադրատեսակների արտադրություն	4.0	2.4	-10.8	-7.2
Քիմիական արդյունաբերություն	3.2	2.3	270.0	0.0
Մեքենաների և սարքավորումների արտադրություն	1.0	0.9	10.6	9.1
Ամբողջ արդյունաբերություն	100.0	100.0	2.8	5.3

** Ընթացիկ տարում տեսակարար կշիռը ողջ արդյունաբերության մեջ (արտադրանքի ծավալները հաշվարկված են ընթացիկ գներով):*

*** Տվյալ ճյուղի համախառն արտադրանքի իրական աճ / նվազում (աճերը հաշվարկված են համադրելի գներով):*

Սննդի արդյունաբերությունում 2005 թվականի սկզբից արձանագրվող անկումը պայմանավորվել է ալկոհոլային խմիչքների արտադրության 2.7% նվազմամբ: Ընդ որում, եթե առաջին եռամսյակում դա տեղի է ունեցել կոնյակի արտադրության ծավալների նվազման հաշվին, ապա երկրորդ եռամսյակում հիմնական պատճառ է հանդիսացել գինիների արտադրության նվազումը: Դրա հետ մեկտեղ, 16.7%-ով նվազել են ոչ ալկոհոլային խմիչքների արտադրության ծավալները և 2.6%-ով՝ բնական հյութերի արտադրությունը: Գյուղատնտեսական մթերքների հարուստ բերքի պարագայում մոտ 4 անգամ ավելացել է պահածոների արտադրությունը, որը, սակայն, էական ազդեցություն չի ունեցել սննդի արդյունաբերության թողարկման ծավալների վրա:

Ի տարբերություն նախորդ տարվա ընթացքում գրանցված անկման, հաշվետու տարվա սկզբից մետաղագործական արդյունաբերությունում արձանագրվել են աճի բարձր տեմպեր, և տարվա առաջին կիսամյակի արդյունքներով՝ ճյուղի արտադրանքի ֆիզիկական ծավալի աճը կազմել է 45.2%: Արդյունքում՝ ճյուղի տեսակարար կշիռը ողջ արդյունաբերության մեջ ավելացել է 10 տոկոսային կետով և կազմել 20.5%: Դա պայմանավորվել է ցինկի խտանյութի և կոնվերտորային (սև) պղնձի արտադրության՝ համապատասխանաբար 86.6% և 41.2% աճով: Դրան համահունչ, մոտ 190%-ով ավելացել է նաև ճյուղի արտադրանքի արտահանումը: Մետաղագործական արդյունաբերության արտադրանքի նման աճին մեծապես նպաստել է գունավոր մետաղների համաշխարհային գների՝ դեռ նախորդ տարվա վերջից սկսված շարունակական աճը:

Մանրածախ առևտրի շարունակական աճի արդյունքում 61%-ով ավելացել է սառնարանային ցուցափեղկերի արտադրությունը, որը, այլ մեքենաների և սարքավորումների արտադրության իրական նվազման պայմաններում, ապահովել է նշված արտադրական խմբի 9.1% իրական աճը:

Քիմիական արդյունաբերությունում ավելացել են պլաստմասսե արտադրատեսակների (33.7%), քիմիկաղեղագործական արտադրանքի (32%), ինչպես նաև լվացող և մաքրող միջոցների (20%) արտադրության ծավալները: Այնուամենայնիվ, քիմիական արդյունաբերության մոտ կեսը կազմող սինթետիկ կաուչուկի արտադրության մոտ 6%-ով նվազման պատճառով այս ճյուղի համախառն արտադրանքի աճ չի արձանագրվել:

Կապիտալ շինարարության շարունակական զգալի աճը հանգեցրել է դրան հարակից արդյունաբերության ճյուղերի արտադրության ծավալների ավելացման: Այսպես, 2.7 անգամ ավելացել է կիրի, 43.9%-ով՝ ցեմենտի, 6.8%-ով՝ բետոնի և 6.1%-ով՝ բնական քարից երեսպատման սալերի արտադրությունը:

Վերը նշված զարգացումների արդյունքում՝ մշակող արդյունաբերության արտադրանքի ֆիզիկական ծավալների աճը, 2.7 տոկոսային կետով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը, կազմել է 6.1%:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ: 2005 թ. առաջին կիսամյակում արձանագրվել է գյուղատնտեսության համախառն արտադրանքի աննախադեպ բարձր՝ 10.2% աճ՝ բուսաբուծության թողարկման ծավալների 51.8% աճի հաշվին: Վերջինս պայմանավորվել է բարենպաստ բնակլիմայական պայմանների արդյունքում պտղի և հատապտղի, կարտոֆիլի և բանջարանոցային մշակաբույսերի բերքի՝ համապատասխանաբար 30 անգամ, 4.2 անգամ և 2.7 անգամ աճով:


Անասնաբուծության բնագավառում արձանագրված 0.7% աճը կաթնամթերքի և մսամթերքի արտադրության ծավալների՝ համապատասխանաբար 3.9% և 2.7% ավելացման արդյունք է: Միևնույն ժամանակ, ձվի գնի մոտ 7%-ով նվազմանը զուգընթաց, մոտ 10%-ով նվազել են արտադրության ծավալները:

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ: Կապիտալ շինարարության ոլորտում շարունակվել է դեռ տարվա սկզբից դրսևորված աճի տեմպի արագացման միտումը, որի արդյունքում 2005 թվականի առաջին կիսամյակի իրական աճը կազմել է 43%՝ նախորդ տարվա 12.1%-ի փոխարեն:

Ընդ որում, շինարարության ծավալների նման աճը պայմանավորվել է բնակչության և կազմակերպությունների միջոցներից ֆինանսավորված շինարարության աճով, իսկ դրանց նպաստումը ընդհանուր շինարարության աճին կազմել է համապատասխանաբար 29.3 և 13.3 տոկոսային կետ:

Ընդհանուր առմամբ, շինարարության ֆինանսավորման աղբյուրների կառուցվածքում զգալի տեղաշարժ չի եղել, քանզի դրանցից բոլորի գծով արձանագրվել է զգալի աճ:

Կապիտալ շինարարության ֆինանսավորման աղբյուրների կառուցվածքը 2004 և 2005 թվականների հունվար-հունիսին



1. Պետական բյուջե, 2. Արտաքին վարկ, 3. Մարդասիրական օգնություն, 4. Կազմակերպություններ, 5. Բնակչության միջոցներ

Կապիտալ շինարարության ճյուղային կառուցվածքում մոտ 7 տոկոսային կետով ավելացել է մշակող արդյունաբերության ոլորտում իրականացված շինարարության տեսակարար կշիռը և կազմել 11.4%: Մոտ 11 տոկոսային կետով ավելացել է նաև բնակարանային շինարարության տեսակարար կշիռը և կազմել 49%:

Հաշվետու տարվա առաջին կիսամյակում աղետի գոտում իրականացված կապիտալ շինարարությունը, նախորդ տարվա համեմատ իրական արտահայտությամբ նվազելով մոտ 6%-ով, կազմել է հանրապետությունում իրականացված կապիտալ շինարարության ընդամենը 2.9%-ը: Ընդ որում, եթե 2004 թվականին այն հիմնականում ֆինանսավորվել է համաշխարհային բանկի վարկի հաշվին, որը կազմել է ֆինանսավորման աղբյուրների 38%-ը, ապա 2005 թվականին ֆինանսավորման հիմնական աղբյուրն էին պետական բյուջեն (44%) և բնակչության միջոցները (33%):

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Ծառայությունների ոլորտում նախորդ տարիներին գրանցված բարձր աճի տեմպերը տարվա սկզբին որոշակի նվազել են: Այսպես, առևտրի և հանրային սննդի ծառայությունների ավելացված արժեքի աճը կազմել է 4.9%՝ նախորդ տարվա 10.1%-ի փոխարեն, իսկ տրանսպորտ և կապի իրական աճը՝ 9.5%՝ նախորդ տարվա 13.4%-ի փոխարեն:

Այնուհանդերձ, մատուցված ծառայությունների կառուցվածքը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ գրեթե չի փոփոխվել. շարունակել են գերակշռել տրանսպորտի (32.2 %) և կապի (24.6%) ծառայությունները:

Տրանսպորտի ոլորտում զգալի ավելացել է բեռնաշրջանառության աճի տեմպը. 2005թ. առաջին կիսամյակում այն կազմել է 13.6%՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում՝ 2.9%: Աճի նման բարձր ցուցանիշը հանրապետությունում գազիֆիկացման գործընթացի արագացմամբ պայմանավորված մայրուղային խողովակաշարային տրանսպորտով իրականացվող բեռնաշրջանառության 24% աճի արդյունք է: Միևնույն ժամանակ, դանդաղել է ուղևորաշրջանառության աճի տեմպը՝ պայմանավորված՝ օդային տրանսպորտով ուղևորաշրջանառության աճի նվազմամբ: Տաքսիներով ուղևորաշրջանառությունը ավելացել է մոտ 210%-ով՝ պայմանավորված այդ ծառայության առաջարկի ընդլայնման արդյունքում սակագների մոտ 8%-ով նվազմամբ, ինչպես նաև բնակչության եկամուտների շարունակական աճով:

Կապի ծառայությունների հասույթն ավելացել է 18.3%-ով՝ նախորդ տարվա 16.9%-ի փոխարեն: Ընդ որում, էական տեղաշարժ է արձանագրվել բջջային հեռահաղորդակցության ոլորտում. հասույթն ավելացել է 47% -ով, որի արդյունքում դրա տեսակարար կշիռը կապի բոլոր ծառայություններից ստացված հասույթի մեջ կազմել է 31.7%՝ նախորդ տարվա 6%-ի փոխարեն: Հաշվի առնելով, որ հուլիսի 1-ից Հայաստանի բջջային հեռախոսակապի շուկա մուտք է գործել նոր օպերատոր, ակնկալվում է, որ տարվա երկրորդ կիսամյակում ծառայությունների ծավալների ավելացման հաշվին ավելանալու է բջջային կապից ստացվող հասույթը՝ չնայած սակագների որոշակի նվազմանը:

Առևտրաշրջանառության ցուցանիշն ավելացել է 6.2%-ով[3]: Ընդ որում, մանրածախ ապրանքաշրջանառության ծավալն ավելացել է 5.1%-ով (նախորդ տարի՝ 10.1%-ով):

ԳՆԵՐ ԵՎ ՍԱԿԱԳՆԵՐ

2005 թվականի համար ՀՀ ԿԲ կողմից ծրագրվել է՝ ժամանակահատվածի վերջի դրությամբ 3.0% և միջին տարեկան 2.2% գնաճ: Տարեկան գնաճի ցուցանիշն ապահովելու համար առաջին կիսամյակի վերջի դրությամբ և միջին գնաճի ցուցանիշները պետք է կազմեին համապատասխանաբար 4.0% և 1.9%: Ըստ ազգային վիճակագրական ծառայության փաստացի տվյալների՝ առաջին կիսամյակում արձանագրվել է՝ ժամանակահատվածի վերջի դրությամբ 1.4% գնաճ և միջին գնաճի 2.3% ցուցանիշ:

Հաշվետու ժամանակահատվածում գների մակարդակի ձևավորման վրա էական ազդեցություն են ունեցել տրանսֆերտների ներհոսքը, որն ատահայտվել է համախառն պահանջարկի աճով, ինչպես նաև գյուղատնտեսական մթերքների բարձր առաջարկը:

Համախառն պահանջարկի աճը սպառողական շուկայում դրսևորվել է հիմնականում հունվարին և արտահայտվել պարենային ապրանքախմբի նկատմամբ պահանջարկի աճով, որը գյուղատնտեսական մթերքների առաջարկի սեզոնային սահմանափակության պայմաններում հանգեցրել է պարենային ապրանքների, ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ, գների աննախադեպ բարձր՝ 7.7%[4] ավելացման: Ընդ որում, դա տեղի է ունեցել հիմնականում «Բանջարեղեն և կարտոֆիլ» և «Միրգ» ապրանքախմբերի՝ համապատասխանաբար 53.7%, 23.5% գնաճի հաշվին:

Գնաճի նման դրսևորումները շրջադարձվել են տարվա հաջորդ ամիսներին, առավելապես երկրորդ եռամսյակում, երբ գյուղատնտեսական մթերքների՝ սպասվածից բարձր բերքի արդյունքում արձանագրվել է դրանց գների զգալի նվազում: Վերջինս առաջին հերթին վերաբերում է «Բանջարեղեն և կարտոֆիլ» և «Միրգ» ապրանքախմբերին, որոնց գծով փետրվար-հունիս ամիսներին գրանցվել է համապատասխանաբար 19.4% գնանկում և 2.6% գնաճ:

Արդյունքում՝ առաջին կիսամյակում պարենային ապրանքների, ներառյալ «Ոգելից խմիչք և ծխախոտ» ապրանքախմբի գծով արձանագրված գնաճը նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ կազմել է 2%:

Ոչ պարենային ապրանքների (որոնց մեջ մեծ է ներմուծված ապրանքների տեսակարար կշիռը) գները նվազել են 0.6%-ով՝ չնայած փոխարժեքի արժեքավորմանը: Արձանագրվել է ներմուծված ոչ պարենային ապրանքների մոտ 0.7%-ով գնանկում, ընդ որում՝ բենզինի գները նվազել են 2.7%-ով:

Այն փաստը, որ մի շարք ներմուծվող ապրանքատեսակների գները չեն կրել դոլարի արժեզրկման ազդեցությունը, բացատրվում է հետևյալ հանգամանքներով:

Առաջինը, և ամենաէականը, որոշ ապրանքային շուկաների ոչ մրցակցային կամ մենաշնորհային պայմաններն են: Օրինակ՝ համաձայն ՀՀ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի՝ շաքարավազի շուկայում խոշորագույն ներմուծողի տեսակարար կշիռը կազմում է 97.9% (համեմատության համար նշենք, որ բենզինինը կազմում է 21.5%[5]), և շաքարավազի գները, չնայած դրամի արժեքավորմանը, գրեթե չեն փոփոխվել:

---

[3] 2004թ. համապատասխան ցուցանիշները բացակայում են, քանզի, սկսած 2005 թվականից, Ազգային վիճակագրական ծառայությունը փոխել է այդ ցուցանիշների ներկայացման ձևը, և այսուհետև դրանք հաշվարկվելու են ըստ «Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի»:

[4] «Գներ և սակագներ» բաժնում զետեղված ցուցանիշները 2004 թվականի դեկտեմբերի նկատմամբ են, եթե այլ բան նշված չէ:

[5] ՀՀ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի «2003 թվականի տարեկան գործունեության ծրագիր»:

2005 թ. (2004թ. դեկտ. = 100)	ՍԳԻ	Պարենային ապրանքներ (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	Ոչ պարենային ապրանքներ	Վճարովի ծառայություններ
Հունվար	105.4	107.7	100.8	100.2
Փետրվար	104.7	107.0	100.5	98.9
Մարտ	103.7	105.5	100.1	99.5
Ապրիլ	102.8	104.2	99.8	99.6
Մայիս	102.9	104.2	99.5	100.6
Հունիս	101.4	102.0	99.4	101.0

Այսինքն՝ որոշ ներմուծողներ, օգտվելով մենաշնորհային դիրքից կամ ոչ կատարյալ մրցակցային պայմաններից, չեն նվազեցրել իրենց կողմից ներմուծված ապրանքների գները:

Հաջորդ հանգամանքն այն է, որ դրամի փոխարժեքի արժեքավորումը որոշակի ժամանակ հետո է ազդում ներմուծվող ապրանքների գների մակարդակի վրա: Դա պայմանավորված է նրանով, որ ներմուծողների կողմից գների սահմանումը կախված է փոխարժեքի վարքագծի սպասումներից: Դրամի փոխարժեքի արժեքավորման և կայունացման երկար ժամանակահատված է անհրաժեշտ, որպեսզի տնտեսավարող սուբյեկտները ճշգրտեն իրենց կողմից ներմուծվող ապրանքների գները:

Միևնույն ժամանակ, ապրանքի գինը, բացի գնման գնից, կախված է նաև այլ ծախսերից, մասնավորապես՝ աշխատավարձից: Իսկ դոլարի արժեզրկմանը զուգահեռ, արծանագրվել է նաև պահանջարկի և աշխատավարձի աճ: Այսինքն՝ ներմուծվող գների կայունությունը կարելի է բացատրել նաև այս հանգամանքով:

Եվ վերջապես, շատ ապրանքների գները, պայմանավորված արգելանիվի էֆեկտով, նույնչափ ճկուն չեն նվազման ուղղությամբ, որքան՝ աճի:

Չնայած համախառն պահանջարկի ընդլայնմանը, եռամսյակի ընթացքում գրանցվել է ծառայությունների սակագների 0.5%-ով նվազում՝ հիմնականում պայմանավորված տրանսպորտի և կապի ծառայությունների, ինչպես նաև բուժսպասարկման սակագների՝ համապատասխանաբար 1.1% և 3.2% նվազմամբ: Միևնույն ժամանակ, սպառողական զամբյուղում ընդգրկված այլ ծառայությունների գները բարձրացել են (մասնավորապես՝ հագուստի կարի ծառայության գներն աճել են 8.8%-ով, քիմմաքրմանլվացքատան ծառայություններինը՝ 1.8%-ով, կենցաղային սարքերի նորոգմանը՝ 0.6%-ով, իսկ մշակույթի ոլորտինը՝ 1.8%-ով): Պահանջարկի աճին զուգահեռ ծառայությունների գների համեմատաբար չեզոք վարքագիծը բացատրվում է այն հանգամանքով, որ ծառայություններն, ի տարբերություն, օրինակ, արդյունաբերության, պահանջարկի աճին ավելի հետշտությամբ կարող են արձագանքել թողարկման ծավալների աճով՝ ցածր կապիտալատարության և աշխատուժի որակավորման նկատմամբ համեմատաբար ցածր պահանջների շնորհիվ:

ՀՆԱ ԴԵՖԼՅԱՏՈՐ ԵՎ ՑՅՈՒՂԱՅԻՆ ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍՆԵՐ [6]

2005 թվականի առաջին կիսամյակում ՀՆԱ դեֆլյատորը, գերազանցելով գնաճի մակարդակը, կազմել է 106%: Նման բարձր ցուցանիշը հիմնականում պայմանավորվել է շինարարության և արդյունաբերության ճյուղերում արծանագրված գների բարձր աճով:


Վերջին տարիներին շինարարության ճյուղում գրանցվող իրական աճի բարձր տեմպերի արդյունքում 2005 թվականի հունվար-մայիսին, նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ, ճյուղում արծանագրվել է միջին աշխատավարձի մոտ 20%-ով իրական աճ: Վերջինս, արտացոլելով շինարարության մեծ մասը կազմող շինմոնտաժային աշխատանքների գների ինդեքսը, հանգեցրել է հաշվետու ժամանակահատվածում շինարարության գների 15.2% աճի:

Արդյունաբերության ճյուղում շարունակվել են նախորդ տարվանից դրսևորված՝ գների բարձր աճի միտումները՝ պայմանավորված մետաղագործության ճյուղում արծանագրվող գների ինդեքսի շարունակական աճով: Այսպես, 2005 թվականի առաջին կիսամյակում գունավոր մետաղագործության արտադրանքի գների 52.9% աճը, որը գունավոր մետաղների համաշխարհային գների ավելացման հետևանք է, հանգեցրել է արդյունաբերական արտադրանքի գների 11.9%-ով բարձրացման: Միևնույն ժամանակ, գյուղատնտեսության բերքի ավելացման արդյունքում որոշակի նվազել են սննդի արդյունաբերության գները, որի ինդեքսը կազմել է 94.3%:

[6] *«ՀՆԱ դեֆլյատոր և ճյուղային գների ինդեքսներ» բաժնում զետեղված ցուցանիշները 2005 թ. հունվար - հունիսը 2004 թ. հունվար - հունիսի նկատմամբ են, եթե այլ բան նշված չէ:*

Բերքի զգալի ավելացումը հանգեցրել է գյուղատնտեսության մոտ կեսը կազմող բուսաբուծության արտադրանքի գների 9.2%-ով նվազման: Անասնապահական մթերքի գները բարձրացել են 6.2%-ով՝ պայմանավորված բնակչության բարեկեցության բարձրացման արդյունքում դրանց նկատմամբ պահանջարկի աճով: Արդյունքում, ըստ 2005 թվականի առաջին կիսամյակի արդյունքների, գյուղատնտեսական արտադրանքի իրացման գների աճը կազմել է 1%՝ նախորդ տարվա 2.5%-ի փոխարեն:

2004-2005 թվականի առաջին կիսամյակների ընթացքում գների փոփոխություններն ըստ տնտեսության առանձին ճյուղերի (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ)



Ծառայությունների սակագները զգալի նվազել են: Մասնավորապես, բառնափոխադրումների գների ինդեքսը 2005 թվականի առաջին կիսամյակում նվազել է 12.7%-ով: Նման գնանկումը հիմնականում պայմանավորվել է խողովակաշարային տրանսպորտով բեռնափոխադրումների սակագների մոտ 17% նվազմամբ: Գրեթե նույն չափով նվազել են նաև երկաթուղային տրանսպորտով բեռնափոխադրումների սակագները:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱ

2005 թվականի հունվար-հունիսին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, գործազրկության մակարդակը նվազել է 1 տոկոսային կետով և կազմել 8.6%: Տնտեսապես ակտիվ բնակչության միջին թվաքանակը տնտեսությունում կազմել է 1210.6 հազար մարդ, որոնցից 103.9 հազարը չի ունեցել աշխատանք և գրանցվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «ՀՀ զբաղվածության պետական ծառայության» գործակալությունում՝ որպես գործազուրկ:

Կիսամյակի ընթացքում աշխատուժի նկատմամբ պահանջարկի հիմնական մասը ներկայացվել է մասնավոր հատվածի կողմից. արդյունքում՝ աշխատուժ առաջարկողների գերակշիռ մասը՝ 67%-ը, տեղավորվել է աշխատանքի մասնավոր հատվածում: Պետական հատվածում աշխատանքի է տեղավորվել աշխատանք առաջարկողների շուրջ 25%-ը:


Տնտեսությունում շարունակել է բարձրանալ աշխատանքի արտադրողականությունը՝ կիսամյակի ընթացքում գրանցված գործազրկության մակարդակի 1 տոկոսային կետով նվազման և 10.2% տնտեսական աճի պայմաններում արտադրողականության աճը կազմել է 9.2%:

Արտադրողականության աճին զուգընթաց, տնտեսությունում շարունակաբար ավելացել է աշխատուժի նկատմամբ պահանջարկը, որի արդյունքում արձանագրվել է իրական աշխատավարձի 25.5%-ով աճ: Իրական աշխատավարձի աճը, գերազանցելով արտադրողականության աճի ցուցանիշը, որոշակիորեն խթանել է գների աճը:


Փոխհարաբերությունները ՀՀ պետական բյուջեի հետ [1]

2005 թվականի առաջին կիսամյակում արձանագրվել է ծրագրված համամասնությունների նկատմամբ պետական բյուջեի եկամուտների գերակատարում, իսկ ծախսերի՝ թերակատարում:

Ամբողջական պահանջարկի վրա հարկաբյուջետային քաղաքականությունը ծրագրված 5.9 ընդլայնողի[2] փոխարեն ունեցել է 1.9 ընդլայնող ազդեցություն: Ընդ որում, եկամուտների ազդակը կազմել է 1.2 զսպող, իսկ ծախսերինը՝ 3.1 ընդլայնող: Ազդակի շեղումը հիմնականում բացատրվում է առաջին կիսամյակի ճշտված ծրագրի նկատմամբ փաստացի ծախսերի 18 տոկոս թերակատարմամբ: Չնայած վերջինիս, հարկաբյուջետային ազդակը ստացվում է ընդլայնող, քանի որ համեմատությունը կատարվում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ, երբ բյուջեն ունեցել է զսպողական վարքագիծ:



ՀՀ պետական բյուջեի փաստացի եկամուտներն ու դրամաշնորհները կազմել են տարեկան ծրագրի 46.1 տոկոսը, իսկ հարկային եկամուտները (ներառյալ պետական տուրքը)՝ 45.0 տոկոսը, մինչդեռ ըստ ՀՀ 2005 թվականի պետբյուջեի եռամսյակային համամասնություններով նախատեսված առաջին կիսամյակի ծրագրի՝ նշված ցուցանիշները պետք է կազմեին համապատասխանաբար՝ 44.2 տոկոս և 44.3 տոկոս:




[1] *Հաշվետվությունում օգտագործվել են ԱՇՎ «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2005թ. հունվար-հուլիսին» տեղեկագրի հարկաբյուջետային հատվածի ցուցանիշները, իսկ որպես կիսամյակի ծրագիր՝ վերցված է 2005 թվականի ՀՀ պետբյուջեի եռամսյակային համամասնությունների և ՀՀ կառավարության որոշումներով կատարված փոփոխությունների ու լրացումների արդյունքում ստացված առաջին կիսամյակի ճշտված ծրագիրը:*

[2] *Ազդակների հաշվարկման մեթոդները ներկայացված են ՀՀ ԿԲ 2000 թ. ԴՔԾ-ի հավելված 3-ում: Ազդակների ծրագրային ցուցանիշների հաշվարկը կատարվել է 2005 թվականի ՀՀ պետբյուջեի եռամսյակային համամասնությունների հիման վրա:*

Նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատությամբ ՀՀ պետբյուջեի եկամուտներն ու դրամաշնորհները ՀՆԱ-ում ավելացել են 1.6 տոկոսային կետով և կազմել ՀՆԱ 22.8 տոկոսը: Ընդ որում, եկամուտներն ու դրամաշնորհներն աճել են 25.7 տոկոսով, հարկեր և տուրքերը՝ 19.6 տոկոսով, իսկ ոչ հարկային եկամուտները՝ 69 տոկոսով: Դա հիմնականում պայմանավորվել է Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի սեփականաշնորհումից առաջին եռամսյակում ստացված 6.2 մլրդ դրամ մուտքերով: Կապիտալ եկամուտների աճը կազմել է 416 տոկոս, որն ապահովվել է Երևանում տեղաբաշխված պետական սեփականություն հանդիսացող հողերի օտարումից ստացված մուտքերի հաշվին: Պետական բյուջեի հարկեր/ՀՆԱ ցուցանիշը, նախորդ նույն ժամանակահատվածի համեմատությամբ, ավելացել է 0.4 տոկոսային կետով և կազմել 19.8 տոկոս:

Հարկային եկամուտների մեջ, նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատությամբ, 3.8 տոկոսային կետով նվազել է անուղղակի հարկերի տեսակարար կշիռը և կազմել հարկերի 60.8 տոկոսը, իսկ անուղղակի հարկերի աճը կազմել է 12.5 տոկոս: Հատկանշական է ուղղակի հարկերի աստիճանական ավելացումը. ուղղակի հարկերն աճել են 4.5 տոկոսային կետով և կազմել հարկերի 24.5%-ը: Վերջիններիս մեջ ուշագրավ է շահութահարկի 62.9 տոկոսը և այն, որ տվյալ հարկատեսակը վերջին տարիներին ունի աճի բարձր միտում: Այլ հարկային եկամուտներն ավելացել են 26.2 տոկոսով, իսկ պետական տուրքը նվազել է 2.8 տոկոսով:

Եկամուտներն և դրամաշնորհները ծրագրվածի համեմատությամբ գերակատարվել են 5.5 տոկոսով, հարկերն ու տուրքերը՝ մոտ 2 տոկոսով, իսկ դրամաշնորհները՝ 4 տոկոսով:




Պետական բյուջեի ծախսերը կազմել են ՀՆԱ 23.3 տոկոսը՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ՀՆԱ-ում ավելացել են 0.9 տոկոսային կետով: Սակայն փաստացի ծախսերը կազմել են ծրագրվածի 82 տոկոսը, ընդ որում՝ ընթացիկ ծախսերը կազմել են ծրագրվածի 89 տոկոսը, կապիտալ ծախսերը՝ 57 տոկոսը, իսկ զուտ վարկավորումը՝ 98 տոկոսը: Նշենք, որ կապիտալ ծախսերի թերի կատարումը պայմանավորվել է ինչպես արտաքին ֆինանսավորման թերստացմամբ, այնպես էլ ներքին ֆինանսավորման կապիտալ ծախսերի՝ նախատեսված ծավալների թերի կատարմամբ՝ ծրագրված մակարդակների նկատմամբ փաստացին կազմել է համապատասխանաբար 52 տոկոս և 74 տոկոս:

Նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատ ծախսերն ավելացել են 21.6 տոկոսով. ընթացիկ ծախսերը՝ 18.5 տոկոսով, զուտ վարկավորումը՝ 19.3 տոկոսով, իսկ կապիտալ ծախսերը՝ 41.1 տոկոսով: Ընթացիկ ծախսերի մեջ պետական սպառումը և տրանսֆերտները աճել են համապատասխանաբար 17.2 տոկոսով և 44.1 տոկոսով, իսկ սուբսիդիաները նվազել են 21.3 տոկոսով: Տրանսֆերտների աճը եկամուտների անհավասարության մեղմման դրական նախադրյալ է, որը բխում է նաև պետական միջինժամկետ ծախսերի ծրագրի գերակայություններից:


Պետբյուջեի եկամուտների ծրագրված մակարդակների ապահովմանը զուգընթաց, կիսամյակի ընթացքում մեղմվել է նաև հարկերի հավաքագրման անհամաչափությունը. երկրորդ եռամսյակի ամիսների վերջին երեք օրերին հավաքագրված հարկերի միջին ցուցանիշը կազմել է ընդհանուր հարկերի 16 տոկոսը՝ առաջին եռամսյակի 19.6 տոկոսի փոխարեն, իսկ նախորդ տարի նույն ցուցանիշները կազմել են՝ երկրորդ եռամսյակում 26 տոկոս և առաջին եռամսյակում՝ 25 տոկոս:

Հարկերի հավաքագրման ոլորտում դրական միտումները կիսամյակի ընթացքում ուղեկցվել են ծախսերի՝ ծրագրված սահմանաչափերից թերի կատարմամբ և ծրագրային անհամապատասխանություններով: Այսպես, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից ներկայացված պետական

բյուջեի ամսական ծրագրերի արդյունքում ձևավորված եռամսյակային ծրագրերը չեն համապատասխանել բյուջեի եռամսյակային համամասնություններով նախատեսված սահմանաչափերին, որը որոշակի անորոշություններ է առաջացրել դրամավարկային քաղաքականության մշակման գործընթացում: Ձգալի միջոցներ են կուտակվել ՀՀ գանձապետարանի միասնական և Կառավարության ժամկետային ավանդների հաշիվներում, որոնց միջին օրական մեծությունը առաջին կիսամյակում կազմել է 65 մլրդ դրամ՝ նախորդ տարվա առաջին կեսի 38.3 մլրդ դրամի փոխարեն: Ընդ որում, հունիսի վերջի դրությամբ միասնական հաշվի մնացորդը կազմել է 17.5 մլրդ դրամ, իսկ ժամկետային ավանդի հաշվում միջոցների մնացորդը՝ 43.5 մլրդ դրամ:



Պետբյուջեի եկամուտների և ծախսերի՝ վերը ներկայացված մակարդակների պայմաններում առաջին կիսամյակում պակասուրդը կազմել է 3.1 մլրդ դրամ՝ ծրագրված 42.7 մլրդ դրամի փոխարեն: Պակասուրդի ֆինանսավորումը ըստ աղբյուրների ունեցել է հետևյալ կառուցվածքը. ներքին աղբյուրներից բացասական ֆինանսավորումը կազմել է 3.6 մլրդ դրամ, իսկ արտաքին աղբյուրներից ֆինանսավորումը՝ 6.7 մլրդ դրամ: Ներքին աղբյուրներից խնայողությունների հիմնական պատճառը կիսամյակի ընթացքում Գանձապետարանի միասնական հաշվում և ժամկետային ավանդների հաշվում Կառավարության միջոցների կուտակումներն են՝ պայմանավորված եկամուտների գերակատարմամբ, ծախսերի թերի կատարմամբ առաջացած խնայողություններով, պետական պարտատոմսերի լրացուցիչ թողարկումներով և ԿԲ-ում դրանց ավանդադրմամբ: Վերջինս իրականացվել է ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության համաձայնության արդյունքում և նպաստել բանկային համակարգի իրացվելիության կառավարմանը: Այսպես, ՀՀ կենտրոնական բանկում Կառավարության ավանդները առաջին եռամսյակի ընթացքում ավելացել են 37.3 մլրդ դրամով, իսկ երկրորդ եռամսյակում՝ 5.6 մլրդ դրամով: Իսկ ընդհանուր առմամբ, Կառավարության հաշիվներում միջոցների 17.6 մլրդ դրամ կուտակումը, եռամսյակային համամասնություններով առաջին կիսամյակի համար նախատեսված 24.8 մլրդ դրամի ծախսի դիմաց, մասամբ բացատրվում է արժեթղթերի լրացուցիչ թողարկումներով: Արդյունքում՝ պետական արժեթղթերի զուտ ֆինանսավորումը կազմել է 14 մլրդ դրամ՝ ծրագրված 5.4 մլրդ դրամի փոխարեն:



Պետական արժեթղթերի ժամկետայնության երկարացմանը զուգընթաց, շարունակվել է տոկոսադրույքների նվազման միտումը: Այսպես, հունիսին արժեթղթերի միջին եկամտաբերությունը ՊԿՊ-ի համար կազմել է 4.9 տոկոս՝ նախորդ տարվա հունիսի 5.3 տոկոսի փոխարեն, իսկ պետական միջինժամկետ արժեկտրոնային պարտատոմսերինը՝ 5.7 տոկոս՝ նախորդ տարվա 8.4 տոկոսի փոխարեն:

Արտաքին աշխարհի հետ Հայաստանի տնտեսության աստիճանական ինտեգրմանը զուգընթաց, շարունակում են ավելանալ արտաքին տնտեսական գործառնությունների ծավալները:

2005 թվականի դրամավարկային քաղաքականության ծրագրով առաջին կիսամյակում կանխատեսվում էր ապրանքների արտահանման ու ներմուծման ծավալների աճ՝ համապատասխանաբար 12 տոկոսով և 13 տոկոսով, ծառայությունների հաշվեկշռի պակասուրդի խորացում՝ 5 տոկոսով, իսկ մասնավոր ու պաշտոնական տրանսֆերտների աճ՝ համապատասխանաբար 16 և 13 տոկոսով: Արդյունքում՝ ակնկալվում էր դոլարային արտահայտությամբ ընթացիկ հաշվի պակասուրդի խորացում 10 տոկոսով, իսկ ընթացիկ հաշիվ/ՀՆԱ ցուցանիշի 8.9 տոկոս մակարդակ:

Ըստ ԿԲ գնահատումների[1] ապրանքների արտահանումը (կրեդիտ) 2005 թվականի առաջին կիսամյակում կազմել է 433 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ ավելանալով 94 մլն ԱՄՆ դոլարով (27.6 տոկոս): Արտահանման աճին էապես նպաստել են «Ոչ թանկարժեք քարեր, մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» և «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբերը, որոնց արտահանման ծավալները համապատասխանաբար ավելացել են են 94 մլն ԱՄՆ դոլարով (2.8 անգամ) և 21 մլն ԱՄՆ դոլարով (15 տոկոս): Աճել են նաև «Պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբի արտահանման ծավալները՝ 9 մլն ԱՄՆ դոլարով (29 տոկոսով):


2005 թվականի առաջին կիսամյակում ապրանքների ներմուծումը (դեբետ) կազմել է 700 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատ ավելանալով 146 մլն ԱՄՆ դոլարով (26.3 տոկոս): Ներմուծման աճ գրանցվել է բոլոր ապրանքախմբերի գծով՝ բացառությամբ երկու ապրանքախմբերի: Ապրանքների ներմուծման աճին էապես նպաստել է «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր», «Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ», «Պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբերի ներմուծման ծավալների աճը՝ համապատասխանաբար 47 մլն ԱՄՆ դոլարով (32 տոկոս), 27 մլն ԱՄՆ դոլարով (33 տոկոս), 19 մլն ԱՄՆ դոլարով (52 տոկոս): Իսկ «Հանքահումքային մթերքներ» և «Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» ապրանքախմբերից յուրաքանչյուրի ներմուծման ծավալներն ավելացել են 17 մլն ԱՄՆ դոլարով (համապատասխանաբար՝ 17 տոկոս և 27 տոկոս): Ներմուծման նման բարձր աճի տեմպերի վրա իրենց ազդեցությունն են թողել ինչպես բարձր տնտեսական աճը և բնակչության եկամուտների շարունակաբար ավելացումը, այնպես էլ փոխարժեքի արժեքավորումը, ինչը հարաբերականորեն էժանացրել է ներմուծվող ապրանքները:

Արտահանման ու ներմուծման նման վարքագծի պայմաններում ապրանքային հաշվեկշիռը խորացել է 52 մլն ԱՄՆ դոլարով՝ կազմելով 265 մլն ԱՄՆ դոլար: Ընդ որում, եթե արտաքին առևտուրը դիտարկենք առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի ցուցանիշների, ապա ապրանքների արտահանումն աճել է 39 տոկոսով, իսկ ներմուծման աճը կազմել է 24 տոկոս:

2005 թվականի առաջին կիսամյակում զուտ ծառայությունների հաշվեկշիռը լավացել է 10 մլն ԱՄՆ դոլարով՝ կազմելով 27 մլն ԱՄՆ դոլար: Ընդ որում, ծառայությունների արտահանումն ավելացել է 26 մլն ԱՄՆ դոլարով (23 տոկոս), իսկ ներմուծումը՝ 16 մլն ԱՄՆ դոլարով (11 տոկոս): Ծառայությունների արտահանման աճը պայմանավորվել է զբոսաշրջության, կապի ու տեղեկատվական տեխնոլոգիաների ծառայությունների արտահանման աճով: Եկամուտներ հոդվածի ցուցանիշը աճել է 25 մլն ԱՄՆ դոլարով (մոտ 10 անգամ)՝ պայմանավորված ներդրումների դիմաց վճարվող եկամուտների կրճատմամբ և ռեզիդենտների՝ աշխատուժի դիմաց ստացված եկամուտների աճով: Մասնավոր տրանսֆերտներն ավելացել են 23

[1] *Վճարային հաշվեկշռի 2004թ. երկրորդ եռամսյակի տվյալները ՀՀ ԿԲ կանխատեսումներն են:*

մլն ԱՄՆ դոլարով (22 տոկոս)՝ կազմելով 127 մլն ԱՄՆ դոլար, իսկ պաշտոնական տրանսֆերտները՝ 10 մլն ԱՄՆ դոլարով (49 տոկոս):



Ընթացիկ հաշվի հոդվածների նշված դինամիկայի արդյունքում ընթացիկ հաշվի պակասուրդը կրճատվել է 11 մլն ԱՄՆ դոլարով՝ կազմելով 107 մլն ԱՄՆ դոլար, իսկ ընթացիկ հաշիվ/ՀՆԱ ցուցանիշը բարելավվել է 4.4 տոկոսային կետով և կազմել 7.0 տոկոս:

2005 թվականի առաջին կիսամյակում կապիտալ ու ֆինանսական հաշվով ստացվող միջոցները կազմել են 213 մլն ԱՄՆ դոլար՝ մոտ երկու անգամ գերազանցելով ընթացիկ հաշվի պակասուրդը: Ընդ որում, կապիտալ տրանսֆերտները կազմել են 13 մլն ԱՄՆ դոլար՝ ֆինանսավորելով ընթացիկ հաշվի 12 տոկոսը: Օտարերկրյա ուղղակի ներդրումները առաջին կիսամյակում կազմել են 81 մլն ԱՄՆ դոլար՝ ֆինանսավորելով ընթացիկ հաշվի 76 տոկոսը: Ուղղակի ներդրումները (առանց Ռուսաստանի վարկի) նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատությամբ ավելացել են 13 մլն ԱՄՆ դոլարով (18 տոկոս): Պետական հատվածի զուտ վարկերը կազմել են 22 մլն ԱՄՆ դոլար՝ ֆինանսավորելով ընթացիկ հաշվի 21 տոկոսը:

Առևտրային բանկերի ՁԱԱ-ն հունվար-հունիսին նվազել են 32 մլն ԱՄՆ դոլարով: Ընդ որում, արտաքին ակտիվները նվազել են 21 մլն ԱՄՆ դոլարով, իսկ պարտավորությունները աճել են 10 մլն ԱՄՆ դոլարով: Առևտրային բանկերի ՁԱԱ կրճատումը հիմնականում պայմանավորվել է ՀՀ կենտրոնական բանկում արտարժութային պարտավորությունների դիմաց պահուստավորման նոր ռեժիմին անցմամբ, ինչպես նաև տնտեսությանը արտարժույթով վարկավորման ծավալների աճով:


Արտաքին աշխարհի նկատմամբ ՀՀ առևտրային բանկերի ու վարկային կազմակերպությունների վարկային պարտավորությունները[2] 2005 թվականի երկրորդ եռամսյակի վերջին կազմել են 36.3 մլն դոլար՝ նախորդ եռամսյակի վերջի 33.0 մլն դոլարի փոխարեն: Երկրորդ եռամսյակի ընթացքում առևտրային բանկերը արտաքին աշխարհից ներգրավել են 6.8 մլն դոլարի վարկային միջոցներ, նախկինում ձեռք բերված վարկերի դիմաց կատարել են 3.5 մլն դոլարի հիմնական գումարի մարումներ և վճարել 0.5 մլն դոլարի տոկոսագումար:

2005 թվականի երկրորդ եռամսյակում, նախորդ եռամսյակի համեմատությամբ, հիմնականում պահպանվել է վարկատու երկրների կազմը, փոփոխվել են միայն այդ երկրների տեսակարար կշիռները ամբողջի մեջ: Մասնավորապես՝ ՀՀ առևտրային բանկերի հիմնական վարկատու երկրներն են հանդիսացել՝ Ռուսաստանը, որի տեսակարար կշիռը ամբողջի մեջ կազմել է 19.3 % (նախորդ եռամսյակում՝ 18.2 %), Մեծ Բրիտանիան՝ 17.1 % (նախորդ եռամսյակում՝ 9.7 %), Շվեյցարիան՝ 13.8% (նախորդ եռամսյակում՝ 15.2 %), ԱՄՆ-ն՝ 13.7 % (նախորդ եռամսյակում՝ 16.9 %), Ֆրանսիան՝ 8.3 % (նախորդ եռամսյակում՝ 7.6 %) և Հունաստանը՝ 4.5 % (նախորդ եռամսյակում՝ 9.1 %):


[2]Ներառված չեն միջազգային ֆինանսական կազմակերպությունների և այլ վարկատուների կողմից տարբեր ծրագրերի շրջանակներում ՀՀ կառավարության միջոցով ստացված վարկերը:

Հաշվետու եռամսյակի ընթացքում նոր ներգրավված վարկերը հիմնականում տեղաբաշխվել են արդյունաբերության, առևտրի և գյուղատնտեսության հատվածներում: Արդյունքում՝ արդյունաբերության հատվածում տեղաբաշխված միջոցները կազմել են 10.7 մլն դոլար, առևտրի հատվածում՝ 7.4 մլն դոլար, ֆինանսական հատվածում՝ 6.7 մլն դոլար, էներգետիկայի հատվածում՝ 5 մլն դոլար, գյուղատնտեսության հատվածում՝ 5 մլն դոլար:

Ներգրավված վարկերի միջին կշռված տոկոսադրույքը նախորդ եռամսյակի համեմատ աճել է և կազմել 6.5 % (2005թ. 1-ին եռամսյակում՝ 5.8%), որոնց մոտ 61%-ը լողացող (LIBOR) տոկոսադրույքով է: Վարկերի միջին ժամկետայնությունը մոտ 3.6 տարի է: Կարճաժամկետ վարկերի տեսակարար կշիռը նվազել է և կազմել է ընդամենը վարկերի 15.5 %-ը՝ նախորդ եռամսյակի 22.9%-ի փոխարեն:



2005 թվականին պահպանվել են նախորդ տարվա միտումները. առաջին կիսամյակը ևս բնութագրվել է ֆինանսական միջոցների զգալի ներհոսքով: Միջոցների զգալի մասը ստացվել է զբոսաշրջության, մասնավոր տրանսֆերտների ու գործոնային եկամուտների տեսքով, որոնք ուղղվելով արտարժույթի շուկա՝ որոշակի ճնշումներ են առաջացրել ՀՀ դրամի փոխարժեքի վրա՝ արժեքավորման ուղղությամբ: Կենտրոնական բանկն էական մասնակցություն է ունեցել արտարժութային շուկայում՝ չեզոքացնելով արտարժույթի ավելցուկային առաջարկը, այն է՝ արտարժութային շուկայից գնել է ընդհանուր առմամբ ավելի քան 60 մլն ԱՄՆ դոլար, իսկ դրամային գործիքներով հետ քաշել գնման գործողության արդյունքում տնտեսությունում հայտնված ավելցուկ դրամի մի մասը: Այս գործողությունները ավելցուկ արտարժույթի ազդեցության բացասական հետևանքներից խուսափելու, ինչպես նաև նախատեսված տարեկան սցենարից գնաճի վարքագծի էական շեղումներ թույլ չտալու հնարավորություն ընձեռեցին:



[3] *2003 թվականից ներառվում են նաև վարկային կազմակերպությունների տվյալները:*


Վերը նշված հոսքերի և ԿԲ գործողությունների արդյունքում 2005 թվականի առաջին կիսամյակում ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար անվանական միջին հաշվարկային փոխարժեքը կազմել է 462.17 դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ արժեքավորվելով 17.2 տոկոսով: Կիսամյակի վերջի դրությամբ փոխարժեքը կազմել է 442.34 դրամ՝ նախորդ տարվա վերջի դրությամբ արժեքավորվելով 9.0 տոկոսով:

Կենտրոնական բանկի ՋԱՍ-ն կիսամյակի ընթացքում ավելացել են շուրջ 107 մլն ԱՄՆ դոլարով, ընդ որում՝ արտաքին ակտիվներն ավելացել են 95 մլն ԱՄՆ դոլարով, իսկ պարտավորությունները նվազել են 11 մլն ԱՄՆ դոլարով: Արտաքին ակտիվների աճը հիմնականում պայմանավորվել է ԿԲ կողմից առաջին կիսամյակում միջբանկային շուկայում 61 մլն ԱՄՆ դոլար արտարժույթի գնմամբ, ինչպես նաև բանկերի՝ արտարժույթով պարտադիր պահուստավորման միջոցների համալրմամբ՝ 38.6 մլն ԱՄՆ դոլարով:

ՀՀ դրամի իրական արդյունավետ փոխարժեքը 2005 թվականի առաջին կիսամյակում, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ, արժեքավորվել է 13.5 տոկոսով: Զգալի արժեքավորման հիմնական պատճառը դրամի փոխարժեքի արժեքավորումն էր: Նշված ժամանակահատվածում Հայաստանի գնաճը կազմել է 2.2 տոկոս, իսկ գործընկեր երկրներինը՝ 8.8 տոկոս: Անվանական փոխարժեքի ազդեցությունը իրական փոխարժեքի վրա կազմել է 18.1 տոկոսային կետ[4] (արժևորման ուղղությամբ):

ՀՀ դրամի իրական արդյունավետ փոխարժեքը

(աճը նշանակում է արժեքավորում)



1999-2003 թթ. կշիռներով, 1995թ. միջինը = 100

[4] *Իրական արդյունավետ փոխարժեքի հաշվարկն իրականացված է միջին երկրաչափական մեթոդով, այդ իսկ պատճառով հաշվարկման մեջ ընդգրկված ցուցանիշների տոկոսային փոփոխությունների գումարը հավասար չէ իրական փոխարժեքի փոփոխությանը:*

Դրամավարկային քաղաքականության երկրորդ եռամսյակի ծրագիրը և հիմնական խնդիրները

2005 թվականի առաջին եռամսյակի ընթացքում ձևավորված դրամավարկային միջավայրը բնութագրվել է ծրագրված ուղղություններից զգալի շեղումներով, որոնք մասամբ պայմանավորվել են տարվա այդ ժամանակահատվածում տնտեսությունից ակնկալվող ռիսկերի դրսևորմամբ, իսկ մասամբ էլ՝ ծրագրով չնախատեսված որոշ երևույթների հանդես գալով:

Խոսքն այն մասին է, որ վերջին տարիներին դրամի փոխարժեքի շարունակական ամրապնդումը զգալիորեն բարձրացրել է ազգային արժույթի հանդեպ վստահությունը, և արդեն տարեսկզբից դիտվել է արտարժույթի՝ դրամով փոխարինման երևույթ: Դա արտահայտվել է հիմնականում փողի զանգվածի դրամային տարրերի աճի բարձր տեմպերով և դրան հակառակ՝ արտարժութային ավանդների աճի տեմպերի դանդաղմամբ: Այսինքն՝ ենթադրվում էր, որ նշված միտումները շարունակվելու էին նաև երկրորդ եռամսյակում, և այդ ժամանակահատվածի դրամավարկային ծրագրավորման սցենարում հաշվի էր առնվելու փողի առաջարկի ծրագրված մակարդակի հնարավոր շեղման հավանականությունը:

Մյուս կողմից, Կառավարությունն առաջին եռամսյակում, թերակատարելով ծախսային ծրագիրը, բավականին զսպել էր դրամի պահանջարկը: Այդուհանդերձ, երկրորդ եռամսյակում հարկաբյուջետային հատվածից էական ռիսկեր չէին սպասվում, քանի որ Կառավարությունը հիմնականում իրագործելու էր նախապես ծրագրված սցենարը՝ պահպանելով առաջին եռամսյակում առաջացած թերակատարման ճեղքվածքը:

Փողի առաջարկի կարգավորման երկրորդ եռամսյակի գործընթացում հաշվի էր առնվել նաև այն հանգամանքը, որ պայմանավորված ակնկալվող մեծածավալ արտարժութային ներհոսքի չեզոքացման խնդրով, հունիսի 10-ից ուժի մեջ էր մտնելու պարտադիր պահուստավորման նոր մեխանիզմը: Պահուստավորման նորման բարձրացվելու էր 6-ից 8%-ի, իսկ արտարժույթով ներգրավված միջոցների դիմաց կատարվելու էր համապատասխան արժույթով պահուստավորում, ինչի հետևանքով ՀՀ ԿԲ-ում բանկերի թղթակցային հաշիվներում գոյանալու էր մեծ ծավալի դրամային ավելցուկ:

Այս իրավիճակում ԿԲ համար կարևորվում էր ավելցուկ դրամային իրացվելիության կրճատման խնդիրը, որի իրագործումը, ակնկալվող արտարժութային մեծածավալ ներհոսքի պարագայում, ուղեկցվելու էր նաև արտարժութային ավելցուկի չեզոքացման գործընթացով: Այդ նպատակով նախատեսվում էր ակտիվացնել դրամային ներքաշող գործիքները, մասնավորապես՝ Կառավարության հետ համատեղ պետարժեթղթերի լրացուցիչ թողարկումներից ստացված միջոցների՝ ԿԲ-ում ավանդադրման մեխանիզմը և, անհրաժեշտության դեպքում, նաև ԿԲ սեփական արժեթղթերի թողարկումն ու տեղաբաշխումը:

Չնայած առաջին եռամսյակում ծրագրվածի համեմատ արձանագրված փողի բարձր պահանջարկին և գնաճին, որոնցից առաջինը պայմանավորված էր հիմնականում ոչ գնաճային բնույթ ունեցող՝ տնտեսության դրամայնացման երևույթով, իսկ երկրորդը՝ «Ձուկ և ձկնամթերք» ապրանքախմբի գների կտրուկ աճողական վարքագծով, ԿԲ-ն երկրորդ եռամսյակի գնաճի ծրագրային ցուցանիշի ապահովման էական ռիսկեր չի դիտարկել: Նախատեսվում էր եռամսյակային գնաճի 1.8% ցուցանիշ, որը, ըստ ամսական սեզոնայնության, պետք է ապահովվեր ապրիլ-մայիսին, իսկ հունիսին սպասվում էր 0.8% գնանկում:

Դրամավարկային քաղաքականության զարգացումները

ՓՈՂԻ ՊԱՀԱՆՋԱՐԿ

Երկրորդ եռամսյակի ընթացքում դրամայնացման գործընթացի տեմպերն էականորեն արագացել են, ինչն արտահայտվել է փողի զանգվածի դրամային տարրերի՝ շրջանառությունում գտնվող կանխիկի և դրամով ավանդների՝ նախատեսված կիսամյա-

կային աճի տեմպերի զգալի գերազանցմամբ: Այսպես, առաջին կիսամյակում դրանք աճել են համապատասխանաբար 6.8% և 25.5%-ով, այն դեպքում, երբ ծրագրված էր 3.7% նվազում և 7.6% աճ: Հակառակ դրան, արտարժութային ավանդները դրամային արտահայտությամբ նախատեսված 9.5% աճի փոխարեն նվազել են 1.0%-ով, սակայն այստեղ պետք է հաշվի առնել այդ ժամանակահատվածում դրամի փոխարժեքի 9.8%-ով արժեքավորման ազդեցությունը, որի պարագայում ծրագրված և փաստացի աճի տեմպերը գրեթե համընկնում են:

Այդուհանդերձ, առաջին կիսամյակի ընթացքում փողի զանգվածը ժամանակաշրջանի վերջի դրությամբ աճել է 6.1%-ով, որը, առաջին եռամսյակի սեզոնային նվազման պարագայում, ձեռք է բերվել բացառապես երկրորդ եռամսյակի ընթացքում: Նույն եռամսյակային սեզոնայնությունն է ցուցաբերել նաև դրամային զանգվածը՝ կիսամյակի ընթացքում աճելով 12.8%-ով, որը ևս ամբողջությամբ բաժին է ընկել երկրորդ եռամսյակին:

Փողի զանգվածի դրամային տարրերի կիսամյակային վարքագիծը ակնհայտորեն արտացոլել է փողի պահանջարկի վրա արժույթի փոխարինման երևույթի ազդեցությունը: Այսպես, ի տարբերություն նախորդ տարիների, երբ նույն ժամանակահատվածում սովորաբար դիտվել է շրջանառությունում գտնվող կանխիկի և դրամային ավանդների նվազում, այս տարվա առաջին կեսին արձանագրվել են այդ ցուցանիշների աճի անհամեմատ բարձր տեմպեր: Ընդ որում, դա արտահայտվել է նաև այդ ցուցանիշների եռամսյակային վարքագծում. շրջանառությունում կանխիկն առաջին եռամսյակի ընթացքում նվազել է 7.3%-ով՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի 13.5%-ի, իսկ երկրորդում՝ աճել 15.2%-ով՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի 3.4%-ի փոխարեն, ինչն ուղեկցվել է դրամային ավանդների՝ համապատասխանաբար 14.6% և 9.5% աճով, այն դեպքում, երբ նախորդ տարվա առաջին եռամսյակում դրանք նվազել են 2.8 մլրդ դրամով և երկրորդում՝ աճել ընդամենը 0.02%-ով:

Փոխարինման էֆեկտից բացի, դրամային զանգվածի կառուցվածքային շարժերի վրա անդրադարձել են արժութային օրենսդրության փոփոխությունները, ինչպես նաև ֆինանսական մեծածավալ ներհոսքի հետևանքով տնտեսությունում առաջացած արտարժութային ավելցուկի չեզոքացման նպատակով ԿԲ կողմից արտարժույթի գնման գործառնությունները:


Ծրագրային և փաստացի դրամավարկային ցուցանիշների համեմատական աղյուսակ
(ըստ 2005 թ. ֆինանսական ծրագրի)

աճի տեմպ, %


Ցուցանիշներ	II եռամսյակը նախորդ տարվա IV-ի նկատմամբ		II եռ.՝ նախորդ տարվա նույն ժամ. նկատմամբ	
	Ծրագիր	*Փաստացի*	*Ծրագիր*	*Փաստ.*
Փողի զանգված (M2X, ժամ. վերջ)	4.6	6.1	28.6	30.4
Փողի զանգված (M2X, ժամ. միջին)	21.4	20.3	27.4	26.3
Փողի շրջապտույտի արագ. (միջին)[1]	-	-	- 12.4	- 6.5
Դրամային զանգված (M2, ժամ. վերջ)	-0.1	12.8	18.0	33.3
Դրամային զանգված (M2, ժամ. միջին)	12.9	25.2	15.6	28.2
Դրամի շրջապտույտի արագ. (միջին)[1]	-	-	-3.8	-8.0
Փողի բազա (ժամ. վերջ)	-6.5	14.2	16.1	41.9
Փողի բազա (ժամ. միջին)	9.5	23.6	15.8	30.6
Փողի բազմարկիչ (ժամ. միջին)	9.0	- 4.5	10.0	- 3.6
Դրամային բազմարկիչ (ժամ. միջին)	4.5	2.7	0	- 1.7

Նույն միտումներն են արձանագրվել նաև (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ) ցուցանիշների վարքագծում. փողի զանգվածի աճ 30.4%-ով՝ 1.8 տոկոսային կետով նախատեսվածից ավելի, դրամային զանգվածի և շրջանառությունում եղած կանխիկի աճ՝ համապատասխանաբար 33.3% և 28%-ով, որոնք գերազանցել են ծրագրված տեմպերը 15.3 և 12.7 տոկոսային կետերով: Նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ արտարժութային ավանդների աճը դանդաղել է 13.3 տոկոսային կետով՝ կազմելով 27.1%:

[1] Փողի (դրամի) շրջապտույտի արագության միջին եռամսյակային աճի տեմպը նախորդ եռամսյակի նկատմամբ չի ներկայացվում ՀՆԱ-ի եռամսյակային խիստ սեզոնայնությամբ պայմանավորված՝ փողի (դրամի) շրջապտույտի արագության նվազման բարձր տեմպերի պատճառով:



Դրամային ավանդների աճն ըստ ժամկետայնության բաշխվել է ցպահանջ և ժամկետային ավանդների միջև 8.0 մլրդ և 4.0 մլրդ դրամ հարաբերակցությամբ, որից՝ նույն համամասնությամբ, 8.0 մլրդ դրամը ներգրավվել է մասնավոր հատվածից, իսկ 4.0 մլրդ դրամը՝ պետական մասնակցությամբ ձեռնարկություններից ու կազմակերպություններից:




Ի տարբերություն դրամային ավանդների, արտարժութային ավանդների փոփոխությունները հիմնականում պայմանավորվել են ժամկետային միջոցների շարժերով՝ դրամային արտահայտությամբ 1.2 մլրդ դրամի նվազում՝ ցպահանջ ավանդների 195 մլն դրամով նվազման պարագայում: Միևնույն ժամանակ, փոխվել է տնտեսության մասնավոր հատվածում և պետական մասնակցությամբ ձեռնարկություններում ու կազմակերպություններում տեղաբաշխված միջոցների համամասնությունը՝ առաջինում դրանք նվազել են 17.3 մլրդ դրամով, իսկ երկրորդում՝ 16.1 մլրդ դրամով:

Եռամսյակի ընթացքում 5.2 մլրդ դրամով նվազել են նաև առևտրային բանկերում ոչ ռեզիդենտների արտարժութային ավանդները՝ բացառապես արտարժութային ավանդների նվազման հաշվին:

Առաջին կիսամյակում փողի ագրեգատների վերոնշյալ փոփոխությունները փոխել են նաև փողի զանգվածի կառուցվածքային համամասնությունները: Այսպես, դրամայնացման ակտիվ գործընթացի արդյունքում որոշակիորեն նվազել է տնտեսության դոլարայնացման աստիճանը, ինչն արտահայտվել է փողի զանգվածում արտարժութային ավանդների տեսակարար կշռի նվազմամբ՝ տարեսկզբի 48.9%-ից հունիսի վերջին հասնելով 45.7%-ի: Հակառակ դրան, փողի զանգվածում ավելացել են շրջանառությունում գտնվող կանխիկի և դրամային ավանդների տեսակարար կշիռները՝ համապատասխանաբար 0.2 և 3.0 տոկոսային կետով և եռամսյակի վերջին կազմել 19..5% և 34.8%:

Փողի և դրամի շրջապտույտի արագությունները պահպանել են նախորդ տարիների եռամսյակային սեզոնայնությունը: Առաջին կիսամյակում, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ, փողի և դրամի շրջապտույտի արագությունները նվազել են համապատասխանաբար 6.5% և 8%-ով: Փողի շրջապտույտի արագության նվազման տեմպերը մոտ 2 անգամ զիջել են ծրագրված ցուցանիշը, քանի որ կիսամյակի ընթացքում տնտեսական իրական աճի տեմպերը գերազանցել են ծրագրված ցուցանիշն ավելի, քան փողի զանգվածի գծով արձանագրված գերազանցումն է: Հակառակ պատկերն է դրամի շրջապտույտի արագության միտումներում. այն նվազել է 2 անգամ ավելի, քան նախատեսված էր՝ պայմանավորված արդեն դրամային զանգվածի աճի՝ ծրագրված տեմպերի զգալի գերազանցմամբ:



ՓՈՂԻ ԱՌԱՋԱՐԿ


Հաշվետու ժամանակահատվածում փողի առաջարկի աճն ապահովվել է բանկային համակարգի ԶԱԱ հաշվին, որոնք համալրվել են 15.4%-ով: Դա տեղի է ունեցել բացառապես ՀՀ ԿԲ ԶԱԱ աճի հաշվին (ըստ գործոնների մեկնաբանությունը՝ «Փողի բազա» ենթաբաժնում), այն դեպքում, երբ առևտրային բանկերի ԶԱԱ-ը կիսամյակի ընթացքում նվազել են 36.3%-ով: Դա պայմանավորվել է մի շարք գործոններով, որոնցից էականորեն ազդել են պարտադիր պահուստավորման նոր մեխանիզմի ներդրումը (արտարժութային ներգրավված միջոցների դիմաց արտարժույթով պահուստավորում), տնտեսության՝ արտարժույթով վարկավորման աճի բարձր տեմպերը. աճի ընդհանուր ծավալում արտարժույթով վարկերի աճի տեսակարար կշիռը կազմել է շուրջ 60% (ներառյալ ոչ ռեզիդենտներին տրված վարկերը): Բանկերի ԶԱԱ նվազողական վարքագծում արտահայտվել է նաև դրամի փոխարժեքի արժեքավորումը, ինչի հետևանքով դրամային արտահայտությամբ արտարժութային պահուստների մակարդակը փոքրացել է: Ընդ որում, փոփոխությունների հիմնական մասը բաժին է ընկել երկրորդ եռամսյակին, քանի որ վերոնշյալ գործոնները մեծամասամբ դրսևորվել են այդ ժամանակահատվածում:

ԶԱԱ միջոցով փողի առաջարկի ընդլայնումը կիսամյակի ընթացքում որոշ չափով չեզոքացվել է բանկային համակարգի ԶՆԱ նվազմամբ՝ 17.7%-ով, որի գծով փոփոխություններում ևս մեծ բաժին են կազմել ԿԲ ԶՆԱ կառուցվածքային շարժերը:

Բանկային համակարգի ԶՆԱ նվազումը պայմանավորվել է բանկային համակարգի հանդեպ Կառավարության զուտ պարտավորությունների և զուտ այլ ակտիվների նվազմամբ՝ համապատասխանաբար 7.8 մլրդ և 18.8 մլրդ դրամ: Ընդ որում, եթե բանկային համակարգի հանդեպ Կառավարության զուտ պարտավորությունների նվազումը տեղի է ունեցել բացառապես ի հաշիվ ԿԲ հանդեպ Կառավարության զուտ պարտավորությունների ցուցանիշի փոփոխությունների, ապա զուտ այլ ակտիվների շարժերում մեծ կշիռ են կազմել առևտրային բանկերի զուտ այլ ակտիվների փոփոխությունները: Այսպես, բանկերի հանդեպ Կառավարության զուտ պարտավորություններն աճել են 9.9 մլրդ դրամով (ԿԲ հանդեպ պարտավորությունների շարժերի մասին՝ «Փողի բազա» ենթաբաժնում)՝ հիմնականում բանկերի կողմից առաջնային շուկայում ձեռք բերված պետարժեթղթերի հաշվին ՊՊ պորտֆելի համալրման արդյունքում:

Կիսամյակի ընթացքում բանկերի զուտ այլ ակտիվները նվազել են 14.8 մլրդ դրամով (ԿԲ զուտ այլ ակտիվների շարժերի մեկնաբանությունը՝ «Փողի բազա» ենթաբաժնում), ինչի վրա հիմնականում ազդել են բանկերի կողմից ընդհանուր կապիտալի համալրումը և ԿԲ սեփական արժեթղթերի թողարկումն ու տեղաբաշխումը՝ համապատասխանաբար 11.0 մլրդ և 3.4 մլրդ դրամ:

Բանկային համակարգի ՋԱԱ և ՋՆԱ վարքագիծը



Չնայած սպասվածից ավելի դանդաղ տեմպերով (15.2%-ի փոխարեն 9.2%), սակայն այս տարվա առաջին կեսին ևս պահպանվել են բանկերի կողմից տնտեսության ակտիվ վարկավորման միտումները: Այսպես, առաջին կիսամյակում բանկային համակարգի հանդեպ տնտեսության պարտավորությունների ցուցանիշն աճել է 12.4 մլրդ դրամով՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի 17.9 մլրդ դրամի կամ 17.4%-ի փոխարեն: Տնտեսությանը տրամադրված վարկերն աճել են 15.5 մլրդ դրամով կամ 11.3%-ով, որից 8.5 մլրդ դրամին համարժեք գումարը կազմել են արտարժութային վարկերը, իսկ 7.0 մլրդ դրամը տրվել է դրամով: Ընդ որում, արժույթի փոխարինման երևույթն ազդել է նաև տնտեսության վարկավորման գործընթացի վրա, ինչի մասին են վկայում նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ դրամային վարկերի աճի տեմպերի արագացումը (19.7%՝ 16.6%-ի փոխարեն) ու դրան զուգահեռ՝ արտարժութային վարկերի աճի տեմպերի դանդաղումը (7.4%՝ 17.3%-ի փոխարեն):

Կիսամյակի ընթացքում մարվել են բանկերի հաշվեկշիռներում առկա ոչ պետական արժեթղթերը, ինչի արդյունքում տնտեսության վարկավորման ցուցանիշը նվազել է 3.1 մլրդ դրամով:


Տրամադրված վարկերն ուղղվել են բացառապես մասնավոր հատված՝ 16.2 մլրդ դրամ, այն պարագայում, երբ պետական մասնակցությամբ ձեռնարկություններն ու կազմակերպությունները զուտով մարել են նախկինում վերցված վարկերը՝ շուրջ 670 մլն դրամ: Մասնավոր հատվածին տրամադրված վարկերի ընդհանուր ծավալում մեծ տեսակարար կշիռ են կազմել սպառողական վարկերը, ինչն արտահայտվել է տնային տնտեսությունների վարկավորման ծավալների 21.4% կամ 11.8 մլրդ դրամ աճով:

Առաջին կիսամյակում արձանագրվել է բանկերի կողմից ոչ ռեզիդենտների վարկավորման անհամեմատ բարձր աճ՝ 4.9 մլրդ դրամ (որպես կանոն, ամբողջությամբ արտարժութային վարկերի աճի հաշվին), ինչը բավականին բարձր տեմպ է նաև նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշի համեմատությամբ. 79.5%՝ 2004թ. առաջին կիսամյակի 32.9%-ի փոխարեն:

ՓՈՂԻ ԵՎ ԴՐԱՄԱՅԻՆ ԲԱԶՄԱՐԿԻՉՆԵՐ

Առաջին կիսամյակի համար ծրագրվել էր փողի և դրամային բազմարկիչների համապատասխանաբար 9% և 4.4% աճ, մինչդեռ փաստացի արդյունքներով արձանագրվել են զգալի շեղումներ՝ պայմանավորված փողի ագրեգատների կառուցվածքային փոփոխություններով և պարտադիր պահուստավորման նոր մեխանիզմի կիրառմամբ: Այսպես, փողի բազմարկիչը, նախատեսված աճի փոխարեն, նվազել է 4.5%-ով, որի ազդեցության հիմնական գործոններն են եղել շրջանառության մեջ գտնվող կանխիկի՝ ծրագրվածից ավելի մեծ աճը, արտարժութային ավանդների՝ նախատեսվածից դանդաղ աճի տեմպերը, ինչպես նաև պարտադիր պահուստավորման փոփոխության հետևանքով առաջացած դրամային ավելցուկի անհամեմատ բարձր մակարդակը: Նշված գործոնների ազդեցությունը որոշ չափով մեղմվել է դրամային ավանդների՝ ծրագրվածից բարձր աճի տեմպերով, ինչի արդյունքում էլ դրամային բազմարկիչը պահպանել է ծրագրված աճի ուղղությունը՝ կիսամյակի ընթացքում կազմելով 2.7%:

Նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ցուցանիշները նվազել են համապատասխանաբար 3.6% և 1.7%-ով, քանի որ փողի բազայի միջին տարեկան աճը գերազանցել է փողի և դրամային զանգվածների միջին տարեկան աճը:




ՓՈՂԻ ԲԱԶԱ

Առաջին կիսամյակի ընթացքում ԿԲ կողմից իր գործառնական նպատակի՝ փողի բազայի կառավարման գործընթացն ուղեկցվել է վերը նշված երևույթներով ու դրսևորումներով: Դրանցից, թերևս, կարևորվում են հետևյալ հիմնականները.

- արժույթի փոխարինման երևույթը,
- ֆինանսական մեծածավալ ներհոսքն ու դրա պայմաններում դրամի փոխարժեքի շարունակական արժեքավորումը,
- պարտադիր պահուստավորման մեխանիզմում փոփոխությունները,
- հարկաբյուջետային քաղաքականության կիսամյակային սցենարից շեղումները,
- արժութային օրենսդրության փոփոխությունները և այլն:

Նշվածը, ԿԲ կողմից փողի առաջարկի կարգավորման տեսանկյունից, առաջացրել է մի շարք խնդիրներ: Մասնավորապես, դրանք հանգեցրել են դրամի նկատմամբ մեծ պահանջարկի դրսևորման, ինչը, արտարժույթի շուկայում առկա մեծ առաջարկի պարագայում, ԿԲ-ն բավարարել է արտարժույթի գնման գործառնությունների իրականացման միջոցով՝ արդյունքում զգալիորեն գերազանցելով փողի բազայի տատանման միջակայքի վերին սահմանը:



Միևնույն ժամանակ, արտարժույթի գնման գործիքի ակտիվ կիրառությունը ԿԲ կողմից նպատակաուղղված էր տնտեսությունում ընթացող դրամայնացման երևույթի օժանդակմանը: Կիսամյակի ընթացքում ԿԲ-ն շուկայից գնել է 27.6 մլրդ դրամին համարժեք արտարժույթ, կամ որ նույնն է, այդ գործիքի միջոցով ներարկել այնքան դրամային իրացվելիություն, որքան փողի բազայի և դրամային զանգվածի շեղումն է իրենց ծրագրված մակարդակներից:


Փողի բազայի ծրագրային ցուցանիշի գերազանցմանը նպաստել է նաև պարտադիր պահուստավորման նորմայի բարձրացումը՝ 6-ից 8%-ի և բանկերի կողմից ներգրավված արտարժութային միջոցների դիմաց արտարժույթով պահուստավորման իրականացումը, ինչի հետևանքով միանգամից ավելցուկ դարձավ մոտ 13.0 մլրդ դրամի դրամային իրացվելիություն:

ԿԲ գործողությունների հետևանքով փողի առաջարկի նման ընդլայնման պարագայում, հարկաբյուջետային քաղաքականությունը, հատկապես առաջին եռամսյակում, որոշակիորեն զսպել է փողի պահանջարկը՝ գերակատարելով հարկերի և թերակատարելով ծախսերի ծրագրերը:

Այդուհանդերձ, ստեղծված իրավիճակում ԿԲ կարևորագույն խնդիրներից էր, գնաճային ճնշումներից խուսափելու համար, վերոնշյալ ինքնավար հոսքերով տնտեսություն ներարկված դրամային իրացվելիության չեզոքացումը՝ ԿԲ գործիքակազմում առկա ներքաշող գործիքների սահմանափակ հնարավորությունների պայմաններում (պետարժեթղթերի՝ ընդամենը 5.9 մլրդ դրամ պորտֆել և Գանձապետարանի կողմից պետպարտատոմսերի լրացուցիչ թողարկումներից ստացված միջոցները ԿԲ-ում ավանդադնելու մեխանիզմի սահմանափակ ծավալ): ԿԲ սեփական արժեթղթերը թողարկելու և տեղաբաշխելու խնդիր էր դրվում, որի շուրջ բանակցությունները ՖԷՆ-ի հետ շարունակվեցին մինչև մայիս և համաձայնություն ձեռք բերվեց դրա կիրառման պայմանների շուրջ: Առաջին թողարկումը տեղի ունեցավ հունիսի 13-ին՝ նպատակաուղղված պարտադիր պահուստավորման փոփոխության հետևանքով ազատված դրամային ավելցուկի ներքաշմանը:

Կիսամյակային գնաճը զիջել է ծրագրված ցուցանիշը 2.6 տոկոսային կետով՝ ժամանակաշրջանի վերջի դրությամբ հունիսին կազմելով 1.4%: Չնայած դրան, առաջին եռամսյակի արդյունքներով առկա էր ծրագրված տարեկան ցուցանիշի գերազանցման որոշակի ռիսկ, քանի որ գրանցվել էր 3.7% գնաճ՝ ծրագրված 2.2%-ի փոխարեն: Դա հիմնականում պայմանավորվել է հունվարին գրանցված անհամեմատ բարձր՝ 5.4% գնաճով (2004-ի հունվարին՝ 2.5%, 2003-ին՝ 4.1% և 2002-ին՝ 2.2%), որն առավել խորը սեզոնայնության դրսևորման արդյունք էր՝ կապված «Ձուկ և ձկնամթերք» ապրանքախմբի գների կտրուկ աճի հետ:


Երկրորդ եռամսյակում արձանագրվել է 2.2% գնանկում՝ ծրագրային 1.8% գնաճի փոխարեն, որը ևս խորը սեզոնայնության դրսևորում էր՝ պայմանավորված արդեն այդ ամիսներին, գյուղատնտեսության սեզոնայնության պարագայում, գների կտրուկ նվազմամբ: Դա հատկապես արտահայտվել է ապրիլ-մայիս ժամանակահատվածի ցուցանիշում՝ 0.8% գնանկում (2004-ին՝ 2.3%, 2003-ին՝ 3.2% և 2002-ին՝ 4.2% գնաճ), որի պատճառը հիմնականում «Միրգ և բանջարեղեն» ապրանքախմբի գների նվազումն է: Այսինքն՝ երկրորդ եռամսյակում ԿԲ կողմից իրականացված առավել ընդլայնողական դրամավարկային քաղաքականությունը համահունչ է եղել գնաճի վարքագծին, և կիսամյակի վերջում խնդիր է ծագել վերանայել մինչև տարեվերջ դրամավարկային ցուցանիշների ծրագրված մակարդակները՝ արդեն գնանկման երևույթներից խուսափելու և տարեկան մինչև 3% ծրագրային ցուցանիշն ապահովելու նկատառումով:




Փողի բազան հունիսի վերջին կազմել է 150.8 մլրդ դրամ՝ կիսամյակի ընթացքում աճելով 18.8 մլրդ դրամով կամ 14.2%-ով՝ ծրագրված 6.5% նվազման փոխարեն:

Որպես տարվա առանձնահատկություն՝ հարկ է նշել փողի բազայի կառուցվածքում ԿԲ-ից դուրս գտնվող կանխիկի աճի բարձր տեմպերը՝ 7.4% (2004թ. նույն ժամանակահատվածի 10.1% և 2003-ի՝ 13.2% նվազման փոխարեն), որը, ինչպես վերը նշվել է, հիմնականում պայմանավորվել է արժույթի փոխարինման էֆեկտով և արժութային օրենսդրության փոփոխություններով: Այդուհանդերձ, այս տարի ևս պահպանվել է կանխիկի վարքագծի եռամսյակային սեզոնայնությունը. առաջին եռամսյակում նվազել է 6.7 մլրդ դրամով, իսկ երկրորդում՝ աճել 14.6 մլրդ դրամով: Ընդ որում, վերջինս բավականին բարձր ցուցանիշ է նախորդ տարիների համեմատ՝ 2004թ. նույն ժամանակահատվածում 2.7 մլրդ, 2003-ին՝ 2.0 մլրդ և 2002-ին՝ 1.0 մլրդ դրամ:

Պայմանավորված պարտադիր պահուստավորման մեխանիզմի փոփոխությամբ (առանձնացվել են դրամով և արտարժույթով թղթակցային հաշիվները)՝ ԿԲ-ում բանկերի դրամով թղթակցային հաշիվների ու այլ կազմակերպությունների հաշիվների մնացորդը կիսամյակի ընթացքում նվազել է 7.7 մլրդ դրամով: Փոխարենը՝ արտարժույթով թղթակցային հաշիվների ու այլ կազմակերպությունների հաշիվների մնացորդն աճել է 18.6 մլրդ դրամով:




Բանկային համակարգի կողմից տնօրինվող ավելցուկային իրացվելիությունն առաջին կիսամյակում ավելացել է 8.0 մլրդ դրամով՝ նախորդ տարվա դեկտեմբերի միջին ամսական 6.6 մլրդ դրամից հունիսին հասնելով 14.6 մլրդ դրամի, որը բաշխվել է դրամով և արտարժույթով ավելցուկի միջև 13.6 մլրդ և 1.0 մլրդ դրամ հարաբերակցությամբ:




Այսինքն՝ կիսամյակի ընթացքում բանկային համակարգը մշտապես եղել է բարձր իրացվելի, ինչի մասին է վկայում միջին կիսամյակային ավելցուկի 8.8 մլրդ դրամ ցուցանիշը, այն դեպքում, երբ նախորդ

տարվա նույն ժամանակահատվածում այդ ցուցանիշը կազմել է 4.2 մլրդ, իսկ 2003-ին՝ 3.5 մլրդ դրամ: ԿԲ-ն շատ հաճախ դրամային ավելցուկը չի ներքաշել այն նկատառումով, որպեսզի դա, արտարժույթի մեծածավալ առաջարկի պարագայում, բավարարի դրամի պահանջարկը և դրանով իսկ մեղմի դրամի փոխարժեքի կտրուկ արժեքավորումը:



Ըստ առաջարկի գործոնների, փողի բազան առաջին կիսամյակում ընդլայնվել է բացառապես ՀՀ ԿԲ ԶԱԱ համալրման հաշվին, ինչը զուգորդվել է ԿԲ ԶՆԱ կրճատման միջոցով իրացվելիության կրճատմամբ:

ԿԲ ԶԱԱ-ն աճել են 34.8%-ով՝ առավելապես երկու հիմնական գործոնի՝ արժութային շուկայից 27.6 մլրդ դրամին համարժեք արտարժույթի գնման և արտարժույթով պարտադիր պահուստավորման միջոցների 18.8 մլրդ դրամով համալրման հաշվին: Արտաքին պահուստներն ավելացել են նաև Կառավարության համար ԿԲ-ում գտնվող սեփականաշնորհման հատուկ հաշվից 8.7 մլրդ դրամին համարժեք միջոցների և ստացված 2.0 մլրդ դրամին համարժեք դրամաշնորհի փոխարկման արդյունքում: Միևնույն ժամանակ, իրականացվել են Կառավարության արտաքին պարտքի սպասարկում և այլ փոխարկումներ՝ 5.2 մլրդ դրամ ընդհանուր ծավալով:



ՀՀ ԿԲ ԶՆԱ-ը նվազել են 2.9 անգամ, որը տեղի է ունեցել կառուցվածքային բոլոր տարրերի նվազման հաշվին:

Ինչպես նշվել է, Կառավարության կողմից իրականացված հավելուրդային հարկաբյուջետային քաղաքականության արդյունքում ԿԲ հանդեպ Կառավարության զուտ պարտավորությունները նվազել են 48%-ով՝ ստացված հավելուրդը Գանձապետարանի միասնական հաշվում խնայելու և ՊՊ լրացուցիչ թողարկումների հասույթը ԿԲ-ում գործող ժամկետային հաշվում կուտակելու հետևանքով:

ՀՀ ԿԲ զուտ այլ ակտիվները կիսամյակի ընթացքում նվազել են 45.7%-ով: Դա հիմնականում ձևավորվել է ծրագրային և փաստացի փոխարժեքների տարբերությունից, քանի որ ԿԲ ԶԱԱ-ի կիսամյակային մեծածավալ աճի՝ ծրագրով ամրագրված բարձր փոխարժեքի և ավելի ցածր փաստացի փոխարժեքի տարբերության չափով հաշվեկշռվում է զուտ այլ ակտիվներում՝ նվազեցնելով այդ ցուցանիշը: Զուտ այլ ակտիվները նվազել են նաև բանկերի հետ արտարժույթի տրամադրման սվոփ գործառնության կնքման հետևանքով՝ 1.1 մլրդ դրամ, որը նպատակաուղղվել է արտարժույթով պարտադիր պահուստավորման իրականացման խնդրի լուծմանը:

Կիսամյակի ընթացքում 73.4%-ով նվազել է նաև ԿԲ հանդեպ բանկերի պարտավորությունների ցուցանիշը, որն ածանցվել է դրամավարկային քաղաքականության խնդիրներից: Այսպես, արտարժույթի մեծածավալ ներհոսքի ազդեցությամբ դրամի փոխարժեքի շարունակական արժեքավորման մակրոտնտեսական հետևանքները որոշ չափով մեղմելու նպատակով ԿԲ-ն իրականացրել է արտարժույթի մեծածավալ գնման գործառնություններ: Մյուս կողմից, դա անհրաժեշտ էր զուգորդել դրամային ներքաշող գործիքների կիրառմամբ, որպեսզի չեզոքացվեր արտարժույթի գնման միջոցով ներարկված դրամային իրացվելիության գնաճային ազդեցությունը: Այդ նպատակով ԿԲ-ն ակտիվորեն կիրառել է հակադարձ ռեպո գործառնությունները, որի օգնությամբ հաջողվել է կիսամյակի ընթացքում ներքաշել 6.5 մլրդ դրամի իրացվելիություն:

ՀՀ ԿԲ գործիքակազմում այս տարվա առաջին կիսամյակում մեծ ծավալ է կազմել բանկերի կողմից ԿԲ-ում միջոցների ավանդադրման մշտական հնարավորության գործիքը, որը, ճիշտ է, կիսամյակի կտրվածքով ունեցել է գրեթե զրոյական փոփոխություն, սակայն բավականին արդյունավետ լուծել է բանկերի կողմից իրենց ավելցուկային իրացվելիության տեղաբաշխման խիստ կարճաժամկետ խնդիրներ (1-2 շաբաթվա կտրվածքով):


Իրացվելիության ներքաշման խնդրին օժանդակել է նաև, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության և ՀՀ ԿԲ գործողությունների կոորդինացման շրջանակներում, Գանձապետարանի կողմից պետպարտատոմսերի լրացուցիչ թողարկումներից ստացված միջոցները ԿԲ-ում ավանդադնելու մեխանիզմը: Դրա միջոցով հաջողվել է ներքաշել 12.0 մլրդ դրամի իրացվելիություն:

Տարվա առանձնահատկություններից է նաև ԿԲ սեփական արժեթղթերի թողարկումն ու տեղաբաշխումը: Այս գործիքի միջոցով ԿԲ-ին հաջողվել է հունիսի երկրորդ կեսին, երբ պահուստավորման նոր մեխանիզմի ներդրման հետևանքով առաջացել էր 12.0 մլրդ դրամային ավելցուկ, չեզոքացնել շուրջ 3.5 մլրդ դրամը:


Ամփոփելով ԿԲ կողմից առաջին կիսամյակում իրականացված դրամավարկային քաղաքականության արդյունքները՝ կարելի է փաստել, որ, չնայած դրամավարկային ցուցանիշների՝ ծրագրված մակարդակների զգալի գերազանցմանը, ԿԲ գլխավոր նպատակի իրագործման հնարավոր ռիսկերը հանգում են տարեվերջին գնաճի զրոյական մակարդակի ապահովմանը՝ ծրագրային միևչև 3%-ի պարագայում: Ելնելով դրանից՝ ԿԲ-ն միևչև տարեվերջ փողի առաջարկի կառավարումը կիրականացնի առավել ընդլայնողական սցենարով՝ որպես ակտիվ ներարկող գործիք տեսնելով արտարժույթի առքը, որը հնարավորություն կտա հարթելու նաև տարվա երկրորդ կեսին ակնկալվող արտարժութային մեծածավալ ներհոսքի ազդեցությունը դրամի փոխարժեքի վրա՝ կտրուկ տատանումները բացառելու նկատառումով:

2005 թվականի առաջին կիսամյակի ընթացքում դրամավարկային պայմանների ինդեքսը[1] պահպանել է դեռևս նախորդ տարվա սկզբից դրսևորված աճողական վարքագիծը, որը, ըստ այդ ցուցանիշի հաշվարկման տրամաբանության, վկայում է դրամավարկային քաղաքականության զսպողական բնույթի մասին: Նման պատկեր է ձևավորվել այդ ժամանակահատվածում դրամի փոխարժեքի շարունակական արժեքավորման և իրական տոկոսադրույքների աճի ազդեցությամբ, չնայած ԿԲ կողմից իրականացվել է ծրագրվածի համեմատ առավել ընդլայնողական դրամավարկային քաղաքականություն. 2003թ. դեկտեմբերի վերջի նկատմամբ փողի բազան աճել է 27.2%-ով՝ ծրագրված 4.1%-ի փոխարեն:

Ընդ որում, ինչպես նշվել է նաև ՀՀ ԿԲ 2004թ. տարեկան հաշվետվության մեջ, վերջին մեկուկես տարում դրամավարկային պայմանների ինդեքսն ամբողջովին չի արտացոլում իրականությունը՝ արտաքին ցնցումների էական ազդեցությունն իր վրա կրելու պատճառով: ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի արժեքավորումը ոչ թե ԿԲ կողմից իրականացված դրամավարկային քաղաքականության, այլ արտաքին շոկի, մասնավորապես՝ մեծածավալ արտարժութային տրանսֆերտների ներգործության արդյունք է: Այս իրավիճակում ԿԲ գլխավոր նպատակի՝ գնաճի ցածր և կայուն մակարդակի և փոխարժեքի որոշակի կայունության ապահովման խնդիրներն իրար հակասում են, որի պարագայում ԿԲ-ն նախապատվությունը տվել է գնաճի ծրագրված ցուցանիշի ապահովմանը՝ արդյունքում թույլ տալով փոխարժեքի արժեքավորում: Մյուս կողմից, տնտեսությունում ընթացող դրամայնացման երևույթը հանգեցրել է փողի պահանջարկի աճի բարձր տեմպերի, ինչին համապատասխան էլ ԿԲ-ն իրականացրել է առավել ընդլայնողական դրամավարկային քաղաքականություն:




Դրամավարկային քաղաքականության ընդլայնողական բնույթը, հատկապես երկրորդ եռամսյակում, առավել ակնհայտ երևում է դրամավարկային կանոնների[2] հաշվարկներից, քանի որ միջին հաշվով փողի բազայի աճի տեմպերը զգալի գերազանցել են կանոնով հաշվարկված ցուցանիշի աճի տեմպերը: Այսինքն, դրամավարկային քաղաքականության առավել ընդլայնողական բնույթը հիմնավորվում է անվանական ՀՆԱ-ի աճի տեմպի (10.2%) համեմատ փողի բազայի 12 ամսյա աճի (41.9%) առաջանցիկ տեմպերով:




[1] Դրամավարկային պայմանների ինդեքսի հայեցակարգը հրապարակված է 2001 թվականի 2-րդ եռամսյակի «ԿԲ բանբերում»:
[2] Դրամավարկային կանոնների հաշվարկման մեթոդաբանությունը հրապարակված է ՀՀ 2002 թվականի դրամավարկային քաղաքականության ծրագրում, առանձին հավելվածով:

Երկրորդ եռամսյակի ընթացքում ՀՀ ֆինանսական շուկայում գրանցվել է տոկոսադրույքների ընդհանուր մակարդակի աճ: Ինչպես ԱՄՆ դոլարով, այնպես էլ ՀՀ դրամով ավանդների տոկոսադրույքները նախորդ եռամսյակի վերջի համեմատ բարձրացել են: Այսպես, եռամսյակի ընթացքում դրամային ավանդների տոկոսադրույքները, նախորդ եռամսյակի վերջի համեմատ, աճել են 1.13 տոկոսային կետով՝ եռամսյակի վերջին կազմելով 8.62%, իսկ դոլարային ավանդների տոկոսադրույքները՝ 0.7 տոկոսային կետով՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջին կազմելով 6.94%: ԱՄՆ դոլարով և ՀՀ դրամով ավանդների տոկոսադրույքների տարբերությունը կազմել է 0.52 տոկոսային կետ՝ նախորդ եռամսյակի 0.31-ի փոխարեն:




Նախորդ եռամսյակի համեմատ 2.7 տոկոսային կետով աճել են ԱՄՆ դոլարով վարկերի տոկոսադրույքները՝ կազմելով 19.16%, իսկ ՀՀ դրամով վարկերի տոկոսադրույքները նվազել են 0.44 տոկոսային կետով՝ կազմելով 17.58%: Արդյունքում, երկրորդ եռամսյակի վերջին ԱՄՆ դոլարով վարկերի տոկոսադրույքը գերազանցել է ՀՀ դրամով վարկերի տոկոսադրույքը 0.63 տոկոսային կետով (առաջին եռամսյակի վերջին՝ 0.06 տոկոսային կետ)՝ հիմնականում պայմանավորված ՀՀ դրամի նկատմամբ ԱՄՆ դոլարի արժեզրկմամբ:




2005թ. երկրորդ եռամսյակի ընթացքում պետական պարտատոմսերի շուկայում տոկոսադրույքների միջին մակարդակը բարձրացել է:

Երկրորդ եռամսյակի ընթացքում ՊՊ առաջնային շուկայում պարտատոմսերի նկատմամբ ձևավորված պահանջարկը բավականին նվազել է՝ կազմելով թողարկման ծավալի 170.43%-ը՝ նախորդ եռամսյակի 275.9%-ի փոխարեն: Դրանով էլ պայմանավորված՝ պետական կարճաժամկետ պարտատոմսերի միջին եկամտաբերությունը նախորդ եռամսյակի համեմատությամբ աճել է 0.51 տոկոսային կետով՝ կազմելով 4.55%, միջնաժամկետ մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսերինը՝ 0.12 տոկոսային կետով՝ կազմելով 5.39%, միջնաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերինը՝ 0.22 տոկոսային կետով՝ կազմելով 6.06%, իսկ երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերինը՝ 1.13 տոկոսային կետով՝ կազմելով 8.06:



2005թ. երկրորդ եռամսյակում տեղի է ունեցել պետական կարճաժամկետ պարտատոմսերի 10 թողարկում՝ 9.0 մլրդ դրամ ընդհանուր ծավալով, պետական միջին ժամկետայնության մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսերի 3 թողարկում՝ 3.3 մլրդ դրամ ընդհանուր ծավալով, պետական միջնաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի 2 թողարկում՝ 2.0 մլրդ դրամ ծավալով և պետական երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի 1 թողարկում՝ 1.5 մլրդ դրամ ծավալով: ՀՀ ՖԷՆ-ի կողմից իրականացվել է 1.7 մլրդ դրամի պետական պարտատոմսերի հետգնում՝ 3.52% եկամտաբերությամբ: Հունիսին տեղի է ունեցել ՀՀ ԿԲ կողմից թողարկվող՝ մինչև 1 տարի մարման ժամկետով պարտատոմսերի առաջին թողարկման տեղաբաշխումը: Ընդհանուր առմամբ, իրականացվել է 3 թողարկում՝ 4.5 մլրդ դրամ ընդհանուր ծավալով, որից տեղաբաշխվել է 3.5 մլրդ դրամ ծավալի պարտատոմս՝ 4.86%-ով:




Արդյունքում՝ հունիսի 30-ի դրությամբ շրջանառության մեջ գտնվող պետական (գանձապետական) պարտատոմսերի ընդհանուր ծավալը, նախորդ ժամանակահատվածի (31/03/2005թ.) համեմատ, աճել է 7296.497 մլն դրամով՝ կազմելով 64328.997 մլն դրամ (անվանական արժեքով):


ՊՊ սեփականատերերի կառուցվածքում մոտ 2.5 մլրդ դրամով նվազել են ռեզիդենտ ոչ բանկ ներդրողների (այդ թվում՝ ոչ բանկ դիլերների) կողմից պետական արժեթղթերում կատարված ներդրումների ծավալները: Վերջիններիս պատկանող պարտատոմսերի տեսակարար կշիռը եռամսյակի վերջին կազմել է 6.96% կամ 4479.494 մլն դրամ: Պետական պարտատոմսերում ոչ ռեզիդենտների ներդրումների ծավալները կազմել են ընդամենը 0.13 մլն դրամ:

Ռեզիդենտ բանկերի (այդ թվում նաև ՀՀ ԿԲ) ներդրումների ծավալներն ավելացել են 9001.015 մլն դրամով՝ կազմելով 55443.867 մլն դրամ կամ շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի ամբողջ ծավալի 86.19%-ը:

ՀՀ ՖԷՆ կողմից հետ գնված պարտատոմսերի ծավալը եռամսյակի վերջում կազմել է 4405.506 մլն դրամ կամ շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի ամբողջ ծավալի 6.85%-ը:




Երկրորդային շուկայի գործառնությունների միջին տարեկան եկամտաբերությունը նախորդ եռամսյակի համեմատությամբ աճել է 0.25 տոկոսային կետով՝ կազմելով 5.24%: Միևնույն ժամանակ, ՊՊ երկրորդային շուկայում իրականացված գործառնությունների ծավալները նախորդ եռամսյակի համեմատությամբ աճել են 7.7 մլրդ դրամով՝ կազմելով 21.4 մլրդ դրամ: Վերջինիս միջին շաբաթական շրջանառությունը կազմել է մոտ 1 մլրդ 650 մլն դրամ:




Երկրորդ եռամսյակի ընթացքում միջբանկային ռեպո շուկայում իրականացված գործարքների աճ է արձանագրվել: Նախորդ եռամսյակի համեմատ միջբանկային ռեպո գործառնությունների ծավալներն ավելացել են 18.754 մլրդ դրամով՝ կազմելով 32.937 մլրդ դրամ: Գործարքների միջին ժամկետայնությունը կազմել է 9 օր: Միջբանկային ռեպո շուկայի միջին շաբաթական շրջանառությունը կազմել է մոտ 2.484 մլրդ դրամ: Գործառնությունների միջին տարեկան եկամտաբերությունը նախորդ եռամսյակի համեմատ նվազել է 0.55 տոկոսային կետով և կազմել 3.13 %:

Եկամտաբերության կորի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ եկամտաբերությունները աճել են կորի գրեթե ողջ երկայնքով: Եկամտաբերության կորի դիրքի փոփոխության գերակշիռ մասը՝ 88.68%-ը, պայմանավորվել է կորի մակարդակի համընթաց (զուգահեռ) տեղաշարժով, որը կազմել է 0.78 տոկոսային կետ՝ ի հաշիվ եկամտաբերությունների աճի: 33%-ով փոփոխվել է կորի գոգավածությունը (0.058-ից 0.088), ինչը նշանակում է, որ կարճ ժամկետայնությամբ պարտատոմսերի նկատմամբ ձևավորված բարձր պահանջարկով պայմանավորված՝ երկարաժամկետ ու կարճաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքների միջև տարբերությունը մեծացել է: Մնացորդային գործոնները կորի փոփոխության մեջ կազմել են – 22.11%:



Երկրորդ եռամսյակի ընթացքում (կապված ՀՀ տնտեսությունում ԱՄՆ դոլարի՝ դրամով փոխարկման էֆեկտի ակտիվացման հետ) ձևավորված ՀՀ դրամի պահանջարկը բավարարելու նպատակով ՀՀ ԿԲ-ն պարբերաբար հանդես է եկել արտարժույթի առք իրականացնելու առաջարկով՝ ապրիլ և մայիս ամիսներին գնել է 22.10 և 8.10 մլն ԱՄՆ դոլար՝ համապատասխանաբար 444.17 և 445.58 դրամ միջին կշռված փոխարժեքներով և կնքել 2.3 մլն ԱՄՆ դոլարի արտարժույթի ներգրավման սվոփ՝ 0.54% տոկոսադրույքով, 35 օր ժամկետով: Միաժամանակ, ՀՀ բանկային համակարգում առկա կարճաժամկետ ավելցուկային իրացվելիության կարգավորման նպատակով, ԿԲ-ն հանդես է եկել նաև դրամային գործառնություններ իրականացնելու հայտարարությամբ՝ մասնավորապես ՀՀ կենտրոնական բանկի կողմից ապրիլին կնքվել է 2194 մլն դրամի, մայիսին՝ 2008 մլն դրամի և հունիսին՝ 6470 մլն դրամի հակադարձ ռեպո գործառնություն՝ սահմանված 3.75%-ով, իսկ պետական պարտատոմսերի 1287 մլն դրամի առք իրականացրել է ապրիլին (անվանական արժեքով), 4.5%-ով:



Հաշվի առնելով ծրագրված դրամավարկային քաղաքականության ուղղվածությունը և ֆինանսական շուկայում առկա իրավիճակը՝ ՀՀ ԿԲ-ն դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքները չի փոփոխել, մասնավորապես՝ հակադարձ ռեպոյի համար սահմանվել է 3.75%, ավանդի համար՝ 1.75% և լոմբարդային վարկերի համար՝ 16%:


2005 թվականի երկրորդ եռամսյակի ընթացքում մեծ էր պահանջարկը Կենտրոնական բանկի ավանդների նկատմամբ: ՀՀ կենտրոնական բանկ երկրորդ եռամսյակում ներկայացվել է 30740 մլն դրամի ավանդի պահանջարկ, ընդ որում՝ ապրիլին ներդրվել է 16540 մլն դրամի ավանդ՝ սահմանված 1.75% եկամտաբերությամբ, մայիսին և հունիսին՝ համապատասխանաբար 7250 մլն դրամի և 6950 մլն դրամի ավանդ՝ դարձյալ 1.75%-ով:

ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքը 2005թ. երկրորդ եռամսյակում տատանվել է 439.17 և 459.39 դրամի սահմաններում և եռամսյակի վերջին, նախորդ ժամանակահատվածի վերջի համեմատությամբ, գրանցվել է 3.57% արժևորում (վարիացիա՝ 32.99, միջին շեղում՝ 5.74 դրամ):

Եռամսյակի ընթացքում միջբանկային շուկայում առքի ծավալները ըստ ամիսների համապատասխանաբար կազմել են՝ 135.75, 117.59 և 116.64 մլն ԱՄՆ դոլար, իսկ վաճառքինը՝ 135.89, 114.32 և 108.94 մլն ԱՄՆ դոլար[1]:

Առքի և վաճառքի ընդհանուր ծավալները կազմել են 369.98 մլն և 359.15 մլն ԱՄՆ դոլար, իսկ փոխարժեքները՝ համապատասխանաբար՝ 446.97 դրամ և 449.76 դրամ (գործարքների մոտ 19.35%-ը իրականացվել է միջբանկային շուկայում):

ԱՄՆ դոլարի առք ու վաճառքի համախառն ծավալը կազմել է մոտ 729.13 մլն ԱՄՆ դոլար, որը նախորդ եռամսյակի համեմատ ավելացել է մոտ 22.33%, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ 29.49%-ով:



Միջբանկային շուկայում եվրո/դրամ գործառնությունների ծավալները աճել են (14.18%): Առքի և վաճառքի ծավալները համապատասխանաբար կազմել են 16.38 և 36.60 մլն եվրո (նախորդ եռամսյակում՝ 12.63 և 33.76 մլն եվրո):

[1] *Արժութային շուկայում իրականացված վաճառքի գործառնությունների մեջ ներառված են նաև Կենտրոնական բանկի կողմից իրականացված առքի ծավալները:*

ՀՀ բանկերի և վարկային կազմակերպությունների գործունեությունը

ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԲԱՆԿԵՐԸ

30.06.2005 թ. դրությամբ ՀՀ տարածքում առկա բոլոր 21 առևտրային բանկերը գործել են ընդհանուր վերահսկողության դաշտում: Երկրորդ եռամսյակի ընթացքում բանկային համակարգի մասնաճյուղերի քանակն ավելացել է ութով և կազմել 250:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼ

2005 թ. երկրորդ եռամսյակի ընթացքում բանկային համակարգի ընդհանուր կապիտալն ավելացել է 9.7.%-ով (6.8 մլրդ դրամով) և 30.06.2005թ. դրությամբ կազմել է 76.8 մլրդ դրամ:

Ընդհանուր կապիտալի աճը պայմանավորվել է եռամսյակի ընթացքում բանկային համակարգի կողմից 2.5 մլրդ դրամ շահույթի ապահովմամբ և արտաքին աղբյուրներից կանոնադրական հիմնադրամի 6.5 մլրդ դրամ համալրմամբ: Վերոնշյալ աճը մասամբ չեզոքացվել է եռամսյակի ընթացքում բանկերի կողմից բաշխված շահաբաժինների չափով՝ 6 բանկեր 1.7 մլրդ դրամի շահաբաժիններ են բաշխել, ինչպես նաև շենքերի և շինությունների վերագնահատման պահուստների 553 մլն դրամ նվազումով:

Կանոնադրական հիմնադրամի աճն ապահովել են ութ բանկեր՝ կապված հուլիսի մեկից ուժի մեջ մտնող ընդհանուր կապիտալի նվազագույն սահմանաչափի նոր պահանջի հետ: Նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթի հաշվին 7 բանկեր 1.1 մլրդ դրամի չափով համալրել են գլխավոր պահուստը:

Բանկային համակարգի ռիսկով կշռված ակտիվներն աճել են 22.4%-ով, իսկ նորմատիվային ընդհանուր և հիմնական կապիտալները՝ համապատասխանաբար 6.5% և 7.5%-ով: Ընդհանուր և հիմնական կապիտալների աճի նկատմամբ ռիսկով կշռված ակտիվների առաջանցիկ աճի արդյունքում նվազել են բանկային համակարգի կապիտալի համարժեքության ցուցանիշները. ընդհանուր կապիտալի համարժեքության ցուցանիշը նվազել է 4.7 տոկոսային կետով, հիմնական կապիտալի համարժեքության ցուցանիշը՝ 4.1 տոկոսային կետով և համապատասխանաբար կազմել են 31.7% և 29.6%:

Բանկային համակարգի ընդհանուր կապիտալի և ընդհանուր ակտիվների հարաբերակցության ցուցանիշը եռամսյակի ընթացքում ավելացել է 0.2 տոկոսային կետով և եռամսյակի վերջին կազմել է 19.5%՝ պայմանավորված ակտիվների աճի տեմպի նկատմամբ կապիտալի առաջանցիկ աճի տեմպով:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաշվետու ժամանակաշրջանում բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունները աճել են 7.7%-ով (22.7 մլրդ դրամով) և եռամսյակի վերջին կազմել 316.5 մլրդ դրամ: Ընդհանուր պարտավորությունների աճ է արձանագրվել 14 բանկերում և նվազում՝ 7 բանկերում:

Եռամսյակի ընթացքում ՀՀ դրամով պարտավորություններն աճել են 12.7%-ով, իսկ արտարժույթով պարտավորությունները՝ 5.8%-ով, որի արդյունքում ընդհանուր պարտավորությունների կազմում ՀՀ դրամով պարտավորությունների տեսակարար կշիռը նախորդ եռամսյակի համեմատ ավելացել է 1.3 տոկոսային կետով և կազմել 28.9%:

Բանկային համակարգի պարտավորությունների աճին մեծապես նպաստել է իրավաբանական անձանց ավանդների 14.3 մլրդ դրամով աճը, ընդ որում՝ այդ աճը գերազանցապես ապահովվել է իրավաբանական անձանց ցպահանջ ավանդների աճի հաշվին:

Իրավաբանական և ֆիզիկական անձանց ընդհանուր ցպահանջ պարտավորություններն ավելացել են 8.8%-ով (11.5 մլրդ դրամով), իսկ ժամկետային ավանդները՝ 0.3%-ով (290 մլն դրամով):


Հատկանշական է, որ դրամի փոխարժեքի արժեքավորման ներկայիս պայմաններում ֆիզիկական անձանց և՛ ցպահանջ (ներառյալ դրանց բանկային հաշիվները), և՛ ժամկետային ավանդների կազմում

նվազել են արտարժութային և աճել դրամային ավանդների ծավալները: Ի տարբերություն ֆիզիկական անձանց ավանդների, իրավաբանական անձանց ավանդների աճը հիմնականում պայմանավորվել է արտարժութային ավանդների աճի հաշվին:

Եռամսյակի ընթացքում իրավաբանական և ֆիզիկական անձանց համընդհանուր ավանդներում (ցպահանջ և ժամկետային միջոցների) արտարժութային միջոցները ավելացել են 12.6%-ով (6 մլրդ դրամով), իսկ դրամային միջոցները՝ 17.4%-ով (5.8 մլրդ դրամով): Արդյունքում՝ 30.06.2005թ. դրությամբ իրավաբանական և ֆիզիկական անձանց ընդհանուր ավանդների մեծությունը կազմել է 233.4 մլրդ դրամ, որի 26.3%-ը կազմել են դրամային ավանդները (եռամսյակի սկզբին՝ 25.1%): Ընդ որում, ֆիզիկական անձինք, ի տարբերություն իրավաբանական անձանց, ավելի հակված են խնայողությունները կատարել արտարժույթով. ֆիզիկական անձանց ցպահանջ և ժամկետային ավանդներում ՀՀ դրամով տեղաբաշխված միջոցների տեսակարար կշիռը կազմել է ընդամենը 13.7%, որը զիջում է իրավաբանական անձանց ցպահանջ և ժամկետային ավանդներում դրամային պարտավորությունների 35.5% տեսակարար կշռին:

Պարտավորությունների կազմում եռամսյակի ընթացում զգալի փոփոխություններ են արձանագրվել նաև բանկերի լորո թղթակցային հաշիվներում՝ դրանք ավելացել են 45%-ով (1.9 մլրդ դրամով), բանկերի նկատմամբ այլ պարտավորություններում (ներառյալ ԿԲ նկատմամբ)՝ 12.4%-ով (3.1 մլրդ դրամով), ՀՀ կառավարության նկատմամբ պարտավորություններում վերջիններս ավելացել են 12.4%-ով (1.9 մլրդ դրամով), այլ պարտավորությունները ավելացել են 18.4%-ով (3.9 մլրդ դրամ):

Բանկային համակարգի ներգրավված միջոցների կառուցվածքը



1. Ֆիզիկական անձանց ցպահանջ ավանդներ, 2. Իրավաբանական անձանց ցպահանջ ավանդներ, 3. Ֆիզիկական անձանց ժամկետային ավանդներ, 4. Իրավաբանական անձանց ժամկետային ավանդներ, 5. Պարտավորություններ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ 6. Բանկերի թղթակցային հաշիվներ և այլ պարտավորություններ (ներառյալ ԿԲ), 7. Վճարվելիք տոկոսներ, 8. Պարտավորություններ կառավարության նկատմամբ, 9. Այլ պարտավորություններ

Եռամսյակի ընթացքում ընդհանուր պարտավորությունների կազմում տեսակարար կշիռների խոշոր փոփոխություններ չեն արձանագրվել: Հիմնականում փոքր-ինչ նվազել են ֆիզիկական անձանց և՛ ցպահանջ, և՛ ժամկետային ավանդների տեսակարար կշիռները, ինչին զուգընթաց, աճել են իրավաբանական անձանց ավանդների կշիռները:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՏԻՎՆԵՐ

2005թ. երկրորդ եռամսյակի ընթացքում բանկային համակարգի ակտիվներն ավելացել են 8.1%-ով (29.5 մլրդ դրամով) և 30.06.05թ. դրությամբ կազմել 393.3 մլրդ դրամ: Ակտիվների աճ է արձանագրվել բոլոր բանկերում:


Բանկային համակարգի ակտիվների կազմում զգալի ավելացել են վարկային ներդրումները՝ 9.5%-ով (13.3 մլրդ դրամով), թղթակցային հաշիվները ՀՀ ԿԲ-ում՝ 54.5%-ով (12.9 մլրդ դրամով), բանկերի նկատմամբ պահանջները՝ 35.3%-ով (5.8 մլրդ դրամով) և պետական արժեթղթերը՝ 26.2%-ով (10.2 մլրդ դրամով, ընդ որում՝ բուն արժեթղթերի պորտֆելն ավելացել է 16.9 մլրդ դրամով, որի աճը չեզոքացվել է ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի գծով պարտավորությունների 6.7 մլրդ դրամ աճով):

Զգալի նվազել են բանկերի արտարժութային կանխիկ միջոցները՝ 30.1%-ով (6.4 մլրդ դրամով), նոստրո թղթակցային հաշիվները՝ 8.9%-ով (5.7 մլրդ դրամով) և այլ պարտավորությունները՝ 19.9%-ով (2.5 մլրդ դրամով):

Դիտարկվող ժամանակահատվածում տնտեսությանը տրված վարկերի աճը գերազանցապես պայմանավորվել է ռեզիդենտների վարկավորման աճով:

Տնտեսությանը տրամադրված վարկերի կազմում ֆիզիկական անձանց վարկերն ավելացել են 13.5%-ով (7.2 մլրդ դրամով), իրավաբանական անձանց վարկերը՝ 6.8%-ով (5.6 մլրդ դրամով), իսկ բանկի հետ կապված անձանց և աշխատակիցներին տրամադրված վարկերը՝ 12.2%-ով (550 մլն դրամով):

Բանկային համակարգի ակտիվների կառուցվածքը



1. Կանխիկ դրամական միջոցներ
2. Թղթակցային հաշիվներ բանկերում
3. Պետական արժեթղթեր
4. Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմակ. նկատմամբ
5. Թղթ. հաշ. ԿԲ-ում և այլ պահանջներ ԿԲ նկ.
6. Վարկեր իրավաբանական անձանց
7. Վարկեր ֆիզիկական անձանց
8. Վարկեր բանկերի հետ կապված անձանց և աշխ.
9. Հաշվարկված ստացվելիք տոկոսներ
10. Հիմնական միջոցներ
11. Այլ արժեթղթեր
12. Լիզինգ, ֆակտորինգ (առանց միջբանկայինի)
13. Պահուստաֆոնդ
14. Այլ ակտիվներ


Հաշվետու եռամսյակում վարկերը և դեբիտորական պարտքերը (ներառյալ միջբանկային ավանդներն ու վարկերը, ռեպո համաձայնագրերը, լիզինգը, ֆակտորինգը) ընդհանուր աճել են 8.8%-ով (14.7 մլրդ դրամով) և 30.06.2005թ. դրությամբ կազմել 181.4 մլրդ դրամ: Վարկերի և դեբիտորական պարտքերի աճը մեծամասամբ պայմանավորվել է ռեզիդենտների դրամային վարկերի և դեբիտորական պարտքերի աճով: Այսպես. եռամսյակի ընթացքում դրամով վարկային ներդրումները աճել են 22.7%-ով, իսկ արտարժույթով վարկային ներդրումները՝ 3.8%-ով, ինչի արդյունքում ընդհանուր վարկային ներդրումներում դրամով վարկային ներդրումների տեսակարար կշիռը աճել է 3.4 տոկոսային կետով և կազմել 29.8%:

Ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերը և դեբիտորական պարտքերը ավելացել են 1.6%-ով (416 մլն դրամով), իսկ ռեզիդենտներին տրամադրված վարկերը և դեբիտորական պարտքերը՝ 10.2%-ով (14.3 մլրդ դրամով):

Ռեզիդենտների վարկային ներդրումներում հիմնականում ավելացել են սպառողական վարկերը՝ 15.6%-ով (6.5 մլրդ դրամով), գյուղատնտեսության վարկերը՝ 24.2%-ով (2.4 մլրդ դրամով), առևտրի վարկերը՝ 7.2%-ով (2.2 մլրդ դրամով, ընդ որում՝ 1.4 մլրդ դրամը քիմիական արդյունաբերության վարկավորման աճի հաշվին) և տրանսպորտի ու կապի վարկերը՝ 52.5%-ով (1.1 մլրդ դրամով): Վարկավորման ծավալները նվազել են միայն ֆինանսական հատվածում՝ 3.5-ով (300 մլն դրամով):

Եռամսյակի ընթացքում բանկային համակարգի դասակարգված ակտիվների տեսակարար կշիռը նվազել է 0.2 տոկոսային կետով՝ կազմելով ընդհանուր վարկերի և դեբիտորական պարտքերի 1.8%-ը: 30.06.2005թ. դրությամբ վարկային պորտֆելն ունեցել է հետևյալ կառուցվածքը. «ստանդարտ» վարկերը և դեբիտորական պարտքերը կազմել են 98.2%, «հսկվող» վարկերը և դեբիտորական պարտքերը՝ 1.2%, «ոչ ստանդարտ» վարկերը և դեբիտորական պարտքերը՝ 0.4%, «կասկածելի» վարկերը և դեբիտորական պարտքերը՝ 0.2%:

Բանկային համակարգի վարկային ներդրումները՝ ըստ տնտեսության ճյուղերի (30.06.05թ. դրությամբ)



1. Արդյունաբերություն, 2.Գյուղատնտեսություն, 3. Շինարարություն, 4. Տրանսպորտ և կապ, 5. Առևտուր, 6. Համրային սննդի և սպասարկման այլ ոլորտներ, 7. Ֆինանսական հատված, 8. Սպառողական վարկեր, 9. Այլ ճյուղեր

Բանկային համակարգի ակտիվների կազմում դրամային ակտիվների տեսակարար կշիռը աճել է 0.5 տոկոսային կետով և կազմել 42.3%:

Եռամսյակի ընթացքում բանկային համակարգի Ն2[1] ընդհանուր իրացվելիության գործակիցը նվազել է 1.5 տոկոսային կետով, իսկ Ն2[2] ընթացիկ իրացվելիության գործակիցը՝ 3.7 տոկոսային կետով և 30.06.2005թ. դրությամբ համապատասխանաբար կազմել են 45.2% և 106.1%: Իրացվելիության փաստացի ցուցանիշները շարունակում են զգալի բարձր մնալ Ն2[1] նորմատիվի 20% և Ն2[2] նորմատիվի 80% սահմանաչափերից: Ն1[1] և Ն2[2] իրացվելիության գործակիցների նվազումը պայմանավորվել է ակտիվների և ցպահանջ պարտավորությունների աճի նկատմամբ վարկային ներդրումների առաջացնիկ աճով:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ԾԱԽՍԵՐ

Բանկային համակարգի 2005 թ. առաջին կիսամյակի զուտ շահույթը կազմել է 5.2 մլրդ դրամ, ինչը 2004թ. նույն ժամանակաշրջանի զուտ շահույթը գերազանցել է 19.6%-ով: Կիսամյակի ընթացքում շահույթով են աշխատել 17 բանկեր, որոնց ստացած զուտ շահույթը կազմել է 6.6 մլրդ դրամ, իսկ վնասով են աշխատել 4 բանկեր, որոնց վնասը կազմել է 1.4 մլրդ դրամ:

2005թ. առաջին կիսամյակի ընթացքում բանկային համակարգը ստացել է 35.5 մլրդ դրամի համախառն եկամուտ՝ իրականացնելով 29.1 մլրդ դրամի ծախսեր: Արդյունքում՝ բանկային համակարգի շահույթը մինչև հարկումը կազմել է 6.4 մլրդ դրամ:

Համախառն եկամուտների կազմում տոկոսային եկամուտների տեսակարար կշիռը կազմել է 42.2%, ոչ տոկոսային եկամուտների տեսակարար կշիռը՝ 30.3% և ակտիվների հնարավոր կորուստների պահուստներից վերադարձի տեսակարար կշիռը՝ 27.5%: Տնտեսության վարկերից ստացված եկամուտներին բաժին է ընկել տոկոսային եկամուտների 80.7%-ը, իսկ ստացված միջնորդավճարներից՝ ոչ տոկոսային եկամուտների 33.5%-ը:

Համախառն ծախսերում մեծ տեսակարար կշիռը դարձյալ բաժին է ընկել ոչ տոկոսային ծախսերին, որոնք կազմել են 48.2%, իսկ տոկոսային ծախսերին և ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին բաժին են ընկել համապատասխանաբար 16.5% և 35.3% տեսակարար կշիռներ: Ոչ տոկոսային ծախսերում զգալի տեսակարար կշիռը բաժին է ընկել բանկային աշխատակիցների աշխատավարձին և դրան հավասարեցված այլ վճարներին, որի տեսակարար կշիռը կազմել է ոչ տոկոսային ծախսերի 35.8%-ը, իսկ տոկոսային ծախսերում զգալի՝ 56.5% տեսակարար կշիռը բաժին է ընկել ժամկետային ավանդների դիմաց վճարված տոկոսներին:

ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2005թ. երկրորդ եռամսյակում ՀՀ կենտրոնական բանկի կողմից լիցենզավորվել է «Վաշինգթոն Քափիթալ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ-ն և 30.06.05թ. դրությամբ ՀՀ տարածքում գործել են 10[1] վարկային կազմակերպություններ՝ երկու մասնաճյուղերով:

[1] «Վաշինգթոն քափիթալ» վարկային կազմակերպությունը լիցենզիա է ստացել 2005թ. հունիսին և առ 30.06.05թ. փաստացի գործունեություն չի ծավալել: Այդ պատճառով 30.06.05թ. տվյալները ներկայացված են ըստ 9 վարկային կազմակերպությունների:

Եռամսյակի ընթացքում վարկային կազմակերպությունների ընդհանուր ակտիվների մեծությունը աճել է 19.5%-ով և կազմել 6.6 մլրդ դրամ, որը բանկային համակարգի ակտիվների ծավալի ընդամենը 1.7%-ն է:

Վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի ընդհանուր ծավալը երեք ամիսների ընթացքում ավելացել է 23.5%-ով (646 մլն դրամով)՝ հիմնականում իրավաբանական անձանց տրված վարկերի աճի հաշվին: 30.06.2005թ. դրությամբ իրավաբանական անձանց վարկերը կազմել են 1.2 մլրդ դրամ, ֆիզիկական անձանց վարկերը՝ 2.2 մլրդ դրամ: Լիզինգի ու ֆակտորինգի ընդհանուր ծավալը երկրորդ եռամսյակում ավելացել է 5.5%-ով և կազմել 1.1 մլրդ դրամ:

Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի և դեբիտորական պարտքերի ընդհանուր ծավալն աճել է 23.2%-ով (1 մլրդ դրամով) և կազմել 5.4 մլրդ դրամ: Տնտեսության բոլոր ճյուղերում վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկային ներդրումների աճ է արձանագրվել: Ընդ որում՝ վարկային ներդրումների ընդհանուր աճի 30.4%-ը ապահովել է արդյունաբերության աճը, իսկ 30%-ը՝ ֆինանսական հատվածի վարկավորումը: Վարկային ներդրումներում ամենամեծ տեսակարար կշիռը բաժին է ընկել սպառողական վարկերին՝ 29.4%: Արդյունաբերության ճյուղի վարկերի տեսակարար կշիռն ընդհանուր վարկային ներդրումներում կազմել է 25.6%, ֆինանսական հատվածինը՝ 15.6%, գյուղատնտեսությանը՝ 10%, առևտրի ոլորտինը՝ 5%, իսկ մնացյալ 14.3%-ը՝ այլ ճյուղերինը:

Վարկային ներդրումների ռիսկայնության դասերի առումով՝ եռամսյակի ընթացքում ընդհանուր վարկերի և դեբիտորական պարտքերի կազմում ստանդարտ վարկերի և դեբիտորական պարտքերի տեսակարար կշիռը նվազել է 1.5 տոկոսային կետով և կազմել 91.5%:

Եռամսյակի ընթացքում վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի մեծությունը աճել է 6.2%-ով (212 մլն դրամով) և եռամսյակի վերջին կազմել 3.6 մլրդ դրամ:

Վարկային կազմակերպությունների ընդհանուր պարտավորությունների մեծությունը աճել է 40.5%-ով (870 մլն դրամով)՝ մեծամասամբ ի հաշիվ բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրաված փոխառությունների աճի և կազմել է 3 մլրդ դրամ:

2005թ. առաջին կիսամյակի ընթացքում 5 վարկային կազմակերպություններ աշխատել են վնասով (ընդհանուր վնասը կազմել է 203 մլն դրամ) և 4 վարկային կազմակերպություններ՝ շահույթով (ընդհանուր շահույթը կազմել է 154.3 մլն դրամ): Արդյունքում՝ եռամսյակի ընթացքում վարկային կազմակերպությունների ընդհանուր վնասը կազմել է 48.8 մլն դրամ:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԴԱՇՏԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Եռամսյակի ընթացքում փոփոխություններ են կատարվել բանկային գործունեությունը կարգավորող մի շարք ենթաօրենսդրական ակտերում՝

- Փոփոխվել է «Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, բանկերի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի ղեկավարների որակավորումը և գրանցումը» կանոնակարգ 1-ը և բանկային գործունեության լիցենզիայի միասնական ձևը: Հստակեցվել են ՀՀ տարածքում բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի հիմնադրման, գրանցման (ներառյալ փոփոխությունների գրանցման) և լիցենզավորման, բանկերի տարածքային ստորաբաժանումների՝ մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ստեղծման ու գրանցման, բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի ղեկավարների որակավորման և գրանցման, ինչպես նաև վերոնշյալ հարցերի հետ կապված օրենքներով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի իրավասությանը վերապահված այլ հարաբերությունները:
- «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ում կատարվել են փոփոխություններ և լրացումներ: Կանոնակարգ 2-ը համապատասխանեցվել է «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ նոր օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջին՝ ՀՀ տարածքում բանկերի կանոնադրական կապիտալը կարող է համալրվել բացառապես ՀՀ դրամով: Խստացվել է ԿԲ-ում տեղաբաշխվող պարտադիր պահուստավորման նվազագույն չափի նորմատիվը՝ նախկին 6 տոկոսը փոխարինվել է 8 տոկոսով, և փոխվել է նորմատիվի հաշվարկման կարգը՝ հայկական դրամով ներգրավված միջոցների դիմաց պահուստավորումն իրականացվում է հայկական դրամով, ԱՄՆ դոլարով ներգրավված միջոցների դիմաց պահուստավորումը՝ ԱՄՆ դոլարով, եվրոյով ներգրավված միջոցների դիմաց պահուստավորումը՝ եվրոյով, իսկ մնացած այլ արտարժույթներով ներգրավված միջոցների դիմաց՝ ԱՄՆ դոլարով:

- «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ում կատարվել են փոփոխություններ և լրացումներ՝ Կանոնակարգ 2-ի փոփոխություններին համապատասխանեցնելու նպատակով:
- Հաստատվել է «Բանկի հիմնական գործունեության հետ կապված կամ բանկի գործադիր տնօրենի անմիջական ղեկավարության ներքո աշխատող կամ բանկի կառավարման մարմինների կողմից որոշումների կայացման հարցում ազդեցություն ունեցող աշխատակիցներին բանկի ղեկավար համարելու ուղեցույցը»: Համաձայն ուղեցույցի՝ բանկի նկատմամբ արդյունավետ վերահսկողության իրականացման նպատակով սահմանվել են այն չափանիշները, որոնք կարող են հիմք հանդիսանալ ՀՀ ԿԲ խորհրդի կողմից՝ համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի դրույթի, բանկի աշխատակցին բանկի ղեկավար համարելու համար:
- Հաստատվել են «Իրավաբանական անձանց գործունեության ուղղությունները, ոլորտները կամ կառավարման մարմինների որոշումները կանխորոշելու կամ որոշումների կայացման կամ կիրառման վրա էապես ազդելու հնարավորություն ունեցող անձանց նշանակալից մասնակից հանդիսանալու չափանիշները», որոնց նպատակը «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի «բ» ենթակետի դրույթի կիրառման արդյունավետ և հստակ սահմանված հիմքեր ստեղծելն էր:
- Հաստատվել է «Բանկի/վարկային կազմակերպությունների ղեկավարների թեկնածուների ու հավակնորդների որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգման քննության թեմաների ցանկը», որը համապատասխանեցվել է բանկային գործունեությունը կարգավորող օրենքներում և ենթաօրենսդրական դաշտում կատարված փոփոխություններին:
- Նոր խմբագրությամբ հաստատվել է «ՀՀ տարածքում գործող բանկերում կանխիկ դրամով գործառնությունները» կանոնակարգ 9-ը:

2005 թ. երկրորդ եռամսյակի ընթացքում ՀՀ կենտրոնական բանկը շարունակել է ՀՀ վճարահաշվարկային համակարգի զարգացման աշխատանքները: Համաձայն «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին»[1] ՀՀ օրենքի դրույթների՝ մշակվել են ՀՀ վճարահաշվարկային բնագավառը, ինչպես նաև վճարային ծառայություններ մատուցող կազմակերպությունների գործունեությունը կարգավորող իրավական փաստաթղթեր: Մասնավորապես.

- Կանոնակարգ 16 «Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների հաշվառումը, գործունեության կարգավորումը, ղեկավարների որակավորումը» [2]:
- Կանոնակարգ 17 «Վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների հաշվառումը, ղեկավարների որակավորումը»[2]:
- Կանոնակարգ 18 «Հայաստանյան վճարահաշվարկային համակարգերի ստեղծման և գործունեության իրականացման համար թույլտվության տրամադրումը»[2]:
- Կանոնակարգ 19 «Արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում մասնակցելու թույլտվության տրամադրումը»[2]:
- Կարգ «Հայաստանի Հանրապետության տարածքում չեկերի թողարկման, սպասարկման և շրջանառության մասին»[2]:
- Կարգ «Հայաստանի Հանրապետության տարածքում վճարային գործիքների սպասարկման և /կամ/ իրացման /տարածման/ տեղեկացման վերաբերյալ»[2]:
- Վճարահաշվարկային համակարգ վճարահաշվարկային փաստաթղթերի մուտքագրման և անվերադարձելիության պահի սահմանման մասին որոշումը[2]:
- «Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների կողմից վճարահաշվարկային ծառայությունների հաշվառման» կարգը[2]:
- Կանոնակարգ 22 «Վճարահաշվարկային կազմակերպությունների հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը»[2]:

ՀՀ կենտրոնական բանկի սեփական արժեթղթերի թողարկման, դրանց շրջանառության ապահովման հետ կապված՝ կատարվել են պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգի զարգացման աշխատանքներ:

2005թ. երկրորդ եռամսյակի ընթացքում ՀՀ տարածքում իրականացված անկանխիկ վճարումների ծավալը կազմել է 1125179 մլն ՀՀ դրամ (քանակը՝ 167195), այդ թվում՝ ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով իրականացված վճարումների ծավալը կազմել է 712748 մլն ՀՀ դրամ, իսկ քանակը՝ 214386: 2005թ. առաջին եռամսյակի համեմատ անկանխիկ վճարումների ծավալն ավելացել է 1.2. անգամ՝ պայմանավորված նախորդ եռամսյակի համեմատ հաշվետու ժամանակահատվածում դիտարկվող տնտեսական ակտիվությամբ: 2004թ. երկրորդ եռամսյակի համեմատ անկանխիկ վճարումներն ավելացել են՝ ծավալը 1.3 անգամ (263631 մլն ՀՀ դրամով), իսկ քանակը՝ 5.8 անգամ, որը կազմել է 112051:

ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով իրականացված վճարումները 2005թ. առաջին եռամսյակի համեմատ ավելացել են՝ ծավալը 1.18 անգամ (111295 մլն ՀՀ դրամով), իսկ քանակը՝1.3 անգամ, որը կազմել է 50596:


[1] *Ուժի մեջ է մտել 2005թ. հունիսի 28-ից:*
[2] *Ներկայումս տվյալ փաստաթղթերը գտնվում են գրանցման և հրապարակման ընթացակարգում՝ ՀՀ արդարադատության նախարարության կողմից:*

Deleted: II-րդ
Deleted: աշխատանքները
Deleted: ուղղությամբ
Deleted: աշխատանքներ
Deleted: են տարվել
Deleted: ուղղությամբ
Deleted: II-րդ
Deleted: I-ին
Deleted: ը
Deleted: նախորդ եռամսյակի համեմատ:
Deleted: II-րդ
Deleted: ը
Deleted: աճել
Deleted: ում

Վճարային համակարգերով իրականացված դրամական փոխանցումների միջին օրական ծավալը կազմել է մոտ 11.1 մլրդ ՀՀ դրամ, իսկ քանակը՝ 3350: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ դրամական փոխանցումների միջին օրական ծավալն ավելացել է 1.7 մլրդ ՀՀ դրամով (քանակը՝ 791-ով):

2005 թ. երկրորդ եռամսյակի ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի միջոցով իրականացված վճարումների մեջ շարունակել են մեծ տեսակարար կշիռ կազմել Գանձապետարանի նախածեռնած, ինչպես նաև վերջինիս ուղղված փոխանցումները, որոնք կազմել են ընդհանուր վճարումների ծավալի 40.6%-ը և քանակի 46.1%-ը: ՀՀ կենտրոնական բանկի միջոցով Գանձապետարան ուղղված, ինչպես նաև վերջինիս նախածեռնած փոխանցումների ընդհանուր ծավալը նախորդ եռամսյակի համեմատ աճել է 4%-ով, իսկ քանակը՝ 28%-ով:

ՀՀ ԿԲ միջոցով իրականացված վճարումների քանակը և ծավալը



ՀՀ տարածքում պլաստիկ քարտերով իրականացվել է 20465 մլն ՀՀ դրամի 540729 գործառնություն: Այդ թվում՝ անկանխիկ վճարումների և համացանցի միջոցով (ինտերնետ) կատարված առևտրի վճարումների ծավալը միասին կազմել է մոտ 1829 մլն ՀՀ դրամ: Քարտային գործառնությունների ծավալը 2005թ. նախորդ ժամանակահատվածի համեմատությամբ աճել է 4316 մլն ՀՀ դրամով, իսկ գործառնությունների քանակը՝ 1.2 անգամ, որը կազմել է 107163 գործառնություն:

Շրջանառության մեջ գտնվող ընդհանուր քարտերի քանակը կազմել է 124933 քարտ, որը եռամսյակի ընթացքում ավելացել է 1.05 անգամ (6887 քարտով):

Էլեկտրոնային վճարումների համակարգ

2005թ. երկրորդ եռամսյակի վերջի դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի էլեկտրոնային վճարումների համակարգի մասնակիցների ընդհանուր քանակը մնացել է անփոփոխ, որը կազմել է 157, այդ թվում՝ ՀՀ կենտրոնական բանկը և նրա 3 տարածքային դրամարկղային կենտրոնները, ՀՀ գանձապետարանը՝ 44 բաժանմունքներով, 22 առևտրային բանկեր՝ 84 մասնաճյուղերով, «Արմենիան Քարդ» պրոցեսինգային կենտրոնը և Միջպետական բանկը (ք.Մոսկվա):


Վճարումների գերակշիռ մասը իրականացվել է էլեկտրոնային վճարումների համակարգի միջոցով: Համակարգի մասնակիցների կատարած էլեկտրոնային վճարումները միջին հաշվով կազմել են ընդհանուր վճարումների ծավալի 72.3%-ը, քանակի 96.7%-ը: Նախորդ տարվա երկրորդ եռամսյակի համեմատ էլեկտրոնային վճարումների ծավալը ավելացել է 1.27-անգամ, իսկ քանակը՝ 1.35-անգամ: Առևտրային բանկերի կողմից կատարված էլեկտրոնային վճարումները վերջիններիս ընդհանուր վճարումների ծավալային կառուցվածքում կազմել են 75.6%, իսկ քանակային կառուցվածքում՝ մոտ 99.3%:

Էլեկտրոնային վճարումների համակարգով իրականացված դրամական փոխանցումների միջին օրական քանակը 2005թ. առաջին եռամսյակի համեմատ ավելացել է 770-ով՝ կազմելով մոտ 3241, իսկ ծավալը՝ 1339 մլն ՀՀ դրամով՝ կազմելով 8052 մլն ՀՀ դրամ: Էլեկտրոնային վճարումների համակարգում մեկ էլեկտրոնային փոխանցման միջին ծավալը, նախորդ տարվա համեմատ, նվազել է մոտ 160 հազ. ՀՀ դրամով և կազմել 2485 հազ. ՀՀ դրամ:

Էլեկտրոնային վճարումների համակարգում գրանցված մերժումները կազմել են նախածեռնած վճարումների քանակի 0.04%-ը և ծավալի 0.19%-ը (90 փոխանցում՝ 987 մլն ՀՀ դրամ ծավալով), ընդ

որում՝ անբավարար իրացվելիության պատճառով մերժված վճարումները կազմել են համակարգում իրականացված վճարումների քանակի 0.03%-ը, ծավալի 0.17%-ը (67 փոխանցում՝ 894 մլն ՀՀ դրամ ծավալով):

էլեկտրոնային վճարումների համակարգով իրականացված միջին օրական փոխանցումները



էլեկտրոնային վճարումների համակարգով իրականացված վճարումներն ըստ հաղորդագրության տեսակների

Հաղորդագրության տեսակը	2001	2002	2003	2004	I եռ. 2005	II եռ. 2005
ՀՏ 100 (Վճարման հանձնարարական)						
Գումար (մլն ՀՀ դրամ)	478783	590026	864149	948923	260677	292173
Քանակ	216563	251794	386469	362700	86643	112412
ՀՏ 120 (Բյուջեի մուտքի հանձնարարական)						
Գումար (մլն ՀՀ դրամ)	118767	156358	229550	156463	38942	47399
Քանակ	364041	424288	545427	188449	50365	68443
ՀՏ 122 (Բյուջե բազմակի փոխանցման հանձնարարական)						
Գումար (մլն ՀՀ դրամ)	14	1	0	0	0	0
Քանակ	27	4	0	0	0	0
ՀՏ 123 (Բյուջետային վճարման հավաքական հանձնարարական)						
Գումար (մլն ՀՀ դրամ)	4047	5128	5197	18	1	1
Քանակ	112721	127122	106593	94	15	9
ՀՏ 131 (Բազմակի փոխանցման հանձնարարական)						
Գումար (մլն ՀՀ դրամ)	412	534	360	732	269	361
Քանակ	526	324	361	1331	344	478
ՀՏ 132 (Հավաքական վճարումների հանձնարարական)						
Գումար (մլն ՀՀ դրամ)	13194	610	27	7	354	4032
Քանակ	749	327	344	6	13	104
ՀՏ 202 (Միջբանկային վճարման հանձնարարական)						
Գումար (մլն ՀՀ դրամ)	150299	196161	278981	521051	129412	171394
Քանակ	19430	24506	37262	85220	20751	25977
Ընդամենը						
Գումար (մլն ՀՀ դրամ)	765515	948818	1378264	1627194	429654	515359
Քանակ	714057	828365	1076456	637800	158131	207423

Համախառն թղթային վճարումներ

2005թ. երկրորդ եռամսյակի ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի միջոցով թղթային վճարումներ են նախաձեռնել ՀՀ կենտրոնական բանկը, ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերը, ՀՀ գանձապետարանը: Առևտրային բանկերի կողմից թղթային եղանակով կատարված վճարումները կազմել են վերջիններիս վճարումների ծավալի 11%-ը և քանակի 0.5%-ը: Թղթային եղանակով իրականացված վճարումների միջին օրական քանակը կազմել է 95 փոխանցում՝ 2005թ. առաջին եռամսյակի համեմատ ավելացել է 14-ով, իսկ ծավալը նվազել է 431 մլն ՀՀ դրամով՝ կազմելով 1925 մլն ՀՀ դրամ: Մեկ թղթային փոխանցման միջին ծավալը առաջին եռամսյակի համեմատությամբ նվազել է մոտ 8.7 մլն ՀՀ դրամով և կազմել է 20 մլն ՀՀ դրամ: 2005թ. երկրորդ եռամսյակի ընթացքում առևտրային բանկերի միջև թղթային եղանակով իրականացվել է 5287 մլն ՀՀ դրամ ծավալով 30 փոխանցում:

ՀՀ կենտրոնական բանկի, ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի և Գանձապետարանի կողմից իրականացված վճարումները ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով

Ժամանակահատվածը	Համախառն				Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգ		Ընդամենը	
	էլեկտրոնային		Թղթային				ԿԲ միջոցով	
	Գումար (մլն դրամ)	Քանակ	Գումար (մլն դրամ)	Քանակ	Գումար (մլն դրամ)	Քանակ	Գումար (մլն դրամ)	Քանակ
2004								
I եռ..	318649	134340	82982	3639	15731	350	417362	138329
տեսակարար կշիռը վճարումներում (%)	76,35	97.12	19.88	2.63	3.77	0.25	100	100
II եռ.	404239	152858	57732	4054	21003	378	482974	157290
տեսակարար կշիռը վճարումներում (%)	83.70	97.18	11.95	2.58	4.35	0.24	100	100
III եռ.	422186	162106	20967	4186	24092	463	467245	166755
տեսակարար կշիռը վճարումներում (%)	90.35	97.21	4.49	2.51	5.16	0.28	100	100
IV եռ.	482120	188496	50812	4998	22797	504	555729	193998
տեսակարար կշիռը վճարումներում (%)	86.74	97.16	9.14	2.58	4.10	0.26	100	100
Ընդամենը	1627194	637800	212493	16877	83623	1695	1923310	656372
տեսակարար կշիռը վճարումներում (%)	84.59	97.17	11.05	2.57	4.35	0.26	100	100
2005								
I եռ.	429654	158131	150806	5188	20993	471	601453	163790
տեսակարար կշիռը վճարումներում (%)	71.44	96.54	25.07	3.17	3.49	0.29	100	100
II եռ.	515359	207423	123228	6062	74161	901	712748	214386
տեսակարար կշիռը վճարումներում (%)	72.31	96.75	17.29	2.83	10.40	0.42	100	100

Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգ

Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգին անդամակցել են ՀՀ տարածքում գործող 6 գործակալ և 14 դիլեր բանկեր, մեկ ոչ բանկ դիլեր, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը (թողարկողի կարգավիճակով), Գանձապետական պահառուն, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկը (կենտրոնական պահառուի կարգավիճակով):

Երկրորդ եռամսյակի ընթացքում համակարգի կողմից պետական արժեթղթերի առաջնային տեղաբաշխման և մարման նպատակով ձևավորվել է 533 հանձնարարական՝ 22428 մլն ՀՀ դրամ ծավալով, ինչը 2005թ. առաջին եռամսյակի համեմատ ավելացել է 1880 մլն ՀՀ դրամով: Նշված ընդհանուր ծավալում առաջնային տեղաբաշխման ժամանակ ձեռք բերված պարտատոմսերի դիմաց բանկերի կողմից կատարվել է 14498 մլն ՀՀ դրամի փոխանցում, իսկ արժեթղթերի մարման դիմաց Գանձապետարանի կողմից կատարվել է 7930 մլն ՀՀ դրամի փոխանցում:

Գանձապետական պահառու համակարգի կողմից արժեթղթերի դիմաց կատարվել է 233 մլն ՀՀ դրամի վճարում, այդ թվում՝ 136 մլն ՀՀ դրամ՝ արժեթղթերի տեղաբաշխման և 97 մլն ՀՀ դրամ՝ արժեթղթերի մարման դիմաց:

Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգի երկրորդային շուկայի միջոցով կատարված պետական արժեթղթերով գործառնությունները ավելացել են 1.8-անգամ՝ կազմելով 107063 մլն ՀՀ դրամ՝ անվանական արժեքով (այդ թվում՝ առք ու վաճառք՝ 57158 մլն ՀՀ դրամ ծավալով, ազատ առաքում՝ 41965 մլն ՀՀ դրամ ծավալով, գրավադրում՝ 6941 մլն ՀՀ դրամ ծավալով): DVP սկզբունքով կատարված առք ու վաճառքի 368 գործառնությունների դիմաց վճարվել է 51733 մլն ՀՀ դրամ:

Պետական արժեթղթերի երկրորդային շուկայում կատարված գործառնությունների արդյունքում 2005թ. առաջին եռամսյակի համեմատ դեպո հաշիվների վրա գրանցված արժեթղթերի ծավալի շարժը ավելացել է 1.65 անգամ (8955 մլն ՀՀ դրամով) և կազմել է 22700 մլն ՀՀ դրամ՝ անվանական արժեքով, իսկ գործառնությունների քանակը ավելացել է 85-ով և կազմել 304:

Պլաստիկ քարտերով վճարումների համակարգ

2005թ. երկրորդ եռամսյակի վերջի դրությամբ հաճախորդներին պլաստիկ քարտերի տրամադրումը կամ դրանց սպասարկումը իրականացվել է ՀՀ տարածքում գործող 16 առևտրային բանկերի կողմից: Ընդ որում՝ 14 առևտրային բանկեր անդամակցել են «ԱրՔա» քարտերով վճարումների միասնական համակարգին:

ՀՀ տարածքում գործող բանկերի կողմից տրամադրվող քարտերի տեսակները

Բանկի անվանումը	ԱրՔա	MASTER CARD	VISA	Այլ քարտեր
Ամելիք բանկ	+	+		
Արդշինհինվեստբանկ	+	+		
Հայներարտբանկ	+	+		
Հայէկոնոմբանկ	+	+		
Զարգացման հայկական բանկ	+	+		
Կոնվերս բանկ	+		+	+
HSBC բանկ Հայաստան	+	+	+	+
Հայգյուղփոխբանկ	+		+	
Արցախ բանկ	+			
«ԻԹԲ» միջազգային առևտրային բանկ	+			
Յունիբանկ	+		+	
Ինեկո բանկ	+	+	+	
Մելլաթ բանկ	+			
Առէկսիմբանկ			+	
Հայխնայբանկ			+	

Հաշվետու եռամսյակի ընթացքում քարտերի սպասարկման նպատակով տեղադրվել են 14 նոր ավտոմատ գանձման մեքենաներ և եռամսյակի վերջի դրությամբ դրանց ընդհանուր քանակը կազմել է 90: Այդ թվում՝ «ԱրՔա» պլաստիկ քարտերի սպասարկումը իրականացվել է 67 ավտոմատ գանձման սարքավորումների միջոցով: Առևտրային բանկերի կողմից տեղադրվել են նաև 101 POS-տերմինալներ և 6 իմպրինտերներ, որոնց ընդհանուր քանակը համապատասխանաբար կազմել է 806 POS-տերմինալ և 64 իմպրինտեր:

Եռամսյակի վերջի դրությամբ գործող «ԱրՔա» քարտերի քանակը 2005թ. առաջին եռամսյակի համեմատ ավելացել է 1.06 անգամ (3199 քարտով) և կազմել 54866, իսկ միջազգային քարտային համա-

կարգերի քարտերի քանակը՝ 1.05 անգամ (3688 քարտով), այդ թվում՝ VISA միջազգային քարտային համակարգի քարտերն ավելացել են 1.06 անգամ (3405 քարտով) և կազմել 53547, իսկ MasterCard միջազգային քարտային համակարգի քարտերը՝ 1.1 անգամ (508 քարտով) և կազմել 4099:


Շրջանառության մեջ գտնվող «ԱրՔա» քարտերով եռամսյակի ընթացքում իրականացվել է 256541 գործառնություն՝ 6249 մլն ՀՀ դրամ ծավալով: «ԱրՔա» քարտերով կատարված գործառնությունների ծավալը 2005թ. առաջին եռամսյակի համեմատ ավելացել է մոտ 1.3 անգամ (1476 մլն ՀՀ դրամով), իսկ քանակը՝ 1.2 անգամ (53765-ով):

VISA միջազգային քարտային համակարգի քարտերով իրականացված գործառնությունների ծավալը կազմել է 8859 մլն ՀՀ դրամ (166883 գործառնություն), իսկ MasterCard միջազգային քարտային համակարգի քարտերով իրականացվել է 1795 մլն ՀՀ դրամ ծավալով 20547 գործառնություն: VISA համակարգի քարտերով իրականացված գործառնությունների ծավալը առաջին եռամսյակի համեմատ ավելացել է 1.2 անգամ (1762 մլն ՀՀ դրամով), իսկ MasterCard համակարգի քարտերով կատարված գործառնությունների ծավալը՝ 1.4 անգամ (512 մլն ՀՀ դրամով):

Միջազգային այլ քարտերով իրականացվել է 96758 գործառնություն՝ 3562 մլն ՀՀ դրամ ծավալով, որը 2005թ. առաջին եռամսյակի համեմատ ավելացել է 566 մլն ՀՀ դրամով:

Եռամսյակի վերջի դրությամբ շրջանառության մեջ գտնվող մեկ «ԱրՔա» քարտով շարունակվել է ամսական իրականացվել միջինը մոտ 2 գործառնություն: Մեկ գործառնության միջին ծավալը առաջին եռամսյակի համեմատ գրեթե պահպանել է նույն մակարդակը՝ 24 հազար ՀՀ դրամ:

Մեկ ավտոմատ գանձման մեքենայի կողմից սպասարկվող «ԱրՔա» քարտերի քանակը եռամսյակի վերջի դրությամբ կազմել է միջինը 818 քարտ:



Քարտեր սպասարկող սարքավորումների միջոցով «ԱրՔա» քարտերով կատարված գործարքներ (2005 թ. երկրորդ եռամսյակ)

	Գումար (մլն դրամ)	*Քանակ*
Ավտոմատ գանձման սարքերի միջոցով	4237.5	189009
POS – տերմինալների միջոցով	2011.0	67532
Իմպրինտերների միջոցով	0.0	0
Ընդամենը	6248.5	256541

Միջազգային փոխանցումների համակարգեր

ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերը դրամական փոխանցումներն արագ իրականացնելու նպատակով անդամակցում են՝ WESTERN UNION, MONEYGRAM, ANELIK, UNISTREAM, EXPRESS և այլ համակարգերի: 2005թ. երկրորդ եռամսյակի ընթացքում այս համակարգերի միջոցով Հայաստանի

Հանրապետություն փոխանցումների ծավալը կազմել է 54095 մլն ՀՀ դրամ (քանակը 234323), որը 6.7 անգամ գերազանցել է արտասահման կատարված փոխանցումների ծավալը: Հայաստանի Հանրապետություն փոխանցումների ծավալը 2005թ. առաջին եռամսյակի համեմատ ավելացել է 1.6 անգամ (19924 մլն ՀՀ դրամով): Այս համակարգերով Հայաստանի Հանրապետություն կատարված մեկ փոխանցման միջին ծավալը կազմել է 231 հազ. ՀՀ դրամ, որը 2005թ. առաջին եռամսյակի համեմատ ավելացել է 25 հազար ՀՀ դրամով:

SWIFT համակարգի միջոցով Հայաստանի Հանրապետություն կատարված փոխանցումների ծավալը կազմել է 741783 մլն ՀՀ դրամ, իսկ քանակը՝ 69732. մեկ փոխանցման միջին ծավալը՝ 10.6 մլն ՀՀ դրամ: Նախորդ եռամսյակի համեմատ SWIFT -ի միջոցով իրականացված մեկ փոխանցման ծավալը նվազել է 600 հազար ՀՀ դրամով:

Մակրոտնտեսական ցուցանիշները 2005 թ. հունվար-հունիսին

(ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա)

I. Իրական հատված

Անվանում	*Հունվար - ապրիլ*	*Հունվար - մայիս*	*Հունվար- հունիս*	*2005թ.հունվար-հունիսի իրական աճի հնդեքսը՝2004թ. հունվար-հունիսի նկատմամբ (%)*
Համախառն ներքին արդյունք *(մլն դրամ)*	358362.6	499090.8	704668.2	110.2
ՀՆԱ դեֆլյատոր *(%. աճողական)*	-	-	-	106.0
Մեկ զբաղվածին բաժին ընկնող ՀՆԱ *(հազար դրամ)* [1]	326.5	452.5	636.7	111.2
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն դրամ)*	194084.3	246032.8	306720.4	105.3
էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կվտ/ժամ)*	2378.8	2904.6	3345.8	104.1
Գյուղատնտեսության համախառն արտադրանք *(մլն դրամ)*	55845.7	76730.6	103604.1	110.2
Մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը *(մլն դրամ)*	220297.3	285417.0	353432.8	105.1
Կապիտալ շինարարության ծավալը *(մլն դրամ)*	37758.3	68042.8	116479.0	143.0
Բնակչության դրամական եկամուտները *(մլն դրամ)*	367759.4	476702.3	589685.4	109.3[1]
Բնակչության դրամական ծախսերը *(մլն դրամ)*	367836.0	472218.7	581827.1	105.9[1]
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը *(ՀՀ դրամ)*	47912	48891	49474[2]	121.1[1,2]
Տնտեսապես ակտիվ բնակչություն *(հազար մարդ)*	1203.8	1208.2	1210.6	
Պաշտոնապես գրանցված գործազուրկներ *(հազար մարդ)*	106.2	105.2	103.9	
Գործազրկության մակարդակը (%)	8.8	8.7	8.6	

II. Արտաքին հատված

Անվանում	*Հունվար - ապրիլ* *(մլն ԱՄՆ դոլար)*	*Հունվար – մայիս* *(մլն ԱՄՆ դոլար)*	*Հունվար – հունիս* *(մլն ԱՄՆ դոլար)*	*2005թ. հունվար - հունիսը 2004թ. հունվար - հունիսի նկատմամբ (%)*
Արտահանում *(FOB)*	275.2	344.4	429.1	128.4
Ներմուծում *(CIF)*	514.2	650.4	788.0	126.2
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ	239.0	305.9	358.8	123.6

III. Գների ինդեքսներ

Ժամանակաշրջան	*Սպառողական գների ինդեքս*	*Արդյունաբերական արտադրանքի գների ինդեքս*	*Գների ինդեքս կապիտալ շինարարությունում*	*Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս*
	նախորդ ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	105.4	100.5	100.7	98.2
Փետրվար	99.3	94.8	99.9	98.4
Մարտ	99.1	101.2	122.9	99.6
Ապրիլ	99.1	97.4	99.9	97.3
Մայիս	100.1	99.9	100.0	97.6
Հունիս	98.6	101.8	100.1	79.3
2005 թ. հունվար-հունիսը 2004 թ. հունվար-հունիսի նկատմամբ	102.3	111.9	115.2	101.0

IV. Գնաճ

Ժամանակաշրջան	*2003*	*2004*	*2005*	*2005*
	Նախորդ ամսվա նկատմամբ (%)			*Նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ (%)*
Հունվար	4.1	2.5	5.4	5.4
Փետրվար	-1.5	-0.6	-0.7	4.7
Մարտ	-0.5	0.3	-0.9	3.7
Ապրիլ	2.0	1.2	-0.9	2.8
Մայիս	1.2	1.1	0.1	2.9
Հունիս	1.4	-0.1	-1.4	1.4
Հուլիս	-5.5	-2.5		
Օգոստոս	-2.3	-2.4		
Սեպտեմբեր	2.5	-0.7		
Հոկտեմբեր	-0.1	0.1		
Նոյեմբեր	2.2	0.8		
Դեկտեմբեր	5.2	2.3		
Տարեկան *(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)*	8.6	2.0		
Տարեկան *(նախորդ տարվա նկատմամբ)*	4.7	7.0		

V. Բնականոն գնաճի[1] փոփոխությունները

Ցուցանիշ	**2003**	**2004**	**2005**
	Նախորդ ամսվա նկատմամբ, %		
Հունվար	0.69	0.65	0.71
Փետրվար	-0.46	0.05	-0.37
Մարտ	0.00	0.03	-0.26
Ապրիլ	0.23	0.05	-0.26
Մայիս	0.06	0.04	-0.08
Հունիս	0.61	-0.13	-0.10
Հուլիս	-0.55	-0.50	
Օգոստոս	-0.18	-0.31	
Սեպտեմբեր	1.20	-0.30	
Հոկտեմբեր	0.04	-0.16	
Նոյեմբեր	0.94	-0.05	
Դեկտեմբեր	2.07	0.30	
	Նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ, %		
Հունվար	1.16	4.45	0.72
Փետրվար	0.86	5.60	1.07
Մարտ	1.04	6.37	0.71
Ապրիլ	0.37	6.39	0.13
Մայիս	0.49	6.23	-0.74
Հունիս	2.44	5.41	-0.57
Հուլիս	2.26	6.71	
Օգոստոս	2.61	6.90	
Սեպտեմբեր	5.33	6.02	
Հոկտեմբեր	4.65	5.67	
Նոյեմբեր	4.23	4.39	
Դեկտեմբեր	4.67	0.55	

VI. Բնականոն գնաճին առավելապես նպաստող 10 ապրանքատեսակները

Անվանում	***Նպաստումը բնականոն գնաճին, տոկոսային կետ***
	Նախորդ ամսվա նկատմամբ, %
Բնականոն գնաճ, *այդ թվում*	**-0.10**
հաց առաջին տեսակի	-0.05
հաց բարձր տեսակի	-0.04
շաքարավազ	-0.03
բուսական յուղ-արևածաղկի	-0.01
մակարոն	-0.01
թարմ կաթ	-0.01
վերմիշել	0.00
այլ յուղեր	0.00
ընկույզի միջուկ (մաքրած)	0.00
պանիր կովի կաթից (տնական)	0.00

[1] *Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների:*
[2] *Ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության նախնական տվյալների:*

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ[1]

(մլն ՀՀ դրամ)

ժամանակաշրջան	Պահանջներ կառավարության նկատմամբ			Կառավարության ավանդներ					Զուտ պահանջներ կառավարության նկատմամբ	Կապիտալացված զուտ պահանջներ կառավարության նկատմամբ[2]
	Կենտրոնական բանկի կողմից կառավարության պարտատոմսերի գծով ստացված տոկոսներ	Կենտրոնական բանկի կողմից կառավարության պարտատոմսերի գծով ստացված գրանցված շահույթ/վնաս	Ընդամենը	Կենտրոնական բանկում կառավարության ընթացիկ հաշվի մնացորդ	Կենտրոնական բանկում կառավարության արժեթղթերի գծով պարտավորություններ	ԾԻԳ-երի միջոցներ դրամով	ԾԻԳ-երի միջոցներ արտարժույթով	Ընդամենը		
2004										
Դեկտեմբեր [4]	193	5711	5904	42512	126	0	97	42735	**-36830**	***-36815***
2005										
Հունվար	193	5658	5852	63919	124	0	97	64141	**-58289**	***-58268***
Փետրվար	193	5598	5792	64629	122	0	98	64849	**-59057**	***-59162***
Մարտ [4]	193	5526	5719	65220	119	90	99	65528	**-59809**	***-60054***
Ապրիլ	193	6783	6977	71670	114	35	98	71917	**-64941**	***-65255***
Մայիս	193	6543	6736	67461	115	29	100	67706	**-60969**	***-61476***
Հունիս [4]	135	6402	6537	60819	115	29	108	61071	**-54534**	***-55050***

[1] Ներկայացված ցուցանիշները հաշվարկված են կանխիկ սկզբունքի մեթոդով՝ հակառակ դեպքում առանձին նշում է կատարված:
[2] Կառավարության նկատմամբ պահանջների և կառավարության ավանդների տարբերությունը:
[3] Հաշվարկված են կուտակման սկզբունքի մեթոդով:
[4] Ներառված են ԿԲ եզրափակիչ շրջանառության արդյունքները:

ՓՈՂԻ ԲԱԶԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 04 [4]	Հ – 05	Փ – 05	Մ – 05 [4]	Ա - 05	Մ - 05	Հ – 05 [4]
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)							
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [1,2]	***149266***	***160018***	***165260***	***171489***	***180578***	***182491***	***201173***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-17216***	***-42573***	***-48403***	***-47871***	***-50196***	***-44718***	***-50354***
Կառավարություն	-36830	-58289	-59057	-59809	-64941	-60969	-54534
Բանկեր	10857	9653	5100	5064	8339	8192	2882
այդ թվում՝ ռեպո համաձայնագրեր	1157	0	0	0	0	0	0
ՀՀ ԿԲ կողմից արտարժույթի ներգրավման սվոփ	0	0	0	0	0	0	0
Ավանդներ (-)	-2000	-700	-6600	-4100	-2000	-1500	-1300
Հակադարձ ռեպո (-)	0	-1347	0	-2536	-1361	-2008	-6470
ՀՀ ԿԲ կողմից արտարժույթի տրամադրման սվոփ (-)	0	0	0	0	0	0	-1049
ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր							-3453
Զուտ այլ ակտիվներ	8757	6063	5554	6874	6406	8059	4751
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված) [3]	***129830***	***117152***	***119542***	***123374***	***129198***	***137449***	***153985***
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***132050***	***117444***	***116857***	***123618***	***130382***	***137773***	***150819***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	105534	91268	92635	98827	105457	110017	113392
Պարտադիր պահուստ. (ՀՀ դրամով)	25800	25604	23700	23834	24338	27195	18102
Պարտադիր պահուստ. (արտարժ.)							18773
Այլ հաշիվներ	716	572	521	957	586	561	552
Այլ հաշիվներ (ՀՀ դրամով)	561	529	507	588	578	561	552
Այլ հաշիվներ (արտարժույթով)	155	43	14	369	8	0	1
(փոփոխությունները նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)							
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***10752***	***5242***	***6229***	***9089***	***1913***	***18682***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-25357***	***-5829***	***532***	***-2326***	***5478***	***-5636***
Կառավարություն	-	-21459	-768	-752	-5132	3972	6435
Բանկեր	-	-1204	-4553	-36	3275	-147	-5310
այդ թվում՝ ավանդներ (-)	-	-1300	5900	-2500	-2100	-500	-200
ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր	-						3453
Զուտ այլ ակտիվներ	-	-2694	-508	1320	-468	1653	-3308
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված) [3]	***-***	***-12679***	***2390***	***3832***	***5824***	***8251***	***16536***
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***-***	***-14606***	***-587***	***6761***	***6764***	***7391***	***13046***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	-14265	1367	6192	6630	4560	3375
Պարտադիր պահուստ. (ՀՀ դրամով)	-	-196	-1904	134	505	2857	-9093
Պարտադիր պահուստ. (արտարժ.)	-						18773
Այլ հաշիվներ	-	-144	-51	436	-371	-25	-9
Այլ հաշիվներ (ՀՀ դրամով)	-	-33	-21	81	-10	-17	-9
Այլ հաշիվներ (արտարժույթով)	-	-112	-29	355	-361	-8	1
(տոկոսային փոփոխությունները նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)							
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***7.2***	***3.3***	***3.8***	***5.3***	***1.1***	***10.2***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-147.3***	***-13.7***	***1.1***	***-4.9***	***10.9***	***-12.6***
Կառավարություն	-	-58.3	-1.3	-1.3	-8.6	6.1	10.6
Բանկեր	-	-11.1	-47.2	-0.7	64.7	-1.8	-64.8
Զուտ այլ ակտիվներ	-	-30.8	-8.4	23.8	-6.8	25.8	-41.0
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված) [3]	***-***	***-9.8***	***2.0***	***3.2***	***4.7***	***6.4***	***12.0***
ՓՈՂԻ ԲԱԶԱ [4]	***-***	***-11.1***	***-0.5***	***5.8***	***5.5***	***5.7***	***9.5***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	-13.5	1.5	6.7	6.7	4.3	3.1
Պարտադիր պահուստ. (ՀՀ դրամով)	-	-0.8	-7.4	0.6	2.1	11.7	-33.4
Պարտադիր պահուստ. (արտարժ.)							100.0
Այլ հաշիվներ	-	-20.2	-8.8	83.6	-38.8	-4.3	-1.6

[1] Առանց սեփականաշնորհման միջոցների: ԶԱՄ-ն ընդգրկում են փոխարկելի արտարժույթով ակտիվները:

[2] ԶԱՄ-ն հաշվարկված են ծրագրային փոխարժեքներով՝ 1 ԱՄՆ դոլար = 485.84 դրամ, 1 ՀՓԻ = 1.5530 ԱՄՆ դոլար, 1 եվրո = 1.3608 ԱՄՆ դոլար, 1 ՄԲ ֆունտ ստեռլինգ = 1.9258 ԱՄՆ դոլար:

[3] Փողի բազան հաշվարկված է որպես տվյալ ամսվա վերջին օրվան նախորդող հինգ օրերի և հաջորդ ամսվա սկզբի հինգ օրերի միջինը:

[4] Ներառված են եզրափակիչ շրջանառության արդյունքները:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵԿՇԻՌ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 04	Հ - 05	Փ - 05	Մ - 05	Ա - 05	Մ - 05	Հ - 05
ԶԱԱ (փոխարկելի արտարժույթով)	**55829**	**56969**	**53242**	**50846**	**44797**	**43228**	**35555**
Արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով	117646	117724	113184	107917	99969	101800	97621
Արտաքին պարտ. փոխարկելի արտարժույթով	-57154	-56395	-56223	-53699	-50917	-53614	-56815
Արտաքին պարտավորություններ ՀՀ դրամով	-4663	-4360	-3719	-3373	-4255	-4958	-5251
ԶՆԱ	**130829**	**130156**	**129619**	**135579**	**139351**	**144583**	**161895**
Կառավարություն	19598	20248	18730	24151	27842	28571	29458
Զուտ պահանջներ ԿԲ նկատմամբ	20989	24849	25598	25777	22542	26514	44943
Պահուստային ակտիվներ	34083	36625	37449	37707	34319	38370	56874
Պարտավորություններ ԿԲ նկատմամբ	-13094	-11776	-11851	-11930	-11777	-11856	-11930
Տնտեսություն	142426	136997	136586	141043	143390	150247	154759
Ձեռնարկություններ	80113	75460	72354	73767	75828	78213	80799
Դրամով	27361	24391	24240	24542	26419	27473	28554
Արտարժույթով	49224	47601	48094	49206	49389	50721	52220
Արժեթղթեր	3529	3468	20	20	19	19	25
Տնային տնտեսություններ	56001	55202	57624	60323	62354	66074	68114
Դրամով	14325	13445	13999	15426	17122	18152	19618
Արտարժույթով	41676	41757	43625	44897	45232	47921	48496
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	42	46	31	29	38	44	48
Դրամով	25	25	22	19	23	29	32
Արտարժույթով	17	21	10	10	15	15	16
Այլ ֆինանսական կազմակերպություններ	6269	6289	6576	6924	5170	5916	5798
Դրամով	2042	1984	2522	3082	2019	3360	4266
Արտարժույթով	4227	4305	4054	3843	3152	2557	1532
Այլ ռեզիդենտներ[1]	0	0	1	0	0	0	0
Դրամով	0	0	0	0	0	0	0
Արտարժույթով	0	0	1	0	0	0	0
Զուտ այլ ակտիվներ	-52183	-51938	-51296	-55392	-54423	-60749	-67266
Արտաքին ակտիվներ ՀՀ դրամով	1836	1572	1604	1600	1289	1343	1478
Արտաքին ակտիվներ (ոչ փոխարկելի արտարժ.)	3052	2249	2279	1785	2804	2073	2366
Արտաքին պարտ. (ոչ փոխարկելի արտարժ.)	-799	-656	-857	-796	-1189	-887	-950
Ներդրումներ փայաբաժիններում	445	445	445	457	459	470	478
Միջբանկային պահանջներ	6097	4139	3242	3721	10616	12318	6927
Այլ ակտիվներ	32887	33359	36639	39005	41313	42027	43286
Միջբանկային պարտավորություններ	-5530	-3617	-2793	-3265	-10156	-11498	-5738
Դրամական շուկայի գործիքներ	-3406	-3371	-3335	-3207	-3091	-3150	-3407
Կապիտալ հաշիվներ	-68842	-68635	-70214	-73661	-76607	-79060	-80479
Այլ պարտավորություններ	-17924	-17423	-18305	-21031	-19861	-24386	-31227
ԱՎԱՆԴՆԵՐ	**186659**	**187126**	**182861**	**186424**	**184148**	**187812**	**197450**
Դրամով ավանդներ	46588	47838	49712	53477	56067	58176	58632
Ցպահանջ ավանդներ	33283	32250	35629	36675	38203	40048	41257
Ժամկետային ավանդներ	13304	15588	14083	16802	17864	18127	17375
Ավանդներ արտարժույթով	140071	139288	133149	132947	128080	129636	138818
Ցպահանջ ավանդներ	74453	71481	66296	69120	64726	64956	74368
Ժամկետային ավանդներ	65618	67807	66853	63827	63354	64680	64450

[1] *Չդասակարգված պահանջներ: «Փողի զանգվածի կառուցվածքը» աղյուսակում սույն պահանջներն ընդգրկված են «Ձեռնարկություններ և կազմակերպություններ» տողում:*

ՓՈՂԻ ՁԱՆԳՎԱԾԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 04 [5]	Հ - 05	Փ - 05	Մ - 05 [5]	Ա - 05	Մ - 05	Հ - 05 [5]
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)							
ՁՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [1]	***205095***	***216987***	***218502***	***222334***	***225375***	***225720***	***236728***
ՁՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***80848***	***52841***	***49899***	***56461***	***57900***	***64680***	***66568***
Կառավարություն	-17232	-38041	-40327	-35659	-37099	-32398	-25076
Տնտեսություն	142469	137037	136622	141075	143419	150274	154784
Ձեռնարկ. և կազմակերպ.	80114	75460	72355	73767	75828	78213	80799
որից՝ կուտակված տոկոսներ	651	637	565	667	667	714	720
Տնային տնտեսություններ	56044	55241	57659	60354	62383	66100	68139
որից՝ կուտակված տոկոսներ	790	854	880	945	954	1057	1067
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	42	46	31	29	38	44	48
որից՝ կուտակված տոկոսներ	0	0	0	0	0	0	0
Այլ ֆինանսական կազմակերպություններ	6269	6289	6576	6924	5170	5916	5798
որից՝ կուտակված տոկոսներ	48	36	36	42	27	28	22
Զուտ այլ ակտիվներ	-44388	-46154	-46395	-48955	-48420	-53196	-63140
ԴՐԱՄԱՅԻՆ ՁԱՆԳՎԱԾ [2]	***145538***	***130296***	***135012***	***145246***	***154908***	***160536***	***164245***
ՓՈՂԻ ՁԱՆԳՎԱԾ *(առանց կուտակված տոկոսների)*	***285172***	***269000***	***267511***	***277883***	***282339***	***289595***	***302525***
ՓՈՂԻ ՁԱՆԳՎԱԾ [3]	***285943***	***269828***	***268401***	***278796***	***283275***	***290399***	***303296***
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	98569	82131	85019	91415	98541	102027	105294
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով [4]	33845	32778	36136	37263	38781	40610	41809
կուտակված տոկոսներ	38	41	53	43	49	33	17
ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	13304	15588	14083	16802	17864	18127	17375
կուտակված տոկոսներ	142	160	173	191	230	194	215
Արտարժույթով ավանդներ	140226	139331	133163	133316	128088	129636	138819
Ցպահանջ [5]	74607	71525	66310	69489	64733	64956	74369
կուտակված տոկոսներ	52	55	65	51	60	36	9
ժամկետային	65618	67807	66853	63827	63354	64680	64450
կուտակված տոկոսներ	539	573	599	627	597	541	530
(փոփոխությունները նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)							
ՁՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	-	***11892***	***1515***	***3832***	***3040***	***345***	***11008***
ՁՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	-	***-28007***	***-2942***	***6562***	***1439***	***6780***	***1888***
Կառավարություն	-	-20809	-2286	4668	-1440	4701	7322
Տնտեսություն	-	-5432	-415	4453	2344	6855	4511
Ձեռնարկ. և կազմակերպ.	-	-4654	-3105	1413	2061	2385	2586
որից՝ կուտակված տոկոսներ	-	-15	-72	102	0	47	7
Տնային տնտեսություններ	-	-802	2418	2695	2028	3718	2039
որից՝ կուտակված տոկոսներ	-	64	25	65	10	102	10
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	-	4	-15	-3	9	6	4
որից՝ կուտակված տոկոսներ	-	0	0	0	0	0	0
Այլ ֆինանսական կազմակերպություններ	-	20	287	348	-1 754	746	-118
որից՝ կուտակված տոկոսներ	-	-12	0	6	-15	1	-6
Զուտ այլ ակտիվներ	-	-1766	-241	-2560	535	-4776	-9945
ԴՐԱՄԱՅԻՆ ՁԱՆԳՎԱԾ	-	***-15242***	***4716***	***10234***	***9662***	***5628***	***3709***
ՓՈՂԻ ՁԱՆԳՎԱԾ *(առանց կուտակված տոկոսների)*	-	***-16173***	***-1488***	***10372***	***4456***	***7256***	***12930***
ՓՈՂԻ ՁԱՆԳՎԱԾ	-	***-16115***	***-1427***	***10395***	***4479***	***7125***	***12897***
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	-	-16438	2889	6395	7126	3486	3268
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով	-	-1067	3358	1127	1518	1828	1199
կուտակված տոկոսներ	-	3	12	-10	6	-15	-16
ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	-	2284	-1505	2720	1062	263	-753
կուտակված տոկոսներ	-	18	13	18	39	-35	21
Արտարժույթով ավանդներ	-	-894	-6168	153	-5228	1548	9183
Ցպահանջ	-	-3083	-5215	3179	-4755	222	9413
կուտակված տոկոսներ	-	2	10	-13	9	-24	-27
ժամկետային	-	2188	-953	-3027	-472	1326	-230
կուտակված տոկոսներ	-	34	26	28	-30	-56	-11

(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)							
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	-	***5.8***	***0.7***	***1.8***	***1.4***	***0.2***	***4.9***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	-	***-34.6***	***-5.6***	***13.2***	***2.5***	***11.7***	***2.9***
Կառավարություն	-	-120.8	-6.0	11.6	-4.0	12.7	22.6
Տնտեսություն	-	-3.8	-0.3	3.3	1.7	4.8	3.0
Չեռնարկ. և կազմակերպ.	-	-5.8	-4.1	2.0	2.8	3.1	3.3
Տնային տնտեսություններ	-	-1.4	4.4	4.7	3.4	6.0	3.1
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	-	10.0	-32.1	-8.1	31.0	16.6	8.6
Այլ ֆինանսական կազմակերպություններ	-	0.3	4.6	5.3	-25.3	14.4	-2.0
Զուտ այլ ակտիվներ	-	-4.0	-0.5	-5.5	1.1	-9.9	-18.7
ԴՐԱՄԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾ	-	***-10.5***	***3.6***	***7.6***	***6.7***	***3.6***	***2.3***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ *(առանց կուտակված տոկոսների)*	-	***-5.7***	***-0.6***	***3.9***	***1.6***	***2.6***	***4.5***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ	-	***-5.6***	***-0.5***	***3.9***	***1.6***	***2.5***	***4.4***
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	-	-16.7	3.5	7.5	7.8	3.5	3.2
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով	-	-3.2	10.2	3.1	4.1	4.7	3.0
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	-	17.2	-9.7	19.3	6.3	1.5	-4.2
Արտարժույթով ավանդներ	-	-0.6	-4.4	0.1	-3.9	1.2	7.1
Ցպահանջ	-	-4.1	-7.3	4.8	-6.8	0.3	14.5
Ժամկետային	-	3.3	-1.4	-4.5	-0.7	2.1	-0.4

[1] ԶԱՄ-ն ընդգրկում են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները: Կենտրոնական բանկի ԶԱՄ-ն հաշվարկված են ծրագրային փոխարժեքներով՝ 1 ԱՄՆ դոլար = 485.84 դրամ, 1 ՀՓԻ = 1.5530 ԱՄՆ դոլար, 1 եվրո = 1.3608 ԱՄՆ դոլար, 1 ՄԲ ֆունտ ստեռլինգ = 1.9258 ԱՄՆ դոլար, առևտրային բանկերի ԶԱՄ-ն՝ փաստացի փոխարժեքներով:

[2] Ընդգրկում է կանխիկը շրջանառությունում, ռեզիդենտների՝ միայն դրամով ցպահանջ և ժամկետային ավանդները (առանց կուտակված տոկոսների):

[3] Ընդգրկում է կանխիկը շրջանառությունում, ռեզիդենտների՝ դրամով ցպահանջ և ժամկետային ավանդները, արտարժութային ավանդները (ներառյալ կուտակված տոկոսները):

[4] Ընդգրկում են ռեզիդենտների հաշիվները և ցպահանջ ավանդները:

[5] Ներառված են ԿԲ եզրափակիչ շրջանառության արդյունքները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

(մլն ԱՄՆ դոլար)

Անվանումը	**2004**	**2005**					
	Դ [4,5]	**Հ**	**Փ**	**Մ [4]**	**Ա**	**Մ**	**Հ [4]**
Համախառն միջազգային պահուստներ *(առանց սեփականաշն. միջոցների)*	547.8	561.9	570.4	579.3	593.1	588.7	621.8
Համախառն միջազգային պահուստներ	575.9	572.1	580.6	589.5	603.3	598.9	632.0
Ոսկի	0	0	0	0	0	0	0
ՀՓԻ ԱՄՀ-ում	12.0	11.7	6.7	6.6	0.9	0.9	2.1
Արտարժույթ [2]	563.9	560.4	574.0	583.0	602.5	598.0	629.9
Համախառն միջազգային պահուստներ *(առանց սեփականաշն. միջոցների)* [3]	550.0	564.3	572.9	581.5	596.2	593.0	625.9

[1] Հաշվարկված են փաստացի փոխարժեքներով: Աղյուսակում ներկայացված ցուցանիշները հաշվարկված են կանխիկ սկզբունքի մեթոդով, հակառակ դեպքում առանձին նշում է կատարված:

[2] Ընդգրկված են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները:

[3] Հաշվարկված են կուտակման սկզբունքի մեթոդով:

[4] Ներառված են ԿԲ եզրափակիչ շրջանառության արդյունքները:

[5] ԱՄՀ-ում ՀՓԻ-ով միջոցները հաշվարկված են՝ հիմք ընդունելով 2004 թ. դեկտեմբերի 31-ին ԱՄՀ կողմից սահմանված 1 ՀՓԻ = 1.5530 ԱՄՆ դոլար փոխարժեքը, որը տարբերվում է տարեվերջի՝ ԿԲ կողմից սահմանված փոխարժեքից:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԸ

Ցուցանիշներ	2004[3]	2005					
	Դ	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ
Վարկեր [1]							
Իրավաբանական անձանց							
ՀՀ դրամով	18.8	12.2	20.3	17.8	18.4	18.6	17.7
ԱՄՆ դոլարով	16.9	11.5	14.2	13.9	11.7	15.0	12.9
Ֆիզիկական անձանց							
ՀՀ դրամով	22.0	21.7	21.7	22.0	20.5	23.8	20.1
ԱՄՆ դոլարով	24.3	24.3	24.3	23.8	23.7	23.7	23.5
Ավանդներ [1]							
Իրավաբանական անձանցից							
ՀՀ դրամով	2.8	7.5	8.3	7.3	6.4	6.5	5.7
ԱՄՆ դոլարով	5.3	5.8	3.8	5.6	3.3	6.0	4.1
Ֆիզիկական անձանցից							
ՀՀ դրամով	6.3	7.2	7.3	7.8	6.5	6.4	6.0
ԱՄՆ դոլարով	5.8	6.1	4.7	3.8	5.2	4.6	4.5
ԿԲ ռեպո գործառնությունների տոկոսադրույքը	3.75	4.5	4.5	3.75	3.75	3.75	3.75
ԿԲ-ում ՀՀ բանկերի ավանդների տոկոսադրույքը	1.0	1.75	1.75	1.75	1.75	1.75	1.75
ԿԲ լոմբարդային վարկերի տոկոսադրույքը	16.0	16.0	16.0	16.0	16.0	16.0	16.0
Պետական պարտատոմսերի եկամտաբերությունը [2]	5.6						4.9
Գնաճ	2.0	6.0	4.6	4.6	5.3	4.9	5.7

Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

[1] Ներկայացված են 91 - 180-օրյա վարկերի և ավանդների միջին կշռված տոկոսադրույքները:

[2] Ներկայացված է միջին ժամկետայնության մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսերի միջին կշռված եկամտաբերությունը:

[3] Ներկայացված են տարվա վերջին ամսվա տոկոսադրույքները: Գնաճը ներկայացված է նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ:

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԱՎԱՆԴՆԵՐԻ ԵՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԼՈՄԲԱՐԴԱՅԻՆ ՎԱՐԿԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ ԵՎ ՄԻՋԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԸ

(մլն ՀՀ դրամ)

Ժամկետ	Ավանդի ծավալ*	Տոկոսադրույք	Վարկի ծավալ*	Տոկոսադրույք
2004				
Հունվար	11650	3.5	-	-
Փետրվար	8840	3.5	-	-
Մարտ	14830	3.0	-	-
Ապրիլ	8450	2.1	-	-
Մայիս	1500	1.0	-	-
Հունիս	1500	1.0	-	-
Դեկտեմբեր	2100	1.0	-	-
2005				
Հունվար	9850	1.75	-	-
Փետրվար	19070	1.75	-	-
Մարտ	23910	1.75	-	-
Ապրիլ	16540	1.75	-	-
Մայիս	7250	1.75	-	-
Հունիս	6950	1.75	-	-

** Մարումները հանված չեն:*

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԿՆՔՎԱԾ ՌԵՊՈ ԵՎ ՀԱԿԱԴԱՐՁ ՌԵՊՈ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ ԵՎ ՄԻՋԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԸ

(մլն ՀՀ դրամ)

Ժամկետ	Ռեպո համաձայնագրերի ծավալը *	Ռեպո գործառնությունների տոկոսադրույքը	Հակադարձ ռեպո համաձայնագրերի ծավալը*	Հակադարձ ռեպո գործառնությունների տոկոսադրույքը
2004				
Հունվար	-	-	1025.4	7.0
Փետրվար	-	-	1030.7	7.0
Մայիս	-	-	923.5	6.0
Հունիս	-	-	2304.4	6.0
Հոկտեմբեր	252.4	3.75	-	-
Դեկտեմբեր	1156.9	3.75	-	-
2005				
Հունվար	-	-	2017.5	4.5
Մարտ	-	-	2535.5	3.75
Ապրիլ	-	-	2194.4	3.75
Մայիս	-	-	2008.0	3.75
Հունիս	-	-	6469.8	3.75

** Մարումները հանված չեն:*

ՀՀ ԿԲ ԿՈՂՄԻՑ ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՍՎՈՓ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ ԵՎ ՄԻՋԻՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԸ

(ԱՄՆ դոլար)

Ժամկետ	Արտարժույթի տրամադրման սվոփի ծավալը *	Միջին կշռված տոկոսադրույքը	Արտարժույթի ներգրավման սվոփի ծավալը *	Միջին կշռված տոկոսադրույքը
2004				
Փետրվար	3600000	5.90	-	-
Մարտ	1150000	4.91	-	-
Ապրիլ	5000000	4.90	-	-
Մայիս	6250000	4.90	-	-
Հուլիս	-	-	4600000	3.58
Սեպտեմբեր	-	-	3800000	2.16
Հոկտեմբեր	-	-	3000000	2.13
2005				
Մայիս	-	-	-	-
Հունիս	2300000	0.54	-	-

** Մարումները հանված չեն:*

ՄԻՋԲԱՆԿԱՅԻՆ ՌԵՊՈ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

Ցուցանիշներ	Միջբանկային ռեպո շուկայի շրջաառությունը									
	մինչև 7 օր		8 – 14 օր		15 – 28 օր		28 օր և ավելի		Ընդամենը	
	մլն դրամ	%	մլն դրամ	%	մլն դրամ	%	մլն դրամ	%	մլն դրամ	%
2005										
Հունվար	***3047.97***	***3.86***	***745.44***	***4.43***	***260.43***	***5.00***			***4053.84***	***4.04***
Առավելագույն տոկոսադրույք		5.00		5.00		5.00				5.00
Նվազագույն տոկոսադրույք		2.50		4.00		5.00				2.50
Ստանդարտ շեղում		0.58		0.37		-				0.62
Փետրվար	***1339.21***	***3.60***	***665.00***	***3.66***	***1373.45***	***4.66***	***278.00***	***4.50***	***3655.66***	***4.08***
Առավելագույն տոկոսադրույք		5.00		4.50		5.00		4.50		5.00
Նվազագույն տոկոսադրույք		2.50		3.00		3.50		4.50		2.50
Ստանդարտ շեղում		0.95		0.63		0.56		-		0.81
Մարտ	***4202.30***	***3.06***	***1096.66***	***3.14***	***997.80***	***3.87***	***176.70***	***4.50***	***6473.46***	***3.23***
Առավելագույն տոկոսադրույք		4.00		3.50		4.50		4.50		4.50
Նվազագույն տոկոսադրույք		2.50		3.00		3.00		4.50		2.50
Ստանդարտ շեղում		0.41		0.25		0.64		-		0.51
Ապրիլ	***7613.29***	***2.89***	***1886.82***	***3.01***	***751.02***	***3.19***			***10251.1***	***2.94***
Առավելագույն տոկոսադրույք		4.00		4.50		3.50				4.50
Նվազագույն տոկոսադրույք		2.50		2.50		3.00				2.50
Ստանդարտ շեղում		0.45		0.50		0.24				0.44
Մայիս	***8388.77***	***3.12***	***3368.49***	***3.23***	***854.88***	***3.38***	***255.85***	***3.89***	***12867.98***	***3.18***
Առավելագույն տոկոսադրույք		5.00		4.50		3.75		4.50		5.00
Նվազագույն տոկոսադրույք		2.50		2.70		3.00		2.50		2.50
Ստանդարտ շեղում		0.51		0.49		0.28		1.41		0.51
Հունիս	***5569.00***	***3.11***	***2133.01***	***3.37***	***1170.18***	***3.23***	***945.24***	***4.12***	***9817.43***	***3.28***
Առավելագույն տոկոսադրույք		3.50		4.00		4.00		4.75		4.75
Նվազագույն տոկոսադրույք		2.75		2.00		2.00		2.50		2.00
Ստանդարտ շեղում		0.26		0.38		0.48		0.61		0.48
Ընդամենը	***30160.53***	***3.15***	***9895.42***	***3.33***	***5407.77***	***3.81***	***1655.79***	***4.19***	***47119.50***	***3.30***
Առավելագույն տոկոսադրույք		**5.00**		**5.00**		**5.00**		**4.75**		**5.00**
Նվազագույն տոկոսադրույք		**2.50**		**2.00**		**2.00**		**2.50**		**2.00**

** ԿԲ կողմից իրականացված գործառնություններն ընդգրկված չեն:*

ՀՀ ԴՐԱՄ / ԱՄՆ ԴՈԼԱՐ ՓՈԽԱՐԺԵՔԸ

Ամսաթիվ	Դ - 04	Հ - 05	Փ - 05	Մ - 05	Ա - 05	Մ - 05	Հ - 05
1	500.05	-	477.61	471.00	457.30	-	445.98
2	499.19	-	473.16	470.70	-	439.25	445.98
3	497.87	-	478.13	470.50	-	439.17	447.38
4	-	486.05	474.87	470.25	457.30	441.11	-
5	-	486.05	-	470.05	456.60	443.94	
6	493.87	-	-	-	454.46	459.39	448.32
7	487.89	488.75	474.35	-	453.31	-	449.63
8	484.89	493.37	474.05	-	452.23	-	450.44
9	478.00	-	473.55	470.05	-	-	454.99
10	478.00	495.01	473.02	469.35	-	459.03	455.89
11	-	497.39	474.91	469.35	452.23	457.13	-
12	-	499.67	-	-	451.56	455.83	-
13	478.00	501.20	-	-	451.56	454.69	456.70
14	483.44	501.80	473.77	469.06	450.56	-	456.23
15	483.44	-	473.26	469.06	450.02	-	455.81
16	484.34	-	472.61	468.43	-	453.03	455.49
17	484.64	500.21	471.61	468.23	-	452.87	453.50
18	-	499.45	473.45	467.31	448.02	452.14	-
19	-	497.38	-	-	443.77	450.91	-
20	484.64	493.43	-	-	445.25	449.30	451.04
21	484.75	488.97	472.68	466.11	445.25	-	448.48
22	484.97	-	472.57	464.83	443.75	-	446.12
23	483.83	-	472.26	462.77	-	448.85	444.42
24	483.92	487.20	471.76	461.60	-	447.85	443.81
25	-	484.07	471.22	460.39	442.29	446.91	443.81
26	-	482.34	471.22	-	440.89	446.10	-
27	484.37	481.07	-	-	439.31	446.06	443.38
28	485.57	-	471.22	459.20	439.41	-	443.22
29	486.23	-	-	457.75	439.25	-	442.85
30	485.84	-	-	458.13	439.25	445.55	442.34
31	-	478.48	-	458.13	-	445.08	-
ժամանակահատվածի վերջ	485.84	478.48	471.22	458.13	439.25	445.08	442.34
ժամանակահատվածի միջին	486.26	491.68	473.39	466.01	447.89	449.25	448.95

ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԴԻՐՔԸ

մլն ԱՄՆ դոլար

Ցուցանիշներ	Սկզբնորդ 31.03.05թ. դրությամբ	Փոփոխություններ					Սկզբնորդ 30.06.05թ. դրությամբ
		Գործառնությունների հաշվին	Գնեղի փոփոխությունների հաշվին	Փոխարժեքի փոփոխությունների հաշվին	Այլ ճշտումներ	Ընդհանուր փոփոխություններ	
Ակտիվներ	242.8	-11.1	0.0	-2.9	0.0	-14.0	228.8
Ուղղակի ներդրումներ արտերկրներում	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
Բաժնետիրական կապիտալ	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
Վերաներդրված շահույթ	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
Այլ կապիտալ	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
Պորտֆելային ներդրումներ	1.2	0.6	0.0	0.0	0.0	0.6	1.7
Բաժնետոմսեր	0.4	-0.1		0.0		-0.1	0.3
Պարտքային պարտավորություններ	0.8	0.7	0.0	0.0	0.0	0.7	1.5
Այլ ներդրումներ	241.6	-11.7	0.0	-2.9	0.0	-14.5	227.0
Վարկեր	25.3	-1.3	0.0	0.0	0.0	-1.3	24.0
Երկարաժամկետ	3.1	0.1	0.0	0.0	0.0	0.1	3.2
Կարճաժամկետ	22.2	-1.4	0.0	0.0	0.0	-1.5	20.8
Կանխիկ դրամական միջոցներ և ավանդներ	212.5	-12.1	0.0	-2.8	0.0	-14.9	197.6
Կանխիկ դրամական միջոցներ	43.9	-12.8	0.0	-0.3	0.0	-13.1	30.8
Ավանդներ	168.6	0.7	0.0	-2.5	0.0	-1.8	166.8
Երկարաժամկետ	0.2	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.2
Կարճաժամկետ	168.4	0.7	0.0	-2.5	0.0	-1.8	166.6
Այլ ակտիվներ	3.8	1.8	0.0	-0.1	0.0	1.7	5.5
Պարտավորություններ	174.2	20.8	0.0	-0.8	0.0	19.9	194.1
Ուղղակի ներդրումներ հաշվետու երկրում	43.0	2.7	0.0	-0.3	0.0	2.3	45.4
Բաժնետիրական կապիտալ	46.3	0.9	0.0	0.0	0.0	0.9	47.2
Վերաներդրված շահույթ	-10.3	1.8	0.0	-0.3	0.0	1.4	-8.8
Այլ կապիտալ	7.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	7.0
Պորտֆելային ներդրումներ	3.6	0.0	0.0	0.0	0.0	0.0	3.6
Բաժնետոմսեր	3.6	0.0	0.0	0.0	0.0	0.0	3.6
Պարտքային պարտավորություններ	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
Այլ ներդրումներ	127.6	18.1	0.0	-0.5	0.0	17.6	145.2
Վարկեր	33.3	4.4	0.0	0.0	0.0	4.4	37.7
Երկարաժամկետ	18.8	4.9	0.0	0.0	0.0	4.9	23.8
Կարճաժամկետ	14.4	-0.5	0.0	0.0	0.0	-0.5	13.9
Կանխիկ դրամական միջոցներ և ավանդներ	89.5	10.3	0.0	-0.4	0.0	9.9	99.5
Երկարաժամկետ	3.1	0.2	0.0	0.0	0.0	0.2	3.3
Կարճաժամկետ	86.5	10.1	0.0	-0.4	0.0	9.7	96.1
Այլ պարտավորություններ	4.8	3.4	0.0	-0.1	0.0	3.3	8.0
Զուտ ներդրումային դիրքը	68.6	-31.9	0.0	-2.0	0.0	-33.9	34.7

ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԿԱԶՄԸ

մլն ԱՄՆ դոլար

	2005 I եռամսյակ						2005 II եռամսյակ					
		Արտարժույթ						Արտարժույթ				
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	ՌՌ ռուբլի	Այլ	Ընդամենը	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	ՌՌ ռուբլի	Այլ	Ընդամենը
Ակտիվներ	**1.6**	**197.1**	**34.9**	**3.6**	**5.6**	**241.2**	**1.7**	**189.4**	**26.9**	**5.0**	**5.7**	**227.1**
Կապիտալի արժեթղթեր	-	0.4	0.0	0.0	0.0	0.4	-	0.3	0.0	0.0	0.0	0.3
Պարտքային արժեթղթեր	0.0	0.8	0.0	0.0	0.0	0.8	0.0	1.5	0.0	0.0	0.0	1.5
Կանխիկ դրամական միջոցներ	-	38.1	3.4	2.1	0.2	43.9	-	19.9	7.9	2.8	0.3	30.8
Վարկեր, այդ թվում՝ օվերդրաֆտ և վարկային քարտեր	1.2	23.8	0.0	0.0	0.3	24.1	1.6	21.3	0.8	0.0	0.2	22.4
Ավանդներ	0.3	131.7	30.0	1.5	5.1	168.3	0.0	141.2	18.1	2.2	5.2	166.8
Այլ	0.1	2.2	1.4	0.0	0.0	3.7	0.1	5.3	0.1	0.0	0.0	5.4
Պարտավորություններ	**56.9**	**114.9**	**9.2**	**3.2**	**0.3**	**127.5**	**62.3**	**129.5**	**8.6**	**2.1**	**0.4**	**140.7**
Կապիտալի արժեթղթեր	49.9					0.0	50.8					0.0
Պարտքային արժեթղթեր	0.0	7.0	0.0	0.0	0.0	7.0	0.0	7.0	0.0	0.0	0.0	7.0
Վարկեր, այդ թվում՝ օվերդրաֆտ և վարկային քարտեր	0.0	33.3	0.0	0.0	0.0	33.3	0.0	37.6	0.0	0.0	0.0	37.7
Ավանդներ	6.8	72.0	8.7	1.8	0.1	82.7	9.8	79.2	8.6	1.7	0.2	89.7
Այլ	0.2	2.6	0.4	1.4	0.1	4.6	1.7	5.6	0.1	0.4	0.2	6.3
Զուտ դիրք*	**-55.3**	**82.3**	**25.7**	**0.4**	**5.3**	**113.6**	**-60.6**	**59.9**	**18.3**	**2.9**	**5.3**	**86.4**

** Ի տարբերություն փոդի զանգվածում ՀՀ առևտրային բանկերի ԶԱՍ-ի, այստեղ ներառված են նաև ՀՀ առևտրային բանկերի «Կապիտալի արժեթղթերը» պարտավորությունների մասում, ոչ փոխարկելի արտարժույթը և վարկային կազմակերպությունների արտաքին ակտիվներն ու պարտավորությունները:*

ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԿԱՏԱՐԱԾ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ

հազար ԱՄՆ դոլար

	2004											
	I եռ.			II եռ.			I կիսամյակ			Տարեկան		
	Մուտք	Ելք	Զուտ մուտք	Մուտք	Ելք	Զուտ մուտք	Մուտք	Ելք	Զուտ մուտք	Մուտք	Ելք	Զուտ մուտք
Ռուսաստան	58446	10649	47798	87333	11359	75974	145780	22008	123772	419014	68282	350731
ԱՄՆ	7438	3307	4131	20065	4183	15882	27504	7490	20013	78879	20660	58219
Գերմանիա	2386	1264	1122	4402	2769	1632	6788	4034	2754	15322	8148	7175
Լատվիա	2917	932	1984	1846	1919	-74	4762	2852	1911	13430	6527	6904
Շվեյցարիա	1802	1261	542	5196	871	4325	6998	2131	4866	12846	4364	8481
Մեծ Բրիտանիա	748	611	137	3611	669	2942	4359	1280	3079	11657	2669	8987
Ուկրաինա	1627	1930	-303	1046	2122	-1077	2672	4052	-1380	5249	8306	-3057
ԱՄԷ	566	2300	-1735	1025	3266	-2241	1590	5566	-3976	4199	10428	-6229
Թուրքիա	239	1287	-1048	322	1571	-1249	561	2858	-2297	1065	8569	-7504
Այլ երկրներ	17107	8394	8713	21074	8420	12654	38181	16814	21367	82597	33983	48613
Ընդամենը	**93277**	**31936**	**61341**	**145918**	**37149**	**108769**	**239194**	**69085**	**170110**	**644256**	**171936**	**472320**

հազար ԱՄՆ դոլար

	2005								
	I եռ.			II եռ.			I կիսամյակ		
	Մուտք	Ելք	Զուտ մուտք	Մուտք	Ելք	Զուտ մուտք	Մուտք	Ելք	Զուտ մուտք
Ռուսաստան	79605	14895	64710	124181	21543	102637	203785	36438	167347
ԱՄՆ	17690	4739	12951	16322	11180	5142	34012	15919	18093
Գերմանիա	3592	992	2600	3948	1398	2550	7540	2390	5150
Լատվիա	1239	2446	-1207	1274	354	920	2513	2801	-288
Շվեյցարիա	2927	1092	1835	3042	398	2644	5969	1489	4479
Մեծ Բրիտանիա	2350	928	1421	2409	765	1644	4759	1693	3065
Ուկրաինա	823	1801	-978	1380	1670	-290	2203	3471	-1268
ԱՄԷ	2720	2331	389	670	1964	-1295	3390	4295	-906
Թուրքիա	143	1516	-1373	285	2315	-2030	428	3831	-3403
Այլ երկրներ	14220	7066	7154	20523	12061	8462	34743	19127	15616
Ընդամենը	**125308**	**37806**	**87502**	**174033**	**53648**	**120384**	**299340**	**91454**	**207886**

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՀԱՇՎԵԿՇԻՌ

(2005 թ. հունիսի 30-ի դրությամբ)

Հաշվեկշիռ

(հազար ՀՀ դրամ)

	30.06.05	*31.03.05*	*31.12.04*
Ակտիվներ			
Ակտիվներ ոսկով և արտարժույթով			
Կանխիկ դրամական միջոցներ	316,362	263,653	263,649
Օտարերկրյա բանկերի և վարկային կազմակերպությունների նկատմամբ պահանջներ	159,819,368	217,224,684	200,665,499
ԱՄՀ-ում հատուկ փոխառության իրավունք	60,213,002	66,702,919	74,997,910
Ներդրումային արժեթղթեր			
- վաճառքի համար նախատեսված ներդրումներ	1,221	1,358	1,514
- մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	120,334,155	50,568,481	74,091,282
Այլ ակտիվներ արտարժույթով	1,018,385	1,055,543	1,228,824
	341,702,493	**335,816,638**	**351,248,678**
Ակտիվներ ՀՀ դրամով			
Վարկեր և այլ պահանջներ	11,955,594	11,844,031	13,020,001
Ներդրումային արժեթղթեր			
- վաճառքի համար նախատեսված ներդրումներ	2,866,671	5,958,895	8,442,489
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	5,612,865	5,493,741	5,621,345
Այլ ակտիվներ ՀՀ դրամով	6,820,338	3,032,000	470,529
	27,255,468	**26,328,667**	**27,554,364**
Ընդամենը ակտիվներ	**368,957,961**	**362,145,305**	**378,803,042**
Պարտավորություններ			
Արտարժույթով պարտավորություններ			
Փոխառված միջոցներ			
- բանկեր և վարկային կազմակերպություններ	27,715,322	10,421,700	11,088,132
- ԱՄՀ	84,457,981	93,807,695	104,337,934
- Հայաստանի կառավարություն	4,738,108	4,893,912	13,878,092
Այլ ավանդային հաշիվներ արտարժույթով	506	368,619	154,751
Այլ պարտավորություններ արտարժույթով	100,066	35,196	43,970
	117,011,983	**109,527,122**	**129,502,879**
ՀՀ դրամով պարտավորություններ			
Շրջանառության մեջ թղթադրամներ և մետաղադրամներ	113,392,048	98,827,273	105,533,669
Փոխառված միջոցներ			
- բանկեր և վարկային կազմակերպություններ	28,277,745	30,487,995	28,436,945
- ԱՄՀ	60,186,409	64,655,024	70,244,915
- Հայաստանի կառավարություն	61,513,073	65,718,928	42,610,033
Այլ ավանդային հաշիվներ ՀՀ դրամով	1,300,577	1,368,052	1,184,367
Թողարկված արժեթղթեր	3,457,486	-	-
ՀՀ դրամով այլ պարտավորություններ	203,975	250,081	225,823
	268,331,313	**261,307,353**	**248,235,752**
Ընդամենը պարտավորություններ	**385,343,296**	**370,834,475**	**377,738,631**
Կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	100,000	100,000	100,000
Գլխավոր պահուստ	9,870,486	9,870,486	9,870,486
Կուտակված շահույթ / (վնաս) և այլ պահուստներ	(26,355,821)	(18,659,656)	(8,906,075)
Ընդհանուր կապիտալ	**(16,385,335)**	**(8,689,170)**	**1,064,411**
Ընդամենը կապիտալ և պարտավորություններ	**368,957,961**	**362,145,305**	**378,803,042**

Հաշվեկշիռը հաստատվել է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից 2005 թվականի օգոստոսի 30-ին և ստորագրվել:

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ — *Նախագահ*

ՀԱՅԿԱՆՈՒՇ ՀԱԿՈԲՅԱՆ — *Գլխավոր հաշվապահ*

ՀՀ ԲԱՆԿԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ (2005 Թ. ՄԱՅԻՍ)

Վիճակագրության վարչություն

ՀՀ կենտրոնական բանկի վիճակագրության վարչության կողմից 2005 թ. մայիսին բանկերում անցկացվել է հարցում, որին մասնակցել են ՀՀ տարածքում գործող 21 բանկեր:

Հարց 1. Հաշվի առնելով տարվա առաջին կիսամյակի տնտեսական միտումները՝ նշեք 2005թ. տնտեսական աճի մակարդակի վերաբերյալ Ձեր սպասումները (պատասխանները կշռված են բանկային համակարգի ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկային ներդրումներում բանկերի վարկերի տեսակարար կշիռներով)[1]:

Ցուցանիշը	Արժեքը, %
Կշռված միջին	8.1
Առավելագույն աճ	12.0
Նվազագույն աճ	5.0
Վարիացիայի գործակից, %[2]	17.9
Ստանդարտ շեղում, տ.կ.	1.5

Համաձայն 2004թ. նոյեմբերին իրականացված հարցման՝ 2005թ. բանկերն ակնկալում էին 8.4% տնտեսական աճ:

Հարց 2. Գնաճի մակարդակի վերաբերյալ Ձեր սպասումները (2005թ. դեկտեմբերին՝ 2004թ. դեկտեմբերի համեմատ):

Ցուցանիշը	Արժեքը, %
Թվաբանական միջին	3.3
Առավելագույն գնահատական	4.5
Նվազագույն գնահատական	2.5
Վարիացիայի գործակից, %	16.1
Ստանդարտ շեղում, տ.կ.	0.5

Բանկերի շուրջ կեսը 2005 թվականին ակնկալում է 3% գնաճ: Սպասվող գնաճի միջին մակարդակը կազմում է 3.3%, ինչը 1 տոկոսային կետով ավելի ցածր է 2004թ. նոյեմբերին իրականացված հարցման ժամանակ կանխատեսված ցուցանիշից:

---

* *Հեղինակների տեսակետները կարող են չհամընկնել ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական դիրքորոշմանը:*

[1] *Հարցերում, որտեղ նշված չեն ամփոփման կշիռները, պատասխանները կշռվել են բանկերի քանակով:*

[2] *Ստանդարտ շեղման և վարիացիայի գործակիցները հաշվարկված են պարզ միջինների հիման վրա:*


Հարց 3. ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի փոխարժեքի վարքագծի վերաբերյալ Ձեր սպասումները (պատասխանները կշռված են բանկային համակարգի ընդհանուր արտարժութային ակտիվներում բանկերի տեսակարար կշիռներով):

Ցուցանիշը	2005թ. սեպտեմբերի վերջ	2005թ. դեկտեմբերի վերջ
Կշռված միջին	443.9	449.5
Առավելագույն գնահատական	470	470
Նվազագույն գնահատական	420	400
Վարիացիայի գործակից, %	2.6	4.2
Ստանդարտ շեղում	11.6	18.6

ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքի վերաբերյալ բանկերի սպասումների ցրվածությունը բավականին փոքր է: Բանկերը կանխատեսել են, որ 2005թ. վերջին ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքը կկազմի 449.5 դրամ, մինչդեռ, համաձայն 2004թ. նոյեմբերին իրականացված հարցման, բանկերը ակնկալում էին, որ 2005թ. դեկտեմբերի վերջին ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքը կկազմեր 524.5, ինչը շուրջ 17%-ով ավելի բարձր է, քան սպասումների ներկա մակարդակը:

Նշենք նաև, որ 9 բանկ ակնկալում է, որ 2005թ. սեպտեմբերի վերջից մինչև դեկտեմբերի վերջ դրամը կարժեքավորվի, իսկ 12 բանկ ակնկալում է դրամի արժեզրկում:

Ստորև բերված գծապատկերում ներկայացված է 2005թ. դեկտեմբերի վերջին սպասվող գնաճի և փոխարժեքի վերաբերյալ բանկերի կողմից տրված պատասխանների միջև առկա կապը:



Գնաճի և փոխարժեքի վերաբերյալ բանկերի սպասումների համադրման արդյունքում պարզվում է, որ վերջիններիս միջև կապը բավականին թույլ է:

Հարց 4. Ձեր կարծիքով որքա՞ն կկազմի Ձեր բանկի միջոցով արտասահմանից մեր երկրի ֆիզիկական անձանց ոչ առևտրային նպատակով ուղարկվող փոխանցումների միջին ամսական ծավալը 2005թ. ընթացքում:

2005թ. ընթացքում արտասահմանից ոչ առևտրային նպատակով մեր երկրի ֆիզիկական անձանց ուղարկված փոխանցումների միջին ամսական ծավալը, ըստ բանկերի կանխատեսումների, առաջին կիսամյակում կկազմի մոտ 59.2 մլն ԱՄՆ դոլար, իսկ երկրորդ կիսամյակում՝ 86.3 մլն ԱՄՆ դոլար, ինչը տարեկան կտրվածքով կազմում է մոտ 873 մլն ԱՄՆ դոլար:

2004թ. ընթացքում արտասահմանից ոչ առևտրային նպատակով մեր երկրի ֆիզիկական անձանց ուղարկված փոխանցումների ընդհանուր ծավալը կազմել է 644 մլն ԱՄՆ դոլար, այսինքն՝ համաձայն բանկերի սպասումների՝ 2005թ. փոխանցումները կավելանան 35.5%-ով:

Նշենք, որ 2005թ. հունվար-ապրիլին փաստացի ներհոսքի ծավալները կազմել են 221 մլն ԱՄՆ դոլար, ինչը 38.5%-ով ավելի է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ:

Հարց 5. Ձեր կարծիքով 4-րդ կետում նշված միջոցների ո՞ր մասը հաճախորդները կկանխիկացնեն փոխանցմանը հաջորդող մեկ ամսվա ընթացքում (պատասխանները կշված են բանկերի միջոցով ստացված դրամական միջոցների սպասվելիք ծավալներով):

Համաձայն բանկերի գնահատումների՝ արտասահմանից մեր երկրի ֆիզիկական անձանց ուղարկված դրամական փոխանցումների միջին հաշվով 89%-ը մեկ ամսվա ընթացքում կկանխիկացվի (2004թ. համար կանխատեսվել էր 82%):

Հարց 6. 2005թ. սկզբից Ձեր հաճախորդները որքա՞ն արտարժութային ավանդներ են փոխարինել դրամայինի (մլն դրամ)[3]:

Ժամկետայնությունը	2005թ. հունվար-ապրիլ
Ցպահանջ	1497.2
Ժամկետային	1856.6
Ընդամենը	**3353.8**

Համաձայն բանկերի գնահատումների՝ 2005թ. առաջին չորս ամիսների ընթացքում նրանց հաճախորդների կողմից ավելի քան 3.3 մլրդ դրամին համարժեք արտարժութային ավանդներ փոխարինվել են դրամայինի, ինչը կազմում է ռեզիդենտների արտարժութային ավանդների ծավալի շուրջ 3.4%-ը:

Նշենք նաև, որ բանկերի պատասխաններում բավականին մեծ տեսակարար կշիռ է կազմում մեկ բանկի պատասխանը: Եթե հաշվի չառնենք այդ բանկի պատասխանը, ապա փոխարինված ավանդների ծավալը կկազմի ընդամենը 853.8 մլն դրամ, ինչը կազմում է ռեզիդենտների արտարժութային ավանդների՝ այդ բանկերում առկա ծավալի շուրջ 1.1%-ը

Հարց 7. Ձեր կարծիքով 2005թ. ընթացքում որքա՞ն կկազմի արտարժութային ավանդների փոխարինումը դրամայինի (մլն դրամ)[3]:

Ժամկետայնությունը	I կիսամյակ	II կիսամյակ
Ցպահանջ	2155.0	2322.0
Ժամկետային	2318.3	1541.0
Ընդամենը	**4473.3**	**3863.0**

Համաձայն բանկերի սպասումների՝ 2005թ. ընթացքում նրանց հաճախորդների կողմից ավելի քան 8.3 մլրդ դրամին համարժեք արտարժութային ավանդներ կփոխարինվեն դրամայինի, ինչը կազմում է ռեզիդենտների արտարժութային ավանդների՝ տարեսկզբին առկա ծավալի շուրջ 7.5%-ը:

Ինչպես և նախորդ հարցի դեպքում՝ բանկերի պատասխաններում բավականին մեծ տեսակարար կշիռ է կազմում մեկ բանկի պատասխանը: Եթե հաշվի չառնենք այդ բանկի պատասխանը, ապա փոխարինվող ավանդների ծավալը կկազմի ընդամենը 2.3 մլրդ դրամ, ինչը կազմում է ռեզիդենտների արտարժութային ավանդների՝ այդ բանկերում առկա ծավալի շուրջ 2.4%-ը

[3] Ամփոփված են 19 բանկերի ցուցանիշներ:

Հարց 8. 2005թ. դեկտեմբերի վերջի դրությամբ պետական պարտատոմսերի ձևավորվող տոկոսադրույքների վերաբերյալ Ձեր սպասումները (պատասխանները կշռված են ՊՊ-ում բանկային համակարգի ներդրումներում բանկերի ներդրումների տեսակարար կշիռներով):

Վարքագիծը	1 տարի	3 տարի	5 տարի
Կաճեն	5 (38.8%)	7 (49.0%)	6 (47.2%)
Կմնան նույնը	12 (39.2%)	10 (30.0%)	10 (30.3%)
Կնվազեն	4 (22.0%)	4 (21.0%)	5 (22.5%)

ՊՊ ձևավորվող տոկոսադրույքների վերաբերյալ բանկերի սպասումների թվային գնահատականները

Վարքագիծը	1 տարի	3 տարի	5 տարի
Աճ	5.5	6.7	7.8
Անփոփոխ մակարդակ	4.6	5.3	6.5
Նվազում	3.6	5.5	6.1
Միջին կշռված	**4.7**	**6.0**	**7.0**
Առավելագույնը	6.0	7.5	8.5
Նվազագույնը	3.3	4.5	5.0
Ստանդարտ շեղում	0.7 տ.կ.	0.8 տ.կ.	1.0 տ.կ.

Պետական պարտատոմսերի տոկոսադրույքների վերաբերյալ բանկերի պատասխանների ցրվածությունը բավականին ցածր է: Այնուամենայնիվ այն մեծանում է պարտատոմսերի ժամկետայնությանը զուգահեռ: Եթե համեմատենք միևնույն հարցին նախորդ հարցման ժամանակ տրված պատասխանների հետ, ապա կարելի է նկատել, որ ՊԿՊ միջին կշռված տոկոսադրույքը աճել է 0.3 տոկոսային կետով, մինչդեռ 3 և 5 տարի ժամկետայնությամբ պետական պարտատոմսերի տոկոսադրույքները նվազել են համապատասխանաբար 0.6 և 0.8 տոկոսային կետերով:

Հարց 9. Ձեր բանկի կողմից ներգրավված դրամային և դոլարային ավանդների (ցպահանջ և ժամկետային) մնացորդների փոփոխության վերաբերյալ Ձեր սպասումները. 2005թ. վերջին՝ 2005թ. առաջին կիսամյակի վերջի համեմատ (պատասխանները կշռված են ըստ համապատասխան արժույթի և սուբյեկտների՝ ներգրավված ավանդներում բանկերի տեսակարար կշիռների):

	Դրամային, աճ (+)/նվազում (-), %	Դոլարային, աճ (+)/նվազում (-), %	*Ընդամենը, աճ (+)/նվազում (-), %*
Ռեզիդենտներից	20.2	13.7	**15.7**
Ոչ ռեզիդենտներից	1.3	17.7	**16.1**
Ընդամենը, %	**19.1**	**14.6**	

Բանկերը 2005թ. երկրորդ կիսամյակի ընթացքում կանխատեսում են փողի զանգվածում ընդգրկված ավանդների մոտ 15.7% աճ: 2005թ. առաջին 5 ամիսներին ռեզիդենտների դրամային ավանդները աճել են շուրջ 19.5%-ով, իսկ դոլարայինը՝ 1.6%-ով (հաշվի առած փոխարժեքի փոփոխությունը): Նշենք, որ 2004թ. երկրորդ կիսամյակի ընթացքում դրամային ավանդները աճել են 14.6%-ով, իսկ դոլարայինը՝ 41.3%-ով (հաշվի առած փոխարժեքի փոփոխությունը):

Հարց 10. Բանկի կողմից ներգրավվող դրամային և դոլարային ավանդների տոկոսադրույքների փոփոխության վերաբերյալ Ձեր սպասումները (պատասխանները կշռված են համապատասխան արժույթով ներգրավված ավանդներում բանկերի տեսակարար կշիռներով):

Վարքագիծը	Բանկերի քանակ					
	դրամային			արտարժութային		
	3-ամսյա	12-ամսյա	1 տ. ավելի[4]	3-ամսյա	12-ամսյա	1 տ. ավելի[4]
Կաճեն	0 (0.0%)	0 (0.0%)	1 (1.5%)	2 (1.2%)	2 (1.2%)	1 (2.5%)
Կմնան նույնը	16 (74.5%)	17 (74.5%)	10 (67.9%)	14 (80.4%)	15 (80.6%)	10 (75.4%)
Կնվազեն	5 (25.5%)	4 (25.5%)	5 (25.5%)	5 (18.4%)	4 (18.1%)	4 (17.8%)

Դրամային և արտարժութային ավանդների տոկոսադրույքների վերաբերյալ բանկերի սպասումների թվային գնահատումները հետևյալն են.

Դրամային ավանդներ

Վարքագիծը	3-ամսյա	12-ամսյա	1 տարուց ավելի
Աճ	--	--	10.0
Անփոփոխ մակարդակ	4.6	6.8	5.1
Նվազում	4.9	7.0	7.9
Միջին կշռված	**4.7**	**6.8**	**7.8**
Առավելագույնը	7.0	8.5	10.0
Նվազագույնը	1.5	2.5	2.8
Ստանդարտ շեղում	1.7 տ.կ.	1.8 տ.կ.	1.8 տ.կ.

Արտարժութային ավանդներ

Վարքագիծը	3-ամսյա	12-ամսյա	1 տարուց ավելի
Աճ	5.5	7.6	8.0
Անփոփոխ մակարդակ	3.3	4.9	6.9
Նվազում	4.1	5.7	6.9
Միջին կշռված	**3.5**	**5.1**	**7.0**
Առավելագույնը	6.5	8.7	9.0
Նվազագույնը	0.5	1.0	3.3
Ստանդարտ շեղում	1.7 տ.կ.	2.2 տ.կ.	1.5 տ.կ.

2004թ. նոյեմբերին իրականացված հարցման համեմատ նկատվում է բոլոր ժամկետայնության դրամային ավանդների միջին կշռված տոկոսադրույքների մակարդակների նվազում՝ շուրջ 0.5 տոկոսային կետով, իսկ արտարժութային ավանդների դեպքում, եթե 3-ամսյա և 12-ամսյա ավանդների տոկոսադրույքները նվազել են համապատասխանաբար 1.3 և 1.2 տոկոսային կետերով, ապա 1 տարուց ավելի ժամկետայնությամբ ավանդների տոկոսադրույքը 0.2 տոկոսային կետով աճել է:

Հարց 11. Ձեր կողմից ներգրավված ավանդների մնացորդների կառուցվածքն ըստ արժույթի տեսակների (պատասխանները կշռված են ընդհանուր ավանդներում բանկերի ավանդների տեսակարար կշիռներով):

Արտարժույթ	2005 թ. սեպտեմբերի վերջ, %	2005 թ. դեկտեմբերի վերջ, %
ՀՀ դրամ	31.0	35.6
ԱՄՆ դոլար	63.2	58.2
Եվրո	5.0	5.2
Այլ արտարժույթ	0.8	1.0

[4] Կշիռների գումարը հավասար չէ 100-ի, քանզի որոշ բանկեր դժվարացել են նշել 1 տարուց ավելի ժամկետայնություն ունեցող ավանդների տոկոսադրույքներ՝ պատճառաբանելով, որ դրանք սահմանվում են պայմանագրային հիմունքներով և դժվար է հաշվարկել միջին ցուցանիշը:

Համաձայն բանկերի գնահատումների՝ 2005թ. ընթացքում ռեզիդենտներից և ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդների գերակշիռ մասը կկազմեն ԱՄՆ դոլարով ավանդները, սակայն 2005թ. վերջին եռամսյակի ընթացքում բանկերն ակնկալում են ԱՄՆ դոլարով ավանդների տեսակարար կշռի նվազում 5 տոկոսային կետով, ինչը հիմնականում պայմանավորված է դրամային ավանդների տեսակարար կշռի աճով:

Հարց 12. Ձեր հաճախորդների կողմից իրենց ավանդային և ընթացիկ հաշիվներին կատարվող կանխիկ զուտ վճարումները առաջին եռամսյակի ընթացքում [5]:

Ամիսը	Դրամային (մլն դրամ)		Դոլարային (մլն դրամ)	
	իրավաբ. անձինք	ֆիզիկական անձինք	իրավաբ. անձինք	ֆիզիկական անձինք
Հունվար	7246.4	-76.6	2035.2	4994.6
Փետրվար	5302.5	-22.1	2307.8	5184.7
Մարտ	7500.2	-605.4	3141.8	3864.5

Ամսվա ընթացքում ավանդային և ընթացիկ հաշիվներին կատարվող կանխիկ զուտ վճարումների բաշխումը՝ ըստ արժույթի և տնտեսավարող սուբյեկտների

Ամիսը	Դրամային (%)		Դոլարային (%)	
	իրավաբ. անձինք	ֆիզիկական անձինք	իրավաբ. անձինք	ֆիզիկական անձինք
Հունվար	51.0	-0.5	14.3	35.2
Փետրվար	41.5	-0.2	18.1	40.6
Մարտ	54.0	-4.4	22.6	27.8

Հարց 13. 2005թ. վերջի դրությամբ, առաջին կիսամյակի համեմատ, Ձեր բանկի կողմից ռեզիդենտներին տրված վարկերի ծավալների փոփոխությունների վերաբերյալ Ձեր սպասումները (պատասխանները կշռված են ըստ համապատասխան արժույթի և սուբյեկտների տրամադրված վարկերի ընդհանուր ծավալում բանկերի տեսակարար կշիռների):

	Դրամային, աճ (+)/նվազում (-), %	Դոլարային, աճ (+)/նվազում (-), %	Ընդամենը, աճ (+)/ նվազում (-), %
Ռեզիդենտներին	24.4	19.5	**21.4**
Ոչ ռեզիդենտներին	-6.8	10.4	**9.4**
Ընդամենը, %	**24.0**	**18.6**	

Համաձայն բանկերի կանխատեսումների՝ 2005թ. երկրորդ կիսամյակի ընթացքում ռեզիդենտներին տրված վարկերի ծավալները կավելանան մոտ 21.4%-ով:

2005թ. առաջին հինգ ամիսների ընթացքում ռեզիդենտների ընդհանուր վարկավորումն աճել է 8.3%-ով, դրամով վարկավորումը՝ 11.1%-ով, իսկ արտարժույթովը՝ 6.9%-ով, մինչդեռ դոլարային արտահայտությամբ արտարժութային վարկավորումն աճել է 16.2%-ով:

[5] *Ամփոփված են 20 բանկերի ցուցանիշներ:*

Հարց 14. Որքա՞ն են Ձեր կողմից տրամադրվող դրամային և դոլարային վարկերի ակնկալվող տոկոսադրույքները (պատասխանները կշռված են համապատասխան արժույթով տրամադրված վարկերի ընդհանուր ծավալում բանկերի տեսակարար կշիռներով):

Վարքագիծը	Բանկերի քանակ[6]					
	դրամային			արտարժութային		
	3-ամսյա	12-ամսյա	1 տ. ավելի	3-ամսյա	12-ամսյա	1 տ. ավելի
Կաճեն	0 (0.0%)	0 (0.0%)	0 (0.0%)	0 (0.0%)	0 (0.0%)	0 (0.0%)
Կմնան նույնը	13 (68.1%)	11 (39.4%)	9 (32.0%)	12 (71.8%)	11 (50.4%)	8 (28.8%)
Կնվազեն	6 (28.6%)	10 (60.6%)	10 (62.6%)	7 (28.1%)	10 (49.6%)	11 (67.0%)

Ի տարբերություն 2005թ. նոյեմբերին իրականացված հարցման, երբ բանկերի գերակշիռ մասն ակնկալում էր վարկերի տոկոսադրույքների նվազում, այս անգամ հիմնականում սպասվում է տոկոսադրույքների կայուն մակարդակ:

Բանկերի պատասխանների թվային գնահատումները դրամային և արտարժութային վարկերի տոկոսադրույքների վերաբերյալ.

Դրամային վարկեր

Վարքագիծը	3-ամսյա	12-ամսյա	1 տարուց ավելի
Աճ	--	--	--
Անփոփոխ մակարդակ	21.1	21.7	21.5
Նվազում	21.0	18.6	17.3
Միջին կշռված	**20.3**	**19.8**	**17.7**
Առավելագույնը	26.0	26.0	26.0
Նվազագույնը	6.0	12.0	12.0
Ստանդարտ շեղում	4.7 տ.կ.	3.5 տ.կ.	3.3 տ.կ.

Արտարժութային վարկեր

Վարքագիծը	3-ամսյա	12-ամսյա	1 տարուց ավելի
Աճ	--	--	--
Անփոփոխ մակարդակ	19.8	17.8	19.0
Նվազում	16.7	16.6	14.9
Միջին կշռված	**19.0**	**17.2**	**15.4**
Առավելագույնը	24.0	24.0	24.0
Նվազագույնը	5.0	8.0	10.0
Ստանդարտ շեղում	4.5 տ.կ.	3.4 տ.կ.	3.1 տ.կ.

Եթե համեմատենք 2004թ. նոյեմբերին իրականացված հարցման հետ, ապա կարելի է նկատել, որ մինչև 1 տարի ժամկետայնության վարկերի տոկոսադրույքների վերաբերյալ սպասումները գրեթե չեն փոփոխվել, սակայն 1 տարուց ավելի ժամկետայնությամբ ինչպես դրամային, այնպես էլ արտարժութային վարկերի տոկոսադրույքները նվազել են՝ համապատասխանաբար 1.5 և 1.0 տոկոսային կետերով

Ինչպես նախորդ հարցումների, այնպես էլ այս հարցման ժամանակ բանկերում պահպանվում է վարկերի և ավանդների տոկոսադրույքների մարժայի բավականին բարձր մակարդակ:

[6] Որոշ դեպքերում կշիռների գումարը հավասար չէ 100-ի, քանզի որոշ բանկեր դժվարացել են նշել որոշակի ժամկետայնության վարկերի ակնկալվող տոկոսադրույքները:

Հարց 15. 2005թ. ընթացքում Ձեր բանկի հաճախորդների քանակի աճի վերաբերյալ Ձեր սպասումները (հատ):

Բանկերն ակնկալում են, որ 2005թ. ընթացքում իրենց հաճախորդների քանակը կավելանա 96225-ով, ինչը շուրջ 18%-ով ավելի քիչ է, քան կանխատեսվել էր 2004թ. նոյեմբերին իրականացված հարցման ժամանակ:

Նշենք նաև, որ հաճախորդների քանակի սպասվելիք աճի շուրջ 55%-ը պայմանավորված է մեկ բանկի սպասումներով:

Հարց 16. 2005թ. ընթացքում բանկային հաշիվների քանակի աճի վերաբերյալ Ձեր սպասումները (հատ):

Բանկերն ակնկալում են, որ 2005թ. ընթացքում բանկային հաշիվների քանակը կավելանա 71864-ով, ինչը շուրջ 18%-ով ավելի քիչ է, քան կանխատեսվել էր 2004թ. նոյեմբերին իրականացված հարցման ժամանակ:

Հաշիվների քանակի սպասվելիք աճի շուրջ 51%-ը պայմանավորված է մեկ բանկի սպասումներով:

Հարց 17. 2005թ. ընթացքում Ձեր բանկի կողմից պլաստիկ քարտերի սպասարկման ծավալների աճի վերաբերյալ Ձեր սպասումները (մլն դրամ):

Ցուցանիշ	2005թ.
Տեղական, այդ թվում՝	
կանխիկացման	5306.0
անկանխիկ վճարումների	316.8
Միջազգային, այդ թվում՝	
կանխիկացման	9609.1
անկանխիկ վճարումներ	1991.4

Համաձայն բանկերի գնահատումների՝ 2005թ. ընթացքում պլաստիկ քարտերի սպասարկման ծավալները կավելանան 17223.3 մլն դրամով, ընդ որում՝ բանկերը նոյեմբերի հարցման համեմատ շուրջ 31%-ով նվազեցրել են իրենց սպասումները:

Հարց 18. 2005թ. ընթացքում Ձեր բանկի կողմից թողարկված քարտերի քանակի փոփոխության վերաբերյալ Ձեր սպասումները (հատ):

Քարտի տեսակը	2004թ. նոյեմբերի հարցում	2005թ. մայիսի հարցում
տեղական	46460	21654
միջազգային	54846	48646
խառը	2930	2320
Ընդամենը	**104236**	**72620**

Ինչպես երևում է աղյուսակից, իրենց կողմից թողարկված քարտերի քանակի աճի վերաբերյալ բանկերի սպասումները նախորդ հարցման համեմատ էապես նվազել են, ինչը հատկապես վառ է արտահայտված տեղական և խառը քարերի համար կատարված կանխատեսումներում: Ընդ որում, խառը քարտերի աճի սպասումների կտրուկ նվազումը գրեթե ամբողջովին պայմանավորված է մեկ բանկի սպասումներով:

Հարց 19. Ըստ ձեր գնահատումների՝ որքանո՞վ կավելանա Ձեր բանկի կանոնադրական կապիտալը 2005թ. երկրորդ կիսամյակի ընթացքում ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների հաշվին:

Կանոնադրական կապիտալ, մլրդ դրամ	**6.3**
Ռեզիդենտների հաշվին	1.8
Ոչ ռեզիդենտների հաշվին	4.5

2005թ. երկրորդ կիսամյակի ընթացքում բանկերն ակնկալում են կանոնադրական կապիտալի աճ՝ 6.3 մլրդ դրամի չափով: Կանոնադրական կապիտալի աճ կանխատեսել է ընդամենը 4 բանկ, ընդ որում՝ 2 բանկ միայն ոչ ռեզիդենտների, ևս 2 բանկ՝ միայն ռեզիդենտների հաշվին: Նոյեմբերին 12 բանկեր էին ակնկալում 2005թ. իրենց կանոնադրական կապիտալի համալրում, որոնցից հինգը արդեն իսկ իրականացրել են կապիտալի համալրում:

Հարց 20. Գնահատեք ՀՀ կենտրոնական բանկի կողմից իր հիմնական խնդրի՝ Հայաստանի Հանրապետությունում գների կայունության ապահովման և այլ խնդիրների (ՀՀ ԿԲ մասին ՀՀ օրենքով ամրագրված) իրականացման արդյունավետությունը:

ա) Հիմնական խնդրի՝ ՀՀ-ում գների կայունության ապահովումը

Լիովին բավարարված եմ	8
Մասամբ բավարարված եմ	12
Ընդհանրապես բավարարված չեմ	1

բ) Այլ խնդիրներ

Լիովին բավարարված եմ	7
Մասամբ բավարարված եմ	14
Ընդհանրապես բավարարված չեմ	--

ՀՀ ԿԲ ԿՈՂՄԻՑ ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ (2005 Թ. ՀՈՒՆԻՍ)

Վիճակագրության վարչություն

Տնտեսական վիճակագրության զարգացման բաժին

Հաշվի առնելով ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 02/16/2005թ. թիվ 67 Ա որոշմամբ հաստատված՝ ՀՀ ԿԲ վիճակագրության վարչության կողմից իրականացվող հարցումների հայեցակարգի դրույթները՝ 2005թ. հունիսին իրականացվել են տնային տնտեսությունների, բանկերի, վարկային կազմակերպությունների և ոչ ֆինանսական կազմակերպությունների հարցումներ:

Ոչ ֆինանսական կազմակերպությունների հարցումներ

Հարցման մեջ ընդգրկվել է 152 կազմակերպություն, հարցաթերթիկին պատասխանել է 100 կազմակերպություն, մնացած կազմակերպությունները տարբեր պատճառներով հրաժարվել են մասնակցել հարցմանը: Ընդ որում, այդ 100 կազմակերպությունները ըստ տնտեսության ճյուղերի բաշխվել են հետևյալ կերպ՝

- 40 արդյունաբերական կազմակերպություն,
- 10 շինարարական կազմակերպություն,
- 25 առևտրային (մանրածախ և մեծածախ) կազմակերպություն,
- 25 այլ ծառայություններ մատուցող կազմակերպություն:

Կազմակերպությունների որոշ ցուցանիշներ

Ճյուղեր	Միջին աշխատավարձ, դրամ	Ստանդարտ շեղում, դրամ	Անվանական թողարկման միջին աճի տեմպը (գալիք եռամսյակը ընթացիկի նկ.), %	Ստանդարտ շեղում, %	Արտ. հզորությունների օգտագործման միջին մակարդակը, %-ով	
					Ընթացիկ եռամսյակ	Գալիք եռամսյակ
Արդյունաբերություն	89554.7	21619.2	113.2	14.2	69.5	77.1
Շինարարություն	91222.8	19009.5	100.2	9.7	84.5	85.5
Առևտուր	37139.5	11500.4	100.4	20.3	--	--
Ծառայություններ	78887.9	47522.3	108.1	25.1	--	--

Հարցումների արդյունքների հիման վրա հաշվարկվել են ՀՀ տնտեսության առանձին ճյուղերի և ընդհանուր տնտեսության գործարար միջավայրի և տնտեսական ակտիվության ինդեքսները: Գործարար միջավայրի ինդեքսը հաշվարկվել է ռիսկերի և ընդհանուր տնտեսական վիճակի փոփոխությունների վերաբերյալ կազմակերպությունների կողմից տրված գնահատականների հիման վրա: Յուրաքանչյուր հարցի համար հաշվարկվել են պատասխանների դիֆուզիոն ինդեքսներ[1], որոնց միջինացման արդյունքում ստացվել է գործարար միջավայրի ինդեքսը: Տնտեսական ակտիվության ինդեքսը հաշվարկվել է թողարկման ծավալների, արտադրության պատվերների և պաշարների վերաբերյալ կազմակերպությունների սպասումների հիման վրա: Տնտեսության առանձին ճյուղերի համար հաշվարկված գործարար միջավայրի և տնտեսական ակտիվության ինդեքսների արժեքները ներկայացված են աղյուսակ 1-ում:

[1] Այստեղ դիֆուզիոն ինդեքսները հաշվարկվել են որպես դրական պատասխանների տեսակարար կշռի (տոկոսով) և չեզոք պատասխանների տեսակարար կշռի կեսի գումար:

Աղյուսակ 1


Գործարար միջավայրի և տնտեսական ակտիվության ինդեքսների մեծությունները 2005թ. երկրորդ եռամսյակում


Ճյուղեր	Գործարար միջավայրի ինդեքս	Տնտեսական ակտիվության ինդեքս
Արդյունաբերություն	62.5	75.9
Շինարարություն	58.8	66.7
Առևտուր	53.1	60.4
Ծառայություններ	55.9	72.7
Ընդամենը [2]	**60.0**	**72.2**


Հաշվարկված ինդեքսները ցույց են տալիս, որ գործարար միջավայրը կայուն է: Մյուս կողմից, տնտեսավարող սուբյեկտները հաջորդ եռամսյակում ակնկալում են տնտեսական ակտիվության զգալի աշխուժացում:


Ստորև ամփոփ ներկայացված են տնտեսության ճյուղերի կողմից հարցերին տրված պատասխանները: Կազմակերպությունների պատասխանների հիման վրա կառուցվել են նաև խաչածև աղյուսակներ, որոնք ցույց են տալիս հարցերի միջև առկա փոխկապվածությունը:

1. Արդյունաբերություն













[2] *Գործարար միջավայրի և տնտեսական ակտիվության ինդեքսների հաշվարկը տնտեսության համար իրականացվել է առանձին ճյուղերի դիֆուզիոն ինդեքսները կշռելով ավելացված արժեքների տեսակարար կշիռներով:*









Աղյուսակ 2

Ընդհանուր տնտեսական վիճակը (գալիք եռամսյակ)	Թողարկման ծավալները (գալիք եռամսյակ)			Ընդամենը
	Կավելանան (71%)	Կմնան նույնը (21%)	Կնվազեն (8%)	
Կլավանա (59%)	100.0	-	-	100
Կմնա նույնը ((38%)	6.7	40.0	53.3	100
Կվատանա (3%)	4.2	8.3	87.5	100


Աղյուսակ 3


Արտադրանքի գները (ընթացիկ եռամսյակ)	Թողարկման ծավալները (ընթացիկ եռամսյակ)			Ընդամենը
	Կավելանան (62%)	Կմնան նույնը (28%)	Կնվազեն (10%)	
Կբարձրանան (3%)	-	-	100.0	100
Կմնան նույնը (92%)	10.8	29.7	59.5	100
Կնվազեն (5%)	-	-	100.0	100


Աղյուսակ 4


Արտադրական հզորությունների օգտագործումը (գալիք եռամսյակ)	Աշխատողների թվաքանակը (գալիք եռամսյակ)			Ընդամենը
	Կավելանա (38%)	Կմնա նույնը (59%)	Կնվազի (38%)	
Կավելանան (68%)	-	50.0	50.0	100
Կմնան նույնը (26%)	10.0	80.0	10.0	100
Կնվազեն (5%)	-	50.0	50.0	100


2. Շինարարություն




















Աղյուսակ 5

Ընդհանուր տնտեսական վիճակը (գալիք եռամսյակ)	Շին. աշխատանքները (գալիք եռամսյակ)			Ընդամենը
	Կավելանան (50%)	Կմնան նույնը (40%)	Կնվազեն (10%)	
Կլավանա (20%)	-	50.0	50.0	100
Կմնան նույնը (80%)	12.5	37.5	50.0	100
Կվատանա (0%)	-	-	-	-


Աղյուսակ 6


Շինարարական աշխատանքների գները (ընթացիկ եռամսյակ)	Շինարարական աշխատանքները (ընթացիկ եռամսյակ)			Ընդամենը
	Կավելանան (50%)	Կմնան նույնը (40%)	Կնվազեն (10%)	
Կբարձրանան (80%)	--	50	50	100
Կմնան նույնը (20%)	12.5	37.5	50	100
Կնվազեն (0%)	-	-	-	-


Աղյուսակ 7


Արտադրական հզորությունների օգտագործումը (գալիք եռամսյակ)	Աշխատողների թվաքանակը (գալիք եռամսյակ)			Ընդամենը
	Կավելանա (10%)	Կմնա նույնը (80%)	Կնվազի (10%)	
Կավելանան (30%)	-	66.7	33.3	100
Կմնան նույնը (70%)	14.3	85.7		100
Կնվազեն (0%)	-	-	-	-


3. Առևտուր




















Աղյուսակ 8

Ընդհանուր տնտեսական վիճակը (գալիք եռամսյակ)	Առևտրի ծավալները (գալիք եռամսյակ)			Ընդամենը
	Կավելանան (52%)	Կմնան նույնը (16%)	Կնվազեն (32%)	
Կլավանա (24%)	-	-	100	100
Կմնա նույնը (64%)	37.5	18.75	43.75	100
Կվատանա (12%)	66.7	33.3	-	100


Աղյուսակ 9


Ապրանքների գները (ընթացիկ եռամսյակ)	Առևտրի ծավալները (ընթացիկ եռամսյակ)			Ընդամենը
	Կավելանան (36%)	Կմնան նույնը (48%)	Կնվազեն (16%)	
Կբարձրանան (24%)	33.3	50.0	16.7	100
Կմնան նույնը (64%)	6.3	50.0	43.8	100
Կնվազեն (12%)	33.3	33.3	33.3	100


Աղյուսակ 10


Առևտրի ծավալները (գալիք եռամսյակ)	Ապրանքների պաշարները (գալիք եռամսյակ)			Ընդամենը
	Կավելանան (20%)	Կմնան նույնը (64%)	Կնվազեն (16%)	
Կավելանան (52%)	15.4	53.8	30.8	100
Կմնան նույնը (16%)	25.0	75.0	-	100
Կնվազեն (32%)	12.5	75.0	12.5	100


4. Ծառայություններ




















Աղյուսակ 11

Ընդհանուր տնտեսական վիճակը (գալիք եռամսյակ)	Ծառայությունների ծավալները (գալիք եռամսյակ)			Ընդամենը
	Կավելանան (56%)	Կմնան նույնը (32%)	Կնվազեն (12%)	
Կլավանա (42%)	5.0	-	95.0	100
Կմնա նույնը (54%)	6.6	45.0	48.3	100
Կվատանա (4%)	-	-	-	-

Աղյուսակ 12

Ծառայությունների գները (ընթացիկ եռամսյակ)	Ծառայությունների ծավալները (ընթացիկ եռամսյակ)			Ընդամենը
	Կավելանան(%)	Կմնան նույնը (%)	Կնվազեն (%)	
Կբարձրանան(%)	-	-	-	-
Կմնան նույնը (%)	-	31.2	68.8	100
Կնվազեն (%)	100.0	-	-	100

Աղյուսակ 13

Ծառայությունների գները (ընթացիկ եռամսյակ)	Միջին աշխատավարձը (գալիք եռամսյակ)			Ընդամենը
	Կավելանա(12%)	Կմնա նույնը (84%)	Կնվազի (4%)	
Կբարձրանան (0%)	-	-	-	-
Կմնան նույնը (96%)	4.2	83.3	12.5	100
Կնվազեն (4%)	-	100.0	-	100

Բանկերի և վարկային կազմակերպությունների հարցումներ


Բանկերի և վարկային կազմակերպությունների եռամսյակային հարցման հիմնական նպատակն է գնահատել վերջիններիս դատողություններն ընթացիկ գործունեության և հաջորդ ժամանակահատվածում տնտեսական սպասումների վերաբերյալ:


Հարցմանը մասնակցել են ՀՀ բոլոր բանկերն ու վարկային կազմակերպությունները (21 բանկ և 9 վարկային կազմակերպություն):

Հարցումների արդյունքում հավաքագրված որակական տվյալների հիման վրա հաշվարկվել են պատասխանների հաշվեկշիռներ, իսկ քանակական տվյալների հիման վրա՝ պատասխանների կշռված միջին գնահատականը:

Ստորև ամփոփ ներկայացված են յուրաքանչյուր հարցին տրված պատասխանները:

1. Տնտեսական ակտիվության փոփոխության վերաբերյալ բանկերի և վարկային կազմակերպությունների գնահատականները (պատասխանները կշռված են բանկերի և վարկային կազմակերպությունների ընդհանուր ակտիվներում վերջիններիս տեսակարար կշիռներով):







Պատասխանների հաշվեկշիռները[3].

Ընթացիկ եռամսյակում	Գալիք եռամսյակում
85.4	81.6

2. Տնտեսական միջավայրի փոփոխությունների վերաբերյալ բանկերի և վարկային կազմակերպությունների գնահատականները:





[3] *Պատասխանների հաշվեկշիռները հաշվարկվել են որպես դրական պատասխանների տեսակարար կշռի և չեզոք (կայուն մակարդակ) պատասխանների տեսակարար կշռի կեսի գումար: Պատասխանների հաշվեկշիռները տատանվում են [0:100] միջակայքում: Հաշվեկշռի 0 արժեքը վկայում է այն մասին, որ բոլոր ռեսպոնդենտները պատասխանել են նվազում կամ վատթարացում, 100 արժեքը՝ աճ կամ լավացում: Հաշվեկշռի 50 արժեքը ցույց է տալիս, որ դրական և բացասական պատասխանները բաշխվել են հավասարաչափ: 1-ին և 5-րդ հարցերի պատասխանները կշռվել են բանկերի և վարկային կազմակերպությունների ընդհանուր ակտիվներում վերջիններիս տեսակարար կշիռներով:*

Պատասխանների հաշվեկշիռները.

Ընթացիկ եռամսյակում	Գալիք եռամսյակում
68.5	77.0

3. Նախորդ եռամսյակի վերջին ամսվա ընթացքում գնաճի վերաբերյալ բանկերի գնահատականները.


Ցուցանիշը	Արժեքը (ընթացիկ եռամսյակ), %	Արժեքը (հաջորդ եռամսյակ), %
Թվաբանական միջին	1.6	1.6
Առավելագույն գնահատական	5	10
Նվազագույն գնահատական	-2	-5
Ստանդարտ շեղում, տ.կ.	1.6	2.7


Համաձայն բանկերի գնահատականների՝ հունիսին՝ մարտի նկատմամբ և սեպտեմբերին՝ հունիսի նկատմամբ գնաճը կկազմի 1.6%:

4. Եռամսյակի վերջին փոխարժեքի սպասվող մակարդակի վերաբերյալ բանկերի գնահատականները (պատասխանները կշռված են բանկերի և վարկային կազմակերպությունների ընդհանուր ակտիվներում վերջիններիս տեսակարար կշիռներով).

Ցուցանիշը	2005թ. հունիսի վերջ	2005թ. սեպտեմբերի վերջ
Կշռված միջին	442.0	439.4
Առավելագույն գնահատական	450.0	470.0
Նվազագույն գնահատական	420.0	420.0
Վարիացիայի գործակից, %	1.8	3.1
Ստանդարտ շեղում, դրամ	8.0	13.8

5. Տնտեսության ճյուղերում զբաղված իրենց հաճախորդների ֆինանսական վիճակի վերաբերյալ բանկերի կողմից տրված գնահատականները (պատասխանները կշռված են բանկերի և վարկային կազմակերպությունների ընդհանուր ակտիվներում վերջիններիս տեսակարար կշիռներով):





Պատասխանների հաշվեկշիռները.

Ընթացիկ եռամսյակում	Գալիք եռամսյակում
76.8	86.8


6. Հաջորդ եռամսյակում իրենց կողմից տնտեսությանը տրամադրվող վարկային միջոցների փոփոխության վերաբերյալ բանկերի գնահատականները (պատասխանները կշռված են բանկերի և վարկային կազմակերպությունների վարկային ներդրումներում վերջիններիս տեսակարար կշիռներով).


Տնտեսությանը տրամադրվող վարկային միջոցների նվազում որևէ բանկ կամ վարկային կազմակերպություն չի սպասում: Վարկային միջոցների անփոփոխ մակարդակ է կանխատեսում ինը կազմակերպություն, որոնցից վեցը վարկային կազմակերպություն է:

Բանկերը և վարկային կազմակերպությունները հաջորդ եռամսյակում ակնկալում են վարկային միջոցների 12.8% կշռված աճ:

Սույն հարցումն իր բնույթով առաջինն էր, ինչից ելնելով՝ ընտրանքում ընդգրկվել է միայն Երևան քաղաքի բնակչությունը: Հետազոտվել են 546 տնային տնտեսություններ, որոնցից հրաժարվել են պատասխանել 46-ը (8.4%):

Ռեսպոնդենտների սեռատարիքային[4] կառուցվածքը ներկայացված է ստորև բերված գծապատկերներում:





Սպառողների եռամսյակային հարցման հիմնական նպատակն է գնահատել տնտեսության ներկա և սպասվող պայմանների վերաբերյալ սպառողների վերաբերմունքը: Հարցման հարցաթերթիկը բաղկացած է ներկա և ապագա իրավիճակն արտահայտող հարցերից:

Հարցումների արդյունքների հիման վրա հաշվարկվել են սպառողների վստահության (Consumer Confidence Index), ներկա և ապագա իրավիճակներն արտացոլող ինդեքսներ: Սպառողների վստահության ինդեքսը (ՍՎԻ) իրենից ներկայացնում է սպառողներին տրված վեց հարցերի հիման վրա հաշվարկված դիֆուզիոն ինդեքսների միջին թվաբանական[5]: Ներկա իրավիճակն արտահայտող ինդեքսը հաշվարկվել է որպես ներկա պայմաններին վերաբերող հարցերի (հարցեր 1, 3 և 6) հիման վրա հաշվարկված դիֆուզիոն ինդեքսների, իսկ ապագա իրավիճակն արտահայտող ինդեքսը՝ ապագային վերաբերող հարցերի (հարցեր 2, 4 և 5) դիֆուզիոն ինդեքսների միջին թվաբանական: Ինդեքսները տատանվում են [0, 100] միջակայքում: Ինդեքսների 0 արժեքը նշանակում է նվազում, 100 արժեքը՝ աճ, իսկ 50 արժեքը՝ կայուն վիճակ (աճ և նվազում ակնկալող ռեսպոնդենտների քանակը հավասար է)[6]: Հարցման արդյունքների հիման վրա հաշվարկված ինդեքսներն ունեն հետևյալ արժեքները.


Ինդեքս	Արժեք
Սպառողների վստահության ինդեքս	49.8
Ընթացիկ պայմանների ինդեքս	45.8
Ապագա պայմանների ինդեքս	54.0

Հաշվարկված բոլոր ինդեքսները մոտ են 50-ին, ինչը ցույց է տալիս, որ ըստ սպառողների գնահատականների՝ տնտեսությունը համեմատաբար կայուն վիճակում է: Ընթացիկ պայմանների ինդեքսը զիջում է ապագա պայմանների ինդեքսին, ինչն իր հերթին վկայում է, որ սպառողները հաջորդ եռամսյակում ակնկալում են ավելի մեծ ակտիվություն, քան ընթացիկ եռամսյակում:

[4] Տարիքային բաշխումն իրականացվել է պայմանականորեն՝ հետևյալ կերպ. երիտասարդ՝ 16-40 տարեկան, միջին՝ 41-65 տարեկան, տարեց՝ 66 և ավելի:
[5] Այստեղ դիֆուզիոն ինդեքսները հաշվարկվել են որպես դրական պատասխանների տեսակարար կշռի և չեզոք պատասխանների տեսակարար կշռի կեսի գումար:
[6] Որպես կայուն մակարդակ ընդունել ենք ինդեքսի տատանումը 45-ց մինչև 55-ը:

Ստորև ամփոփ ներկայացված են յուրաքանչյուր հարցին տրված պատասխանները:


1. Տնային տնտեսությունների բաշխվածքն ըստ կենցաղային ապրանքների ձեռքբերմանն ուղղված ծախսերի փոփոխության.






2. Տնային տնտեսությունների բաշխվածքն ըստ իրենց տնտեսության եկամուտների փոփոխության.






3. Հաջորդ եռամսյակի ընթացքում ընտանիքում զբաղված անդամների քանակի աճ սպասող տնային տնտեսությունների բաշխվածքը.



4. Տնային տնտեսությունների գնահատականները ներկա տնտեսական պայմանների վերաբերյալ:



Այսպիսով, համաձայն 500 տնային տնտեսությունների հարցման արդյունքների՝ 2005թ. երկրորդ եռամսյակում սպառողների զգայունությունը տնտեսական երևույթների նկատմամբ համեմատաբար կայուն է: Այնուամենայնիվ ապագա իրավիճակների ինդեքսը ցույց է տալիս, որ երրորդ եռամսյակում, երկրորդի համեմատ, որոշակի ակտիվություն է սպասվում:

Տնային տնտեսությունների պատասխանների հիման վրա կառուցվել են նաև որոշ խաչածև աղյուսակներ, որոնք ցույց են տալիս հարցերի փոխկապվածությունը:

Եկամուտների և կենցաղային ծախսերի փոխկապվածությունը

Եկամուտները ընթացիկ եռամսյակի ընթացքում	Կենցաղային ապրանքների ծախսերը հաջորդ եռամսյակի ընթացքում			Ընդամենը
	Աճ (23.2%)	Նույն մակարդակ (67.2%)	Նվազում (9.6%)	
Աճ (8%)	26.8	70.7	2.4	100
Նույն մակարդակ (71%)	22.7	69.3	8.0	100
Նվազում (21%)	23.4	58.9	17.8	100

Համաձայն վերը ներկայացված աղյուսակի տվյալների՝ անկախ ընթացիկ եռամսյակում տնային տնտեսությունների եկամուտների փոփոխության ուղղությունից և աստիճանից, հաջորդ եռամսյակում կենցաղային ապրանքների ձեռքբերմանն ուղղված վերջիններիս ծախսերը կպահպանվեն նույն մակարդակի վրա:

Եկամուտների և կենցաղային ծախսերի փոխկապվածությունը հաջորդ եռամսյակի ընթացքում

Եկամուտները հաջորդ եռամսյակի ընթացքում	Կենցաղային ծախսերը հաջորդ եռամսյակի ընթացքում			Ընդամենը
	Աճ (23%)	Նույն մակարդակ (67%)	Նվազում (10%)	
Աճ (16%)	43.0	50.6	6.3	100
Նույն մակարդակ (70%)	19.0	74.1	6.8	100
Նվազում (14%)	21.7	50.7	27.5	100

Այստեղ պատկերը գրեթե նույնն է, ինչ որ՝ նախորդ աղյուսակում: Միևնույն ժամանակ, հաջորդ եռամսյակում, եկամուտների աճին զուգընթաց, կաճեն նաև կենցաղային ապրանքների ձեռքբերման ծախսերը:

Ընթացիկ եռամսյակում եկամուտների փոփոխության և ՀՀ տնտեսության վիճակի միջև փոխկապվածությունը

Եկամուտները ընթացիկ եռամսյակում	ՀՀ տնտեսության վիճակը			Ընդամենը
	Դրական (22%)	Չեզոք (29%)	Բացասական (49%)	
Աճ (8%)	61.0	19.5	19.5	100
Նույն մակարդակ (71%)	19.9	32.1	48.0	100
Նվազում (21%)	13.1	21.5	65.4	100

Աղյուսակի տվյալները ցույց են տալիս դրական կախվածություն եկամուտների փոփոխության ուղղությունների և տնտեսական իրավիճակի գնահատականների միջև: Այսպես, այն ռեսպոնդենտները, որոնց եկամուտները ընթացիկ եռամսյակում ավելացել են, դրական են գնահատել ներկա տնտեսական իրավիճակը և հակառակը:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ 1998-2004 ԹԹ. *

Դրամավարկային քաղաքականության վարչություն
Հարություն Սարգսյան, Վարդան Արամյան

Ներածություն

Վերջին տասնամյակում Ռուսաստանի տնտեսական զարգացումները մեծ հետաքրքրություն են ներկայացնում հետազոտողների համար: Ռուսաստանը ճգնաժամից հետո շատ կարճ ժամանակահատվածում վերելք ապրեց, այն դեպքում, երբ շատ հետազոտողներ այնքան էլ լավատեսական գնահատականներ չէին տալիս և Ռուսաստանի ճգնաժամը որակում էին որպես խոր ճգնաժամ: Ավելին, որոշ տնտեսագետներ Ռուսաստանի տնտեսությունը մինչև ճգնաժամը համարում էին «թվացյալ», որտեղ ձևավորվել էին «թվացյալ» եկամուտներ և գներ, որն իր հերթին տնտեսությունը վերածել էր բարտերային տնտեսության: Արդյոք տնտեսության նման վերելքը նավթի բարձր գների և փոխարժեքի հետճգնաժամային արժեզրկման ժամանակավոր արդյունք է: Նյութում տրվում են այս և նման հարցերի պատասխանները:

Աշխատանքում ներկայացվում են Ռուսաստանի տնտեսության նկարագիրը, տնտեսության թույլ և խոցելի կողմերը, կառավարության անհետևողական քաղաքականությունները, որոնք նպաստեցին 1998թ. ճգնաժամի առաջացմանը: Մանրամասն քննարկվում են Ռուսաստանի տնտեսության բնորոշ գծերը 2002-2004 թվականներին: Ներկայացվում են Համաշխարհային բանկի և ԱՄՀ փորձագետների կարծիքները Ռուսաստանի տնտեսության ապագա զարգացումների վերաբերյալ: Հետազոտության վերջում դիտարկվում են Հայաստանի և Ռուսաստանի տնտեսական հարաբերությունները, արտաքին առևտուրը՝ ըստ ապրանքատեսակների և արտահանման և ներմուծման կառուցվածքը՝ ըստ երկրների, որը հնարավորություն կտա հետագայում գնահատելու Ռուսաստան արտահանման և Ռուսաստանից ներմուծման շարժերը:

Ռուսաստանի 1998թ. ճգնաժամի առաջացման նախադրյալները

1998թ. Ռուսաստանի տնտեսության ճգնաժամի պատճառները պարզելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել այն գործոնները, որոնք նախապայմաններ ստեղծեցին և նպաստեցին դրա առաջացմանը:

Ռուսաստանի ձեռնարկությունների անարդյունավետ կառուցվածքը. Դեռևս անկախության առաջին տարիներին կառավարությունը ընտրեց արագ սեփականաշնորհման ռազմավարություն. ձեռնարկությունների սեփականության իրավունքը տրվեց աշխատողներին, հիմնականում՝ ձեռնարկության ղեկավարներին: Չնայած արտաքին սեփականատերերի տեսակարար կշիռը սեփականաշնորհման գործընթացից հետո աճել էր, շատ դեպքերում ղեկավարների որոշումները կառավարման գործընթացում դեռևս գերակշռում էին: Սեփականաշնորհման նման կառուցվածքի անարդյունավետությունը պայմանավորված էր որոշ պատճառներով: Աշխատողները և ղեկավարները հակված էին պահպանել իրենց աշխատատեղերը, որը կհանգեցներ ավելորդ աշխատուժի կուտակման, այն դեպքում, երբ հրատապ խնդիր էր ձեռնարկության վերակառուցումը: Իսկ կառավարման նախկին ոճը չէր համապատասխանում շուկայական տնտեսության պայմաններին: Բացի այդ, ամենակարևորն այն է, որ այդ դեպքում ձեռնարկությունները շահույթ էին ապահովում միայն դրական կանխիկ հոսքերի ստեղծման ճանապարհով[1], մինչդեռ նրանց անհրաժեշտ էին կապիտալ ներդրումներ: 1997թ. համախառն կապիտալ ներդրումները կազմել են 1990թ. մակարդակի միայն 17%-ը: Իսկ ձեռնարկությունների նման անարդյունավետ գործունեության և կապիտալ ներդրումների բացակայության պայմաններում, դրամական հոսքերի ապահովումը հնարավոր է միայն արդեն գոյություն ունեցող կապիտալի վատնման միջոցով, իսկ նման ձևով կանխիկ հոսքերի ապահովումը ենթադրում է ձեռնարկության քայքայում, հետևաբար և՝ խարխուլ իրական հատված:

** Հեղինակների տեսակետները կարող են չհամընկնել ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական դիրքորոշմանը:*

[1] Դրական կանխիկ հոսք ասելով հասկանում ենք ձեռնարկության ունեցվածքի վաճառքից ձևավորված կանխիկ մուտքերի մեծ ծավալները:

Նշված անարդյունավետ տնտեսավարման պայմաններում ռուսական ձեռնարկությունները կարճ ժամանակահատվածում կուտակեցին զգալի ապառքներ՝ ինչպես միմյանց նկատմամբ վճարումների, այնպես էլ բյուջեի նկատմամբ հարկային պարտավորությունների կատարման գծով: Որոշ տնտեսագետներ Ռուսաստանի տնտեսությունը որակել են որպես «թվացյալ» տնտեսության: Այսպես՝ յուրաքանչյուր տարի ձեռնարկություններն իրենց տնտեսական գործունեությունը ծրագրավորելիս հաշվի էին առնում գործընկեր ձեռնարկության խոստացած դեբիտորական պարտքերի վերադարձը, իրենք էլ, իրենց հերթին, մյուս գործընկեր ձեռնարկություններին խոստանում էին կրեդիտորական պարտքերի վերադարձ, սակայն այս շղթայական խոստումների սկզբնակետում անարդյունավետ գործող անվճարունակ ձեռնարկությունն էր: Այս շղթայի մեջ էր ընդգրկված նաև բյուջեն, որի հետևանքով էլ տարեցտարի աճում էին ձեռնարկությունների հարկային ապառքները բյուջեի նկատմամբ: 1998թ. հունիսին տնտեսության ապառքները կազմում էին ՀՆԱ-ի շուրջ 45%-ը, որի հետևանքով ստեղծվել էին անհիրական կամ «թվացյալ» եկամուտներ, իսկ դա նշանակում է, որ Ռուսաստանի տնտեսությունն իրականում շատ ավելի փոքր էր, քան ներկայացվում էր:

Խնայողությունների ցածր մակարդակ. Դեռևս 90-ականների սկզբներից Ռուսաստանի տնտեսությունում պարբերաբար գրանցվող տնտեսական անկումները բարձր գնաճի հետ մեկտեղ խոչընդոտել են հասարակության խնայողությունների ձևավորմանը: Մյուս կողմից՝ 1992-1994թթ. տարբեր ֆինանսական կազմակերպությունների սնանկացումները թուլացրել էին վստահությունը ռուսական բանկերի նկատմամբ: Արդյունքում՝ միջոցների հոսք դեպի բանկային համակարգ տեղի չէր ունենում, և ռուսական բանկային համակարգը, դեռևս փխրուն լինելով, լուրջ բարեփոխումների կարիք էր զգում: 1998թ. գարնանը ռուսական բանկերի ընդհանուր ակտիվները կազմում էին ՀՆԱ-ի մոտ 35%-ը, որը բավականին ցածր էր զարգացող շուկայական տնտեսություն ունեցող երկրների համեմատությամբ (Բրազիլիայում նույն ցուցանիշը կազմում էր 72%, Լեհաստանում՝ 60%, այլ երկրներում՝ ավելի քան 100%): Տնտեսության մեծ ստվերային հատվածի միջոցով ստեղծվող մեծածավալ անօրինական փողերը[2] նույնպես չհոսեցին բանկային համակարգ (անվստահելի բանկային համակարգի պատճառով): Դրանք չներդրվեցին նաև տնտեսությունում (ռիսկային և անարդյունավետ իրական հատվածի պատճառով): Մյուս կողմից, 1992թ-ից մինչև ճգնաժամը, արտաքին ռազմավարական ներդրողները զգալի հետաքրքրություն չէին ցուցաբերում Ռուսաստանի տնտեսության նկատմամբ[3], որի արդյունքում նշված ժամանակահատվածում չնկատվեց նաև արտաքին խնայողությունների ներհոսք: Փաստորեն, 1992-1998թթ. տնտեսական աճի համար անհրաժեշտ ներդրումների աղբյուրները գրեթե բացակայում էին:

Կապիտալի արտահոսք. 1992-1997թթ. Ռուսատանի տնտեսությունում անընդհատ դիտարկվել է կապիտալի արտահոսք, որի հետևանքով մինչև 1997թ. կապիտալի հաշիվը եղել է բացասական: Ինչպես նշվեց, երկրից կապիտալի արտահոսքը մի կողմից ներքին տնտեսությունում ներդրումների համար գրավիչ ոլորտների սահմանափակությունն էր, մյուս կողմից՝ հարկերից խուսափելու նպատակ էր հետապնդում, ինչպես նաև քրեական վարքագծի արդյունք էր: Այսպիսի իրավիճակում կապիտալի արտահանումը երկրից (տարեկան 10-40 մլրդ ԱՄՆ դոլար) տնտեսական լուրջ հիմնախնդիր էր ստեղծել Ռուսաստանի տնտեսության համար՝ մի կողմից զգալի ճնշում գործադրելով փոխարժեքի արժեզրկման վրա, մյուս կողմից՝ զսպելով տնտեսական աճը: 1997թ. օտարերկրյա ներդրումների (հիմնականում՝ պորտֆելային) հոսքը Ռուսաստան կապիտալի հաշիվը դարձրեց դրական, և այն պահպանվեց մինչև 1998թ. առաջին եռամսյակը: Ըստ էության, ներդրողները լավատեսորեն էին տրամադրված և իրական պատկերացում չունեին 1992-97թթ. տնտեսական զարգացումների վերաբերյալ: Միևնույն ժամանակ, կառավարության պարտատոմսերի բարձր եկամտաբերությունը հավանաբար գրավիչ էր ներդրողների համար: Արդյունքում՝ 1997թ. տեղի ունեցավ արժեթղթերի գների աճ և պետական պարտատոմսերի եկամտաբերության նվազում՝ պայմանավորված պետական պարտատոմսերի նկատմամբ օտարերկրյա ներդրողների պահանջարկի աճով: Այնուամենայնիվ, ասիական ճգնաժամից հետո որոշ դասեր քաղած ներդրողները բավականին զգուշավոր էին այն առումով, որ նրանց ամենևին չէին գոհացնում բյուջեի ցուցանիշների զարգացումները: Դա էր պատճառը, որ ձևավորված իրավիճակը երկար չտևեց, և արդեն 1998թ. կապիտալ ներհոսքը դադարեց:

Անարդյունավետ դրամավարկային քաղաքականություն. 1992թ-ից սկսած՝ թեև տնտեսությունում արձանագրվում էր գնաճի տեմպերի նվազում, սակայն հասարակության վստահությունը ազգային ար-


---

[2] Տես՝ BOFIT Discusion Paper "Black Cash Tax Evasion in Russia", Andrei Yakovlev, 1999, N 3:

[3] Թեև Ռուսաստանի տնտեսությունը մեծ շուկա էր արտաքին ռազմավարական ներդրողների համար, սակայն տնտեսությունում առավել մեծ չափերի հասնող կաշառակերությունը և կոռուպցիան խոչընդոտներ էին ստեղծում արտաքին միջոցների ներթափանցման համար:

ժույթի նկատմամբ շարունակում էր ցածր մակարդակի վրա մնալ, և խնայողությունները հիմնականում արտարժույթով էին: Եռանիշ գնաճի ցուցանիշ տնտեսությունում գրանցվել է մինչև 1995թ., որի հիմնական պատճառը ԿԲ կողմից պետական բյուջեի ուղղակի վարկավորումն էր: Սա կապված էր այն հանգամանքի հետ, որ Ռուսաստանի կառավարությունն ի վիճակի չէր ֆինանսավորել բյուջեի պակասուրդն այլ աղբյուրների հաշվին, որի հետևանքով տնտեսությունում ձևավորվում էին գնաճի և փոխարժեքի արժեզրկման սպասումներ: Այսպես՝ Ռուսաստանի բյուջեի պակասուրդը 1992-98թթ. կազմում էր ՀՆԱ 5-11%-ը: 1992-94թթ. ընթացքում կառավարությունն ի վիճակի չէր ստանալ ներքին (արժեթղթերով ֆինանսավորում) և արտաքին վարկավորում՝ պակասուրդի ֆինանսավորման համար: Այդ պատճառով 1993թ. պակասուրդի 100%-ը, իսկ 1994թ.՝ 77%-ը, ֆինանսավորվել է ԿԲ կողմից: Միայն 1995 թվականին պետական պարտատոմսերի շուկայի ստեղծումով կառավարությունը կարողացավ օգտվել ներքին ֆինանսավորման աղբյուրներից, սակայն սկզբնական շրջանում բարձր էր այդ աղբյուրից օգտվելու գինը, ինչպես նաև սահմանափակ էին այդ աղբյուրից մեծածավալ ֆինանսական միջոցներ ներգրավելու հնարավորությունները: Այսպիսի իրավիճակում ԿԲ դրամավարկային քաղաքականության գործողությունները հաճախ հակադրվում էին հարկաբյուջետային քաղաքականության նպատակներին. դրամավարկային մարմինների կողմից գնաճի նվազեցման նպատակով իրականացվող կոշտ դրամավարկային քաղաքականությունը կկրճատեր գնաճի տեմպը, սակայն կարող էր հանգեցնել տոկոսադրույքների, հետևաբար նաև՝ կառավարության կողմից ներքին պարտքի՝ առանց այդ էլ բարձր ծախսերի էլ ավելի բարձրացմանը, ինչպես նաև պակասուրդի ֆինանսավորման հնարավորությունների սահմանափակմանը: Հարմարվողական դրամավարկային քաղաքականության իրականացումը նշանակում էր գնաճի բարձր մակարդակի առկայություն և փոխարժեքի արժեզրկում, որը դոլարացման բարձր մակարդակի պայմաններում ավելի էր թուլացնում հասարակության վստահությունը կենտրոնական բանկի նկատմամբ: Այնուամենայնիվ, Ռուսաստանի կենտրոնական բանկը նման երկընտրանքի դեպքում, 1995 թվականից սկսած մինչև ճգնաժամը, նախընտրեց երկու տարբերակների միջինը, այն է՝ հարմարվողական քաղաքականության իրականացում՝ միաժամանակ արժութային ինտերվենցիաներով արհեստականորեն պահելով անվանական փոխարժեքը: Արժութային ինտերվենցիաներն ունեին երկու հիմնական պատճառ: Մի կողմից Ռուսաստանի կենտրոնական բանկը հասարակության վստահությունն իր նկատմամբ բարձրացնելու համար սահմանել էր ռուսական ռուբլի/ԱՄՆ դոլար փոխարժեքի տատանումների միջակայք և աշխատում էր անվանական փոխարժեքը պահպանել այդ միջակայքում: Մյուս կողմից՝ ռուսական ռուբլով գնանշված՝ կառավարության ներքին պարտքը կազմում էր ՀՆԱ միայն 15-20%-ը, մնացած մասն արտարժույթով արտահայտված պարտքն էր: Փաստորեն ռուբլու արժեզրկմանը զուգահեռ ավելի կդժվարանար արտարժույթով արտահայտված արտաքին պարտքի վերադարձը, ինչը ցանկալի երևույթ չէր Ռուսաստանի համար: Այդ իսկ պատճառով Ռուսաստանի կենտրոնական բանկը մինչև ճգնաժամը փորձում էր բարձր գնաճի պայմաններում արտարժութային ինտերվենցիաներով արհեստականորեն պահել փոխարժեքը, որի արդյունքում, 1997թ-ից սկսած, վատնում էր արտաքին պահուստները՝ միաժամանակ իրական փոխարժեքի արժեքավորման միջոցով նվազեցնելով Ռուսաստանի արտաքին մրցունակությունը:

Գրաֆիկ 1. Փողի բազայի բաղադրատարրերը




Կառավարության պարտքի անկայունություն. Վերը նշված գործոնները 1998թ. ճգնաժամի առաջացման նախապայմաններ էին, սակայն հիմնական պատճառը պետական պարտքի անկայունությունն էր՝ պայմանավորված անարդյունավետ հարկաբյուջետային քաղաքականությամբ: 1993-95թթ. ընթացքում պարտքը դեռևս չափավորի սահմաններում էր՝ ՀՆԱ 20-30%-ը: 1997-1998թթ. կառավարությունը, առանց պետական ֆինանսների կառավարման ոլորտում լուրջ բարեփոխումների իրականացման (հարկային բարեփոխումներ և պետական ծախսերի արդյունավետության բարձրացում), շարունակում էր նոր վարկերի ներգրավումը, քանի որ տնտեսությունն աշխուժացման նշաններ էր ցույց տալիս[4]: Այսինքն՝ բյուջեի հարկային մուտքերի զգալի աճ չէր նկատվում, այն դեպքում, երբ կառավարության պարտքի ծավալներն արագ տեմպերով աճում էին: Այս հանգամանքը մտահոգում էր կառավարության արժեթղթերի սեփականատերերին, հատկապես օտարերկրյա սեփականատերերին: Այդպիսով, կուտակված պարտքն արդեն 1998 թվականի առաջին կեսին արդեն կազմում էր ՀՆԱ մոտ 50%-ը, և կառավարության նման անհետևողական քաղաքականությունը, որը կասկածի տակ էր դնում կուտակված պարտքի վերադարձման հնարավորությունը, 1998թ. օգոստոսին ճգնաժամի առաջացման պատճառ հանդիսացավ: Օտարերկրյա ներդրողները, որոնց ձեռքում էր կուտակվել կառավարության թողարկած պարտատոմսերի մոտ 40%-ը, զգալով որ կառավարության պարտքը, բյուջեի ցածր հարկային մուտքերի և իրար հաջորդող տնտեսական անկումների պարագայում, հասել է վտանգավոր մակարդակի, հետ վաճառեցին իրենց պետական արժեթղթերը: Վերջինս էլ արդեն ճգնաժամի հստակ ազդանշան էր, քանի որ կառավարությունն ի վիճակի չէր մարել իր պարտավորությունները:

Ճգնաժամի ժամանակաշրջանը

Ռուսաստանի տնտեսության՝ նշված հիմնական թույլ կողմերը երկրի տնտեսության գործունեությունը դարձրել էին անարդյունավետ: Դրա հետ մեկտեղ, կառավարության անարդյունավետ քաղաքականությունը և երկար տարիներ անընդհատ ձևավորվող բյուջեի մեծ պակասուրդը ճգնաժամի առաջացման բոլոր նախահիմքերը դրեցին: Միևնույն ժամանակ, երբ 1997թ-ից ուժեղացան ճնշումները փոխարժեքի վրա (ռուսական ռուբլու արժեզրկման ուղղությամբ), ԿԲ կողմից իրականացվող ոչ մի միջոցառում հաջողություն չունեցավ[5]:

Գրաֆիկ 2. Ռուսաստանի կենտրոնական բանկի արտաքին պահուստների և փոխարժեքի դինամիկան 1997-1998թթ.



[4] Պետության հարկային քաղաքականությունը լուրջ բարեփոխումների կարիք ուներ, և դեռևս մեծ էին հարկերից խուսափելու դեպքերը և մեծ՝ ստվերային հատվածը:

[5] Կենտրոնական բանկը սահմանափակումներ դրեց առևտրային բանկերի կողմից արտարժույթի վաճառքի վրա՝ սկզբնական շրջանում օրական 500 մլն դոլարի սահմաններում, այնուհետև՝ ավելի քիչ: Կատարվեցին պահուստային նորմայի փոփոխություններ՝ տարվա սկզբից ռուբլով և արտարժույթով միջոցների, անկախ ժամկետայնությունից, պահուստային նորման բարձրացվեց և սահմանվեց 11 տոկոս:

Այսպես՝ 1997թ. օգոստոսից սկսած՝ կենտրոնական բանկի արտաքին պահուստները (առանց ոսկու) ԿԲ ինտերվենցիաների արդյունքում անընդհատ նվազում էին և 1998թ. օգոստոսին հասան 8.2 մլրդ ԱՄՆ դոլարի: Ընդ որում, 1998թ. հունիս-հուլիսին Ռուսաստանը ԱՄՀ-ից ստացավ վարկեր, ինչը որոշակիորեն համալրեց ԿԲ արտաքին պահուստները, սակայն դա էապես չազդեց արտաքին ներդրողների վատատեսական տրամադրվածության վրա, և նույնիսկ դրանից հետո, մինչև դեկտեմբեր, նրանք շարունակում էին իրենց միջոցները դուրս հանել Ռուսաստանի տնտեսությունից (մասնավորապես՝ պետական արժեթղթերում կատարված ներդրումները): Մյուս կողմից, կենտրոնական բանկը օգոստոսյան իրադարձությունների նախաշեմին ստիպված էր բարձրացնել վերաֆինանսավորման դրույքը՝ ռուսական ռուբլով ակտիվների գրավչության բարձրացման և ռուբլու վրա արժեզրկման ճնշումները թուլացնելու նպատակով: Այսպես՝ մայիսին այն հասավ 150 տոկոսի, հունիսին իջեցվեց մինչև 60 տոկոս, իսկ հուլիսին նորից բարձրացվեց մինչև 80%: Դրա արդյունքում ֆինանսական շուկաներում, մասնավորապես պետական պարտատոմսերի շուկայում, մայիսից սկսած գրանցվեց տոկոսադրույքների անկանխատեսելի աճ՝ 44 տոկոս՝ նախորդ ամսվա 25 տոկոսի փոխարեն, ինչը շարունակվեց նաև հետագա ամիսներին՝ հասնելով 60 տոկոսի սահմաններին: Կարգավորող մարմինների կարծիքով, դա պետք է դադարեցներ պետական արժեթղթերի վաճառքը և արտարժութային միջոցների արտահոսքը երկրից: Սակայն դա տնտեսապես արդարացված քայլ չէր, քանի որ համեմատաբար կայուն փոխարժեքի պայմաններում բարձր էր նաև արտարժութային ավանդների եկամտաբերությունը, ինչը սահմանափակ արտաքին պահուստների պարագայում պարտքի սպասարկման դժվարություններ էր առաջացնում և նորից մեծացնում արտարժույթի պահանջարկը:

Արտարժութային միջոցների հերթական արտահոսքի ուժեղ ալիքը 1998թ. օգոստոսի 17-ին կենտրոնական բանկին ստիպեց մեծացնել ռուսական ռուբլի/ԱՄՆ դոլար միջակայքը՝ 1 ԱՄՆ դոլարի դիմաց 6 ռուբլուց հասցնելով 9.5 ռուբլու: Դրան զուգահեռ, կասեցվեցին ոչ ռեզիդենտներին վճարվող կարճաժամկետ՝ մինչև 90 օր վճարման ենթակա բոլոր տեսակի փոխառությունների մարումները: Բացի այդ, մինչև 1999թ. դեկտեմբերի 31-ը մարման ենթակա բոլոր տեսակի պետական արժեթղթերի համար սահմանափակում (վճարման սառեցում) հայտարարվեց: Սա արդեն պետական պարտքի ճգնաժամի վկայություն էր: Դրանից հետո փոխարժեքի վրա ճնշումներն էլ ավելի ուժեղացան, քանի որ բոլորը ձգտում էին ձերբազատվել ռուբլուց, ինչի հետևանքով ռուսական ռուբլին սկսեց կայուն արժեզրկվել, և արդեն օգոստոսի վերջին 1 ԱՄՆ դոլարն արժեր 20 ռուսական ռուբլի:

Օգոստոսին ռուբլի/դոլար միջին փոխարժեքն արժեզրկվեց 8.6 տոկոսով, իսկ սեպտեմբերին արժեզրկումը հասավ իր գագաթնակետին՝ 115.2 տոկոս: Օգոստոսին գրանցվեց 3.7 տոկոս գնաճ՝ նախորդ ամսվա նկատմամբ, իսկ միայն սեպտեմբերին՝ 38.4 տոկոս գնաճ:

Ի տարբերություն ասիական ճգնաժամի, Ռուսաստանի տնտեսությունը նախքան ճգնաժամը չի ունեցել զգալի կապիտալ ներհոսք, ավելին, Ռուսաստանի տնտեսությունում չի նկատվել ներդրումային/սպառողական աննախադեպ աճ, ինչպես շատ ասիական և լատինաամերիկյան երկրներում: Մյուս կողմից, ռուսական բանկերն ավելի «խոցելի» էին, քան ասիական երկրների բանկերը. այլ զարգացող երկրների համեմատությամբ բավականին փոքր էին արտաքին վարկերի ներգրավման հնարավորությունները և բանկային ակտիվները: Դրա հետ մեկտեղ, ռուսական բանկերի ակտիվների զգալի մասը պետական պարտատոմսերն էին, որոնց գների նվազման պատճառով 1997թ-ից սկսած՝ բանկերը մեծ վնասներ կրեցին: 1998թ. օգոստոսին բանկերն ունեցան լուծարելիության լուրջ հիմնախնդիրներ և ի վիճակի չէին կառավարությանը նորից վարկավորել, սակայն դա չհանգեցրեց բանկային համակարգի ճգնաժամի, ի տարբերություն ասիական շատ երկրների, որոնք ունեցան փոխարժեքի և բանկային ճգնաժամեր: Փաստորեն Ռուսաստանում սկզբում պարտքի ճգնաժամ էր, ինչը հետո փոխանցվեց փոխարժեքին և հանգեցրեց նաև փոխարժեքի ճգնաժամի: Արդյունքում՝ 1997թ-ին տնտեսությունում նկատված փոքր-ինչ դրական աճը՝ 1.4%, նորից վերածվեց տնտեսական անկման, ինչը իրական արտահայտությամբ կազմեց 5.3%:

Հետճգնաժամային մակրոտնտեսական և կառուցվածքային քաղաքականությունները

1998թ. ճգնաժամին հաջորդած առաջին վեց ամիսներին Ռուսաստանի տնտեսությունում դեռևս անորոշ իրավիճակ էր, որի հիմնական պատճառը հստակ մակրոտնտեսական կայունացման ծրագրի բացակայությունն էր: 1999թ. փետրվարին ռուսական ռուբլին ԱՄՆ դոլարի նկատմամբ արժեզրկվեց 70 %-ով, որն ամենաբարձրն էր ճգնաժամ ապրած բոլոր երկրների համեմատությամբ (բացառությամբ Ինդոնեզիայի): Միևնույն ժամանակ, միջին գնաճը 1999թ. կազմեց 90%: Պատճառը Ռուսաստանի կենտրոնական բանկի ընդլայնողական քաղաքականությունն էր՝ ուղղված բանկային համակարգում անհրաժեշտ լու-

ծարելիության պահպանմանը: Նմանատիպ հետճգնաժամային իրավիճակ նկատվել է միայն Ինդոնեզիայում: Ռուսաստանի ճգնաժամը առանձնահատուկ էր նաև մի շարք այլ պատճառներով՝ չնայած փոխարժեքի արժեզրկմանը և գնաճի բարձր տեմպերին: 1998թ. ճգնաժամի հետևանքով Ռուսաստանում արտադրության սկզբնական փլուզումն այնքան խորը չէր, ինչպես ճգնաժամ ապրած շատ երկրներում, ավելին, տնտեսական անկմանը հետևեց արագ և կայուն վերելք, որի հիմքում ընկած էին.

- 1998թ. փոխարժեքի մեծ արժեզրկումը խթանեց ներմուծման փոխարինիչների լայնածավալ արտադրությունը: Իսկ հետագա տարիներին իրական արդյունավետ փոխարժեքի արժեքավորումը Ռուսաստանի դեպքում ավելի քիչ էր, քան այլ ճգնաժամային երկրներում, այսինքն՝ Ռուսաստանը պահպանեց իր մրցակցային առավելությունը, որը խթանեց արտադրության հետագա աճը:
- Ներմուծման փոխարինիչների առաջարկի աճը հնարավոր չէր լինի, եթե սկսված չլիներ երկրի վերակառուցման գործընթացը և ընթացքի մեջ չլինեին ձեռնարկությունների ինքնաֆինանսավորմանն ու գործունեության ազատականացմանն ուղղված բարեփոխումները, ինչպես նաև չլիներ նախորդ տարիների ընթացքում իրականացված որոշ կառուցվածքային բարեփոխումների լագային ազդեցությունը:
- Նավթի գների բարձրացման արդյունքում առևտրի պայմանների լավացումը 1999թ. երրորդ եռամսյակից նոր թափ հաղորդեց տնտեսությանը: Նավթի գների աճի արդյունքում եկամուտների աճը նպաստեց բյուջեի եկամուտների ավելացմանը, ինչպես նաև երկրի պահուստների արագ կուտակմանը, որը, իր հերթին, նպաստեց արտաքին ցնցումներին դիմակայելու երկրի ունակության բարձրացմանը: Դրա հետ մեկտեղ, էներգիայի գները երկրում չբարձրացան միջազգային մակարդակի չափով, որից զգալի շահեցին ներքին արտադրողները, իսկ էներգետիկայի ոլորտն իր ծախսերի փոխհատուցումը ստացավ բյուջեի լրահատկացումներից, որոնք էլ ֆինանսավորվում էին նավթի գների աճի հաշվին ավելացած հարկային եկամուտներից:
- Փոխանցման այն ուղիները, որոնց միջոցով շոկերը ճգնաժամային իրավիճակում ազդում են իրական տնտեսության վրա, այն է՝ ֆինանսական ինստիտուտների և խոշոր ձեռնարկությունների հաշվեկշիռների ազդեցությունը, թույլ է եղել Ռուսաստանի տնտեսության համար, քանի որ. 1) բանկային համակարգի և իրական հատվածի փոխկապվածությունը սերտ չի եղել, բացառությամբ բանկերի կողմից մասնավոր հատվածին վճարահաշվարկային համակարգի միջոցով մատուցվող ծառայությունների, 2) ձեռնարկությունները չեն ունեցել արտարժութային պարտավորությունների և եկամուտների հոսքերի այնպիսի էական ճեղքվածք, որը կարող էր զգալի ազդեցություն ունենալ իրենց վճարունակության վրա:


1998թ. ճգնաժամից հետո դրսևորված դրական երևույթների շարքում կարելի է առանձնացնել արդեն 1999թ. սկսված՝ բյուջեի պակասուրդի կրճատումը: Այդ ձեռքբերմանը մասնակիորեն նպաստեցին բարձր նավթային եկամուտները և ՀՆԱ-ում պետական ծախսերի կրճատումը: Սակայն վերջինս այդքան էլ դրական երևույթ չր կարելի համարել, քանի որ այդ կրճատումը կատարվում էր սոցիալական բնույթի ծախսերի հաշվին, որի արդյունքում հասարակության՝ բյուջեից ստացված եկամուտները հետ էին ընկնում գնաճի բարձր տեմպերից և կորցնում գնողունակությունը: 2000թ-ին, նախագահ Պուտինի նշանակումից հետո, որոշակի բեկում մտցվեց հարկաբյուջետային բարեփոխումների ընթացքի մեջ՝ հատկապես հարկային կարգապահության բարձրացման և տեղական ու մարզային բյուջեների վերահսկողության ուժեղացման ուղղությամբ: Միևնույն ժամանակ, թույլատրվեց բյուջեի ոչ տոկոսային ծախսերի աճ, սակայն ոչ նույն տեմպերով, ինչ որ՝ նավթից ստացվող եկամուտներինը: Ընդ որում, նավթից ստացվող եկամուտները զգալի տեսակարար կշիռ ունեին բյուջեի ընդհանուր եկամուտներում, ինչը ստիպում էր կառավարությանը ամեն տարվա բյուջեի ծրագիրը կազմելիս ավելի զգույշ լինել նավթի գները կանխատեսելիս: 2000-2001թթ. նավթի համաշխարհային գներն ավելի բարձր էին, քան ծրագրել էր ՌԴ կառավարությունը, որի արդյունքում արհեստականորեն ստեղծվեց ծրագրվածից բարձր բյուջեի հավելուրդ:

Բյուջեի ավելցուկները 2000-2001թթ. Ռուսաստանի կենտրոնական բանկին հնարավորություն ընձեռեցին իրականացնելու ավելի ակտիվ քաղաքականություն: Այդ ժամանակահատվածում կենտրոնական բանկի հիմնական խնդիրներն էին՝ արտաքին պահուստների համալրումը և, վճարային հաշվեկշռի ավելցուկների պայմաններում, անվանական փոխարժեքի արժեքավորումից խուսափումը: Սղաճի նվազեցումը, կարելի է ասել, երկրորդական նշանակության խնդիր էր, քանի որ ուժեղ արտաքին դիրքը և բարձր դոլարայնացման պայմաններում անվանական փոխարժեքի արժեքավորումը արդեն իսկ գնաճի տեմպերի նվազման անհրաժեշտ նախահիմքեր էին ստեղծում: Մասնագետների կարծիքով 2000-2001թթ. դրամական ագրեգատների աճի ցուցանիշները գերագնահատված էին: Սակայն նշված ժամանակահատվածում ռուսական ռուբլու ամրապնդմանը զուգընթաց, արագ տեմպերով վերականգնվեց տեղական արժույթի նկատմամբ վստահությունը, որի արդյունքում, փողի պահանջարկի աճը սպասվածից բարձր եղավ: Դրամական ագրեգատների աճի բարձր տեմպերը (2000-2001թթ. փողի զանգվածի աճի տեմպերը

համապատասխանաբար կազմեցին 58 և 36 տոկոս) կլանվեցին տնտեսության կողմից, որն արտահայտվեց նրանում, որ 1999թ. գրանցված 85.7% գնաճից հետո 2000-2001թթ. տնտեսությունում գրանցվեցին միջին գնաճի՝ համապատասխանաբար 20.8% և 21.5% ցուցանիշներ:

Դեռևս այդ ժամանակաշրջանում լուրջ տարաձայնություններ կային Ռուսաստանի կենտրոնական բանկի վարած քաղաքականության վերաբերյալ. քննարկվում էր այն հարցը, թե արդյոք անհրաժեշտ էր այդ ժամանակահատվածում պայքարել անվանական փոխարժեքի արժեքավորման դեմ՝ իրական փոխարժեքի արժեքավորումից խուսափելու և երկրի արտաքին մրցունակությունը պահպանելու համար: Որոշ տնտեսագետներ այն կարծիքին էին, որ եթե Ռուսաստանը աչքաթող է արել գնաճը և այն, թեև ավելի ցածր, բայց նորից շարունակում է գրանցվել երկնիշ թվով, ապա արժութային միջոցների կարճատև ներհոսքի դադարումից հետո Ռուսաստանը ստիպված կլինի նորից պայքարել իրական փոխարժեքի արժեքավորման դեմ, սակայն այս դեպքում կծգտի նվազեցնել բարձր գնաճը (խնդիր, որը լուրջ մարտահրավերներ է նետել շատ անցումային ու զարգացող տնտեսությունների): Նրանք պնդում էին, որ պետք չէ վախենալ անվանական փոխարժեքի արժեքավորումից, քանի որ դա ռուբլու նկատմամբ վստահությունը բարձրացնելու և տնտեսությունում փողայնացման մակարդակը մեծացնելու հնարավորություն է ընձեռում: Հակառակ այս տեսակետի, տնտեսագետների մյուս բանակը գտնում էր, որ իրական փոխարժեքի արժեքավորումը (անկախ դրա աղբյուրներից) ուժեղ արտաքին դիրքի պատճառով արդեն իսկ զգալի է և լուրջ վտանգ կարող է ներկայացնել տնտեսության համար (ռուսական ապրանքների, հատկապես նավթի թանկացում միջազգային շուկաներում, դրա հետ կապված՝ արտահանման ծավալների զգալի կրճատում, տնտեսության և բյուջեի մուտքերի կրճատում և այլն): Հետևաբար անհրաժեշտ է որոշակիորեն դիմակայել այդ երևույթին:

Գրաֆիկ 3. Ռուբլու իրական արդյունավետ փոխարժեք (2000=100), աճը նշանակում է ռուբլու արժեքավորում




Հետճգնաժամային տարիներին, երբ ռուբլու արժեզրկման տեմպերը դանդաղեցին և 2000-2001թթ. դրսևորվեցին արժեքավորման միտումներ, Ռուսաստանի տնտեսական աճի շարժիչ ուժը՝ զուտ արտահանման աճը, փոխարինվեց ներքին պահանջարկի աճով: 1999-2001 թթ. տնտեսությունը շարունակում էր զարգանալ (համապատասխանաբար գրանցվել է 5.4%, 9% և 5% աճ), սակայն հիմնականում սպառման աճի հաշվին, որը, բնականաբար, կայուն աճի նախահիմքեր չէր կարելի համարել: Ավելին՝ առաջարկի տեսանկյունից զգալի աճ գրանցվում էր նավթարդյունահանող և դրա հետ կապված էներգետիկայի ճյուղերում, մինչդեռ մնացած ճյուղերում աճի տեմպերի դանդաղում էր նկատվում: Բնականաբար, այս իրավիճակում քաղաքականություն մշակողները գիտակցում էին, որ չնայած Ռուսաստանի տնտեսությունն ունի հետճգնաժամային որոշ հաջողություններ, սակայն հետագա տնտեսական զարգացման նախահիմքերի ամրապնդման համար տնտեսությունը լուրջ բարեփոխումների կարիք է զգում:

Ռուսաստանի տնտեսության ամփոփ նկարագիրը և մակրոտնտեսական զարգացումները 2002թ.

Չնայած 2002 թվականին կատարված որոշ տնտեսական բարեփոխումներին (հիմնականում հարկաբյուջետային հատվածում), իրական ՀՆԱ աճի կառուցվածքում դրսևորվեցին նախորդ տարիների մի-

տումները: 2002թ. սկզբներին գրանցված տնտեսական աճի բարձր տեմպերը տարեվերջին դանդաղեցին, և տարվա ցուցանիշը կազմեց 4.7%: Տնտեսական աճին մեծապես նպաստել են էներգետիկ ապրանքների արտահանման և սպառման աճը, իսկ վերջինիս վրա դրական ազդեցություն են ունեցել տնտեսության իրական աշխատավարձի և պետական ոչ տոկոսային ծախսերի աճը: Արդյունաբերության հատվածում իրական աշխատավարձերի աճը՝ 16.5 տոկոս, գերազանցել է արտադրողականության աճը՝ 8.2 տոկոս, որը հանգեցրել է ձեռնարկությունների շահութաբերության և ներդրումների կրճատման:


Գրաֆիկ 4. ՀՆԱ իրական աճի և միջին գնաճի դինամիկան 1995-2004 թթ.



Իրական աշխատավարձի բարձր աճի տեմպը հիմնականում պայմանավորված էր 1998թ. ճգնաժամի հետևանքով իրական աշխատավարձի կտրուկ նվազմամբ: Միևնույն ժամանակ, աճը դանդաղել էր այնպիսի ճյուղերում, ինչպիսիք են՝ առևտուրը, շինարարությունը և մեքենաշինությունը: Ըստ էության, տնտեսական աճի գործընթացում նավթի գերիշխող դերը որոշ առումով կասկածի տակ էր դնում տնտեսական աճի կայունության համար անհրաժեշտ նախապայմանների առկայությունը, ինչը վկայում էր, որ Ռուսաստանի տնտեսությունում կատարվող կառուցվածքային բարեփոխումների տեմպերը դանդաղել են:

2002թ. ընթացիկ հաշվի ավելցուկը կրճատվեց, սակայն ավելի փոքր չափով, քան սպասվում էր, քանի որ նավթի գները շարունակեցին բարձր մնալ միջազգային շուկաներում: Կապված ներքին պահանջարկի արագ աճի հետ՝ ներմուծումը շարունակում էր ավելանալ և 2002թ. կազմել է 60.9 մլրդ ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա 53.8 մլրդ ԱՄՆ դոլարի փոխարեն:

Գրաֆիկ 5. Ընթացիկ հաշիվ/ՀՆԱ-ի, ապրանքների և ծառայությունների հաշվեկշիռ/ՀՆԱ-ի և իրական արդյունավետ փոխարժեքի դինամիկաները 1995-2004թթ.




Չնայած նշված տարում ավելացել են նաև արտահանման ծավալները, սակայն դա հիմնականում նավթի արտահանման ծավալների աճի արդյունք էր, իսկ ոչ էներգետիկ ապրանքների արտահանման աճը սահմանափակվել է՝ թույլ արտաքին պահանջարկով:

Ինչպես և նախորդ տարիներին, 2002 թվականին ևս շարունակվել է կապիտալի ներհոսքը Ռուսաստանի տնտեսություն: Ընդ որում, կտրուկ ավելացել է մասնավոր կապիտալի ներհոսքը՝ արտացոլելով կապիտալի շուկայի բարենպաստ զարգացումները: Ուղղակի ներդրումների ներհոսքը, այնուամենայնիվ, դեռևս ցածր է՝ 2.5 մլրդ ԱՄՆ դոլար: Վճարային ընդհանուր հաշվեկշիռը էապես լավացել է, որի արդյունքում համախառն միջազգային պահուստներն աճել են, և ներմուծման ծածկույթի ցուցանիշը կազմել է վեց ամիս:


Դրամավարկային և փոխարժեքի քաղաքականությունները շարունակել են իրականացվել իրական փոխարժեքի արժեքավորման տեմպերի զսպման ուղղությամբ:

Գրաֆիկ 6. Փողի զանգվածի, տոկոսադրույքների և սղաճի դինամիկան 1996-2004թթ.



2002թ. Ռուսաստանի ԿԲ-ն ինտերվենցիաներ է իրականացրել՝ արտարժութային մեծ ներհոսքի պայմաններում աստիճանաբար արժեզրկելով անվանական փոխարժեքը դոլարի նկատմամբ: Սակայն, մյուս կողմից, ԿԲ ինտերվենցիաները մասնակիորեն չեզոքացվել են ավանդների ներգրավմամբ: Այս պարագայում տնտեսության շարունակվող վերամոնետիզացման արդյունքում հնարավոր եղավ խուսափել 2002թ. գնաճի ծրագրային ցուցանիշից մեծ շեղումներից, չնայած փողի լայն զանգվածի աճը գերազանցեց տարեվերջի 24-28% ծրագրային ցուցանիշը: Արդյունքում՝ թեև գնաճը նախորդ տարվա համեմատ նվազեց մինչև 15%, սակայն փոքր-ինչ գերազանցեց ծրագրային 12-14% ցուցանիշը: Նշենք նաև, որ 2002թ. բնականոն գնաճը գրանցվեց 10%-ի շրջանակներում:

Գրաֆիկ 7. Պակասուրդ/ՀՆԱ ցուցանիշի դինամիկան 1995-2004թթ.



2002թ. բյուջեի թերակատարումը անարդյունավետ հարկաբյուջետային քաղաքականության արդյունք էր: Ֆեդերալ բյուջեի ավելցուկը կազմել է ՀՆԱ 1.3 տոկոսը՝ 1.4 տոկոսային կետով ցածր, քան 2001թ., իսկ առաջնային ավելցուկը՝ 3.4 տոկոս: Էներգետիկ ապրանքների բարձր գները և նավթարդյունահանող ճյուղերի տեսակարար կշռի աճը ողջ տնտեսության մեջ իր էական ազդեցությունն է թողել հարկային եկամուտների վրա, և, բացի, այդ հարկային եկամուտների վրա ազդեցություն են ունեցել հարկային ռեժիմի փոփոխությունները: Եկամուտները նվազել են 0.6 տոկոսային կետով և կազմել ՀՆԱ 17.2 տոկոսը, որը մասնավորապես պայմանավորված էր շահութահարկի նվազմամբ, մինչդեռ ծախսերն ավելացել են 0.8 տոկոսային կետով՝ ոչ տոկոսային ծախսերի աճով պայմանավորված, և կազմել ՀՆԱ 15.9 տոկոսը:

Ինչ վերաբերում է Ռուսաստանի ֆինանսական շուկաներին, ապա դրանք երկրորդ տարին է, ինչ դրսևորում են դրական միտումներ: Ռուսաստանի արտաքին պարտքի ցուցանիշն ավելի ցածր է, քան այլ երկրներինը, որոնք ունեն միևնույն վարկանիշը: Կորպորատիվ պարտքային արժեթղթերի շուկայում նույնպես շարունակվել է նախորդ տարիներից նկատված աշխուժությունը. 2002թ-ին ձեռնարկությունների արժեթղթերի թողարկման ծավալները կտրուկ ավելացել են (ռուբլով և արտարժույթով գնանշված)՝ մեծապես պայմանավորելով ձեռնարկությունների վերաֆինանսավորման պահանջները:

Ընդհանուր առմամբ, Ռուսաստանի տնտեսությունում շարունակվում են դրական միտումները՝ առաջացնելով օտարերկրյա ներդրողների վստահությունը: Մասնագետների կարծիքով 2002թ. վերջին Ռուսաստանի կուտակած 50 մլրդ ԱՄՆ դոլար արտաքին պահուստները ոչ միայն բավարար էին փոքր կարճաժամկետ տատանումներին դիմակայելու համար, այլ նաև լուրջ վտանգ ներկայացնող արտաքին շոկերի դեպքում համապատասխան քայլեր իրականացնելու անհրաժեշտ նախապայման: Համաձման կարգով, Ռուսաստանի արտաքին պարտք/ՀՆԱ 40% ցուցանիշը այլևս վտանգավոր չէր Ռուսաստանի տնտեսության համար: Ու թեև որոշ մտավախություններ կային, որ միջազգային շուկաներում նավթի գների նվազումը կդանդաղեցնի Ռուսաստանի տնտեսական աճը, այնուամենայնիվ, շուկաների վարքագիծն այս առումով ամենևին դա չէր նախանշում: Ավելին՝ միջազգային վարկանշող կազմակերպությունները Ռուսաստանի տնտեսության ռիսկերը առաջիկա տարիներին վտանգավոր չէին գնահատում տնտեսական աճի և ներդրումների համար:

Ռուսաստանի տնտեսությունը 2003-2004թթ.

2003 թվականը ևս Ռուսաստանի տնտեսության համար դարձավ հերթական բարեհաջող տարին, և ի զարմանս շատ հետազոտողների, Ռուսաստանի տնտեսության ցուցանիշները մեկ անգամ ևս գերազանցեցին նույնիսկ ամենալավատեսական սպասումները: 2003 թվականին տնտեսական աճը կազմեց 7.3 տոկոս[6] (առաջին կիսամյակում՝ 7.2 տոկոս), իսկ միջին տարեկան գնաճը՝ 13.7 տոկոս: Աճ գրանցվեց տնտեսության գրեթե բոլոր ճյուղերում. արդյունաբերության աճը կազմեց 7.0 տոկոս (նախորդ տարի՝ 3.7 տոկոս), ծառայությունների աճը՝ 7.4 տոկոս (նախորդ տարի՝ 5.5 տոկոս), գյուղատնտեսության աճը՝ 1.5 տոկոս, շինարարության աճը՝ 14.4 տոկոս (նախորդ տարի՝ 2.7 տոկոս):

ՀՆԱ ծախսային մասում տնտեսական աճի հիմնական խթանը, երկար ընդմիջումից հետո, ներդրումների աննախադեպ աճն էր: Կապիտալի համախառն կուտակումն ավելացավ 12.9 տոկոսով (առաջին կիսամյակում՝ 14.5 տոկոս) և 2000 թվականից հետո առաջին անգամ գերազանցեց սպառման աճը (վերջինս կազմել է 6.1 տոկոս): Ներդրումների աճի արագ տեմպերն արդեն իսկ վկայում են, որ տնտեսության պահանջները ներդրումների նկատմամբ աճում են: Սակայն հարկ է նշել, որ ներդրումները հիմնականում ուղղվում են նավթի և էներգետիկայի ճյուղեր, ինչը, բնականաբար, սահմանափակում է մյուս ճյուղերում ներդրումների հնարավորությունները[7]:

Ռուսաստանի տնտեսության աճի բարձր տեմպը 2003 թվականին ևս, ինչպես և նախորդ տարի, պայմանավորվեց նավթահումքային մթերքների համաշխարհային գների աճով: Իրաքյան քաղաքական անցուդարձի հետ կապված՝ ռուսական նավթի գները տարվա ընթացքում բարձրացան 21-ից մինչև 24 ԱՄՆ դոլար/բարել:

---

[6] 1998 թվականի ճգնաժամից հետո կուտակային աճը կազմեց շուրջ 38 տոկոս:

[7] 2003թ. սկզբներին տեղի ունեցած զգալի կապիտալ ներհոսքը հիմնականում կապված էր նավթի բարձր գների, կորպորատիվ արժեթղթերի թողարկման մեծ ծավալների և «Սլավնեֆթի» սեփականաշնորհման հետ, որի արդյունքում տարվա առաջին եռամսյակում արտաքին պահուստներն ավելացան 8 մլրդ ԱՄՆ դոլարով:

Համաշխարհային բանկի կողմից տրվել է նավթի բարձր գների ուղղակի և անուղղակի ազդեցության գնահատականը[8], ըստ որի՝ վերջիններիս հաշվին ապահովվել է 7.3 տոկոս տնտեսական աճի 1.8 տոկոսային կետը:

Միջազգային շուկաներում նավթի գների բարձրացման հետ կապված նավթային եկամուտների անընդհատ բարձր աճը պայմանավորեց նաև ոչ արտահանելի ապրանքների սպառման աճը, որն իր ազդեցությունն ունեցավ ՀՆԱ կառուցվածքի վրա. աճեց ծառայությունների կշիռը ՀՆԱ-ի մեջ: Այսպես՝ անվանական ՀՆԱ-ում ապրանքների արտադրության տեսակարար կշիռը 2003 թվականին կրճատվեց մինչև 40.2 տոկոս (1999 թվականին այն կազմում էր 45 տոկոս):

Այդ կրճատումը փոխհատուցվեց ծառայությունների արտադրության տեսակարար կշռի աճով, ինչը 2003 թվականին հասավ 59.8 տոկոսի (1999 թվականին կազմում էր 55 տոկոս):

2003 թվականի ցուցանիշն արդյոք ծառայությունների գների աճի արդյունք էր, թե ուղղակի նոր թափ էր ստանում ծառայությունների արտադրության ոլորտը՝ հաշվի առնելով, որ պլանային տնտեսության կառուցվածքում գերակշռում էր ապրանքների արտադրությունը: Վերջինս ներհատուկ է հարուստ նավթային պաշարներով երկրին, որտեղ ծառայությունների գները բարձրանում են ավելի արագ տեմպերով, քան ապրանքների գները[9]:

Պատկերն ավելի պարզ դարձնելու համար իրական աճի տեմպերը համեմատենք տեսակարար կշիռների փոփոխությունների հետ: Այն փաստը, որ 1999-2003 թվականներին ծառայությունների համախառն իրական աճն ավելի փոքր է եղել, քան ապրանքների արտադրության իրական աճը՝ համապատասխանաբար 28.3 և 46.5 տոկոս, թույլ է տալիս ենթադրել, որ ծառայությունների տեսակարար կշռի աճը հիմնականում պայմանավորված էր հարաբերական գների աճով: Միևնույն ժամանակ, ապրանքների արտադրության իրական բարձր աճը բացատրվում է մինչև ճգնաժամը չօգտագործված արտադրական կարողությունների գործարկմամբ:

2003 թվականի կարևոր տեղաշարժերից մեկը ներդրումային պահանջարկի զգալի աճն էր. ներդրումները հիմնական կապիտալում ավելացան 12.5 տոկոսով՝ նախորդ տարվա 2.6 տոկոսի փոխարեն: Ընդ որում, ներդրումների ծավալների նման աճն ուղեկցվեց օտարերկրյա պորտֆելային ներդրումների ներհոսքի աճով[10]: 2003 թվականի առաջին կեսին ավելացավ պորտֆելային ներդրումների և օտարերկրյա վարկերի ներհոսքը, իսկ երկրորդ կիսամյակում այդ աճը դանդաղեց: Համաշխարհային բանկի փորձագետների կարծիքով՝ կապիտալ ներհոսքի աճի կրճատումը պայմանավորված էր մի կողմից՝ Կենտրոնական բանկի քաղաքականությամբ, որն ուղղված էր տոկոսադրույքների նվազմանը, որը և հանգեցրել է կարճաժամկետ կապիտալի ներհոսքի տեմպերի կրճատմանը, մյուս կողմից՝ «Յուկոսի» դատական գործով[11]: Իսկ ինչ վերաբերում է օտարերկրյա ուղղակի ներդրումներին, ապա դրանց զուտ ծավալները 2003 թվականին ևս բացասական էին (3.0 մլրդ ԱՄՆ դոլար), այսինքն՝ Ռուսաստանը դեռևս մնում է կապիտալի զուտ արտահանող:

2003թ. դրամավարկային քաղաքականության հիմնական խնդիրը գնաճի ծրագրային ցուցանիշի ապահովումն էր (մինչև 12 տոկոս), սակայն, միևնույն ժամանակ, ռուբլու իրական արժեքավորման տեմպերը զսպելու խնդիր կար: 2003թ. առաջին կեսին կապիտալ ներհոսքը մի կողմից խնդիրներ առաջացրեց ԿԲ համար՝ կապված անվանական փոխարժեքի, հետևաբար և իրական փոխարժեքի արժեքավորման և միջազգային շուկայում նավթամթերքների գների թանկացման հետ, մյուս կողմից՝ հեշտացրեց ռուբլու նկատմամբ վստահության բարձրացման և գնաճի նվազեցման խնդիրները: Այսպես՝ ԿԲ իրականացրած քաղաքականության արդյունքում տարվա առաջին կիսամյակում գնաճը նվազեց և կազմեց 7.9% (նախորդ տարվա նույն ժամանակահատվածում՝ 9%), սակայն քաղաքականություն մշակողներն այդ ժամանակահատվածում գտնում էին, որ դեռևս կային գնաճի 10-12% տարեկան ծրագրային ցուցանիշի ապահովման որոշ ռիսկեր: Փաստորեն ԿԲ-ն կանգնած էր երկընտրանքի առջև, այն է՝ արտարժութային շուկայում ինտերվենցիաների իրականացում՝ ռուբլու կտրուկ արժեքավորումից խուսափելու նպատակով կամ գնաճի ծրագրային ցուցանիշի ապահովում: Այնուամենայնիվ 2003թ. ԿԲ քաղաքականությունը բարեհաջող ընթացք ունեցավ, և գնաճի ցուցանիշը պահպանվեց ծրագրված 12 տոկոսի սահմաններում,

---

[8] Նավթի գների ուղղակի ազդեցությունը ենթադրում է նավթի արդյունահանման ճյուղի օժանդակությունը տնտեսական աճին, իսկ անուղղակի ազդեցությունը՝ նավթային եկամուտների ազդեցությունը սպառման և ներդրումների աճի վրա:

[9] Ծառայությունների գները կարող են բարձրանալ հետևյալ դեպքերում. մի կողմից, ըստ Բալասա-Սամուելսոնի էֆեկտի, արտահանելի ճյուղում արտադրողականության բարձր աճը հանգեցնում է ողջ տնտեսությունում աշխատավարձի աճի, որն էլ, իր հերթին, հանգեցնում է ծառայությունների հարաբերական գների աճի, մյուս կողմից՝ արտահանումից ստացվող աննախադեպ արտարժութային մեծ օգուտների մի մասն ուղղվում է ոչ արտահանելի ապրանքների սպառման աճին, որը նույնպես հանգեցնում է ծառայությունների հարաբերական գների աճի:

[10] Չնայած Ռուսաստանի կենտրոնական բանկը և Վիճակագրական կոմիտեն դրանց կազմի և ժամկետային կառուցվածքի վերաբերյալ ներկայացնում են տարբեր տվյալներ, այնուամենայնիվ, երկուսն էլ արձանագրում են պորտֆելային ներդրումների և օտարերկրյա վարկերի ներհոսքի աճ:

[11] «Յուկոսի» դատավարության արդյունքների անորոշությունը կապիտալի ներհոսքի դանդաղման պատճառ է դարձել:

իրական արդյունավետ փոխարժեքի արժեքավորման տեմպը կազմեց 4.1 տոկոս: Տարեկան ծրագրային ցուցանիշի ապահովմանը, ԿԲ կողմից իրականացված չեզոքացման գործառնությունների հետ մեկտեղ, նպաստեց նաև բնակչության կանխիկ դրամական միջոցների ներհոսքը բանկային համակարգ՝ նվազեցնելով փողի շրջապտույտի արագությունը: Չնայած առաջին կիսամյակում փողի առաջարկն աճեց 23.0 տոկոսով՝ զգալի գերազանցելով սպառողական գների աճը, այնուամենայնիվ փողի շրջապտույտի արագության նվազումը նպաստեց գների կայունության հաստատմանը: Այսպես՝ 2003 թվականին այն կազմեց 4.6՝ նախորդ տարվա 5.7-ի փոխարեն: Միևնույն ժամանակ, բանկային համակարգ[12] բնակչության արտարժութային խնայողությունների մուտքի պայմաններում բարձրացավ փողայնացման ցուցանիշը՝ 2002 թվականի 17.5 տոկոսից աճելով մինչև 21.7 տոկոս, ինչը ԿԲ համար նպաստավոր պայմաններ ստեղծեց դրամավարկային քաղաքականության իրականացման համար:

2003 թվականին միջազգային առևտուրը բնութագրվեց ինչպես արտահանման, այնպես էլ ներմուծման ծավալների աճով, արդյունքում առևտրային հաշվեկշռի ավելցուկը կազմեց 60.5 մլրդ ԱՄՆ դոլար[13], նախորդ տարվա 46.3 մլրդ ԱՄՆ դոլարի փոխարեն: Ընթացիկ հաշվի ավելցուկը կազմեց 35.8 մլրդ ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա 30.9 մլրդ ԱՄՆ դոլարի փոխարեն, իսկ ընթացիկ հաշիվ/ՀՆԱ ցուցանիշը՝ 8.3 տոկոս՝ նախորդ տարվա 9.0 տոկոսի փոխարեն: Արտահանման աճին բացառապես նպաստեց նավթահումքային մթերքների միջազգային գների կայուն աճը, իսկ ներմուծման աճին՝ իրական փոխարժեքի հետագա արժեքավորումը, ինչպես նաև իրական եկամուտների արագ աճը:

Պետք է նշել սակայն, որ արտարժութային միջոցների նշանակալի ներհոսքի ազդեցությունը փոխհատուցվեց դոլարի նկատմամբ եվրոյի արժեքավորմամբ, որը հակառակ դեպքում կհանգեցներ իրական փոխարժեքի արժեքավորման էլ ավելի բարձր տեմպերի[14]:

Ինչ վերաբերում է կապիտալի և ֆինանսական հաշվին, ապա Ռուսաստանը դեռևս մնում է կապիտալ արտահանող երկիր:

Վերը նշված զարգացումներով պայմանավորված՝ վճարային հաշվեկշիռն ունեցավ դրական ավելցուկ, որի արդյունքում համախառն միջազգային պահուստների նշանակալի՝ 76.9 մլրդ ԱՄՆ դոլար աճ արձանագրվեց՝ նախորդ տարվա 47.8 մլրդ ԱՄՆ դոլարի փոխարեն, և ներմուծման ծածկույթի ցուցանիշը կազմեց 7.1 ամիս՝ նախորդ տարվա 5.6 ամսվա փոխարեն:

2000 թվականից սկսած՝ պետական բյուջեն փակվում է հավելուրդով: 2003 թվականին այն կազմեց 227 մլրդ ռուբլի կամ ՀՆԱ 1.7 տոկոսը՝ նախորդ տարվա 1.3 տոկոսի փոխարեն[15] (առաջնային հավելուրդը կազմեց ՀՆԱ 3.4 տոկոսը), մինչդեռ ծրագրով նախատեսված էր 72.2 մլրդ ռուբլու հավելուրդ (ՀՆԱ 0.6 տոկոսը):

2004 թվականին նույնպես շարունակվեց Ռուսաստանի տնտեսության աշխուժացման միտումը, որի հիմնական շարժիչ ուժը, ինչպես և նախորդ տարիներին, բարենպաստ արտաքին պայմաններն էին, մասնավորապես՝ նավթի միջազգային բարձր գները, ցածր տոկոսադրույքները միջազգային ֆինանսական շուկաներում[16] և ԱՄՆ դոլարի թուլացումը: Ներքին պայմանները, որոնք արտահայտվեցին սպառողական և ներդրումային պահանջարկի աճով, նույնպես նպաստեցին տնտեսական աճին, որն առաջին կիսամյակում կազմեց 6.9 տոկոս, իսկ տարվա կտրվածքով՝ 7.1 տոկոս: Սպառողական գների աճը հունվար-հունիսին կազմեց 6.1 տոկոս՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում՝ 7.9 տոկոս: Սակայն 2004թ. երկրորդ կիսամյակից սկսած՝ արտարժութային ներհոսքը ճնշումներ գործադրեց սպառողական գների վրա, որի հետևանքով սպառողական գների միջին տարեկան աճը կազմեց 10.9 տոկոս, իսկ ժամանակահատվածի վերջի դրությամբ՝11.7 տոկոս, մինչդեռ ծրագրված էր 10 տոկոս սղաճի ցուցանիշ:

2004 թվականի առաջին հինգ ամիսներին արագացան արդյունաբերության աճի տեմպերը. աճը կազմեց 7.0 տոկոս: Երկրորդ կիսամյակում արդյունաբերության աճի ցուցանիշը գերազանցեց սպասումները, և տարվա ընթացքում աճը կազմեց 7.3՝ նախորդ տարվա 7.0 տոկոսի փոխարեն:

Հարկ է նշել, որ ներդրումների շարժիչ ուժը դեռևս մնում են էներգետիկ ապրանքների միջազգային բարձր գները, իսկ ներդրումների շուրջ 30 տոկոսն ուղղվում է նավթի և էներգետիկայի ճյուղեր:

---

[12] 1998 թվականի ճգնաժամից հետո տարեցտարի վերականգնվում է բանկային համակարգի նկատմամբ բնակչության վստահությունը:

[13] Ինչպես և նախորդ տարիներին, առևտրային հաշվեկշռի ավելցուկը պայմանավորվեց նավթահումքային մթերքների արտահանման գների աճով:

[14] Միջազգային շուկայում ԱՄՆ դոլարի արժեզրկումը նպաստեց իրականացվող դրամավարկային քաղաքականության բարեհաջող ընթացքին, քանի որ այն հանգեցրեց փոխարկելի արտարժույթի ներկրման կրճատմանը (քանի որ Ռուսաստանի արտահանման մեծ մասն արտահայտված է ԱՄՆ դոլարով) և փոխարկելի արտարժույթի արտահանման խթանմանը (քանի որ Ռուսաստանի ներմուծման մեծ մասն արտահայտված է եվրոյով), որը թուլացրեց լարվածությունը արտարժույթի շուկայում և իրատեսական դարձրեց ԿԲ նպատակների իրականացումը:

[15] Նշված ցուցանիշները տրված են Համաշխարհային բանկի կողմից:

[16] Արտաքին աշխարհից ներգրավված միջոցների տոկոսադրույքների նվազումը և ռուսական ռուբլու արժեքավորումը հանգեցնում է ներքին արժույթով գնանշված վարկային միջոցների էժանացման, ինչն էլ, իր հերթին, նպաստում է իրական հատվածում ներդրումների աճին:

Ըստ նախնական տվյալների՝ Ռուսաստանի կողմից արտահանվող հումքի բարձր գները հաշվետու տարում ապահովեցին առևտրային հաշվեկշռի աննախադեպ ավելցուկ, վերջինս կազմեց 87.2 մլրդ ԱՄՆ դոլար: Արտարժույթի նման աննախադեպ ներհոսքի արդյունքում Ռուսաստանի կենտրոնական բանկի արտարժութային պահուստներն ավելացան և կազմեցին 124.5 մլրդ ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա 76.9 մլրդ ԱՄՆ դոլարի փոխարեն:

Չնայած 2004թ. վերջին եռամսյակի ընթացքում կապիտալի խոշոր՝ 6.0 մլրդ ԱՄՆ դոլար ներհոսքին (վերջինս կապված էր «Ռոսնեֆթի» կողմից «Յուգանսկնեֆթեգազ» ընկերության գնման նպատակով ֆինանսավորման հետ), տարվա արդյունքներով կապիտալի զուտ արտահոսքը գերազանցեց 10.0 մլրդ ԱՄՆ դոլարը, որից, ըստ ԿԲ գնահատումների, 7.8 մլրդ ԱՄՆ դոլարը մասնավոր հատվածի կողմից կապիտալի զուտ արտահոսքն էր (2003թ.՝ 1.9 մլրդ ԱՄՆ դոլար): Պետք է նշել, որ բանկային համակարգում տարվա առաջին կիսամյակում կարճաժամկետ կապիտալի արտահոսք գրանցվեց, որը լավ արտացոլում է 2003թ. ընդլայնող դրամավարկային քաղաքականության ազդեցությունը: Սակայն 2004թ-ից սկսած՝ կոշտ դրամավարկային քաղաքականության արդյունքում բարձրացված տոկոսադրույքները հանգեցրին տարվա վերջում բանկային համակարգում կարճաժամկետ կապիտալի 3.0 մլրդ ԱՄՆ դոլար զուտ ներհոսքի: Ինչ վերաբերում է ոչ բանկային հատվածին, ապա այստեղ դեռևս գրանցվում է կապիտալի զուտ արտահոսք, չնայած վերջինս կրճատվել էր՝ 2004թ. կազմելով 10.8 մլրդ ԱՄՆ դոլար (2003թ.՝ 12.2 մլրդ ԱՄՆ դոլար): Օտարերկրյա ուղղակի ներդրումները, Վիճպետկոմի գնահատումներով, 2004թ. կազմեցին 9.4 մլրդ ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա 6.8 մլրդ ԱՄՆ դոլարի փոխարեն: Պետք է նշել նաև, որ չնայած ուղղակի ներդրումներին, Ռուսաստանի ձեռնարկությունների ավելացող արտաքին արժութային ներհոսքում դեռևս գերակշիռ մաս են կազմում բանկային վարկերը:

2004թ. ևս արտաքին հատվածից եկող ճնշումները, հատկապես երկրորդ կիսամյակում՝ կապված լայնածավալ արտարժութային ներհոսքի հետ, երկընտրանքի[17] առջև կանգնեցրին Ռուսաստանի կենտրոնական բանկին. այն է՝ զսպե՞լ ռուբլու անվանական փոխարժեքի արժեքավորումը ԱՄՆ դոլարի նկատմամբ, թե՝ պահել սղաճը ծրագրային մակարդակում: Հաշվի առնելով ընթացիկ հաշվի շարունակվող լայնածավալ ավելցուկը՝ Ռուսաստանի կենտրոնական բանկն ակտիվ միջամտեց արտարժութային շուկայում՝ նպատակ հետապնդելով կրճատել ռուբլու իրական արժեքավորման տեմպը: Սակայն, ի տարբերության նախորդ տարվա, չեզոքացման գործընթացները, ռուբլու արժեքավորումը զսպելու առումով, անարդյունավետ էին, քանի որ արտահանման աճող եկամուտները զուգորդվեցին միջազգային շուկաներում ԱՄՆ դոլարի թուլացման հետ, որի արդյունքում ուժեղացան ճնշումները անվանական փոխարժեքի վրա: Փոխարենը ուժեղացան ճնշումները նաև գնաճի վրա, քանի որ Ռուսաստանի կենտրոնական բանկն ի վիճակի չէր ամբողջովին հետ քաշել արտարժույթի առքի հետևանքով տնտեսությունում հայտնված ավելցուկ ռուբլին: Արդյունքում՝ Կենտրոնական բանկը չկարողացավ ապահովել ինչպես իրական փոխարժեքի արժեքավորման, այնպես էլ սղաճի ծրագրային ցուցանիշները: Գրանցվեց 11.7 տոկոս սղաճ, մինչդեռ ծրագրված էր 10.0 տոկոս: Ռուբլու իրական արժեքավորման տեմպը կազմեց 7.5 տոկոս՝ 0.5 տոկոսային կետով գերազանցելով ծրագրային ցուցանիշը, իսկ անվանական փոխարժեքի արժեքավորման տեմպը կազմեց 6.1 տոկոս:

2004թ. նավթի համաշխարհային բարձր գները հերթական անգամ բյուջեի եկամուտների՝ ծրագրային մակարդակից գերազանցման պատճառ հանդիսացան: Արդյունքում՝ բյուջեի հավելուրդը կազմեց 687.0 մլրդ ռուբլի կամ ՀՆԱ 4.2 տոկոսը (կանխիկ մեթոդով հաշվարկված), մինչդեռ ծրագրված էր բյուջեի հավելուրդի 83.0 մլրդ ռուբլի կամ ՀՆԱ 0.5 տոկոս ցուցանիշ: Չնայած բյուջեի եկամուտների բարձր աճին, կառավարության հարկաբյուջետային քաղաքականությունը ընդհանուր առմամբ իրականացվեց պահպանողական ուղղությամբ՝ թույլ չտալով ծախսերի ընդլայնում՝ եկամուտների նման բարձր աճի ժամանակաշրջանում: 2004թ. բյուջեի ծախսերը կազմեցին ՀՆԱ ընդամենը 16.1 տոկոսը:

Աղյուսակ 1

	1993	1994	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004*
					Տոկոսը ՀՆԱ-ում							
Գյուղատնտեսություն	8.2	6.5	7.2	7.3	6.5	5.7	7.7	6.7	6.9	6.0	5.5	
Արդյունաբերություն	34.4	32.8	29	29.5	28.3	29.9	30.8	31.4	28.2	27.0	27.1	
Ծառայություններ	49.1	51.2	54.9	54.5	57	56.8	55.1	54.1	56.8	59.2	59.5	
Անվանական ՀՆԱ (մլրդ ռուբլի)	171.5	610.7	1541	2146	2343	2630	4823	7306	8944	10817	13201	16779

[17] Տնտեսագիտության մեջ գոյություն ունի «եռընտրանք» հասկացություն, այն է՝ կապիտալի նվազագույն սահմանափակումների դեպքում փոխարժեքի հաստատագրված ռեժիմ որդեգրելու արդյունքում դրամավարկային քաղաքականությունը կորցնում է իր արդյունավետությունն ու անկախությունը:

ՀՆԱ իրական աճ	-8.7	-12.7	-4.1	-3.4	1.4	-5.3	6.4	10.0	5.1	4.7	7.3	7.1
Գնաճ (ժամ. միջին)	874.2	307.7	197.6	47.8	14.8	27.7	85.7	20.8	21.5	15.8	13.7	10.9
Գնաճ (ժամ. վերջ)				22.0	11.0	84.4	36.5	20.2	18.6	15.1	12.0	11.7
Պետական բյուջե												
Եկամուտ/ՀՆԱ					13.3	11.4	12.6	15.4	17.8	17.2	16.7	20.4
Ծախսեր/ՀՆԱ					20.9	17.4	16.8	14.6	15.1	15.9	15.1	16.1
Պակասուրդ/ՀՆԱ	-7.3	-10.4	-6	-8.9	-7.7	-6.0	-4.2	0.8	2.7	1.3	1.5	4.2
Փողի լայն զանգված (ժամ. վերջ) մլրդ ռուբլի	40.9	129.7	275.8	357.3	460.4	633.6	993.2	1569	2138	2860	3962	5299
Փողի զանգվածի փոփոխություն (տոկոսային)		216.5	112.6	29.6	28.8	37.6	56.7	58.0	36.3	33.8	38.5	33.7
Փողայնացում		14.0	14.2	15.7	17.4	20.8	16.8	17.5	20.7	23.1	25.8	27.6
Ընթացիկ հաշիվ (մլրդ ԱՄՆ դոլար)												
Ընդհանուր արտահանում		67.8	82.9	90.6	86.9	74.4	75.6	105.0	101.9	107.2	135.9	183.2
Ընդհանուր ներմուծում		50.5	62.6	68.1	72.0	58.0	39.5	44.9	53.8	61.0	76.1	94.8
Ընթացիկ հաշիվ		8.3	7.5	11.7	-2.6	-2.1	22.2	44.6	33.4	30.9	35.9	58.2
Ընթացիկ հաշիվ/ՀՆԱ		2.9	2.2	2.8	-0.6	-0.7	11.6	17.2	10.9	9.0	8.3	10.3
Ներմուծման ծածկույթ	1.2	1.2	2.4	2.0	2.9	2.5	2.4	4.6	5.0	5.6	7.1	11.5
Փոխարժեք (ռուբլի/դոլար)	0.99	2.19	4.56	5.12	5.78	9.71	24.62	28.13	29.17	31.35	30.69	28.81
Գործազրկություն	5.7	7.5	8.9	9.9	11.3	13.3	12.7	10.6	9	7.9	8.4	8.3

** 2004թ. ցուցանիշները վերցված են Համաշխարհային բանկի զեկույցից, ինչպես նաև Միջազգային ֆինանսական վիճակագրությունից:*

Վերջին տարիների զարգացումները ցույց են տալիս, որ Ռուսաստանի տնտեսության շարժիչ ուժը դեռևս մնում է բարձր եկամտաբերությամբ էներգետիկ ապրանքների արտահանումը: Փաստորեն միանշանակ չի կարելի պնդել, որ զարգանում են ներքին աճի նոր մեխանիզմներ: Միևնույն ժամանակ, գերակշռում է ներդրումային ռիսկը, որը կապված է կորպորատիվ կառավարման հիմնախնդիրների, դատական համակարգի, ինչպես նաև այլ չարաշահումների հետ:

Ռուսաստանի արտաքին առևտուրը

Աղյուսակ 2

մլրդ ԱՄՆ դոլար

	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004
Արտահանում	90.6	86.9	74.4	75.6	105.0	101.9	107.2	135.9	183.2
Ներմուծում	68.1	72.0	58.0	39.5	44.9	53.8	61.0	75.4	94.8
Արտաքին առևտրի շրջանառություն	158.7	158.9	132.4	115.1	149.9	155.7	168.2	211.3	278.0

1996-2004 թվականներին, բացառությամբ 1998-1999թթ., Ռուսաստանի արտաքին առևտրի ծավալներն ավելացել են: 1998-1999 թվականներին արտաքին առևտրի շրջանառության ծավալների նվազումը պայմանավորվեց 1998 թվականի ճգնաժամով: 1997 թվականին գրանցված 158.9 մլրդ ԱՄՆ դոլարի արտաքին առևտրի ծավալը ճգնաժամի հետևանքով 1999 թվականին կրճատվեց շուրջ 43.8 մլրդ ԱՄՆ դոլարով: 1999 թվականից սկսած և 2000 թվականին գրանցված 10.0 տոկոս աննախադեպ տնտեսական աճը, որին նպաստող գործոնները նկարագրված են նյութում, Ռուսաստանի տնտեսությանը ճգնաժամից հետո նոր թափ հաղորդեց, և արդեն 2000 թվականին գրեթե վերականգնվեցին մինչճգնաժամային արտաքին առևտրի ծավալները, և նախորդ տարվա նկատմամբ աճը կազմեց 30.2 տոկոս: Արդեն 2002 թվականին, 1997 թվականի համեմատ, արտաքին առևտրի ծավալներն ավելացան 9.3 մլրդ ԱՄՆ դոլարով: 2000-2004 թթ. գրանցվեց արտաքին առևտրի ծավալների 19.8 տոկոս միջին աճի տեմպ: Մասնավորապես 2003 և 2004 թթ. տնտեսության համապատասխանաբար 7.3 և 7.1 տոկոս աճը նշանակալի ազդեցություն ունեցավ արտաքին առևտրի ծավալների աճի վրա, որը կազմեց 25.6 և 31.5 տոկոս:

Արտահանում.[18] Ինչպես երևում է աղյուսակից, ճգնաժամի ազդեցությունը արտահանման ծավալների վրա նշանակալի եղավ, որի արդյունքում 1998 թվականին արտահանումը կրճատվեց շուրջ 12.5 մլրդ ԱՄՆ դոլարով և կազմեց 74.4 մլրդ ԱՄՆ դոլար: 1999 թվականից արտահանման ծավալներն արդեն ավելացան, բացառությամբ 2001 թվականի, երբ գրանցվեց արտահանման ծավալների կրճատում: Արտահանման ծավալների կրճատումը պայմանավորված էր մի կողմից՝ իրական արդյունավետ փոխարժեքի արժեքավորմամբ, մյուս կողմից՝ համաշխարհային տնտեսության աճի տեմպերի դանդաղմամբ, ինչպես նաև միջազգային շուկայում նավթի գնի 12.2 տոկոս նվազմամբ: 1999-2004 թվականներին դոլարային արտահայտությամբ արտահանման աճի միջին տեմպը կազմել է 17.4 տոկոս, ընդ որում 2003 և 2004 թվականներին աճը կազմել է համապատասխանաբար 26.8 և 34.8 տոկոս՝ 2002թ. 5.2 տոկոսի փոխարեն, ինչը պայմանավորված էր միջազգային շուկաներում էներգետիկ ապրանքների համաշխարհային գների շարունակվող աճով:

Ապրանքների արտահանման կառուցվածքում ամենամեծ տեսակարար կշիռն ունեն համապատասխանաբար նավթը և նավթահումքային մթերքները, մետաղները, գազը, մեքենաները և սարքավորումները, քիմիական արտադրության ապրանքները, փայտը և փայտյա իրերը, թանկարժեք մետաղները: Նշված ապրանքախմբերի տեսակարար կշիռները 2003 թվականի արտահանման մեջ կազմել են համապատասխանաբար 40.3 տոկոս, 15.3 տոկոս, 13.8 տոկոս, 8.6 տոկոս, 6.7 տոկոս, 4.3 տոկոս, 4.1 տոկոս:

Արտահանման աշխարհագրական կառուցվածքում որպես հիմնական խոշոր առևտրային գործընկեր երկրներ առանձնանում են Եվրոմիության երկրները, մասնավորապես՝ Գերմանիան, Նիդեռլանդները, Իտալիան, Շվեյցարիան, ԱՊՀ երկրների շարքում մեծ կշիռ են կազմում Բելառուսը, Ուկրաինան և Ղազախստանը: 2003 թվականի տվյալներով՝ Գերմանիայի տեսակարար կշիռը արտահանման կառուցվածքում կազմել է 7.8 տոկոս, Նիդեռլանդներինը՝ 6.5 տոկոս, Իտալիայինը՝ 6.4 տոկոս, Շվեյցարիայինը՝ 4.4 տոկոս: ԱՊՀ երկրների տեսակարար կշիռը կազմել է 15.3 տոկոս, իսկ ԱՄՆ-ինը՝ 3.2 տոկոս: 2003 թվականի արտահանման 20.4 տոկոսը բաժին է ընկել ասիական երկրներին, մասնավորապես՝ Չինաստանին՝ 6.2 տոկոս կշռով և Ճապոնիային՝ 1.2 տոկոս կշռով:

Հարկ է նշել, որ 2000 թվականից սկսած՝ Եվրոմիության երկրների տեսակարար կշիռը նվազել է՝ 57.9 տոկոսից 2003 թվականին հասնելով 54.3 տոկոսի: Նվազել է նաև ԱՄՆ-ի տեսակարար կշիռը՝ 2000 թվականին՝ 4.5 տոկոս, 2003 թվականին՝ 3.2 տոկոս: Փոխարենը աճ է նկատվում ԱՊՀ և ասիական երկրների ցուցանիշներում՝ 2003 թվականին ԱՊՀ երկրների տեսակարար կշիռը կազմել է 15.3 տոկոս՝ 2000 թվականի 13.4 տոկոսի փոխարեն, իսկ ասիական երկրներինը՝ 20.4 տոկոս՝ 2000 թվականի 16.4 տոկոսի փոխարեն:

Ներմուծում. 1998 թվականի ճգնաժամը բացասաբար անդրադարձավ նաև 1998-1999թթ. ներմուծման ծավալների վրա: Վերջիններիս կրճատումը պայմանավորված էր ճգնաժամի հետևանքով բնակչության իրական եկամուտների զգալի անկմամբ: Մասնավորապես՝ իրական աշխատավարձերի կրճատումը 1998-1999 թվականներին կազմեց համապատասխանաբար 10.0 և 23.2 տոկոս (1998 և 1999 թվականներին գրանցվեց 27.7 և 85.7 տոկոս տարեկան միջին գնաճ): 1999 թվականին ներմուծումը, 1997 թվականի համեմատ, նվազեց 32.5 մլրդ ԱՄՆ դոլարով և կազմեց 39.5 մլրդ ԱՄՆ դոլար: Այնուհետև, 2000 թվականից սկսած, ապրանքների ներմուծումը դրսևորեց աճի միտում, և արդեն 2003 թվականին գերազանցեց 1997 թվականի մակարդակը՝ կազմելով 75.4 մլրդ ԱՄՆ դոլար: 2000-2004թթ. ներմուծման աճի միջին տեմպը կազմեց 20.6 տոկոս, ընդ որում՝ 2004թ. աճը կազմեց 25.7 տոկոս՝ 2003թ. 23.6 տոկոսի համեմատ:

Ներմուծման մեջ մեծ տեսակարար կշիռ կազմող ապրանքային խմբերի մեջ առանձնանում է «Մեքենաներ, սարքավորումներ» ապրանքախումբը, որի տեսակարար կշիռն ընդհանուր ներմուծման մեջ, 2003 թվականի տվյալներով, ամենաբարձրն է՝ 37.4 տոկոս: Բարձր տեսակարար կշիռ ունեն նաև սնունդը, խմիչքները, ծխախոտը և գյուղատնտեսական ապրանքները, որոնք կազմում են ընդհանուր ներմուծման 21.6 տոկոսը: Հաջորդ մեծ խումբը քիմիական արտադրության ապրանքներն են և վերջիններիս տեսակարար կշիռը 2003 թվականին կազմել է 17.4 տոկոս: Իսկ մետաղական բնույթի և թղթային ապրանքները կազմել են ընդհանուր ապրանքային ներմուծման 6.9 և 4.2 տոկոսը:

Ներմուծման աշխարհագրական կառուցվածքում որպես խոշոր առևտրային գործընկեր երկրներ նույնպես առանձնանում են Եվրոմիության և ԱՊՀ երկրները, ինչպես նաև ասիական երկրներից՝ Չինաստանը և Ճապոնիան: Եվրոմիության երկրներից Գերմանիայի տեսակարար կշիռը 2003 թվականին կազմել է 14.1 տոկոս, Իտալիայինը՝ 4.2 տոկոս, Ֆրանսիայինը՝ 4.1 տոկոս: ԱՊՀ երկրների մեջ առանձնանում են Բելառուսը՝ 8.6 տոկոս, Ուկրաինան՝ 7.7 տոկոս, Ղազախստանը՝ 4.3 տոկոս կշռով: Ինչպես արտահանման, այնպես էլ ներմուծման կառուցվածքում նկատվում է ԱՄՆ տեսակարար կշռի նվազում. 2000 թվականին 8.0 տոկոս, 2003-ին՝ 5.2 տոկոս:

---

[18] 2004թ. արտահանման և ներմուծման ծավալների ցուցանիշները՝ ըստ երկրների և ապրանքախմբերի, վիճակագրության բացակայության պատճառով ներառված չեն նյութում:

Ընդհանրապես ՀՀ տնտեսության համար Ռուսաստանի դերն ու նշանակությունը բավական մեծ է ոչ միայն առևտրի, այլ նաև ֆինանսական, հատկապես՝ մասնավոր տրանսֆերտների ու օտարերկրյա ուղղակի ներդրումների տեսանկյունից:

Նախքան արտաքին առևտրի զարգացումների վերլուծությանն անցնելը, նախ խոսենք Ռուսաստանից Հայաստան դրամական փոխանցումների, ինչպես նաև ուղղակի ներդրումների մասին: Վերջիններս իրենց տեսակարար կշռով գերակշռող են ընդհանուր փոխանցումների, ինչպես նաև օտարերկրյա ուղղակի ներդրումների մեջ: Դրանց վրա էական ազդեցություն ունեն Ռուսաստանի հետ պատմականորեն ձևավորված տնտեսական հարաբերությունները:

1998-2004թթ. ընթացքում Ռուսաստանի կողմից իրական հատվածում կատարված ներդրումները կազմեցին 290.8 մլն ԱՄՆ դոլար՝ ընդհանուր օտարերկրյա ուղղակի ներդրումների մեջ 27.0 տոկոս տեսակարար կշռով[19]:

Ստորև ներկայացված են Ռուսաստանի կողմից իրականացված ներդրումների ծավալները ըստ հիմնական գործունեության տեսակների[20].

Աղյուսակ 3

մլն ԱՄՆ դոլար

	1998	1999	2000	2001	2002	2003	2004
Մետաղագործական արդյունաբերություն					2.94	0.00	0.00
Բժշկական սարքավորումների, չափիչ և օպտիկական սարքերի և ժամացույցների արտադրություն					0.00	56.29	0.00
էլեկտրաէներգիայի, գազի, տաք ջրի և գոլորշու արտադրություն և բաշխում					1.38	0.00	31.28
Հաշվողական տեխնիկայի հետ կապված գործունեություն					0.0	3.21	0.22
Մեծածախ առևտուր և առևտուր գործակալների միջոցով, բացի ավտոմեքենաների և մոտոցիկլետների առևտրից					0.15	1.77	2.00
Ֆինանսական միջնորդություն					1.00	0.00	11.91
Այլ					1.56	7.16	3.29
Ընդամենը	43.20	51.46	43.13	28.90	7.03	68.43	48.7

1999-2002թթ. Ռուսաստանի ներդրումները ՀՀ տնտեսությունում կտրուկ նվազեցին՝ 1999թ. իրականացվել էր 51.5 մլն ԱՄՆ դոլարի ներդրում, իսկ 2002թ.՝ 7.0 մլն ԱՄՆ դոլարի (Ռուսաստանի տեսակարար կշիռը 1999թ. 37.1 տոկոս էր, 2002-ին՝ 5.0 տոկոս), որից հետո վերականգնվեցին ներդրումների ծավալները, և արդեն 2003թ. սկսած՝ գերազանցեցին 1998թ. մակարդակը: Ներդրումների կտրուկ նվազումը մասնակիորեն պայմանավորված էր պետական ձեռնարկությունների մեծ մասի սեփականաշնորհմամբ, ինչն արտահայտվեց նաև 1999-2001թթ. ընդհանուր օտարերկրյա ուղղակի ներդրումների կրճատմամբ:

Նշենք, որ 2003-2004թթ. ներդրումների մեծ ծավալները պայմանավորված էին Ռուսաստանի պարտքի դիմաց որոշ ձեռնարկությունների տրամադրմամբ: Նշված տարիներին Ռուսաստանի կողմից ուղղակի ներդրումները պարբերական բնույթ չեն ունեցել, բացի մեծածախ առևտրի ոլորտում իրականացված ներդրումներից, որտեղ, ըստ էության, ներդրումների հետգնման ժամկետը համեմատաբար կարճ է:

Ռուսաստանը Հայաստանի համար ոչ միայն ուղղակի ներդրումների, այլ նաև մասնավոր տրանսֆերտների և գործոնային եկամուտների պոտենցիալ աղբյուր է: Մասնավոր տրանսֆերտների և գործոնային եկամուտների գերակշիռ մասը ստացվում է Ռուսաստանից (2004թ. ընդհանուր մասնավոր տրանսֆերտների և գործոնային եկամուտների մոտ 74 տոկոսը ստացվել է Ռուսաստանից): Հաշվի առնելով նման բաշխվածությունը և այն, որ վերջիններս համարվում են ընթացիկ հաշվի ֆինանսավորման և ներքին պահանջարկի խթանման էական գործոն, կարելի է ասել, որ ՀՀ տնտեսության զարգացումներն այս առումով զգալի կախված են Ռուսաստանի տնտեսական զարգացումներից:

Ռուսաստանից ֆիզիկական անձանց կողմից ոչ առևտրային նպատակով փոխանցումների[21] զուտ ներհոսքը 2004թ. կազմել է 350.7 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատությամբ ավելացել է 42.7%-

[19] *Հունաստանի տեսակարար կշիռը՝ 19.0 տոկոս, Կանադայինը՝ 11.0 տոկոս, ԱՄՆ-ինը՝ 9.1 տոկոս, Ֆրանսիայինը՝ 8.6 տոկոս:*
[20] *2002 թվականին նախորդող տարիների վիճակագրությունն ըստ գործունեության տեսակների բացակայում է:*
[21] *Ներառում է մասնավոր տրանսֆերտները և գործոնային եկամուտները:*

ով: Փոխանցումների ավելացմանը մի կողմից նպաստել է Ռուսաստանի բարձր տնտեսական աճը, մյուս կողմից՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ ռուսական ռուբլու արժեքավորումը, որոնք էլ հանգեցրել են Ռուսաստա նում դոլարային եկամուտների 34.7%-ով աճի:

Հայաստանի համար Ռուսաստանը համարվում է տրանսֆերտների և գործոնային եկամուտների աղբյուր, քանի որ Ռուսաստանի հետ Հայաստանը պատմականորեն ունեցել է և այժմ էլ ունի քաղաքական լավ հարաբերություններ, ինչը ի տարբերություն այլ երկրների (օրինակ՝ ԱՄՆ-ի կամ եվրոպական երկրների), մեր հայրենակիցներին ձերբազատում է երկիր մուտք գործելու, բնակություն հաստատելու, աշխատանք գտնելու և այլ դժվարություններից: Մյուս կողմից՝ խորհրդային ժամանակներից երկու ազգերի սովորույթների տարբերությունները և լեզվական դժվարությունները նվազագույնի են հասցված: Այս գործոններն էլ, համակցվելով այն հանգամանքի հետ, որ Ռուսաստանի տնտեսությունն ավելի արտադրողական է և աշխատավարձն էլ՝ բարձր, մեր երկրից Ռուսաստան աշխատուժի հոսունության խթան են հանդիսացել: Ուստի Ռուսաստանի տնտեսությունը կարևորվում է ՀՀ համար նաև աշխատուժի շուկայի տեսանկյունից, և քանի որ աշխատուժի հոսունությունը Ռուսաստան բավականին մեծ է, ցանկացած անբարենպաստ փոփոխություն արտահայտվում է մեր աշխատուժի շուկայում կառուցվածքային փոփոխություններով: Նշենք մի կարևոր հանգամանք ևս, որ Ռուսաստան աշխատուժի շարժի արդյունքում տեղի է ունենում աշխատավարձերի զուգամիտում:

Ռուսաստանից ՀՀ ֆիզիկական անձանց ոչ առևտրային նպատակով փոխանցումների կառուցվածքը [1]

Ռուսաստանից ստացված դրամական միջոցների կառուցվածքի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ դրամական փոխանցումներ են ստացվում Ռուսաստանի 81 մարզերից ու ինքնավար շրջաններից[1]: Ընդ որում, նշված դրամական փոխանցումների միայն 45%-ը ստացվում է Մոսկվայից: Դրամական միջոցներ փոխանցողները Մոսկվայում հիմնականում զբաղված են առևտրի (փոխանցողների 32.5%-ը) և շինարարության (փոխանցողների 32.0%-ը) ոլորտներում: Ըստ Ռուսաստանի սոցիալ-տնտեսական հիմնական ցուցանիշների դինամիկան նկարագրող աղյուսակների՝ Մոսկվայում 2004 թվականին մանրածախ առևտրաշրջանառությունն ավելացել է 8.3%-ով, բնակարանային շինարարությունը՝ 3.0%-ով: Մոսկվա քաղաքի մնացած ոլորտներում զբաղվածների ցրվածությունը բավականին մեծ է:


Ռուսաստանից ստացվող միջոցների ծավալով 2-5-րդ տեղերում են Կրասնոդարի երկրամասը, Չիտայի շրջանը, Սախայի հանրապետությունը և Սանկտ Պետերբուրգ քաղաքը: Նշված 4 տարածաշրջաններից փոխանցում կատարողները հիմնականում զբաղված են շինարարության ոլորտում, ինչի տեսակարար կշիռը նրանց փոխանցումների ծավալում համապատասխանաբար կազմում է՝ 77.2%, 88.2%, 71.8% և 35.5%-ը: Կրասնոդարի երկրամասում բնակարանային շինարարության աճը 2004 թվականին 8.8% էր, Չիտայի շրջանում՝ 11.8.5%, Սախայի հանրապետությունում շինարարության ծավալները նվազել են 9.8%-ով, իսկ Սանկտ Պետերբուրգում՝ ավելացել 15.6% -ով: Ընդ որում, Ռուսաստանի որոշ մարզերում (Կրասնոդարի երկրամաս) գործում են շինարարական կազմակերպություններ, որտեղ աշխատում են մեր հայրենակիցները, և նրանց աշխատավարձի որոշակի հաստատագրված մասը նշված կազմակերպությունները պարբերաբար փոխանցում են Հայաստան՝ շինարարների ընտանիքներին: Հարկ է նշել, որ Ռուսաստանից դրամական փոխանցումներ իրականացնողների հիմնական մասը զբաղված է շինարարության և առևտրի ոլորտներում, ընդ որում՝ շինարարությունը գերակշռում է առևտրին՝ բացառությամբ մի քանի մարզերի:

Ըստ Հայաստանի շրջանային կառուցվածքի՝ երևանաբնակները ստանում են Ռուսաստանից ուղարկվող փոխանցումների 48.8%-ը, մնացած՝ 51.2%-ը բաժին է ընկնում մարզերին: Հարկ է նշել նաև, որ մարզերից դրամական միջոցներ ստացողների մոտ 81.6%-ը այդ միջոցները ստացել է Ռուսաստանում շինարարության ոլորտում զբաղվածներից, ինչը վկայում է, որ ավելի մեծ թիվ են կազմում մարզերից Ռուսաստան մեկնած և այնտեղ շինարարությամբ զբաղվող մեր հայրենակիցները: ՀՀ մարզեր Ռուսաստանից փոխանցումների ծավալում ամենամեծ տեսակարար կշիռը Շիրակի մարզինն է՝ 19.2%:

1. Աղբյուրը՝ - Արտերկրից ՀՀ ֆիզիկական անձանց անունով ստացվող ոչ առևտրային նպատակով փոխանցումների կառուցվածքի բացահայտման նպատակով իրականացված ՀՀ ԿԲ հարցման ամփոփումները:

Նշենք, որ, համաշխարհային շուկայում վերջին տարիներին նավթի գների աննախադեպ աճի հետ կապված՝ Ռուսաստանի տնտեսությունում կան «հոլանդական հիվանդության» նախանշաններ: Այսինքն՝ նավթի եկամուտների հաշվին անընդհատ աճող պահանջարկը ոչ արտահանելի հատվածում հանգեցրել է գների, հետևաբար և այս հատվածում զբաղվածների եկամուտների աճի, ինչպես նաև իրական փոխարժեքի արժեքավորման: Այն փաստը, որ մեր հայրենակիցները Ռուսաստանում հիմնականում զբաղված են ոչ արտահանելի ճյուղում, թույլ է տալիս ենթադրել, որ ՀՀ տնտեսությունը անուղղակի կրում է «հոլանդական հիվանդության» ազդեցությունը:

Գրաֆիկ 8



Ներկայացված գրաֆիկը որոշակիորեն ցույց է տալիս, որ նավթի գներն անուղղակի ազդում են մեր երկիր հոսող տրանսֆերտների վրա[22]: Այսինքն՝ գալիս ենք այն եզրահանգման, որ ոչ միայն Ռուսաստանի ներքին տնտեսական իրադարձությունները, այլ նաև նավթի միջազգային գների տատանումները կարող են անուղղակի ազդել Ռուսաստանից ստացվող տրանսֆերտների, հետևաբար և՝ ՀՀ տնտեսության վրա:

Հայաստանի արտաքին առևտուրը Ռուսաստանի հետ

Աղյուսակ 4

մլն ԱՄՆ դոլար

	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004*
Արտահանում	62.9	40.0	33.9	44.6	60.5	64.7	94.4	75.3
Ներմուծում	215.9	191.4	149.9	137.2	173.7	192.9	203.4	153.1
Առևտրային հաշվեկշիռ	-152.9	-151.4	-116.0	-92.6	-113.2	-128.2	-109.0	-77.8
Արտաքին առևտրի շրջանառություն	278.75	231.38	183.72	181.8	234.2	257.6	297.8	228.4

** 2004թ. արտահանման և ներմուծման վիճակագրությունը ներկայումս իրականացվում է «ըստ ծագման վայրի» սկզբունքի, նախկինի՝ «ըստ ներկրման երկրի» սկզբունքի փոխարեն: Դա է պատճառը, որ ներմուծման մասով գրանցվել է էական շեղում, ինչը հիմնականում պայմանավորված է «Դանքահումքային մթերքներ» ապրանքախմբով, որի մեջ մեծ տեսակարար կշիռ կազմող գազը այժմ գրանցվում է որպես ներմուծում Թուրքմենստանից, և եթե ներմուծումից բացառենք «Դանքահումքային մթերքներ» ապրանքախմբի ծավալները, կունենանք դոլարային ներմուծման աճ: Իսկ արտահանման մասով շեղումները գրեթե բացակայում են, և 2004թ. արտահանման նվազման պատճառները կքննարկվեն հետագա շարադրանքում:*

Արտաքին առևտրաշրջանառություն - Ռուսաստանի հետ Հայաստանի արտաքին առևտրի հաշվեկշիռը մշտապես եղել է պակասուրդային, որը պայմանավորված է արտահանման նկատմամբ ներմուծման ծավալների գերազանցմամբ: Ինչպես երևում է վերը նշված աղյուսակից, արտաքին առևտուրը նշված տարիներին բավականին տատանողական վարքագիծ է ցուցաբերել: Արտաքին առևտրի շրջանառության նման դրսևորումների վրա իր ազդեցությունն է ունեցել 1998 թվականի ռուսաստանյան ճգնաժամը:

Թեև Ռուսաստանի խոշոր ճգնաժամը բացասաբար անդրադարձավ Հայաստանի տնտեսության վրա, սակայն, ի տարբերություն ԱՊՀ մյուս երկրների, մասնավորապես՝ Կենտրոնական Ասիայի երկրների, Ռուսաստանի ճգնաժամը Հայաստանի տնտեսության վրա ունեցավ նվազագույն ազդեցություն: Ընդ որում, այդ ազդեցությունը հիմնականում արտահայտվեց մասնավոր հատվածում: Ռուսաստանի ճգնաժամը Հայաստանի տնտեսության վրա ազդեցություն ունեցավ հիմնականում երկու ուղղությամբ. ռուսական ռուբլու նկատմամբ դրամի իրական փոխարժեքը կտրուկ արժեքավորվեց (1998-1999 թվական-


[22] Գրաֆիկում ներկայացված են ընդհանուր մասնավոր տրանսֆերտները, քանի որ ըստ երկրների տրանսֆերտների ցուցանիշների շարքերը ընդամենը մի քանի տարվա համար են: Սակայն եթե հաշվի առնենք, որ դրամական փոխանցումներում Ռուսաստանի տեսակարար կշիռը բավականին մեծ է, ապա կարելի է որպես մոտարկում կիրառել ընդհանուր տրանսֆերտների թիվը:

ներին դրամ/ռուբլի իրական փոխարժեքն արժեքավորվեց համապատասխանաբար 28 և 40 տոկոսով), և Ռուսաստանում իրական եկամուտների կտրուկ նվազմամբ պայմանավորված՝ 1998-1999 թթ. գրանցվեց և՛ դոլարային, և՛ իրական արտահանման ծավալների կրճատում: Ռուսաստանից ներմուծման ծավալները թեև դոլարային արտահայտությամբ նվազեցին 1998-1999 թվականներին, սակայն աճ նկատվեց դրանց ֆիզիկական ծավալներում՝ պայմանավորված ռուսական ռուբլու կտրուկ արժեզրկմամբ և ռուսական ապրանքների էժանացմամբ: Ճգնաժամի ազդեցության երկրորդ ուղղությունը կապված էր Ռուսաստանից ստացվող մասնավոր տրանսֆերտների և գործոնային եկամուտների հետ, որոնք մինչև 2000 թվականը նվազեցին և որպես պահանջարկի տարր՝ բացասական ազդեցություն ունեցան Հայաստանի ներքին պահանջարկի վրա: Հարկ է նշել, որ 2000 թվականի ընթացքում Ռուսաստանից ներմուծման թե՛ իրական, թե՛ դոլարային ծավալների նվազում արձանագրվեց, որի վրա իր ազդեցությունն ունեցավ ներքին պահանջարկի աճի տեմպերի դանդաղումը, ինչպես նաև նշված տարիներին ՀՀ տնտեսությունում ներմուծման փոխարինիչների արտադրության աճող ծավալները: Վերը նշված զարգացումների արդյունքում Ռուսաստանի հետ Հայաստանի արտաքին առևտրի բացասական մնացորդը 1998-2000 թթ. կրճատվեց. 1998 թվականին 151.4 մլն ԱՄՆ դոլար էր, իսկ 2000 թվականին՝ 91.6 մլն ԱՄՆ դոլար:

2000 թվականից Ռուսաստան արտահանվող ապրանքների ծավալներն ավելացան, իսկ ներմուծման աճ գրանցվեց 2001 թվականից: Արտահանման աճին նպաստեց Ռուսաստանի տնտեսության արագ վերելքը, որը վերականգնեց ճգնաժամի հետևանքով Ռուսաստանում կտրուկ նվազած իրական եկամուտները: Արդյունքում՝ Ռուսաստանում ավելացավ պահանջարկը: Հայաստանի արտահանման աճի վրա իր ազդեցությունն ունեցավ նաև դրամ/ռուբլի իրական փոխարժեքի արժեզրկումը (2000 թվականից սկսած): Ստորև ներկայացված է դրամ/ռուբլի իրական փոխարժեքի դինամիկան 1995-2004թթ.:

Իրական փոխարժեք

Գրաֆիկ 9. Դրամ/ռուբլի իրական փոխարժեքի դինամիկան 1995-2004թթ.



Աղյուսակ 5

	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004
Դրամ/ռուբլի իրական փոխարժեքի փոփոխություն, (-)՝ նշանակում է դրամի արժեզրկում	-16.8	-5.4	27.9	39.9	-6.5	-14.7	-9.2	-10.7	-1.7
Հայաստանի գնաճ	18.7	13.9	8.7	0.6	-0.8	3.1	1.1	4.7	6.9
Դրամ/ԱՄՆ դոլար անվանական փոխարժեքի փոփոխություն, %	1.9	18.7	2.8	6.0	0.9	2.9	3.3	0.9	-7.8
Ռուսաստանի գնաճ	47.8	14.8	27.7	85.7	20.8	21.5	15.8	13.7	10.9
Ռուբլի/ԱՄՆ դոլար անվանական փոխարժեքի փոփոխություն, %, (-)՝ նշանակում է ռուբլու արժեքավորում	12.3	12.9	68.0	153.6	14.3	3.7	7.5	-2.1	-6.1

Պետք է նշել, որ դրամ/ռուբլի երկկողմանի իրական փոխարժեքի շարժը հիմնականում պայմանավորվել է Ռուսաստանի գնաճով և փոխարժեքով, քանի որ Հայաստանում գնաճի և փոխարժեքի արժեզրկման տեմպերի տարբերությունը տարիների ընթացքում փոքր է եղել, քան նույն ցուցանիշների տարբե-

րությունը Ռուսաստանում: 1998 թվականի ռուսաստանյան ճգնաժամի հետևանքով դրամ/ռուբլի իրական փոխարժեքը կտրուկ արժեքավորվեց, որը պահպանվեց մինչև 1999 թվականը: Նշված տարիներին Ռուսաստանում փոխարժեքի արժեզրկման տեմպերը նշանակալի չափով գերազանցեցին գնաճը, որն էլ դրսևորվեց դրամի իրական արժեքավորմամբ: 2000 թվականից սկսած՝ իրական փոխարժեքը սկսեց արժեզրկվել, և մինչև 2004 թվականը արժեզրկման միջին տեմպը կազմեց 8.6 տոկոս: Իրական փոխարժեքի արժեզրկումն արդեն վկայում է Ռուսաստանի շուկաներում հայրենական ապրանքների մրցունակության բարձրացման մասին, որը, 2000 թվականից սկսած, արտահայտվեց արտահանման ծավալների աճով:

Արտահանում. Ընդհանուր առմամբ Հայաստանից Ռուսաստան արտահանումը (դոլարային արտահայտությամբ) 1997-1999 թվականներին նվազման միտում է ունեցել, այնուհետև, 2000 թվականից սկսած, արտահանման ծավալները սկսեցին ավելանալ, որը բացատրվում է մի կողմից Ռուսաստանի իրական եկամուտների, հետևաբար և պահանջարկի շարժով, մյուս կողմից՝ իրական փոխարժեքի վարքագծով: Բացառություն էր 2004թ., երբ գրանցվեց արտահանման կրճատում: Վերջինիս բացատրությունը կտրվի ստորև:

Թիվ 6 աղյուսակում ներկայացված են Ռուսաստան արտահանվող այն հիմնական ապրանքախմբերը, որոնք համեմատաբար մեծ տեսակարար կշիռ ունեն

Աղյուսակ 6

մլն ԱՄՆ դոլար

	Ապրանքների արտահանում	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004
1	Պատրաստի սննդի արտադրանք	20.2	14.5	11.75	19.8	33.7	42.7	57.56	51.9
2	Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր	1.9	1.04	1.11	0.7	0.55	0.15	13.46	0.55
3	Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ	14.3	10.83	6.1	7.97	7.89	6.05	7.7	8.1
4	Հանքահումքային մթերքներ	0.2	0.13	0.13	0.4	0.77	2.06	2.48	0.11
5	Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ	1.6	1.3	0.7	0.9	0.64	1.78	2.15	0.63
6	Բուսական ծագման արտադրանք	1.9	0.9	1.05	0.4	0.9	1.3	1.75	1.38
7	Պլաստմասսա և դրանցից իրեր	6.6	5.4	7	7.5	9.07	4.4	1.68	2.77
8	Սարքեր և ապարատներ	2.05	0.9	0.5	1	2.73	1.33	1.59	2.1
9	Մանածագործական իրեր	4.44	1.4	0.84	1.3	1.14	1.2	1.51	1.3
10	Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ և դրանցից իրեր	3.01	0.6	0.5	0.6	1.1	1.42	1.03	2.43
	Այլ	6.7	3.0	4.2	4.0	2.0	2.3	3.5	4.03
	Ընդամենը	62.89	39.98	33.85	44.6	60.5	64.7	94.4	75.3

Ինչպես երևում է աղյուսակից, Ռուսաստան արտահանվող ապրանքների կառուցվածքում բազմազանեցումը (դիվերսիֆիկացիան) բավականին թույլ է, և արտահանումը հիմնականում պայմանավորված է «Պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբով, որը, 2003 թվականի տվյալներով, կազմել է Հայաստանից Ռուսաստան ընդհանուր արտահանման 61 տոկոսը, իսկ 2004թ՝ 68.9 տոկոսը: Նշված ապրանքախմբում գերակշռող մասը՝ մոտ 90 տոկոսը, կազմում է «Ոգելից և ոչ ոգելից խմիչքներ» ենթաապրանքախումբը: Դրա հետ մեկտեղ, «Պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբի ընդհանուր արտահանման դիվերսիֆիկացիան ըստ երկրների նույնպես ցածր է, և որպես հիմնական գործընկեր երկիր Հայաստանի համար թերևս մնում է միայն Ռուսաստանը (Ռուսաստանի տեսակարար կշիռը այս ապրանքախմբի արտահանման մեջ 1997-2004 թթ. տատանվել է 70.2-86.4 տոկոսի սահմաններում): Վերջինս փաստում է այն մասին, որ Ռուսաստանում տեղի ունեցող տնտեսական երևույթներն էական են այս ապրանքախմբի արտահանման ծավալների համար: Հետևաբար, կարելի է ասել, որ Ռուսաստանում եկամուտների հետագա աճը կնպաստի այս ապրանքախմբի, հետևաբար նաև ընդհանուր արտահանման աճին:

Այնուամենայնիվ, 2004 թվականին գրանցվեց դոլարային, ինչպես նաև իրական արտահայտությամբ արտահանման կրճատում դեպի Ռուսաստան, այն դեպքում, երբ ՀՀ դրամ/ռուբլի երկկողմանի իրական փոխարժեքն արժեզրկվեց 1.7 տոկոսով, ավելին, 2004թ. ևս գրանցվեց Ռուսաստանում իրական եկամուտների աճ:


Ռուսաստան արտահանվող արրանքների ծավալների կրճատումը նշված ժամանակահատվածում հիմնականում պայմանավորվեց երկու ապրանքախմբերի՝ «Պատրաստի սննդի արտադրանք» և «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» վարքագծով: «Պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբի արտահանման նվազումը՝ հակառակ հարաբերական գների, ինչպես նաև Ռուսաստա-

նում եկամուտների բարենպաստ շարժերի, մասնակիորեն պայմանավորվեց ՀՀ ներքին տնտեսությունում կոնյակի, հանքային ջրերի արտադրության իրական ծավալների՝ համապատասխանաբար 1.75 տոկոս, 0.9 տոկոս նվազմամբ[23]:


Նշված ապրանքախմբում ներառված ապրանքների արտադրության իրական ծավալների կրճատումը բնականաբար անդրադարձավ նաև ապրանքախմբի ընդհանուր արտահանման կրճատման վրա: Եվ այն փաստը, որ առաջին ապրանքախմբի արտահանումը Ռուսաստան նվազել է 5.7 մլն ԱՄՆ դոլարով, իսկ ընդհանուր արտահանումը նվազել է 2.8 մլն ԱՄՆ դոլարով, թույլ է տալիս պնդել նաև, որ տեղի է ունեցել արտահանման կառուցվածքային տեղաշարժ՝ ի օգուտ այլ երկրների: Վերջինս էլ արտահայտվեց այլ երկրների տեսակարար կշռի նշանակալի աճով՝ 25.3 տոկոս՝ նախորդ տարվա 20.3 տոկոսի փոխարեն: «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի արտահանումը Ռուսաստան կրճատվեց 12.9 մլն ԱՄՆ դոլարով: Նման աննախադեպ կրճատումը բացատրվում է 2003թ. տեղի ունեցած արտահանման ծավալների միանգամյա անբացատրելի թռիչքով (տե՛ս աղյուսակ 6), ինչը հնարավոր է մեկ կամ մի քանի գործարքների արդյունք լինի: Հետևաբար այս ապրանքախմբի արտահանման կրճատումը պայմանավորված չէ իրական ազդեցության գործոններով:

Ստորև ներկայացված է ՀՀ դրամ/ ՌԴ ռուբլի իրական փոխարժեքի և Ռուսաստան արտահանման վարքագիծը 1997-2004 թվականներին:

Գրաֆիկ 10. Դրամ/ռուբլի իրական փոխարժեքի և արտահանման (մլն ԱՄՆ դոլար) վարքագիծը 1997-2004թթ.



Գրաֆիկ 11. Դրամ/ռուբլի իրական փոխարժեքի և իրական արտահանման վարքագիծը 1997-2004թթ.



[23] *Տե՛ս «Հայաստանի սոցիալ-տնտեսական իրավիճակը 2004թ. հունվար-դեկտեմբերին» տեղեկատվական զեկույցը:*

Ինչպես տեսնում ենք գրաֆիկ 11-ից, որոշակի կապ գոյություն ունի իրական փոխարժեքի և իրական արտահանման ծավալների միջև (բացի 2004թ-ից, որի հնարավոր պատճառները վերը շարադրվել են), այն է՝ դրամ/ռուբլի իրական փոխարժեքի արժեքավորումը 1997-1999 թթ. հանգեցրել է արտահանման ծավալների կրճատման, որից հետո պատկերը փոխվել է, և իրական փոխարժեքի արժեզրկման հետ մեկտեղ աճ է նկատվել արտահանման իրական ծավալներում: Սակայն հաշվարկները ցույց են տալիս, որ 1998-2003 թվականներին դրամ/ռուբլի իրական փոխարժեքից արտահանման միջին առածգականությունը մեծ է եղել մեկից՝ 2.4, ինչից կարելի է ենթադրել, որ արտահանման ծավալների փոփոխությունների վրա, բացի գնային գործոններից, ազդել են նաև այլ գործոններ, ինչպիսիք են օրինակ՝ Ռուսաստանի իրական եկամուտների փոփոխությունը կամ մուտքը Ռուսաստանի իրացման նոր շուկաներ:

Ներմուծում - Ռուսաստանից ներմուծման դինամիկ փոփոխությունները, ինչպես նաև հետագա զարգացումները ճիշտ հասկանալու համար ներմուծումից բացառվել են «Հանքահումքային մթերքներ» և «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբերը[24]: Հետագա վերլուծությունները կատարվել են առանց նշված ապրանքախմբերի:

Աղյուսակ 7

մլն ԱՄՆ դոլար

	Ապրանքների ներմուծում	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004*
1	Հանքահումքային մթերքներ	132.3	110.7	78.58	85.35	81.8	63.07	68.5	2.6
2	Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ	8.7	23.9	20.5	12.6	12.4	19	37.9	33.1
3	Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր	4.01	3.94	4.1	6.5	14.6	23.6	32.8	3.9
4	Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ	29.6	22.3	10.4	7.75	8.7	8.83	13.7	15.1
5	Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկ. մետաղներ և դրանցից իրեր	0.5	0.2	0.09	0	12.93	15.4	12.6	7.7
6	Պատրաստի սննդի արտադրանք	4.9	1.5	2.1	2.2	3.21	9.7	10.4	22.3
7	Բուսական ծագման արտադրանք	3.7	6.5	2.68	3.9	6.84	34.05	8.1	42.5
8	Քիմիա և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք	5.6	4.5	6.8	5.5	4.9	6.32	6.98	6.8
9	Պլաստմասսա և դրանցից իրեր	7.3	5.8	9	3.7	3.98	3.8	4.2	8.1
10	Թուղթ և թղթից իրեր	4.92	3.5	3.2	3.2	7.7	3.2	2.5	3.7
	Այլ	14.3	8.6	12.4	6.5	16.6	5.9	5.7	7.3
	Ընդամենը	215.86	191.4	149.87	137.2	173.7	192.9	203.4	153.1

** ԱՎԾ արտաքին հատվածի վիճակագրությունը ներկայումս ամբողջությամբ իրականացվում է «ըստ ծագման վայրի» սկզբունքի՝ նախկին «ըստ ներկրման երկրի» սկզբունքի փոխարեն: Այդ իսկ պատճառով 2004թ. ըստ երկրների և ըստ ապրանքախմբերի ներմուծման տվյալների անհամադրելիության պատճառով վերջիններս ներառված չեն հետագա վերլուծության մեջ:*


1998-2000թթ. Ռուսաստանից ներմուծումը դոլարային արտահայտությամբ ունեցել է նվազման միտում, որից հետո, մինչ 2004թ., կայուն աճի միտում (տե՛ս գրաֆիկ 12): Թեև նշված ժամանակահատվածում աճի միտում է ունեցել նաև դոլարային արտահայտությամբ Հայաստանի ընդհանուր ներմուծումը՝ պայմանավորված Հայաստանում բնակչության եկամուտների աճով, սակայն Ռուսաստանից ներմուծվող ապրանքների աճի առաջանցիկ տեմպերը հանգեցրել են ընդհանուր ներմուծման մեջ Ռուսաստանի տեսակարար կշռի ավելացման՝ 2000 թ. 10.2 տոկոս էր, իսկ 2004 թ.՝ 19.7 տոկոս: Ընդ որում, 2003 թվականին, 2002 թվականի համեմատությամբ, արձանագրվել է Ռուսաստանի տեսակարար կշռի նվազում[25]:

---

[24] «Հանքահումքային մթերքներ» ապրանքախմբի բացառումը կապված է այն բանի հետ, որ այս ապրանքախմբում հիմնական մասը կազմում է գազը, որի ներմուծման միակ աղբյուրը Ռուսաստանն է, և այս ապրանքի ներմուծումը ըստ երկրների բազմազանեցված չէ (Հայաստան ներմուծվող գազը փաստացի ներմուծվում է Թուրքմենստանից, բայց քանի որ գազ արտահանող կազմակերպությունը ռուսական ձեռնարկություն է, այն մինչև 2003թ. մեզ համար գրանցվել է ներմուծում Ռուսաստանից): Մյուս կողմից, նշված ապրանքախմբի ներմուծումն ունի պայմանագրային բնույթ, այդ իսկ պատճառով այս ապրանքախումբը կարելի է դիտարկել որպես ավտոնոմ ներմուծում: Համաձայն կարգով, «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի հիմնական մասը կազմում է ադամանդը, և պայմանագրային հիմունքներով կատարվում են ադամանդի հումքի ներմուծում և պատրաստի արտադրանքի արտահանում:


[25] 2003թ-ին Հայաստանի իրական արդյունավետ փոխարժեքի (առանց Ռուսաստանի) արժեզրկումը կազմել է 9.7%, իսկ Հայաստանի և Ռուսաստանի երկկողմ իրական փոխարժեքը արժեզրկվել է 10.7%-ով: Փաստորեն, ցուցանիշների միջև տարբերությունն այդքան էլ մեծ չէ, ինչը հնարավորություն է տալիս ենթադրելու, որ գնային գործոնի ազդեցությունը 2003թ. ներմուծման կառուցվածքի փոփոխության վրա այդքան էլ մեծ չէ:

Գրաֆիկ 12. Հայաստանի ընդհանուր ներմուծման և Ռուսաստանից ներմուծման դինամիկան 1997-2004թթ. [26]




Ներմուծման իրական ծավալները դրսևորել են բավական տատանողական վարքագիծ: Ինչպես երևում է իրական ներմուծման և իրական փոխարժեքի վարքագծից (գրաֆիկ 13), 1998-1999 թթ. զգալի ավելացել են ներմուծման իրական ծավալները, ինչը, կարելի է ասել, դրամ/ռուբլի երկկողմանի իրական փոխարժեքի կտրուկ արժեքավորման և ռուսական ապրանքների էժանացման արդյունք էր: Սկսած 2000 թվականից, ինչպես արդեն նշել ենք, դրամ/ՌՌ երկկողմանի իրական փոխարժեքը դրսևորել է արժեզրկման միտումներ, ինչը այլ հավասար պայմաններում պետք է հանգեցներ Ռուսաստանից իրական արտահայտությամբ ներմուծման կրճատման:

Գրաֆիկ 13. ՀՀ դրամ/ռուբլի իրական փոխարժեքի և իրական ներմուծման դինամիկան 1997-2004թթ.




Գրաֆիկ 14. ՀՀ դրամ/ռուբլի իրական փոխարժեքի և դոլարային ներմուծման դինամիկան 1997-2004թթ.



[26] *Գրաֆիկ 12-ում բերված ընդհանուր ներմուծման ցուցանիշից բացառվել են «Հանքահումքային մթերքներ», «Թանկարժեք, կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբերը, ինչպես նաև այն ապրանքախմբերը, որոնք փոքր տեսակարար կշիռ ունեն Ռուսաստանից ներմուծման մեջ:*

Սակայն գրաֆիկ 13-ից երևում է, որ ներմուծման իրական ծավալները կրճատվել են միայն 2000, 2003 և 2004 թվականներին: Ընդ որում, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ ՀՀ դրամ/ռուսական ռուբլի երկկողմ իրական փոխարժեքի արժեզրկման միտումն ավելի մեծ է եղել, քան ՀՀ դրամի իրական արդյունավետ փոխարժեքի՝ առանց Ռուսաստանի, արժեզրկման միտումը, վերջինս պետք է արտահայտվեր ներմուծման կառուցվածքային տեղաշարժով դեպի այլ երկրներ:


Գրաֆիկ 15. Դրամի իրական արդյունավետ (առանց Ռուսաստանի) և ՀՀ դրամ/ռուբլի իրական փոխարժեքների դինամիկան 1997-2004թթ (1995=100)



Հետևաբար կարելի է փաստել, որ 1998-2004 թթ. ժամանակահատվածում ներմուծման վարքագծում, բացի իրական փոխարժեքով պայմանավորված գնային գործոններից, զգալի դեր են ունեցել ոչ գնային գործոնները, մասնավորապես՝ իրական եկամուտների փոփոխությունները, հարաբերական տրանսպորտային ծախսերը երկրների միջև, պատմականորեն ձևավորված կապերը և այլն: Այդ իսկ պատճառով ներմուծման վարքագիծն ավելի պարզորոշ դարձնելու համար հարկ է դիտարկել Ռուսաստանից ներմուծումն ըստ ապրանքախմբերի և այդ ապրանքախմբերի ընդհանուր ներմուծման կառուցվածքը ըստ երկրների: Պետք է նշել նաև, որ 2004թ. արտաքին հատվածի վիճակագրության գրանցման սկզբունքի փոփոխությունը էական շեղումներ է առաջացնում ըստ երկրների և ըստ ապրանքախմբերի ներմուծման՝ նախորդ տարվա ցուցանիշներից, ուստի 2004թ. այդ տվյալները ներառված չեն վերլուծության մեջ:

Ռուսաստանից ներմուծման (առանց «Հանքահումքային մթերքներ» և «Թանկարժեք, կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբերի) մեջ զգալի՝ 2003 թվականի տվյալներով 28.1% տեսակարար կշիռ ունի «Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» ապրանքախումբը: Վերջինիս հիմնական մասը կազմում են ավտոմեքենաները, որոնք առավելապես ներմուծվում են Ռուսաստանից, Եվրոմիության անդամ երկրներից, Միացյալ Արաբական Էմիրություններից, և դրանց սպառումն ուղղակի կապի մեջ է բնակչության կենսամակարդակի բարձրացման հետ: Ընդ որում, այս ապրանքախմբի ներմուծման կառուցվածքում մշտապես մեծ է եղել Ռուսաստանի տեսակարար կշիռը՝ կապված այն հանգամանքի հետ, որ մի կողմից սպառողները պատմականորեն հակված են սպառել ռուսական մեքենաներ, մյուս կողմից՝ ռուսական մեքենաների և եվրոպական բարձրակարգ մեքենաների գների միջև էական տարբերություն կա: Գրաֆիկ 16-ից երևում է, որ այս ապրանքախմբի ընդհանուր ներմուծման և Ռուսաստանից ներմուծման միտումները գրեթե համընկնում են, իսկ վերջիններիս՝ մինչև 2000թ. նվազումը և հետագա աճը կապված է Հայաստանի տնտեսությունում ճգնաժամից հետո մինչ 2000 թվականը եկամուտների աճի տեմպերի դանդաղման և 2001թ-ից սկսած՝ դրանց զգալի աճի հետ: 2001-2003թթ. ընթացքում Հայաստանում մասնավոր հատվածի դոլարային եկամուտների աճի միջին տեմպը կազմեց 13.2 տոկոս, որը հանգեցրեց այս ապրանքախմբի և՛ ընդհանուր ներմուծման, և՛ Ռուսաստանից ներմուծման աճի: Մասնավորապես, ընդհանուր դոլարային ներմուծման աճը 2002 և 2003 թվականներին կազմեց համապատասխանաբար 54.0 և 83.5 տոկոս, իսկ Ռուսաստանից ներմուծման աճը՝ 53.7% և 98.8%:


Գրաֆիկ 16. Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ, երկրների կշիռները



Ինչ վերաբերում է հարաբերական գներին, ապա ՀՀ դրամ/ՌՌ երկկողմանի իրական փոխարժեքը և դրամի իրական արդյունավետ փոխարժեքի վարքագծերը 1998-2003թթ. ազդել են այս ապրանքախմբի ներմուծման կառուցվածքի վրա: Այսպես՝ մինչև 1999 թվականը ՀՀ դրամ/ՌՌ իրական փոխարժեքի կտրուկ արժեքավորումը հանգեցրել է այս ապրանքախմբի ընդհանուր ներմուծման մեջ Ռուսաստանի տեսակարար կշռի ավելացմանը՝ 1998թ. 50.5%-ից մինչև 57.1%: Հետագայում, մինչև 2002թ. ՀՀ դրամ/ՌՌ իրական փոխարժեքն արժեզրկվել է ավելի արագ, քան իրական արդյունավետ փոխարժեքը, և արդյունքում Ռուսաստանի տեսակարար կշռի նվազում է նկատվել՝ մինչև 47.9%: Իսկ 2002թ-ից հետո ՀՀ դրամ/ՌԴ ռուբլի իրական և դրամի իրական արդյունավետ փոխարժեքների միտումները գրեթե համընկել են, որի պարագայում փոքր-ինչ ավելացել է Ռուսաստանի կշիռը՝ մինչև 51.8%՝ կապված սպառողների նախասիրությունների հետ:

Ընդհանրացնելով նշենք, որ Ռուսաստանից այս ապրանքախմբի ներմուծման վրա ազդում է ինչպես բնակչության եկամուտների աճը, այնպես էլ իրական փոխարժեքների շարժը: Ու թեև Ռուսաստանը Հայաստանի համար դեռևս մնում է այս ապրանքախմբի հիմնական արտահանողը, այնուամենայնիվ, իրական փոխարժեքների վարքագծերի միջև շեղումների դեպքում տեղի կունենա նաև ապրանքախմբի կառուցվածքի փոփոխություն:


Գրաֆիկ 17. «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի կառուցվածքն ու դինամիկան ըստ երկրների



Մեծ տեսակարար կշիռ կազմող հաջորդ ապրանքախումբը «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախումբն է, որը, 2003թ. տվյալներով, կազմում է Ռուսաստանի ընդհանուր (առանց «Հանքահումքային մթերքներ» և «Թանկարժեք, կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբերի) ներմուծման 24.3%-ը: Այս ապրանքախմբի մեջ մտնող ապրանքները հիմնականում ներմուծվում են Ռուսաստանից, Ուկրաինայից, Թուրքիայից, Միացյալ Արաբական էմիրություններից և Գերմանիայից: Քանի որ ապրանքախմբում ներառված ապրանքները հիմնականում օգտագործվում են շինարարական նպատակներով, հետևաբար, կապված Հայաստանում 2000թ. վերջերից սկսված շինարարական աշխատանքների ծավալի աճի հետ, աճել է նաև այս ապրանքախմբի ընդհանուր ներմուծումը: Ընդ որում, նշված տարիներին զգալի ավելացել են Ռուսաստանից ներմուծման ծավալները, որոնց տեսակարար կշիռը ապրանքախմբի ընդհանուր ներմուծման մեջ 1999թ. 16.3 % էր, իսկ 2003թ.՝ 42.7%:

Փաստորեն, այս ապրանքախմբի ընդհանուր ներմուծման կառուցվածքում տեղի է ունեցել նշանակալի տեղաշարժ՝ Թուրքիայից, Ուկրաինայից, Միացյալ Արաբական էմիրություններից դեպի Ռուսաստան: Վերջինս փաստում է, որ այս ապրանքախմբի ներմուծման վրա հարաբերական գների տեղաշարժերը գրեթե չեն ազդել: Իսկ Ռուսաստանից ներմուծման զգալի աճը պայմանավորված էր Հայաստանում եկամուտների աճով և այս ապրանքախմբի մեջ մտնող ռուսական ապրանքների բարձր որակով: Քանի որ «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի մեջ ընդգրկված ռուսական ապրանքները բարձրորակ են համարվում, ուստի Հայաստանում եկամուտների հետագա աճի արդյունքում կավելանա նշված ապրանքախմբի ներմուծումը Ռուսաստանից, իսկ դրանց տեսակարար կշիռն ապրանքախմբի ընդհանուր ներմուծման մեջ առնվազն կպահպանի ձևավորված բարձր մակարդակը:


Գրաֆիկ 18. Մեքենաներ և սարքավորումներ, երկրների տեսակարար կշիռները



«Մեքենաներ և սարքավորումներ» ապրանքախումբը Ռուսաստանից ներմուծվող ապրանքների (առանց «Հանքահումքային մթերքներ» և «Թանկարժեք, կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբերի) ընդհանուր ներմուծման մեջ կազմում է 10.2%: Ապրանքախմբի՝ ըստ երկրների ներմուծման մեջ մեծ տեսակարար կշիռ ունեն Միացյալ Արաբական էմիրությունները, Գերմանիան, Ռուսաստանը, ԱՄՆ-ն, Իտալիան և Թուրքիան: Ապրանքախմբի ընդհանուր ներմուծումը, սկսած 1998թ-ից, աճի միտում է ունեցել, իսկ Ռուսաստանից ներմուծման ծավալները 1999թ. կտրուկ նվազել են և հետագայում՝ մինչև 2003 թվականը, գրեթե չեն փոփոխվել: Արդյունքում՝ ապրանքախմբի ընդհանուր ներմուծման մեջ Ռուսաստանի տեսակարար կշիռը նվազել է՝ 1998թ.՝ 34.3%, 2002թ.՝ 8.8%: 2003թ. այն փոքր-ինչ աճել է՝ հասնելով մինչև 11.1%-ի, ինչն էլ պայմանավորված էր Ռուսաստանի պարտքի դիմաց 2002թ-ից սկսված հայկական ձեռնարկությունների վաճառքի արդյունքում Ռուսաստանի կող-

մից կատարվող կապիտալ ներդրումների հաշվին մեքենասարքավորումների ներմուծմամբ: Ըստ էության, այս ապրանքախմբում, ցածր գնի տեսանկյունից, Հայաստանի համար ձեռնատու շուկաներ են մնում Միացյալ Արաբական էմիրությունները և Թուրքիան, իսկ որակի տեսանկյունից՝ ԱՄՆ-ն, Իտալիան և Գերմանիան: Ընդ որում, Ռուսաստանի համար այս ապրանքախմբի տեսանկյունից հիմնական մրցակիցներ են համարվում Թուրքիան և էմիրությունները, որոնց ընդհանուր տեսակարար կշիռն աճել է. 1998թ.՝ 14.7%, 2003թ.՝ 26.5%: Փաստորեն վերջին տարիներին Հայաստանի եկամուտների աճը Ռուսաստանից այս ապրանքախմբի ներմուծման աճի չի հանգեցրել, քանի որ եկամուտների աճի և սպառողների նախասիրությունների փոփոխման հետ մեկտեղ, սպառողներն ավելի հակված են գնել բարձրորակ եվրոպական արտադրանք: Իսկ մյուս կողմից, ՀՀ դրամ/ՌՌ իրական փոխարժեքի արժեզրկման միջին տեմպը (10.3%) 2000-2003թթ. առաջանցիկ լինելով դրամի իրական արդյունավետ փոխարժեքի արժեզրկման միջին տեմպից (5.5%)՝ հանգեցրել է ռուսական ապրանքների փոխարինման Թուրքիայից և Արաբական էմիրություններից ներմուծվող համեմատաբար էժան ապրանքներով: Ընդհանրացնելով նշենք, որ Ռուսաստանից ներմուծվող այս ապրանքախմբի ապրանքները, Թուրքիայից և էմիրություններից ներմուծվող ապրանքների համեմատությամբ, ունեն փոխարինման բարձր առաձգականություն: Հետևաբար հարաբերական գների փոփոխությունները կարող են հանգեցնել ռուսական ապրանքների փոխարինման Թուրքիայից և էմիրություններից ներմուծվող ապրանքներով:

Գրաֆիկ 19. Պատրաստի սննդի արտադրանք, երկրների կշիռները



«Պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախումբը, 2003թ. տվյալներով, Ռուսաստանից ընդհանուր ներմուծման (առանց «Հանքահումքային մթերքներ» և «Թանկարժեք, կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբերի) մեջ ունի 7.7% տեսակարար կշիռ: Այս ապրանքախմբի ընդհանուր ներմուծման վարքագիծը բավականին տատանողական էր. ներմուծման ծավալները 1998-2000թթ. ընթացքում նվազել են՝ պայմանավորված մեր երկրում ներմուծման փոխարինիչների արտադրության աճով, իսկ 2001 թվականից նկատվող աճն արդեն պայմանավորված էր իրական եկամուտների և համեմատաբար բարձրորակ ապրանքների պահանջարկի աճով: Այս ապրանքախմբի ներմուծման մեջ գոյություն ունի ըստ երկրների բաշխվածության մեծ աստիճան: Տարեցտարի բավական ակնհայտ նկատվում են սպառողների նախասիրությունների փոփոխությունները, որն արտահայտվել է Իրանից, Թուրքիայից ներմուծման անցումով դեպի եվրոպական երկրներ: Հատկանշական է Ռուսաստանի տեսակարար կշռի աճը, որը 1998 թ. 1.15%-ից 2003թ. հասել է 11.05%-ի: Վերջինս պայմանավորված է ռուսական սննդի որակի բարձրացմամբ, իսկ իրական փոխարժեքի ազդեցությունն այս ապրանքախմբի՝ Ռուսաստանից ներմուծման վրա գրեթե չի նկատվել: Նշված պատկերը թույլ է տալիս ենթադրել, որ պահանջարկի հետագա աճը կուղեկցվի Ռուսաստանի և Եվրոմիության երկրների տեսակարար կշիռների աճերով:

Ամփոփելով նշված դատողությունները՝ հանգում ենք հետևյալ եզրակացությունների.

- Դիտարկված 4 ապրանքախմբերից երեքում (բացառությամբ «Մեքենաներ և սարքավորումներ» ապրանքախմբի), որոնք կազմում են Ռուսաստանից ընդհանուր ներմուծման 60%-ից ավելին, դեր են խաղացել Հայաստանի բնակչության եկամուտների՝ վերջին տարիների զգալի աճը: Ընդ որում, եթե «Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» ապրանքախմբում դեր է խաղացել նաև ՀՀ դրամ/ ՌԴ ռուբլի փոխարժեքը, ապա «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» և «Պատրաստի սնունդ» ապրանքախմբերի աճը կապված է եղել ոչ գնային գործոնների հետ: Դա էր պատճառը, որ չնայած 2000թ-ից դրամ/ռուբլի իրական փոխարժեքի արժեզրկմանը, այնուամենայնիվ, մեր տնտեսությունում նկատվել է Ռուսաստանից դոլարային ներմուծման ծավալների աճ:
- Դրամ/ռուբլի իրական փոխարժեքը ազդեցություն է ունեցել միայն «Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» և մասամբ նաև, ինչպես արդեն նշեցինք, «Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» ապրանքախմբերի ներմուծման վարքագծերի վրա, որոնք, մրցակցող այլ երկրներից ներմուծվող ապրանքների համեմատությամբ, ունեն փոխարինման բարձր առաձգականություն
- Դիտարկված 4 ապրանքախմբերից 2 խոշորագույններում՝ «Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» և «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբերում, որոնց ընդհանուր տեսակարար կշիռը, 2003թ. տվյալներով, Ռուսաստանից ներմուծվող ապրանքներում կազմում է 50%-ից ավելին, Ռուսաստանն ունի գերիշխող դիրք: Ընդ որում, ակնկալվում է, որ այդ դիրքը հետագա տարիներին առնվազն կպահպանվի:

Այսպիսով, դիտարկված տարիներին Ռուսաստանից ներմուծման աճը հիմնականում բնակչության եկամուտների աճի և ռուսական որոշ ապրանքատեսակներին գերապատվություն տալու արդյունք էր: Առկա է նաև որոշ ապրանքախմբերում մի երկրից մյուս երկիր անցման բարձր առաձգականություն: Հետևաբար 2005 թվականին Հայաստանի տնտեսական աճի և բնակչության եկամուտների աճի բարձր տեմպերի պահպանմանը զուգընթաց, ակնկալվում է Ռուսաստանից ներմուծման ծավալների աճ:

Մյուս կողմից՝ ակնկալվում է, որ առաջիկա տարիներին Ռուսաստանը կմնա որպես Հայաստան ուղարկվող մասնավոր տրանսֆերտների պոտենցիալ աղբյուր, և Ռուսաստանի տնտեսության ոչ արտահանելի հատվածում անվանական եկամուտների աճին զուգահեռ, ինչը կրում է նաև համաշխարհային շուկաներում նավթի գների աճի ազդեցությունը, ՀՀ տնտեսությունում կնկատվի մասնավոր տրանսֆերտների ներհոսքի աճ: Փաստորեն, եթե հաշվի առնենք, որ 2005-2006թթ. միջազգային շուկաներն ակնկալում են, որ նավթի գները չեն նվազի և դրա հետ կապված՝ Ռուսաստանի տնտեսությունում ակնկալվում է, որ նավթի արտահանումից եկամուտները նույնպես չեն նվազի, ապա արդյունքում կարող ենք սպասել, որ Ռուսաստանից ներհոսող տրանսֆերտների ծավալները առնվազն կպահպանեն նախորդ տարիների մակարդակը:

Ավելացնենք նաև, որ սույն հետազոտությունում ներկայացված տեղեկատվությունը պարբերաբար թարմացվելու է, և արդյունքները հետագայում օգտագործվելու են ֆինանսական ծրագրավորման ժամանակ՝ ներմուծման և արտահանման ծավալները ըստ երկրների և ապրանքախմբերի կանխատեսելու նպատակով: Բացի այդ, վերը նշված դատողությունների հիման վրա գնահատվելու են Հայաստանի և Ռուսաստանի արտաքին առևտրի զարգացումների հնարավոր ուղղությունները, որի արդյունքում տրվելու է ՀՀ արտաքին առևտրի մեջ Ռուսաստանի կշռի աճի կամ նվազման ուղղությունը: Վերջինս, իր հերթին, այլ հավասար պայմաններում, ազդելու է ՀՀ դրամի իրական արդյունավետ փոխարժեքի վարքագծի վրա:

Օգտագործված գրականություն

1. Ôèíàíñîâûå êðèçèñû: òåîðèÿ, èñòîðèÿ, ïîëèòèêà/Ê.Â.Ðóäûé. Ì. Íîâîå çíàíèå, 2003.
2. Âàëþòíî ôèíàíñîâûå ìåõàíèçìû â ñîâðåìåííîì ìèðå, êðèçèñíûé îïûò êîíöà 90-õ. Ì.Â.Åðøîâ, Ì. Ýêîíîìèêà, 2000
3. Exchange Rate Misalignment: Macroeconomic Fundamentals as an Indicator of

   Exchange Rate Crises in Transition Economies: David M. Kemme, Saktinil Roy, May 2002, Department of Economics, University of Memphis
4. The Russian Crisis: Causes,Consequences and Implications for the Future: Roman Golov and Robin Matthews, Kingston University, May 1999, Occasional paper series: No35
5. A Case Study of a Currency Crisis: The Russian Default of 1998: Abbigail J. and Michael T. Owyang, November/December 2002.
6. Capital Flight from Russia: Prakash Loungani and Paolo Mauro Research Department, IMF,Conference on Post-Election Strategy, Moscow, April 5-7, 2000
7. The Russian Federation After the 1998 Crisis: Towards "Win-win" Strategies for Growth and Social Protection: July 11 2001, Poverty Reduction and Economic Management Sector Unit Europe and Central Asia Region, Document of the World Bank
8. Currency Crisis Theories-Some Explanations for the Russian Case: Tuomas Komulainen, Bank of Finland Institute for Economies in Transition, BOFIT Discussion papers, 1999 No.1
9. BOFIT Discusion Paper "Black Cash Tax Evasion in Russia", Andrei Yakovlev, 1999, No.3
10. Interview with John Odling-Smee, Russia's rebound:will it last? International Monetary Fund Volume 32, Number 5, March 17, 2003
11. The Economy and Investment Climate in Russia, 2004: American Chamber of Commmerce in Russia, Expert Institute.
12. Russian Economic Report, October 2001 No1, www.worldbank.org
13. Russian Economic Report, October 2002 No4, www.worldbank.org
14. Russian Economic Report, August 2003 No6, www.worldbank.org
15. Russian Federation: Selected Issues, May 2003, IMF Country Report No.03/146
16. Russian Federation: 2003 Article IV Consultation-Staff Report, Staff Supplement, and Public Information Notice on the Executive Board Discussion. May 2003, IMF Country Report No.03/144
17. Russian Federation: Statistical Appendix, May 2003, IMF Country Report No.03/145
18. Ðîññèÿ, Ýêîíîìè÷åñêîå è ôèíàíñîâîå ïîëîæåíèå, Àâãóñò 2004, Öåíòðàëüíûé áàíê Ðîññèéñêîé Ôåäåðàöèè, www.cbr.ru
19. Îñíîâíûå íàïðàâëåíèÿ åäèíîé ãîñóäàðñòâåííîé äåíåæíî-êðåäèòíîé ïîëèòèêè íà 2004 ãîä, Öåíòðàëüíûé áàíê Ðîññèéñêîé Ôåäåðàöèè, www.cbr.ru
20. Russian Economic Report, November 2004 No9, www.worldbank.org
21. Russian Economic Report, March 2005 No10, www.worldbank.org
22. Russia: Economic and Financial Situation, January 2005, The Central Bank of the Russian Federation, www.cbr.ru
23. Russia, Facing "Dutch Disease," Should Reform, Primary Credit Analyst(s): Helena Hessel, New York (1) STANDARD&POOR'S, Publication date:17-Feb-2005, Reprinted from Ratings Direct

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԱՄՆ-ՈՒՄ*

Դրամավարկային քաղաքականության վարչություն
Վահագն Գրիգորյան

ԱՄՆ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Ներածություն

ԱՄՆ տնտեսությունը, հանդիսանալով աշխարհի խոշորագույն տնտեսական միավորը, ամենաէական ազդեցությունն է ունենում համաշխարհային տնտեսության վրա: Այս հանգամանքով պայմանավորված՝ ԱՄՆ տնտեսության վերլուծությունը կարևորվում է նաև Հայաստանի համար, քանի որ ԱՄՆ տնտեսության ազդեցությունն արտահայտվում է ոչ միայն ուղղակիորեն՝ Հայաստան-ԱՄՆ արտաքին առևտրի միջոցով, այլև համաշխարհային տնտեսության վրա ունեցած ներգործությամբ (գլոբալ տնտեսական աճ, պահուստային արժույթի փոխարժեք, միջազգային տոկոսադրույքներ, հումքային ապրանքատեսակների գներ և այլն):

Ներկայացված նյութի առաջին մասում տրվում է ԱՄՆ տնտեսության նկարագրությունը՝ 3 մասով.

- 1991 թվականի տնտեսական անկումից հետո 1992-2000 թվականներին ԱՄՆ տնտեսության բարձր տեմպերով աճի փուլ,
- 2001-2003 թվականներին տնտեսական աճի տեմպերի դանդաղեցման և տնտեսական անկման դեմ պայքարի փուլ,
- 2004-2005 թվականների ԱՄՆ տնտեսական իրավիճակի վերաբերյալ ակնկալիքները, պարբերաշրջանային և կառուցվածքային հիմնախնդիրները և ազդեցության ուղիները համաշխարհային տնտեսության վրա:

Երկրորդ մասում դիտարկվում է ԱՄՆ արտաքին առևտրի կառուցվածքը՝ տնտեսության մասնագիտացումը հասկանալու համար:

Երրորդ մասում վերլուծվում է ԱՄՆ-Հայաստան արտաքին առևտուրը, երկկողմանի իրական փոխարժեքի փոխկապվածությանը արտահանման և ներմուծման հետ:

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԱՄՆ-ՈՒՄ 1992-2000 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ [1]

Իրական հատված

1991 թվականին ֆոնդային շուկայի ճգնաժամից և իրական հատվածի տնտեսական անկումից հետո ԱՄՆ տնտեսությունը մտավ կայուն զարգացման փուլ: Արդեն 1992 թվականին գրանցվեց 3.3 տոկոս իրական ՀՆԱ աճ, որը շարունակվեց նաև հետագա տարիներին: ԱՄՆ տնտեսության աճը համաշխարհային տնտեսական աճի հիմնական շարժիչ ուժերից մեկն է ոչ միայն ի հաշիվ իրական արտադրության ծավալների ավելացման, այլ նաև պայմանավորված ԱՄՆ եկամուտների ավելացմամբ և մյուս երկրների արտահանման նկատմամբ պահանջարկի աճով: 1992-2000 թվականներին ԱՄՆ միջին տնտեսական աճը կազմել է 3.7 տոկոս, իսկ արդյունաբերության աճը՝ 4.8 տոկոս, որոնք բավականին բարձր ցուցանիշներ են զարգացած երկրների համար: Տնտեսական աճը ուղեկցվել է գործազրկության մակարդակի էական կրճատմամբ, որը 1992 թվականի 7.5 տոկոսից 2000 թվականին կրճատվել է մինչև 4.0 տոկոս:

Պետք է նշել, որ արդյունաբերության ճյուղում աշխատավարձի աճը, որի միջին ցուցանիշը 1992-2000 թվականներին կազմել է 2.8 տոկոս, զգալիորեն զիջում էր ճյուղի աճի ցուցանիշին. պատճառը՝ գործազրկության կրճատումն էր: Սպառողական գների ինդեքսը նույն ժամանակահատվածի համար նույնպես աճել էր համադրելի տեմպերով՝ կազմելով միջինը 2.6 տոկոս և վերահսկվել դրամավարկային քաղաքականություն իրականացնող մարմինների կողմից:

** Հեղինակի տեսակետը կարող են չհամընկնել ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական դիրքորոշմանը:*

[1] Թվային տվյալները ներկայացված են հավելվածներում: Հավելված 1-4-ի աղբյուրը ԱՄՀ Միջազգային ֆինանսական վիճակագրությունն է (IFS), հավելված 5-8-ի աղբյուրը ՝ ԱՄՆ առևտրի դեպարտամենտը, հավելված 9-10-ի աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է:

ՀՆԱ կառուցվածքում հիմնական շարժիչ ուժը մասնավոր սպառումն էր, որի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում աճել է 66.8 տոկոսից (1992 թ.) մինչև 68.7 տոկոս (2000 թ.): Պետական սպառման ծախսերի կշիռը ՀՆԱ-ում 16.5 տոկոսից նվազել է մինչև 14.4 տոկոս[2]: Փոխարենը աճել են մասնավոր ներդրումները՝ 17.2 տոկոսից մինչև 20.8 տոկոս: Արտահանման կշիռը ՀՆԱ-ում գրեթե չի փոխվել՝ 2000 թվականին կազմելով 11.2 տոկոս՝ 1992 թվականի 10.0 տոկոսի փոխարեն, մինչդեռ ներմուծման կշիռը ունեցել է էական աճի միտում՝ ժամանակաշրջանի սկզբի 10.5 տոկոսից հասնելով մինչև 15.0 տոկոս[3]:

ԱՄՆ Նյու Յորքի ֆոնդային բորսայում գնանշվող 30 խոշորագույն արդյունաբերական ձեռնարկությունների կապիտալացումը, որն արտահայտվում է Դոու-Ջոնսի ինդեքսի միջոցով, նշված ժամանակահատվածում աճել է մոտ 240 տոկոսով և կազմել մոտ 10800: Դրան էապես նպաստել է նաև, այսպես կոչված, «նոր տնտեսության» առաջացումը, որը բնութագրվում է տեխնոլոգիական ընկերությունների (այսպես կոչված՝ com -երի) առաջացմամբ և զարգացմամբ (հիմնականում համակարգչային արդյունաբերության հետ կապված ոլորտներում), ինչը անկում ապրեց 2000 թվականին՝ հիմնականում «նոր տնտեսության» և ոլորտում գործող կազմակերպությունների արժեթղթերի գերագնահատման պատճառով:

Միևնույն ժամանակ, բարձր տնտեսական աճով և ֆինանսական շուկայի աճով պայմանավորված եկամուտների այդօրինակ ավելացումը խնայողությունների մակարդակի էական աճի պատճառ դարձավ, որի տեսակարար կշիռը համախառն ազգային տնօրինվող եկամտի մեջ 2000 թվականին կազմեց 17.6 տոկոս՝ 1992 թվականի 15.1 տոկոսի փոխարեն:

Պետական հատված

Պետական հատվածում 1992-2000 թվականների ընթացքում էական տեղաշարժեր կատարվեցին: Սառը պատերազմի և Իրաքի պատերազմի ավարտից հետո Ջորջ Բուշ ավագի ղեկավարած Հանրապետական կառավարությանը փոխարինեց Բիլ Քլինթոնի Դեմոկրատական կառավարությունը: Նշված ժամանակահատվածում կոնգրեսի կողմից պարտադրվող և Բիլ Քլինթոնի կողմից աջակցվող բյուջետային քաղաքականությունը հանգեցրեց նրան, որ երկար տարիներ շարունակվող և 1992 թվականին իր անվանական ամենամեծ արժեքին հասած համախմբված բյուջեի պակասուրդը (326.8 մլրդ ԱՄՆ դոլար կամ 5.2 տոկոս ՀՆԱ-ում) 2000 թվականին վերածվեց իր անվանական և հարաբերական առումով ամենամեծ ավելցուկին (254.6 մլրդ ԱՄՆ դոլար կամ ՀՆԱ 2.6 տոկոս):

Դա իրականացվեց ինչպես ծախսերի կրճատման (1992 թվականին՝ ՀՆԱ 22.5 տոկոսից մինչև 18.2 տոկոս՝ 2000 թվականին), այնպես էլ հարկերի ավելացման միջոցով (1992 թվականին՝ ՀՆԱ 17.4 տոկոս, 2000 թվականին՝ 20.8 տոկոս): Արդյունքում՝ պետական արժեթղթերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում (վերջիններս կազմում են պետական պարտքի մոտ 98 տոկոսը) էապես նվազել է՝ 2000 թվականին կազմելով 34.2 տոկոս՝ 1992 թվականի 48.3 տոկոսի փոխարեն: Սակայն արժեթղթերի սեփականատերերի կառուցվածքում տեղի ունեցան էական փոփոխություններ. եթե 1992 թվականին ոչ ռեզիդենտների տեսակարար կշիռը կազմում էր 17.0 տոկոս, ապա 2000 թվականին՝ 30.6 տոկոս: Սա ուղղակի հետևանքն էր ԱՄՆ ընթացիկ հաշվի պակասուրդի խորացման[4], որը, բնականաբար, պահանջում էր արտաքին ֆինանսավորման աճ:

Պետական արժեթղթերի ռեզիդենտ սեփականատերերի կազմում նույնպես կառուցվածքային փոփոխություններ են կատարվել. աճել է միայն դրամավարկային կարգավորման մարմինների (Ֆեդերալ պահուստային բանկի) կշիռը՝ ընդհանուր արժեթղթերի 9.6 տոկոսից (1992 թվականին) հասնելով 15.2 տոկոսի (2000 թվականին), մինչդեռ մյուս բոլոր հատվածների կշիռը նվազել է՝ 73.4 տոկոսից (1992 թվականին) կրճատվելով մինչև 54.2 տոկոս (2000 թվականին): Վերջիններս պայմանավորված էին մասնավոր հատվածի կողմից տնօրինվող արժեթղթերի մարումներով:

Արտաքին հատված

ԱՄՆ տնտեսությունը մեծ է, կախվածությունը արտաքին աշխարհից՝ փոքր ԱՄՆ բացվածության ցուցանիշը 1992-2000 թվականներին թեպետ աճել է (ՀՆԱ 20.1 տոկոսից մինչև ՀՆԱ 25.7 տոկոս), այնուամենայնիվ մնում է բավականին ցածր մակարդակի վրա՝ երկիրը «բաց երկիր» համարելու համար: Ինչպես նշվեց, այս աճը հիմնականում ապրանքների և ծառայությունների ներմուծման աճի արդյունք էր, որը 2000 թվականին կազմել է ՀՆԱ 14.8 տոկոսը[5] 1992 թվականին գրանցված 10.4 տոկոսի փոխարեն:

---

[2] Մանրամասն տե՛ս Պետական հատված ենթաբաժնում:
[3] Մանրամասն տե՛ս Արտաքին հատված ենթաբաժնում:
[4] Մանրամասն տե՛ս Արտաքին հատված ենթաբաժնում:
[5] Վճարային հաշվեկշռի վիճակագրությամբ արտաքին առևտրի ցուցանիշները փոքր-ինչ տարբերվում են Ազգային հաշիվների համակարգում գրանցված ցուցանիշներից:

Նշված ժամանակահատվածում արտահանման տեսակարար կշիռը ՀՆԱ-ում նույնպես աճել է, բայց ավելի դանդաղ տեմպերով՝ 2000 թվականին կազմել է ՀՆԱ 10.9 տոկոսը՝ 1992 թվականի ՀՆԱ 9.7 տոկոսի փոխարեն: Պետք է նաև նշել, որ գրանցված փոփոխությունները հիմնականում պայմանավորված են ապրանքների արտահանման և ներմուծման փոփոխություններով, մինչդեռ ծառայությունների առևտրի տեսակարար կշիռները մնացել են կայուն: Այս ամենի արդյունքում ապրանքների և ծառայությունների հաշվեկշռի պակասուրդն էապես խորացավ՝ 2000 թվականին կազմելով ՀՆԱ 3.9 տոկոսը, մինչդեռ 1992 թվականին կազմում էր ՀՆԱ ընդամենը 0.6 տոկոսը:

Ինչ վերաբերում է ընթացիկ եկամուտներին և տրանսֆերտներին, ապա դիտարկվող ժամանակահատվածում դրանց հաշվեկշիռների մնացորդների տեսակարար կշիռները ՀՆԱ-ում եղել են բավականին կայուն (մոտ 0-1 տոկոսի սահմաններում):

Արդյունքում՝ ընթացիկ հաշվի պակասուրդը, պայմանավորված առևտրի հաշվեկշռի բացասական մնացորդի ավելացմամբ, 1992-2000 թվականին էապես աճեց՝ ժամանակահատվածի վերջի դրությամբ կազմելով ՀՆԱ 4.2 տոկոսը՝ սկզբի 0.8 տոկոսի փոխարեն:

Պակասուրդի նման խորացումը ֆինանսավորվել է օտարերկրյա ներդրումների ավելացման միջոցով՝ ինչպես ուղղակի, այնպես էլ պորտֆելային: Ուղղակի ներդրումների ներհոսքը ԱՄՆ տնտեսություն 2000 թվականին կազմեց ՀՆԱ 3.3 տոկոսը (զուտ ներհոսքը՝ 1.7 տոկոս), մինչդեռ 1992 թվականին այն կազմել էր ընդամենը 0.3 տոկոս (զուտ արտահոսքը՝ 0.4 տոկոս): Արդյունքում, հաշվարկված ՀՆԱ կշիռներով, զուտ ուղղակի ներդրումների աճը ֆինանսավորել էր ընթացիկ հաշվի պակասուրդի ավելացման 60.8 տոկոսը: Զուտ պորտֆելային ներդրումների աճը նույնպես զգալի է եղել՝ կազմել է ՀՆԱ 3.2 տոկոսը (ժամանակահատվածի սկզբին՝ 0.4 տոկոս)՝ ֆինանսավորելով ընթացիկ հաշվի պակասուրդի աճի 82.4 տոկոսը: Բնականաբար, նման պայմաններում Այլ ներդրումների գծով գրանցվել է կապիտալի ներհոսքի կրճատում՝ ՀՆԱ 1.5 տոկոսից մինչև 0.0 տոկոս՝ Ֆեդերալ պահուստային համակարգի պահուստային ակտիվների զրոյական փոփոխությունների պայմաններում:

ԱՄՆ տնտեսությունը նշված ժամանակահատվածում փաստորեն ավելացրեց արտաքին աշխարհի նկատմամբ իր պարտապանի զուտ դիրքը՝ ՀՆԱ 7.1 տոկոսից (առանց պահուստային ակտիվների՝ 9.5 տոկոս) մինչև ՀՆԱ 16.2 տոկոսը (17.5 տոկոս)[6]:

Դրամավարկային կարգավորման մարմինների արտաքին ակտիվների մակարդակը[7] 1992-2000 թվականներին փոքր-ինչ նվազեց (72.0 մլրդ ԱՄՆ դոլարից մինչև 67.7 մլրդ ԱՄՆ դոլար)՝ ժամանակաշրջանի վերջում ապահովելով ներմուծման ընդամենը 0.6 ամսվա ծածկույթ՝ ժամանակահատվածի սկզբի 1.3 ամսվա փոխարեն[8]: Պահուստային ակտիվների և արտաքին պետական պարտքի ցուցանիշների հարաբերակցությունը 2000 թվականին կազմել է 6.5 տոկոս՝ 1992 թվականին գրանցված 12.5 տոկոսի փոխարեն: Չնայած արտաքին իրացվելիությունը գնահատող մյուս ցուցանիշը՝ ապրանքների և ծառայությունների արտահանում/արտաքին պարտքը մնացել է կայուն (2000 թվականին 103.6 տոկոս՝ 1992 թվականի 107.0 տոկոսի փոխարեն), այնուամենայնիվ կարելի է արձանագրել արտաքին վճարունակության որոշակի նվազում՝ նույնիսկ հաշվի առնելով ԱՄՆ ֆինանսավորման բացառիկ հնարավորությունները:

Բիլ Քլինթոնի վարչակազմի իրականացրած «ուժեղ դոլարի» քաղաքականության շնորհիվ ԱՄՆ դոլարի փոխարժեքը նշված ժամանակահատվածում էապես արժևորվել է. 1992 թվականի 1.3 ԱՄՆ դոլար/էյու միջին փոխարժեքից 2000 թվականին հասնելով 0.92 ԱՄՆ դոլար/եվրո փոխարժեքի (29.2 տոկոս արժևորում): Ինչ վերաբերում է իրական արդյունավետ փոխարժեքին[9], ապա այն նույնպես արժևորվել է, թեպետ ավելի փոքր տեմպերով՝ 13.3 տոկոսով:

Կարծում ենք, բարձր տնտեսական աճը և օտարերկրյա ներդրողների դրական տրամադրվածությունը ԱՄՆ «նոր» տնտեսության նկատմամբ, որպես ավելի արդյունավետ տնտեսության, ինչպես նաև դրամավարկային կոշտ քաղաքականության արդյունքում ձևավորված բարձր տոկոսադրույքները հանգեցրին ուղղակի օտարերկրյա ներդրումների աճի և դոլարի արժևորման քաղաքականություն իրականացնելու հնարավորություն ընձեռեցին: Այս, ինչպես նաև մասնավոր հատվածի եկամուտների և ծախսերի աճը, խորացրին ընթացիկ հաշվի պակասուրդը, որը, սակայն, ամբողջովին ծածկվում էր վերոնշյալ գործոնների արդյունքում ձևավորված կապիտալի ներհոսքով:

---

[6] Արտաքին պահուստների թվերը ներկայացված են ըստ վճարային հաշվեկշռի և միջազգային ներդրումային դիրքի վիճակագրության:

[7] Միջազգային ներդրումային դիրքի պաշտոնական պահուստների մակարդակը տարբերվում է դրամավարկային կարգավորման մարմինների արտաքին ակտիվների մակարդակից, որը օգտագործվել է պահուստների բավարարվածության ցուցանիշները հաշվարկելու ժամանակ:

[8] Բնականաբար այս ցուցանիշի ուսումնասիրությունը իմաստ չունի ԱՄՆ դեպքում, քանի որ երկիրը կարող է արտաքին ապրանքների և ծառայությունների պահանջարկը ֆինանսավորել սեփական արժույթով:

[9] Հաշվարկված է ԱՄՀ կողմից, Հոդրիկ-Պրեսկոտի մեթոդով նորմալիզացված միավոր աշխատուժի արժեքներով՝ արդյունաբերական ոլորտում կիրառելով արդյունաբերական ապրանքների առևտրի 1989-91թթ. կշիռները՝ ներառյալ «երրորդ երկրների ազդեցությունը»:

Ֆինանսական հատված

1992-2000 թվականներին իրականացվող դրամավարկային քաղաքականությունը կարելի է բնութագրել որպես զսպողական: Ֆեդերալ պահուստային համակարգի սահմանած դիսկոնտային տոկոսադրույքը 2000 թվականի վերջին, 1992 թվականի վերջի համեմատ, աճել էր 2 անգամ՝ կազմելով 6.0 տոկոս: Բնականաբար, երկրի մյուս տոկոսադրույքները (Ֆեդերալ ֆոնդերի տոկոսադրույքը և պետական արժեթղթերի տոկոսադրույքները) նույնպես ուղղորդվել են այդ տոկոսադրույքի միջոցով՝ կազմելով մոտ 6 տոկոս:

Այս քաղաքականության միջոցով զսպվել է ներդրումների՝ ցանկալիից մեծ աճը և փորձ է արվել տնտեսությունը զերծ պահել «գերտաքացումից», որը կարող էր առաջանալ տնտեսական աճով և ֆոնդային ակտիվների գների աճով պայմանավորված եկամուտների աճի հետևանքով:

Նման պայմաններում դրամական ագրեգատների միջին աճերը կազմել են՝ M3 – 6.1 տոկոս, M2 – 4.4 տոկոս, M1 – 2.3 տոկոս, մինչդեռ փողի բազան ավելացել է 7.1 տոկոսով: Այս իրավիճակի պատճառը Ֆեդերալ պահուստային համակարգի կողմից իրականացվող կոշտ դրամավարկային քաղաքականությունն էր, որը արտահայտվեց նաև դրամական բազմարկիչների նվազմամբ: Այսպես, M2 բազմարկիչը 2000 թվականի դրությամբ կազմել է 8.1՝ 1992 թվականի 9.4 -ի փոխարեն, իսկ M3 բազմարկիչը՝ 11.7՝ ժամանակահատվածի սկզբի 11.5 –ի փոխարեն, որի պատճառը M3 ագրեգատի կառուցվածքում երկարաժամկետ ավանդների դիմաց պահուստավորման զրոյական նորմատիվն է:

Տնտեսության փողայնացման գործակիցը[10] 2000 թվականին M2 ագրեգատի համար կազմել է 50.6 տոկոս, իսկ M3 ագրեգատի համար՝ 73.0 տոկոս, ընդ որում՝ 1992 թվականին համապատասխան ցուցանիշները կազմել են 54.4 տոկոս և 66.8 տոկոս: Կարելի է ենթադրել, որ M2 փողայնացման գործակցի նվազումը և M3 փողայնացման գործակցի աճը մասնավոր հատվածի կողմից երկարաժամկետ խնայողություններին կարճաժամկետների նկատմամբ տրվող գերապատվության հետևանք է:

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԱՄՆ-ՈՒՄ 2001-2003 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Իրական հատված

2001 թվականին ԱՄՆ տնտեսությունը անկում ապրեց. զսպող դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների հետևանքով գրանցվեց իրական ՀՆԱ աճ ընդամենը 0.8 տոկոսով [11]: Սակայն տնտեսության անկումը 2001 թվականին դադարեց, և խթանող տնտեսական քաղաքականության շնորհիվ 2002 թվականին տնտեսական աճը կազմեց 1.9 տոկոս, իսկ 2003 թվականին՝ 3.0 տոկոս: Արդյունաբերության անկումը ավելի երկար տևեց. միայն 2003 թվականին գրանցվեց 0.2 տոկոս աճ (2001 թվականին՝ -3.4 տոկոս, 2002 թվականին՝ - 0.6 տոկոս): Միևնույն ժամանակ, էապես աճեց գործազրկությունը՝ 2003 թվականին կազմելով 6.0 տոկոս՝ 2001 թվականի 4.7 տոկոսի փոխարեն: Գործազրկության աճը աշխատավարձի աճի տեմպի պահպանման հիմք հանդիսացավ, որի արդյունքում սպառողական շուկայում կանխվեց գնանկումը: Այսպես, աշխատավարձի միջին աճի տեմպը 2001-2003 թթ. կազմեց 3.2 տոկոս, իսկ սպառողական գներինը՝ 2.2 տոկոս: Այսինքն, եթե համեմատենք նաև 1992-2000 թվականների աշխատուժի շուկայի իրավիճակի հետ, ապա կարելի է ասել, որ ԱՄՆ տնտեսության բիզնես-պարբերաշրջանները ավելի շատ անդրադառնում են զբաղվածության մակարդակի վրա, քան աշխատավարձի: Գործազրկության աճի հետևանքով պահանջարկի նվազումը արտահայտվեց միայն արդյունաբերական ապրանքների գների վրա, որոնք 2000 թվականին գրանցված 5.8 տոկոս աճից հետո 2001 թվականին բարձրացան ընդամենը 1.1 տոկոսով, 2002 թվականին արդեն գրանցվեց գների նվազում 2.3 տոկոսով, սակայն այդ անկումը վերականգնվեց 2003 թվականին, երբ արդյունաբերական գները բարձրացան 5.3 տոկոսով:

Շարունակեց աճել սպառման տեսակարար կշիռը ՀՆԱ-ում (մասնավորապես դրանով էր պայմանավորված արդյունաբերական գների համեմատ սպառողական գների բարձր աճը)՝ 2003 թվականին հասնելով 70.5 տոկոսի (2000 թվականին՝ 68.7 տոկոս): Վերջինիս հետևանքով ավելի մեծացավ զուտ արտահանման պակասուրդի կշիռը, որը 2003 թվականին կազմեց 4.5 տոկոս (2000 թվականին՝ 3.9 տոկոս): Կարելի է նկատել նաև «արտամղման» ազդեցություն, երբ պետական ծախսերի կշռի ավելացումը[12], չնայած

---

[10] Այս ցուցանիշի ուսումնասիրությունը ԱՄՆ դեպքում կարող է սխալ լինել, քանի որ ԱՄՆ դոլարը (ավելի շատ կանխիկ ձևով) շրջանառվելով ամբողջ աշխարհում, սպասարկում է ոչ միայն ԱՄՆ, այլև մյուս երկրների տնտեսությունը:

[11] Սրան նպաստեցին նաև 2001 թվականի սեպտեմբերի 11-ի ահաբեկչական ակտերը, որոնք խորացրին արդեն նկատվող տնտեսական անկումը:

[12] Մանրամասն տե՛ս Պետական հատված ենթաբաժնում:

2001 թվականին Ֆեդերալ պահուստային համակարգի կողմից տոկոսադրույքների շեշտակի իջեցմանը, հանգեցրեց ներդրումների կշռի նվազման: Այսպես, պետական ծախսերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 2003 թվականին, 2000 թվականի համեմատ, աճեց 1.2 տոկոսային կետով՝ կազմելով 15.6 տոկոս, իսկ ներդրումների տեսակարար կշիռը նվազեց 2.4 տոկոսային կետով՝ կազմելով 18.4 տոկոս:

Ինչ վերաբերում է համախառն խնայողություններին, ապա վերոնշյալից կարելի է ենթադրել, որ էապես նվազել է խնայողության հակումը, որը արտահայտվեց ՀԱՏԵ-ի մեջ խնայողությունների կշռի կտրուկ նվազմամբ՝ 2003 թվականին մինչև 13.4 տոկոս (2000 թվականին՝ 17.6 տոկոս)[13]:

2001-2003 թվականներին ԱՄՆ Նյու Յորքի ֆոնդային բորսայի Դոու-Ջոնսի ինդեքսը ընդհանրապես արդյունաբերական ձեռնարկությունների կապիտալացման աճ չարձանագրեց՝ 2003 թվականի վերջին կազմելով մոտ 10450՝ 2000 թվականի վերջի մոտ 10800-ի փոխարեն:

Պետական հատված

Հարկաբյուջետային քաղաքականությունը կտրուկ փոխվեց 2001 թվականին, երբ իշխանության եկավ Ջորջ Բուշ-կրտսերի ղեկավարած Հանրապետական կուսակցությունը: Դեմոկրատական կուսակցության վարած զսպող հարկաբյուջետային քաղաքականությանը փոխարինեցին նախընտրական պայքարի ժամանակ հանրապետականների խոստացած հարկերի նվազեցումը և պետական արտաքին քաղաքականության (Աֆղանստանի և Իրաքի պատերազմներ) հետ կապված՝ պաշտպանության ծախսերի կտրուկ ավելացումը: Արդյունքում՝ պետական բյուջեի ավելցուկը, որը 2001թ. կազմում էր ՀՆԱ 0.9-ը, արդեն 2002 թվականին կազմում էր ՀՆԱ 2.2 տոկոսը, իսկ 2003 թվականին՝ ՀՆԱ 3.6 տոկոսը:

Ինչպես նշվեց, բյուջեի պակասուրդի առաջացման և խորացման պատճառը և՛ եկամուտների կրճատումն էր, որի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 2003 թվականին կազմեց 16.3 տոկոս (2000 թ.՝ 20.8 տոկոս), և՛ ծախսերի աճը, որի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 2003 թվականին կազմեց 19.9 տոկոս (2000 թ.՝ 18.2 տոկոս): Նման քաղաքականության արդյունքում պետական արժեթղթերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում որոշակի աճեց՝ 2003 թվականին կազմելով 36.4 տոկոս՝ 2000 թվականի 34.2 տոկոսի փոխարեն: Պետք է նշել նաև, որ շարունակում էր ավելանալ ոչ-ռեզիդենտների տեսակարար կշիռը արժեթղթերի սեփականատերերի կառուցվածքում: 2003 թվականին այն կազմեց 37.0 տոկոս, որը հիմնականում տեղի ունեցավ ոչ ֆինանսական հատվածի կշռի նվազման հաշվին:

Արտաքին հատված

2000-2003 թվականներին ԱՄՆ տնտեսության արտաքին առևտրաշրջանառությունը կրճատվեց (ՀՆԱ 25.7 տոկոսից մինչև 23.1 տոկոս), որի պատճառը ՀՆԱ-ում ինչպես արտահանման, այնպես էլ ներմուծման կշիռների կրճատումն էր 10.9 տոկոսից՝ 9.3 տոկոս և -14.8 տոկոսից՝ -13.8 տոկոս համապատասխանաբար: Նշված փոփոխություններով պայմանավորված՝ ապրանքների և ծառայությունների պակասուրդն ավելացավ (3.9 տոկոսից՝ 4.5 տոկոս), որի հետևանքով ընթացիկ հաշվի պակասուրդի կշիռը ՀՆԱ-ում աճեց (4.2 տոկոսից՝ 4.8 տոկոս):

Պակասուրդի ֆինանսավորման կառուցվածքում նկատվեցին զգալի փոփոխություններ՝ 2001-2003 թվականներին ֆինանսավորումը իրականացվում էր հիմնականում այլ ներդրումների, այսինքն՝ վարկերի ներգրավման և պորտֆելային ներդրումների միջոցով, ի տարբերություն նախորդ ժամանակահատվածների, երբ ֆինանսավորումը իրականացվում էր ուղղակի ներդրումների միջոցով: Այսպես, ԱՄՆ-ում ուղղակի ներդրումների կշիռը ՀՆԱ-ում 2000 թվականի 3.3 տոկոսից 2003 թվականին նվազել է մինչև 0.4 տոկոս: Դրա փոխարեն ավելացել են պորտֆելային ներդրումները և այլ ներդրումները՝ 3.2 տոկոսից մինչև 4.3 տոկոս և 0.0 տոկոսից մինչև 1.9 տոկոս: Վերջինիս պատճառը տնտեսական աճի տեմպերի դանդաղումն էր և դրան համապատասխան՝ Ֆեդերալ պահուստային համակարգի կողմից տոկոսադրույքների նվազեցումը, որը հանգեցրեց ԱՄՆ-ում ուղղակի ներդրումների գրավչության նվազման, իսկ պորտֆելային և այլ ներդրումները աճեցին՝ ի հաշիվ ԱՄՆ պարտքային արժեթղթերում մյուս երկրների (այդ թվում՝ կենտրոնական բանկերի) դոլարային ակտիվների ինտենսիվ կուտակման:

ԱՄՆ զուտ ներդրումային դիրքի պակասուրդը երեք տարվա ընթացքում կտրուկ աճեց. 2000 թվականին 16.2 տոկոս էր (առանց պահուստային ակտիվների՝ 17.5 տոկոս), իսկ 2003 թվականին՝ 24.1 տոկոս (առանց պահուստային ակտիվների՝ 25.8 տոկոս)[14]:

Պահուստների բավարարության ցուցանիշները դրսևորեցին տարբեր զարգացումներ: Ներմուծման՝ ամիսներով հաշվարկված պահուստների մակարդակը փոքր-ինչ աճեց. 0.6 ամսից (2000 թվականին)

---

[13] Զուտ խնայողությունները (համախառն խնայողություններ՝ հանած հիմնական կապիտալի մաշվածք) նշված ժամանակահատվածում նույնպես նվազել են՝ 2000թ. 5.8%-ից 2003թ. հասնելով 1.3%-ի:

[14] Արտաքին պետական պահուստների ցուցանիշները ներկայացված են ըստ վճարային հաշվեկշռի և միջազգային ներդրումային դիրքի վիճակագրության:


մինչև 0.7 ամիս (2003 թվականին): Աճ գրանցվեց նաև դրամական բազայի ծածկույթի ցուցանիշում՝ 11.0 տոկոսից (2000 թվականին) մինչև 11.5 տոկոս (2003 թվականին): Մյուս կողմից, արտաքին պարտքի աճի հետ կապված՝ վատթարացան արտաքին պետական պարտքի ծածկույթի ցուցանիշները՝ պահուստներ/արտաքին պարտքը 6.5 տոկոսից նվազեց մինչև 5.6 տոկոս և արտահանում/ արտաքին պարտքը՝ 103.6 տոկոսից՝ 66.4 տոկոս:

Ինչ վերաբերում է ԱՄՆ դոլարի փոխարժեքին, ապա ուղղակի ներդրումների կրճատումը և ընթացիկ հաշվի պակասուրդի աճը թուլացրին ԱՄՆ դոլարի դիրքերը միջազգային արժութային շուկայում: Բացի դրանից, հանրապետականների վարչակազմը պաշտպանում էր արդյունաբերողների շահերը, և այս տեսակետից, չնայած ԱՄՆ ֆինանսների նախարարը պաշտոնապես չհայտարարեց «ուժեղ դոլարի» քաղաքականությունից հրաժարվելու մասին, սակայն հոգեբանական առումով չզսպեց ԱՄՆ դոլարի փոխարժեքի արժեզրկման տեմպերը:

Արդյունքում՝ արժութային շուկայում ԱՄՆ դոլարի արդյունավետ փոխարժեքը արժեզրկվեց և՛ անվանական (6.8 տոկոս), և՛ իրական արտահայտությամբ (3.4 տոկոս): Քանի որ Հարավարևելյան Ասիայի տարածաշրջանի (Չինաստան, Ճապոնիա, Կորեա, Թայվան, Մալայզիա և այլ երկրներ) արժույթների փոխարժեքները փաստացի հաստատագրված են ԱՄՆ դոլարի նկատմամբ, ապա ԱՄՆ ընթացիկ հաշվի պակասուրդի ճշգրտման ամբողջ ծանրությունը ընկավ եվրոպական արժույթների վրա, որոնց նկատմամբ ԱՄՆ դոլարը արժեզրկվեց շատ ավելի արագ տեմպերով, օրինակ՝ եվրոյի նկատմամբ արժեզրկումը 2001-2003 թվականներին կազմեց 35.5 տոկոս:

ԱՄՆ դոլարի արժեզրկումը, սակայն, չկրճատեց ընթացիկ հաշվի պակասուրդը, ինչպես երևում է վերը բերված ցուցանիշներից, որը, կարծում ենք, օրինաչափ է, քանի որ նշված ժամանակահատվածում կտրուկ աճեց բյուջեի պակասուրդը, և, եթե չլիներ փոխարժեքի արժեզրկումը, ապա ընթացիկ հաշվի պակասուրդը կլիներ ավելի մեծ չափերի:

Գծապատկեր 1. ԱՄՆ իրական արդյունավետ փոխարժեքը (2000=100) և առևտրի հաշվեկշիռը (մլն ԱՄՆ դոլար) 1992-2004 թվականներին



Ֆինանսական հատված

2001-2003թթ. ԱՄՆ-ն իրականացրել է ընդլայնողական դրամավարկային քաղաքականություն: Դիսկոնտային տոկոսադրույքը 2001 թվականի ընթացքում արդեն էապես նվազեցվեց՝ տարվա վերջի դրությամբ կազմելով ընդամենը 1.25 տոկոս՝ տարվա սկզբի 6.0 տոկոսի համեմատ, իսկ 2002 թվականի վերջին այն արդեն կազմում էր 0.75 տոկոս: Ֆեդերալ պահուստային համակարգի նման ակտիվ քաղաքականությունը թույլ չտվեց ԱՄՆ տնտեսությանը իրականացնել «կոշտ վայրէջք» և էապես կրճատեց տնտեսական անկման տևողությունը:

Արագացված էր փողի ագրեգատների աճը՝ M3 զանգվածի միջին աճը 2001-2003 թվականներին կազմեց 7.6 տոկոս, M2 ագրեգատինը՝ 7.1 տոկոս, M1 ագրեգատինը՝ 5.9 տոկոս, փողի բազայինը՝ 6.8 տոկոս: Փողի բազայի աճի և փողի ագրեգատների միջին աճի տեմպերի հավասարության պարագայում դրամական բազմարկիչը էական տատանումներ չունեցավ, և ժամանակահատվածի վերջին M2 ագրեգատի բազմարկիչը կազմեց 8.2՝ ժամանակաշրջանի սկզբի 8.1 ցուցանիշի փոխարեն, իսկ M3 ագրեգատինը՝ 11.9՝ ժամանակաշրջանի սկզբի 11.7 ցուցանիշի փոխարեն:

ՀՆԱ աճի համեմատությամբ փողի ագրեգատների ավելի արագ աճի տեմպերը հանգեցրին փողայնացման գործակիցների որոշակի աճի՝ M2 ագրեգատի գործակիցը 2003 թվականին կազմեց 55.5 տոկոս՝ 2001 թվականի 50.6 տոկոսի փոխարեն, իսկ M3-ինը՝ 80.9 տոկոս՝ 73.0 տոկոսի փոխարեն:

Ընդհանուր առմամբ, կարելի է փաստել, որ պետության ակտիվ խթանող հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունները դրական ազդեցություն ունեցան տնտեսական անկումը մեղմելու և կարճատև դարձնելու առումով, սակայն էլ ավելի խորացրին ԱՄՆ տնտեսության կառուցվածքային այնպիսի հիմնախնդիրները, ինչպիսիք են՝ բյուջեի և ընթացիկ հաշվի մեծ պակասուրդները (որը, կարծում ենք, կլիներ ավելի մեծ, եթե ԱՄՆ դոլարը մյուս արժույթների նկատմամբ չարժեզրկվեր), խնայողությունների անբավարար մակարդակը, տնտեսության պարտքի մեծ ծավալները:

ԱՄՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ 2004 ԹՎԱԿԱՆԻՆ ԵՎ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ[15]

2004 թվականին ԱՄՆ տնտեսությունում շարունակեց դրսևորվել հարաբերականորեն բարձր տնտեսական աճ. ըստ 2004 թվականի արդյունքների՝ այն կազմել է 4.4 տոկոս, իսկ գնաճը, թեև որոշակի արագացել է (2.7 տոկոս), սակայն այն միայն մասամբ է պայմանավորված բնականոն գնաճով (1%-ից մինչև 2%), իսկ մեծ մասը նավթի միջազգային գների աճի հետևանք է:

Սակայն ցիկլիկ ուժեղ տնտեսությունում ավելի ցայտուն դրսևորվեցին կառուցվածքային հիմնախնդիրները, որոնք կարող են լուրջ վտանգներ առաջացնել տնտեսության համար միջին- և երկարաժամկետ հատվածներում: Ինչպես արդեն նշվել է, այդ կառուցվածքային հիմնախնդիրներից են.

- ազգային և անձնական խնայողությունների ցածր մակարդակը,
- ընթացիկ հաշվի ռեկորդային պակասուրդը,
- բյուջեի պակասուրդի մեծ չափերը,
- տնային տնտեսությունների բացասական ֆինանսական հաշվեկշիռը (ծախսերի գերազանցումը եկամուտներին) և, հետևաբար, նրանց պարտքի արագ աճը, որը կարող է տնտեսական անկման դեպքում առաջացնել պարտքի սպասարկման դժվարություններ,
- անշարժ գույքի գների կտրուկ աճը, և բարձր աճի սպասումների առկայությունը:

Ըստ տնտեսագետների գնահատումների՝ այս հիմնահարցերը, մասնավորապես՝ անշարժ գույքի գների «ուռճացումը», կարող են ԱՄՆ տնտեսության համար լուրջ խնդիրներ առաջացնել արդեն 2005 թվականի ընթացքում: Ընդ որում, ըստ Ֆեդերալ պահուստային համակարգի գնահատումների՝ անշարժ գույքի վարկերի աճը հանգեցնում է մասնավոր հատվածի սպառման հակվածության աճի և խնայողությունների տեսակարար կշռի նվազման, որն էլ 0.7-0.85 R^2 ճշգրտությամբ պայմանավորում է ԱՄՆ ընթացիկ հաշվի պակասուրդը՝ որպես խնայողությունների և ներդրումների բացասական հաշվեկշիռ[16]:

Ընթացիկ հաշվի պակասուրդը 2004 թվականին հասավ 665.9 մլն ԱՄՆ դոլարի (ՀՆԱ 5.7 տոկոսը), իսկ 2005 թվականին, ըստ HSBC բանկի գնահատումների, կարող է կազմել մոտ 700 մլրդ ԱՄՆ դոլար (ՀՆԱ 6 տոկոսից ավելի), որի ֆինանսավորումը կարող է հիմնախնդիրներ առաջացնել, քանի որ մասնավոր պորտֆելային ներդրումների հոսքը կազմում է ՀՆԱ ընդամենը 2-3 տոկոսը, իսկ ուղղակի ներդրումների առումով գրանցվում է զուտ արտահոսք, և նույնիսկ հայտարարված կապիտալի ամնիստիան կարող է չօգնել[17]: Պետական հատվածի մասով ներդրումներ ներգրավելու հնարավորությունները նույնպես սահմանափակ են, քանի որ պետբյուջեն արդեն իսկ խոր պակասուրդ ունի: Այսպիսով, ակնկալվում է, որ ԱՄՆ տնտեսությունը կունենա վճարային հաշվեկշռի պակասուրդ:

Եթե ԱՄՆ-ն լիներ «նորմալ» տնտեսություն, ապա նրա արտաքին պետական պահուստները կզրոյանային, և տեղի կունենար դոլարի արժեզրկում, տոկոսադրույքների կտրուկ աճ և տնտեսությունը ստիպված պետք է ընկներ ռեցեսիայի մեջ՝ ավելի կայուն հավասարակշռության հասնելու համար:

---

[15] Այս գլխում ԱՄՆ տնտեսության վերլուծությունը հիմնականում կատարվել է HSBC բանկի «Սահում բարակ սառույցի վրայով. ԱՄՆ տնտեսության 2005 թվականի հեռանկարները» հաշվետվության տվյալների հիման վրա: Հունվար, 2005 թ.

[16] Ըստ HSBC բանկի 2005 թվականի փետրվարի 23-ին հրապարակած «Արդյոք սպառողական վարկերի տոնը կշարունակվի. ԱՄՆ տնտեսության վերլուծություն» հաշվետվության:

[17] Ըստ հոկտեմբերին ԱՄՆ ընդունած օրենքի (American Jobs Creation Act)՝ այն ընկերությունները, որոնք աշխատատեղերի ստեղծման որոշակի քայլեր կձեռնարկեն, կարող են ազատ օգտագործել իրենց օֆշորային միջոցները՝ պետությանը վճարելով այդ գումարների ընդամենը 5.25 տոկոսը՝ ի տարբերություն միջոցների օրինականացման 20-25 տոկոս դրույքաչափի: Ըստ էության, սա կապիտալի ամնիստիայի միջոցառում է, որը նպատակաուղղված է միջոցների վերադարձին ԱՄՆ տնտեսություն և փորձագետների կարծիքով պայմանավորված է ընթացիկ հաշվի մեծ պակասուրդով: Այս օրենքի ընդունման արդյունքում կապիտալ ներհոսքը կարող է կազմել 75 մլրդ ԱՄՆ դոլարից (դեղագործական ընկերությունների՝ արդեն հայտարարած վերադարձ) մինչև 140 մլրդ ԱՄՆ դոլար (եթե մյուս ճյուղերի ընկերությունները նույնպես վերադարձնեն իրենց կապիտալները՝ ըստ ԱՄՆ կառավարության ենթադրությունների): Ամերիկյան ընկերությունների ընդհանուր օֆշորային գումարները գնահատվում են մոտ 700 մլրդ դոլար, սակայն, փորձագետների կարծիքով, ամնիստիայի հնարավորությունից կօգտվեն միայն դեղագործական ընկերությունները, քանի որ դա նրանց համար հնարավորություն է՝ հարթելու վերջին շրջանում ԱՄՆ կառավարության հետ առաջացած վեճերը՝ կապված դեղորայքի հետ:

Բայց ԱՄՆ տնտեսությունը «նորմալ» տնտեսություն չէ, քանի որ թողարկում է աշխարհի համար պահուստային արժույթ: Այսպիսով, հնարավոր է ԱՄՆ պահուստների նվազման փոխարեն ավելանան մնացած երկրների կենտրոնական բանկերի դոլարային պահուստները (մասնավորապես՝ ասիական, քանի որ նրանք թույլ չեն տալիս սեփական արժույթների զգալի արժևորում ԱՄՆ դոլարի նկատմամբ): Սակայն այն նույնպես ունի որոշակի ոչ բացարձակ, բայց արդյունավետ սահման, այն է՝ մնացած երկրների գնաճի արագացումը: Կենտրոնական բանկերի արտաքին պահուստների կուտակումը նշանակում է փողի բազայի ավելացում, որը այդ երկրներում կհանգեցնի գնաճի:

Եթե փորձենք գնահատել, թե արդյոք ԱՄՆ դոլար կուտակող հիմնական երկրները հասել են իրենց արդյունավետ սահմաններին, ապա կարող ենք փաստել՝ դեռ ոչ:

1. Չինաստանի գնաճը 2004 թվականի կեսերին հասավ 5.3 տոկոսի, ապա նվազեց, և տարեվերջին գրանցվեց 3 տոկոսից ցածր մակարդակ՝ ինչը կարծիք ձևավորեց, որ արդյունավետ սահմանը դեռևս հեռու է: Բացի այդ, Չինաստանի կենտրոնական բանկը իրականացնում էր յուանի ավելցուկի չեզոքացում, որի պայմաններում դրամական բազայի աճը 2004 թվականի սեպտեմբերին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, պահպանվում էր 15 տոկոսի շրջանակներում, մինչդեռ արտաքին պետական պահուստների աճը կազմում էր մոտ 35 տոկոս[18]:
2. Ճապոնիան դեռևս բավականին առանձնահատուկ իրավիճակում է՝ գնանկման մեջ: Քանի դեռ Ճապոնիան մնում է «իրացվելիության ծուղակում», դրամական բազայի ցանկացած ծավալների աճը չի հանգեցնի բարձր գնաճի, ինչը ճապոնական տնտեսական քաղաքականություն իրականացնողներին թույլ է տալիս առանց սահմանափակումների գնել ԱՄՆ Գանձապետարանի արժեթղթեր: Սակայն, ըստ որոշ տեղեկատվական աղբյուրների տվյալների,[19] ճապոնական կառավարությունը արդեն տոկոսադրույքների բարձրացման որոշակի նախադրյալներ է տեսնում: Սա կարող է լինել առաջին նախանշանը՝ արդյունավետ սահմանին հասնելու իմաստով:

Սակայն դոլարի պահանջարկի առումով ասիական բանկերի աջակցությունը դեռևս չի նշանակում, որ դոլարի փոխարժեքն արժևորվելու է, ընդհակառակը, ասիական բանկերի կողմից դոլարի գնումը դրա արժեզրկման հետևանքն է: Քանի որ ԱՄՆ դոլարի արժեզրկումը պայմանավորված է ԱՄՆ-ում ոչ բավարար կապիտալ ներհոսքով, ապա, ըստ դասական տեսությունների, պետք է տեղի ունենա ԱՄՆ տոկոսադրույքների աճ, որպեսզի նման պակասուրդը լրացվի: Սակայն ԱՄՆ տնտեսության առանձնահատկություններից ելնելով՝ իրավիճակը կարող է այլ հետևանքներ ունենալ: Ֆեդերալ պահուստային համակարգը 2004 թվականի հունիսից 2005 թվականի հունիսն ընկած ժամանակահատվածում արդեն 9 անգամ բարձրացրել է ֆեդերալ ֆոնդերի տոկոսադրույքը՝ 1.00 տոկոսից մինչև 3.25 տոկոս, սակայն ԱՄՆ Գանձապետարանի երկարաժամկետ արժեթղթերի տոկոսադրույքը մնացել է նույն մակարդակի վրա, բարձրանում են միայն կարճաժամկետ տոկոսադրույքները[20]: Քանի որ ԱՄՆ դոլարի արժեզրկման հետևանքով մյուս երկրների կողմից պահուստների կուտակումը հանգեցնում է մնացած աշխարհի դրամավարկային պայմանների ընդլայնմանը, ուստի ԱՄՆ տոկոսադրույքների աճի փոխարեն հնարավոր է դրսևորվեն մնացած աշխարհի տոկոսադրույքների նվազման երևույթներ:

Ըստ ամենայնի, մնացած աշխարհը այնքան էլ հնարավորություն չունի նվազեցնելու տոկոսադրույքները: HSBC բանկի տվյալների համաձայն՝ իրական տոկոսադրույքները աշխարհի երկրների մեծամասնությունում արդեն բավականին ցածր են, որոշ երկրներում՝ նույնիսկ բացասական մակարդակի վրա:

Փորձագետները գտնում են, որ լուծումը ՖՊՀ-ի կողմից ներկա ֆինանսական իրավիճակի, մասնավորապես՝ գնաճի անտեսումն է և կենտրոնացումը ապագա ֆինանսական կայունության գաղափարի վրա: Առավել ևս, որ ԱՄՆ դոլարի արժեզրկումը, ըստ HSBC բանկի գնահատումների, չի առաջացնի գնաճային ճնշումներ, քանի որ աշխատուժի շուկան դեռևս մնում է համեմատաբար բարձր գործազրկության ճնշման տակ: Ֆեդերալ պահուստային համակարգի՝ տնտեսության մեջ «ուռճացումների» առաջացմանը սպասելու և հետո դրանց արդյունքների դեմ պայքարելու քաղաքականությունը կարող է հետագայում ձախողվել: Մյուս կողմից, Ալեն Գրինսպենը ներկայացնում և հիմնավորում է այն կարծիքը, որ գնային «ուռճացումները» հնարավոր է բացահայտել միայն դրանց «պայթելու» դեպքում:

---

[18] Ավելցուկ միջոցների չեզոքացումը տեղի է ունենում Կառավարության հաշվի և Կենտրոնական բանկի սեփական արժեթղթերի թողարկման միջոցով:

[19] OECD: "Economic Survey of Japan", 20-Jan-2005, Rosbusinessconsulting և IT-Trade հրապարակումներ:

[20] HSBC բանկի և "The Economist" պարբերականի տնտեսագետները մեկնաբանում են, որ ԱՄՆ մասնավոր հատվածի պարտքի մեծ չափերը տնտեսական առումով հնարավոր չեն դարձնում երկարաժամկետ տոկոսադրույքների բարձրացումը, քանի որ նման ընթացքը կարող է հանգեցնել չվճարումների ճգնաժամի:

Ըստ HSBC բանկի փորձագետների՝ 2006 թվականի սկզբին սպասվող դժվարությունների կանխատեսման աղբյուրը տնտեսագետների կողմից լայնորեն ընդունված այն տեսակետն է, ըստ որի՝ «ուռճացումները» հիմնախնդիրներ են առաջացնում, երբ Կենտրոնական բանկերը սկսում են կոշտ դրամավարկային քաղաքականություն վարել, որի հետևանքով տոկոսադրույքները արագ տեմպերով բարձրանում են: Քանի որ 2004 թվականից սկսած տեղի է ունենում դրամավարկային քաղաքականության կոշտացում, և տոկոսադրույքների լոկալ առավելագույն մակարդակը կարծանագրվի 2005 թվականի երկրորդ - 2006 թվականի առաջին կեսին, ապա հենց այդ ժամանակաշրջանի համար ԱՄՆ տնտեսությունում անշարժ գույքի գների հետ կապված հիմնախնդիրների առաջացման հավանականությունը գնահատվում է ամենաբարձրը կարճաժամկետ հատվածում[21]:

Արդյունքում, ըստ ոմանց կանխատեսման, անգամ 2005 թվականի վերջերից, երբ կարող է տեղի ունենալ անշարժ գույքի գների նվազում և Ֆեդերալ պահուստային համակարգը նորից ստիպված կլինի սկսել տոկոսադրույքների նվազեցման նոր փուլ, ԱՄՆ-ում տոկոսադրույքները կարող են բավականին ցածր մակարդակ ունենալ, և ՖՊՀ-ն կարող է զրկվել տոկոսադրույքների իջեցման լայն հնարավորություններից:

ԱՄՆ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐԸ 1994-2003 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Արտահանում

ԱՄՆ ապրանքների արտահանումը 1994-2003 թվականներին աճել է միջինը 4.1 տոկոսով և 2003 թվականին կազմել 723.7 մլրդ ԱՄՆ դոլար՝ 1994 թվականին գրանցված 512.6 մլրդ ԱՄՆ դոլարի փոխարեն: Բնականաբար, արտահանման զարգացումները կրկնել են արդյունաբերության մեջ գրանցված միտումները. արտահանման ծավալներն ավելացել են 1995-1997 և 2000 թվականներին և կրճատվել 2001-2002 թվականներին:

Արտահանումը ըստ գործընկեր երկրների ունեցել է հետևյալ կառուցվածքը՝ 1994-2003 թվականների արտահանման միջին տվյալներով՝ ամենամեծ կշիռը ունեցել են NAFTA-ի անդամ երկրները (34.6 տոկոս)՝ Կանադան (22.7 տոկոս) և Մեքսիկան (11.9 տոկոս), երկրորդը Հարավարևելյան Ասիայի երկրներն են (25.8 տոկոս), այդ թվում՝ Ճապոնիան (8.8 տոկոս), Հարավային Կորեան (3.4 տոկոս), Թայվանը (2.8 տոկոս), Սինգապուրը և Չինաստանը (յուրաքանչյուրը՝ 2.4 տոկոս), երրորդը Եվրոմիության երկրներն են (21.6 տոկոս), այդ թվում՝ մասնավորապես Միացյալ Թագավորությունը (5.2 տոկոս), Գերմանիան (3.8 տոկոս), Նիդեռլանդները (2.8 տոկոս), Ֆրանսիան (2.5 տոկոս), այնուհետև՝ Լատինական Ամերիկայի երկրներն են (7.9 տոկոս), Ավստրալիան և Նոր Զելանդիան (2.0 տոկոս): ԱՊՀ երկրների ընդհանուր կշիռը արտահանման մեջ կազմում է ընդամենը 0.6 տոկոս, որից Ռուսաստանը՝ 0.4 տոկոս[22]:

1994-2003 թվականների գումարային տվյալներով (HS համակարգի երկնիշ դասակարգմամբ), ըստ հիմնական ապրանքախմբերի ԱՄՆ արտահանման մեծ մասը կազմում են.

1. Միջուկային ռեակտորներ, կաթսաներ, սարքավորումներ և մեխանիկական մասեր (կոդ 84) – 19.6 տոկոս,
2. Էլեկտրական մեքենաներ և սարքավորումներ, ձայնագրող ապարատներ և դրանց մասեր (կոդ 85) – 16.4 տոկոս,
3. Վերգետնյա տրանսպորտի միջոցներ և մասեր (կոդ 87) – 8.7 տոկոս,
4. Թռչող ապարատներ և դրանց մասեր (կոդ 88) – 6.0 տոկոս,
5. Օպտիկական, լուսանկարչական, չափիչ, բժշկական, վիրաբուժական սարքեր և ապարատներ, դրանց մասեր և հարմարանքներ (կոդ 90) – 5.4 տոկոս:

Փաստորեն արտահանման հիմնական մասը (մոտ 60 տոկոսը) կազմում են մեքենաները, սարքավորումները, տրանսպորտային միջոցները, սարքեր և ապարատները[23]:

Ներմուծում

ԱՄՆ ապրանքների ներմուծումը 1994-2003 թվականներին միջին հաշվով ավելացել է 7.6 տոկոսով՝ 2003 թվականին կազմելով 1259.4 մլրդ ԱՄՆ դոլար՝ 1994 թվականին գրանցված 663.3 մլրդ ԱՄՆ դոլարի

---

[21] Միևնույն եզրահանգման է գալիս նաև Rosbusinessconsulting տնտեսական տեղեկատվական գործակալության վերլուծական բաժինը՝ իր Economics & Markets-Weekly շաբաթական վերլուծական պարբերականում. ակնկալվում է ԱՄՆ տնտեսական աճի էական դանդաղում 2005 թվականի երկրորդ կեսին՝ տարեկան միջին 2 տոկոս:

Նույն կարծիքն է արտահայտված The Economist պարբերականի 2005 թվականի հունվարի 29-ի համարում հրապարակված «Առջևում փոթորկային ամպեր են» հոդվածում:

[22] Ըստ երկրների ԱՄՆ արտահանման տվյալները ներկայացված են հավելված 5-ում:

[23] Ըստ ապրանքախմբերի ԱՄՆ արտահանման տվյալները ներկայացված են հավելված 6-ում:

փոխարեն: Ներմուծման միտումներն ավելի մոտ են եղել սպառման զարգացումներին. աճն ավելի մեծ է եղել, քան արտահանման ու ՀՆԱ ցուցանիշներինը:

1994-2003 թվականների ներմուծման միջին տվյալներով, գործընկեր երկրների կառուցվածքում ամենամեծ տեսակարար կշիռն ունեն Հարավարևելյան Ասիայի երկրները (36.1 տոկոս), այդ թվում՝ Ճապոնիան (12.7 տոկոս), Չինաստանը (8.5 տոկոս), Թայվանը (3.3 տոկոս), Հարավային Կորեան (3.0 տոկոս), երկրորդը NAFTA-ի երկրներն են (29.3 տոկոս)՝ Կանադան (18.9 տոկոս) և Մեքսիկան (10.4 տոկոս), երրորդը՝ Եվրոմիության երկրները (19.2տոկոս), այդ թվում՝ Գերմանիան (5.1 տոկոս), Միացյալ Թագավորությունը (3.6 տոկոս), Ֆրանսիան (2.5 տոկոս), Իտալիան (2.2 տոկոս), չորրորդը՝ Լատինական Ամերիկայի երկրները (5.8 տոկոս), Ավստրալիան և Նոր Զելանդիան (0.7 տոկոս) և ԱՊՀ երկրները (0.7 տոկոս), այդ թվում Ռուսաստանը՝ 0.6 տոկոս[24]:

1994-2003 թվականների գումարային տվյալներով (HS համակարգի երկնիշ դասակարգմամբ), ըստ հիմնական ապրանքախմբերի ԱՄՆ ներմուծման մեծ մասը կազմում են.

1. Միջուկային ռեակտորներ, կաթսաներ, սարքավորումներ և մեխանիկական մասեր (կոդ 84) – 15.3 տոկոս,
2. էլեկտրական մեքենաներ և սարքավորումներ, ձայնագրող ապարատներ և դրանց մասեր (կոդ 85) – 14.0 տոկոս,
3. Վերգետնյա տրանսպորտի միջոցներ և մասեր (կոդ 87) – 13.8 տոկոս,
4. Վառելանյութեր, նավթ և նավթամթերք, բիտումային միջոցներ, մոմանյութեր (կոդ 27) – 9.6 տոկոս,
5. Օպտիկական, լուսանկարչական, չափիչ, բժշկական, վիրաբուժական սարքեր և ապարատներ, դրանց մասեր և հարմարանքներ (կոդ 90) – 3.0 տոկոս:

Ներմուծման կառուցվածքում նույնպես հիմնական մասը կազմում են մեքենաները, սարքավորումները, տրանսպորտային միջոցները, սարքեր և ապարատները (մոտ 50 տոկոսը) և վառելիքաէներգետիկ ռեսուրսները (մոտ 10 տոկոս)[25]:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԵՎՏՈՒՐԸ ԱՄՆ-Ի ՀԵՏ

Հայաստանի ապրանքաշրջանառությունը ԱՄՆ-ի հետ 1998-2004 թվականներին ունեցել է ավելացման միտում (աղյուսակ 1):

Աղյուսակ 1. ՀՀ արտաքին առևտուրը ԱՄՆ-ի հետ

մլն ԱՄՆ դոլար

	1998	1999	2000	2001	2002	2003	2004[26]
Արտահանում	11.6	16.0	37.9	52.3	46.2	55.0	70.3
Ներմուծում	96.3	85.7	102.7	84.2	52.7		
Մարդասիրական օգնություն	65.6	50.5	58.0	26.8	4.8		
Ներմուծում (առ. մարդ. օգ.)	30.7	35.2	44.7	57.4	47.9	80.3	96.4
Առևտրաշրջանառություն (առ. մարդ. օգ.)	42.3	51.2	82.5	109.7	94.2	135.3	166.7
Հաշվեկշիռ (առ. մարդ. օգ.)	-19.2	-19.2	-6.8	-5.1	-1.7	-25.3	-26.1

1998-1999 թվականներին գրանցված առևտրի պակասուրդի[27] 19 մլն ԱՄՆ դոլարը գերազանցող պակասուրդը բարելավվելով՝ 2000-2002թթ., 2003-2004թթ. կրկին խորացավ և կազմեց 25-26 մլն ԱՄՆ դոլար:

2003 թվականին արտահանման և ներմուծման ցուցանիշները ըստ առանձին ապրանքախմբերի ներկայացված են աղյուսակ 2-ում[28]:

---

[24] Ըստ երկրների ԱՄՆ ներմուծման տվյալները ներկայացված են հավելված 7-ում:

[25] Ըստ ապրանքախմբերի ԱՄՆ ներմուծման տվյալները ներկայացված են հավելված 8-ում:

[26] 2004 թվականի մաքսային վիճակագրության տվյալները հավաքագրված են եղել «ըստ ծագման երկրի» սկզբունքով, որի հետևանքով ներմուծման 2004 թվականի և 2003 թվականի տվյալները անհամադրելի են: Այդ իսկ պատճառով 2004 թվականի ներմուծման ծավալի հաշվարկման համար կատարվել է մոտարկում՝ որպես հիմք ընդունելով 2004 թվականին ֆիզիկական անձանց անունով ԱՄՆ կատարված փոխանցումների և 2003 թվականի տվյալների հարաբերությունը:

[27] Ներմուծման, առևտրի պակասուրդի և առևտրաշրջանառության ցուցանիշները ներկայացված են առանց մարդասիրական օգնության ծավալների:

[28] 1998-2003 թվականների արտահանման և ներմուծման տվյալները ըստ ապրանքախմբերի ներկայացված են հավելվածներ 9-ում և 10-ում:

Աղյուսակ 2. ՀՀ արտաքին առևտուրը ԱՄՆ-ի հետ՝ ըստ ապրանքախմբերի (2003 թ.)


	Արտահանում		Ներմուծում		Հաշվեկշիռ
	հազար ԱՄՆ դոլար	Կշիռը (%)	հազար ԱՄՆ դոլար	Կշիռը (%)	հազար ԱՄՆ դոլար
Կենդանիներ և կենդանական ծագման ապրանքներ	459.1	0.8	6349.3	7.9	-5890.2
Բուսական ծագման ապրանքներ	29.9	0.1	2234.8	2.8	-2204.9
Յուղեր և ճարպեր	0.0	0.0	4037.2	5.0	-4037.2
Պատրաստի սննդի արտադրանք	3413.3	6.2	2328.4	2.9	1085.9
Հանքահումքային մթերք	244.2	0.4	9420.0	11.7	-9175.8
Քիմիական արտադրության ապրանքներ	48.7	0.1	3791.8	4.7	-3743.1
Պլաստմասսա, կաուչուկ, ռետին	243.2	0.4	2330.8	2.9	-2087.6
Կաշի և դրանցից իրեր	26.3	0.0	8.6	0.0	17.7
Փայտ և փայտյա իրեր	1.2	0.0	565.8	0.7	-564.6
Թուղթ և թղթյա իրեր	182.0	0.3	1017.7	1.3	-835.7
Մանածագործական իրեր	8670.5	15.8	7584.3	9.4	1086.2
Կոշկեղեն, հովանոցներ, գլխարկներ	32.0	0.1	123.3	0.2	-91.3
Իրեր քարից, գիպսից, ցեմենտից	465.5	0.8	461.2	0.6	4.3
Թանկարժեք քարեր և մետաղներ	36698.6	66.7	20400.6	25.4	16298.0
Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր	1442.6	2.6	2673.2	3.3	-1230.6
Մեքենաներ և սարքավորումներ	991.8	1.8	9399.2	11.7	-8407.4
Տրանսպորտային միջոցներ	17.2	0.0	2239.8	2.8	-2222.6
Սարքեր և ապարատներ	839.0	1.5	3684.7	4.6	-2845.7
Կահույք, խաղալիքներ	1214.2	2.2	1652.6	2.1	-438.4
Արվեստի ստեղծագործություններ և հնաոճ իրեր	0.2	0.0	0.1	0.0	0.1
Ընդամենը	***55020.3***	***100.0***	***80303.4***	***100.0***	***-25283.1***

Ըստ աղյուսակ 2-ի տվյալների՝ 2003 թվականին հիմնական ապրանքախումբը և՛ արտահանման, և՝ ներմուծման մեջ Թանկարժեք քարեր և մետաղներն են, որը արտահանման մեջ կազմում է մոտ 2/3 մասը, իսկ ներմուծման մեջ՝ ավելի քան 1/4-ը: Արտահանման մեջ մեծ կշիռ են կազմում նաև Մանածագործական իրեր ապրանքախումը (15.8 տոկոս) և Պատրաստի սննդի արտադրանքը (6.2 տոկոս), իսկ ներմուծման մեջ՝ Հանքահումքային մթերքները (11.7) և Մեքենաներ և սարքավորումները (11.7 տոկոս):

2003 թվականին հիմնականում ավելացել է Թանկարժեք քարեր և մետաղներ, Պատրաստի սննդի արտադրանք և Մանածագործական իրեր ապրանքախմբերի արտահանումը, իսկ պակասուրդը արձանագրվել է Հանքահումքային մթերքներ, Մեքենաներ և սարքավորումներ և Կենդանիներ և կենդանական ծագման ապրանքներ ապրանքախմբերի գծով:

ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար իրական փոխարժեքը 1998-2002 թվականներին էապես արժեզրկվել է, իսկ 2003-2004 թվականներին՝ զգալի արժևորվել, ինչպես պատկերված է գծապատկեր 2-ում:

Գծապատկեր 2. ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար երկկողմանի իրական փոխարժեքը 1998-2004 թվականներին (աճը նշանակում է արժևորում, 1997 թ. = 100)




1999-2002 թվականներին ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար երկկողմանի իրական փոխարժեքի արժեզրկման միջին տեմպը կազմել է 4.5 տոկոս: 2003-2004թթ. արժևորումը պայմանավորված էր Հայաստանում գրանցված բարձր գնաճով և ՀՀ դրամի աննախադեպ արժևորմամբ: Ստորև ներկայացված է Հայաստանի և ԱՄՆ-ի գնաճի և փոխարժեքի վարքագիծը տարիների ընթացքում:

Աղյուսակ 3. Հայաստանի և ԱՄՆ-ի երկկողմանի իրական փոխարժեքը, գնաճը և անվանական փոխարժեքը 1999-2004 թվականներին

	1999	2000	2001	2002	2003	2004
Իրական փոխարժեք (%)	-7.0	-4.7	-2.5	-3.7	1.4	13.2
Անվանական փոխարժեք (%)	-5.6	-0.8	-2.8	-3.2	-0.9	8.8
Գնաճը Հայաստանում (%)	0.7	-0.8	3.2	1.1	4.7	7.0
Գնաճը ԱՄՆ-ում (%)	2.2	3.4	2.8	1.6	2.3	2.7

Գծապատկեր 3. Հայաստանի և ԱՄՆ-ի իրական առևտուրը և իրական փոխարժեքը 1998-2004 թթ.




Գծապատկերից երևում է, որ ԱՄՆ արտահանման և ներմուծման իրական ծավալներն ունեն միևնույն միտումները, ինչը, կարծում ենք, բացատրվում է Հայաստանի արտահանման և ներմուծման ընդհանուր միտումներով:

Այդ իսկ պատճառով, փորձ արվեց դիտարկել միայն արտահանման, ներմուծման և իրական փոխարժեքի շարքերի ճեղքվածքները (առանց միտումները հաշվի առնելու): Այս վարկածը հիմնված է փոփոխականների՝ կայուն կառուցվածքային միտումներ ունենալու ենթադրության վրա, որը պայմանավորված է տնտեսության կառուցվածքային զարգացմամբ: Տնտեսության զարգացմանը զուգընթաց, ակնկալվում է, որ պետք է կայուն աճ արձանագրեն և՛ արտահանման, և՛ ներմուծման ծավալները (առավել ևս, որ Գծապատկեր 3-ից երևում է, որ դրանց գծային միտումները միմյանց մոտ կլինեն): Այս դեպքում իրական փոխարժեքը ևս պետք է հաշվարկել ըստ գծային միտումից նրա շեղման ցուցանիշի: Այսպես, եթե փորձենք բացատրել, թե ինչու է իրական փոխարժեքը վերջին տարիներին ունեցել նվազման միտում, ապա կարող ենք հանգել նույնիսկ մեթոդաբանական խնդիրների, օր.՝ արտահանելի-ոչ արտահանելի ապրանքների գների մեթոդով հաշվարկված իրական փոխարժեքը ունի արժևորման միտում, նույնն էլ, կարծում ենք, կունենա միավոր աշխատուժի արժեքով հաշվարկված իրական փոխարժեքը: Սակայն նման խնդիրները չպետք է ազդեն իրական փոխարժեքի ճեղվածքների (միտումից շեղման) ուղղությունների և չափերի վրա և, այդ իսկ պատճառով, կարող են հիմք հանդիսանալ վերլուծությունների համար:

Գծապատկեր 4-ում ներկայացված են իրական փոխարժեքի և իրական արտահանման և ներմուծման ճեղքվածքները՝ ինդեքսներից շեղումներով՝ 2001 թվականի ցուցանիշը ընդունելով որպես բազիսային:


Գծապատկեր 4. Իրական փոխարժեքի, իրական արտահանման (առանց ադամանդի) և ներմուծման շարժը (2001թ.= 100)



Քանի որ թվային շարքերը շատ կարճ են, ուստի կապերը բացահայտելու համար փոփոխականների ճեղքվածքները մոտարկել ենք նույն ֆունկցիաներով: Որպես մոտարկման ֆունկցիայի տեսք ընտրվեց քառակուսային ֆունկցիան, քանի որ գծապատկերի տեսքից այն ավելի ճիշտ է թվում:

Գծապատկեր 5-ում ներկայացված են ճեղքվածքների մոտարկման ֆունկցիաների տեսքերը, իսկ աղյուսակ 4-ում՝ դրանց բանաձևերը և R^2 ցուցանիշները:

Գծապատկեր 5. Արտահանման, ներմուծման և իրական փոխարժեքների գծային միտումներից ճեղքվածքների մոտարկման ֆունկցիաները



Աղյուսակ 4. Իրական փոխարժեքի, իրական արտահանման և ներմուծման ճեղքվածքների մոտարկումները

	ax^2	bx	c	R
Իրական փոխարժեք	1.5719	-12.575	18.863	0.8738
Իրական արտահանում	-4.7621	38.097	-57.145	0.5301
Իրական ներմուծում	3.3479	-26.783	40.175	0.4229

Գծապատկեր 5-ից հստակ երևում է, որ իրական փոխարժեքի ճեղքվածքը հակադարձ համեմատական է իրական արտահանման ճեղքվածքին և ուղիղ համեմատական՝ իրական ներմուծման ճեղքվածքին: Դրանից ելնելով՝ հաշվարկել ենք առաձգականությունները՝ ըստ վերը նշված ֆունկցիաների՝ միջինացնելով ըստ տարիների (արդյունքները ամփոփված են աղյուսակ 5-ում):

Աղյուսակ 5. Իրական փոխարժեքի, իրական արտահանման և ներմուծման տոկոսային շեղումները գծային միտումներից և արտաքին առևտրի առաձգականությունները

	1998	1999	2000	2001	2002	2003	2004	Միջին	Ըստ ֆունկցիաների
Տոկոսային շեղումներ									
Իրական փոխարժեք	7.4	0.0	-4.6	-6.2	-4.7	0.0	8.1	0.0	
Իրական արտահանում	-40.0	0.0	20.4	25.4	17.8	0.0	-26.3	-0.4	
Իրական ներմուծում	22.0	0.0	-9.7	-11.4	-7.7	0.0	10.6	0.5	
Առաձգականություն									
Արտահանում	-5.4	1.6	-4.5	-4.1	-3.8	1.2	-3.3	-2.6	-3.0
Ներմուծում	3.0	1.2	2.1	1.9	1.6	0.7	1.3	1.7	2.1

Աղյուսակ 5-ից կարող ենք անել հետևյալ եզրակացությունները.

1. Արտահանման միջին և ժամանակահատվածի վերջի (2004 թվականի) առաձգականությունները բավականին բարձր են ներմուծման առաձգականությունների համեմատ, չնայած երկուսն էլ բավականին զգայուն են,
2. Ե՛վ արտահանման, և՛ ներմուծման առաձգականությունները նվազում են ժամանակի հետ:

Առաձգականության բարձր գործակիցները, ըստ մեր ենթադրության, բացատրվում են նրանով, որ ԱՄՆ ապրանքները եզակի չեն մյուս երկրների ապրանքների համեմատությամբ (նկատի ունենք հիմնականում եվրոպական երկրները), այդ իսկ պատճառով, կրելով ընդհանուր արտահանման և ներմուծման ծավալները պայմանավորող գործոնների ազդեցությունը, ԱՄՆ արտահանվող և ԱՄՆ-ից ներմուծվող ապրանքների ծավալները հիմնականում ենթարկվում են փոխարինման էֆեկտի:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընդհանուր առմամբ կարելի է անել հետևյալ եզրակացությունները.

1. ԱՄՆ տնտեսության ազդեցությունը Հայաստանի վրա ոչ միայն ուղղակի է, այլև անուղղակի՝ պայմանավորված համաշխարհային տնտեսության վրա ունեցած ազդեցությամբ (օրինակ՝ հիմնական հումքային ապրանքների գների, դոլարային կապիտալ ներհոսքի, համաշխարհային տոկոսադրույքների և այլ գործոնների փոփոխության միջոցով), որոնց շատ դժվար է գնահատականներ տալ:
2. ԱՄՆ-ի հետ Հայաստանի արտահանման և ներմուծման իրական ծավալները փոփոխվում են նույն միտումներով, ինչ որ՝ Հայաստանի ընդհանուր առևտրի ծավալների փոփոխությունն է: Վերջինս պայմանավորված է նաև ՀՀ տնտեսության (արտահանման առաջարկի) և եկամուտների (ներմուծման պահանջարկի) բարձր աճով:
3. ԱՄՆ հետ արտաքին առևտրի վրա ազդեցություն ունեն նաև իրական փոխարժեքի շարժերը: Ներմուծման և արտահանման միտումներից շեղումները բավականին զգայուն են իրական փոխարժեքի միտումից շեղումների նկատմամբ: Վերջինս նշանակում է, որ իրական փոխարժեքը միտումից բարձր (արժեզրկված) լինելու ժամանակ աճում է արտահանումը և կրճատվում ներմուծումը: Դա էլ դրսևորվել է ԱՄՆ-ի հետ առևտրային հաշվեկշռի վարքագծում: 1998-2002թթ. ԱՄՆ-ի հետ արտաքին առևտրի պակասուրդը կրճատվել է, այնուհետև նորից խորացել, ինչը համահունչ է մինչև 2002թ. փոխարժեքի իրական արժեզրկմանը, այնուհետև՝ արժեքավորմանը: Ուստի 2005թ-ին իրական փոխարժեքի հնարավոր արժեքավորման դեպքում կարելի է ակնկալել ԱՄՆ հետ Հայաստանի արտաքին առևտրի պակասուրդի խորացում:
4. Արտահանման և ներմուծման առաձգականություններն իրական փոխարժեքից բավականին բարձր են (արտահանման միջին առաձգականությունը կազմում է -2.6 տոկոս, իսկ ներմուծման առաձգականությունը՝ 1.7 տոկոս): Դա վկայում է, որ ԱՄՆ ապրանքները եզակի չեն մյուս երկրների ապրանքների համեմատությամբ՝ ներմուծման դեպքում, ինչպես նաև մեր արտահանողները ԱՄՆ շուկաներից կարող են տեղափոխվել եվրոպական շուկաներ: ԱՄՆ արտահանվող և ԱՄՆ-ից ներմուծվող ապրանքների ծավալները հիմնականում ենթարկվում են փոխարինման էֆեկտին:

5. Հայաստանի վրա ԱՄՆ տնտեսական քաղաքականության ազդեցության ուղիներն են՝

ա. ԱՄՆ դոլարի արժեզրկումը միջազգային շուկաներում չի հանգեցնում միաժամանակյա արժեզրկման նաև հայկական դրամի նկատմամբ, սակայն ազդում է հայկական դրամի փոխարժեքի վրա՝ ԱՄՆ դոլարի առաջարկի ավելացման պատճառով: Առաջին ուղին ամբողջ աշխարհի դոլարային եկամուտների աճն է, ինչի արդյունքում աճում է տրանսֆերտների և կապիտալի ներհոսքը ՀՀ տնտեսություն: Մյուսը՝ ԱՄՆ դոլարի արժեզրկման սպասումներն են. դրա պատճառով ԱՄՆ դոլարը դուրս է մղվում խնայողության միջոցներից և փոխարինվում այլ ակտիվներով (այլ արժույթներ, անշարժ գույք, արժեթղթեր):

բ. ԱՄՆ-ում երկարաժամկետ տոկոսադրույքների աճը ամբողջ աշխարհում առաջ կբերի տոկոսադրույքների աճ, սակայն Հայաստանի տոկոսադրույքների վրա շատ ավելի թույլ ազդեցություն կունենա, քան՝ փոխարժեքի: ԱՄՆ-ում տոկոսադրույքների բարձրացումը կխթանի կապիտալի ներհոսքը ԱՄՆ տնտեսություն՝ դոլարի արժևորման և արժևորման սպասումների ձևավորման պատճառ դառնալով:

6. Ըստ տնտեսագետների գնահատումների՝ ԱՄՆ դոլարը 2005 թվականի երկրորդ կիսամյակում կմնա կայուն կամ որոշ չափով կարժևորվի՝ կապված Ֆեդերալ պահուստային համակարգի կողմից տոկոսադրույքների բարձրացումը զսպող դրամավարկային քաղաքականության հետ: Սակայն կառուցվածքային խնդիրների՝ չլուծված մնալու պայմաններում (պետբյուջեի, ընթացիկ հաշվի և տնային տնտեսությունների պակասուրդներ) ԱՄՆ դոլարի վարքագծի երկարաժամկետ միտումը դեռևս արժեզրկման ուղղվածություն կունենա, որը կձևավորվի արդեն 2005 թվականի վերջին - 2006 թվականի սկզբին՝ պայմանավորված անշարժ գույքի գների սպասվող նվազմամբ և Ֆեդերալ պահուստային համակարգի՝ հարկադրաբար ընդլայնողական քաղաքականության անցնելու հետ:

Այս վերլուծության արդյունքները կարելի է օգտագործել ԱՄՆ-ի հետ Հայաստանի արտաքին առևտրի և ՀՀ տնտեսության վրա ԱՄՆ տնտեսության զարգացման ազդեցության կանխատեսման և գնահատման նպատակով:

Իրական հատված

	1991	1992	1993	1994	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004
ՀՆԱ իրական աճ	-0.2	3.3	2.7	4.0	2.5	3.7	4.5	4.2	4.4	3.7	0.8	1.9	3.0	4.4
Արդյունաբերական արտադրանքի իրական աճ	-1.5	2.8	3.3	5.4	4.8	4.3	7.4	5.9	4.4	4.4	-3.4	-0.6	0.2	4.0
ՀՆԱ դեֆլյատոր	3.5	2.3	2.3	2.1	2.0	1.9	1.7	1.1	1.5	2.2	2.4	1.7	1.8	2.1
ՍԳԻ փոփոխություն	4.2	3.0	3.0	2.6	2.8	2.9	2.3	1.5	2.2	3.4	2.8	1.6	2.3	2.7
ԱԳԻ փոփոխություն	0.2	0.6	1.5	1.3	3.6	2.3	-0.1	-2.5	0.8	5.8	1.1	-2.3	5.3	6.2
Աշխատավարձը արդյունաբերական հատվածում, տոկոս	3.3	2.4	2.6	2.9	2.6	3.3	3.0	2.4	3.0	3.4	3.1	3.6	2.9	2.5
Գործազրկություն, տոկոս	6.8	7.5	6.9	6.1	5.6	5.4	5.0	4.5	4.2	4.0	4.7	5.8	6.0	5.5
Բնակչության աճ	1.1	1.1	1.1	1.1	1.1	1.1	1.1	1.1	1.1	1.1	1.1	1.0	1.0	1.0
Անվանական ՀՆԱ աճ	3.3	5.7	5.0	6.2	4.6	5.7	6.2	5.3	6.0	5.9	3.2	3.5	4.9	6.6
Սպառման աճ	3.8	6.3	5.7	5.9	4.9	5.6	5.5	6.0	6.9	7.3	4.7	4.5	5.2	6.0
Պետական սպառման աճ	5.2	3.3	2.3	3.0	2.9	3.0	3.9	3.2	6.2	6.2	6.0	7.2	6.7	5.1
Համախառն կապիտալի կուտակման աճ	-3.6	4.7	7.5	8.9	7.3	8.1	7.9	8.3	8.5	7.5	-0.7	-2.8	5.7	11.8
Ապրանքների և ծառայությունների արտահանման աճ	8.0	6.5	3.2	9.9	12.7	6.9	10.0	0.1	3.7	10.6	-5.8	-2.7	4.1	12.4
Ապրանքների և ծառայությունների ներմուծման աճ	-1.0	7.1	7.8	13.0	10.9	6.8	9.5	5.6	12.2	17.9	-5.1	2.1	8.0	15.4
Զուտ եկամուտների աճ	-12.7	-2.4	7.8	-17.9	36.5	-2.2	-5.8	-35.3	58.2	15.3	12.1	-38.1	104.0	-20.4
ՀԱԵ աճ	3.2	5.2	4.6	6.2	5.4	5.8	6.6	6.2	6.3	6.9	2.8	2.6	4.8	6.5
Զուտ տրանսֆերտների աճ	-139.2	-416.1	11.8	1.3	-6.2	10.4	6.3	17.3	-3.3	18.9	-16.1	27.3	13.5	8.7
ՀԱՏԵ աճ	2.5	6.0	4.6	6.2	5.3	5.8	6.6	6.3	6.3	7.0	2.7	2.7	4.8	6.5
Համախառն կուտակման աճ	2.5	-1.6	1.5	11.2	10.6	9.0	13.2	9.4	4.7	5.7	-6.4	-10.5	0.2	10.2
Կապիտալի ամորտիզացիայի տեմպ	6.4	3.6	3.3	7.4	5.4	4.5	6.1	5.7	6.9	7.9	7.9	1.8	3.8	3.9
ՀԱԵ/ՀԱՏԵ *(%)*	100.2	99.5	99.4	99.5	99.5	99.5	99.5	99.4	99.5	99.4	99.5	99.4	99.4	99.4
ՀՆԱ/ՀԱԵ *(%)*	100.7	101.2	101.6	101.7	100.9	100.8	100.5	99.6	99.3	98.3	98.7	99.6	99.7	99.9
ՀՆԱ/ՀԱՏԵ *(%)*	100.9	100.6	101.1	101.1	100.4	100.2	100.0	99.0	98.8	97.8	98.2	99.0	99.1	99.3
Սպառում/ՀՆԱ *(%)*	66.5	66.8	67.3	67.1	67.3	67.3	66.8	67.2	67.8	68.7	69.7	70.3	70.5	70.1
Պետական սպառում/ՀՆԱ *(%)*	16.9	16.5	16.1	15.6	15.4	15.0	14.6	14.4	14.4	14.4	14.8	15.3	15.6	15.4
Ներդրումներ/ՀՆԱ *(%)*	17.1	17.2	17.6	18.6	18.6	19.0	19.8	20.3	20.6	20.8	19.1	18.4	18.4	19.7
Արտահանում/ՀՆԱ *(%)*	10.0	10.0	9.9	10.2	11.0	11.1	11.5	10.9	10.7	11.2	10.2	9.6	9.5	10.0
Ներմուծում/ՀՆԱ *(%)*	10.4	10.5	10.8	11.5	12.2	12.3	12.7	12.8	13.5	15.0	13.8	13.6	14.0	15.2
Զուտ տրանսֆերտներ/ՀՆԱ *(%)*	-0.2	0.5	0.6	0.5	0.5	0.5	0.5	0.6	0.5	0.6	0.5	0.6	0.6	0.6
Խնայողություններ/ՀՆԱ *(%)*	16.2	15.1	14.6	15.3	16.1	16.6	17.6	18.1	17.8	17.6	16.1	14.0	13.4	13.9

Հարկաբյուջետային հատված

	1991	1992	1993	1994	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004
Պակասուրդ/ՀՆԱ *(%)*	-4.4	-5.2	-3.4	-2.6	-2.0	-1.4	0.0	0.6	1.7	2.6	0.9	-2.2	-3.6	-3.4
Եկամուտներ/ՀՆԱ *(%)*	17.7	17.4	17.7	18.1	18.5	18.9	19.5	20.0	20.0	20.8	19.7	17.3	16.3	16.4
Ծախսեր և վարկավորում/ՀՆԱ *(%)*	22.1	22.5	21.1	20.7	20.5	20.3	19.5	19.4	18.4	18.2	18.8	19.5	19.9	19.8
Մասնավոր հատվածի տնօրինվող պարտք/ՀՆԱ *(%)*	47.7	49.7	51.1	50.2	50.0	49.2	46.6	43.5	40.0	34.8	33.5	34.8	36.7	37.3
Ռեզիդենտների կշիռ *(%)*	81.8	81.7	80.9	81.2	77.4	71.3	67.9	66.4	65.8	69.7	69.0	65.8	62.0	55.6
Ոչ ռեզիդենտների կշիռ *(%)*	18.2	18.3	19.1	18.8	22.6	28.7	32.1	33.6	34.2	30.3	31.0	34.2	38.0	44.4
Գանձապետական արժեթղթեր/ՀՆԱ *(%)*	46.0	48.3	49.7	49.0	48.8	48.0	45.5	42.6	39.4	34.2	33.1	34.4	36.4	37.2
Տնօրինվող ոչ ռեզիդենտների կողմից *(%)*	17.3	17.0	18.0	18.3	22.7	27.9	30.9	31.8	29.6	30.6	31.0	33.6	37.0	42.5
Տնօրինվող ռեզիդենտների կողմից *(%)*	82.7	83.0	82.0	81.7	77.3	72.1	69.1	68.2	70.4	69.4	69.0	66.4	63.0	57.5
Դրամավարկային կարգավորման մարմիններ *(%)*	9.7	9.6	10.0	10.5	10.5	10.4	11.4	12.1	13.1	15.2	16.5	17.4	16.6	16.4
Առևտրային բանկեր *(%)*	8.4	9.6	9.7	8.4	7.7	7.0	7.1	5.7	6.3	5.5	4.9	5.7	3.3	2.5
Պետական ֆինանսավորմամբ ընկերություններ *(%)*	1.5	1.9	1.6	1.5	1.6	0.5	0.7	0.7	0.8	1.2	0.9	0.2	0.2	0.3
Այլ ֆինանսական կազմակերպություններ *(%)*	28.7	28.2	27.4	26.1	27.1	24.4	23.2	22.6	20.0	21.5	21.8	22.0	21.2	16.5
Ոչ ֆինանսական հատված *(%)*	34.5	33.6	33.3	35.2	30.4	29.8	26.7	27.0	30.2	26.0	25.0	21.1	21.6	21.7
Գանձապետական արժեթղթերի աճ	11.8	11.0	8.1	4.7	4.1	4.1	0.6	-1.4	-1.9	-8.1	-0.1	7.7	11.0	9.0
Տնօրինվող ոչ ռեզիդենտների կողմից	8.7	9.2	14.3	6.4	29.7	27.7	11.3	1.7	-8.8	-5.0	1.3	16.8	22.1	25.2
Տնօրինվող ռեզիդենտների կողմից	12.5	11.4	6.9	4.3	-1.6	-2.9	-3.5	-2.8	1.3	-9.4	-0.8	3.6	5.4	-0.4
Դրամավարկային կարգավորման մարմիններ	13.4	10.7	12.5	9.8	3.8	3.4	10.2	5.0	5.7	7.1	7.8	14.1	5.9	7.7
Առևտրային բանկեր	35.1	26.6	9.4	-9.9	-4.0	-6.0	3.2	-20.7	6.9	-19.4	-11.9	26.6	-35.0	-17.7
Պետական ֆինանսավորմամբ ընկերություններ	18.7	44.0	-12.1	0.7	11.7	-67.7	38.0	-2.8	23.0	33.0	-22.6	-77.4	3.3	73.3
Այլ ֆինանսական կազմակերպություններ	14.4	9.1	5.1	-0.3	7.9	-6.2	-4.1	-4.1	-13.1	-1.4	1.1	8.7	7.3	-15.0
Ոչ ֆինանսական հատված	6.3	8.3	7.0	10.9	-10.2	2.2	-10.1	-0.3	9.7	-20.9	-4.0	-9.2	14.0	9.7

Արտաքին հատված

	1991	1992	1993	1994	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004
EUR/USD փոխարժեքի աճ, ժամանակահատվածի վերջ	-1.5	-9.7	-7.4	9.8	6.5	-4.6	-12.0	6.4	-14.5	-7.0	-5.4	19.3	20.0	7.9
EUR/USD փոխարժեքի աճ, ժամանակահատվածի միջին	-2.4	4.8	-10.0	1.7	10.1	-3.1	-11.0	-0.9	-4.5	-14.0	-2.2	4.4	20.2	9.7
Անվանական արդյունավետ փոոխարժեք (հաշվարկված միավոր աշխատուժի արժեքով)	-1.5	-2.0	3.0	-1.8	-6.0	5.2	8.1	4.9	-2.5	4.0	6.6	-1.0	-11.6	-8.2
Իրական արդյունավետ փոոխարժեք (հաշվարկված միավոր աշխատուժի արժեքով)	-3.6	-2.3	1.9	-2.4	-7.8	3.6	5.7	6.5	-1.5	7.6	9.5	-0.6	-11.3	-8.4
Արտաքին ակտիվներ/ներմուծում (ամիս)	-1.5	-1.3	-1.2	-1.1	-1.2	-0.9	-0.8	-0.9	-0.7	-0.6	-0.6	-0.7	-0.7	-0.6
ՁԱՄ/փողի բազա *(%)*	22.2	19.6	18.3	17.0	18.8	15.8	13.5	15.0	11.0	11.0	10.4	11.1	11.5	11.2
ՁԱՄ/փողի զանգված (M2) *(%)*	2.2	2.1	2.1	2.1	2.3	2.0	1.7	1.9	1.5	1.4	1.3	1.4	1.4	1.3
Արտաքին ակտիվներ/արտաքին պարտք *(%)*	14.6	12.5	11.3	11.1	10.3	6.8	5.6	6.4	5.6	6.5	6.5	6.3	5.6	4.5
Արտահանում/արտաքին պարտք *(%)*	111.0	107.0	98.9	105.4	95.1	77.3	75.3	73.0	76.2	103.6	95.8	78.3	66.4	59.0
Բացվածություն (արտաքին առևտուր/ՀՆԱ) *(%)*	19.8	20.1	20.4	21.3	22.8	23.1	23.8	23.2	23.7	25.7	23.5	22.6	23.1	24.8
Արտահանում ՀՆԱ *(%)*	9.6	9.7	9.7	9.9	10.7	10.9	11.3	10.7	10.4	10.9	9.9	9.3	9.3	9.8
Ներմուծում/ՀՆԱ *(%)*	-10.2	-10.4	-10.7	-11.3	-12.0	-12.2	-12.6	-12.6	-13.3	-14.8	-13.5	-13.3	-13.8	-15.0
Առևտրի հաշվեկշիռ/ՀՆԱ *(%)*	-0.5	-0.6	-1.1	-1.4	-1.3	-1.3	-1.3	-1.9	-2.8	-3.9	-3.6	-4.0	-4.5	-5.3
Ապրանքների արտահանում/ՀՆԱ *(%)*	6.9	7.0	6.9	7.1	7.8	7.9	8.2	7.7	7.4	7.9	7.1	6.5	6.5	6.9
Ապրանքների ներմուծում/ՀՆԱ *(%)*	-8.2	-8.5	-8.9	-9.5	-10.1	-10.3	-10.6	-10.5	-11.1	-12.5	-11.3	-11.1	-11.5	-12.6
Ծառայությունների արտահանում/ՀՆԱ *(%)*	2.7	2.8	2.8	2.8	2.9	3.0	3.1	3.0	3.0	3.0	2.8	2.8	2.8	2.9
Ծառայությունների ներմուծում/ՀՆԱ *(%)*	-2.0	-1.9	-1.9	-1.9	-1.9	-2.0	-2.0	-2.1	-2.2	-2.3	-2.2	-2.2	-2.3	-2.5
Եկամուտներ, կրեդիտ/ՀՆԱ *(%)*	2.5	2.1	2.0	2.4	2.8	2.9	3.1	3.0	3.2	3.6	2.8	2.5	2.7	3.1
Եկամուտներ, դեբետ/ՀՆԱ *(%)*	-2.1	-1.7	-1.7	-2.1	-2.6	-2.6	-2.9	-2.9	-3.0	-3.4	-2.6	-2.5	-2.4	-2.9
Տրանսֆերտներ, կրեդիտ/ՀՆԱ *(%)*	0.8	0.1	0.1	0.1	0.1	0.1	0.1	0.1	0.1	0.1	0.1	0.1	0.1	0.1
Տրանսֆերտներ, դեբետ/ՀՆԱ *(%)*	-0.6	-0.6	-0.7	-0.6	-0.6	-0.6	-0.6	-0.7	-0.6	-0.7	-0.5	-0.7	-0.7	-0.8
Ընթացիկ հաշիվ/ՀՆԱ *(%)*	0.1	-0.8	-1.2	-1.7	-1.5	-1.5	-1.6	-2.4	-3.2	-4.2	-3.8	-4.5	-4.8	-5.7
Ուղղակի օտարերկրյա ներդրումներ հաշվետու երկրում/ՀՆԱ *(%)*	0.4	0.3	0.8	0.7	0.8	1.1	1.3	2.0	3.1	3.3	1.6	0.7	0.4	1.0
Ուղղակի օտարերկրյա ներդրումներ արտասահմանում/ՀՆԱ *(%)*	-0.6	-0.8	-1.3	-1.1	-1.3	-1.2	-1.3	-1.6	-2.4	-1.6	-1.4	-1.3	-1.6	-2.1
Զուտ ուղղակի օտարերկրյա ներդրումներ/ՀՆԱ *(%)*	-0.2	-0.4	-0.5	-0.5	-0.6	-0.1	0.0	0.4	0.7	1.7	0.2	-0.6	-1.2	-1.1
Զուտ պորտֆելային ներդրումներ/ՀՆԱ *(%)*	0.2	0.4	-0.5	1.1	1.2	2.3	2.6	0.7	1.8	3.2	3.4	4.2	4.3	6.0
Զուտ այլ ներդրումներ/ՀՆԱ *(%)*	0.7	1.5	2.3	1.1	0.7	-0.6	0.1	-0.2	-0.1	0.0	0.5	1.8	1.9	0.4
Պահուստային ակտիվների փոփոխություն/ՀՆԱ *(%)*	0.1	0.1	0.0	0.1	-0.1	0.1	0.0	-0.1	0.1	0.0	0.0	0.0	0.0	0.0
Զուտ ներդրումային դիրք *(%)*	-4.3	-7.1	-2.2	-1.9	-4.1	-4.6	-9.9	-12.3	-11.3	-16.2	-22.8	-24.3	-24.1	
Զուտ ներդրումային դիրք, առ. պահուստային ակտիվների *(%)*	-7.0	-9.5	-4.6	-4.2	-6.5	-6.7	-11.5	-14.0	-12.8	-17.5	-24.1	-25.9	-25.8	
Արտահանման միավոր արժեք	0.9	0.1	0.6	2.1	5.0	0.5	-1.3	-3.3	-1.3	1.6	-0.8	-1.0	1.6	3.9
Ներմուծման միավոր արժեք	0.0	0.8	-0.2	1.7	4.5	1.0	-2.5	-6.0	0.9	6.5	-3.5	-2.5	2.9	5.6
Իրական արտահանում	6.2	6.1	3.1	8.0	8.6	6.3	11.7	2.4	4.2	9.5	-5.7	-4.1	2.7	8.8
Իրական ներմուծում	-1.7	8.1	9.2	12.3	7.0	5.6	12.1	11.8	11.2	11.6	-2.9	4.6	5.4	10.6

Դրամավարկային հատված

	1991	1992	1993	1994	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004
Փողի բազայի աճ	3.5	8.8	9.1	8.6	4.4	4.7	8.0	6.0	20.0	-6.1	7.8	7.5	5.2	4.2
Փողի աճ	8.6	11.7	9.7	0.1	-0.9	1.4	3.5	3.5	10.3	-1.7	11.4	2.9	2.0	14.3
Քվազի-փողի աճ	1.5	-1.8	-1.8	0.0	8.5	8.0	7.8	12.5	7.4	9.9	14.9	4.7	0.4	2.0
M1 աճ	8.7	14.2	10.3	1.8	-1.9	-4.1	-0.7	2.1	2.5	-3.1	8.4	3.1	6.2	5.6
M2 աճ	3.1	1.6	1.6	0.4	4.1	4.7	5.6	8.7	6.1	6.2	10.5	6.3	4.6	5.6
M3 աճ	1.3	0.3	1.6	1.9	6.1	7.5	9.6	10.9	8.4	8.8	12.9	6.5	3.3	6.5
Վերաֆինանսավորման տոկոսադրույք, ժամանակահատվածի վերջ	3.5	3.0	3.0	4.8	5.3	5.0	5.0	4.5	5.0	6.0	1.3	0.8	2.0	3.2
Ֆեդերալ ֆոնդերի տոկոսադրույք	5.7	3.5	3.0	4.2	5.8	5.3	5.5	5.4	5.0	6.2	3.9	1.7	1.1	1.4
Գանձապետական արժեթղթերի տոկոսադրույք	5.4	3.5	3.0	4.3	5.5	5.0	5.1	4.8	4.7	5.8	3.5	1.6	1.0	1.4
Բանկերի առաջնային վարկերի տոկոսադրույք	8.5	6.3	6.0	7.1	8.8	8.3	8.4	8.4	8.0	9.2	6.9	4.7	4.1	4.3
Մոնետիզացիա M2 *(%)*	56.6	54.4	52.6	49.8	49.5	49.1	48.8	50.4	50.5	50.6	54.2	55.6	55.5	54.9
Մոնետիզացիա M3 *(%)*	70.4	66.8	64.6	62.0	62.9	64.0	66.0	69.5	71.1	73.0	79.9	82.2	80.9	80.8
Շրջապտույտի արագություն M2	1.8	1.8	1.9	2.0	2.0	2.0	2.0	2.0	2.0	2.0	1.8	1.8	1.8	1.8
Շրջապտույտի արագություն M3	1.4	1.5	1.5	1.6	1.6	1.6	1.5	1.4	1.4	1.4	1.3	1.2	1.2	1.2
Դրամական բազմարկիչ M2	10.1	9.4	8.8	8.1	8.1	8.1	7.9	8.1	7.2	8.1	8.3	8.2	8.2	8.3
Դրամական բազմարկիչ M3	12.5	11.5	10.7	10.1	10.3	10.5	10.7	11.2	10.1	11.7	12.2	12.1	11.9	12.2

ԱՄՆ արտահանումը ըստ առանձին երկրների

մլրդ ԱՄՆ դոլար

		1994	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	Կշիռներ (միջին)
1	Կանադա	114.4	126.0	134.2	151.8	156.6	166.6	178.9	163.4	160.8	169.5	22.7%
2	Մեքսիկա	50.8	46.3	56.8	71.4	78.8	86.9	111.3	101.3	97.5	97.5	11.9%
3	Ճապոնիա	53.5	64.3	67.6	65.5	57.8	57.5	64.9	57.5	51.4	52.1	8.8%
4	Միացյալ Թագավորություն	26.9	28.8	31.0	36.4	39.1	38.4	41.6	40.7	33.3	33.9	5.2%
5	Գերմանիա	19.2	22.4	23.5	24.5	26.7	26.8	29.4	30.0	26.6	28.8	3.8%
6	Հարավային Կորեա	18.0	25.4	26.6	25.0	16.5	23.0	27.8	22.2	22.6	24.1	3.4%
7	Թայվան	17.1	19.3	18.5	20.4	18.2	19.1	24.4	18.1	18.4	17.5	2.8%
8	Նիդեռլանդներ	13.6	16.6	16.7	19.8	19.0	19.4	21.8	19.5	18.3	20.7	2.8%
9	Ֆրանսիա	13.6	14.2	14.5	16.0	17.7	18.9	20.4	19.9	19.0	17.1	2.5%
10	Սինգապուր	13.0	15.3	16.7	17.7	15.7	16.2	17.8	17.7	16.2	16.6	2.4%
11	Չինաստան	9.3	11.7	12.0	12.9	14.2	13.1	16.2	19.2	22.1	28.4	2.4%
12	Հոնկոնգ	11.4	14.2	14.0	15.1	12.9	12.7	14.6	14.0	12.6	13.5	2.0%
13	Բելգիա	10.9	12.5	12.5	13.4	13.9	12.4	13.9	13.5	13.3	15.2	2.0%
14	Բրազիլիա	8.1	11.4	12.7	15.9	15.1	13.2	15.3	15.9	12.4	11.2	2.0%
15	Ավստրալիա	9.8	10.8	12.0	12.1	11.9	11.8	12.5	10.9	13.1	13.1	1.8%
16	Մալայզիա	7.0	8.8	8.5	10.8	9.0	9.1	10.9	9.4	10.3	10.9	1.4%
17	Իտալիա	7.2	8.9	8.8	9.0	9.0	10.1	11.1	9.9	10.1	10.6	1.4%
18	Շվեյցարիա	5.6	6.2	8.4	8.3	7.2	8.4	10.0	9.8	7.8	8.7	1.2%
19	Ֆիլիպիններ	3.9	5.3	6.1	7.4	6.7	7.2	8.8	7.7	7.3	8.0	1.0%
20	Սաուդյան Արաբիա	6.0	6.1	7.3	8.4	10.5	7.9	6.2	6.0	4.8	4.6	1.0%
21	Իսրայել	5.0	5.6	6.0	6.0	7.0	7.7	7.7	7.5	7.0	6.9	1.0%
22	Թաիլանդ	4.9	6.4	7.2	7.3	5.2	5.0	6.6	6.0	4.9	5.8	0.9%
23	Իռլանդիա	3.4	4.1	3.7	4.6	5.6	6.4	7.7	7.1	6.7	7.7	0.9%
24	Իսպանիա	4.6	5.5	5.5	5.5	5.5	6.1	6.3	5.8	5.2	5.9	0.8%
25	Վենեսուելա	4.0	4.6	4.7	6.6	6.5	5.4	5.5	5.6	4.4	2.8	0.8%
	Այլ	71.2	82.2	89.6	97.3	95.7	86.6	90.0	90.7	87.0	92.6	13.1%
	Ընդամենը	***512.6***	***583.0***	***625.1***	***689.2***	***682.1***	***695.8***	***781.9***	***729.1***	***693.3***	***723.7***	***100.0%***

ԱՄՆ արտահանումը ըստ երկրների խմբերի

մլրդ ԱՄՆ դոլար

		1994	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	Կշիռներ (միջին)
1	NAFTA	165.3	172.3	191.0	223.2	235.4	253.5	290.3	264.7	258.3	266.9	34.6%
2	Հարավարևելյան Ասիա	141.5	174.7	182.3	187.3	159.1	165.3	195.1	174.8	169.1	180.9	25.8%
3	ԵՄ	109.6	125.9	130.3	143.9	152.0	154.8	168.2	161.9	146.7	154.1	21.6%
4	Լատինական Ամերիկա	40.4	48.7	51.2	61.6	61.4	53.4	57.5	56.4	49.8	50.2	7.9%
5	Մերձավոր Արևելք	18.3	19.7	22.6	24.3	27.0	23.9	22.5	22.1	21.7	22.0	3.3%
6	Ավստրալիա և Նոր Զելանդիա	11.3	12.5	13.7	14.0	13.8	13.7	14.5	13.0	14.9	15.0	2.0%
7	ԱՊՀ	3.4	3.5	4.8	4.8	4.6	3.1	3.1	3.8	3.8	3.7	0.6%
	Այլ	22.9	25.8	29.1	30.1	28.9	28.1	30.8	32.3	28.8	31.0	4.3%
	Ընդամենը	***512.6***	***583.0***	***625.1***	***689.2***	***682.1***	***695.8***	***781.9***	***729.1***	***693.3***	***723.7***	***100.0%***

ԱՄՆ արտահանումը ըստ առանձին ապրանքախմբերի

մլրդ ԱՄՆ դոլար

		1994	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	Կշիռներ (միջին)
1	84 - Միջուկային ռեակտորներ, կաթսաներ, սարքավորումներ և մեխանիկական մասեր	98.8	112.9	123.1	140.9	136.3	137.9	159.3	144.8	130.2	130.8	19.6%
2	85 - Էլեկտրական մեքենաներ և սարքավորումներ, ձայնագրող ապարատներ և դրանց մասեր	75.6	91.9	97.6	111.1	108.8	122.2	148.5	122.5	110.5	112.6	16.4%
3	87 - Վերգետնյա տրանսպորտի միջոցներ և մասեր	49.4	52.4	56.2	60.9	59.3	59.0	62.5	59.1	62.5	65.2	8.7%
4	88 - Թռչող ապարատներ և դրանց մասեր	30.4	25.6	32.4	40.8	52.4	49.6	41.0	44.7	43.9	39.7	6.0%
5	90 - Օպտ., լուսանկարչ., չափիչ, բժշ. վիրաբուժ. սարքեր և ապարատներ, դրանց մասեր և հարմարանքներ	24.4	27.4	30.5	34.8	35.8	38.1	45.3	44.2	41.2	44.0	5.4%
6	39 - Պլաստմասսա և դրանից իրեր	16.3	19.1	20.3	22.9	22.7	23.8	28.0	26.5	27.2	28.9	3.5%
7	29 - Օրգանական քիմիական միացություններ	14.2	17.6	16.2	18.0	16.8	17.8	21.0	19.1	19.4	23.2	2.7%
8	71 - Մարգարիտ, թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ	10.1	10.4	12.2	11.8	12.1	12.7	15.3	14.7	13.5	15.3	1.9%
9	27 - Վառելանյութեր, նավթ և նավթամթերք, բիտումային միջոցներ, մոմանյութեր	9.0	10.5	12.4	13.0	10.4	10.1	13.4	12.8	11.7	14.1	1.7%
10	10 - Հացահատիկ	10.1	14.9	17.0	11.4	10.2	10.3	9.7	9.6	10.2	10.7	1.7%
11	48 - Թուղթ և ստվարաթուղթ, իրեր թղթից	7.7	9.9	10.3	10.8	10.5	10.5	11.5	10.9	10.3	10.7	1.5%
12	38 - Այլ քիմիական ապրանքներ	6.7	8.0	8.5	9.6	9.5	9.6	10.6	10.6	10.6	11.3	1.4%
13	30 - Դեղագործական մթերք	4.5	4.7	5.6	6.4	7.4	8.9	10.5	12.5	13.1	15.9	1.3%
14	73 - Իրեր սև մետաղներից	5.5	6.4	7.5	8.1	8.4	8.1	9.2	8.3	8.0	8.2	1.2%
15	12 - Ձիթատու սերմեր և պտուղներ, դեղաբույսեր և տեխնիկական բույսեր, ծղոտ	5.5	6.8	8.7	8.9	6.4	6.0	6.8	6.9	7.3	9.6	1.1%
16	44 - Փայտ և փայտից իրեր, փայտածուխ	7.2	7.3	7.3	7.2	5.9	6.1	6.3	5.3	5.1	5.2	0.9%
17	02 - Միս և մսից ենթամթերք	4.9	6.1	6.5	6.4	5.9	6.1	6.8	6.8	5.9	6.8	0.9%
18	40 - Կաուչուկ և ռետինե իրեր	4.3	4.9	5.3	6.1	6.2	6.2	6.9	6.7	6.4	6.6	0.9%
19	94 - Կահույք, անկողնային պարագաներ և դրանց հարակից մասեր	4.4	4.5	4.8	5.6	5.9	5.9	6.5	6.1	5.7	5.7	0.8%
20	28 - Անօրգանական քիմիական միացություններ, ռադիոակտիվ էլեմենտներ և իզոտոպեր	4.4	4.9	5.2	5.9	5.3	5.1	5.9	6.1	5.9	6.1	0.8%
21	76 - Ալյումին և իրեր դրանից	3.9	5.4	5.0	5.6	5.5	5.4	5.6	5.0	4.9	5.0	0.8%
22	72 - Սև մետաղներ	3.7	5.6	4.6	5.1	4.3	4.2	5.2	5.0	5.0	6.6	0.7%
23	08 - Կերային հատապտուղներ և ընկույզ, ցիտրուսների արմատներ և այլ բոստանային մշակաբույսեր	3.6	4.0	4.2	4.1	3.8	3.7	4.0	4.0	4.2	4.8	0.6%
24	52 - Բամբակ	3.5	4.7	3.9	3.9	3.9	2.5	3.8	4.0	4.0	5.2	0.6%
25	33 - Եթերային յուղեր, հարդարանքի և լոգարանային միջոցներ	2.6	2.8	3.2	3.6	3.5	3.5	3.9	4.4	4.4	4.9	0.5%
	Այլ	101.8	114.4	116.7	126.2	125.0	122.6	134.1	128.6	121.9	126.7	18.1%
	Ընդամենը	***512.6***	***583.0***	***625.1***	***689.2***	***682.1***	***695.8***	***781.9***	***729.1***	***693.3***	***723.7***	***100.0%***

ԱՄՆ ներմուծումը ըստ առանձին երկրների

մլրդ ԱՄՆ դոլար

		1994	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	Կշիռներ (միջին)
1	Կանադա	128.4	144.4	155.9	167.2	173.3	198.7	230.8	216.3	210.6	224.2	18.9%
2	Ճապոնիա	119.2	123.5	115.2	121.7	121.8	130.9	146.5	126.5	121.5	118.0	12.7%
3	Մեքսիկա	49.5	62.1	74.3	85.9	94.6	109.7	135.9	131.3	134.7	138.1	10.4%
4	Չինաստան	38.8	45.5	51.5	62.6	71.2	81.8	100.0	102.3	125.2	152.4	8.5%
5	Գերմանիա	31.7	36.8	38.9	43.1	49.8	55.2	58.5	59.1	62.5	68.0	5.1%
6	Միացյալ Թագավորություն	25.1	26.9	29.0	32.7	34.8	39.2	43.3	41.4	40.9	42.7	3.6%
7	Թայվան	26.7	29.0	29.9	32.6	33.1	35.2	40.5	33.4	32.2	31.6	3.3%
8	Հարավային Կորեա	19.6	24.2	22.7	23.2	23.9	31.2	40.3	35.2	35.6	37.0	3.0%
9	Ֆրանսիա	16.7	17.2	18.6	20.6	24.0	25.7	29.8	30.4	28.4	29.2	2.5%
10	Իտալիա	14.8	16.3	18.3	19.4	21.0	22.4	25.0	23.8	24.3	25.4	2.2%
11	Մալայզիա	14.0	17.5	17.8	18.0	19.0	21.4	25.6	22.3	24.0	25.4	2.1%
12	Սինգապուր	15.4	18.6	20.3	20.1	18.4	18.2	19.2	15.0	14.8	15.2	1.8%
13	Թաիլանդ	10.3	11.3	11.3	12.6	13.4	14.3	16.4	14.7	14.8	15.2	1.4%
14	Վենեսուելա	8.4	9.8	13.2	13.5	9.2	11.3	18.6	15.3	15.1	17.1	1.3%
15	Իռլանդիա	2.9	4.1	4.8	5.9	8.4	11.0	16.5	18.5	22.4	25.8	1.2%
16	Բրազիլիա	8.7	8.8	8.8	9.6	10.1	11.3	13.9	14.5	15.8	17.9	1.2%
17	Սաուդյան Արաբիա	7.7	8.4	10.5	9.4	6.2	8.3	14.4	13.3	13.1	18.1	1.1%
18	Ֆիլիպիններ	5.7	7.0	8.2	10.4	11.9	12.4	13.9	11.3	11.0	10.1	1.0%
19	Հոնկոնգ	9.7	10.3	9.9	10.3	10.5	10.5	11.4	9.6	9.3	8.9	1.0%
20	Իսրայել	5.2	5.7	6.4	7.3	8.6	9.9	13.0	12.0	12.4	12.8	1.0%
21	Ինդոնեզիա	6.5	7.4	8.2	9.2	9.3	9.5	10.4	10.1	9.6	9.5	0.9%
22	Շվեյցարիա	6.4	7.6	7.8	8.4	8.7	9.5	10.2	9.7	9.4	10.7	0.9%
23	Հնդկաստան	5.3	5.7	6.2	7.3	8.2	9.1	10.7	9.7	11.8	13.1	0.9%
24	Բելգիա	6.4	6.1	6.8	7.9	8.4	9.2	9.9	10.2	9.8	10.1	0.9%
25	Նիդեռլանդներ	6.0	6.4	6.6	7.3	7.6	8.5	9.7	9.5	9.9	11.0	0.8%
	Այլ	74.3	82.9	94.2	103.5	106.1	120.2	153.7	145.8	144.4	172.1	12.2%
	Ընդամենը	***663.3***	***743.5***	***795.3***	***869.7***	***911.9***	***1024.6***	***1218.0***	***1141.0***	***1163.5***	***1259.4***	***100.0%***

ԱՄՆ ներմուծումը ըստ երկրների խմբերի

մլրդ ԱՄՆ դոլար

		1994	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	Կշիռներ (միջին)
1	Հարավարևելյան Ասիա	266.8	295.5	296.4	322.3	335.1	368.3	428.0	384.6	403.3	431.1	36.1%
2	NAFTA	177.9	206.5	230.2	253.2	267.9	308.4	366.8	347.6	345.3	362.2	29.3%
3	ԵՄ	121.5	134.2	145.6	160.9	180.5	200.1	226.9	226.6	232.6	253.0	19.2%
4	Լատինական Ամերիկա	37.4	41.7	48.2	52.4	49.4	57.3	71.0	65.7	68.3	77.1	5.8%
5	Մերձավոր Արևելք	16.7	17.7	20.9	21.3	20.3	26.8	40.0	37.2	35.9	43.3	2.9%
6	Ավստրալիա և Նոր Զելանդիա	4.6	4.8	5.3	6.2	7.0	7.0	8.5	8.7	8.8	8.8	0.7%
7	ԱՊՀ	3.8	4.7	4.5	5.0	6.8	7.0	9.3	7.7	8.0	9.8	0.7%
	Այլ	34.5	38.6	44.2	48.4	44.9	49.7	67.5	63.0	61.4	74.0	5.4%
	Ընդամենը	***663.3***	***743.5***	***795.3***	***869.7***	***911.9***	***1024.6***	***1218.0***	***1141.0***	***1163.5***	***1259.4***	***100.0%***

ԱՄՆ ներմուծումը ըստ առանձին ապրանքախմբերի

մլրդ ԱՄՆ դոլար

		1994	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	Կշիռներ (միջին)
1	84 - Միջուկային ռեակտորներ, կաթսաներ, սարքավորումներ և մեխանիկական մասեր	105.4	122.5	130.1	144.1	154.0	165.6	180.8	161.3	161.9	170.7	15.3%
2	85 - Էլեկտրական մեքենաներ և սարքավորումներ, ձայնագրող ապարատներ և դրանց մասեր	94.4	114.1	114.6	122.2	127.1	145.9	186.0	154.5	152.1	157.7	14.0%
3	87 - Վերգետնյա տրանսպորտի միջոցներ և մասեր	96.7	101.6	104.4	114.1	122.2	147.9	163.7	159.3	170.5	175.2	13.8%
4	27 - Վառելանյութեր, նավթ և նավթամթերք, բիտումային միջոցներ, մոմանյութեր	56.5	60.3	78.2	78.4	57.4	75.9	135.5	122.0	117.2	155.6	9.6%
5	90 - Օպտ., լուսանկարչ., չափիչ, բժշ. վիրաբուժ. սարքեր և ապարատներ, դրանց մասեր և հարմարանքներ	19.8	22.6	23.8	26.4	28.3	30.7	36.6	34.8	34.8	38.8	3.0%
6	62 - Տեքստիլ հագուստ և հարակից իրեր	21.1	22.2	22.9	26.0	28.1	28.7	32.8	31.7	30.9	33.2	2.8%
7	29 - Օրգանական քիմիական միացություններ	11.9	14.5	16.5	18.5	19.8	23.7	30.5	31.8	32.8	36.1	2.4%
8	71 - Մարգարիտ, թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ	15.1	15.7	17.2	19.2	22.6	24.6	29.8	26.2	26.5	28.2	2.3%
9	61 - Տրիկոտաժե հագուստ և հարակից իրեր	12.2	13.9	15.1	18.7	21.7	23.7	26.4	26.9	27.8	29.7	2.2%
10	94 - Կահույք, անկողնային պարագաներ և դրանց հարակից մասեր	9.7	10.7	12.0	14.1	16.8	20.4	23.8	23.2	26.7	29.7	1.9%
11	95 - Խաղալիքներ, խաղեր և սպորտային գույք, դրանց մասեր և հարմարանքներ	11.1	12.3	13.9	16.6	17.8	18.2	19.2	20.3	21.4	21.0	1.8%
12	39 - Պլաստմասսա և դրանցից իրեր	10.7	12.5	13.0	14.2	15.0	16.7	19.1	19.1	20.3	22.9	1.7%
13	64 - Կոշիկ, զուգագուլպա և նմանատիպ իրեր	11.7	12.1	12.8	14.0	13.9	14.1	14.8	15.2	15.4	15.6	1.4%
14	44 - Փայտ և փայտից իրեր, փայտածուխ	10.1	9.8	11.6	12.8	13.3	16.0	15.5	15.0	15.7	16.6	1.4%
15	88 - Թռչող ապարատներ և դրանց մասեր	6.7	6.4	7.6	9.7	13.1	15.3	18.2	21.2	18.0	17.0	1.4%
16	48 - Թուղթ և ստվարաթուղթ, իրեր թղթից	9.2	12.6	11.8	11.9	12.9	13.6	15.4	15.0	14.6	15.1	1.3%
17	72 - Սև մետաղներ	12.4	12.3	13.1	13.7	16.3	12.9	14.7	10.5	11.5	10.2	1.3%
18	73 - Իրեր սև մետաղներից	8.1	9.0	9.5	10.5	11.8	12.0	14.1	13.9	14.4	15.2	1.2%
19	30 - Դեղագործական մթերք	3.2	3.8	4.9	6.7	8.9	11.2	12.2	15.9	21.5	27.6	1.2%
20	40 - Կաուչուկ և ռետինե իրեր	6.9	8.1	8.1	8.4	9.2	9.5	10.2	9.3	10.2	11.4	0.9%
21	76 - Ալյումին և դրանից իրեր	6.2	7.3	6.4	7.5	7.9	8.4	9.2	8.5	9.0	9.6	0.8%
22	22 - Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ	4.5	4.8	5.5	6.1	6.7	7.6	8.3	8.7	9.7	10.9	0.7%
23	03 - Ձուկ և խեցգետնավորներ, կակղամորթ և այլ ծովային անողնաշարավորներ	5.7	5.8	5.6	6.5	6.7	7.3	8.2	7.9	7.9	8.7	0.7%
24	42 - Կաշվե իրեր, կենդանիների աղիքից իրեր	5.2	5.3	5.4	5.8	5.8	6.0	7.2	7.1	7.1	7.5	0.6%
25	28 - Անօրգանական քիմիական միացություններ, ռադիոակտիվ էլեմենտներ և իզոտոպեր	4.7	5.5	5.9	6.0	6.0	5.9	6.9	6.8	6.6	7.9	0.6%
	Այլ	104.6	117.7	125.3	137.7	148.6	162.9	178.9	174.8	178.8	187.3	15.5%
	Ընդամենը	***663.3***	***743.5***	***795.3***	***869.7***	***911.9***	***1024.6***	***1218.0***	***1141.0***	***1163.5***	***1259.4***	***100.0%***

Հավելված 9

ՀՀ ներմուծումը ԱՄՆ-ից

հազար ԱՄՆ դոլար

	1998	1999	2000	2001	2002	2003	2004
Կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք	7002.8	9004.6	7553.4	6356.2	6543.5	6349.3	7619.2
Բուսական ծագման արտադրանք	308.1	5617.5	7565.9	1253.7	933.6	2234.8	2681.8
Յուղեր և ճարպեր	24.5	8.8	102.7	111.4	113.7	4037.2	4844.6
Պատրաստի սննդի արտադրանք	3150	2075.8	3592.5	1731.2	2617.8	2328.4	2794.1
Հանքահումքային մթերքներ	3116.9	1890.1	3810.1	7273	332	9420	11304.0
Քիմիական արտադրության ապրանքներ	1271.78	704	866.71	8312.05	11179.2	3791.8	4550.2
Պլաստմասսա, կաուչուկ, ռետին	1180.7	403.4	594.1	1340	746.9	2330.8	2797.0
Կաշի և դրանից իրեր	5	385.4	100.6	144.4	16.7	8.6	10.3
Փայտ և փայտյա իրեր	21.55	10.3	90.93	171.2	68	565.8	679.0
Թուղթ և թղթյա իրեր	613.8	1395.1	754.5	466.5	782.5	1017.7	1221.2
Մանածագործական իրեր	7165.96	5626	5769.3	8468.3	5331.1	7584.3	9101.2
Կոշկեղեն, հովանոցներ, գլխարկ	15.5	992.6	619.6	18.2	91.3	123.3	148.0
Իրեր քարից, գիպսից, ցեմենտից	57.1	58.6	38.8	159.99	93.7	461.2	553.4
Թանկարժեք քարեր և մետաղներ	307.4	2389.5	7901.7	12466.8	13079.8	20400.6	24480.7
Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր	822.5	412.9	976.4	886.1	324.8	2673.2	3207.8
Մեքենաներ և սարքավորումներ	4172.4	2571.5	3048.9	5319.7	3397.7	9399.2	11279.0
Տրանսպորտային միջոցներ	361.9	541.5	200.6	659.4	254.6	2239.8	2687.8
Սարքեր և ապարատներ	174.9	301	446.6	1054	1456.2	3684.7	4421.6
Կահույք, խաղալիքներ	975.3	794.5	630.8	1192.8	553.3	1652.6	1983.1
Արվեստի ստեղծ., հնաոճ իրեր	0	9.9	0	0.01	0	0.1	0.1
Ընդամենը	30748.09	35193	44664.14	57384.95	47916.4	80303.4	96364.1

Հավելված 10

ՀՀ արտահանումը ԱՄՆ

հազար ԱՄՆ դոլար

	1998	1999	2000	2001	2002	2003	2004
Կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք	0.0	0.1	0.6	27.7	38.5	459.1	385.3
Բուսական ծագման արտադրանք	24.0	1.7	13.4	0.1	6.5	29.9	19.4
Յուղեր և ճարպեր	0.0	0.0	0.3	0.0	0.0	0.0	0.0
Պատրաստի սննդի արտադրանք	276.5	1244.9	1851.0	3155.7	3823.7	3414.3	3366.8
Հանքահումքային մթերքներ	0.0	256.5	6328.9	5786.0	591.5	244.2	209.9
Քիմիական արտադրության ապրանքներ	39.7	52.6	63.0	36.0	51.3	48.7	76.0
Պլաստմասսա, կաուչուկ, ռետին	3.3	16.3	9.5	268.9	299.5	243.2	177.8
Կաշի և դրանից իրեր	0.0	0.5	0.9	123.4	0.8	26.3	33.0
Փայտ և փայտյա իրեր	0.0	3.0	3.5	5.1	23.5	1.2	45.0
Թուղթ և թղթյա իրեր	79.6	43.2	45.1	1007.0	255.6	182.0	210.6
Մանածագործական իրեր	9211.3	10124.0	7440.8	15148.4	12841.5	8670.5	9292.5
Կոշկեղեն, հովանոցներ, գլխարկ	20.6	20.8	27.5	52.8	41.3	32.0	17.9
Իրեր քարից, գիպսից, ցեմենտից	71.8	4.0	86.7	190.3	62.8	465.5	844.3
Թանկարժեք քարեր և մետաղներ	383.6	2997.8	10606.1	21369.7	24739.0	36698.6	44401.0
Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր	394.4	404.8	227.2	814.6	634.0	1442.6	7714.4
Մեքենաներ և սարքավորումներ	704.4	148.4	10635.5	3195.8	226.2	991.8	1425.3
Տրանսպորտային միջոցներ	200.9	27.0	15.4	379.3	7.2	17.2	0.0
Սարքեր և ապարատներ	28.4	14.2	68.9	98.0	1181.2	839.0	1411.6
Կահույք, խաղալիքներ	111.3	76.3	271.9	418.4	875.2	1214.2	624.7
Արվեստի ստեղծ., հնաոճ իրեր	17.2	572.1	165.0	191.3	539.0	0.2	0.0
Ընդամենը	11567.0	16008.2	37861.2	52268.6	46238.3	55020.3	70255.4

Օգտագործված գրականություն

1. «Սահք բարակ սառույցի վրայով» - HSBC բանկի՝ ԱՄՆ տնտեսության 2005 թվականի հեռանկարները հաշվետվություն, հունվար, 2005
2. «Արդյոք սպառողական վարկերի տոնը կշարունակվի» -HSBC բանկի ԱՄՆ տնտեսության վերլուծություն. 23 փետրվարի, 2005
3. OECD - “Economic Survey of Japan” 20, Jan, 2005
4. Rosbusinessconsulting լրատվական գործակալության տարբեր հրապարակումներ
5. IT-Trade լրատվական գործակալության տարբեր հրապարակումներ
6. The Economist, տարբեր հրապարակումներ
7. The Fortune, տարբեր հրապարակումներ
8. United States – Selected Issues, IMF, July 01, 2005
9. Արժույթի միջազգային հիմնադրամի հրապարակումներ ԱՄՆ տնտեսության վերաբերյալ

ԵՎՐՈԲԱՆԿԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ *
(2004 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ)

Դրամավարկային քաղաքականության վարչություն
Մարգարիտ Մամիկոնյան

I. Ընդհանուր տեղեկատվություն [1]

Զարգացման և վերականգնման եվրոպական բանկը (այսուհետև՝ Եվրոբանկ) ստեղծվել է 1991 թվականին՝ օգնելու համար Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի և նախկին ԽՍՀՄ երկրներին՝ անցնելու նոր տնտեսավարման մեխանիզմների և զարգացնելու մասնավոր ու ձեռնարկատիրական նախաձեռնությունները:

Եվրոբանկի բաժնետիրական կապիտալը, որը ձևավորվում է 60 երկրների կառավարությունների և 2 միջազգային հաստատությունների ներդրումներից, բաղկացած է 2 մլն բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 10,000 եվրո անվանական արժեքով:

1991-2004թթ. ընթացքում Եվրոբանկը իր գործունեության տարածաշրջանում իրականացրել է 1,140 ծրագրեր՝ ներդնելով ավելի քան 25.322 մլրդ եվրո[2]:

Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի ու նախկին ԽՍՀՄ հանրապետություններում Եվրոբանկի ռազմավարության համեմատությունը և նրա կողմից ֆինանսավորվող ծրագրերի հանգամանալից ուսումնասիրությունը ցույց են տալիս, որ Եվրոբանկը, որպես կոմերցիոն կառույց, ներդրումներ իրականացնելիս անպայման հաշվի է առնում այդ երկրում մակրոտնտեսական և քաղաքական կայունությունը, զարգացած և հուսալի ֆինանսական համակարգի կամ որոշ երկրներում՝ բարձր ֆինանսական եկամտաբերություն ունեցող տնտեսության ճյուղերի (հանքահումքային) առկայությունը (տե՛ս աղ. 1):

Աղյուսակ 1. Եվրոբանկի ծրագրերը՝ ըստ երկրների[3]

	Եվրոբանկի անդամ-երկրներ	Ստորագրված ծրագրերի թիվը	Եվրո *(մլն եվրո)*	Տես. կշիռը ընդհ. ներդրումներում *(%)*
1.	Ռուսաստան	210	5,874.7	23.2
2.	Լեհաստան	136	3,063.6	12.1
3.	Ռումինիա	87	2,531.4	10.0
4.	Հունգարիա	68	1,739.8	6.9
5.	Ուկրաինա	64	1,519.2	6.0
6.	Խորվաթիա	54	1,310.0	5.2
7.	Բուլղարիա	52	1,001.4	4.0
8.	Չեխիա	45	996.5	3.9
9.	Էստոնիա	44	467.6	1.8
10.	Սլովակիա	41	999.8	3.9
11.	Ղազախստան	37	1,027.8	4.1
12.	Սերբիա և Մոնտենեգրո	33	662.6	2.6
13.	Լիտվա	29	434.3	1.7
14.	Սլովենիա	26	552.3	2.2
15.	Ուզբեկստան	24	509.5	2.0
16.	Մակեդոնիա	24	376.1	1.5
17.	Լատվիա	24	284.8	1.1
18.	Ադրբեջան	22	458.6	1.8
19.	Մոլդովա	22	157.4	0.6
20.	Վրաստան	21	242.6	1.0

** Հեղինակի տեսակետը կարող են չհամընկնել ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական դիրքորոշմանը:*
[1] Այս հրապարակումը նոր տվյալներով լրացնում է «Զարգացման և վերակառուցման եվրոպական բանկ» և «Հայաստանի և Եվրոբանկի փոխհարաբերությունները» հոդվածները («ՀՀ ԿԲ տեղեկագիր», թիվ 3, 1998 և «ՀՀ ԿԲ բաՆբեր», 1-ին եռամսյակ, 2001):
[2] Տե՛ս EBRD Investments 1991-2004/EBRD Annual Report, էջ 2:
[3] Տե՛ս նույն տեղում:

21.	Բոսնիա և Հերցոգովինա	17	348.6	1.4
22.	Ալբանիա	17	223.3	0.9
23.	Ղրղզստան	16	144.7	0.6
24.	Բելառուս	7	161.2	0.6
25.	Հայաստան	7	88.1	0.3
26.	Տաջիկստան	7	29.2	0.1
27.	Թուրքմենստան	5	117.0	0.5
	ԸՆԴԱՄԵՆԸ	1,140	25,322.3	100

Ըստ աղյուսակի տվյալների՝ Հայաստանում Եվրոբանկի գործունեությունը եղել է սահմանափակ, և ծրագրերի ֆինանսավորման արժեքը կազմել է Եվրոբանկի կողմից անդամ-երկրներում ներդրված միջոցների ընդամենը 0.3%-ը:

Իր գործունեության արդյունավետությունը գնահատելու նպատակով Եվրոբանկը յուրաքանչյուր տարի վերլուծում է 27 անդամ-երկրների անցումային տնտեսություններում շուկայական բարեփոխումների դինամիկ գործընթացը: 2004թ. տարեկան հաշվետվությունում ևս Եվրոբանկը ներկայացրել է այդ երկրների կառուցվածքային և ինստիտուցիոնալ բարեփոխումների կամ, այլ կերպ ասած, անցումային ինդեքսը: Ինդեքսի չափման սանդղակի միջակայքը սահմանված է 1-ից մինչև 4.33, որտեղ 1-ը ցույց է տալիս, որ այդ երկրում գրեթե ոչինչ չի փոխվել պլանային տնտեսության համեմատ, իսկ 4.33-ը ներկայացնում է ինդուստրացված շուկայական տնտեսության ստանդարտը: Եվրոբանկի անդամ երկրներում վերոնշյալ ինդեքսի համեմատական գնահատականը ըստ նվազման տրված է աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Անցումային ինդեքսը Եվրոբանկի անդամ-երկրներում [4]

	Եվրոբանկի անդամ-երկրներ	Անցումային ինդեքսը (առավելագույնը 4.33)
1.	Հունգարիա	3.85
2.	Չեխիա	3.74
3.	Էստոնիա	3.74
4.	Լեհաստան	3.66
5.	Սլովակիա	3.56
6.	Լատվիա	3.56
7.	Լիտվա	3.48
8.	Խորվաթիա	3.44
9.	Բուլղարիա	3.37
10.	Սլովենիա	3.37
11.	Ռումինիա	3.18
12.	Հայաստան	3.00
13.	Մակեդոնիա	2.96
14.	Վրաստան	2.96
15.	Ռուսաստան	2.96
16.	Ղրղզստան	2.93
17.	Ղազախստան	2.89
18.	Ալբանիա	2.81
19.	Ուկրաինա	2.78
20.	Մոլդովա	2.74
21.	Ադրբեջան	2.63
22.	Բոսնիա և Հերցոգովինա	2.52
23.	Սերբիա և Մոնտենեգրո	2.48
24.	Տաջիկստան	2.30
25.	Ուզբեկստան	2.08
26.	Բելառուս	1.81
27.	Թուրքմենստան	1.30

Ինչպես երևում է աղյուսակից, Հայաստանի անցումային ինդեքսը գնահատվել է 3.00, այսինքն՝ Հայաստանը հիմնականում զիջում է Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի այն երկրներին, որոնք 2004թ. միացել են կամ նախապատրաստվում են միանալ Եվրոմիությանը: Դեռ ավելին, ԱՊՀ երկրների թվում Հայաստանի ինդեքսն ամենաբարձրն է:

Այսպիսով, աղյուսակներ 1 և 2-ի ուսումնասիրությունից գալիս ենք այն եզրահանգման, որ չնայած Եվրոբանկի գործունեությունը Հայաստանում եղել է սահմանափակ և ներդրվել է ընդամենը 88.1 մլն եվրո

[4] *Տե՛ս Building on Success/ EBRD, Economic Snapshots for 2004, էջ 28, 38, 48, 58, 68:*

(հավանաբար՝ բարձր ֆինանսական եկամտաբերություն ունեցող տնտեսության ճյուղերի (հանքահումքային) բացակայությամբ պայմանավորված), այնուամենայնիվ Հայաստանում շուկայական տնտեսության անցման բարեփոխումները գնահատվում են ավելի բարձր, քան ԱՊՀ բոլոր և Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայի որոշ երկրներում (Մակեդոնիա, Ալբանիա, Բոսնիա-Հերցոգովինա և Սերբիա-Մոնտենեգրո): Կովկասյան տարածաշրջանի մյուս երկրներում՝ Վրաստանում և Ադրբեջանում Եվրոբանկի ներդրումները զգալիորեն գերազանցել են Հայաստանում իրականացված ներդրումների ծավալը: Մասնավորապես՝ 1991-2004թթ. Եվրոբանկը Վրաստանում ներդրել է 242.6 մլն եվրո (2.7 անգամ ավելի, քան Հայաստանում), իսկ Ադրբեջանում՝ 458.6 մլն եվրո (5.2 անգամ ավելի, քան Հայաստանում)[5]:

II. Եվրոբանկի և ՀՀ փոխհարաբերությունները

Հայաստանի Հանրապետությունն անդամակցում է Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկին (այսուհետև՝ Եվրոբանկ) 1992թ. դեկտեմբերի 7-ից: ՀՀ-ն ունի 1000 բաժնետոմս՝ 10 մլն եվրո ընդհանուր արժողությամբ: 2004թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հայաստանը Եվրոբանկին տրամադրել է 3 հասարակ անտոկոս պարտամուրհակներ (1998թ. օգոստոսի 12-ին, 1999թ. ապրիլի 16-ին և 2000թ. հոկտեմբերի 23-ին)՝ 322,446.72 ԱՄՆ դոլար ընդհանուր արժողությամբ, որոնք պետք է մարվեն 5 տարիների ընթացքում՝ հավասար մասնաբաժիններով: 1998թ. հունիսի 11-ին իրականացվել է առաջին մարումը և որպես Եվրոբանկի բաժանորդագրական վճար՝ մուծվել է 21,528 ԱՄՆ դոլար:

Եվրոբանկին անդամակցելու պահից սկսած՝ Տնօրենների խորհրդի կողմից ստորագրվել են 18 ներդրումային ծրագրեր և ենթածրագրեր (այսուհետև՝ ծրագրեր)՝ էներգետիկայի, տրանսպորտի, ագրոբիզնեսի, արդյունաբերության և ֆինանսական համակարգի ոլորտներում[6]: Ստորագրված ծրագրերի ընդհանուր կուտակային գումարը 2004թ. վերջի դրությամբ կազմում է 88.1 մլն եվրո, որից հատկացվել է 80.6 մլն եվրո: Ստորագրված 18 ծրագրերից ներկայումս գործում են 17-ը, որոնցից 3-ը ներդրում է կապիտալում, 3-ը՝ առևտրի աջակցման երաշխիքներ են, իսկ 11-ը՝ պարտքատվություններ:

Հայաստանում Եվրոբանկի առաջին ծրագրերը միայն պետական հատվածի ծրագրեր էին, սակայն 1999թ-ից Եվրոբանկն իր գործունեությունը կենտրոնացրել է մասնավոր հատվածի ծրագրերի ֆինանսավորման վրա: Գործող ծրագրերից 15-ը մասնավոր հատվածի ծրագրեր են և ներկայացնում են ընդհանուր պորտֆելի շուրջ 34%-ը: Եվրոբանկը, հաշվի առնելով ՀՀ կառավարության վարկառուական կարողությունների սահմանափակ բնույթը, նախատեսում է մոտ ապագայում այս հարաբերակցությունը հասցնել համապատասխանաբար 40% և 60%-ի: Հաշվի առնելով հայաստանյան ձեռնարկությունների համեմատաբար փոքր չափերը և փոխառություններ ներգրավելու սահմանափակ կարողությունը՝ այս ոլորտում ֆինանսավորումը հիմնականում իրականացվում է ուղղակի ներդրումային մեխանիզմով ***(Direct Investment Facility)***:

Աղյուսակ 3. Հայաստանում Եվրոբանկի գործող ծրագրերը (2004թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ) [7]

	Բնագավառը	Ստորագրման տարեթիվը	Ծրագրի անվանումը	Վարկ *(մլն եվրո)*	Կապիտալ *(մլն եվրո)*	Երաշխիք *(մլն եվրո)*
	I. Պետական					
1.	էներգետիկա	1993	Հրազդան –5 ջերմային բլոկի շինարարություն	42.312		
2.	Տրանսպորտ	1994	«Զվարթնոց» օդանավակայանի բեռնահամալիր	15.708		
3.	Ագրոբիզնես-չի գործում	1995	Մեծածախ շուկա	0.553		
	II. Մասնավոր					
4.	Ագրոբիզնես	2000	Կոնյակի գործարան	14.654		
5.	Ագրոբիզնես-տարածաշրջանային	2003	Գարեջրի, գինու և հանքային ջրերի բաշխման Castel խմբի ընկերություն	1.612		
6.	Արդյունաբերություն	2002	Ալավերդու պղնձաձուլարան	4.250		
7.	Արդյունաբերություն	2004	«Շեն» կոնցեռն՝ շինանյութերի արտադրության ընդլայնում		1.250	

[5] *Տե՛ս EBRD Investments 1991-2004/EBRD Annual Report, էջ 2:*
[6] *1991-2004թթ. իրականացված ծրագրերի ամփոփիչ աղյուսակում Եվրոբանկը ներկայացրել է խոշորացված ծրագրերի թիվը: Այդ պատճառով էլ նշված է, որ Հայաստանում իրականացվում են 7 ծրագրեր (տե՛ս նաև սույն նյութի աղյուսակ 1-ում):*
[7] *Տե՛ս EBRD Investments 1991-2004/EBRD Annual Report, էջ 4-5:*

8.	Բանկային համակարգ	2000	Հայէկոնոմբանկ	0.733		
9.		2002	Հայէկոնոմբանկ			0.679
10.		2004	Հայէկոնոմբանկ		0.904	
11.	Բանկային համակարգ	2002	Ամելիք բանկ	0.733		
12.		2003	Ամելիք բանկ			0.253
13.		2004	Ամելիք բանկ	1.099		
14.	Բանկային համակարգ	2003	Հայգյուղփոխբանկ	2.198		
15.		2004	Հայգյուղփոխբանկ			0.05
16.	Բանկային համակարգ	1999	Հունաստան-Հայաստան բանկ		1.054	
17.	Բանկային համակարգ	1995	Ֆինանսական աջակցություն «Բիզնեսի կառավարում» մասնագիտացմամբ ուսանողներին	0.001		0.089
	Ընդամենը			***83.853***	***3.208***	***1.071***

Էներգետիկա - 1 ծրագիր

Պետական հատվածի ծրագիր՝ ջերմային էներգարտադրության Հրազդանի ՊՇԷԿ-ի V էներգաբլոկի շինարարություն

Այս շինարարության ֆինանսավորման նպատակով կառավարությանը տրամադրվել էր 42.312 մլն եվրոյի վարկ: Հրազդանի ՋԷԿ-ի V էներգաբլոկի շինարարությունը չի ավարտվել՝ նախատեսվածից բարձր ծախսերի և ֆինանսավորման ճեղքվածքը լրացնելու համար անհրաժեշտ ֆինանսավորման պակասի պատճառով, որը պետք է կատարեր Հայաստանի կառավարությունը: Այս վարկը ամբողջությամբ բաշխվել է:

Վարկային պայմանագիրը կնքվել է 1993թ. ապրիլի 20-ին: Վարկի հիմնական գումարը մարվում է 1997 թ-ից, տարեկան 2 անգամ՝ ապրիլի 20-ին և հոկտեմբերի 20-ին: Վարկը ամբողջությամբ կմարվի 2007 թվականին: Տոկոսագումարները վճարվում են 1993թ. հոկտեմբերից՝ հիմնական գումարի մարման գրաֆիկին համապատասխան: Տոկոսավճարները հաշվարկվում են ըստ Լոնդոնյան միջբանկային 6-ամսյա ավանդների առաջարկի տոկոսադրույքների (LIBOR + 1 %): Հաշվարկվում է նաև պարտավորության վճար՝ 0. 5 %-ի չափով:

2004թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ տվյալ վարկի գումարն ամբողջությամբ օգտագործվել էր: Իրականացվել են 39.873 մլն դոլարի հիմնական գումարի մարումներ և վճարվել 15.583 մլն դոլարի տոկոսագումարներ:

Ի լրումն այս ծրագրի, Հրազդանի ՊՇԷԿ-ի V էներգաբլոկի կառուցումն ավարտելու համար 1997թ. ապրիլին Եվրոբանկի կողմից մշակվել էր նոր ֆինանսական փաթեթ՝ 21.5 մլն եվրո արժողությամբ, որի տրամադրման նպատակն էր հնարավորինս արագ ավարտին հասցնել, շահագործման հանձնել և որպես էներգետիկ հատվածի սեփականաշնորհման ընդհանուր ծրագրի մի մաս՝ սեփականաշնորհել Հրազդանի ՊՇԷԿ-ի V էներգաբլոկը: Ծրագրի համատեղ ֆինանսավորման նպատակով ընդհանուր վարկավորման չափը նախապես համաձայնեցվել էր ճապոնական արտահանման-ներմուծման (EXIM) բանկի հետ: Այս ծրագիրը դեռևս չի գործում:

Հրազդանի ՊՇԷԿ-ի մյուս էներգաբլոկները 2003թ. վաճառվեցին Ռուսաստանին՝ որպես գույք՝ պարտքի դիմաց գործարքի մաս: Եվրոբանկը ներկայումս փորձում է գտնել դրամաշնորհային միջոցներ՝ V էներգաբլոկի շինարարությունն ավարտելու համար: 2003թ. նոյեմբերին հրատարակված «Հայաստանում Եվրոբանկի ռազմավարությունը» (Strategy for Armenia) զեկույցում գնահատվել է, որ ՊՇԷԿ-ի V էներգաբլոկի շինարարությունը ավարտելու համար անհրաժեշտ է ևս 40 մլն դոլար[8]:

Տրանսպորտ – 1 ծրագիր

Պետական հատվածի ծրագիր՝ «Զվարթնոց» օդանավակայանի բեռնային համալիրի կառուցում

Տրանսպորտի բնագավառում Եվրոբանկի առաջին ծրագիրը հատուկ նշանակության պետական ձեռնարկություն Երևանի «Զվարթնոց» օդանավակայանի բեռնային համալիրի կառուցման ֆինանսա-

[8] *Տե՛ս Strategy for Armenia/EBRD, 25 November, 2003, էջ 9:*

վորումն էր՝ 15.708 մլն եվրոյի չափով: Վարկային պայմանագիրը կնքվել է 1994թ. նոյեմբերի 29-ին: Ծրագրի նպատակն էր՝ օժանդակել քաղաքացիական ավիացիայի զարգացմանը, մասնավորապես՝ բեռների տեղափոխման աշխատանքների կազմակերպմանը, վերահսկմանը, մոնիտորինգին և կառավարմանը: Թեև «Զվարթնոց» բեռնահամալիրի շինարարությունը ավարտվեց 1998թ-ին, սակայն չապահովվեց համալիրի՝ կանխատեսվող բեռնաշրջանառության ծավալը (տարեկան 13,000 տոննա շրջանառություն՝ ծախսածածկման համար անհրաժեշտ 40,000 տոննայի համեմատ), և չստեղծվեցին վարկի մարման համար անհրաժեշտ ֆինանսական հոսքեր: Հետևաբար, առաջացած պարտքի բեռը թեթևացնելու նպատակով, 2002թ-ին ՀՀ կառավարությունը ողջ օդանավակայանի, այդ թվում նաև բեռնահամալիրի կառավարման իրավունքը 30 տարով հանձնեց մասնավոր միջազգային օպերատորի՝ 8 տարիների ընթացքում 59 մլն ԱՄՆ դոլար ներդրումներ իրականացնելու պայմանով:

Վարկի հիմնական գումարը մարվում է 1998թ-ից՝ տարեկան 2 անգամ՝ մարտի 12-ին և սեպտեմբերի 12-ին: Վարկի վերջնական մարումը իրականացվելու է 2007թ-ին: Տոկոսագումարները վճարվում են 1995թ. մայիսից՝ հիմնական գումարի մարման գրաֆիկին համապատասխան, և տոկոսավճարի հաշվարկման համար հիմք են ընդունվում Լոնդոնյան միջբանկային 6-ամսյա դեպոզիտների առաջարկի տոկոսադրույքները (LIBOR + 1%): Հաշվարկվում է նաև պարտավորության վճար՝ 0. 5 %-ի չափով:

2004թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ տվյալ վարկի գումարն ամբողջությամբ օգտագործվել էր: Իրականացվել են 16.195 մլն դոլարի հիմնական գումարի մարումներ և վճարվել 5.22 մլն դոլարի տոկոսագումարներ:

«Զվարթնոց» օդանավակայանի վերոնշյալ ծրագրին օժանդակելու և օդանավակայանի առաջնային կարիքները բավարարելու նպատակով Եվրոբանկը որոշել է աջակցել Հայաստանի ճանապարհային ցանցի վերականգնման այլ ծրագրերի ևս: Մասնավորապես՝ Եվրոբանկը նախատեսում է ֆինանսավորել երկաթուղու համակարգի վերականգնման աշխատանքները:

Ագրոբիզնես – 3 ծրագիր

Պետական հատվածի ծրագիր՝ մեծածախ շուկայի կառուցում

Եվրոբանկը մշակել էր նաև ՀՀ գյուղատնտեսության զարգացման ու աջակցման ծրագիր: 1995թ. դեկտեմբերի 14-ին Եվրոբանկի և ՀՀ կառավարության միջև կնքվել էր վարկային պայմանագիր, ըստ որի՝ նախատեսվում էր ՀՀ կառավարությանը տրամադրել 15 մլն դոլար՝ մեծածախ շուկայի ծրագրի ֆինանսավորման համար: Ծրագրի նպատակն էր, նախ՝ ֆինանսական միջոցներ տրամադրել «Հայաստանի մեծածախ շուկա» ընկերությանը՝ Երևանում գյուղատնտեսական արտադրության ապրանքների վեց հավաքակայաններով համալրված ժամանակակից մեծածախ շուկա կառուցելու համար, երկրորդ՝ տրամադրել վարկային միջոցներ, որոնք տեղական բանկերի միջոցով պետք է հատկացվեին սննդի իրացմամբ զբաղվող բիզնեսներին: Նոր մեծածախ շուկայի կառուցման նպատակը թարմ սննդի բաշխման համակարգի զարգացումն էր:

Հիմնական գումարի մարումը և տոկոսագումարների վճարումը նախատեսվում էր իրականացնել 6-ամսյա վճարներով: Վարկի տոկոսավճարի հաշվարկման համար հիմք էին ընդունվում Լոնդոնյան միջբանկային 6-ամսյա դեպոզիտների առաջարկի տոկոսադրույքները (LIBOR):

Սակայն, վարկային պայմանագրի ստորագրման պահից առաջացան մի շարք դժվարություններ, որի պատճառով 1998թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ Կառավարությունը վերանայեց այդ վարկային ծրագիրը, և ***դրա գործողությունը դադարեցվեց (սառեցվեց)***: Մեծածախ շուկաների վարկային ծրագրից օգտագործվել է ընդամենը 553 հազ. եվրո, որն ամբողջությամբ մարվել է: Այս վարկի դիմաց վճարվել են 514,000 դոլարի տոկոսագումարներ:

Հետագայում ևս Եվրոբանկը մտադիր է շարունակել գյուղատնտեսության բնագավառում փոքր նախագծերի ֆինանսավորումը՝ միջնորդ բանկերի օգնությամբ:

Մասնավոր հատվածի ծրագիր՝ Երևանի կոնյակի գործարանի արտադրական կարողությունների ընդլայնում

Կոնյակ արտադրող և արտահանող առաջատար գործարանին 2000 թ. վերջին տրամադրվել է 14.654 մլն եվրո գումարով երկարաժամկետ վարկ, որի նպատակն է՝ ֆինանսավորել գործարանի շրջանառու միջոցների շարունակական պահանջը և արտադրության զարգացումը: Հարկ է նշել, որ Եվրոբանկը ոգելից խմիչքների արտադրության ծրագրեր ֆինանսավորում է միայն բացառիկ դեպքերում, քանի որ դա չի մտնում 1991թ. Եվրոբանկի կողմից հաստատված գործառնությունների ցանկի մեջ: Համաձայն այդ ցանկի՝ բացի ալկոհոլային արտադրության ծրագրերից, Եվրոբանկը չի ֆինանսավորում նաև ծխախոտի,

հրազենի, մոլախաղերի արտադրությունը: Սակայն, կարևորելով Երևանի կոնյակի գործարանի վարկային ծրագրի նշանակությունը ՀՀ տնտեսության զարգացման համար, Եվրոբանկը գտնում է, որ Հայաստանն այս ճյուղում ունի մրցակցային առավելություն:

Մասնավոր հատվածի տարածաշրջանային ծրագիր՝ գարեջրի, գինու և հանքային ջրեր բաշխող Castel խմբի ընկերության վերակառուցում և ընդլայնում

Գնահատելով ԱՊՀ երկրներում գարեջրի, գինու և հանքային ջրի արտադրության և բաշխման Castel խմբի գործարար հաջողությունները՝ 2003թ. դեկտեմբերի 17-ին Եվրոբանկը 20 մլն դոլարի չափով ներդրում է իրականացրել Հայաստանում, Ադրբեջանում, Վրաստանում և Ռուսաստանում՝ այդ ընկերության արտադրության վերակառուցման և արտադրանքի բաշխման գործառնությունները ֆինանսավորելու նպատակով: Մասնավորապես, Հայաստանում այդ ընկերության արտադրական կարողությունների ընդլայնման և արտադրանքի բաշխման կազմակերպման համար հատկացվել է 1.612 մլն եվրոյի չափով վարկ:

Արդյունաբերություն – 2 ծրագիր

Մասնավոր հատվածի ծրագիր՝ Ալավերդու պղնձաձուլարանի ողջ արտադրական կարողությունների շահագործում

2002թ. դեկտեմբերի 17-ին Եվրոբանկի տնօրենների խորհուրդը հավանություն է տվել Ալավերդու պղնձաձուլարանի ողջ արտադրական կարողությունների շահագործման նպատակով 4.250 մլն եվրոյի շրջանառու միջոցներ հատկացնելու ծրագրին: Ի դեպ, նկատենք, որ Ալավերդու պղնձաձուլարանը կովկասյան տարածաշրջանում գործող միակ մասնավոր պղնձաձուլարանն է: Ծրագիրը կաջակցի Հայաստանում պղնձի կայուն արտադրության կազմակերպմանը և դրանով իսկ՝ արտադրության գործընթացի արդյունավետության բարձրացմանը:

Մասնավոր հատվածի ծրագիր՝ «Շեն» կոնցեռնի շինանյութերի արտադրության ընդլայնման համար

2004թ. վերջին Եվրոբանկը ձեռք էր բերել «Շեն» կոնցեռնի բաժնետոմսերի 24%-ը՝ 850 հազ. եվրո արժողությամբ: 2005թ. հուլիսին Եվրոբանկն ավելացնելով իր փայամասնակցությունը կազմակերպության բաժնետիրական կապիտալում՝ այն հասցրեց 36%-ի: Փայամասնակցության ավելացումն իրականացվել է 400 հազ. եվրո արժողությամբ լրացուցիչ բաժնետոմսերի թողարկման ճանապարհով: Ներկայումս ներդրումների ընդհանուր արժողությունը 1,250 հազ. եվրո է: Դրանք հատկացվել են բետոնե գունավոր բլոկների արտադրության նոր գործարանի կառուցմանը: Գործարանը կգործարկվի 2005թ. օգոստոսի վերջին և հերթափոխի (8 ժամվա) ընթացքում կարտադրի 13 հազ. բլոկ: Ըստ թողարկվող արտադրանքի ծավալի և որակի, գործարանը միակն է Հարավային Կովկասում: Ծրագիրը կաջակցի Հայաստանում շինանյութերի ներքին պահանջարկի բավարարմանը: Ծրագրի հաջողության դեպքում Եվրոբանկի և «Շեն» կոնցեռնի համագործակցությունը կարող է շարունակվել գիպսակարտոնի գործարանի կառուցման ֆինանսավորման ոլորտում:

Ֆինանսական հատված- 10 ծրագրեր

Մասնավոր հատվածի 9 ծրագրեր՝ տեղական առևտրային բանկերի կապիտալի բազայի ընդլայնում՝ նրանց բաժնետիրական կապիտալներում մասնակցություն ունենալու միջոցով, ինչպես նաև վարկային միջոցների և երաշխիքների տրամադրում

Հայաստանի ֆինանսական համակարգին աջակցությունը Եվրոբանկը իրականացնում է հիմնականում, նախ, ***«Բազմաբանկ ֆինանսավորման»*** (Multibank Framework Financing Facility) և ***«Առևտրի խթանման»*** (Trade Facilitation Program) մեխանիզմների միջոցով, երկրորդ, հայաստանյան բանկերի ***բաժնեմասերի*** (Bank Equity Facility) ձեռքբերման միջոցով:

«Բազմաբանկ ֆինանսավորման» մեխանիզմով առավել վարկունակ և կառավարման գործուն թիմ ունեցող ՀՀ առևտրային բանկերին տրամադրվում են վարկային միջոցներ՝ փոքր և միջին ձեռնարկություններին վարկավորելու նպատակով: Այս մեխանիզմով տրամադրվող վարկերի մարման ժամկետը 5 տարի է, 24 ամիս արտոնյալ ժամկետով:

«Առևտրի խթանման» մեխանիզմի նպատակն է՝ ա) աջակցել ներ - և միջ - տարածաշրջանային առևտրին, բ) օգնել ծրագրի մասնակից տեղական բանկերին՝ կապեր հաստատելու միջազգային բանկերի հետ, գ) ավելացնել տեղական բանկերի՝ առևտրի ֆինանսավորման կարողությունները: Այս ծրագրի համաձայն՝ Եվրոբանկը երկարաժամկետ երաշխիքներ է տրամադրում տեղական բանկերին, որոնց հիման վրա նրանք կարող են՝ 1) վարկեր ներգրավել օտարերկրյա բանկերից և այնուհետև վարկավորել արտահանման կողմնորոշում ունեցող և միջազգային առևտրում ներգրավված ձեռնարկություններին, 2) ձեռք բերել կապիտալ սարքավորումներ: Տեղական բանկերի ընտրությունը կատարելիս հաշվի է առնվում նրանց ֆինանսական վիճակը, կորպորատիվ կառավարման մակարդակը, բաժնետերերի հստակ կառուցվածքը և առևտրի ֆինանսավորման անհրաժեշտությունը: Եվրոբանկի այս մեխանիզմին աջակցում են Շվեյցարիայի, Նիդեռլանդների, Նորվեգիայի, Ավստրիայի և Գերմանիայի կառավարությունները:

«Բանկերի բաժնեմասերի ձեռքբերման» մեխանիզմի շրջանակներում Եվրոբանկը ներդրում է կատարում տեղական բանկերի բաժնետիրական կապիտալներում: Բաժնեմասերը հետագայում կարող են վաճառվել տեղական կամ միջազգային ներդրողներին:

«Բազմաբանկ ֆինանսավորման», «Առևտրի խթանման» և «Բանկերի բաժնեմասերի ձեռքբերման» մեխանիզմների շրջանակներում ՀՀ առևտրային բանկերի հետ իրականացվում են հետևյալ ծրագրերը՝

«Կասկադ» բանկում (նախկինում՝ «Emporiki») բանկ. - Իրականացվել է 1.054 մլն եվրոյի ներդրում՝ բանկի բաժնետիրական կապիտալում[9]: Ձեռք է բերվել բանկի բաժնետոմսերի 25 %-ը:

Հայէկոնոմբանկ - «Բազմաբանկ ֆինանսավորման» մեխանիզմով տրամադրվել են 733 հազ. եվրոյի վարկային միջոցներ, իսկ «Առևտրի խթանման» մեխանիզմով՝ 679 հազ. եվրոյի երաշխիք: Բացի այդ, 2004թ. Եվրոբանկը ձեռք է բերել Հայէկոնոմբանկի բաժնետոմսերի 25%-ը՝ գումարած 1 բաժնետոմս: Ձեռք բերվող բաժնետոմսերի թիվը կազմում է 253,335՝ յուրաքանչյուրի անվանական արժեքը 2500 դրամ: Բաժնեմասի եվրոյով համարժեքը կազմում է 904 հազ. եվրո: Եվրոբանկի այս ներդրումը կլրացվի Եվրոհամայնքի կողմից տրամադրված շուրջ 500 հազ. եվրո կազմող տեխնիկական աջակցությամբ, որը կիատկացվի առանցքային ոլորտներում վերապատրաստման և կառավարման բարելավմանը: Եվրոբանկը կունենա իր տեղը Հայէկոնոմբանկի վերահսկողական խորհրդում: Այս ներդրումը կամրապնդի Հայէկոնոմբանկի դիրքերը շուկայում և կնպաստի Հայաստանի քաղաքացիներին մատուցվող բանկային ծառայությունների բարելավմանը:

«Անելիք» բանկ – «Բազմաբանկ ֆինանսավորման» մեխանիզմով տրամադրվել են 733 հազ. եվրոյի վարկային միջոցներ, իսկ «Առևտրի խթանման» մեխանիզմով՝ 253 հազ. եվրոյի երաշխիք: Բացի այդ, Եվրոբանկը 2004թ-ին «Անելիք» բանկին տրամադրել է 1,099 հազ. եվրոյի վարկային միջոցներ մեկ այլ՝ «Փոքր և միջին ձեռնարկությունների վարկային գիծ» (SME credit line) մեխանիզմով: Այս ծրագրի նպատակը փոքր և միջին բիզնեսների վարկավորման շարունակականության ապահովումն է:

Հագյուղփոխբանկ - «Բազմաբանկ ֆինանսավորման» մեխանիզմով տրամադրվել են 2,381 հազ. եվրոյի վարկային միջոցներ: Այդ միջոցներով Հայգյուղփոխբանկը տեղական ձեռներեցներին կտրամադրի «միկրո» վարկեր՝ մինչև 10,000 դոլար արժողությամբ, մինչև երկու տարի ժամկետով և «փոքր» վարկեր՝ մինչև 100,000 դոլար արժողությամբ, մինչև երեք տարի ժամկետով: «Առևտրի խթանման» մեխանիզմով Հայգյուղփոխբանկին տրամադրվել է 253 հազ. եվրոյի երաշխիք:

Մասնավոր հատվածի ծրագիր՝ «Կասկադ» ապահովագրական և վերաապահովագրական ընկերության բաժնետիրական կապիտալում ներդրում իրականացնելու. 2005թ. հունիսի 22-ին Եվրոբանկի տնօրենների խորհուրդը քննարկել է ՀՀ ֆինանսական համակարգի ևս 1 ծրագիր՝ «Կասկադ» ապահովագրական և վերաապահովագրական ընկերության[10] բաժնետիրական կապիտալը 0.5 մլն ԱՄՆ դոլարով ավելացնելու և ընկերության բաժնետոմսերի 35%-ը ձեռք բերելու մասին: Ներդրումը ապահովում է լրացուցիչ ֆինանսներ, որոնք կուղղվեն ընկերության շրջանառու կապիտալի համալրմանը, ընկերության ենթակառուցվածքի և վաճառահանման ցանցի զարգացմանը և նոր առևտրային ու անձնական ապահովագրական ծառայությունների մատուցմանը: Կապիտալի ավելացումը կատարվելու է 2006-2008թթ. ընթացքում: Ծրագիրը կխթանի նաև մրցակցությունը ապահովագրական բիզնեսի ոլորտում:

---

[9] Այս ներդրումը Հունաստանի առևտրային բանկի հետ 1995թ. դեկտեմբերին Եվրոբանկի կնքած Բազմածրագիր մեխանիզմի մի մասն է: Եվրոբանկն աջակցում է Հունաստանի առևտրային բանկի ներդրումային ծրագրերի իրագործմանը Բալկանյան և Սևծովյան երկրներում: Ծրագիրը ընդհանուր արժողությամբ կազմել է 43.5 մլն ԱՄՆ դոլար: Ծրագիրը նպատակ ունի որոշ երկրներում հիմնել Ծրագրային բանկեր, մասնավորապես՝ Ալբանիայում, Հայաստանում, Վրաստանում և Մոլդովայում: Եվրոբանկի կողմից ներդրվում է 15 մլն ԱՄՆ դոլար՝ որպես կանոնադրական կապիտալ: Սկզբնական շրջանում Ծրագրային բանկն իր գործունեությունը կենտրոնացնում է արդիական, արդյունավետ ծախքերով հիմնական առևտրային բանկային ծառայությունների մատուցման վրա: Տեղական բանկերը, որպես փոքրամասնություն կազմող բաժնետերեր, կարող են մասնակցել Ծրագրային բանկի հիմնմանը՝ դրանով բարձրացնելով տեղական շուկաների զարգացման համար անհրաժեշտ ներդրումների ծավալները:

*[10] «Կասկադ» ապահովագրական և վերաապահովագրական ընկերությունը ՍՊԸ է, որը Հայաստանում լիցենզավորվել է 2005թ. հունվարին և գործում է որպես ապահովագրական ընկերություն: Ընկերության կապիտալի 99.9%-ը ներկայումս տնօրինում է **Cascade Capital Holdings**-ը, որն էլ, իր հերթին, տնօրինվում է Գաֆեսչյան հիմնադրամի կողմից:*

III.Քննարկված և հետագա ընթացք չստացած ծրագրերը

Էներգետիկա՝ էլեկտրաբաշխիչ ցանցերի սեփականաշնորհում

Եվրոբանկի տնօրենների խորհուրդը 2000թ. սեպտեմբերին որոշում էր կայացրել մասնակցել 4 էլեկտրաբաշխիչ ցանցերի սեփականաշնորհման գործընթացին՝ ՀՀ կառավարությունից գնելով յուրաքանչյուր էլեկտրաբաշխիչ ցանցի բաժնետոմսերի 19.9%-ը: Ներդրման ընդհանուր չափը կազմելու էր 20 մլն դոլար: Եվրոբանկը նախատեսում էր ռազմավարական ներդրողի (ռազմավարական ներդրողը տնօրինում է բաժնետոմսերի 51%-ը) հետ 5-15 տարով կնքել փութ/քոլ օպցիոնի պայմանագիր, այսինքն՝ նրան իրավունք տալ հետագայում գնելու Եվրոբանկի բաժնեմասը:

Սակայն ռազմավարական ներդրողը (Midland Resources) այդ բնագավառում փորձի պակասի պատճառով Եվրոբանկի կողմից չդիտարկվեց որպես ընդունելի ներդրող և ծրագիրը չեղյալ համարվեց: Եվրոբանկի փորձագետները գտնում են, որ ներկայումս էլեկտրաբաշխիչ ցանցերը կառավարվում են արդյունավետ և, հետևաբար, հնարավոր են համարում հետագա հինգ տարիների ընթացքում ներդրումներ իրականացնել այդ ոլորտում:

Հեռահաղորդակցություն՝ Արմենթել

Հեռահաղորդակցության տեղական ցանցերի արդիականացման, միջազգային ուղիների ընդլայնման, հեռավոր շրջաններում հեռախոսային ծառայությունների սփռման, հեռահաղորդակցման խտության ավելացման և ծառայությունների բարելավման նպատակով Եվրոբանկը 1998թ. հուլիս-օգոստոս ամիսներին նախատեսում էր ուղղակի ներդրում կատարել Հայաստանի հեռահաղորդակցության ոլորտում և վարկ տրամադրել (60 մլն դոլար, որը բաղկացած էր 40 մլն «Ա» վարկից՝ Եվրոբանկի հաշվից և 20 մլն «Բ» վարկից՝ մասնակիցների հաշիվներից): Այս մասնակցությամբ Եվրոբանկը մտադիր էր խրախուսել մրցակցությունը և ստեղծել ներդրումներ ներգրավելու հնարավորություն՝ ներկայումս թերի շահագործվող հեռախոսային շուկայի մի շարք հատվածների համար: Սակայն ծրագիրը չեղյալ համարվեց մինչև ստորագրելը:

Ներկայումս Եվրոբանկը գտնում է, որ տեղեկատվական տեխնոլոգիաների միջազգային շուկայում կարևոր դիրք ունենալու համար Հայաստանին անհրաժեշտ են մրցակցայնորեն գնորոշված և արդյունավետ աշխատող հեռահաղորդակցության ծառայություններ: Եվրոբանկը մտադիր է նախաձեռնել տեխնիկական օգնության ծրագիր՝ նպատակ ունենալով աջակցել կապի նախարարությունից անկախ կարգավորվող մարմնի կայացմանը:

IV.Նախատեսվող ծրագրերը գործող մեխանիզմների շրջանակներում

Մասնավոր հատվածի ծրագիր՝ հիդրո և քամու ուժով ու բիոմասայով աշխատող կայանների կառուցում

Էներգետիկ հատվածի վերակազմավորմանն ուղղված պետական ծրագրերին աջակցելու նպատակով Եվրոբանկը նախատեսում է հետազոտել մասնավոր փոքր հիդրո և քամու ուժով ու բիոմասայով աշխատող կայանների կառուցման հնարավորությունը ՀՀ-ում, որի շուրջ այժմ բանակցում են եվրոպական մի շարք ընկերությունների հետ՝ համատեղ ֆինանսավորման նպատակով[11]: 2004թ. Հայաստանի իշխանությունների հետ բանակցությունների ժամանակ նշվել է, որ նոր կայաններ կառուցելու համար մասնավոր հատվածում արվող ներդրումները կարող են կազմել մինչև 100 մլն դոլար, ընդ որում, նախնական փուլում՝ 30-40 մլն դոլար:

Եվրոբանկը նախատեսում է Հայաստանի մասնավոր հատվածի զարգացմանը աջակցել նաև հետևյալ հիմնադրամների միջոցով՝

- **«Մետաքսի ճանապարհ» հիմնադրամ**. Այս հիմնադրամի միջոցով նախատեսվում է բաժնեմասային ներդրումներ կատարել Կենտրոնական Ասիայում և Կովկասում, հիմնականում Ղազախստանում, Ուզբեկստանում և Ադրբեջանում, ինչպես նաև Ղրղզստանում, Տաջիկստանում, Թուրքմենստանում, Հայաստանում և Վրաստանում գործող ձեռնարկություններում:
- **Կովկասյան հիմնադրամ (տարածաշրջանային).** 1998թ. դեկտեմբերից Եվրոբանկը, Անդրծովյան մասնավոր ներդրումների կորպորացիային (Overseas Private Investment Corporation) զուգահեռ,

[11] *Տե՛ս Building on Success/ EBRD, 2005, էջ 15:*

ստեղծել է հիմնադրամ, որի միջոցով նախատեսում է շուրջ 7.4 մլն եվրոյի ներդրումներ կատարել կովկասյան երկրներում՝ Վրաստանում, Ադրբեջանում և Հայաստանում գործող մասնավոր ձեռնարկություններում: Այս ծրագիրը վերանայվել է 2001թ. փետրվարի 9-ին: Կովկասյան հիմնադրամի նպատակն է՝ հասնել կապիտալի երկարաժամկետ աճի և ստեղծել միջին ժամկետ դրամական հոսքեր՝ հասույթը ներդնելով Կովկասի՝ պատմականորեն կարևոր նշանակություն ունեցող հատվածներում, օրինակ՝ տրանսպորտի, մթերքների վերամշակման և բաշխման ոլորտներում, ինչպես նաև սեփականության զարգացման ծրագրերում: Եվրոբանկի փորձագետներն այն կարծիքին են, որ հիմնադրամի հաջող գործունեությունը կմեծացնի կովկասյան տարածաշրջանի գրավչությունը այլ պոտենցիալ ներդրողների համար: Ագրոբիզնեսում, հեռահաղորդակցության մեջ և տրանսպորտում նախատեսվող ծրագրերը, ըստ էության, կնպաստեն երկրների միջև կապերի հաստատմանը և այդ տնտեսություններում գործառնական ծախքերի կրճատմանը:

- **Սևծովյան հիմնադրամ.** Այս հիմնադրամի միջոցով Եվրոբանկը արդեն ներդրումներ է կատարել սևծովյան տարածաշրջանի միջին չափի ձեռնարկություններում, հատկապես Բուլղարիայում և Ռումինիայում: Հիմնադրամի աշխարհագրական շրջանակների մեջ ներառված են նաև Ուկրաինան, Ռուսաստանը, Հայաստանը, Ադրբեջանը, Վրաստանը, Մոլդովան և Մակեդոնիան: Հիմնադրամի միջոցով նախատեսվում է մինչև 10 մլն դոլար ներդրումներ կատարել նաև Կենտրոնական Եվրոպայում՝ Լեհաստանում, Հունգարիայում և Չեխիայում: Տիպային ներդրման չափը կազմում է 3-9 մլն դոլար: Հայաստանում նախատեսվող ներդրման չափը 763 հազ. եվրո է:

V. Եվրոբանկի գործունեության ուղղությունները և ֆինանսավորման մեխանիզմները ներկա փուլում

Եվրոբանկի կազմավորումից անցել է գրեթե 15 տարի: Եվրոբանկի անդամ 27 երկրների պահանջմունքները ներկայումս այլ են, քան 1991 թվականին էին: Եվրոբանկը ձևավորվեց Արևմտյան և Կենտրոնական Եվրոպայի, ինչպես նաև նախկին ԽՍՀՄ երկրներին շուկայական տնտեսության անցման փուլում աջակցելու նպատակով: Այսօր արդեն առաջացել են լուծում պահանջող նոր խնդիրներ, որոնք փոխում են նաև Եվրոբանկի գործունեության գերակայություններն ու ուղղությունները: Այդ մասին հանգամանորեն խոսվել է Եվրոբանկի 2005թ. տարեկան հավաքում և արձանագրվել, որ 2006թ. տարեկան հավաքում Եվրոբանկը կներկայացնի իր գործունեության նոր ռազմավարությունը առաջիկա 5 տարվա համար:

Եվրոբանկը նախատեսում է անդամ-երկրներում իր հետագա գործունեությունը ծավալել նոր բիզնես-մոդելի շրջանակներում, համաձայն որի՝ նախատեսվում է.

- ընդլայնել կիրառվող ֆինանսական գործիքների կազմը և դրանք համապատասխանեցնել անցումային երկրների շուկաներին,
- ավելացնել ծրագրերի քանակը և ֆինանսավորման ծավալները Արևելքում՝ հատկապես Ռուսաստանում և Հարավ-արևելքում՝ Բալկաններում, ներառյալ՝ Բուլղարիայում, Ռումինիայում, Ուկրաինայում և Կենտրոնական Ասիայում,
- կրճատել ներդրումների ծավալները Եվրոմիությանը արդեն միավորված 8 երկրներում և հիմնականում իրականացնել բաժնետիրական ներդրումներ,
- ավելացնել բաժնետիրական ներդրումների ծավալները անդամ-երկրներում, ստեղծել վարկավորման հնարավորություններ միջին չափի ձեռնարկությունների համար և նպաստել համայնքային ծառայությունների ոլորտի զարգացմանը,
- աջակցել կառավարությունների ջանքերին՝ ուղղված իրենց երկրներում օրենքի գերակայության ապահովմանը,
- ֆինանսավորել տարածաշրջանային ենթակառույցների (էներգետիկա, տրանսպորտ, ջրամատակարարում) և առևտրի զարգացման ծրագրեր,
- աջակցել նորամուծական մոտեցումներին էներգետիկայի զարգացման այնպիսի ուղղություններում, որոնք դուրս են նավթի և գազի առաջարկի ավանդական լուծումներից,
- խթանել տարածաշրջանում կապիտալ շուկաների զարգացումը և այդ շուկաները օգտագործել որպես ներդրումներ ներգրավելու գործիք, մասնավորապես՝ վարկեր տրամադրելով ազգային արժույթով, ինչպես դա վերջերս արվեց Ռուսաստանում (դա հնարավորություն կտա կրճատելու փոխարժեքի ռիսկը փոխառուների կամ ներդրողների համար),
- նպաստել օտարերկրյա ֆինանսական հոսքերի ուղղմանը բանկային հաստատություններ,
- վերանայել միջազգային կազմակերպությունների հետ Եվրոբանկի փոխհարաբերություններն այնպես, որ ապահովվի փոխգործողությունների առավելագույն արդյունավետություն,
- պարբերաբար կազմակերպել քաղաքական երկխոսություններ տարածաշրջանի երկրների միջև՝ իրենց ընդհանուր մտահոգությունները քննարկելու նպատակով:

Եվրոբանկի փորձագետները մտադիր են գործել առավել բարդ միջավայրում, այսինքն՝ նրանք նախատեսում են գնահատել, իրականացնել և մոնիտորինգի ենթարկել թվաքանակով շատ, սակայն ֆինանսավորման ծավալներով փոքր ներդրումներ: Դա կարող է հանգեցնել Եվրոբանկի ռիսկայնության, ծրագրերի արժեքի/ծախքի ավելացման և շահութաբերության կրճատման:

Եվրոբանկի 2004թ. տարեկան հավաքում Եվրոբանկի միջին ժամկետ ռազմավարության առաջնային նպատակներից է սահմանվել վաղ անցումային երկրների (Early Transition Countries, ETC) օժանդակությունը ընդլայնելու հարցը: Այդ երկրների շարքն են դասվում ԱՊՀ-7 ամենաաղքատ երկրները՝ Հայաստանը, Ադրբեջանը, Վրաստանը, Ղրղզստանը, Մոլդովան, Տաջիկստանը և Ուզբեկստանը: Մասնավորապես, առաջարկվել է ավելացնել ֆինանսական միջոցների ծավալները, իրականացնել նոր ծրագրեր, զարգացնել կիրառվող գործիքակազմը և մշակել նոր գործիքներ, բարելավել համագործակցությունը միջազգային այլ ֆինանսական կազմակերպությունների հետ: Այդ նպատակով Եվրոբանկի փորձագետների կողմից մշակվել է ինստիտուցիոնալ ռազմավարություն (the ETC Initiative) և դրա ներդրմանն առնչվող գործողությունների պլան (Action plan):

Ընդլայնելով կիրառվող ֆինանսական գործիքների կազմը և դրանք համապատասխանեցնելով անցումային երկրների շուկաներին, Եվրոբանկը նախատեսում է տեղական ձեռնարկությունների անմիջական ֆինանսավորումը իրականացնել Միջին չափի ֆինանսավորման ընդլայնված մեխանիզմի (Medium-sized Co-financing Facility, MSCF), Ուղղակի ներդրումային մեխանիզմի (Direct Investment Facility, DIF), Ուղղակի վարկային մեխանիզմի (Direct Loan Facility, DLF) և Արտահանման նախնական ֆինանսավորման նոր մեխանիզմի (Proposed Structured Pre-Export Financing Facility) միջոցով:

Միջին չափի ֆինանսավորման մեխանիզմը հաստատվել է Եվրոբանկի տնօրենների խորհրդի կողմից, 2003թ. սեպտեմբերի 30-ին: Մեխանիզմի հիմնական նպատակն է՝ վաղ անցումային երկրներում բավարարել միջին չափի վարկերի պահանջարկը, որը հնարավոր չէ անել ներկայումս կիրառվող մեխանիզմների միջոցով: Այդ նպատակով նախատեսվում է մասնակցել տեղական բանկերի կողմից մասնավոր ձեռնարկությունների վարկավորմանը՝ համաֆինանսավորման ձևով: Այս գործիքը նախատեսված է փոքր տնտեսություն և միջին ու խոշոր ձեռնարկությունների սահմանափակ թվաքանակ ունեցող երկրների համար: Այդ երկրների կազմում ընդգրկված են վաղ անցումային շրջանի վեց երկրներ, որոնց թվում է Հայաստանը, ինչպես նաև չորս այլ փոքր երկրներ: Եվրոբանկի մասնակցությունը կկազմի յուրաքանչյուր վարկային ենթածրագրի մինչև 50%-ը: Յուրաքանչյուր վարկային ենթածրագրի չափը կկազմի 1-8 միլիոն եվրո, իսկ Եվրոբանկի մասնակցությունը դրանցից յուրաքանչյուրին՝ 0.5-4 միլիոն եվրո: Այս մեխանիզմի համար հատկացված ընդհանուր գումարը 60 միլիոն եվրո է:

Ուղղակի ներդրումային մեխանիզմը արդեն 4 տարի գործող ծրագիր է, որը հնարավորություն է տալիս բաժնետիրական ներդրումներ կատարելու վաղ անցումային երկրների նոր ստեղծվող մասնավոր ձեռնարկություններում: Այս մեխանիզմի իրականացման նպատակով հատկացված է 60 միլիոն դոլար, որից 38 միլիոն դոլարը դեռևս բաշխված չէ: Յուրաքանչյուր առանձին ներդրման չափը կազմելու է 0.5-2.5 մլն ԱՄՆ դոլար, ընդ որում՝ Եվրոբանկի բաժնեմասը կարող է կազմել մինչև 49%:

Ուղղակի վարկային մեխանիզմը մշակված է միջին և երկարաժամկետ ֆինանսական գործիքները համալրելու նպատակով: Այս մեխանիզմի հիմնական խնդիրը միջին չափի մասնավոր ձեռնարկությունների ֆինանսական պահանջների բավարարումն է: Որոշ վաղ անցումային երկրներում, չնայած բարդ շուկայական պայմաններին, ստեղծվում են մասնավոր ձեռնարկություններ, որոնք, ըստ միջազգային ստանդարտների, միջին չափի են, բայց իրականում դինամիկ հատված են զարգացող մասնավոր շուկայում և որոշիչ դեր են խաղում շուկայի զարգացման գործում: Ուղղակի վարկավորման գործիքի մշակումը կարևորվել է այնքանով, որ ուղղակի կապիտալ ներդրումները երբեմն հիմնախնդրային են՝ բաժնետերերի փոքրամասնության վատ պաշտպանվածության, ոչ համարժեք կորպորատիվ կառավարման, ինչպես նաև տեղական բաժնետերերի կողմից սեփականությանը և կառավարմանը միջամտելու առումով: Այս մեխանիզմի համար հատկացված է 20 միլիոն եվրո, որը բաշխվելու է 3 տարիների ընթացքում: Վարկերը կտրամադրվեն մինչև 5 տարի ժամկետով:

Արտահանման նախնական ֆինանսավորման նոր մեխանիզմը նախատեսված է այն արտահանողների համար, ովքեր հումք, սարքավորում և շրջանառու կապիտալ ձեռք բերելու համար կանխիկի պահանջ ունեն: Կախված բիզնեսի տեսակից՝ ֆինանսավորումը կարող է ապահովված լինել արտահանվող ապրանքներով, հումքով և այլն: Այս մեխանիզմն արդեն կիրառվում է Տաջիկստանում և Ղրղզստանում՝ բամբակի արտահանման ժամանակ:

Հայաստանը կարող է օգտվել վերոնշյալ ֆինանսավորման մեխանիզմներից և Եվրոբանկի ռազմավարության բնագավառներում կարող է առաջարկել նոր ծրագրեր: Այսպես, Հայաստանի ֆինանսական համակարգում Եվրոբանկը նպատակ ունի օժանդակել ֆինանսական միջնորդության աստիճանի բարձ-

րացմանը, բանկային համակարգի համախմբմանը, ինչպես նաև նպաստել ոչ բանկ ֆինանսական կազմակերպությունների զարգացմանը: Մասնավորապես, Եվրոբանկը նախատեսում է.

- ընդլայնել նախկինում տրամադրված վարկային միջոցների ծավալները և տեղական բանկերին տրամադրել նոր վարկային գծեր՝ միջին և փոքր ձեռնարկություններին ֆինանսավորելու համար,
- աջակցել գործընկեր տեղական բանկերին՝ միջին չափի ֆինանսավորման մեխանիզմի միջոցով հաճախորդներին երկարաժամկետ վարկեր տրամադրելու հարցում,
- իրականացնել ներդրումներ տեղական բանկերի բաժնետիրական կապիտալներում,
- ընդլայնել առևտրի խթանման ծրագրի շրջանակները՝ նոր մասնակիցներ ներգրավելու և գործող վարկային գծերն ավելացնելու միջոցով,
- նախաձեռնել լիզինգի, հիփոթեքային վարկի և այլ ֆինանսական գործիքների զարգացմանն ուղղված նոր ծրագրերի մշակում,
- բիզնես-միջավայրը և ֆինանսական համակարգը զարգացնելու նպատակով շարունակական երկխոսություններ վարել տեղական ֆինանսական կազմակերպությունների՝ Հայաստանի կառավարության և կենտրոնական բանկի հետ:

Կրկին նկատենք, որ Եվրոբանկը բարձր է գնահատում Հայաստանի տնտեսական առաջընթացը: 2004թ. տարեկան հաշվետվության մեջ Եվրոբանկի փորձագետները նշում են. «2004թ-ին Հայաստանի կառավարությունը զգալիորեն բարելավել է բիզնես- միջավայրը, որը նպաստել է ներդրումների ներգրավմանը: Կարևորագույն փոփոխություններ են կատարվել «Բաժնետիրական ընկերությունների մասին» և «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» օրենքներում ու արժեթղթերի շուկայի օրենսդրության մեջ՝ նպատակ ունենալով բարելավել կորպորատիվ կառավարման պրակտիկան և ֆինանսական շուկաներում իրականացվող գործառնությունների հրապարակայնությունը: Հայաստանը նաև կարևորագույն քայլեր է ձեռնարկել իր բջջային հեռահաղորդակցության շուկան ազատականացնելու ուղղությամբ: Կայուն տնտեսական աճը Հայաստանում պահանջում է մասնավոր հատվածի գործունեության, հատկապես՝ ագրոբիզնեսի հիմնավոր զարգացում»[12]:

Ամփոփելով, նշենք, որ Եվրոբանկի տեսանկյունից Հայաստանի տնտեսական զարգացման համար կարևորվում են նաև՝ ա) ֆինանսական համակարգի արդյունավետության և դրա նկատմամբ վստահության բարձրացումը, բ) պետական ենթակառույցների ապապետականացման խթանումը՝ պատշաճ կառավարման կառույցներով շուկայական ինստիտուտների ստեղծման միջոցով, գ) սեփականաշնորհման գործընթացի ավարտը և սեփականաշնորհված ձեռնարկությունների վերակառուցումը, դ) պարտքի կայունության ապահովումը: Եվրոբանկի կողմից Հայաստանի համար հաստատված ռազմավարությանը համապատասխան՝ ծրագրերի ճիշտ ընտրությունը և պատշաճ իրականացումը կնպաստեն վերոնշյալ խնդիրների լուծմանը և ՀՀ տնտեսության զարգացմանը:

Եվրոբանկի կողմից վարկավորման պայմանները բավականին խիստ են.

- բացառում են պարտքի վերածնակերպումը,
- Եվրոբանկն ունի առաջին ատյանի վարկատուի կարգավիճակ,
- մասնավոր ձեռնարկություններին փոխատվությունները տրամադրվում են միայն երկրի կառավարության երաշխիքով,
- ելնելով տվյալ երկրի ռիսկայնությունից՝ Եվրոբանկը վարկավորում է շուկայական բարձր տոկոսադրույքներով, ինչը ներառում է նաև տվյալ երկրում Եվրոբանկի ռիսկի չափը:

Վերջիններս բխում են այդ կառույցի բնույթից, այսինքն՝ ի տարբերություն ԱՄՀ-ի և Համաշխարհային բանկի, Եվրոբանկը հետապնդում է նաև կոմերցիոն շահեր[13]: Դրանով էլ հենց պայմանավորված է եղել այն հանգամանքը, որ, չնայած ըստ Եվրոբանկի «անցումային ինդեքսի» Հայաստանի գնահատականը ԱՊՀ երկրներում ամենաբարձրն է եղել, սակայն ներդրումների տեսանկյունից Հայաստանն ավելի «համեստ» դիրք է գրավում:

Հետևաբար ավելի ցանկալի է, որ Հայաստանում Եվրոբանկի հետագա ներդրումները իրականացվեն ոչ թե Եվրոբանկի վարկային գործիքի միջոցով, այլ բաժնետիրական կապիտալներում մասնակցության, տեխնիկական աջակցության, մասնավոր ձեռնարկություններում, այդ թվում նաև ֆինանսական հաստատություններում կառավարման միջազգային փորձի և նոր տեխնոլոգիաների ներդրման, ինչպես նաև կադրերի վերապատրաստման միջոցով[14]:

---

[12] Տե՛ս Buliding on Success/ EBRD, էջ 50:

[13] Հիշեցնենք, որ Եվրոբանկի բաժնետերերի թվում է նաև շահույթի նպատակ հետապնդող Եվրոպական ներդրումային բանկը:

[14] Հայաստանում Եվրոբանկի նոր ռազմավարությունը ներկայումս մշակման փուլում է և կհրապարակվի 2005 թվականի դեկտեմբերին:

Օգտագործված գրականություն

1. EBRD Investments 1991-2004/EBRD Annual Report, 2004
2. Building on Success/ EBRD, Economic snapshots for 2004
3. The times – and the EBRD – are changing/EBRD Annual Meeting, 2005
4. EBRD President Jean Lemierre's Press Conference at the Annual Meeting in Belgrade, 23 may, 2005
5. Interim Financial Report at 1 March 2005, EBRD, 2005
6. Law in Transition 2005 / Courts and Judges, EBRD, 2005
7. Strategy for Armenia/EBRD, 25 November, 2003
8. Project Summary Document: Armeconombank equity, 2004
9. Project Summary Document: Cascade Insurance and Reinsurance Company, 2005


ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ* (2004 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ)

Դրամավարկային քաղաքականության վարչություն

Մարգարիտ Մամիկոնյան

Ընդհանուր տեղեկատվություն [1]

Հայաստանի Հանրապետությունը անդամակցում է Համաշխարհային բանկի խմբի բոլոր հինգ կազմակերպություններին՝ Վերակառուցման և զարգացման միջազգային բանկին /IBRD/, Զարգացման միջազգային ընկերակցությանը /IDA/, Միջազգային ֆինանսական կորպորացիային /IFC/, Կապիտալ ներդրումների բազմակողմանի երաշխիքների գործակալությանը /MIGA/ և Ներդրումային վեճերի կարգավորման միջազգային կենտրոնին (ICSID)[2]:



Հայաստանը անդամակցում է Համաշխարհային բանկին 1992թ. ապրիլից: Այդ ժամանակահատվածից սկսած՝ Համաշխարհային բանկի խմբի կազմակերպությունները Հայաստանին ոչ միայն տրամադրել են ֆինանսական զգալի աջակցություն, այլև մատուցել են վերլուծական և խորհրդատվական ծառայություններ: 2004թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Համաշխարհային բանկի խմբի կազմակերպությունները Հայաստանին տրամադրել են 826.9 մլն դոլարի վարկեր, իրականացրել են 5.2 մլն դոլարի բաժնետիրական ներդրում և տրամադրել են 2.7 մլն դոլարի երաշխիք (տե՛ս աղ. 1):

** Հեղինակի տեսակետը կարող են չհամընկնել ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական դիրքորոշմանը:*

[1] Այս հրապարակումը նոր տվյալներով լրացնում է «Համաշխարհային բանկ» հոդվածը («ՀՀ ԿԲ տեղեկագիր», թիվ 1, 2000թ.):

[2] «Համաշխարհային բանկի խումբ» տերմինը ներառում է բոլոր հինգ կազմակերպությունները, մինչդեռ «Համաշխարհային բանկ» տերմինը վերաբերում է դրանցից երկուսին՝ Վերակառուցման և զարգացման միջազգային բանկին (IBRD) և Զարգացման միջազգային ընկերակցությանը (IDA):

Աղյուսակ 1. Հայաստանում Համաշխարհային բանկի խմբի կազմակերպությունների գործող ծրագրերը (2004թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ)

Համաշխարհային բանկի խմբի կազմակերպության անվանումը	Բնագավառը	Ծրագրերի թիվը	Վարկ *(մլն ԱՄՆ դոլար)*	Կապիտալ *(մլն ԱՄՆ դոլար)*	Երաշխիք *(մլն ԱՄՆ դոլար)*
Վերականգնման և զարգացման միջազգային բանկ (IBRD)	Պետական	1	12.0		
Զարգացման միջազգային ընկերակցություն (IDA)	Պետական	29	810.9		
Միջազգային ֆինանսական կորպորացիա (IFC)	Մասնավոր	3	4.0	5.2	
Կապիտալ ներդրումների բազմակողմանի երաշխիքների գործակալություն (MIGA)	Մասնավոր	1			2.7
ԸՆԴԱՄԵՆԸ		34	826.9	5.2	2.7

Հայաստանում իր գործունեության շուրջ տասնհինգ տարիների ընթացքում Համաշխարհային բանկը, ԱՄՀ-ի և այլ դոնորների հետ միասին, զգալիորեն աջակցել է երկրում մակրոտնտեսական կայունության հաստատմանը, օգնել է Հայաստանին՝ անցնելու նոր, շուկայական տնտեսավարման մեխանիզմների և զարգացնելու մասնավոր ու ձեռնարկատիրական նախաձեռնությունները, մեծապես նպաստել է օրենսդրական կարգավորումների դաշտի զարգացմանը, իրավական և դատական բարեփոխումների ընթացքին: Թեև աղքատության մակարդակը, ըստ Համաշխարհային բանկի, կրճատվել է ոչ ցանկալի չափով, սակայն բանկն ակտիվորեն աջակցել է բնակչության անապահով խմբի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված սոցիալական նպաստների նոր համակարգի ներդրմանը: Համաշխարհային բանկը նաև զգալի մասնակցություն է ունեցել էներգետիկայի ոլորտի բարեփոխումների գործում: Տրանսպորտի և գյուղատնտեսության բնագավառում Համաշխարհային բանկը խոշոր ներդրումներ է իրականացրել ճանապարհաշինության և ոռոգման համակարգի վերականգնման նպատակով, սակայն դեռևս զգացվում է լրացուցիչ ֆինանսավորման պահանջ՝ դրանք ավարտին հասցնելու համար: Բանկի աջակցության ծրագրերը նպաստել են նաև Հայաստանում մասնավոր հատվածի զարգացմանը, հատկապես սեփականաշնորհման գործընթացին, սակայն դեռևս բավականին անելիքներ կան բիզնես-միջավայրը բարելավելու և նոր աշխատատեղեր ապահովող փոքր և միջին ձեռնարկությունների ստեղծումը խթանելու գործում:

Հայաստանում Համաշխարհային բանկի գործունեության ներկայիս ռազմավարությունը ներառում է՝

- մակրոտնտեսական կայունության ամրապնդում,
- մասնավոր հատվածի զարգացման խթանում՝ հետագա կառուցվածքային բարեփոխումների իրականացման, ֆինանսական, իրավական ու դատական համակարգերի ամրապնդման, ինչպես նաև էներգետիկայի, տրանսպորտի և ջրամատակարարման հետ կապված հիմնախնդիրների լուծմանը աջակցելու միջոցով,
- բարեփոխումների սոցիալական ուղղվածության ընդգծվածություն և աղքատության կրճատմանն աջակցում՝ սոցիալական ապահովության, առողջապահության ու կրթության համակարգերի ամրապնդման միջոցով:

Համաշխարհային բանկի խմբի բոլոր հաստատությունների ֆինանսական տարին սկսվում է հուլիսի 1-ից և ավարտվում հաջորդ տարվա հունիսի 30-ին:

Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ /IBRD/

Վերակառուցման և զարգացման միջազգային բանկը (այսուհետև՝ ՎԶՄԲ) կազմավորվել է 1945թ-ին: ՎԶՄԲ կազմի մեջ մտնում է 184 երկիր՝ աշխարհի գրեթե բոլոր երկրները:

ՎԶՄԲ գլխավոր նպատակներն են՝ ***աղքատ-երկրներում կայուն տնտեսական զարգացման խթանումը և աղքատության կրճատումը***, որոնց իրագործման համար ՎԶՄԲ-ն վարկեր, երաշխիքներ է տրամադրում և ոչ վարկային վերլուծական ու խորհրդատվական ծառայություններ է մատուցում այդ երկրներին: ՎԶՄԲ-ն վարկավորում է 1 շնչի հաշվով միջին (ցածրից բարձր) եկամուտ[3] ունեցող և վարկունակ

[3] Համաձայն Համաշխարհային բանկի դասակարգման՝ ցածր եկամուտ ունեցող երկրներ են համարվում բնակչության 1 շնչի հաշվով 865 ԱՄՆ դոլար կամ պակաս եկամուտ ունեցող երկրները: Տես http://web.worldbank.org/WBSITE/EXTERNAL/TOPICS/EXTDEBTDEPT/0,,contentMDK:20260732~menuPK:531717~pagePK:64166646~theSitePK:469043,00.html.

երկրներին: Այս կազմակերպության վարկային միջոցներն օգտագործվում են զարգացման այնպիսի ծրագրերի ֆինանսավորման համար, ինչպիսիք են՝ մայրուղիների, դպրոցների և հոսպիտալների կառուցումը: Բանկը ֆինանսավորում է նաև այն ծրագրերը, որոնց օգնությամբ կառավարությունները վերափոխում են իրենց տնտեսությունների կառավարման ձևը:

ՎԶՄԲ վարկային գործառնությունների հիմքում հետևյալ սկզբունքներն են՝

- ՎԶՄԲ-ն վարկավորում է անդամ-երկրների կառավարություններին կամ մասնավոր ձեռնարկություններին,
- վարկերը տրամադրվում են տվյալ երկրի կառավարության երաշխավորությամբ և ողղվում են տնտեսական զարգացման ծրագրերի ֆինանսավորմանը,
- վարկերը տրամադրվում են միայն այն դեպքում, երբ եկամուտների անբավարարության պատճառով փոխառու երկիրը հնարավորություն չունի որևէ մասնավոր աղբյուրից ներգրավելու վարկեր՝ շուկայական տոկոսադրույքներով,
- վարկերը տրամադրվում են ՎԶՄԲ փորձագիտական հանձնաժողովի դրական գնահատականի և համաձայնության դեպքում,
- վարկային միջոցների օգտագործումը խիստ նպատակային է և իրականացվում է փուլերով:

Տարիների ընթացքում կուտակած եկամուտը և բարձր վարկանիշը (AAA) ՎԶՄԲ-ին հնարավորություն են տալիս ֆինանսավորելու բազմաթիվ զարգացման ծրագրեր և ապահովելու իր ֆինանսական կայունությունը: Թողարկելով պարտատոմսեր՝ ՎԶՄԲ-ն կապիտալի շուկաներից փոխառում է էժան միջոցներ և անդամ-երկրներին առաջարկում մատչելի պայմաններով: Վարկերը տրամադրվում են 15-20 տարի ընդհանուր ժամկետով, այդ թվում՝ 3-5 տարին համարվում է արտոնյալ ժամկետ, որի ընթացքում հիմնական գումարի մարումներ չեն իրականացվում:

ՎԶՄԲ-ն սովորաբար ֆինանսավորում է վարկավորվող ծրագրերի ընդհանուր արժեքի 30 տոկոսը, իսկ տվյալ ծրագրով նախատեսված մնացած ծախսերը ֆինանսավորվում են ներքին կամ արտաքին այլ աղբյուրների հաշվին: Մինչև 2004թ. հունիսի 30-ը ՎԶՄԲ-ն հավանություն էր տվել 129 երկրի՝ շուրջ 342 մլրդ դոլար արժողությամբ վարկային ծրագրերի (բացառությամբ չեղյալ համարվածների), որոնց ավելի քան 90 տոկոսը միջին և երկարաժամկետ փոխառություններ են: 2004 ֆինանսական տարում ֆինանսավորվել են 11 մլրդ դոլար ընդհանուր արժողությամբ 87 նոր ծրագրեր՝ 33 երկրում[4]:

ՎԶՄԲ-ն տեղական և օտարերկրյա կապիտալի գործունեության համար նպաստավոր ներդրումային միջավայր ստեղծելու նպատակով ֆինանսավորում է նաև էներգետիկայի, տրանսպորտի, կապի և ենթակառուցվածքային այլ ճյուղերի զարգացման հեռանկարային ծրագրերը:

2004թ. հունիսի 30-ի դրությամբ Բանկի հայտարարած կանոնադրական կապիտալը կազմում էր 1,581,724 բաժնետոմս, որից փաստացի բաժանորդագրված էր 1,572,661 բաժնետոմս՝ 189.718 մլրդ դոլար ընդհանուր արժողությամբ: Յուրաքանչյուր բաժնետոմս ունի 100,000 ՀՓԻ անվանական արժեք, որը հաշվարկվում է 1974թ. հուլիսի 1-ի դրությամբ ԱՄՆ դոլար/ՀՓԻ փոխարժեքով (1.20635), այսինքն՝ յուրաքանչյուր բաժնետոմսի անվանական արժեքը 120,635 ԱՄՆ դոլար է[5]:

Հայաստանը ՎԶՄԲ-ին անդամակցում է 1992 թ. սեպտեմբերի 16-ից: 2004թ. հունիսի 30-ի դրությամբ Հայաստանի բաժնեմասը ՎԶՄԲ-ում կազմում էր 1139 բաժնետոմս՝ 137.4 մլն դոլար ընդհանուր արժողությամբ: Պարտադիր վճարման է ենթակա 5.9 մլն դոլարը (4,3%), իսկ մնացած 131.5 մլն դոլարը Հայաստանի կողմից պետք է վճարվի ՎԶՄԲ-ի պահանջի դեպքում: Հայաստանի քվեների թիվը կազմում է 1,389 ձայն, որը ընդհանուր քվեների թվի 0.09 %-ն է[6]: Նախկինում (1992թ. սեպտեմբերի 15-ին, 1996թ. մայիսի 5-ին, 1998թ. հունիսի 29-ին, 2002թ. հոկտեմբերի 7-ին) տրամադրված չորս պարտամուրհակների փոխարեն Հայաստանի Հանրապետությունը 2004թ. նոյեմբերի 17-ին ՎԶՄԲ-ին տրամադրել է մեկ պարտամուրհակ՝ 2,864,884,761.00 դրամ արժողությամբ:

1993թ. ապրիլի 7-ին ՀՀ կառավարության և ՎԶՄԲ-ի միջև կնքվել է 12 մլն դոլարի վարկային պայմանագիր **(Institution Building Loan)**՝ տնտեսության կայունացման և անհրաժեշտ ինստիտուտների ձևավորման նպատակով: Վարկի օգտագործված մասի դիմաց տոկոսավճարի հաշվարկման համար հիմք է ընդունվել Լոնդոնյան միջբանկային 6-ամսյա դեպոզիտների առաջարկի տոկոսադրույքը (LIBOR+ 0.8%):

Վարկային ծրագրի ժամկետայնության, վարկային միջոցների բաշխման և հիմնական գումարի մարումների մասին հանգամանալից տեղեկատվությունը ներկայացված է աղյուսակ 2-ում:

---

[4] Տե՛ս IBRD Management's Discussion and Analysis: June 30, 2004, էջ 3-8: (http://treasury.worldbank.org/web/pdf/IBRD_MD&AJune2004.pdf)
[5] Տե՛ս նույն տեղում, էջ 18:
[6] Տե՛ս IBRD Financial Statements: June 30, 2004, էջ 53:

Զարգացման միջազգային ընկերակցություն (IDA)

Զարգացման միջազգային ընկերակցությունը (այսուհետև՝ Ընկերակցություն) հիմնադրվել է 1960 թվականին: Ընկերակցության կազմի մեջ մտնում է 165 երկիր:

Ի տարբերություն ՎԶՄԲ-ի, Ընկերակցության գործունեությունը համալրող բնույթ ունի: Այն կոչված է ***աջակցելու համեմատաբար աղքատ և վարկունակության պակաս ունեցող երկրների տնտեսական զարգացմանն ու կենսամակարդակի բարձրացմանը,*** այսինքն՝ այն երկրներին, որոնք տնտեսական զարգացման ցածր մակարդակի պատճառով ի վիճակի չեն օգտվել ՎԶՄԲ-ի կամ Միջազգային ֆինանսական կորպորացիայի ֆինանսական աջակցությունից: 2004թ. ֆինանսական տարում այդ երկրների թվին են դասվել 1 շնչի հաշվով մինչև 865 ԱՄՆ դոլար ՀՆԱ ունեցող երկրները՝ որոշ վերապահումներով[7]:

Ընկերակցությունը վարկեր է տրամադրում միայն անդամ-երկրների կառավարություններին: Հիմնադրման օրվանից մինչ օրս Ընկերակցությունը անդամ-երկրներին տրամադրել է 151 մլրդ դոլարի վարկային միջոցներ: 2004թ. ֆինանսական տարում Ընկերակցությունը 62 երկրներում ֆինանսավորել է 158 նոր ծրագրեր՝ 9 մլրդ դոլար ընդհանուր արժողությամբ, որից 1.7 մլրդ դոլարը՝ դրամաշնորհների ձևով:

2004թ. հունիսի 30-ի դրությամբ Ընկերակցության անդամների բաժանորդագրական վճարներն ու հատկացումները կազմում էին 117.928 մլրդ ԱՄՆ դոլար:

Հայաստանը անդամակցում է Ընկերակցությանը 1993թ. օգոստոսի 25-ից: 2004թ. հունիսի 30-ի դրությամբ Հայաստանի բաժնեմասը Ընկերակցության բաժանորդագրական կապիտալում 584,000 ԱՄՆ դոլար էր: 1998թ. մայիսի 19-ին Հայաստանը Ընկերակցությանը տրամադրել է մեկ հասարակ, անտոկոս պարտամուրհակ՝ 4,363,016 ՀՀ դրամ արժողությամբ: Հայաստանի քվեների թիվը կազմում է 5317 ձայն, որը ընդհանուր քվեների թվի 0.04%-ն է[8]:

1992-2003թթ. ընթացքում Ընկերակցության կողմից Հայաստանում իրականացվել են 29 վարկային ծրագրեր՝ 810.9 մլն դոլար ընդհանուր գումարով (տե՛ս աղյուսակ 1): 2004թ. ընթացքում Համաշխարհային բանկի տնօրենների խորհուրդը հավանություն է տվել ևս 10 վարկային ծրագրերի՝ 157.9 մլն դոլար արժողությամբ: Մինչև 2000թ. դեկտեմբեր ամիսը ստորագրված վարկերը Հայաստանի կառավարությանը տրամադրվել են 35 տարի, իսկ դրանից հետո՝ 40 տարի ժամկետով: Վարկերն անտոկոս են: Վարկերի հիմնական գումարների մարումն իրականացվում է 10 տարի արտոնյալ ժամկետի ավարտից հետո՝ տարեկան երկու անգամ, կիսամյակային վճարումների ձևով: Վարկի տրամադրման պահից սկսած՝ վարկառուն կիսամյակային վճարումների ձևով Ընկերակցությանը վճարում է վարկի սպասարկման վճար՝ հիմնական գումարի օգտագործված մասի 0.75%-ի չափով և պարտավորության վճար՝ 0.5%-ի չափով:

Վարկային ծրագրերի ժամկետայնության, վարկային միջոցների բաշխումների և հիմնական գումարների մարումների մասին հանգամանալից տեղեկատվությունը ներկայացված է աղյուսակներ 2 և 3-ում:

Աղյուսակ 2. Հայաստանի Հանրապետությունում Համաշխարհային բանկի կողմից իրականացվող վարկային ծրագրերը

	Համաշխարհային բանկի կառույցի, վարկավորման ոլորտը և վարկի անվանումը	Ծրագրի հաստատման ամսաթիվը, տարին	Ամրագրման/գործողության ժամկետը	Գումարը, մլն ՀՓՀ	Գումարը,[9] մլն դոլար	Բաշխվել է 2004թ. սեպտ. 30-ի դրությամբ, մլն դոլար	Հինգնախկ գումարի մարման ժամանակացույց-ների գործառնություն	Մարվել է հիմնական գումար, մլն դոլար	Վճարվել է հետաքրքրություն, մլն դոլար
1	2	3	4	5	6	7	8	9	10
	ՎԶՄԲ (IBRD)			-	12.0	12.0			
1.	Ինստիտուցիոնալ համակարգերի վարկ (Institution Building Loan)	30/03/1993	20/5	-	12.0	12.0	1998-2013	2.938	3.691
	ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ (IDA)			522.5	810.9	703.924		0.732	23.985

[7] Որոշ երկրներ, որոնք ունեն 1 շնչի հաշվով ավելի բարձր եկամուտ, նույնպես կարող են օգտվել Ընկերակցության վարկերից: ՄՊՀ երկրներից դրանց թվում են Հայաստանը, Ադրբեջանը և Վրաստանը: Տե՛ս http://web.worldbank.org/WBSITE/EXTERNAL/TOPICS/EXTDEBTDEPT/0,,contentMDK:20260732~menuPK:531717~pagePK:64166646~theSitePK:469043,00.html

[8] Տե՛ս IDA Special Purpose Financial Statements/The World Bank Annual Report 2004, Vol. 2, Financial Statements, էջ 102:

[9] Ընկերակցության միջոցները արժեցված են Հատուկ Փոխառության Իրավունքներով (ՀՓԻ): ՀՓԻ-ի դոլարային համարժեքը հաշվարկվել է 2004թ դեկտեմբերի 31-ի դրությամբ սահմանված ՀՓԻ/ԱՄՆ դոլար փոխարժեքով, որը կազմում էր 1.55301 ԱՄՆ դոլար:

I.	Աղետի գոտու վերականգնում								
1.	Աղետի գոտու վերականգնման ծրագիր (Earthquake Reconstruction Project)	1/02/1994	35/10	20.1	31.2	31.2	2004-2028	0.732	1.637
II.	Ենթակառուցվածք								
2.	Էներգահամակարգի պահպանման ծրագիր (Power Maintenance Project)	8/12/1994	35/10	9.4	14.6	14.6	2005-2029	-	0.689
3.	Էլեկտրականության փոխանցման և բաշխման համակարգերի ծրագիր (Electricity Transmission & Distribution Project)	30/03/1999	35/10	15.0	23.3	19.512	2009-2033	-	0.182
4-5.	Մայրուղիների վերականգնման ծրագիր I+II (Highway Project I+II)	14/09/1995 25/06/1997	35/10	10.3+11.0	16.0+17.1	33.1	2006-2030	-	1.348
6.	Տրանսպորտի ծրագիր (Transport Project)	7/07/2000	35/10	29.9	46.4	45.649	2010-2035		0.587
7.	Համայնքային զարգացման ծրագիր (Municipal Development Project)	19/06/1998	35/10	22.3	34.6	31.213	2008-2032	-	0.584
III.	Գյուղական ոլորտ								
8.	Ոռոգման համակարգի վերականգնման ծրագիր (Irrigation Rehabilitation Project	8/12/1994	35/10	29.4	45.6	45.6.	2005-2029	-	1.811
9.	Ոռոգման համակարգի զարգացման ծրագիր (Irrigation development)	6/09/2001	40/10	19.8	30.7	13.590	2011-2041	-	0.226
10.	Գյուղատնտեսության բարեփոխումների աջակցության ծրագիր (Agricultural Reform Support Project)	12/03/1998	35/10	10.7	16.6	16.6	2008-2032	-	0.471
11.	Պատվարների անվտանգության ծրագիր (Dam Safety Project)	7/10/1999	35/10	19.7	30.6	20.387	2009-2034	-	0.421
12.	Անշարժ գույքի գրանցման ծրագիր (Title Registration Project)	23/12/1998	35/10	6.0	9.3	9.178	2009-2033	-	0.163
IV.	Շրջակա միջավայր								
13.	Բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման ծրագիր (Natural Resources Management & Poverty Reduction Project)	1/07/2002	40/10	6.7	10.4	1.363	2012-2042		0.052
V.	Սոցիալական ապահովություն								
14.	Սոցիալական ներդրումների հիմնադրամի ծրագիր I (Social Investment Fund I)	9/11/1995	35/10	8.1	12.6	12.6	2006-2030	-	0.514
15.	Սոցիալական ներդրումների հիմնադրամի ծրագիր II (Social Investment Fund II)	19/05/2000	35/10	14.9	23.1	17.279	2010-2034	-	0.245
VI.	Առողջապահություն								
16.	Առողջապահության ֆինանսավորման և առողջության առաջնային պահպանման ծրագիր (Health Financing and Primary Health Care Development Project)	2/09/1997	35/10	7.2	11.2	11.2	2008-2032	-	0.228
VII.	Կրթություն								
17.	Կրթության ֆինանսավորման և կառավարման բարեփոխումների ծրագիր (Education Financing & Management Reform Project)	20/11/1997	35/10	11.1	17.2	17.2	2007-2032	-	0.502
VIII.	Գործարար միջավայր								
18.	Ձեռնարկությունների զարգացման վարկ (Enterprise Development Credit)	24/12/1996	35/10	11.6	18.0	18.0	2007-2031	-	0.576
19.	Ձեռնարկությունների ինկուբատորի ծրագիր (Enterprise Incubator-LIL)	28/12/2001	40/10	3.9	6.1	2.025	2012-2041	-	0.035

IX.	Պետ. հատվածի կառավարում								
20.	Վերականգնողական վարկ (Rehabilitation Credit)	28/02/1995	35/10	41.5	64.4	64.4	2005-2030	-	3.376
21.	Կառուցվածքային բարեփոխումների վարկ I (SAC I)	29/02/1996	35/10	40.4	62.7	62.7	2006-2030	-	3.230
22.	Կառուցվածքային բարեփոխումների տեխնիկական օգնության վարկ I (SATAC I)	29/02/1996	35/10	2.6	4.0	4.0	2006-2030	-	0.136
23.	Կառուցվածքային բարեփոխումների վարկ II (SAC II)	26/08/1997	35/10	43.1	66.9	66.9	2008-2032	-	2.926
24.	Կառուցվածքային բարեփոխումների տեխնիկական օգնության վարկ II (SATAC II)	26/08/1997	35/10	3.6	5.6	5.6	2008-2032	-	0.143
25.	Կառուցվածքային բարեփոխումների վարկ III (SAC III)	22/12/1998	35/10	46.2	71.7	71.7	2009-2033	-	2.289
26.	Կառուցվածքային բարեփոխումների վարկ IV (SAC IV)	22/05/2001	40/10	38.4	59.6	59.6	2011-2040		1.100
27.	Կառուցվածքային բարեփոխումների վարկ V (SAC V)	14/03/2003	40/10	30.2	46.9	46.9	2013-2042	-	0.409
28.	Դատաիրավական բարեփոխումների ծրագիր (Judicial Reform Project)	14/12/2000	40/10	8.6	13.3	6.849	2010-2040		0.097
X.	Տնտեսական քաղաքականություն								
29.	Օտարերկրյա ներդրումների և արտահանման խթանման ծրագիր (Foreign Investment and Export Facilitation Project-LIL)	25/04/2002	40/10	0.8	1.2	0.579	2012-2042	-	0.008

Աղյուսակ 3. Հայաստանի Հանրապետությունում Համաշխարհային բանկի նախատեսվող վարկային ծրագրերը

	Համաշխարհային բանկի կառույցը, վարկավորման ոլորտը և վարկի անվանումը	Ծրագրի հաստատման ամսաթիվը, տարին	Մարտկոց/արտոնյալ ժամկետը	Գումարը, մլն ՀՓՀ	Գումարը, *մլն դոլար*,[10]	Բաշխվել է 2004թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, *մլն դոլար*	Հիմնական գումարի մարման ժամկետ-ների ավարտը
1	2	3	4	5	6	7	8
	ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ (IDA)			101.6	157.9		
I.	Ենթակառուցվածք						
1.	Համայնքային ջրամատակարարման և ջրահեռացման ծրագիր (Municipal Water & Wastewater Project)	4/05/2004	40/10	15.4	23.9	1.058*+0.993	2014-2044
2.	Քաղաքային ջեռուցման ծրագիր (Urban hitting)	15/09/2004	40/10	10.0	15.5	0.485*	2014-2044
3.	Երևանի ջրմուղ-կոյուղու ծրագիր (Yerevan Water & Wastewater Project)	13/04/2004	40/10	20.0	31.1	0.725*	2014-2044
II.	Գյուղական ոլորտ						
4.	Գյուղատնտեսության բարեփոխումների աջակցման լրացուցիչ վարկ (Agricultural Reform Support Supplement Credit)	04/05/2004	40/10	1.2	1.9	Ամբողջ	2008-2032
5.	Պատվարների անվտանգության ծրագիր II (Irrigation Dam Safety Project II)	10/06/2004	40/10	4.7	7.3	-	2014-2044

[10] Ընկերակցության միջոցները արժեքշված են Հատուկ փոխառության իրավունքով (ՀՓԻ): ՀՓԻ դոլարային համարժեքը հաշվարկվել է 2004թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ սահմանված ՀՓԻ/ԱՄՆ դոլար փոխարժեքով, որը կազմում էր 1.55301 ԱՄՆ դոլար:
** Նշված գումարները տրամադրվել են ծրագրի նախապատրաստական աշխատանքների նպատակով:*

III.	Սոցիալական ապահովություն						
6.	Սոցիալական ապահովության և ղեկավարման ծրագիր (Armenia Social Protection and Administration Project)	10/06/2004	40/10	3.6	5.6	-	2014-2044
IV.	Առողջապահություն						
7.	Հայաստանի առողջապահության համակարգի արդիականացման ծրագիր (Armenia Health Systems Modernization Project)	10/06/2004	40/10	13.0	20.2	0.753*	2014-2044
V.	Կրթություն						
8.	Կրթության որակի և համապատասխանության ծրագիր (Education Quality and Relevance Project)	20/01/2004	40/10	13.2	20.5	0.882*+0.950	2014-2043
VI.	Պետ. հատվածի կառավարում						
9.	Պետական կառավարման համակարգի արդիականացման ծրագիր (Public Sector Modernization Project)	4/05/2004	40/10	6.8	10.6	-	2014-2044
VII.	Աղքատության կրճատում						
10.	Աղքատության կրճատման աջակցման վարկ (Poverty Reduction Support Credit-PRSC)	18/11/2004	40/10	13.7	21.276	-	2014-2044

I. Ընկերակցության գործող վարկային ծրագրերը՝ ըստ ՀՀ տնտեսության ճյուղերի

1. Աղետի գոտու վերականգնում՝ 1 ծրագիր

Աղետի գոտու վերականգնման ծրագրի (Earthquake Reconstruction Project) վարկային պայմանագիրը ստորագրվել է 1994թ. փետրվարի 1-ին, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ կառավարությանը տրամադրել է 20.1 մլն ՀՓԻ (31.2 մլն. դոլար)[11]՝ աղետի գոտու բնակիչների համար անհրաժեշտ բնակարանային և կենսական պայմանների ստեղծման, հիմնական ենթակառույցների վերականգնման, զբաղվածության ապահովման համար: Ծրագրով նախատեսվում էր՝ ա) 2,000 ընտանիքների ապահովել բնակարաններով, բ) վերակառուցված գործարաններում շուրջ 2,500 մարդու ապահովել աշխատատեղերով, գ) բարելավել ժամանակավոր կացարաններում բնակվող շուրջ 500,000 բնակիչների բնակարանային պայմանները: Այս ծրագրի շրջանակներում աղետի գոտու վերականգնման համար նախատեսվում էր մշակել տարածաշրջանի երկարաժամկետ զարգացման ռազմավարություն:

Այս ծրագիրը թեև երկրին աջակցել է դժվարին տարիներին, սակայն սահմանափակ աշխարհագրական տարածքի և ծրագրի անբավարար մշակվածության պատճառով դրա արդյունավետությունը բարձր չի եղել: Մասնավորապես, Համաշխարհային բանկի փորձագետների կարծիքով հարկ էր ավելի մեծ ուշադրություն դարձնել սոցիալական հիմնախնդիրների լուծմանը և տեխնիկական աջակցությանը[12]:

Ծրագիրն իրականացրել է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը:

2. Ենթակառուցվածքներ՝ 6 ծրագիր

Էներգահամակարգի օժանդակության ծրագրի (Power Maintenance Project) վարկային պայմանագիրը ստորագրվել է 1994թ. դեկտեմբերի 12-ին, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ կառավարությանը տրամադրել է 9.4 մլն ՀՓԻ (14.6 մլն դոլար)՝ ՀՀ-ում էներգահամակարգի կատարելագործմանն աջակցելու նպատակով: Ծրագրով նախատեսվում էր էլեկտրաէներգիայի արտադրության համակարգերի վերանորոգում, այդ թվում՝ Հրազդանի էլեկտրակայանի 200 Մվտ, Երևանի ջերմաէլեկտրակայանի 150 Մվտ հզորությամբ ջերմային բլոկների, Սևան-Հրազդան հիդրոհամալիրի 100 Մվտ և 44 Մվտ հզորությամբ, Որոտանի հիդրոհամալիրի 170 Մվտ հզորությամբ կայանների վերանորոգում, ինչպես նաև էլեկտրաէներգիայի առաքման համակարգերի ամրացում և վերանորոգում:

Ծրագրով նախատեսված բոլոր աշխատանքներն իրականացվել են: Ծրագիրն իրականացրել է Հայէներգոն:

[11] *Հաշվարկները կատարված են 2004թ. դեկտեմբերի 31-ի փոխարժեքով՝ 1.55301 ԱՄՆ դոլար/ՀՓԻ:*
[12] *Տե՛ս Armenia – Country Assistance Evaluation/ World Bank, OED, June 15, 2004, էջ 9:*

Էլեկտրականության փոխանցման և բաշխման համակարգերի ծրագրի (Electricity Transmission & Distribution Project) վարկային պայմանագիրը ստորագրվել է 1999թ. մարտի 30-ին, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ կառավարությանը տրամադրում է 15.0 մլն ՀՓԻ (23.3 մլն դոլար): Վարկային միջոցներով նախատեսվում է աջակցել ՀՀ էներգետիկ համակարգի վերակառուցման և զարգացման ծրագրի առաջին փուլին: Ծրագրի նպատակներն են՝ վերականգնել Հայաստանի էլեկտրափոխանցման և բաշխման ցանցը, կրճատել դրանցում կորուստներն ու ծառայության ծախքերը, ապապետականացնել ձեռնարկությունները և ներգրավել մասնավոր ներդրումներ:

Ծրագիրն իրականացնում են ՀՀ էներգետիկայի նախարարությունը և ծրագրի իրականացման գրասենյակը (Energy SCJSC and local SCHSC):

Մայրուղիների վերականգնման ծրագրի (Highway Project) վարկային պայմանագիրը ստորագրվել է 1995թ. սեպտեմբերի 14-ին, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ կառավարությանը տրամադրել է 10.3 մլն ՀՓԻ (16.0 մլն դոլար): Վարկային ծրագրի նպատակներն էին՝ 1) ընդլայնել և վերանորոգել Հայաստանի ճանապարհացանցը և պահպանիչ գործառնությունների, ինչպես նաև կամուրջների և թունելների վերականգնման միջոցով կրճատել տրանսպորտի գործառնական ծախքերը, 2) տնտեսության այս ճյուղում զարգացնել շուկայական պահանջներին համապատասխան ինստիտուցիոնալ կառույցներ, 3) ընդլայնել ճանապարհների վերականգնման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը՝ ճանապարհը օգտագործողների կողմից վճարումներ կիրառելու միջոցով, 4) մասնակցել մասնավոր ճանապարհների կառուցմանը, ինչպես նաև ինժեներական կառույցների զարգացմանը, 5) բարելավել ճանապարհների պաշտպանվածությունը:

Այս ծրագրի ֆինանսավորումը բավականացրեց միայն նախատեսված աշխատանքների 50%-ը իրականացնելուն, քանի որ, իրականում, Հայաստանի ճանապարհացանցը շատ ավելի վատ վիճակում էր, քան ենթադրվում էր ծրագրի համար անհրաժեշտ ֆինանսավորումը որոշելու ժամանակ:

Ծրագիրն իրականացրել է Հայկական ճանապարհային վարչությունը (Armenian Road Directorate):

Մայրուղիների վերականգնման ծրագրի լրացուցիչ աշխատանքների (Highway Supplement Project) ֆինանսավորման նպատակով 1997թ. հունիսի 25-ին ստորագրվել է երկրորդ վարկային պայմանագիրը, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ կառավարությանը տրամադրել է 11 մլն ՀՓԻ (17.1 մլն դոլար): Դրա հաշվին նախատեսվում էր ֆինանսավորել միջպետական ճանապարհացանցի վերանորոգման աշխատանքները, Վրաստանի հետ կարևորագույն ճանապարհային ուղու վրա գտնվող թունելի վերականգնումը, նյութերի ու սարքավորումների ձեռքբերումը և ծրագրի ադմինիստրատիվ ծախքերի իրականացումը:

Այս ծրագիրը ևս իրականացրել է Հայկական ճանապարհային վարչությունը (Armenian Road Directorate):

Տրանսպորտի ծրագրի (Transport Project) վարկային պայմանագիրը ստորագրվել է 2000թ. հուլիսի 7-ին, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ-ին տրամադրում է 29.9 մլն ՀՓԻ (46.4 մլն դոլար): Ծրագրի նպատակներն են՝ 1) բարելավել հիմնական ճանապարհացանցը՝ միաժամանակ կրճատելով տրանսպորտի ընդհանուր ծախքերը, բարելավել ճանապարհների պաշտպանվածությունը և բարձրացնել դրանց գործառնական արդյունավետությունը, 2) բարելավել Երևանի և Վրաստանի սահմանի միջև ընկած երկաթուղային գիծը և Հայաստանի երկաթուղու ֆինանսական և կառավարման ոլորտները, 3) օժանդակել ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությանը՝ ՀՀ տրանսպորտի ոլորտում գերակայությունները հիմնավորող վերլուծությունների իրականացման և ներդրումային որոշումների կայացման, ինչպես նաև Երևանի քաղաքային տրանսպորտի ծառայությունների բարելավման գործում:

Ծրագիրն իրականացնում է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը:

Համայնքային զարգացման ծրագրի (Municipal Development Project) վարկային պայմանագիրը ստորագրվել է 1998թ. հունիսի 19-ին, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ կառավարությանը տրամադրում է 22.3 մլն ՀՓԻ (34.6 մլն դոլար)՝ համայնքային զարգացման ծրագրի ֆինանսավորման նպատակով: Ծրագրի նպատակն է՝ 1) բարելավել Երևանի ջրամատակարարման համակարգը, 2) կատարելագործել Երևանի ջրմուղ-կոյուղու ծառայությունների արդյունավետությունը, կառավարումը, աշխատանքները և մատակարարումը, 3) ՀՀ տարածքում ստեղծել ջրմուղ-կոյուղու ծառայությունների ընդհանուր կառավարման մեջ մասնավոր հատվածի կայուն ներգրավման համակարգ, 4) զարգացնել պետական բնակարանային շինարարության քաղաքականությունը՝ կենտրոնանալով բնակարանային շինարարության բնագավառի ընթացիկ բարեփոխումների հետ կապված ճգնաժամային տնտեսական հարցերի վրա, 5) երկրաշարժից վնասված գոտու համար մշակել բնակարանային շինարարության ռազմավարություն:

Ծրագիրն իրականացնում է Հայաստանի տարածքային կառավարման նախարարության Համայնքային զարգացման ծրագրի ղեկավարման պետական կոմիտեն:

3. Գյուղական ոլորտ՝ 5 ծրագիր

Ոռոգման համակարգի վերականգնման ծրագրի (Irrigation Rehabilitation Project) վարկային պայմանագիրը ստորագրվել է 1994թ. դեկտեմբերի 8-ին, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ կառավարությանը տրամադրել է 29.4 մլն ՀՓԻ (45.6 մլն դոլար)՝ ՀՀ ոռոգման համակարգի վերականգնման համար: Այն կազմված էր 4 ենթածրագրերից՝ 1) 12 ոռոգման համակարգերի և Արարատյան դաշտի ստորջրյա ցանցի վերականգնում (ընդգրկում է մոտ 164,700 հեկտար կամ Հայաստանի ոռոգելի հողատարածությունների 60 տոկոսը), 2) ջրի բաշխման բարելավման համակարգերի և ջրային ռեսուրսներ սպառողների ընկերակցությունների հիմնում, 3) ոռոգման ենթակառույցների սպասարկման և պահպանման ծախսերի ֆինանսավորում, 4) տեխնիկական օգնություն՝ ներառյալ ծրագրի իրագործման գրասենյակի հիմնում և կադրերի պատրաստում:

Այս ծրագիրը արդյունավետ էր ոռոգման համակարգերի վերականգնման առումով, սակայն ոռոգման ենթակառույցների ապասարկումը և պահպանումը ապահովող հաստատությունների ձևավորման առումով հաջողություններ չեն արձանագրվել:

Ծրագիրն իրականացրել է ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը:

Ոռոգման համակարգի զարգացման ծրագրի (Irrigation Development Project) վարկային պայմանագիրը ստորագրվել է 2001թ. սեպտեմբերի 6-ին, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ կառավարությանը տրամադրում է 19.8 մլն ՀՓԻ (30.7 մլն դոլար)՝ ոռոգվող գյուղատնտեսական համակարգի շահութաբերությունը և կայունությունը բարձրացնելու նպատակով:

Ծրագիրն իրականացնում է ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը:

Գյուղատնտեսության բարեփոխումների աջակցության ծրագրի (Agriculture Reform Support Project) վարկային պայմանագիրը ստորագրվել է 1998թ. մարտի 12-ին, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ կառավարությանը տրամադրում է 10.7 մլն ՀՓԻ (16.6 մլն դոլար)՝ գյուղատնտեսության արտադրողականության բարձրացման նպատակով: Ծրագրի նպատակներն են՝ 1) գյուղատնտեսական արտադրական ձեռնարկություններում միջինժամկետ ներդրումների համար բիզնես-պլանների կազմման նպատակով խորհրդատվական ծառայությունների մատուցում, 2) գյուղատնտեսական վարկերի տրամադրման ցանցի ընդլայնում, 3) գյուղատնտեսության ոլորտի վերլուծությունների իրականացում:

Ծրագիրն իրականացնում է ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը:

Պատվարների անվտանգության ծրագրի (Dam Safety Project) վարկային պայմանագիրը ստորագրվել է 1999թ. հոկտեմբերի 7-ին, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ կառավարությանը տրամադրում է 19.7 մլն ՀՓԻ (30.6 մլն դոլար): Ծրագրի նպատակներն են՝ բարձրացնել բարձր ռիսկային, վթարային վիճակում գտնվող պատվարների անվտանգությունը և ապահովել դրանց գործունեության կայունությունը:

Ծրագիրն իրականացնում է ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը:

Անշարժ գույքի գրանցման ծրագրի (Title Registration Project) վարկային պայմանագիրը ստորագրվել է 1998թ. դեկտեմբերի 23-ին, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ կառավարությանը տրամադրում է 6.0 մլն ՀՓԻ (9.3 մլն դոլար)՝ հողի և այլ անշարժ գույքի արտադրողականության և արժեքի բարձրացման և սեփականության իրավունքի պաշտպանվածության միջոցով մասնավոր հատվածի զարգացումը խթանելու և գյուղական ու քաղաքային մասնավոր սեփականության շուկան զարգացնելու համար: Ծրագրով նախատեսվում է՝ ստեղծել հողի և այլ անշարժ գույքի սեփականության գրանցման հուսալի և հրապարակային համակարգ, որը կներառի նաև սեփականատերերի և նրանց իրավունքների ու պարտականությունների ժամանակագրական գրանցումը:

Ծրագիրն իրականացնում է ՀՀ կառավարությանը կից անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն:

4. Շրջակա միջավայր՝ 1 ծրագիր

Բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման ծրագրի (Natural resources Management & Poverty Reduction Project) վարկային պայմանագիրը ստորագրվել է 2002թ. հուլիսի 1-ին, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ կառավարությանը տրամադրում է 6.7 մլն ՀՓԻ (10.4 մլն դոլար): Ծրագրի նպատակն է՝ կիրառել բնական պաշարների կառավարման լավագույն միջազգային փորձը, թեթևացնել գյուղական չքավորությունը լեռնային շրջաններում, որտեղ դեգրադացիան հասել է կրիտիկական կետի, և պահպանել Հարավային Կովկասի լեռների, անտառների և խոտհարքների էկոլոգիական համակարգը:

Ծրագիրն իրականացնում է ՀՀ բնապահպանության նախարարությունը:

5. Սոցիալական ապահովություն՝ 2 ծրագիր

Սոցիալական ներդրումների հիմնադրամի ծրագիր I-ի (Social Investment Fund Project) վարկային պայմանագիրը ստորագրվել է 1995թ. նոյեմբերի 9-ին, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ կառավարությանը տրամադրել է 8.1 մլն ՀՓԻ (12.6 մլն դոլար): Ծրագրով նախատեսվում էր՝ 1) ենթակառույցների, մասնավորապես՝ քաղաքային և գյուղական ճանապարհների, ոռոգման համակարգերի, դպրոցների և բժշկական կենտրոնների վերականգնմանն ուղղված միկրոնախագծերի ֆինանսավորում, 2) փոքր ձեռնարկությունների զարգացմանը, մասնավորապես՝ նոր աշխատատեղերի ստեղծմանը օժանդակում, 3) ծրագրերի իրագործման գրասենյակների հիմնում, համայնքներին և մասնավոր ֆիրմաներին տեխնիկական աջակցության ապահովում, 4) բնակչության կենսապայմանների մոնիտորինգի նպատակով տեխնիկական օգնության ապահովում և ՀՀ վիճակագրության, պետական ռեգիստրի և վերլուծության նախարարությանը աջակցում:

Ծրագրով նախատեսված նպատակները հիմնականում իրականացվել են: Այս ծրագրի շրջանակներում ֆինանսավորվել են տնային տնտեսությունների հարցումները, որոնք օգնել են հստակեցնել սոցիալական աջակցության հետագա ծրագրերի խնդիրները: Սակայն չեն կազմակերպվել տեղական ինքնակառավարման մարմինների համար ծրագրով նախատեսված դասընթացները, և դժվարություններ են եղել ենթածրագրերի տեխնիկական որակի և կայունության ապահովման հարցերում:

Ծրագիրն իրականացրել է Հայկական սոցիալական ներդրումների հիմնադրամը (Armenian Social Investment Fund):

Սոցիալական ներդրումների հիմնադրամի երկրորդ ծրագրի (Social Investment Fund II) վարկային պայմանագիրը ստորագրվել է 2000թ. մայիսի 19-ին, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ-ին տրամադրում է 14.9 մլն ՀՓԻ (23.1 մլն դոլար)՝ հիմնական սոցիալական և տնտեսական ենթակառույցները բարելավելու, կարճաժամկետ զբաղվածության հնարավորություններ ստեղծելու, անապահով և կարիքավոր խմբերին օգնելու նպատակով:

Ծրագիրն իրականացնում է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը:

6. Առողջապահություն՝ 1 ծրագիր

Առողջապահության ֆինանսավորման և առողջության առաջնային պահպանման ծրագրի (Health Financing and Primary Health Care Development Project) վարկային պայմանագիրը ստորագրվել է 1997թ. սեպտեմբերի 2-ին, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ կառավարությանը տրամադրել է 7.2 մլն ՀՓԻ (11.2 մլն դոլար)՝ Հայաստանում առողջապահության ոլորտի և առաջնային բուժօգնության զարգացման նպատակով: Ծրագրի հիմնական խնդիրներն էին՝ բուժօգնության առաջնահերթ ոլորտների որոշում և տարրական բուժօգնության ծառայությունների կայացման գործում համայնքների դերի ակտիվացում, առաջնային բուժօգնության անձնակազմի հմտությունների և բուժօգնության ուղղությունների բարելավում և առողջապահության ոլորտում պետական ծախսերի արդյունավետության բարձրացում:

Այս ծրագրի ներդրումը Հայաստանի առողջապահության համակարգի արդյունավետության բարձրացման առումով Համաշխարհային բանկի փորձագետների կողմից գնահատվում է «համեստ»[13]: Թեև հիմնական ծրագրային փաթեթը մշակվել էր տեսականորեն սահուն, սակայն այն չէր համապատասխանում ռեսուրսների չափազանց սահմանափակ հնարավորություններ ունեցող Հայաստանի իրավիճակին: Այլ կերպ ասած՝ այս ոլորտում գործնականում հիմնախնդիրներն ավելի խորն էին, քան տեսականորեն գնահատվել էին:

Ծրագիրն իրականացրել է ՀՀ առողջապահության նախարարությունը:

7. Կրթություն՝ 1 ծրագիր

Կրթության ֆինանսավորման և կառավարման բարեփոխումների ծրագրի (Education Financing & Management Reform Project) վարկային պայմանագիրը ստորագրվել է 1997թ. նոյեմբերի 20-ին, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ կառավարությանը տրամադրել է 11.1 մլն ՀՓԻ (17.2 մլն դոլար)՝ կրթության համակարգի և կառավարման բարեփոխումների ծրագրի ֆինանսավորման նպատակով: Ծրագիրը նախատեսում էր՝ 1) աջակցել կրթական հաստատության այնպիսի կառուցվածքի (կենտրոնական, տեղային և դպրոցների մակարդակներով) ստեղծմանը, որը կնպաստի հիմնական կրթական համակարգի արդյունավետ կառավարմանը, 2) աջակցել դպրոցների առաջադիմությանն ուղղված բարեփոխումներին՝ խթանելով դպրոցի կողմից առաջարկված նախաձեռնությունները և բարելավելով դասագրքերի և դասա-

---

[13] Նյութի վերջում (էջ 169) ներկայացված են Համաշխարհային բանկի «ծրագրերի արդյունքի», «կայունության» և «ինստիտուցիոնալ զարգացման ազդեցության» գնահատականների սանդղակները: Աղբյուրը՝ Armenia – Country Assistance Evaluation/ World Bank, OED, June 15, 2004, էջ 11:

վանդման այլ ոլորտների մատակարարումը, 3) խթանել դպրոցների հիմնման և կառավարման գործում համայնքների ու ծնողների մասնակցությունը և բարելավել հանրակրթական համակարգում բարեփոխումների գնահատման հնարավորությունները:

Ծրագրով նախատեսված նպատակներն իրականացվել են և Համաշխարհային բանկի փորձագետների կողմից արդյունքները գնահատվել են «խիստ բավարար»:

Ծրագիրն իրականացրել է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը:

8. Գործարար միջավայր՝ 2 ծրագիր

Ձեռնարկությունների զարգացման վարկի (Enterprise Development Credit) պայմանագիրը ստորագրվել է 1996թ. դեկտեմբերի 24-ին, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ կառավարությանը տրամադրել է 11.6 մլն ՀՓԻ (18.0 մլն դոլար)՝ մասնավոր ձեռնարկություններում և բանկերում ֆինանսական ներդրումներ իրականացնելու, արտահանման կողմնորոշում ունեցող համատեղ ձեռնարկություններ ստեղծելու, ձեռնարկությունների կառավարման բարելավմանն աջակցելու և բանկային ու կապիտալի շուկայի հաստատությունները զարգացնելու միջոցով հայկական մասնավոր ձեռնարկություններն ու բանկերը ամրապնդելու նպատակով:

Համաշխարհային բանկի փորձագետների կարծիքով ծրագիրն արդյունավետ չի եղել նպատակներին հասնելու տեսակետից: Այս ծրագրի արդյունքը փորձագետների կողմից գնահատվել է «չափավոր անբավարար», քանի որ ծրագրի մասնակից 12 բանկերից 5-ը, որպես թույլ բանկեր, լուծարվել են:

Ծրագիրն իրականացրել է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը:

Ձեռնարկությունների <u>ինկուբատորի</u> ծրագրի (Enterprise Incubator-LIL) վարկային պայմանագիրը ստորագրվել է 2001թ. դեկտեմբերի 28-ին, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ կառավարությանը տրամադրում է 3.9 մլն ՀՓԻ (6.1 մլն դոլար): Այս ծրագրով նախատեսվում է հաղթահարել աշխատուժի շուկայի, կրթական համակարգի և գործարար միջավայրի ինստիտուցիոնալ խնդիրները, որոնք խանգարում են Հայաստանում մարդկային կապիտալի օպտիմալ իրացմանը, մասնավորապես՝ տեղեկատվական տեխնոլոգիաների հատվածի զարգացմանը: Փորձ է արվում մշակել մասնավոր-պետական այնպիսի նորամուծական մեխանիզմներ, որոնք բիզնեսի զարգացման ծառայություններ կմատուցեն նորաստեղծ ձեռնարկություններին և կապահովեն ուսանողների և դասախոսների շարունակական կրթությունն ու վերապատրաստումը: Ծրագիրն ունի մոնիտորիգի ենթակա երեք առանձնահատուկ նպատակներ՝ 1) ցույց տալ, թե ինչպես կարելի է անբարենպաստ գործարար միջավայրում ստեղծել ընկերություններ, 2) օտարերկրյա ուղղակի ներդրումներ ներգրավել տեղեկատվական տեխնոլոգիաներին առնչվող ոլորտներում, 3) ապահովել տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագետների, երրորդ կուրսի ուսանողների, ինչպես նաև ձեռնարկության մենեջերների ու աշխատակիցների հմտությունների շարունակական կատարելագործման մեխանիզմներ:

Ծրագիրն իրականացնում է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը:

9. Պետական հատվածի կառավարում՝ 9 ծրագիր

Վերականգնողական վարկի (Rehabilitation Credit) պայմանագիրը ստորագրվել է 1995թ. փետրվարի 28-ին, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ ֆինանսների նախարարությանը տրամադրել է 41.5 մլն ՀՓԻ (շուրջ 64.4 մլն դոլար)՝ տնտեսության վերականգնման նպատակով: Ծրագիրը նախատեսում էր սեփականաշնորհման, ազատականացման և օրենսդրական բարեփոխումների միջոցով խթանել երկրում մրցունակ շուկաների զարգացումը, բարելավել ձեռնարկությունների և բանկերի ֆինանսական կարգապահությունը և խիստ կարիքավորների սոցիալական պաշտպանվածության համար անհրաժեշտ համակարգերը:

Ծրագրով նախատեսված միջոցառումներն իրականացվել են:

Ծրագիրն իրականացրել է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը:

Կառուցվածքային բարեփոխումների վարկ I-ի (SAC I) պայմանագիրը ստորագրվել է 1996թ. փետրվարի 29-ին, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ կառավարությանը տրամադրել է 40.4 մլն ՀՓԻ (շուրջ 62.7 մլն դոլար): Վարկային ծրագրի նպատակը համընկնում է 1995թ. փետրվարի 28-ի պայմանագրով ՀՀ տնտեսության վերականգնման համար տրամադրված վարկային ծրագրի նպատակներին, այն է՝ աջակցություն տնտեսության կայունացմանը, դրա հետագա զարգացմանը և ձեռնարկությունների ֆինանսական կարգապահության բարձրացմանը, ինչպես նաև բնակչության կենսամակարդակի բարելավման պայմաններին նպատակաուղղված՝ Կառավարության բարեփոխումների ծրագրին:

Ծրագրով նախատեսված միջոցառումներն իրականացվել են:

Ծրագիրն իրականացրել է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը:

Կառուցվածքային բարեփոխումների տեխնիկական օգնության վարկ I-ի (SATAC I) պայմանագիրը ստորագրվել է 1996թ. փետրվարի 2-ին, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ կառավարությանը տրամադրել է 2.6 մլն ՀՓԻ (շուրջ 4.0 մլն դոլար)՝ կառուցվածքային բարեփոխումների իրականացման համար անհրաժեշտ տեխնիկական օգնությունը ֆինանսավորելու համար: Ծրագրով նախատեսվում էր տեխնիկական մասնակցությամբ օժանդակել սեփականաշնորհման գործընթացին, մասնավոր հատվածի զարգացմանը, պետական ծառայությունների բարեփոխումներին ու ռեսուրսների հավաքագրմանը:

Ծրագրով նախատեսված միջոցառումներն իրականացվել են:

Ծրագիրն իրականացրել է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը:

Կառուցվածքային բարեփոխումների վարկ II-ի (SAC II) պայմանագիրը ստորագրվել է 1997թ. օգոստոսի 26-ին, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ կառավարությանը տրամադրել է 43.1 մլն ՀՓԻ (66.9 մլն դոլար)՝ մակրոտնտեսական կայունության ապահովմանը ու մասնավոր հատվածի հետագա զարգացմանը ուղղված՝ Կառավարության ծրագրերին աջակցելու նպատակով: Ծրագրով նախատեսվում էր՝ 1) բարելավել ֆինանսական կարգապահությունը մասնավոր և պետական հատվածներում, 2) արագացնել մասնավոր հատվածի զարգացումը, 3) ամրապնդել սոցիալական ապահովվածության ցանցը և ապահովել տարրական առողջապահական և կրթական ծառայությունների մատուցումը: Ֆինանսական կարգապահության բարելավման միջոցառումները մասնավոր և պետական հատվածներում պետք է իրականացվեին 3 ուղղություններով՝ ա) հարկերի հավաքագրման ավելացում և հարկային ապառքների կրճատում, բ) էներգետիկ հատվածի բարեփոխումներն ապահովող օրենսդրական դաշտի ստեղծում և այդ հատվածի ձեռնարկությունների ֆինանսական վիճակի բարելավում, գ) ոռոգման և մաքուր ջրի անխափան մատակարարման ապահովում: Ծրագիրը ներառում էր նաև պետական կենսաթոշակային համակարգի բարեփոխման ու մասնավոր կենսաթոշակային կառույցների ձևավորման միջոցառումներ:

Ծրագրով նախատեսված միջոցառումներն իրականացվել են:

Ծրագիրն իրականացրել է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը:

Կառուցվածքային բարեփոխումների տեխնիկական օգնության վարկ II-ի (SATAC II) պայմանագիրը ստորագրվել է 1997թ. օգոստոսի 26-ին, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ կառավարությանը տրամադրել է 3.6 մլն ՀՓԻ (5.6 մլն դոլար)՝ SAC II վարկային ծրագրով աջակցվող կառուցվածքային բարեփոխումների տեխնիկական օժանդակության նպատակով: Ծրագրով նախատեսվում էր՝ 1) պետական հարկային տեսչության և մաքսային վարչության կոմպյուտերացման գործընթացի ավարտ, 2) էներգետիկ հատվածի բարեփոխումներ, այն է՝ էներգետիկայի նախարարության դերի ու գործառույթների վերանայում և էներգիայի արտադրության և բաշխման ձեռնարկությունների սեփականաշնորհմանն արագացում, 3) հանրային տեղեկատվության և դատական ոլորտի բարեփոխումներ, այն է՝ արդի տնտեսական բարեփոխումներին ուղղված հանրային տեղեկատվության ռազմավարության զարգացում և դատական ոլորտի բարեփոխումների նախապատրաստմանն աջակցում, 4) կապիտալ շուկաների զարգացում, այն է՝ կապիտալ շուկաների զարգացման ռազմավարության մշակում: Ծրագրի խնդիրներից էր նաև սեփականաշնորհման գործընթացի, ֆինանսական հատվածի, սոցիալական ապահովության, առողջապահության և կրթության ոլորտների տեխնիկական օժանդակությունը:

Ծրագրով նախատեսված միջոցառումներն իրականացվել են:

Ծրագիրն իրականացրել է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը:

Կառուցվածքային բարեփոխումների վարկ III-ի (SAC III) պայմանագիրը ստորագրվել է 1998թ. դեկտեմբերի 22-ին, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ կառավարությանը տրամադրել է 46.2 մլն ՀՓԻ (շուրջ 71.7 մլն դոլար): Ծրագրի նպատակն էր՝ օժանդակել մակրոտնտեսական կայունության ամրապնդմանը և Կառավարության՝ մասնավոր հատվածի միջնաժամկետ զարգացման ծրագրերին: Ծրագրի խնդիրներից էին՝ 1) մասնավոր և պետական հատվածներում ֆինանսական կարգապահության ամրապնդում, 2) մասնավոր հատվածի զարգացման արագացում, 3) բարեփոխումների սոցիալական կայունության ապահովում:

Ծրագրով նախատեսված միջոցառումներն իրականացվել են:

Ծրագիրն իրականացրել է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը:

Կառուցվածքային բարեփոխումների վարկ IV-ի (SAC IV) պայմանագիրը ստորագրվել է 2001թ. մայիսի 22-ին, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ կառավարությանը տրամադրել է 38.4 մլն ՀՓԻ (59.6 մլն դոլար): Ծրագիրը և՛ նպատակներով, և՛ տրամադրման պայմաններով համապատասխանում է Ընկերակցության կողմից նախկինում տրամադրված SAC I, II, III վարկային ծրագրերին: Այս ծրագիրը տարբերվում է նախկին Կառուցվածքային բարեփոխումների վարկային ծրագրերից միայն նրանով, որ նախատեսված է աջակցելու ինչպես բիզնես-միջավայրի, կառավարման և պետական հատվածի ծառայությունների խոչընդոտների վերացմանը, այնպես էլ սոցիալական հատվածի բարեփոխումների շարունակմանը:

Ծրագրով նախատեսված միջոցառումներն իրականացվել են:

Ծրագիրն իրականացրել է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը:

Կառուցվածքային բարեփոխումների վարկ V-ի (SAC V) պայմանագիրը ստորագրվել է 2003թ. մարտի 14-ին, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ-ին տրամադրել է 30.2 մլն ՀՓԻ (46.9 մլն դոլար)՝ ՀՀ-ում Աղքատության կրճատման ռազմավարության փաստաթղթով (PRSP) սահմանված կառուցվածքային բարեփոխումներն իրականացնելու համար: Այս ծրագրի նպատակն էր՝ աջակցել Կառավարության ջանքերին՝ 1) մասնավոր հատվածի զարգացման և պետական ձեռնարկությունների բարեփոխումների արագացման, 2) պետական հատվածի բարեփոխումների խթանման, 3) սոցիալական ոլորտի (ներառյալ՝ կրթության, առողջապահության, սոցիալական ապահովության և կենսաթոշակային համակարգերի) բարեփոխումների խորացման գործում:

Ծրագրով նախատեսված միջոցառումներն իրականացվել են:

Ծրագիրն իրականացրել է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը:

Դատահիրավական բարեփոխումների ծրագրի (Judicial Reform Project) վարկային պայմանագիրը ստորագրվել է 2000թ. դեկտեմբերի 14-ին, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ-ին տրամադրում է՝ 8.6 մլն ՀՓԻ (13.3 մլն դոլար): Ծրագրի նպատակն է՝ աջակցել Հայաստանում կառավարման, օրենքների կիրարկման և ներդրումային միջավայրի համար խիստ անհրաժեշտ անկախ, մատչելի և արդյունավետ դատահիրավական համակարգի զարգացմանը:

Ծրագիրն իրականացնում է ՀՀ արդարադատության նախարարությունը:

10. Տնտեսական քաղաքականություն՝ 1 ծրագիր

Օտարերկրյա ներդրումների և արտահանման խթանման ծրագրի (Foreign Investment and Export Facilitation Project -LIL) վարկային պայմանագիրը ստորագրվել է 2002թ. ապրիլի 25-ին, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ կառավարությանը տրամադրում է 0.8 մլն ՀՓԻ (1.2 մլն դոլար): Ծրագրի նպատակն է՝ ուսումնասիրել Հայաստանում ներդրումային միջավայրի մասին պոտենցիալ արտահանողների և ներդրողների կարծիքը, մշակել և իրականացնել օտարերկրյա ներդրումների ներգրավման ռազմավարություն, բարելավել Հայաստանում ներդրումային և գործարար միջավայրը, ինչպես նաև մեծացնել երկրի ներդրումային գրավչությունը և օժանդակել արտահանմանը:

Ծրագիրն իրականացնում է Հայաստանի զարգացման գործակալությունը (ADA):

II. Ընկերակցության նախատեսվող վարկային ծրագրերը՝ ըստ ՀՀ տնտեսության ճյուղերի

1. Ենթակառուցվածք՝ 3 ծրագիր

Համայնքային ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրի (Municipal Water & Wastewater Project) վարկային պայմանագիրը ստորագրվել է 2004թ. մայիսի 4-ին, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ կառավարությանը տրամադրում է 15.4 մլն ՀՓԻ (23.9 մլն դոլար)՝ մայրաքաղաքից դուրս ջրամատակարարման ծառայությունների կատարելագործման, դրանց ծախքերի կրճատման և որակի բարելավման նպատակով:

Ծրագիրն իրականացնելու է Հայաստանի տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեն:

Քաղաքային ջեռուցման ծրագրի (Urban Heating Project) վարկային պայմանագիրը ստորագրվել է 2004թ. սեպտեմբերի 15-ին, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ կառավարությանը տրամադրում է 10.0 մլն ՀՓԻ (15.5 մլն դոլար): Ծրագրի նպատակն է՝ ավելացնել այն տնային տնտեսությունների թիվը, որոնք օգտվում են (սպառում և վճարում են) մատչելի, անվտանգ և շրջակա միջավայրի տեսանկյունից կայուն ջեռուցման ծառայություններից:

Ծրագիրն իրականացնելու է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը:

Երևանի ջրմուղ-կոյուղու ծրագրի (Yeravan Water &Wastewater Project) վարկային պայմանագիրը ստորագրվել է 2004թ. ապրիլի 13-ին, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ կառավարությանը տրամադրում է 20.0 մլն ՀՓԻ (31.1 մլն դոլար): Ծրագրի նպատակն է՝ Երևանն ապահովել մատչելի գնով, անվտանգ և շարունակական ջրամատակարարմամբ՝ միաժամանակ կրճատելով շրջակա միջավայրի աղտոտումը:

Ծրագիրն իրականացնելու է Հայաստանի տարածքային կառավարման նախարարության Համայնքային զարգացման ծրագրի ղեկավարման պետական հիմնարկը (Municipal Development Project Management Unit):

2. Գյուղական ոլորտ՝ 2 ծրագիր

Գյուղատնտեսական բարեփոխումների աջակցման լրացուցիչ ծրագրի (Agricultural Reform Support Supplemental Project) վարկային պայմանագիրը ստորագրվել է 2004թ. մայիսի 4-ին, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ կառավարությանը տրամադրում է 1.2 մլն ՀՓԻ (1.9 մլն դոլար)՝ 2002թ. դեկտեմբերի ցրտահարություններից տուժած փոքր՝ շուրջ 370 հա խաղողի տնկիներ և 1130 հա պտղատու այգիներ ունեցող տնտեսություններին ֆինանսավորելու և գյուղատնտեսությանը աջակցող ծառայությունները կատարելագործելու նպատակով:

Ծրագիրն իրականացնելու է ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը:

Պատվարների անվտանգության ծրագրի II-ի (Irrigation Dam Safety Project II) վարկային պայմանագիրը ստորագրվել է 2004թ. հունիսի 10-ին, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ կառավարությանը տրամադրում է 4.7 մլն ՀՓԻ (7.3 մլն դոլար): Ծրագրի նպատակն է՝ բարձրացնել վերականգնման կարիք ունեցող 47 պատվարների, այդ թվում՝ Երևանյան լճի պատվարի անվտանգությունը, ստեղծել դրանց անվտանգության մոնիտորինգի արդյունավետ համակարգ և ապահովել դրանց գործունեությունն ու պահպանումը:

Ծրագիրն իրականացնելու է Հայաստանի տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեն (State Committee for Water Management):

3. Սոցիալական ապահովություն՝ 1 ծրագիր

Հայաստանի սոցիալական ապահովության և ղեկավարման ծրագրի (Armenia Social Protection and Administration Project) վարկային պայմանագիրը ստորագրվել է 2004թ. հունիսի 10-ին, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ կառավարությանը տրամադրում է 3.6 մլն ՀՓԻ (5.6 մլն դոլար): Ծրագրի նպատակն է՝ օգնել զբաղվածության, կենսաթոշակային և սոցիալական աջակցության պետական գործակալություններին՝ բարելավելու բնակչությանը մատուցվող ծառայությունների որակը:

Ծրագիրն իրականացնելու է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը:

4. Առողջապահություն՝ 1 ծրագիր

Հայաստանի առողջապահության համակարգի արդիականացման ծրագրի (Armenia Health Systems Modernization Project) վարկային պայմանագիրը ստորագրվել է 2004թ. հունիսի 10-ին, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ կառավարությանը տրամադրում է 13.0 մլն ՀՓԻ (շուրջ 20.2 մլն դոլար): Այս ծրագիրը առաջին փուլն է Համաշխարհային բանկի կողմից նախատեսվող երկու փուլանոց և 7 տարի տևողությամբ ծրագրի, որի նպատակն է աջակցել առողջապահության հատվածում կառուցվածքային բարեփոխումներին, այն է՝ բնակչությանը, հատկապես անապահով խմբին արդյունավետ և կայուն առողջապահական ծառայությունների մատուցմանը:

Ծրագիրն իրականացնելու է ՀՀ առողջապահության նախարարությունը:

5. Կրթություն՝ 1 ծրագիր

Կրթության որակի և համապատասխանության ծրագրի (Education Quality and Relevance Project) վարկային պայմանագիրը ստորագրվել է 2004թ. հունվարի 20-ին, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ կառավարությանը տրամադրում է 13.2 մլն ՀՓԻ (շուրջ 20.5 մլն դոլար): Ծրագիրը կօգնի Կառավարությանը՝ բարելավելու հայկական դպրոցական համակարգի որակն ու բարձրացնելու դրա նշանակությունը: Համաշխարհային բանկը նախատեսում է Հայաստանում իրականացնել կրթության համակարգի բարելավումների աջակցման երեք փուլից բաղկացած ծրագիր, որը կտևի10 տարի: Այս ծրագիրը այդ խոշոր նախաձեռնության առաջին փուլն է:

Ծրագիրն իրականացնելու է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը:

6. Պետական հատվածի կառավարում՝ 1 ծրագիր

Պետական կառավարման համակարգի արդիականացման ծրագրի (Public Sector Modernization Project) վարկային պայմանագիրը ստորագրվել է 2004թ. մայիսի 4-ին, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ-ին տրամադրում է 6.8 մլն ՀՓԻ (10.6 մլն դոլար): Ծրագրի նպատակն է՝ աջակցել ՀՀ կառավարության կողմից պետական հատվածի բարեփոխումների երկրորդ փուլի իրականացմանը, այն է՝ պետական հաստատությունների կառավարման համակարգի ուժեղացմանը և՛ կենտրոնական, և՛ տեղական մակարդակներով մատուցվող ծառայությունների որակի բարելավմանը:

Ծրագիրը իրականացնելու է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը:

7. Աղքատության կրճատում՝ 1 ծրագիր

Աղքատության կրճատման աջակցման վարկի (Poverty Reduction Support Credit-PRSC) պայմանագիրը ստորագրվել է 2004թ. նոյեմբերի 18-ին, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ կառավարությանը տրամադրում է 13.7 մլն ՀՓԻ (21.276) մլն դոլար: Ծրագիրն աջակցում է Աղքատության կրճատման ռազմավարության փաստաթղթում (PRSP) նշված քաղաքականությունների և ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացմանը: Այս վարկը տրամադրվում է ցածր եկամտով, բայց բարեփոխումների բնագավառում լուրջ հաջողություններ ունեցող այն երկրներին, որոնք Համաշխարհային բանկի օժանդակության կարիքը զգում են հատկապես աղքատության կրճատման հարցում: Վարկային ծրագրի իրականացումն ուղեկցվում է երկու խումբ վերլուծություններով. 1) երկրի սոցիալական համակարգի և վարկավորվող առանցքային ոլորտների վերաբերյալ[14], 2) պետության ֆինանսների կառավարման, հաշվետվելիության և թափանցիկության վերաբերյալ վերլուծություններով: Հայաստանում այս ծրագրի նպատակներն են՝ 1) մակրոտնտեսական կայունության հետագա ամրապնդում և կառավարման ուժեղացում, 2) մրցակցության ապահովում և մասնավոր սեփականության իրավունքների պաշտպանություն, 3) սոցիալական ապահովության և շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտների բարելավում, 4) գյուղական ոլորտի և ենթակառույցների հետագա զարգացում:

Ծրագիրն իրականացնելու է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը:

Միջազգային ֆինանսական կորպորացիա /IFC/

Միջազգային ֆինանսական կորպորացիան (այսուհետև՝ Կորպորացիա) հիմնադրվել է 1956 թվականին: Կորպորացիայի կազմի մեջ մտնում է 177 երկիր:

Կորպորացիայի նպատակն է խթանել մասնավոր հատվածի գործունեությունը զարգացող երկրներում: ***Կորպորացիան իր գործունեությամբ լրացնում է ՎԶՄԲ գործունեությունը, հետևյալ երեք ուղղություններով***՝

- ***մասնավոր հատվածի ծրագրերի ֆինանսավորում՝ առանց կառավարության երաշխիքների և ձեռնարկությունների բաժնետիրական կապիտալներում ներդրումների իրականացում,***
- ***օժանդակություն զարգացող երկրների ձեռնարկություններին՝ միջազգային ֆինանսական շուկաներից ֆինանսավորում ստանալու հարցում,***
- ***խորհրդատվության և տեխնիկական օժանդակության տրամադրում ձեռնարկություններին և կառավարություններին:***

Կորպորացիան հիմնականում ֆինանսավորում է միջին չափի, բայց բարձր եկամտաբերություն ունեցող ձեռնարկություններին, քանի որ Կորպորացիայի փոխառությունների տոկոսադրույքը շուկայական է (չնայած փոխառությունները տրամադրվում են մինչև 15 տարի ժամկետով, այդ թվում՝ մինչև 4 տարի արտոնյալ ժամկետով): Հիմնադրման օրվանից Կորպորացիան անդամ-երկրներին իր սեփական միջոցներից տրամադրել է ավելի քան 44 մլրդ դոլար արժողությամբ վարկեր, իսկ սինդիկացված վարկերի ծավալը կազմել է 23.5 մլրդ դոլար: 2004թ. ֆինանսական տարում 65 անդամ-երկրներում Կորպորացիան ֆինանսավորել է 217 ծրագրեր՝ 4.8 մլրդ դոլար ընդհանուր արժողությամբ:

Կորպորացիայի հայտարարված կանոնադրական կապիտալը բաղկացած է 2,450,000 բաժնետոմսից՝ յուրաքանչյուրը 1,000 դոլար անվանական արժեքով: 2004թ. հունիսի 30-ի դրությամբ բաժանորդագրված էր 2,361,499 բաժնետոմս[15]:

Հայաստանը Կորպորացիային անդամակցում է 1995 թվականի ապրիլի 18-ից: Հայաստանի բաժնեմասը Կորպորացիայի կապիտալում կազմում է 992 բաժնետոմս՝ 992,000 ԱՄՆ դոլար ընդհանուր արժողությամբ: Հայաստանի քվեների թիվը 1,242 ձայն է, որը ընդհանուր քվեների թվի 0.05-ն է[16]:

Ներկայումս Կորպորացիան Հայաստանում իրականացնում է երեք ծրագիր՝ շուրջ 9.2 մլն դոլար ընդհանուր արժողությամբ:

«Արմենիա» հյուրանոցային համալիր - 2000թ. հունիսին Կորպորացիան 3.6 միլիոն դոլար ներդրում է իրականացրել «Արմենիա» հյուրանոցային համալիրի բաժնետիրական կապիտալում: Ծրագրի նպատակն էր՝ սփյուռքահայ ներդրողների և «Մարիոտ-Ինտերնեյշնլ» միջազգային կորպորացիայի համագործակցությամբ վերանորոգել և արդիականացնել հյուրանոցային համալիրը և այն դարձնել Հայաստանում

---

[14] Վարկավորվող առանցքային ոլորտներն անմիջականորեն առնչվում են բնակչության սոցիալական խնդիրների հետ, օրինակ՝ առողջապահությունը:
[15] Տե՛ս IFC 2004 Annual Report/ International Finance Corporation, 2004, էջ 33:
[16] Տե՛ս նույն տեղում:

«հինգ աստղ» ունեցող առաջին համալիրը: 2003թ. օգոտոսին Կորպորացիան ավելացրել է համալիրի կապիտալը՝ ներդնելով ևս 1.3 մլն դոլար:

«ԱԳԲԱ-լիզինգ» լիզինգային վարկային կազմակերպություն (ՍՊԸ) – 2003թ. ապրիլին Կորպորացիան Հայգյուղփոխբանկի, Ֆրանսիայի Credit Agricole խմբի լիզինգային կազմակերպության՝ Յուքաբելի (Ucabail) և Լիբանանյան լիզինգային ընկերության համագործակցությամբ հիմնել է հայաստանյան առաջին լիզինգային «ԱԳԲԱ-լիզինգ» ընկերությունը: Կորպորացիան ներդրել է 270 հազ. դոլար բաժնետիրական կապիտալ և տրամադրել է 2.0 մլն վարկ: Ընկերության բաժնետիրական կապիտալը 1.0 մլն դոլար է: Յուքաբելը բաժնետերերից մեկն է և Credit Agricole Consultants-ի հետ համատեղ ապահովում է տեխնիկական աջակցությունը: Ի լրումն, Credit Agricole-ը տրամադրել է 1.0 մլն դոլարի վարկ: Լիբանանյան լիզինգային ընկերությունը, որը ստեղծվել է 1995թ-ին, Կորպորացիայի և Յուքաբելի մասնակցությամբ, «ԱԳԲԱ-լիզինգ» ընկերության բաժնետերերից մեկն է և ներդնում է իր գիտելիքներն ու կառավարման փորձը: «ԱԳԲԱ-լիզինգ» ընկերությանը տեխնիկական աջակցություն է ցուցաբերում նաև ԱՄՆ կառավարությունը՝ USAID-ի միջոցով. տրամադրվել է 1.2 մլն դոլարի դրամաշնորհ՝ ընկերության հիմնադրման նախնական փուլին աջակցելու համար:

Հայէկոնոմբանկ -2004թ. հուլիսին Կորպորացիան Հայէկոնոմբանկին տրամադրել է 2.0 մլն դոլարի վարկ: Ծրագրի նպատակն է՝ ընդլայնել Հայէկոնոմբանկի կողմից փոքր և միջին ձեռնարկություններին ու բնակելի շինարարության համար տրամադրվող վարկային միջոցների բազան: Սա Կորպորացիայի առաջին ներդրումն էր Հայաստանի բանկային համակարգում:

2002թ. հունիսին Կորպորացիայի տնօրենների խորհուրդը հավանություն է տվել «Հայաստանում փոքր և միջին ձեռնարկությունների հիմնադրամի» ստեղծման ծրագրին, որի նպատակն էր՝ սփյուռքից ուղղակի ներդրումներ ներգրավել հայաստանյան փոքր և միջին ձեռնարկություններ: Սակայն այս ծրագիրը դեռևս ընթացք չի ստացել:

Ներկայումս Կորպորացիան ֆինանսական միջոցներ է փնտրում «Մասնավոր ձեռնարկությունների գործընկերության» (Private Enterprise Partnership) ծրագրի ֆինանսավորման համար: Այս ծրագիրը տարածաշրջանային բնույթ ունի և ակտիվորեն իրականացվում է ԱՊՀ 10 երկրներում: Ծրագրի նպատակն է՝ տեխնիկական աջակցություն ցուցաբերել ձեռնարկություններին, գործարարների միություններին և օգնել իշխանություններին՝ բարելավելու ներդրումային միջավայրը:

Ի լրումն ներդրումային ծրագրերի, Կորպորացիան 1999-2002թթ. Հայաստանում ապահովել է նաև խորհրդատվական ծառայություններ՝ կորպորատիվ կառավարման, ներդրումային միջավայրի բարելավման և փոքր ու միջին ձեռնարկությունների զարգացման ոլորտներում:

Կապիտալ ներդրումների բազմակողմանի երաշխիքների գործակալություն /MIGA/

Կապիտալ ներդրումների բազմակողմանի երաշխիքների գործակալությունը (այսուհետև՝ Գործակալություն) հիմնադրվել է 1988 թվականին: Գործակալության կազմի մեջ մտնում է 164 երկիր:

Գործակալության նպատակն է օգնել զարգացող երկրներին՝ ներգրավելու արտադրողական ներուժի ստեղծմանը նպաստող օտարերկրյա ներդրումներ ինչպես մասնավոր ներդրողներից, այնպես էլ ձեռներեցությամբ զբաղվող պետական ընկերություններից: ***Գործակալության գործունեությունը ներառում է.***

- ***երաշխիքների տրամադրում կամ ոչ առևտրային ռիսկերի ապահովագրում,***
- ***անդամ-երկրներում օտարերկրյա ներդրումների համար բարենպաստ միջավայրի ստեղծմանն օժանդակող խորհրդատվական ու խորհրդակցական ծառայությունների մատուցման ծրագրերի իրագործում:***

Մինչ օրս Գործակալությունը անդամ-երկրներին տրամադրել է 13.5 մլրդ, այդ թվում՝ 2004թ. ֆինանսական տարում՝ 1.1 մլրդ դոլարի երաշխիքներ:

Գործակալության հայտարարված կանոնադրական կապիտալը բաղկացած է 181,342 բաժնետոմսից, որից 2004թ. հունիսի 30-ի դրությամբ բաժանորդագրված էր 168,021 բաժնետոմս՝ շուրջ 1.82 մլրդ դոլար արժողությամբ: Յուրաքանչյուր բաժնետոմս ունի 10,000 ՀՓԻ անվանական արժեք, որը հաշվարկվում է 1981թ. հունվարի 1-ից մինչև 1985 թ. հունիսի 30-ը ընկած ժամանակահատվածում ԱՄՆ դոլար/ՀՓԻ միջին փոխարժեքով (1.082 ԱՄՆ դոլար)[17]:

Հայաստանը Գործակալությանը անդամակցում է 1995թ. դեկտեմբերի 5-ից: 2004թ. հունիսի 30-ի դրությամբ Գործակալության կապիտալում ***Հայաստանի*** բաժնեմասը կազմում էր 80 բաժնետոմս՝ 866,000

[17] *Տե՛ս Annual Financial Statements, June 30, 2004/ World Bank, Multilateral Investment Guarantee Agency, 2004, էջ 68 (http://www.miga.org/screens/pubs/annrep04/pdf/04arfinancials.pdf).*

ԱՄՆ դոլար ընդհանուր արժողությամբ, որից վճարված է 173,000 ԱՄՆ դոլար (20%), իսկ մնացած 693,000 ԱՄՆ դոլարը Հայաստանը պետք է վճարի Գործակալության պահանջի դեպքում: ՀՀ-ն Գործակալությանը տրամադրել է մեկ հասարակ անտոկոս պարտամուրհակ (1995թ. սեպտեմբերի 12-ին)՝ 85,560 ԱՄՆ դոլար ընդհանուր արժողությամբ: Հայաստանի քվեների թիվը Գործակալությունում կազմում է 257 ձայն, որը ընդհանուր քվեների թվի 0.13%-ն է[18]:

2000թ. Գործակալությունը Հունաստանի առևտրային բանկին տրամադրել է 2.7 մլն դոլարի երաշխիք[19]՝ ՀՀ բանկային համակարգում, մասնավորապես ներկայիս «Կասկադ» ***(նախկինում՝ «Emporiki»)*** բանկում ներդրում կատարելու համար, որով Գործակալությունը երաշխավորում է Հունաստանի առևտրային բանկին, որ՝

- ՀՀ-ում իր ներդրումային ծրագրի դադարեցումից հետո նրա դրամային հասույթները և եկամուտները կփոխարկվեն ազատ փոխարկելի արտարժույթի և կփոխանցվեն Հունաստան,
- ՀՀ կառավարության քաղաքականության խստացման արդյունքում[20] Հունաստանի առևտրային բանկը չի զրկվի ՀՀ-ում իր սեփականության իրավունքից,
- քաղաքական խռովությունների և պատերազմի դեպքում Հունաստանի առևտրային բանկի իրական ակտիվները կպաշտպանվեն վնասվելուց կամ կորստից,
- եթե ՀՀ-ն խախտի միջազգային գործարքի (պայմանագրի) պայմանները, ապա Գործակալությունը Հունաստանի առևտրային բանկին կօգնի արբիտրաժային կամ իրավաբանական որոշմամբ հասնել ՀՀ կողմից պարտավորության խախտման ճանաչմանը:

Հարկ ենք համարում նշել, որ առաջին երեք տարիների ընթացքում Գործակալության կողմից տրված երաշխիքները, բացի վերաապահովագրություններից, հնարավոր չէ միակողմանիորեն դադարեցնել: Երաշխիքային պայմանագրերի, ներդրողներին վճարվող բոլոր կարգի կորուստների փոխհատուցման վճարները չեն կարող գերազանցել երաշխավորված առավելագույն գումարը:

Ներդրումային վեճերի կարգավորման միջազգային կենտրոն (ICSID)

Ներդրումային վեճերի կարգավորման միջազգային կենտրոնը (այսուհետև՝ Կենտրոն) հիմնադրվել է 1966թ-ին: Կենտրոնի կազմի մեջ մտնում է 141 երկիր:

Կենտրոնի նպատակն է՝ նպաստել օտարերկրյա ներդրումների խթանմանը՝ ***կառավարությունների և օտարերկրյա ներդրողների միջև ծագած վեճերի քննարկումն ու հաշտեցումն ապահովող*** միջազգային մեխանիզմների միջոցով: Այդ մեխանիզմների հիմքում միջազգային ներդրումային պայմանագրեր են, ներդրումների մասին օրենքներ, երկկողմանի և բազմակողմանի ներդրումային համաձայնագրեր:

Հայաստանը Կենտրոնին անդամակցում է 1992թ. հոկտեմբերի 16-ից: 2004թ. նոյեմբերի 20-ի դրությամբ 154 երկրներ ստորագրել են ***«Կառավարությունների և այլ երկրների քաղաքացիների միջև ներդրումային վեճերի կարգավորման»*** կոնվենցիան, սակայն այն վավերացրել են 141 երկրներ, որոնք էլ ներկայումս համարվում են Կենտրոնի լիիրավ անդամներ: ԱՊՀ երկրներից այդ կոնվենցիան չի ստորագրել Տաջիկստանը, իսկ դեռևս չեն վավերացրել Ղրղզստանը, Մոլդովան և Ռուսաստանը[21]:

Հիմնադրման օրվանից Կենտրոնը քննարկել է 159, այդ թվում՝ 2004թ. ֆինանսական տարում՝ 30 վեճեր:

Հայաստանում Համաշխարհային բանկի 1993-2004թթ. ծրագրերի գնահատականը և հետագա ռազմավարությունը

Համաշխարհային բանկը իր կողմից մշակված մեթոդոլոգիայի հիման վրա ընտրանքային եղանակով գնահատում է անդամ-երկրներում իր ծրագրերի ***արդյունքը, կայունությունը և ինստիտուցիոնալ զարգացման ազդեցությունը:*** Ընտրանքային եղանակով գնահատվել է նաև Հայաստանում իրականացվող ծրագրերից 14-ի արդյունավետությունը և համեմատվել ԱՊՀ-7 երկրների գնահատականների հետ (տե՛ս աղ. 4): Համաձայն Համաշխարհային բանկի փորձագետների՝ ԱՊՀ-7 ամենացածր եկամուտ ունեցող

---

[18] Տե՛ս նույն տեղում:

[19] Տե՛ս Annual Financial Statements, June 30, 2004/ World Bank, Multilateral Investment Guarantee Agency, 2004, էջ 69 (http://www.miga.org/screens/pubs/annrep04/pdf/04arfinancials.pdf):

[20] Կառավարությունը կարող է կրճատել, սահմանափակել կամ վերացնել սեփականության իրավունքը և ապահովագրված ներդրումների նկատմամբ իրավունքները:

[21] Տե՛ս List of Contracting States and Other Signatories of the Convention/ World Bank, ISCID, 2004. (http://www.worldbank.org/icsid/costate/c-states-en.htm).

երկրների թվում Համաշխարհային բանկի աջակցության ծրագրերն առավել արդյունավետ են եղել Հայաստանում[22]:

Աղյուսակ 4. Համաշխարհային բանկի ծրագրերի իրականացման գնահատումը

Երկիրը	Գնահատվող ծրագրերի թիվը	Արդյունքը, %	Իրականացրած ծրագրերի կայունությունը, %	Ինստիտուցիոնալ զարգացման ազդեցությունը, %
		Բավարար	*Հավանական*	*Զգալի*
Հայաստան	14	86	85	64
Ադրբեջան	3	67	50	0
Վրաստան	14	79	92	57
Ղրղզստան	12	83	58	42
Մոլդովա	10	70	50	20
Տաջիկստան	7	71	57	29
Ուզբեկստան	4	67	33	0
Արևելյան և Կենտրոնական Ասիա	402	79	73	50
Համաշխարհային բանկ	2,712	71	57	39

Անդամ-երկրներում իրականացրած ծրագրերի ***արդյունքը*** գնահատելիս Համաշխարհային բանկը օգտագործում է վարկանիշային դասակարգման 6 կատեգորիաներ՝

1. «լիովին բավարար» (լավագույն արդյունք),
2. «բավարար»,
3. «չափավոր բավարար»,
4. «չափավոր անբավարար»,
5. «անբավարար»
6. «լիովին անբավարար» (վատագույն արդյունք):

Հայաստանում իրականացվող ծրագրերի արդյունքը գնահատվել է «բավարար», որը նշանակում է, որ Համաշխարհային բանկի ծրագրերի իրականացման արդյունքում արձանագրվել է առաջընթաց՝ նախանշված բոլոր կարևորագույն նպատակային ուղղություններում:

Ծրագրերի ***կայունությունը*** (հավանականությունը, որ ծրագիրը հաջողություն կունենա) գնահատվում է հետևյալ սանդղակով՝

1. «շատ հավանական»,
2. «հավանական»,
3. «անհավանական»,
4. «շատ անհավանական» կամ եթե տեղեկատվությունը անբավարար է՝ «չգնահատվող»:

Հայաստանում իրականացվող ծրագրերը համարվել են «հավանական» կայուն, որը ցույց է տալիս առաջադիմության ընթացքում հնարավոր ռիսկերի (տեխնիկական, ֆինանսական, տնտեսական, սոցիալական, շրջակա միջավայրի, կառավարության սեփականության, ինստիտուցիոնալ աջակցության և միջազգային տնտեսական ցնցումների կամ քաղաքական փոփոխությունների ռիսկերի) նկատմամբ այդ ծրագրերի «հավանական» ճկունությունն ու պաշտպանվածությունը:

Ծրագրերի **ինստիտուցիոնալ զարգացման ազդեցությունները** (ծրագրի իրագործման արդյունքում որքանով են մեծացել հաճախորդ երկրի կարողությունները՝ արդյունավետ, կայուն և արդարացի օգտագործելու իր մարդկային, ֆինանսական և բնական ռեսուրսները) գնահատվում են՝

1. «բարձր»,
2. «զգալի»,
3. «համեստ» կամ «չնչին»:

Հայաստանում Համաշխարհային բանկի իրականացրած ծրագրերի ինստիտուցիոնալ ազդեցությունը գնահատվել է «զգալի», որը ցույց է տալիս, որ ծրագրերը էապես նպաստել են Հայաստանում մարդկային, ֆինանսական և բնական ռեսուրսների առավել արդյունավետ, արդարացի և կայուն օգտագործմանը: Ծրագրերի ***ինստիտուցիոնալ զարգացման ազդեցությունները*** գնահատելիս դիտարկում են՝

[22] *Տե՛ս Armenia – Country Assistance Evaluation/World Bank, OED, June 15, 2004.*

տնտեսական կառավարման մակարդակը, պետական հատվածի, մասնավորապես՝ քաղաքացիական ծառայության կառուցվածքը, ֆինանսական հատվածի ինստիտուցիոնալ խնդիրները, իրավական, կարգավորման և դատական համակարգերի գործունեության արդյունավետությունը, մոնիտորինգի և գնահատման համակարգերի, ինչպես նաև ֆինանսական հաշվետվելիության մակարդակը և այլն:

Նկատենք նաև, որ նախկին ԽՍՀՄ երկրներում ***կառավարման (governance) բարեփոխումների*** վերաբերյալ Համաշխարհային բանկի անցկացրած հարցումները ցույց են տվել, որ Հայաստանի մասնավոր հատվածը գործում է ամենաբարենպաստ բիզնես- միջավայրում[23]: Սակայն նաև նշվել է, որ այս հարցում Հայաստանը դեռևս զիջում է Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներին, քանի որ երկրում դեռևս կան հիմնախնդիրներ խոշոր ձեռնարկությունների վերակառուցման, տնտեսավարող սուբյեկտների միջև պայմանագրերի կիրարկման և մասնավոր ֆիրմաների համար ֆինանսավորման հասանելիության առումով: Իսկ պետական հատվածի հիմնախնդիրները կապված են բյուրոկրատական խոչընդոտների և կոռուպցիայի հետ: Այս երևույթները խոչընդոտում են փոքր և միջին ձեռնարկությունների ստեղծումն ու զարգացումը, որոնք, ինչպես հայտնի է, կարևոր դեր են խաղում զբաղվածության ապահովման և աղքատության կրճատման գործում:

Համաշխարհային բանկի փորձագետները նկատում են նաև, որ Հայաստանի տնտեսությունում դեռևս բարձր է տարածաշրջանային անկայունության ռիսկը, որը անբարենպաստ ազդեցություն է ունենում ներդրումային միջավայրի վրա: Շարունակական կախվածությունը միջազգային աջակցությունից վկայում է արտաքին անկայունության մասին: Աղքատության բարձր մակարդակը՝ զուգակցված բյուջեի սահմանափակ հնարավորություններով, կարող է հանգեցնել հետագայում սոցիալական ճգնումների: Տնտեսական աճի բարձր տեմպերը դժվար կլինի ապահովել նաև ապագայում, քանի որ այդ աճը բխում է ոչ կապիտալ ինտենսիվ հատվածներից և, բացի այդ, ձևավորված չէ առողջ մրցակցային դաշտ:

Հետևաբար, նախատեսվում է, որ Համաշխարհային խմբի կազմակերպությունների միջինժամկետ և երկարաժամկետ ռազմավարությունը Հայաստանում կունենա հետևյալ ուղղվածությունը՝

- Զարգացման միջազգային ընկերակցության (IDA) արտոնյալ վարկավորումից աստիճանաբար անցում կկատարվի Վերականգնման և զարգացման միջազգային բանկի (IBRD) նվազ արտոնյալ վարկավորմանը, քանի որ Հայաստանը բնակչության մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ով ներկայումս գերազանցում է Զարգացման միջազգային գործակալության վարկավորման անհրաժեշտ սահմանաչափը: Արդյունքում՝ զգալիորեն կկրճատվեն Համաշխարհային բանկի վարկավորման ծավալները, և փոքրածավալ ծրագրերը կուղղվեն աղքատության կրճատմանը, այն է՝ սոցիալական և գյուղական ոլորտների ֆինանսավորմանը, «Հազարամյակի մարտահրավերի» նպատակների իրականացմանը: Սակայն Համաշխարհային բանկի փորձագետները նշում են, որ այս անցումը չպետք է լինի կտրուկ. թեև Հայաստանը տնտեսական աճի և որոշ այլ ցուցանիշների գծով հասել է ակնառու հաջողությունների, այնուամենայնիվ, դեռևս կախվածություն ունի արտաքին ֆինանսական աջակցությունից, այսինքն՝ դեռևս խոցելի է և չունի անհրաժեշտ վարկունակություն:
- Կշարունակվեն ուշադրության կենտրոնում մնալ մասնավոր հատվածի զարգացմանը նպաստող միջավայրի ապահովման խնդիրները: Հայաստանի տնտեսական առաջընթացի կայունությունն ապահովելու և ռիսկերը նվազեցնելու տեսակետից կկարևորվեն աղքատության կրճատմանը նպաստող աշխատատեղերի ստեղծումը և առևտրային պակասուրդի կրճատմանը նպաստող արտահանման ընդլայնումը: Համաշխարհային բանկը նախատեսում է իր ֆինանսավորումն ուղղել հատկապես փոքր և միջին ձեռնարկությունների բիզնես- միջավայրի բարելավմանը, գործող օրենքների և կարգավորումների դաշտի, ինչպես օրինակ, սնանկության գործընթացի կիրարկմանը, դատական համակարգի արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացմանը և տնտեսության բոլոր հատվածներում մրցակցության խթանմանը:
- Կշարունակվի աջակցությունը պետական հատվածի բարեփոխումներին, քանի որ ուժեղ պետական հատվածը առանցքային է մասնավոր հատվածի զարգացման և սոցիալական ծառայությունների արդյունավետ մատուցման համար անհրաժեշտ միջավայրի ապահովման առումով: Կարևորվելու են հակակոռուպցիոն միջոցառումները, մաքսային և հարկային քաղաքականության բարեփոխումները և պետական վարչարարության բարելավումը:

[23] *Տե՛ս Armenia –Country Assistance Evaluation /World Bank, OED, June 15, 2004, էջ 3:*

Օգտագործված գրականություն

1. The World Bank Annual Report 2004, Vol. 2 Financial Statements
2. Management's Discussion and Analysis/International Bank for Reconstruction and Development, June 30, 2004. http://treasury.worldbank.org/web/pdf/IBRD_MD&AJune2004.pdf
3. Financial Statements /International Bank for Reconstruction and Development, June 30, 2004
4. Special Purpose Financial Statements/ International Development Association, June 30, 2004
5. IFC 2004 Annual Report/ International Finance Corporation, 2004
6. Annual Financial Statements/ World Bank, Multilateral Investment Guarantee Agency, June 30, 2004. (http://www.miga.org/screens/pubs/annrep04/pdf/04arfinancials.pdf)
7. List of Contracting States and Other Signatories of the Convention/ World Bank, ISCID, 2004. (http://www.worldbank.org/icsid/costate/c-states-en.htm)
8. World Bank and EBRD, Business Environment and Enterprise Performance Study, 2002
9. The Millennium Development Goals in Europe and Central Asia, ECA Region/World Bank, September, 2003
10. Armenia – Country Assistance Evaluation/ World Bank, OED, June 15, 2004


ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ* (2004 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ)

Դրամավարկային քաղաքականության վարչություն

Մարգարիտ Մամիկոնյան

Ընդհանուր տեղեկատվություն [1]

Հայաստանի Հանրապետությունը անդամակցում է Համաշխարհային բանկի խմբի բոլոր հինգ կազմակերպություններին՝ Վերակառուցման և զարգացման միջազգային բանկին /IBRD/, Զարգացման միջազգային ընկերակցությանը /IDA/, Միջազգային ֆինանսական կորպորացիային /IFC/, Կապիտալ ներդրումների բազմակողմանի երաշխիքների գործակալությանը /MIGA/ և Ներդրումային վեճերի կարգավորման միջազգային կենտրոնին (ICSID)[2]:



Հայաստանը անդամակցում է Համաշխարհային բանկին 1992թ. ապրիլից: Այդ ժամանակահատվածից սկսած՝ Համաշխարհային բանկի խմբի կազմակերպությունները Հայաստանին ոչ միայն տրամադրել են ֆինանսական զգալի աջակցություն, այլև մատուցել են վերլուծական և խորհրդատվական ծառայություններ: 2004թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Համաշխարհային բանկի խմբի կազմակերպությունները Հայաստանին տրամադրել են 826.9 մլն դոլարի վարկեր, իրականացրել են 5.2 մլն դոլարի բաժնետիրական ներդրում և տրամադրել են 2.7 մլն դոլարի երաշխիք (տե՛ս աղ. 1):

** Հեղինակի տեսակետը կարող են չհամընկնել ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական դիրքորոշմանը:*

[1] Այս հրապարակումը նոր տվյալներով լրացնում է «Համաշխարհային բանկ» հոդվածը («ՀՀ ԿԲ տեղեկագիր», թիվ 1, 2000թ.):

[2] «Համաշխարհային բանկի խումբ» տերմինը ներառում է բոլոր հինգ կազմակերպությունները, մինչդեռ «Համաշխարհային բանկ» տերմինը վերաբերում է դրանցից երկուսին՝ Վերակառուցման և զարգացման միջազգային բանկին (IBRD) և Զարգացման միջազգային ընկերակցությանը (IDA):

Աղյուսակ 1. Հայաստանում Համաշխարհային բանկի խմբի կազմակերպությունների գործող ծրագրերը (2004թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ)

Համաշխարհային բանկի խմբի կազմակերպության անվանումը	Բնագավառը	Ծրագրերի թիվը	Վարկ *(մլն ԱՄՆ դոլար)*	Կապիտալ *(մլն ԱՄՆ դոլար)*	Երաշխիք *(մլն ԱՄՆ դոլար)*
Վերականգնման և զարգացման միջազգային բանկ (IBRD)	Պետական	1	12.0		
Զարգացման միջազգային ընկերակցություն (IDA)	Պետական	29	810.9		
Միջազգային ֆինանսական կորպորացիա (IFC)	Մասնավոր	3	4.0	5.2	
Կապիտալ ներդրումների բազմակողմանի երաշխիքների գործակալություն (MIGA)	Մասնավոր	1			2.7
ԸՆԴԱՄԵՆԸ		34	826.9	5.2	2.7

Հայաստանում իր գործունեության շուրջ տասնհինգ տարիների ընթացքում Համաշխարհային բանկը, ԱՄՀ-ի և այլ դոնորների հետ միասին, զգալիորեն աջակցել է երկրում մակրոտնտեսական կայունության հաստատմանը, օգնել է Հայաստանին՝ անցնելու նոր, շուկայական տնտեսավարման մեխանիզմների և զարգացնելու մասնավոր ու ձեռնարկատիրական նախաձեռնությունները, մեծապես նպաստել է օրենսդրական կարգավորումների դաշտի զարգացմանը, իրավական և դատական բարեփոխումների ընթացքին: Թեև աղքատության մակարդակը, ըստ Համաշխարհային բանկի, կրճատվել է ոչ ցանկալի չափով, սակայն բանկն ակտիվորեն աջակցել է բնակչության անապահով խմբի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված սոցիալական նպաստների նոր համակարգի ներդրմանը: Համաշխարհային բանկը նաև զգալի մասնակցություն է ունեցել էներգետիկայի ոլորտի բարեփոխումների գործում: Տրանսպորտի և գյուղատնտեսության բնագավառում Համաշխարհային բանկը խոշոր ներդրումներ է իրականացրել ճանապարհաշինության և ոռոգման համակարգի վերականգնման նպատակով, սակայն դեռևս զգացվում է լրացուցիչ ֆինանսավորման պահանջ՝ դրանք ավարտին հասցնելու համար: Բանկի աջակցության ծրագրերը նպաստել են նաև Հայաստանում մասնավոր հատվածի զարգացմանը, հատկապես սեփականաշնորհման գործընթացին, սակայն դեռևս բավականին անելիքներ կան բիզնես-միջավայրը բարելավելու և նոր աշխատատեղեր ապահովող փոքր և միջին ձեռնարկությունների ստեղծումը խթանելու գործում:

Հայաստանում Համաշխարհային բանկի գործունեության ներկայիս ռազմավարությունը ներառում է՝

- մակրոտնտեսական կայունության ամրապնդում,
- մասնավոր հատվածի զարգացման խթանում՝ հետագա կառուցվածքային բարեփոխումների իրականացման, ֆինանսական, իրավական ու դատական համակարգերի ամրապնդման, ինչպես նաև էներգետիկայի, տրանսպորտի և ջրամատակարարման հետ կապված հիմնախնդիրների լուծմանը աջակցելու միջոցով,
- բարեփոխումների սոցիալական ուղղվածության ընդգծվածություն և աղքատության կրճատմանն աջակցում՝ սոցիալական ապահովության, առողջապահության ու կրթության համակարգերի ամրապնդման միջոցով:

Համաշխարհային բանկի խմբի բոլոր հաստատությունների ֆինանսական տարին սկսվում է հուլիսի 1-ից և ավարտվում հաջորդ տարվա հունիսի 30-ին:

Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ /IBRD/

Վերակառուցման և զարգացման միջազգային բանկը (այսուհետև՝ ՎԶՄԲ) կազմավորվել է 1945թ-ին: ՎԶՄԲ կազմի մեջ մտնում է 184 երկիր՝ աշխարհի գրեթե բոլոր երկրները:

ՎԶՄԲ գլխավոր նպատակներն են՝ ***աղքատ-երկրներում կայուն տնտեսական զարգացման խթանումը և աղքատության կրճատումը***, որոնց իրագործման համար ՎԶՄԲ-ն վարկեր, երաշխիքներ է տրամադրում և ոչ վարկային վերլուծական ու խորհրդատվական ծառայություններ է մատուցում այդ երկրներին: ՎԶՄԲ-ն վարկավորում է 1 շնչի հաշվով միջին (ցածրից բարձր) եկամուտ[3] ունեցող և վարկունակ

[3] Համաձայն Համաշխարհային բանկի դասակարգման՝ ցածր եկամուտ ունեցող երկրներ են համարվում բնակչության 1 շնչի հաշվով 865 ԱՄՆ դոլար կամ պակաս եկամուտ ունեցող երկրները: Տես http://web.worldbank.org/WBSITE/EXTERNAL/TOPICS/EXTDEBTDEPT/0,,contentMDK:20260732~menuPK:531717~pagePK:64166646~theSitePK:469043,00.html.

երկրներին: Այս կազմակերպության վարկային միջոցներն օգտագործվում են զարգացման այնպիսի ծրագրերի ֆինանսավորման համար, ինչպիսիք են՝ մայրուղիների, դպրոցների և հոսպիտալների կառուցումը: Բանկը ֆինանսավորում է նաև այն ծրագրերը, որոնց օգնությամբ կառավարությունները վերափոխում են իրենց տնտեսությունների կառավարման ձևը:

ՎԶՄԲ վարկային գործառնությունների հիմքում հետևյալ սկզբունքներն են՝

- ՎԶՄԲ-ն վարկավորում է անդամ-երկրների կառավարություններին կամ մասնավոր ձեռնարկություններին,
- վարկերը տրամադրվում են տվյալ երկրի կառավարության երաշխավորությամբ և ողղվում են տնտեսական զարգացման ծրագրերի ֆինանսավորմանը,
- վարկերը տրամադրվում են միայն այն դեպքում, երբ եկամուտների անբավարարության պատճառով փոխառու երկիրը հնարավորություն չունի որևէ մասնավոր աղբյուրից ներգրավելու վարկեր՝ շուկայական տոկոսադրույքներով,
- վարկերը տրամադրվում են ՎԶՄԲ փորձագիտական հանձնաժողովի դրական գնահատականի և համաձայնության դեպքում,
- վարկային միջոցների օգտագործումը խիստ նպատակային է և իրականացվում է փուլերով:

Տարիների ընթացքում կուտակած եկամուտը և բարձր վարկանիշը (AAA) ՎԶՄԲ-ին հնարավորություն են տալիս ֆինանսավորելու բազմաթիվ զարգացման ծրագրեր և ապահովելու իր ֆինանսական կայունությունը: Թողարկելով պարտատոմսեր՝ ՎԶՄԲ-ն կապիտալի շուկաներից փոխառում է էժան միջոցներ և անդամ-երկրներին առաջարկում մատչելի պայմաններով: Վարկերը տրամադրվում են 15-20 տարի ընդհանուր ժամկետով, այդ թվում՝ 3-5 տարին համարվում է արտոնյալ ժամկետ, որի ընթացքում հիմնական գումարի մարումներ չեն իրականացվում:

ՎԶՄԲ-ն սովորաբար ֆինանսավորում է վարկավորվող ծրագրերի ընդհանուր արժեքի 30 տոկոսը, իսկ տվյալ ծրագրով նախատեսված մնացած ծախսերը ֆինանսավորվում են ներքին կամ արտաքին այլ աղբյուրների հաշվին: Մինչև 2004թ. հունիսի 30-ը ՎԶՄԲ-ն հավանություն էր տվել 129 երկրի՝ շուրջ 342 մլրդ դոլար արժողությամբ վարկային ծրագրերի (բացառությամբ չեղյալ համարվածների), որոնց ավելի քան 90 տոկոսը միջին և երկարաժամկետ փոխառություններ են: 2004 ֆինանսական տարում ֆինանսավորվել են 11 մլրդ դոլար ընդհանուր արժողությամբ 87 նոր ծրագրեր՝ 33 երկրում[4]:

ՎԶՄԲ-ն տեղական և օտարերկրյա կապիտալի գործունեության համար նպաստավոր ներդրումային միջավայր ստեղծելու նպատակով ֆինանսավորում է նաև էներգետիկայի, տրանսպորտի, կապի և ենթակառուցվածքային այլ ճյուղերի զարգացման հեռանկարային ծրագրերը:

2004թ. հունիսի 30-ի դրությամբ Բանկի հայտարարած կանոնադրական կապիտալը կազմում էր 1,581,724 բաժնետոմս, որից փաստացի բաժանորդագրված էր 1,572,661 բաժնետոմս՝ 189.718 մլրդ դոլար ընդհանուր արժողությամբ: Յուրաքանչյուր բաժնետոմս ունի 100,000 ՀՓԻ անվանական արժեք, որը հաշվարկվում է 1974թ. հուլիսի 1-ի դրությամբ ԱՄՆ դոլար/ՀՓԻ փոխարժեքով (1.20635), այսինքն՝ յուրաքանչյուր բաժնետոմսի անվանական արժեքը 120,635 ԱՄՆ դոլար է[5]:

Հայաստանը ՎԶՄԲ-ին անդամակցում է 1992 թ. սեպտեմբերի 16-ից: 2004թ. հունիսի 30-ի դրությամբ Հայաստանի բաժնեմասը ՎԶՄԲ-ում կազմում էր 1139 բաժնետոմս՝ 137.4 մլն դոլար ընդհանուր արժողությամբ: Պարտադիր վճարման է ենթակա 5.9 մլն դոլարը (4,3%), իսկ մնացած 131.5 մլն դոլարը Հայաստանի կողմից պետք է վճարվի ՎԶՄԲ-ի պահանջի դեպքում: Հայաստանի քվեների թիվը կազմում է 1,389 ձայն, որը ընդհանուր քվեների թվի 0.09 %-ն է[6]: Նախկինում (1992թ. սեպտեմբերի 15-ին, 1996թ. մայիսի 5-ին, 1998թ. հունիսի 29-ին, 2002թ. հոկտեմբերի 7-ին) տրամադրված չորս պարտամուրհակների փոխարեն Հայաստանի Հանրապետությունը 2004թ. նոյեմբերի 17-ին ՎԶՄԲ-ին տրամադրել է մեկ պարտամուրհակ՝ 2,864,884,761.00 դրամ արժողությամբ:

1993թ. ապրիլի 7-ին ՀՀ կառավարության և ՎԶՄԲ-ի միջև կնքվել է 12 մլն դոլարի վարկային պայմանագիր **(Institution Building Loan)**՝ տնտեսության կայունացման և անհրաժեշտ ինստիտուտների ձևավորման նպատակով: Վարկի օգտագործված մասի դիմաց տոկոսավճարի հաշվարկման համար հիմք է ընդունվել Լոնդոնյան միջբանկային 6-ամսյա դեպոզիտների առաջարկի տոկոսադրույքը (LIBOR+ 0.8%):

Վարկային ծրագրի ժամկետայնության, վարկային միջոցների բաշխման և հիմնական գումարի մարումների մասին հանգամանալից տեղեկատվությունը ներկայացված է աղյուսակ 2-ում:

---

[4] Տե՛ս IBRD Management's Discussion and Analysis: June 30, 2004, էջ 3-8: (http://treasury.worldbank.org/web/pdf/IBRD_MD&AJune2004.pdf)
[5] Տե՛ս նույն տեղում, էջ 18:
[6] Տե՛ս IBRD Financial Statements: June 30, 2004, էջ 53:

Զարգացման միջազգային ընկերակցություն (IDA)

Զարգացման միջազգային ընկերակցությունը (այսուհետև՝ Ընկերակցություն) հիմնադրվել է 1960 թվականին: Ընկերակցության կազմի մեջ մտնում է 165 երկիր:

Ի տարբերություն ՎԶՄԲ-ի, Ընկերակցության գործունեությունը համալրող բնույթ ունի: Այն կոչված է ***աջակցելու համեմատաբար աղքատ և վարկունակության պակաս ունեցող երկրների տնտեսական զարգացմանն ու կենսամակարդակի բարձրացմանը,*** այսինքն՝ այն երկրներին, որոնք տնտեսական զարգացման ցածր մակարդակի պատճառով ի վիճակի չեն օգտվել ՎԶՄԲ-ի կամ Միջազգային ֆինանսական կորպորացիայի ֆինանսական աջակցությունից: 2004թ. ֆինանսական տարում այդ երկրների թվին են դասվել 1 շնչի հաշվով մինչև 865 ԱՄՆ դոլար ՀՆԱ ունեցող երկրները՝ որոշ վերապահումներով[7]:

Ընկերակցությունը վարկեր է տրամադրում միայն անդամ-երկրների կառավարություններին: Հիմնադրման օրվանից մինչ օրս Ընկերակցությունը անդամ-երկրներին տրամադրել է 151 մլրդ դոլարի վարկային միջոցներ: 2004թ. ֆինանսական տարում Ընկերակցությունը 62 երկրներում ֆինանսավորել է 158 նոր ծրագրեր՝ 9 մլրդ դոլար ընդհանուր արժողությամբ, որից 1.7 մլրդ դոլարը՝ դրամաշնորհների ձևով:

2004թ. հունիսի 30-ի դրությամբ Ընկերակցության անդամների բաժանորդագրական վճարներն ու հատկացումները կազմում էին 117.928 մլրդ ԱՄՆ դոլար:

Հայաստանը անդամակցում է Ընկերակցությանը 1993թ. օգոստոսի 25-ից: 2004թ. հունիսի 30-ի դրությամբ Հայաստանի բաժնեմասը Ընկերակցության բաժանորդագրական կապիտալում 584,000 ԱՄՆ դոլար էր: 1998թ. մայիսի 19-ին Հայաստանը Ընկերակցությանը տրամադրել է մեկ հասարակ, անտոկոս պարտամուրհակ՝ 4,363,016 ՀՀ դրամ արժողությամբ: Հայաստանի քվեների թիվը կազմում է 5317 ձայն, որը ընդհանուր քվեների թվի 0.04%-ն է[8]:

1992-2003թթ. ընթացքում Ընկերակցության կողմից Հայաստանում իրականացվել են 29 վարկային ծրագրեր՝ 810.9 մլն դոլար ընդհանուր գումարով (տե՛ս աղյուսակ 1): 2004թ. ընթացքում Համաշխարհային բանկի տնօրենների խորհուրդը հավանություն է տվել ևս 10 վարկային ծրագրերի՝ 157.9 մլն դոլար արժողությամբ: Մինչև 2000թ. դեկտեմբեր ամիսը ստորագրված վարկերը Հայաստանի կառավարությանը տրամադրվել են 35 տարի, իսկ դրանից հետո՝ 40 տարի ժամկետով: Վարկերն անտոկոս են: Վարկերի հիմնական գումարների մարումն իրականացվում է 10 տարի արտոնյալ ժամկետի ավարտից հետո՝ տարեկան երկու անգամ, կիսամյակային վճարումների ձևով: Վարկի տրամադրման պահից սկսած՝ վարկառուն կիսամյակային վճարումների ձևով Ընկերակցությանը վճարում է վարկի սպասարկման վճար՝ հիմնական գումարի օգտագործված մասի 0.75%-ի չափով և պարտավորության վճար՝ 0.5%-ի չափով:

Վարկային ծրագրերի ժամկետայնության, վարկային միջոցների բաշխումների և հիմնական գումարների մարումների մասին հանգամանալից տեղեկատվությունը ներկայացված է աղյուսակներ 2 և 3-ում:

Աղյուսակ 2. Հայաստանի Հանրապետությունում Համաշխարհային բանկի կողմից իրականացվող վարկային ծրագրերը

	Համաշխարհային բանկի կառույցի, վարկավորման ոլորտը և վարկի անվանումը	Ծրագրի հաստատման ամսաթիվը, տարին	Ամրագրման/գործողության ժամկետը	Գումարը, մլն ՀՓՀ	Գումարը,[9] մլն դոլար	Բաշխվել է 2004թ. սեպտ. 30-ի դրությամբ, մլն դոլար	Հինգնախկ գումարի մարման ժամանակացույց-ների գործառնություն	Մարվել է հիմնական գումար, մլն դոլար	Վճարվել է հետաքրքրություն, մլն դոլար
1	2	3	4	5	6	7	8	9	10
	ՎԶՄԲ (IBRD)			-	12.0	12.0			
1.	Ինստիտուցիոնալ համակարգերի վարկ (Institution Building Loan)	30/03/1993	20/5	-	12.0	12.0	1998-2013	2.938	3.691
	ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ (IDA)			522.5	810.9	703.924		0.732	23.985

[7] Որոշ երկրներ, որոնք ունեն 1 շնչի հաշվով ավելի բարձր եկամուտ, նույնպես կարող են օգտվել Ընկերակցության վարկերից: ՄՊՀ երկրներից դրանց թվում են Հայաստանը, Ադրբեջանը և Վրաստանը: Տե՛ս http://web.worldbank.org/WBSITE/EXTERNAL/TOPICS/EXTDEBTDEPT/0,,contentMDK:20260732~menuPK:531717~pagePK:64166646~theSitePK:469043,00.html

[8] Տե՛ս IDA Special Purpose Financial Statements/The World Bank Annual Report 2004, Vol. 2, Financial Statements, էջ 102:

[9] Ընկերակցության միջոցները արժեցված են Հատուկ Փոխառության Իրավունքներով (ՀՓԻ): ՀՓԻ-ի դոլարային համարժեքը հաշվարկվել է 2004թ դեկտեմբերի 31-ի դրությամբ սահմանված ՀՓԻ/ԱՄՆ դոլար փոխարժեքով, որը կազմում էր 1.55301 ԱՄՆ դոլար:

I.	Աղետի գոտու վերականգնում								
1.	Աղետի գոտու վերականգնման ծրագիր (Earthquake Reconstruction Project)	1/02/1994	35/10	20.1	31.2	31.2	2004-2028	0.732	1.637
II.	Ենթակառուցվածք								
2.	Էներգահամակարգի պահպանման ծրագիր (Power Maintenance Project)	8/12/1994	35/10	9.4	14.6	14.6	2005-2029	-	0.689
3.	Էլեկտրականության փոխանցման և բաշխման համակարգերի ծրագիր (Electricity Transmission & Distribution Project)	30/03/1999	35/10	15.0	23.3	19.512	2009-2033	-	0.182
4-5.	Մայրուղիների վերականգնման ծրագիր I+II (Highway Project I+II)	14/09/1995 25/06/1997	35/10	10.3+11.0	16.0+17.1	33.1	2006-2030	-	1.348
6.	Տրանսպորտի ծրագիր (Transport Project)	7/07/2000	35/10	29.9	46.4	45.649	2010-2035		0.587
7.	Համայնքային զարգացման ծրագիր (Municipal Development Project)	19/06/1998	35/10	22.3	34.6	31.213	2008-2032	-	0.584
III.	Գյուղական ոլորտ								
8.	Ոռոգման համակարգի վերականգնման ծրագիր (Irrigation Rehabilitation Project	8/12/1994	35/10	29.4	45.6	45.6.	2005-2029	-	1.811
9.	Ոռոգման համակարգի զարգացման ծրագիր (Irrigation development)	6/09/2001	40/10	19.8	30.7	13.590	2011-2041	-	0.226
10.	Գյուղատնտեսության բարեփոխումների աջակցության ծրագիր (Agricultural Reform Support Project)	12/03/1998	35/10	10.7	16.6	16.6	2008-2032	-	0.471
11.	Պատվարների անվտանգության ծրագիր (Dam Safety Project)	7/10/1999	35/10	19.7	30.6	20.387	2009-2034	-	0.421
12.	Անշարժ գույքի գրանցման ծրագիր (Title Registration Project)	23/12/1998	35/10	6.0	9.3	9.178	2009-2033	-	0.163
IV.	Շրջակա միջավայր								
13.	Բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման ծրագիր (Natural Resources Management & Poverty Reduction Project)	1/07/2002	40/10	6.7	10.4	1.363	2012-2042		0.052
V.	Սոցիալական ապահովություն								
14.	Սոցիալական ներդրումների հիմնադրամի ծրագիր I (Social Investment Fund I)	9/11/1995	35/10	8.1	12.6	12.6	2006-2030	-	0.514
15.	Սոցիալական ներդրումների հիմնադրամի ծրագիր II (Social Investment Fund II)	19/05/2000	35/10	14.9	23.1	17.279	2010-2034	-	0.245
VI.	Առողջապահություն								
16.	Առողջապահության ֆինանսավորման և առողջության առաջնային պահպանման ծրագիր (Health Financing and Primary Health Care Development Project)	2/09/1997	35/10	7.2	11.2	11.2	2008-2032	-	0.228
VII.	Կրթություն								
17.	Կրթության ֆինանսավորման և կառավարման բարեփոխումների ծրագիր (Education Financing & Management Reform Project)	20/11/1997	35/10	11.1	17.2	17.2	2007-2032	-	0.502
VIII.	Գործարար միջավայր								
18.	Ձեռնարկությունների զարգացման վարկ (Enterprise Development Credit)	24/12/1996	35/10	11.6	18.0	18.0	2007-2031	-	0.576
19.	Ձեռնարկությունների ինկուբատորի ծրագիր (Enterprise Incubator-LIL)	28/12/2001	40/10	3.9	6.1	2.025	2012-2041	-	0.035

IX.	Պետ. հատվածի կառավարում								
20.	Վերականգնողական վարկ (Rehabilitation Credit)	28/02/1995	35/10	41.5	64.4	64.4	2005-2030	-	3.376
21.	Կառուցվածքային բարեփոխումների վարկ I (SAC I)	29/02/1996	35/10	40.4	62.7	62.7	2006-2030	-	3.230
22.	Կառուցվածքային բարեփոխումների տեխնիկական օգնության վարկ I (SATAC I)	29/02/1996	35/10	2.6	4.0	4.0	2006-2030	-	0.136
23.	Կառուցվածքային բարեփոխումների վարկ II (SAC II)	26/08/1997	35/10	43.1	66.9	66.9	2008-2032	-	2.926
24.	Կառուցվածքային բարեփոխումների տեխնիկական օգնության վարկ II (SATAC II)	26/08/1997	35/10	3.6	5.6	5.6	2008-2032	-	0.143
25.	Կառուցվածքային բարեփոխումների վարկ III (SAC III)	22/12/1998	35/10	46.2	71.7	71.7	2009-2033	-	2.289
26.	Կառուցվածքային բարեփոխումների վարկ IV (SAC IV)	22/05/2001	40/10	38.4	59.6	59.6	2011-2040		1.100
27.	Կառուցվածքային բարեփոխումների վարկ V (SAC V)	14/03/2003	40/10	30.2	46.9	46.9	2013-2042	-	0.409
28.	Դատաիրավական բարեփոխումների ծրագիր (Judicial Reform Project)	14/12/2000	40/10	8.6	13.3	6.849	2010-2040		0.097
X.	Տնտեսական քաղաքականություն								
29.	Օտարերկրյա ներդրումների և արտահանման խթանման ծրագիր (Foreign Investment and Export Facilitation Project-LIL)	25/04/2002	40/10	0.8	1.2	0.579	2012-2042	-	0.008

Աղյուսակ 3. Հայաստանի Հանրապետությունում Համաշխարհային բանկի նախատեսվող վարկային ծրագրերը

	Համաշխարհային բանկի կառույցը, վարկավորման ոլորտը և վարկի անվանումը	Ծրագրի հաստատման ամսաթիվը, տարին	Մարտկոց/արտոնյալ ժամկետը	Գումարը, մլն ՀՓՀ	Գումարը, *մլն դոլար*,[10]	Բաշխվել է 2004թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, *մլն դոլար*	Հիմնական գումարի մարման ժամկետ-ների ավարտը
1	2	3	4	5	6	7	8
	ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ (IDA)			101.6	157.9		
I.	Ենթակառուցվածք						
1.	Համայնքային ջրամատակարարման և ջրահեռացման ծրագիր (Municipal Water & Wastewater Project)	4/05/2004	40/10	15.4	23.9	1.058*+0.993	2014-2044
2.	Քաղաքային ջեռուցման ծրագիր (Urban hitting)	15/09/2004	40/10	10.0	15.5	0.485*	2014-2044
3.	Երևանի ջրմուղ-կոյուղու ծրագիր (Yerevan Water & Wastewater Project)	13/04/2004	40/10	20.0	31.1	0.725*	2014-2044
II.	Գյուղական ոլորտ						
4.	Գյուղատնտեսության բարեփոխումների աջակցման լրացուցիչ վարկ (Agricultural Reform Support Supplement Credit)	04/05/2004	40/10	1.2	1.9	Ամբողջ	2008-2032
5.	Պատվարների անվտանգության ծրագիր II (Irrigation Dam Safety Project II)	10/06/2004	40/10	4.7	7.3	-	2014-2044

[10] Ընկերակցության միջոցները արժեքշված են Հատուկ փոխառության իրավունքով (ՀՓԻ): ՀՓԻ դոլարային համարժեքը հաշվարկվել է 2004թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ սահմանված ՀՓԻ/ԱՄՆ դոլար փոխարժեքով, որը կազմում էր 1.55301 ԱՄՆ դոլար:
** Նշված գումարները տրամադրվել են ծրագրի նախապատրաստական աշխատանքների նպատակով:*

III.	Սոցիալական ապահովություն						
6.	Սոցիալական ապահովության և ղեկավարման ծրագիր (Armenia Social Protection and Administration Project)	10/06/2004	40/10	3.6	5.6	-	2014-2044
IV.	Առողջապահություն						
7.	Հայաստանի առողջապահության համակարգի արդիականացման ծրագիր (Armenia Health Systems Modernization Project)	10/06/2004	40/10	13.0	20.2	0.753*	2014-2044
V.	Կրթություն						
8.	Կրթության որակի և համապատասխանության ծրագիր (Education Quality and Relevance Project)	20/01/2004	40/10	13.2	20.5	0.882*+0.950	2014-2043
VI.	Պետ. հատվածի կառավարում						
9.	Պետական կառավարման համակարգի արդիականացման ծրագիր (Public Sector Modernization Project)	4/05/2004	40/10	6.8	10.6	-	2014-2044
VII.	Աղքատության կրճատում						
10.	Աղքատության կրճատման աջակցման վարկ (Poverty Reduction Support Credit-PRSC)	18/11/2004	40/10	13.7	21.276	-	2014-2044

I. Ընկերակցության գործող վարկային ծրագրերը՝ ըստ ՀՀ տնտեսության ճյուղերի

1. Աղետի գոտու վերականգնում՝ 1 ծրագիր

Աղետի գոտու վերականգնման ծրագրի (Earthquake Reconstruction Project) վարկային պայմանագիրը ստորագրվել է 1994թ. փետրվարի 1-ին, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ կառավարությանը տրամադրել է 20.1 մլն ՀՓԻ (31.2 մլն. դոլար)[11]՝ աղետի գոտու բնակիչների համար անհրաժեշտ բնակարանային և կենսական պայմանների ստեղծման, հիմնական ենթակառույցների վերականգնման, զբաղվածության ապահովման համար: Ծրագրով նախատեսվում էր՝ ա) 2,000 ընտանիքների ապահովել բնակարաններով, բ) վերակառուցված գործարաններում շուրջ 2,500 մարդու ապահովել աշխատատեղերով, գ) բարելավել ժամանակավոր կացարաններում բնակվող շուրջ 500,000 բնակիչների բնակարանային պայմանները: Այս ծրագրի շրջանակներում աղետի գոտու վերականգնման համար նախատեսվում էր մշակել տարածաշրջանի երկարաժամկետ զարգացման ռազմավարություն:

Այս ծրագիրը թեև երկրին աջակցել է դժվարին տարիներին, սակայն սահմանափակ աշխարհագրական տարածքի և ծրագրի անբավարար մշակվածության պատճառով դրա արդյունավետությունը բարձր չի եղել: Մասնավորապես, Համաշխարհային բանկի փորձագետների կարծիքով հարկ էր ավելի մեծ ուշադրություն դարձնել սոցիալական հիմնախնդիրների լուծմանը և տեխնիկական աջակցությանը[12]:

Ծրագիրն իրականացրել է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը:

2. Ենթակառուցվածքներ՝ 6 ծրագիր

Էներգահամակարգի օժանդակության ծրագրի (Power Maintenance Project) վարկային պայմանագիրը ստորագրվել է 1994թ. դեկտեմբերի 12-ին, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ կառավարությանը տրամադրել է 9.4 մլն ՀՓԻ (14.6 մլն դոլար)՝ ՀՀ-ում էներգահամակարգի կատարելագործմանն աջակցելու նպատակով: Ծրագրով նախատեսվում էր էլեկտրաէներգիայի արտադրության համակարգերի վերանորոգում, այդ թվում՝ Հրազդանի էլեկտրակայանի 200 Մվտ, Երևանի ջերմաէլեկտրակայանի 150 Մվտ հզորությամբ ջերմային բլոկների, Սևան-Հրազդան հիդրոհամալիրի 100 Մվտ և 44 Մվտ հզորությամբ, Որոտանի հիդրոհամալիրի 170 Մվտ հզորությամբ կայանների վերանորոգում, ինչպես նաև էլեկտրաէներգիայի առաքման համակարգերի ամրացում և վերանորոգում:

Ծրագրով նախատեսված բոլոր աշխատանքներն իրականացվել են: Ծրագիրն իրականացրել է Հայէներգոն:

[11] *Հաշվարկները կատարված են 2004թ. դեկտեմբերի 31-ի փոխարժեքով՝ 1.55301 ԱՄՆ դոլար/ՀՓԻ:*
[12] *Տե՛ս Armenia – Country Assistance Evaluation/ World Bank, OED, June 15, 2004, էջ 9:*

Էլեկտրականության փոխանցման և բաշխման համակարգերի ծրագրի (Electricity Transmission & Distribution Project) վարկային պայմանագիրը ստորագրվել է 1999թ. մարտի 30-ին, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ կառավարությանը տրամադրում է 15.0 մլն ՀՓԻ (23.3 մլն դոլար): Վարկային միջոցներով նախատեսվում է աջակցել ՀՀ էներգետիկ համակարգի վերակառուցման և զարգացման ծրագրի առաջին փուլին: Ծրագրի նպատակներն են՝ վերականգնել Հայաստանի էլեկտրափոխանցման և բաշխման ցանցը, կրճատել դրանցում կորուստներն ու ծառայության ծախքերը, ապապետականացնել ձեռնարկությունները և ներգրավել մասնավոր ներդրումներ:

Ծրագիրն իրականացնում են ՀՀ էներգետիկայի նախարարությունը և ծրագրի իրականացման գրասենյակը (Energy SCJSC and local SCHSC):

Մայրուղիների վերականգնման ծրագրի (Highway Project) վարկային պայմանագիրը ստորագրվել է 1995թ. սեպտեմբերի 14-ին, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ կառավարությանը տրամադրել է 10.3 մլն ՀՓԻ (16.0 մլն դոլար): Վարկային ծրագրի նպատակներն էին՝ 1) ընդլայնել և վերանորոգել Հայաստանի ճանապարհացանցը և պահպանիչ գործառնությունների, ինչպես նաև կամուրջների և թունելների վերականգնման միջոցով կրճատել տրանսպորտի գործառնական ծախքերը, 2) տնտեսության այս ճյուղում զարգացնել շուկայական պահանջներին համապատասխան ինստիտուցիոնալ կառույցներ, 3) ընդլայնել ճանապարհների վերականգնման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը՝ ճանապարհը օգտագործողների կողմից վճարումներ կիրառելու միջոցով, 4) մասնակցել մասնավոր ճանապարհների կառուցմանը, ինչպես նաև ինժեներական կառույցների զարգացմանը, 5) բարելավել ճանապարհների պաշտպանվածությունը:

Այս ծրագրի ֆինանսավորումը բավականացրեց միայն նախատեսված աշխատանքների 50%-ը իրականացնելուն, քանի որ, իրականում, Հայաստանի ճանապարհացանցը շատ ավելի վատ վիճակում էր, քան ենթադրվում էր ծրագրի համար անհրաժեշտ ֆինանսավորումը որոշելու ժամանակ:

Ծրագիրն իրականացրել է Հայկական ճանապարհային վարչությունը (Armenian Road Directorate):

Մայրուղիների վերականգնման ծրագրի լրացուցիչ աշխատանքների (Highway Supplement Project) ֆինանսավորման նպատակով 1997թ. հունիսի 25-ին ստորագրվել է երկրորդ վարկային պայմանագիրը, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ կառավարությանը տրամադրել է 11 մլն ՀՓԻ (17.1 մլն դոլար): Դրա հաշվին նախատեսվում էր ֆինանսավորել միջպետական ճանապարհացանցի վերանորոգման աշխատանքները, Վրաստանի հետ կարևորագույն ճանապարհային ուղու վրա գտնվող թունելի վերականգնումը, նյութերի ու սարքավորումների ձեռքբերումը և ծրագրի ադմինիստրատիվ ծախքերի իրականացումը:

Այս ծրագիրը ևս իրականացրել է Հայկական ճանապարհային վարչությունը (Armenian Road Directorate):

Տրանսպորտի ծրագրի (Transport Project) վարկային պայմանագիրը ստորագրվել է 2000թ. հուլիսի 7-ին, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ-ին տրամադրում է 29.9 մլն ՀՓԻ (46.4 մլն դոլար): Ծրագրի նպատակներն են՝ 1) բարելավել հիմնական ճանապարհացանցը՝ միաժամանակ կրճատելով տրանսպորտի ընդհանուր ծախքերը, բարելավել ճանապարհների պաշտպանվածությունը և բարձրացնել դրանց գործառնական արդյունավետությունը, 2) բարելավել Երևանի և Վրաստանի սահմանի միջև ընկած երկաթուղային գիծը և Հայաստանի երկաթուղու ֆինանսական և կառավարման ոլորտները, 3) օժանդակել ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությանը՝ ՀՀ տրանսպորտի ոլորտում գերակայությունները հիմնավորող վերլուծությունների իրականացման և ներդրումային որոշումների կայացման, ինչպես նաև Երևանի քաղաքային տրանսպորտի ծառայությունների բարելավման գործում:

Ծրագիրն իրականացնում է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը:

Համայնքային զարգացման ծրագրի (Municipal Development Project) վարկային պայմանագիրը ստորագրվել է 1998թ. հունիսի 19-ին, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ կառավարությանը տրամադրում է 22.3 մլն ՀՓԻ (34.6 մլն դոլար)՝ համայնքային զարգացման ծրագրի ֆինանսավորման նպատակով: Ծրագրի նպատակն է՝ 1) բարելավել Երևանի ջրամատակարարման համակարգը, 2) կատարելագործել Երևանի ջրմուղ-կոյուղու ծառայությունների արդյունավետությունը, կառավարումը, աշխատանքները և մատակարարումը, 3) ՀՀ տարածքում ստեղծել ջրմուղ-կոյուղու ծառայությունների ընդհանուր կառավարման մեջ մասնավոր հատվածի կայուն ներգրավման համակարգ, 4) զարգացնել պետական բնակարանային շինարարության քաղաքականությունը՝ կենտրոնանալով բնակարանային շինարարության բնագավառի ընթացիկ բարեփոխումների հետ կապված ճգնաժամային տնտեսական հարցերի վրա, 5) երկրաշարժից վնասված գոտու համար մշակել բնակարանային շինարարության ռազմավարություն:

Ծրագիրն իրականացնում է Հայաստանի տարածքային կառավարման նախարարության Համայնքային զարգացման ծրագրի ղեկավարման պետական կոմիտեն:

3. Գյուղական ոլորտ՝ 5 ծրագիր

Ոռոգման համակարգի վերականգնման ծրագրի (Irrigation Rehabilitation Project) վարկային պայմանագիրը ստորագրվել է 1994թ. դեկտեմբերի 8-ին, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ կառավարությանը տրամադրել է 29.4 մլն ՀՓԻ (45.6 մլն դոլար)՝ ՀՀ ոռոգման համակարգի վերականգնման համար: Այն կազմված էր 4 ենթածրագրերից՝ 1) 12 ոռոգման համակարգերի և Արարատյան դաշտի ստորջրյա ցանցի վերականգնում (ընդգրկում է մոտ 164,700 հեկտար կամ Հայաստանի ոռոգելի հողատարածությունների 60 տոկոսը), 2) ջրի բաշխման բարելավման համակարգերի և ջրային ռեսուրսներ սպառողների ընկերակցությունների հիմնում, 3) ոռոգման ենթակառույցների սպասարկման և պահպանման ծախսերի ֆինանսավորում, 4) տեխնիկական օգնություն՝ ներառյալ ծրագրի իրագործման գրասենյակի հիմնում և կադրերի պատրաստում:

Այս ծրագիրը արդյունավետ էր ոռոգման համակարգերի վերականգնման առումով, սակայն ոռոգման ենթակառույցների ապասարկումը և պահպանումը ապահովող հաստատությունների ձևավորման առումով հաջողություններ չեն արձանագրվել:

Ծրագիրն իրականացրել է ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը:

Ոռոգման համակարգի զարգացման ծրագրի (Irrigation Development Project) վարկային պայմանագիրը ստորագրվել է 2001թ. սեպտեմբերի 6-ին, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ կառավարությանը տրամադրում է 19.8 մլն ՀՓԻ (30.7 մլն դոլար)՝ ոռոգվող գյուղատնտեսական համակարգի շահութաբերությունը և կայունությունը բարձրացնելու նպատակով:

Ծրագիրն իրականացնում է ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը:

Գյուղատնտեսության բարեփոխումների աջակցության ծրագրի (Agriculture Reform Support Project) վարկային պայմանագիրը ստորագրվել է 1998թ. մարտի 12-ին, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ կառավարությանը տրամադրում է 10.7 մլն ՀՓԻ (16.6 մլն դոլար)՝ գյուղատնտեսության արտադրողականության բարձրացման նպատակով: Ծրագրի նպատակներն են՝ 1) գյուղատնտեսական արտադրական ձեռնարկություններում միջինժամկետ ներդրումների համար բիզնես-պլանների կազմման նպատակով խորհրդատվական ծառայությունների մատուցում, 2) գյուղատնտեսական վարկերի տրամադրման ցանցի ընդլայնում, 3) գյուղատնտեսության ոլորտի վերլուծությունների իրականացում:

Ծրագիրն իրականացնում է ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը:

Պատվարների անվտանգության ծրագրի (Dam Safety Project) վարկային պայմանագիրը ստորագրվել է 1999թ. հոկտեմբերի 7-ին, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ կառավարությանը տրամադրում է 19.7 մլն ՀՓԻ (30.6 մլն դոլար): Ծրագրի նպատակներն են՝ բարձրացնել բարձր ռիսկային, վթարային վիճակում գտնվող պատվարների անվտանգությունը և ապահովել դրանց գործունեության կայունությունը:

Ծրագիրն իրականացնում է ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը:

Անշարժ գույքի գրանցման ծրագրի (Title Registration Project) վարկային պայմանագիրը ստորագրվել է 1998թ. դեկտեմբերի 23-ին, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ կառավարությանը տրամադրում է 6.0 մլն ՀՓԻ (9.3 մլն դոլար)՝ հողի և այլ անշարժ գույքի արտադրողականության և արժեքի բարձրացման և սեփականության իրավունքի պաշտպանվածության միջոցով մասնավոր հատվածի զարգացումը խթանելու և գյուղական ու քաղաքային մասնավոր սեփականության շուկան զարգացնելու համար: Ծրագրով նախատեսվում է՝ ստեղծել հողի և այլ անշարժ գույքի սեփականության գրանցման հուսալի և հրապարակային համակարգ, որը կներառի նաև սեփականատերերի և նրանց իրավունքների ու պարտականությունների ժամանակագրական գրանցումը:

Ծրագիրն իրականացնում է ՀՀ կառավարությանը կից անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն:

4. Շրջակա միջավայր՝ 1 ծրագիր

Բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման ծրագրի (Natural resources Management & Poverty Reduction Project) վարկային պայմանագիրը ստորագրվել է 2002թ. հուլիսի 1-ին, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ կառավարությանը տրամադրում է 6.7 մլն ՀՓԻ (10.4 մլն դոլար): Ծրագրի նպատակն է՝ կիրառել բնական պաշարների կառավարման լավագույն միջազգային փորձը, թեթևացնել գյուղական չքավորությունը լեռնային շրջաններում, որտեղ դեգրադացիան հասել է կրիտիկական կետի, և պահպանել Հարավային Կովկասի լեռների, անտառների և խոտհարքների էկոլոգիական համակարգը:

Ծրագիրն իրականացնում է ՀՀ բնապահպանության նախարարությունը:

5. Սոցիալական ապահովություն՝ 2 ծրագիր

Սոցիալական ներդրումների հիմնադրամի ծրագիր I-ի (Social Investment Fund Project) վարկային պայմանագիրը ստորագրվել է 1995թ. նոյեմբերի 9-ին, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ կառավարությանը տրամադրել է 8.1 մլն ՀՓԻ (12.6 մլն դոլար): Ծրագրով նախատեսվում էր՝ 1) ենթակառույցների, մասնավորապես՝ քաղաքային և գյուղական ճանապարհների, ոռոգման համակարգերի, դպրոցների և բժշկական կենտրոնների վերականգնմանն ուղղված միկրոնախագծերի ֆինանսավորում, 2) փոքր ձեռնարկությունների զարգացմանը, մասնավորապես՝ նոր աշխատատեղերի ստեղծմանը օժանդակում, 3) ծրագրերի իրագործման գրասենյակների հիմնում, համայնքներին և մասնավոր ֆիրմաներին տեխնիկական աջակցության ապահովում, 4) բնակչության կենսապայմանների մոնիտորինգի նպատակով տեխնիկական օգնության ապահովում և ՀՀ վիճակագրության, պետական ռեգիստրի և վերլուծության նախարարությանը աջակցում:

Ծրագրով նախատեսված նպատակները հիմնականում իրականացվել են: Այս ծրագրի շրջանակներում ֆինանսավորվել են տնային տնտեսությունների հարցումները, որոնք օգնել են հստակեցնել սոցիալական աջակցության հետագա ծրագրերի խնդիրները: Սակայն չեն կազմակերպվել տեղական ինքնակառավարման մարմինների համար ծրագրով նախատեսված դասընթացները, և դժվարություններ են եղել ենթածրագրերի տեխնիկական որակի և կայունության ապահովման հարցերում:

Ծրագիրն իրականացրել է Հայկական սոցիալական ներդրումների հիմնադրամը (Armenian Social Investment Fund):

Սոցիալական ներդրումների հիմնադրամի երկրորդ ծրագրի (Social Investment Fund II) վարկային պայմանագիրը ստորագրվել է 2000թ. մայիսի 19-ին, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ-ին տրամադրում է 14.9 մլն ՀՓԻ (23.1 մլն դոլար)՝ հիմնական սոցիալական և տնտեսական ենթակառույցները բարելավելու, կարճաժամկետ զբաղվածության հնարավորություններ ստեղծելու, անապահով և կարիքավոր խմբերին օգնելու նպատակով:

Ծրագիրն իրականացնում է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը:

6. Առողջապահություն՝ 1 ծրագիր

Առողջապահության ֆինանսավորման և առողջության առաջնային պահպանման ծրագրի (Health Financing and Primary Health Care Development Project) վարկային պայմանագիրը ստորագրվել է 1997թ. սեպտեմբերի 2-ին, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ կառավարությանը տրամադրել է 7.2 մլն ՀՓԻ (11.2 մլն դոլար)՝ Հայաստանում առողջապահության ոլորտի և առաջնային բուժօգնության զարգացման նպատակով: Ծրագրի հիմնական խնդիրներն էին՝ բուժօգնության առաջնահերթ ոլորտների որոշում և տարրական բուժօգնության ծառայությունների կայացման գործում համայնքների դերի ակտիվացում, առաջնային բուժօգնության անձնակազմի հմտությունների և բուժօգնության ուղղությունների բարելավում և առողջապահության ոլորտում պետական ծախսերի արդյունավետության բարձրացում:

Այս ծրագրի ներդրումը Հայաստանի առողջապահության համակարգի արդյունավետության բարձրացման առումով Համաշխարհային բանկի փորձագետների կողմից գնահատվում է «համեստ»[13]: Թեև հիմնական ծրագրային փաթեթը մշակվել էր տեսականորեն սահուն, սակայն այն չէր համապատասխանում ռեսուրսների չափազանց սահմանափակ հնարավորություններ ունեցող Հայաստանի իրավիճակին: Այլ կերպ ասած՝ այս ոլորտում գործնականում հիմնախնդիրներն ավելի խորն էին, քան տեսականորեն գնահատվել էին:

Ծրագիրն իրականացրել է ՀՀ առողջապահության նախարարությունը:

7. Կրթություն՝ 1 ծրագիր

Կրթության ֆինանսավորման և կառավարման բարեփոխումների ծրագրի (Education Financing & Management Reform Project) վարկային պայմանագիրը ստորագրվել է 1997թ. նոյեմբերի 20-ին, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ կառավարությանը տրամադրել է 11.1 մլն ՀՓԻ (17.2 մլն դոլար)՝ կրթության համակարգի և կառավարման բարեփոխումների ծրագրի ֆինանսավորման նպատակով: Ծրագիրը նախատեսում էր՝ 1) աջակցել կրթական հաստատության այնպիսի կառուցվածքի (կենտրոնական, տեղային և դպրոցների մակարդակներով) ստեղծմանը, որը կնպաստի հիմնական կրթական համակարգի արդյունավետ կառավարմանը, 2) աջակցել դպրոցների առաջադիմությանն ուղղված բարեփոխումներին՝ խթանելով դպրոցի կողմից առաջարկված նախաձեռնությունները և բարելավելով դասագրքերի և դասա-

---

[13] Նյութի վերջում (էջ 169) ներկայացված են Համաշխարհային բանկի «ծրագրերի արդյունքի», «կայունության» և «ինստիտուցիոնալ զարգացման ազդեցության» գնահատականների սանդղակները: Աղբյուրը՝ Armenia – Country Assistance Evaluation/ World Bank, OED, June 15, 2004, էջ 11:

վանդման այլ ոլորտների մատակարարումը, 3) խթանել դպրոցների հիմնման և կառավարման գործում համայնքների ու ծնողների մասնակցությունը և բարելավել հանրակրթական համակարգում բարեփոխումների գնահատման հնարավորությունները:

Ծրագրով նախատեսված նպատակներն իրականացվել են և Համաշխարհային բանկի փորձագետների կողմից արդյունքները գնահատվել են «խիստ բավարար»:

Ծրագիրն իրականացրել է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը:

8. Գործարար միջավայր՝ 2 ծրագիր

Ձեռնարկությունների զարգացման վարկի (Enterprise Development Credit) պայմանագիրը ստորագրվել է 1996թ. դեկտեմբերի 24-ին, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ կառավարությանը տրամադրել է 11.6 մլն ՀՓԻ (18.0 մլն դոլար)՝ մասնավոր ձեռնարկություններում և բանկերում ֆինանսական ներդրումներ իրականացնելու, արտահանման կողմնորոշում ունեցող համատեղ ձեռնարկություններ ստեղծելու, ձեռնարկությունների կառավարման բարելավմանն աջակցելու և բանկային ու կապիտալի շուկայի հաստատությունները զարգացնելու միջոցով հայկական մասնավոր ձեռնարկություններն ու բանկերը ամրապնդելու նպատակով:

Համաշխարհային բանկի փորձագետների կարծիքով ծրագիրն արդյունավետ չի եղել նպատակներին հասնելու տեսակետից: Այս ծրագրի արդյունքը փորձագետների կողմից գնահատվել է «չափավոր անբավարար», քանի որ ծրագրի մասնակից 12 բանկերից 5-ը, որպես թույլ բանկեր, լուծարվել են:

Ծրագիրն իրականացրել է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը:

Ձեռնարկությունների <u>ինկուբատորի</u> ծրագրի (Enterprise Incubator-LIL) վարկային պայմանագիրը ստորագրվել է 2001թ. դեկտեմբերի 28-ին, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ կառավարությանը տրամադրում է 3.9 մլն ՀՓԻ (6.1 մլն դոլար): Այս ծրագրով նախատեսվում է հաղթահարել աշխատուժի շուկայի, կրթական համակարգի և գործարար միջավայրի ինստիտուցիոնալ խնդիրները, որոնք խանգարում են Հայաստանում մարդկային կապիտալի օպտիմալ իրացմանը, մասնավորապես՝ տեղեկատվական տեխնոլոգիաների հատվածի զարգացմանը: Փորձ է արվում մշակել մասնավոր-պետական այնպիսի նորամուծական մեխանիզմներ, որոնք բիզնեսի զարգացման ծառայություններ կմատուցեն նորաստեղծ ձեռնարկություններին և կապահովեն ուսանողների և դասախոսների շարունակական կրթությունն ու վերապատրաստումը: Ծրագիրն ունի մոնիտորիգի ենթակա երեք առանձնահատուկ նպատակներ՝ 1) ցույց տալ, թե ինչպես կարելի է անբարենպաստ գործարար միջավայրում ստեղծել ընկերություններ, 2) օտարերկրյա ուղղակի ներդրումներ ներգրավել տեղեկատվական տեխնոլոգիաներին առնչվող ոլորտներում, 3) ապահովել տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագետների, երրորդ կուրսի ուսանողների, ինչպես նաև ձեռնարկության մենեջերների ու աշխատակիցների հմտությունների շարունակական կատարելագործման մեխանիզմներ:

Ծրագիրն իրականացնում է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը:

9. Պետական հատվածի կառավարում՝ 9 ծրագիր

Վերականգնողական վարկի (Rehabilitation Credit) պայմանագիրը ստորագրվել է 1995թ. փետրվարի 28-ին, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ ֆինանսների նախարարությանը տրամադրել է 41.5 մլն ՀՓԻ (շուրջ 64.4 մլն դոլար)՝ տնտեսության վերականգնման նպատակով: Ծրագիրը նախատեսում էր սեփականաշնորհման, ազատականացման և օրենսդրական բարեփոխումների միջոցով խթանել երկրում մրցունակ շուկաների զարգացումը, բարելավել ձեռնարկությունների և բանկերի ֆինանսական կարգապահությունը և խիստ կարիքավորների սոցիալական պաշտպանվածության համար անհրաժեշտ համակարգերը:

Ծրագրով նախատեսված միջոցառումներն իրականացվել են:

Ծրագիրն իրականացրել է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը:

Կառուցվածքային բարեփոխումների վարկ I-ի (SAC I) պայմանագիրը ստորագրվել է 1996թ. փետրվարի 29-ին, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ կառավարությանը տրամադրել է 40.4 մլն ՀՓԻ (շուրջ 62.7 մլն դոլար): Վարկային ծրագրի նպատակը համընկնում է 1995թ. փետրվարի 28-ի պայմանագրով ՀՀ տնտեսության վերականգնման համար տրամադրված վարկային ծրագրի նպատակներին, այն է՝ աջակցություն տնտեսության կայունացմանը, դրա հետագա զարգացմանը և ձեռնարկությունների ֆինանսական կարգապահության բարձրացմանը, ինչպես նաև բնակչության կենսամակարդակի բարելավման պայմաններին նպատակաուղղված՝ Կառավարության բարեփոխումների ծրագրին:

Ծրագրով նախատեսված միջոցառումներն իրականացվել են:

Ծրագիրն իրականացրել է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը:

Կառուցվածքային բարեփոխումների տեխնիկական օգնության վարկ I-ի (SATAC I) պայմանագիրը ստորագրվել է 1996թ. փետրվարի 2-ին, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ կառավարությանը տրամադրել է 2.6 մլն ՀՓԻ (շուրջ 4.0 մլն դոլար)՝ կառուցվածքային բարեփոխումների իրականացման համար անհրաժեշտ տեխնիկական օգնությունը ֆինանսավորելու համար: Ծրագրով նախատեսվում էր տեխնիկական մասնակցությամբ օժանդակել սեփականաշնորհման գործընթացին, մասնավոր հատվածի զարգացմանը, պետական ծառայությունների բարեփոխումներին ու ռեսուրսների հավաքագրմանը:

Ծրագրով նախատեսված միջոցառումներն իրականացվել են:

Ծրագիրն իրականացրել է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը:

Կառուցվածքային բարեփոխումների վարկ II-ի (SAC II) պայմանագիրը ստորագրվել է 1997թ. օգոստոսի 26-ին, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ կառավարությանը տրամադրել է 43.1 մլն ՀՓԻ (66.9 մլն դոլար)՝ մակրոտնտեսական կայունության ապահովմանը ու մասնավոր հատվածի հետագա զարգացմանը ուղղված՝ Կառավարության ծրագրերին աջակցելու նպատակով: Ծրագրով նախատեսվում էր՝ 1) բարելավել ֆինանսական կարգապահությունը մասնավոր և պետական հատվածներում, 2) արագացնել մասնավոր հատվածի զարգացումը, 3) ամրապնդել սոցիալական ապահովվածության ցանցը և ապահովել տարրական առողջապահական և կրթական ծառայությունների մատուցումը: Ֆինանսական կարգապահության բարելավման միջոցառումները մասնավոր և պետական հատվածներում պետք է իրականացվեին 3 ուղղություններով՝ ա) հարկերի հավաքագրման ավելացում և հարկային ապառքների կրճատում, բ) էներգետիկ հատվածի բարեփոխումներն ապահովող օրենսդրական դաշտի ստեղծում և այդ հատվածի ձեռնարկությունների ֆինանսական վիճակի բարելավում, գ) ոռոգման և մաքուր ջրի անխափան մատակարարման ապահովում: Ծրագիրը ներառում էր նաև պետական կենսաթոշակային համակարգի բարեփոխման ու մասնավոր կենսաթոշակային կառույցների ձևավորման միջոցառումներ:

Ծրագրով նախատեսված միջոցառումներն իրականացվել են:

Ծրագիրն իրականացրել է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը:

Կառուցվածքային բարեփոխումների տեխնիկական օգնության վարկ II-ի (SATAC II) պայմանագիրը ստորագրվել է 1997թ. օգոստոսի 26-ին, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ կառավարությանը տրամադրել է 3.6 մլն ՀՓԻ (5.6 մլն դոլար)՝ SAC II վարկային ծրագրով աջակցվող կառուցվածքային բարեփոխումների տեխնիկական օժանդակության նպատակով: Ծրագրով նախատեսվում էր՝ 1) պետական հարկային տեսչության և մաքսային վարչության կոմպյուտերացման գործընթացի ավարտ, 2) էներգետիկ հատվածի բարեփոխումներ, այն է՝ էներգետիկայի նախարարության դերի ու գործառույթների վերանայում և էներգիայի արտադրության և բաշխման ձեռնարկությունների սեփականաշնորհմանն արագացում, 3) հանրային տեղեկատվության և դատական ոլորտի բարեփոխումներ, այն է՝ արդի տնտեսական բարեփոխումներին ուղղված հանրային տեղեկատվության ռազմավարության զարգացում և դատական ոլորտի բարեփոխումների նախապատրաստմանն աջակցում, 4) կապիտալ շուկաների զարգացում, այն է՝ կապիտալ շուկաների զարգացման ռազմավարության մշակում: Ծրագրի խնդիրներից էր նաև սեփականաշնորհման գործընթացի, ֆինանսական հատվածի, սոցիալական ապահովության, առողջապահության և կրթության ոլորտների տեխնիկական օժանդակությունը:

Ծրագրով նախատեսված միջոցառումներն իրականացվել են:

Ծրագիրն իրականացրել է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը:

Կառուցվածքային բարեփոխումների վարկ III-ի (SAC III) պայմանագիրը ստորագրվել է 1998թ. դեկտեմբերի 22-ին, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ կառավարությանը տրամադրել է 46.2 մլն ՀՓԻ (շուրջ 71.7 մլն դոլար): Ծրագրի նպատակն էր՝ օժանդակել մակրոտնտեսական կայունության ամրապնդմանը և Կառավարության՝ մասնավոր հատվածի միջնաժամկետ զարգացման ծրագրերին: Ծրագրի խնդիրներից էին՝ 1) մասնավոր և պետական հատվածներում ֆինանսական կարգապահության ամրապնդում, 2) մասնավոր հատվածի զարգացման արագացում, 3) բարեփոխումների սոցիալական կայունության ապահովում:

Ծրագրով նախատեսված միջոցառումներն իրականացվել են:

Ծրագիրն իրականացրել է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը:

Կառուցվածքային բարեփոխումների վարկ IV-ի (SAC IV) պայմանագիրը ստորագրվել է 2001թ. մայիսի 22-ին, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ կառավարությանը տրամադրել է 38.4 մլն ՀՓԻ (59.6 մլն դոլար): Ծրագիրը և՛ նպատակներով, և՛ տրամադրման պայմաններով համապատասխանում է Ընկերակցության կողմից նախկինում տրամադրված SAC I, II, III վարկային ծրագրերին: Այս ծրագիրը տարբերվում է նախկին Կառուցվածքային բարեփոխումների վարկային ծրագրերից միայն նրանով, որ նախատեսված է աջակցելու ինչպես բիզնես-միջավայրի, կառավարման և պետական հատվածի ծառայությունների խոչընդոտների վերացմանը, այնպես էլ սոցիալական հատվածի բարեփոխումների շարունակմանը:

Ծրագրով նախատեսված միջոցառումներն իրականացվել են:

Ծրագիրն իրականացրել է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը:

Կառուցվածքային բարեփոխումների վարկ V-ի (SAC V) պայմանագիրը ստորագրվել է 2003թ. մարտի 14-ին, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ-ին տրամադրել է 30.2 մլն ՀՓԻ (46.9 մլն դոլար)՝ ՀՀ-ում Աղքատության կրճատման ռազմավարության փաստաթղթով (PRSP) սահմանված կառուցվածքային բարեփոխումներն իրականացնելու համար: Այս ծրագրի նպատակն էր՝ աջակցել Կառավարության ջանքերին՝ 1) մասնավոր հատվածի զարգացման և պետական ձեռնարկությունների բարեփոխումների արագացման, 2) պետական հատվածի բարեփոխումների խթանման, 3) սոցիալական ոլորտի (ներառյալ՝ կրթության, առողջապահության, սոցիալական ապահովության և կենսաթոշակային համակարգերի) բարեփոխումների խորացման գործում:

Ծրագրով նախատեսված միջոցառումներն իրականացվել են:

Ծրագիրն իրականացրել է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը:

Դատահիրավական բարեփոխումների ծրագրի (Judicial Reform Project) վարկային պայմանագիրը ստորագրվել է 2000թ. դեկտեմբերի 14-ին, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ-ին տրամադրում է՝ 8.6 մլն ՀՓԻ (13.3 մլն դոլար): Ծրագրի նպատակն է՝ աջակցել Հայաստանում կառավարման, օրենքների կիրարկման և ներդրումային միջավայրի համար խիստ անհրաժեշտ անկախ, մատչելի և արդյունավետ դատահիրավական համակարգի զարգացմանը:

Ծրագիրն իրականացնում է ՀՀ արդարադատության նախարարությունը:

10. Տնտեսական քաղաքականություն՝ 1 ծրագիր

Օտարերկրյա ներդրումների և արտահանման խթանման ծրագրի (Foreign Investment and Export Facilitation Project -LIL) վարկային պայմանագիրը ստորագրվել է 2002թ. ապրիլի 25-ին, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ կառավարությանը տրամադրում է 0.8 մլն ՀՓԻ (1.2 մլն դոլար): Ծրագրի նպատակն է՝ ուսումնասիրել Հայաստանում ներդրումային միջավայրի մասին պոտենցիալ արտահանողների և ներդրողների կարծիքը, մշակել և իրականացնել օտարերկրյա ներդրումների ներգրավման ռազմավարություն, բարելավել Հայաստանում ներդրումային և գործարար միջավայրը, ինչպես նաև մեծացնել երկրի ներդրումային գրավչությունը և օժանդակել արտահանմանը:

Ծրագիրն իրականացնում է Հայաստանի զարգացման գործակալությունը (ADA):

II. Ընկերակցության նախատեսվող վարկային ծրագրերը՝ ըստ ՀՀ տնտեսության ճյուղերի

1. Ենթակառուցվածք՝ 3 ծրագիր

Համայնքային ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրի (Municipal Water & Wastewater Project) վարկային պայմանագիրը ստորագրվել է 2004թ. մայիսի 4-ին, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ կառավարությանը տրամադրում է 15.4 մլն ՀՓԻ (23.9 մլն դոլար)՝ մայրաքաղաքից դուրս ջրամատակարարման ծառայությունների կատարելագործման, դրանց ծախքերի կրճատման և որակի բարելավման նպատակով:

Ծրագիրն իրականացնելու է Հայաստանի տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեն:

Քաղաքային ջեռուցման ծրագրի (Urban Heating Project) վարկային պայմանագիրը ստորագրվել է 2004թ. սեպտեմբերի 15-ին, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ կառավարությանը տրամադրում է 10.0 մլն ՀՓԻ (15.5 մլն դոլար): Ծրագրի նպատակն է՝ ավելացնել այն տնային տնտեսությունների թիվը, որոնք օգտվում են (սպառում և վճարում են) մատչելի, անվտանգ և շրջակա միջավայրի տեսանկյունից կայուն ջեռուցման ծառայություններից:

Ծրագիրն իրականացնելու է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը:

Երևանի ջրմուղ-կոյուղու ծրագրի (Yeravan Water &Wastewater Project) վարկային պայմանագիրը ստորագրվել է 2004թ. ապրիլի 13-ին, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ կառավարությանը տրամադրում է 20.0 մլն ՀՓԻ (31.1 մլն դոլար): Ծրագրի նպատակն է՝ Երևանն ապահովել մատչելի գնով, անվտանգ և շարունակական ջրամատակարարմամբ՝ միաժամանակ կրճատելով շրջակա միջավայրի աղտոտումը:

Ծրագիրն իրականացնելու է Հայաստանի տարածքային կառավարման նախարարության Համայնքային զարգացման ծրագրի ղեկավարման պետական հիմնարկը (Municipal Development Project Management Unit):

2. Գյուղական ոլորտ՝ 2 ծրագիր

Գյուղատնտեսական բարեփոխումների աջակցման լրացուցիչ ծրագրի (Agricultural Reform Support Supplemental Project) վարկային պայմանագիրը ստորագրվել է 2004թ. մայիսի 4-ին, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ կառավարությանը տրամադրում է 1.2 մլն ՀՓԻ (1.9 մլն դոլար)՝ 2002թ. դեկտեմբերի ցրտահարություններից տուժած փոքր՝ շուրջ 370 հա խաղողի տնկիներ և 1130 հա պտղատու այգիներ ունեցող տնտեսություններին ֆինանսավորելու և գյուղատնտեսությանը աջակցող ծառայությունները կատարելագործելու նպատակով:

Ծրագիրն իրականացնելու է ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը:

Պատվարների անվտանգության ծրագրի II-ի (Irrigation Dam Safety Project II) վարկային պայմանագիրը ստորագրվել է 2004թ. հունիսի 10-ին, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ կառավարությանը տրամադրում է 4.7 մլն ՀՓԻ (7.3 մլն դոլար): Ծրագրի նպատակն է՝ բարձրացնել վերականգնման կարիք ունեցող 47 պատվարների, այդ թվում՝ Երևանյան լճի պատվարի անվտանգությունը, ստեղծել դրանց անվտանգության մոնիտորինգի արդյունավետ համակարգ և ապահովել դրանց գործունեությունն ու պահպանումը:

Ծրագիրն իրականացնելու է Հայաստանի տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեն (State Committee for Water Management):

3. Սոցիալական ապահովություն՝ 1 ծրագիր

Հայաստանի սոցիալական ապահովության և ղեկավարման ծրագրի (Armenia Social Protection and Administration Project) վարկային պայմանագիրը ստորագրվել է 2004թ. հունիսի 10-ին, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ կառավարությանը տրամադրում է 3.6 մլն ՀՓԻ (5.6 մլն դոլար): Ծրագրի նպատակն է՝ օգնել զբաղվածության, կենսաթոշակային և սոցիալական աջակցության պետական գործակալություններին՝ բարելավելու բնակչությանը մատուցվող ծառայությունների որակը:

Ծրագիրն իրականացնելու է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը:

4. Առողջապահություն՝ 1 ծրագիր

Հայաստանի առողջապահության համակարգի արդիականացման ծրագրի (Armenia Health Systems Modernization Project) վարկային պայմանագիրը ստորագրվել է 2004թ. հունիսի 10-ին, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ կառավարությանը տրամադրում է 13.0 մլն ՀՓԻ (շուրջ 20.2 մլն դոլար): Այս ծրագիրը առաջին փուլն է Համաշխարհային բանկի կողմից նախատեսվող երկու փուլանոց և 7 տարի տևողությամբ ծրագրի, որի նպատակն է աջակցել առողջապահության հատվածում կառուցվածքային բարեփոխումներին, այն է՝ բնակչությանը, հատկապես անապահով խմբին արդյունավետ և կայուն առողջապահական ծառայությունների մատուցմանը:

Ծրագիրն իրականացնելու է ՀՀ առողջապահության նախարարությունը:

5. Կրթություն՝ 1 ծրագիր

Կրթության որակի և համապատասխանության ծրագրի (Education Quality and Relevance Project) վարկային պայմանագիրը ստորագրվել է 2004թ. հունվարի 20-ին, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ կառավարությանը տրամադրում է 13.2 մլն ՀՓԻ (շուրջ 20.5 մլն դոլար): Ծրագիրը կօգնի Կառավարությանը՝ բարելավելու հայկական դպրոցական համակարգի որակն ու բարձրացնելու դրա նշանակությունը: Համաշխարհային բանկը նախատեսում է Հայաստանում իրականացնել կրթության համակարգի բարելավումների աջակցման երեք փուլից բաղկացած ծրագիր, որը կտևի10 տարի: Այս ծրագիրը այդ խոշոր նախաձեռնության առաջին փուլն է:

Ծրագիրն իրականացնելու է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը:

6. Պետական հատվածի կառավարում՝ 1 ծրագիր

Պետական կառավարման համակարգի արդիականացման ծրագրի (Public Sector Modernization Project) վարկային պայմանագիրը ստորագրվել է 2004թ. մայիսի 4-ին, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ-ին տրամադրում է 6.8 մլն ՀՓԻ (10.6 մլն դոլար): Ծրագրի նպատակն է՝ աջակցել ՀՀ կառավարության կողմից պետական հատվածի բարեփոխումների երկրորդ փուլի իրականացմանը, այն է՝ պետական հաստատությունների կառավարման համակարգի ուժեղացմանը և՛ կենտրոնական, և՛ տեղական մակարդակներով մատուցվող ծառայությունների որակի բարելավմանը:

Ծրագիրը իրականացնելու է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը:

7. Աղքատության կրճատում՝ 1 ծրագիր

Աղքատության կրճատման աջակցման վարկի (Poverty Reduction Support Credit-PRSC) պայմանագիրը ստորագրվել է 2004թ. նոյեմբերի 18-ին, համաձայն որի՝ Ընկերակցությունը ՀՀ կառավարությանը տրամադրում է 13.7 մլն ՀՓԻ (21.276) մլն դոլար: Ծրագիրն աջակցում է Աղքատության կրճատման ռազմավարության փաստաթղթում (PRSP) նշված քաղաքականությունների և ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացմանը: Այս վարկը տրամադրվում է ցածր եկամտով, բայց բարեփոխումների բնագավառում լուրջ հաջողություններ ունեցող այն երկրներին, որոնք Համաշխարհային բանկի օժանդակության կարիքը զգում են հատկապես աղքատության կրճատման հարցում: Վարկային ծրագրի իրականացումն ուղեկցվում է երկու խումբ վերլուծություններով. 1) երկրի սոցիալական համակարգի և վարկավորվող առանցքային ոլորտների վերաբերյալ[14], 2) պետության ֆինանսների կառավարման, հաշվետվելիության և թափանցիկության վերաբերյալ վերլուծություններով: Հայաստանում այս ծրագրի նպատակներն են՝ 1) մակրոտնտեսական կայունության հետագա ամրապնդում և կառավարման ուժեղացում, 2) մրցակցության ապահովում և մասնավոր սեփականության իրավունքների պաշտպանություն, 3) սոցիալական ապահովության և շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտների բարելավում, 4) գյուղական ոլորտի և ենթակառույցների հետագա զարգացում:

Ծրագիրն իրականացնելու է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը:

Միջազգային ֆինանսական կորպորացիա /IFC/

Միջազգային ֆինանսական կորպորացիան (այսուհետև՝ Կորպորացիա) հիմնադրվել է 1956 թվականին: Կորպորացիայի կազմի մեջ մտնում է 177 երկիր:

Կորպորացիայի նպատակն է խթանել մասնավոր հատվածի գործունեությունը զարգացող երկրներում: ***Կորպորացիան իր գործունեությամբ լրացնում է ՎԶՄԲ գործունեությունը, հետևյալ երեք ուղղություններով***՝

- ***մասնավոր հատվածի ծրագրերի ֆինանսավորում՝ առանց կառավարության երաշխիքների և ձեռնարկությունների բաժնետիրական կապիտալներում ներդրումների իրականացում,***
- ***օժանդակություն զարգացող երկրների ձեռնարկություններին՝ միջազգային ֆինանսական շուկաներից ֆինանսավորում ստանալու հարցում,***
- ***խորհրդատվության և տեխնիկական օժանդակության տրամադրում ձեռնարկություններին և կառավարություններին:***

Կորպորացիան հիմնականում ֆինանսավորում է միջին չափի, բայց բարձր եկամտաբերություն ունեցող ձեռնարկություններին, քանի որ Կորպորացիայի փոխառությունների տոկոսադրույքը շուկայական է (չնայած փոխառությունները տրամադրվում են մինչև 15 տարի ժամկետով, այդ թվում՝ մինչև 4 տարի արտոնյալ ժամկետով): Հիմնադրման օրվանից Կորպորացիան անդամ-երկրներին իր սեփական միջոցներից տրամադրել է ավելի քան 44 մլրդ դոլար արժողությամբ վարկեր, իսկ սինդիկացված վարկերի ծավալը կազմել է 23.5 մլրդ դոլար: 2004թ. ֆինանսական տարում 65 անդամ-երկրներում Կորպորացիան ֆինանսավորել է 217 ծրագրեր՝ 4.8 մլրդ դոլար ընդհանուր արժողությամբ:

Կորպորացիայի հայտարարված կանոնադրական կապիտալը բաղկացած է 2,450,000 բաժնետոմսից՝ յուրաքանչյուրը 1,000 դոլար անվանական արժեքով: 2004թ. հունիսի 30-ի դրությամբ բաժանորդագրված էր 2,361,499 բաժնետոմս[15]:

Հայաստանը Կորպորացիային անդամակցում է 1995 թվականի ապրիլի 18-ից: Հայաստանի բաժնեմասը Կորպորացիայի կապիտալում կազմում է 992 բաժնետոմս՝ 992,000 ԱՄՆ դոլար ընդհանուր արժողությամբ: Հայաստանի քվեների թիվը 1,242 ձայն է, որը ընդհանուր քվեների թվի 0.05-ն է[16]:

Ներկայումս Կորպորացիան Հայաստանում իրականացնում է երեք ծրագիր՝ շուրջ 9.2 մլն դոլար ընդհանուր արժողությամբ:

«Արմենիա» հյուրանոցային համալիր - 2000թ. հունիսին Կորպորացիան 3.6 միլիոն դոլար ներդրում է իրականացրել «Արմենիա» հյուրանոցային համալիրի բաժնետիրական կապիտալում: Ծրագրի նպատակն էր՝ սփյուռքահայ ներդրողների և «Մարիոտ-Ինտերնեյշնլ» միջազգային կորպորացիայի համագործակցությամբ վերանորոգել և արդիականացնել հյուրանոցային համալիրը և այն դարձնել Հայաստանում

---

[14] Վարկավորվող առանցքային ոլորտներն անմիջականորեն առնչվում են բնակչության սոցիալական խնդիրների հետ, օրինակ՝ առողջապահությունը:
[15] Տե՛ս IFC 2004 Annual Report/ International Finance Corporation, 2004, էջ 33:
[16] Տե՛ս նույն տեղում:

«հինգ աստղ» ունեցող առաջին համալիրը: 2003թ. օգոտոսին Կորպորացիան ավելացրել է համալիրի կապիտալը՝ ներդնելով ևս 1.3 մլն դոլար:

«ԱԳԲԱ-լիզինգ» լիզինգային վարկային կազմակերպություն (ՍՊԸ) – 2003թ. ապրիլին Կորպորացիան Հայգյուղփոխբանկի, Ֆրանսիայի Credit Agricole խմբի լիզինգային կազմակերպության՝ Յուքաբելի (Ucabail) և Լիբանանյան լիզինգային ընկերության համագործակցությամբ հիմնել է հայաստանյան առաջին լիզինգային «ԱԳԲԱ-լիզինգ» ընկերությունը: Կորպորացիան ներդրել է 270 հազ. դոլար բաժնետիրական կապիտալ և տրամադրել է 2.0 մլն վարկ: Ընկերության բաժնետիրական կապիտալը 1.0 մլն դոլար է: Յուքաբելը բաժնետերերից մեկն է և Credit Agricole Consultants-ի հետ համատեղ ապահովում է տեխնիկական աջակցությունը: Ի լրումն, Credit Agricole-ը տրամադրել է 1.0 մլն դոլարի վարկ: Լիբանանյան լիզինգային ընկերությունը, որը ստեղծվել է 1995թ-ին, Կորպորացիայի և Յուքաբելի մասնակցությամբ, «ԱԳԲԱ-լիզինգ» ընկերության բաժնետերերից մեկն է և ներդնում է իր գիտելիքներն ու կառավարման փորձը: «ԱԳԲԱ-լիզինգ» ընկերությանը տեխնիկական աջակցություն է ցուցաբերում նաև ԱՄՆ կառավարությունը՝ USAID-ի միջոցով. տրամադրվել է 1.2 մլն դոլարի դրամաշնորհ՝ ընկերության հիմնադրման նախնական փուլին աջակցելու համար:

Հայէկոնոմբանկ -2004թ. հուլիսին Կորպորացիան Հայէկոնոմբանկին տրամադրել է 2.0 մլն դոլարի վարկ: Ծրագրի նպատակն է՝ ընդլայնել Հայէկոնոմբանկի կողմից փոքր և միջին ձեռնարկություններին ու բնակելի շինարարության համար տրամադրվող վարկային միջոցների բազան: Սա Կորպորացիայի առաջին ներդրումն էր Հայաստանի բանկային համակարգում:

2002թ. հունիսին Կորպորացիայի տնօրենների խորհուրդը հավանություն է տվել «Հայաստանում փոքր և միջին ձեռնարկությունների հիմնադրամի» ստեղծման ծրագրին, որի նպատակն էր՝ սփյուռքից ուղղակի ներդրումներ ներգրավել հայաստանյան փոքր և միջին ձեռնարկություններ: Սակայն այս ծրագիրը դեռևս ընթացք չի ստացել:

Ներկայումս Կորպորացիան ֆինանսական միջոցներ է փնտրում «Մասնավոր ձեռնարկությունների գործընկերության» (Private Enterprise Partnership) ծրագրի ֆինանսավորման համար: Այս ծրագիրը տարածաշրջանային բնույթ ունի և ակտիվորեն իրականացվում է ԱՊՀ 10 երկրներում: Ծրագրի նպատակն է՝ տեխնիկական աջակցություն ցուցաբերել ձեռնարկություններին, գործարարների միություններին և օգնել իշխանություններին՝ բարելավելու ներդրումային միջավայրը:

Ի լրումն ներդրումային ծրագրերի, Կորպորացիան 1999-2002թթ. Հայաստանում ապահովել է նաև խորհրդատվական ծառայություններ՝ կորպորատիվ կառավարման, ներդրումային միջավայրի բարելավման և փոքր ու միջին ձեռնարկությունների զարգացման ոլորտներում:

Կապիտալ ներդրումների բազմակողմանի երաշխիքների գործակալություն /MIGA/

Կապիտալ ներդրումների բազմակողմանի երաշխիքների գործակալությունը (այսուհետև՝ Գործակալություն) հիմնադրվել է 1988 թվականին: Գործակալության կազմի մեջ մտնում է 164 երկիր:

Գործակալության նպատակն է օգնել զարգացող երկրներին՝ ներգրավելու արտադրողական ներուժի ստեղծմանը նպաստող օտարերկրյա ներդրումներ ինչպես մասնավոր ներդրողներից, այնպես էլ ձեռներեցությամբ զբաղվող պետական ընկերություններից: ***Գործակալության գործունեությունը ներառում է.***

- ***երաշխիքների տրամադրում կամ ոչ առևտրային ռիսկերի ապահովագրում,***
- ***անդամ-երկրներում օտարերկրյա ներդրումների համար բարենպաստ միջավայրի ստեղծմանն օժանդակող խորհրդատվական ու խորհրդակցական ծառայությունների մատուցման ծրագրերի իրագործում:***

Մինչ օրս Գործակալությունը անդամ-երկրներին տրամադրել է 13.5 մլրդ, այդ թվում՝ 2004թ. ֆինանսական տարում՝ 1.1 մլրդ դոլարի երաշխիքներ:

Գործակալության հայտարարված կանոնադրական կապիտալը բաղկացած է 181,342 բաժնետոմսից, որից 2004թ. հունիսի 30-ի դրությամբ բաժանորդագրված էր 168,021 բաժնետոմս՝ շուրջ 1.82 մլրդ դոլար արժողությամբ: Յուրաքանչյուր բաժնետոմս ունի 10,000 ՀՓԻ անվանական արժեք, որը հաշվարկվում է 1981թ. հունվարի 1-ից մինչև 1985 թ. հունիսի 30-ը ընկած ժամանակահատվածում ԱՄՆ դոլար/ՀՓԻ միջին փոխարժեքով (1.082 ԱՄՆ դոլար)[17]:

Հայաստանը Գործակալությանը անդամակցում է 1995թ. դեկտեմբերի 5-ից: 2004թ. հունիսի 30-ի դրությամբ Գործակալության կապիտալում ***Հայաստանի*** բաժնեմասը կազմում էր 80 բաժնետոմս՝ 866,000

[17] *Տե՛ս Annual Financial Statements, June 30, 2004/ World Bank, Multilateral Investment Guarantee Agency, 2004, էջ 68 (http://www.miga.org/screens/pubs/annrep04/pdf/04arfinancials.pdf).*

ԱՄՆ դոլար ընդհանուր արժողությամբ, որից վճարված է 173,000 ԱՄՆ դոլար (20%), իսկ մնացած 693,000 ԱՄՆ դոլարը Հայաստանը պետք է վճարի Գործակալության պահանջի դեպքում: ՀՀ-ն Գործակալությանը տրամադրել է մեկ հասարակ անտոկոս պարտամուրհակ (1995թ. սեպտեմբերի 12-ին)՝ 85,560 ԱՄՆ դոլար ընդհանուր արժողությամբ: Հայաստանի քվեների թիվը Գործակալությունում կազմում է 257 ձայն, որը ընդհանուր քվեների թվի 0.13%-ն է[18]:

2000թ. Գործակալությունը Հունաստանի առևտրային բանկին տրամադրել է 2.7 մլն դոլարի երաշխիք[19]՝ ՀՀ բանկային համակարգում, մասնավորապես ներկայիս «Կասկադ» ***(նախկինում՝ «Emporiki»)*** բանկում ներդրում կատարելու համար, որով Գործակալությունը երաշխավորում է Հունաստանի առևտրային բանկին, որ՝

- ՀՀ-ում իր ներդրումային ծրագրի դադարեցումից հետո նրա դրամային հասույթները և եկամուտները կփոխարկվեն ազատ փոխարկելի արտարժույթի և կփոխանցվեն Հունաստան,
- ՀՀ կառավարության քաղաքականության խստացման արդյունքում[20] Հունաստանի առևտրային բանկը չի զրկվի ՀՀ-ում իր սեփականության իրավունքից,
- քաղաքական խռովությունների և պատերազմի դեպքում Հունաստանի առևտրային բանկի իրական ակտիվները կպաշտպանվեն վնասվելուց կամ կորստից,
- եթե ՀՀ-ն խախտի միջազգային գործարքի (պայմանագրի) պայմանները, ապա Գործակալությունը Հունաստանի առևտրային բանկին կօգնի արբիտրաժային կամ իրավաբանական որոշմամբ հասնել ՀՀ կողմից պարտավորության խախտման ճանաչմանը:

Հարկ ենք համարում նշել, որ առաջին երեք տարիների ընթացքում Գործակալության կողմից տրված երաշխիքները, բացի վերաապահովագրություններից, հնարավոր չէ միակողմանիորեն դադարեցնել: Երաշխիքային պայմանագրերի, ներդրողներին վճարվող բոլոր կարգի կորուստների փոխհատուցման վճարները չեն կարող գերազանցել երաշխավորված առավելագույն գումարը:

Ներդրումային վեճերի կարգավորման միջազգային կենտրոն (ICSID)

Ներդրումային վեճերի կարգավորման միջազգային կենտրոնը (այսուհետև՝ Կենտրոն) հիմնադրվել է 1966թ-ին: Կենտրոնի կազմի մեջ մտնում է 141 երկիր:

Կենտրոնի նպատակն է՝ նպաստել օտարերկրյա ներդրումների խթանմանը՝ ***կառավարությունների և օտարերկրյա ներդրողների միջև ծագած վեճերի քննարկումն ու հաշտեցումն ապահովող*** միջազգային մեխանիզմների միջոցով: Այդ մեխանիզմների հիմքում միջազգային ներդրումային պայմանագրեր են, ներդրումների մասին օրենքներ, երկկողմանի և բազմակողմանի ներդրումային համաձայնագրեր:

Հայաստանը Կենտրոնին անդամակցում է 1992թ. հոկտեմբերի 16-ից: 2004թ. նոյեմբերի 20-ի դրությամբ 154 երկրներ ստորագրել են ***«Կառավարությունների և այլ երկրների քաղաքացիների միջև ներդրումային վեճերի կարգավորման»*** կոնվենցիան, սակայն այն վավերացրել են 141 երկրներ, որոնք էլ ներկայումս համարվում են Կենտրոնի լիիրավ անդամներ: ԱՊՀ երկրներից այդ կոնվենցիան չի ստորագրել Տաջիկստանը, իսկ դեռևս չեն վավերացրել Ղրղզստանը, Մոլդովան և Ռուսաստանը[21]:

Հիմնադրման օրվանից Կենտրոնը քննարկել է 159, այդ թվում՝ 2004թ. ֆինանսական տարում՝ 30 վեճեր:

Հայաստանում Համաշխարհային բանկի 1993-2004թթ. ծրագրերի գնահատականը և հետագա ռազմավարությունը

Համաշխարհային բանկը իր կողմից մշակված մեթոդոլոգիայի հիման վրա ընտրանքային եղանակով գնահատում է անդամ-երկրներում իր ծրագրերի ***արդյունքը, կայունությունը և ինստիտուցիոնալ զարգացման ազդեցությունը:*** Ընտրանքային եղանակով գնահատվել է նաև Հայաստանում իրականացվող ծրագրերից 14-ի արդյունավետությունը և համեմատվել ԱՊՀ-7 երկրների գնահատականների հետ (տե՛ս աղ. 4): Համաձայն Համաշխարհային բանկի փորձագետների՝ ԱՊՀ-7 ամենացածր եկամուտ ունեցող

---

[18] Տե՛ս նույն տեղում:

[19] Տե՛ս Annual Financial Statements, June 30, 2004/ World Bank, Multilateral Investment Guarantee Agency, 2004, էջ 69 (http://www.miga.org/screens/pubs/annrep04/pdf/04arfinancials.pdf):

[20] Կառավարությունը կարող է կրճատել, սահմանափակել կամ վերացնել սեփականության իրավունքը և ապահովագրված ներդրումների նկատմամբ իրավունքները:

[21] Տե՛ս List of Contracting States and Other Signatories of the Convention/ World Bank, ISCID, 2004. (http://www.worldbank.org/icsid/costate/c-states-en.htm).

երկրների թվում Համաշխարհային բանկի աջակցության ծրագրերն առավել արդյունավետ են եղել Հայաստանում[22]:

Աղյուսակ 4. Համաշխարհային բանկի ծրագրերի իրականացման գնահատումը

Երկիրը	Գնահատվող ծրագրերի թիվը	Արդյունքը, %	Իրականացրած ծրագրերի կայունությունը, %	Ինստիտուցիոնալ զարգացման ազդեցությունը, %
		Բավարար	*Հավանական*	*Զգալի*
Հայաստան	14	86	85	64
Ադրբեջան	3	67	50	0
Վրաստան	14	79	92	57
Ղրղզստան	12	83	58	42
Մոլդովա	10	70	50	20
Տաջիկստան	7	71	57	29
Ուզբեկստան	4	67	33	0
Արևելյան և Կենտրոնական Ասիա	402	79	73	50
Համաշխարհային բանկ	2,712	71	57	39

Անդամ-երկրներում իրականացրած ծրագրերի ***արդյունքը*** գնահատելիս Համաշխարհային բանկը օգտագործում է վարկանիշային դասակարգման 6 կատեգորիաներ՝

1. «լիովին բավարար» (լավագույն արդյունք),
2. «բավարար»,
3. «չափավոր բավարար»,
4. «չափավոր անբավարար»,
5. «անբավարար»
6. «լիովին անբավարար» (վատագույն արդյունք):

Հայաստանում իրականացվող ծրագրերի արդյունքը գնահատվել է «բավարար», որը նշանակում է, որ Համաշխարհային բանկի ծրագրերի իրականացման արդյունքում արձանագրվել է առաջընթաց՝ նախանշված բոլոր կարևորագույն նպատակային ուղղություններում:

Ծրագրերի ***կայունությունը*** (հավանականությունը, որ ծրագիրը հաջողություն կունենա) գնահատվում է հետևյալ սանդղակով՝

1. «շատ հավանական»,
2. «հավանական»,
3. «անհավանական»,
4. «շատ անհավանական» կամ եթե տեղեկատվությունը անբավարար է՝ «չգնահատվող»:

Հայաստանում իրականացվող ծրագրերը համարվել են «հավանական» կայուն, որը ցույց է տալիս առաջադիմության ընթացքում հնարավոր ռիսկերի (տեխնիկական, ֆինանսական, տնտեսական, սոցիալական, շրջակա միջավայրի, կառավարության սեփականության, ինստիտուցիոնալ աջակցության և միջազգային տնտեսական ցնցումների կամ քաղաքական փոփոխությունների ռիսկերի) նկատմամբ այդ ծրագրերի «հավանական» ճկունությունն ու պաշտպանվածությունը:

Ծրագրերի **ինստիտուցիոնալ զարգացման ազդեցությունները** (ծրագրի իրագործման արդյունքում որքանով են մեծացել հաճախորդ երկրի կարողությունները՝ արդյունավետ, կայուն և արդարացի օգտագործելու իր մարդկային, ֆինանսական և բնական ռեսուրսները) գնահատվում են՝

1. «բարձր»,
2. «զգալի»,
3. «համեստ» կամ «չնչին»:

Հայաստանում Համաշխարհային բանկի իրականացրած ծրագրերի ինստիտուցիոնալ ազդեցությունը գնահատվել է «զգալի», որը ցույց է տալիս, որ ծրագրերը էապես նպաստել են Հայաստանում մարդկային, ֆինանսական և բնական ռեսուրսների առավել արդյունավետ, արդարացի և կայուն օգտագործմանը: Ծրագրերի ***ինստիտուցիոնալ զարգացման ազդեցությունները*** գնահատելիս դիտարկում են՝

[22] *Տե՛ս Armenia – Country Assistance Evaluation/World Bank, OED, June 15, 2004.*

տնտեսական կառավարման մակարդակը, պետական հատվածի, մասնավորապես՝ քաղաքացիական ծառայության կառուցվածքը, ֆինանսական հատվածի ինստիտուցիոնալ խնդիրները, իրավական, կարգավորման և դատական համակարգերի գործունեության արդյունավետությունը, մոնիտորինգի և գնահատման համակարգերի, ինչպես նաև ֆինանսական հաշվետվելիության մակարդակը և այլն:

Նկատենք նաև, որ նախկին ԽՍՀՄ երկրներում ***կառավարման (governance) բարեփոխումների*** վերաբերյալ Համաշխարհային բանկի անցկացրած հարցումները ցույց են տվել, որ Հայաստանի մասնավոր հատվածը գործում է ամենաբարենպաստ բիզնես- միջավայրում[23]: Սակայն նաև նշվել է, որ այս հարցում Հայաստանը դեռևս զիջում է Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներին, քանի որ երկրում դեռևս կան հիմնախնդիրներ խոշոր ձեռնարկությունների վերակառուցման, տնտեսավարող սուբյեկտների միջև պայմանագրերի կիրարկման և մասնավոր ֆիրմաների համար ֆինանսավորման հասանելիության առումով: Իսկ պետական հատվածի հիմնախնդիրները կապված են բյուրոկրատական խոչընդոտների և կոռուպցիայի հետ: Այս երևույթները խոչընդոտում են փոքր և միջին ձեռնարկությունների ստեղծումն ու զարգացումը, որոնք, ինչպես հայտնի է, կարևոր դեր են խաղում զբաղվածության ապահովման և աղքատության կրճատման գործում:

Համաշխարհային բանկի փորձագետները նկատում են նաև, որ Հայաստանի տնտեսությունում դեռևս բարձր է տարածաշրջանային անկայունության ռիսկը, որը անբարենպաստ ազդեցություն է ունենում ներդրումային միջավայրի վրա: Շարունակական կախվածությունը միջազգային աջակցությունից վկայում է արտաքին անկայունության մասին: Աղքատության բարձր մակարդակը՝ զուգակցված բյուջեի սահմանափակ հնարավորություններով, կարող է հանգեցնել հետագայում սոցիալական ճգնումների: Տնտեսական աճի բարձր տեմպերը դժվար կլինի ապահովել նաև ապագայում, քանի որ այդ աճը բխում է ոչ կապիտալ ինտենսիվ հատվածներից և, բացի այդ, ձևավորված չէ առողջ մրցակցային դաշտ:

Հետևաբար, նախատեսվում է, որ Համաշխարհային խմբի կազմակերպությունների միջինժամկետ և երկարաժամկետ ռազմավարությունը Հայաստանում կունենա հետևյալ ուղղվածությունը՝

- Զարգացման միջազգային ընկերակցության (IDA) արտոնյալ վարկավորումից աստիճանաբար անցում կկատարվի Վերականգնման և զարգացման միջազգային բանկի (IBRD) նվազ արտոնյալ վարկավորմանը, քանի որ Հայաստանը բնակչության մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ով ներկայումս գերազանցում է Զարգացման միջազգային գործակալության վարկավորման անհրաժեշտ սահմանաչափը: Արդյունքում՝ զգալիորեն կկրճատվեն Համաշխարհային բանկի վարկավորման ծավալները, և փոքրածավալ ծրագրերը կուղղվեն աղքատության կրճատմանը, այն է՝ սոցիալական և գյուղական ոլորտների ֆինանսավորմանը, «Հազարամյակի մարտահրավերի» նպատակների իրականացմանը: Սակայն Համաշխարհային բանկի փորձագետները նշում են, որ այս անցումը չպետք է լինի կտրուկ. թեև Հայաստանը տնտեսական աճի և որոշ այլ ցուցանիշների գծով հասել է ակնառու հաջողությունների, այնուամենայնիվ, դեռևս կախվածություն ունի արտաքին ֆինանսական աջակցությունից, այսինքն՝ դեռևս խոցելի է և չունի անհրաժեշտ վարկունակություն:
- Կշարունակվեն ուշադրության կենտրոնում մնալ մասնավոր հատվածի զարգացմանը նպաստող միջավայրի ապահովման խնդիրները: Հայաստանի տնտեսական առաջընթացի կայունությունն ապահովելու և ռիսկերը նվազեցնելու տեսակետից կկարևորվեն աղքատության կրճատմանը նպաստող աշխատատեղերի ստեղծումը և առևտրային պակասուրդի կրճատմանը նպաստող արտահանման ընդլայնումը: Համաշխարհային բանկը նախատեսում է իր ֆինանսավորումն ուղղել հատկապես փոքր և միջին ձեռնարկությունների բիզնես- միջավայրի բարելավմանը, գործող օրենքների և կարգավորումների դաշտի, ինչպես օրինակ, սնանկության գործընթացի կիրարկմանը, դատական համակարգի արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացմանը և տնտեսության բոլոր հատվածներում մրցակցության խթանմանը:
- Կշարունակվի աջակցությունը պետական հատվածի բարեփոխումներին, քանի որ ուժեղ պետական հատվածը առանցքային է մասնավոր հատվածի զարգացման և սոցիալական ծառայությունների արդյունավետ մատուցման համար անհրաժեշտ միջավայրի ապահովման առումով: Կարևորվելու են հակակոռուպցիոն միջոցառումները, մաքսային և հարկային քաղաքականության բարեփոխումները և պետական վարչարարության բարելավումը:

[23] *Տե՛ս Armenia –Country Assistance Evaluation /World Bank, OED, June 15, 2004, էջ 3:*

Օգտագործված գրականություն

1. The World Bank Annual Report 2004, Vol. 2 Financial Statements
2. Management's Discussion and Analysis/International Bank for Reconstruction and Development, June 30, 2004. http://treasury.worldbank.org/web/pdf/IBRD_MD&AJune2004.pdf
3. Financial Statements /International Bank for Reconstruction and Development, June 30, 2004
4. Special Purpose Financial Statements/ International Development Association, June 30, 2004
5. IFC 2004 Annual Report/ International Finance Corporation, 2004
6. Annual Financial Statements/ World Bank, Multilateral Investment Guarantee Agency, June 30, 2004. (http://www.miga.org/screens/pubs/annrep04/pdf/04arfinancials.pdf)
7. List of Contracting States and Other Signatories of the Convention/ World Bank, ISCID, 2004. (http://www.worldbank.org/icsid/costate/c-states-en.htm)
8. World Bank and EBRD, Business Environment and Enterprise Performance Study, 2002
9. The Millennium Development Goals in Europe and Central Asia, ECA Region/World Bank, September, 2003
10. Armenia – Country Assistance Evaluation/ World Bank, OED, June 15, 2004

ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏՔԸ 2004 ԹՎԱԿԱՆԻՆ *


Վիճակագրության վարչություն
Լուսինե Հարությունյան

Հայաստանի արտաքին պարտքը[1] 2004 թվականի վերջի դրությամբ կազմել է 1868.0 մլն ԱՄՆ դոլար[2], որից 1180.4 մլն ԱՄՆ դոլարը (այսուհետև՝ դոլար) պետական կառավարման և դրամավարկային կարգավորման մարմինների արտաքին պարտքն է, 129.4 մլն դոլարը՝ առևտրային բանկերի պարտքը, 558.3 մլն դոլարը՝ այլ մասնավոր հատվածի պարտքը:

ՀՀ պետական կառավարման և դրամավարկային կարգավորման մարմինների արտաքին պարտքը 2004 թվականին, նախորդ տարվա համեմատ, ավելացել է 70.3 մլն դոլարով և տարեվերջին կազմել է 1180.4 մլն դոլար, որի հիմնական մասը՝ 1180.1 մլն դոլարը, ձևավորվել է երկարաժամկետ արտաքին վարկերի, 0.3 մլն դոլարը՝ ոչ ռեզիդենտների՝ ՀՀ պետական կարճաժամկետ պարտատոմսերի և այլ պարտավորությունների հաշվին:

ՀՀ առևտրային բանկերի արտաքին պարտքը ավելացել է 34.9 մլն ԱՄՆ դոլարով և տարեվերջին կազմել 129.4 մլն ԱՄՆ դոլար, ինչը հիմնականում բաղկացած է ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդներից՝ 98.3 մլն դոլար և վարկերից՝ 22.2 մլն դոլար: 2004 թվականին առևտրային բանկերի վարկերը, նախորդ տարվա համեմատ, աճել են 7.7 մլն դոլարով, ընդ որում՝ տարվա ընթացքում ներգրավվել են 37.9 մլն դոլար վարկային միջոցներ, իսկ նախկինում ձեռք բերված վարկերի դիմաց կատարվել են 30.8 մլն դոլար հիմնական գումարի մարումներ: 2004 թվականի վերջի դրությամբ ներգրավված վարկերի միջին կշռված տոկոսադրույքը կազմել է 5.6 % (2003 թվականին՝ 4.1%), իսկ միջին ժամկետայնությունը՝ 4.6 տարի (2003 թվականին՝ 5.5 տարի): 2004 թվականին առևտրային բանկերի հիմնական վարկատու երկրներ են հանդիսացել՝ Շվեյցարիան, ԱՄՆ-ն, Հունաստանը, Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան:

Հայաստանի արտաքին պարտքի կառուցվածքն ըստ գործիքների 2004



* *Հեղինակի տեսակետը կարող են չհամընկնել ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական դիրքորոշմանը:*

[1] *2004 թվականի ցուցանիշները նախնական են և ենթակա են վերանայման:*

[2] *Արտաքին պարտքի վերաբերյալ տվյալների աղբյուրը՝ ՀՀ ԱԿԾ: Արտաքին պարտքը հաշվառվել է ԱՄՀ «Արտաքին պարտքի վիճակագրության հավաքագրողների» ձեռնարկում սահմանված մեթոդաբանությամբ, համաձայն որի՝ արտաքին պարտքն ընդգրկում է տնտեսության հատվածների արտաքին պարտավորությունները, բացառությամբ ուղղակի ներդրումների (սակայն ուղղակի ներդրումների միջֆիրմային վարկերը ներառվում են արտաքին պարտքի մեջ): Ընդ որում՝ արտաքին պարտքի ցուցանիշները հաշվառված են հաշվապահական հաշվառման կուտակման սկզբունքով:*

ՀՀ այլ մասնավոր հատվածի արտաքին պարտքը նախորդ տարվա համեմատ նվազել է 25.3 մլն ԱՄՆ դոլարով և կազմել 558.3 մլն ԱՄՆ դոլար, որի մոտ 53%-ը կամ 297.6 մլն դոլարը կազմել են վարկերն ու առևտրային վարկերը, 207.5 մլն ԱՄՆ դոլարը կազմել են միջֆիրմային վարկերը, իսկ մնացած 53.3 մլն ԱՄՆ դոլարը՝ այլ պարտավորությունները: Մասնավոր հատվածի արտաքին պարտքը նվազել է հիմնականում առևտրային վարկերի ծավալների նվազման հաշվին, որոնք 2004 թվականին կազմել են 208.6 մլն դոլար՝ նախորդ տարվա 234.4 մլն դոլարի փոխարեն: Ընդ որում, մինչև 1997 թվականը առևտրային վարկերի մարումների վերաբերյալ վիճակագրություն չի հավաքագրվել, ինչի հետևանքով էլ առևտրային վարկերի ցուցանիշը ներկայումս բավականին մեծ արժեք ունի: Նշենք նաև, որ միջազգային ֆինանսական կազմակերպություններից Հայաստանի մասնավոր հատվածի հետ հիմնականում աշխատում է Եվրոպական բանկը:

ՀՀ արտաքին պետական և պետական երաշխիքով պարտքը 2004 թվականի վերջի դրությամբ[3] կազմել է 1182.9 մլն դոլար, որից 937.2 մլն դոլարը կազմել է ՀՀ կառավարության պարտքը, 5.2 մլն դոլարը՝ ՀՀ կառավարության երաշխիքները, իսկ 240.4 մլն դոլարը՝ ՀՀ կենտրոնական բանկի պարտքը (Արժույթի միջազգային հիմնադրամի հանդեպ պարտավորությունները կազմել են 217.6 մլն դոլար):

Հայաստանի Հանրապետությունը, 1992 թվականի մայիսի 28-ին ստորագրելով ԱՄՀ-ի Համաձայնագրի հոդվածները, դարձավ Հիմնադրամի անդամ: Կառավարիչների խորհրդում Հայաստանը ներկայացնում են ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարը (Կառավարիչ) և ՀՀ կենտրոնական բանկի նախագահը (Կառավարչի տեղակալ): Տնօրենների խորհրդում Հայաստանը Բուլղարիայի, Կիպրոսի, Իսրայելի, Մոլդովայի, Ուկրաինայի, Նիդեռլանդների, Ռումինիայի, Վրաստանի, Մակեդոնիայի, Խորվաթիայի, Բոսնիայի և Հերցեգովինայի հետ միևնույն խմբում է, որի Կառավարիչը ներկայումս Նիդեռլանդների ներկայացուցիչն է:

Հայաստանի բաժնեմասը մինչև բաժնեմասերի 11-րդ ընդհանուր վերանայումը կազմել է 67.5 մլն ՀՓԻ, իսկ դրանից հետո (1998 թվականի հունվարի 30) ավելացվել է և այժմ կազմում է 92 մլն ՀՓԻ:

Հայաստանը ԱՄՀ-ի հետ կնքել է 4 վարկային համաձայնագիր: 2004 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Հայաստանի պարտավորությունները ԱՄՀ նկատմամբ կազմել են 140.1 մլն ՀՓԻ: Ընդ որում, «Սթենդ-բայ» ծրագրի ֆինանսական միջոցների հետգնումը ավարտված է, իսկ ՀԲՖՄ (STF) ծրագրի ֆինանսական միջոցների հետգնումը նախատեսվում է ավարտել 2005 թվականին: 2005 թվականին ԱՄՀ-ն Հայաստանի հետ նախատեսում է սկսել ևս մեկ՝ ԱՆՏԱ վարկային եռամյա ծրագիր՝ 23 մլն ՀՓԻ գումարով:

Մեխանիզմների տեսակները	Համաձայնագրի կնքման ամսաթիվը	Գումարը ըստ համաձայնագրի	Պարտավորությունները 31.12.2004թ. դրությամբ
ՀԲՖՄ (STF)	15.12. 1994	33.8	1.4
«Սթենդ-բայ»	28.06.1995	43.9*	0.0
ԱՆՏԱ (PRGF) I**	14.02.1996	109.4	69.7
ԱՆՏԱ (PRGF) II	23.05.2001	69.0	69.0

** Տրամադրվել է ընդամենը 13.5 մլն ՀՓԻ:*

*** Կնքվել է որպես ESAF համաձայնագիր, իսկ 1999 թվականի նոյեմբերի 22-ին վերանվանվել է PRGF:*

2004 թվականին արտաքին պետական պարտքի ներհոսքը կազմել է 121.6 մլն դոլար, որի մոտ 91%-ը բազմակողմանի պաշտոնական աղբյուրներից ներգրավված միջոցներ են: Մասնավորապես, Համաշխարհային բանկից և Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամից տարվա ընթացքում ներգրավվել են 82.8 մլն դոլարի, իսկ Արժույթի միջազգային հիմնադրամից (ԱՄՀ)՝ 28.3 մլն դոլարի ֆինանսական միջոցներ: Համաշխարհային բանկի կողմից գումարները տրամադրվել են հիմնականում Աղքատության

[3] Արտաքին պետական և պետական երաշխիքով պարտքի վիճակագրության հավաքագրման պատասխանատուն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունն է: Ընդ որում, այս ցուցանիշը հաշվարկված է հաշվապահական հաշվառման կանխիկ սկզբունքով և չի ներառում ոչ ռեզիդենտների պետական պարտատոմսերն ու ՀՀ պետական և դրամավարկային մարմինների այլ պարտավորությունները:

նվազեցման օժանդակման՝ 21.2 մլն դոլար, էլեկտրաէներգիայի հաղորդման գծերի՝ 14.2 մլն դոլար, Տրանսպորտի՝ 13.7 մլն դոլար, Ոռոգման համակարգի զարգացման՝ 6.1 մլն դոլար, Սոցիալական ներդրումների II՝ 4.8 մլն դոլար վարկային ծրագրերի իրականացման համար: ԱՄՀ տրամադրած 28.3 մլն դոլար վարկային միջոցները ԱՆՏԱ (Աղքատության նվազեցման և տնտեսական աճի ծրագիր՝ PRGF) վարկային ծրագրի շրջանակներում նախատեսված միջոցներն են:

2004 թվականին արտաքին պետական պարտքի հիմնական գումարի մարումները կազմել են 86.1 մլն դոլար, իսկ տոկոսավճարները՝ 9.7 մլն դոլար՝ նախորդ տարվա համապատասխանաբար 129.0 մլն դոլարի և 11.8 մլն դոլարի փոխարեն: Ընդ որում, այս տարի իրականացվել է Ռուսաստանի հետ կնքած «Գույք՝ պարտքի դիմաց» պայմանագրի շրջանակներում վերաձևակերպման մնացած մասը՝ 31.0 մլն ԱՄՆ դոլար գումարով: Ռուսաստանի հանդեպ պարտավորությունների նվազեցումն էլ նպաստել է 2004 թվականին արտաքին պարտքի տոկոսավճարների կրճատմանը, քանի որ 2003 թվականին վճարված տոկոսագումարներից 2.6 մլն դոլարը Ռուսաստանի հանդեպ պարտավորությունների դիմաց էր: Վերը նշված արտաքին պետական պարտքի սպասարկման ծավալներից 36.1 մլն դոլարը կամ արտաքին պետական պարտքի սպասարկման շուրջ 38 %-ը կազմել է ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտքի սպասարկումը, ինչը նախորդ տարի կազմել էր 28.0 մլն դոլար: Ընդ որում, ԱՄՀ վարկերի գծով ՀՀ կենտրոնական բանկը վճարել է 1.3 մլն դոլար տոկոսագումար և կատարել 34.7 մլն դոլար հիմնական գումարի մարում՝ ՀԲՖՄ (STF) և ԱՆՏԱ (PRGF) վարկային ծրագրերի շրջանակներում:

Նշված հոսքերի արդյունքում 2004 թվականին Հայաստանի արտաքին պետական պարտքի զուտ ներհոսքը (արտաքին պարտքի գծով ներգրավված ֆինանսական միջոցների և վճարված հիմնական գումարի տարբերություն) կազմել է 35.3 մլն դոլար, սակայն պայմանավորված տարվա ընթացքում ՀՓԻ-ի և եվրոյի նկատմամբ դոլարի փոխարժեքի համապատասխանաբար 4.5% և 7.8% արժեզրկմամբ՝ ՀՀ արտաքին պետական և պետական երաշխիքով պարտքը աճել է 85.3 մլն դոլարով: Փոխարժեքի փոփոխության հաշվին Հայաստանի արտաքին պետական պարտքի մոտ 50 մլն դոլար աճը պայմանավորված է այն հանգամանքով, որ արտաքին պարտքի գերակշիռ մասը ներգրավված է մեկ արժույթով՝ ՀՓԻ-ով:

Աղյուսակ 1. ՀՀ արտաքին պարտքի կառուցվածքն ըստ արժույթների (%)

Արժույթ	2002	2003	2004
ՀՓԻ	73.5	83.3	87.4
ԱՄՆ դոլար	21.6	10.6	6.3
Եվրո	4.7	6.0	6.1
Այլ	0.1	0.2	0.1

2004 թվականի ընթացքում ԱՄՆ դոլար/ՀՓԻ փոխարժեքի արժեզրկման հետևանքով Համաշխարհային բանկից (ներառյալ Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամը) և ԱՄՀ-ից ՀՓԻ-ով ներգրավված պարտքը համապատասխանաբար ավելացել է մոտ 35 մլն ԱՄՆ դոլարով և 9.4 մլն ԱՄՆ դոլարով՝ նախորդ տարվա 56.1 մլն ԱՄՆ դոլարի և 18.1 մլն ԱՄՆ դոլար աճի փոխարեն: Իսկ ԱՄՆ դոլար/եվրո փոխարժեքի արժեզրկման հետևանքով Եվրոմիությունից, Գերմանիայից և Ֆրանսիայից եվրոյով ներգրավված պարտքն ավելացել է 5.3 մլն ԱՄՆ դոլարով՝ նախորդ տարվա 10.7 մլն ԱՄՆ դոլար աճի փոխարեն: Նշենք նաև, որ ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՓԻ և եվրոյի փոխարժեքների փոփոխությունը հիմնականում բացասաբար է անդրադարձել տոկոսավճարների գումարների աճի տեսանկյունից, իսկ ինչ վերաբերում է արտաքին պարտքի հիմնական գումարի մարումներին, ապա, հաշվի առնելով, որ ՀՀ կառավարության պարտավորությունների գծով տարվա ընթացքում կատարվել է ՀՓԻ-ով տրամադրված միայն մեկ վարկի մարում, իսկ Եվրոմիության վարկի մարման համար ստացվել է եվրոյով արտահայտված դրամաշնորհ, ապա փոխարժեքների փոփոխությունը դեռևս էական ազդեցություն չի ունեցել:

2002-2004 թվականների ընթացքում արտաքին պետական և պետական երաշխիքով պարտքի կառուցվածքն ըստ ներգրավման աղբյուրների կրել է էական փոփոխություններ: Մասնավորապես, հիմնականում կրճատվել կամ զրոյացվել է ոչ արտոնյալ պայմաններով Զարգացման և վերակառուցման եվրոպական բանկի, Ռուսաստանի Դաշնության, Թուրքմենստանի, ԱՄՀ-ի կողմից տրամադրված վարկերի տեսակարար կշիռը ամբողջ պարտքի մեջ: Միևնույն ժամանակ, աճել է արտոնյալ պայմաններով Զարգացման միջազգային գործակալությունից, Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամից, Գերմանիայից ստացված վարկերի մասնաբաժինը: 2002-2004 թվականների ընթացքում ՀՀ արտաքին պարտքն ըստ վարկատուների ունի աղյուսակ 2-ում ներկայացված կառուցվածքը:


Աղյուսակ 2. ՀՀ արտաքին պետական և պետական երաշխիքով պարտքի կառուցվածքը

Աղբյուրը	2002		2003		2004	
	մլն ԱՄՆ դոլար	տես. կշիռ (%)	մլն ԱՄՆ դոլար	տես. կշիռ (%)	մլն ԱՄՆ դոլար	տես. կշիռ (%)
Բազմակողմանի	**801.1**	**78.1**	**958.6**	**87.3**	**1063.2**	**89.9**
Համաշխարհային բանկ և Գյուղ. զարգ. գործակալություն	568.0	55.4	709.3	64.6	825.4	69.8
ԱՄՀ	194.8	19.0	214.6	19.5	217.6	18.4
Եվրոպական բանկ (առանց երաշխիքի)	28.8	2.8	23.3	2.1	17.5	1.5
Եվրոմիություն	9.4	0.9	11.4	1.0	2.7	0.2
Երկկողմանի	**205.0**	**20.0**	**131.7**	**12.0**	**114.5**	**9.7**
Ռուսաստան	93.8	9.1	31.0	2.8	0.0	0.0
ԱՄՆ	43.2	4.2	41.5	3.8	39.7	3.4
Գերմանիա	35.2	3.4	49.6	4.5	65.1	5.5
Թուրքմենիա	9.4	0.9	0.0	0.0	0.0	0.0
Ֆրանսիա	3.7	0.4	4.5	0.4	4.8	0.4
Ճապոնիա	1.5	0.1	1.7	0.2	1.7	0.1
Լինսի և Հանթսման հիմնադրամներ	18.1	1.8	3.5	0.3	3.0	0.3
Պետական երաշխիքով վարկեր	**19.4**	**1.9**	**7.3**	**0.7**	**5.2**	**0.4**
ԸՆԴԱՄԵՆԸ	**1025.5**	**100**	**1097.7**	**100**	**1182.9**	**100.0**

Նշենք նաև պետական երաշխիքով վարկերի ծավալների նվազման դրական միտումների մասին: Մասնավորապես, 2004 թվականի ընթացքում ոչ միայն պետական երաշխիքով նոր վարկեր չեն ներգրավվել, այլև իրականացվել են նախկինում ներգրավված վարկերի մարումներ, ինչի արդյունքում պետական երաշխիքով վարկերի ծավալները նախորդ տարվա համեմատությամբ նվազել են 2.1 մլն դոլարով և կազմել 5.2 մլն դոլար:

2004 թվականին հիմնականում շարունակվել են նախորդ տարիներին հաստատված վարկային ծրագրերի շրջանակներում իրականացվող աշխատանքները, որի պատճառով էլ արտաքին պետական պարտքի օգտագործման ուղղությունները նախորդ տարիների համեմատ գրեթե չեն փոփոխվել՝ տնտեսությունում կառուցվածքային բարեփոխումներ, էներգետիկայի, գյուղատնտեսության, տրանսպորտի և ծառայությունների բնագավառներ:

ՀՀ արտաքին պետական և պետական երաշխիքով պարտքը 2004 թ.՝ ըստ օգտագործման ուղղությունների*



** Ծրագրերի դասակարգումն իրականացվել է ըստ Համաշխարհային բանկի մեթոդաբանության:*

ՀՀ կառավարության կողմից իրականացվող՝ արտոնյալ պայմաններով արտաքին պետական վարկերի ներգրավման և ոչ արտոնյալ պայմաններով պարտքերից հրաժարվելու ռազմավարության արդյունք է 1999-2004 թվականներին ընդհանուր պարտքի կառուցվածքում արտոնյալ վարկերի[4] տեսակարար կշռի աճը (մասնավորապես՝ ժամկետայնության աճ և միջին տոկոսադրույքի նվազում): Պետական արտաքին պարտքի ներգրավման պայմանների, այսինքն՝ արտոնյալության մակարդակի լավացում է արձանագրվել նաև 2004 թվականին: Նախ, ինչպես արդեն նշվել է, տարվա ընթացքում վերաձևակերպվել է Ռուսաստանի հանդեպ ոչ արտոնյալ արտաքին պարտքի մնացած՝ 31 մլն դոլարը (վերաձևակերպված պարտքի մի մասը 5% տոկոսադրույքով էր, իսկ մյուս մասը՝ լողացող LIBOR+1 տոկոսադրույքով, ինչը զգալիորեն բարձր է ՀՀ արտաքին պարտքի միջին տոկոսադրույքից), և երկրորդ՝ տարվա ընթացքում ներգրավվել են միայն բարձր արտոնյալության մակարդակ ունեցող ֆինանսական միջոցներ: Վերջինս իր արտացոլումն է գտել 2004 թվականի արտաքին պարտքի ներկա արժեքում, որը Հայաստանի արտաքին պետական և պետական երաշխիքով պարտքի անվանական արժեքի համեմատ բավականին փոքր է և կազմում է 722.9 մլն դոլար (նախորդ տարի՝ 735.3 մլն դոլար): Ընդ որում, նախորդ տարվա համեմատ արտաքին պարտքի ներկա արժեքի նվազումը պայմանավորված է տարվա ընթացքում միջազգային տոկոսադրույքների (CIRR տոկոսադրույք՝ օգտագործվում է արտաքին պարտքի ՆԱ հաշվարկման ժամանակ՝ որպես զեղչման տոկոսադրույք) աճով: Այսինքն, եթե արտաքին պարտքի ՆԱ հաշվարկման ժամանակ օգտագործենք 2003 թվականի զեղչման տոկոսադրույքները, ապա արտաքին պարտքի ՆԱ-ն 2004 թվականին, նախորդ տարվա համեմատ, կաճի և կկազմի մոտ 758 մլն դոլար:

*Աղյուսակ 3. ՀՀ արտաքին պետական և պետական երաշխիքով պարտքի տրամադրման պայմանները**

	2001	2002	2003	2004
Տոկոսադրույք (%)	1.7	1.4	0.9	0.8
Մարման ժամկետ (տարի)	24	26	29	31
Գրանտ-էլեմենտ (%)	49.0	51.2	51.3	54.1
Արտոնյալ վարկեր (% ամբողջ պարտքի մեջ)	77.3	82.5	92.7	97.3
Հաստատագրված տոկոսադրույքով վարկեր (% ամբողջ պարտքի մեջ)	82	87.6	92.6	96.8

** Հաշվարկված են միջին կշռված ցուցանիշների հիման վրա:*

Սովորաբար արտաքին պարտքի բեռի գնահատման համար արտաքին պարտքը դիտարկում են մի շարք մակրոտնտեսական ցուցանիշների հետ հարաբերության մեջ: Արտաքին պարտքի հարաբերական ցուցանիշները արտաքին պարտքի սպասարկման հետ կապված հնարավոր ռիսկերի բնութագրիչներ են: Այդ ցուցանիշների միջոցով գնահատվում է երկրի վճարունակության և իրացվելիության մակարդակը, դրանք օժանդակում են արտաքին պարտքի արդյունավետ կառավարմանը: Արտաքին պարտքի բեռի գնահատման համար Համաշխարհային բանկն օգտագործում է արտաքին պարտք/ՀՆԱ, արտաքին պարտքի ՆԱ/ՀՆԱ, արտաքին պարտք/ապրանքների և ծառայությունների արտահանում, արտաքին պարտքի ՆԱ/ապրանքների և ծառայությունների արտահանում հարաբերությունները:

Աղյուսակ 4. Արտաքին պարտքի [5] բեռի գնահատման ցուցանիշները և դրանց թույլատրելի սահմանները (ըստ Համաշխարհային բանկի)

Ցուցանիշներ	Պարտքի ծանր բեռ	Պարտքի միջին բեռ	Պարտքի թեթև բեռ
Արտաքին պարտքի ՆԱ/ ապրանքների և ծառայությունների արտահանում	220%-ից բարձր	132-220%	132%-ից ցածր
Արտաքին պարտք/ապրանքների և ծառայությունների արտահանում	275%-ից բարձր [6]	-	-
Արտաքին պարտքի ՆԱ /ՀԱԱ	80% -ից բարձր	48-80%	48% -ից ցածր
Արտաքին պարտք /ՀՆԱ	50%-ից բարձր [6]	-	-

[4] Արտաքին պարտքը համարվում է արտոնյալ, եթե տրամադրված է ցածր տոկոսադրույքով, երկարաժամկետ է և գրանտ-էլեմենտը մեծ է 35%-ից (գրանտ - էլեմենտը արտաքին պարտքի անվանական ծավալների և ներկա արժեքի տարբերության և արտաքին պարտքի անվանական ծավալների հարաբերությունն է /%/):

[5] Արտաքին պարտքի բեռի գնահատման ցուցանիշների հաշվարկի համար Համաշխարհային բանկը, բացի պարտքի ՆԱ-ից, օգտագործում է նաև պարտքի անվանական ծավալները, քանի որ մի շարք երկրների համար հնարավոր չէ հաշվարկել արտաքին պարտքի ՆԱ-ն՝ արտաքին պարտքի վերաբերյալ մանրամասն տեղեկատվության բացակայության պատճառով:

[6] Այս ցուցանիշի գծով Համաշխարհային բանկն ունի միայն առավելագույն սահման:

Նշված հարաբերությունների և դրանց թույլատրելի սահմանների օգնությամբ Համաշխարհային բանկը դասակարգումն[7] իրականացնում է ըստ երկրների արտաքին պարտքի բեռի ծանրության, ընդ որում՝ երկրները խմբավորվում են ըստ բնակչության մեկ շնչին բաժին ընկնող եկամտի չափի: Այդ դասակարգման համաձայն՝ նախկին ԽՍՀՄ երկրների արտաքին պարտքի բեռի ծանրության աստիճանը ներկայացված է աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 5. Համաշխարհային բանկի կողմից նախկին ԽՍՀՄ երկրների դասակարգումը ըստ եկամտի մակարդակի և պարտքի բեռի ծանրության (օգտագործված են 2001-2003 թվականների միջին ցուցանիշները) [8]

1. Միջին եկամտով երկրներ (մեկ շնչին բաժին ընկնող ՀԱԱ-ն 735-ից 9075 ԱՄՆ դոլար միջակայքում է)			2. Ցածր եկամտով երկրներ (մեկ շնչին բաժին ընկնող ՀԱԱ-ն փոքր է 735 ԱՄՆ դոլարից)		
Պարտքի ծանր բեռով	Պարտքի միջին բեռով	Պարտքի թեթև բեռով	Պարտքի ծանր բեռով	Պարտքի միջին բեռով	Պարտքի թեթև բեռով
Էստոնիա	Լիտվա	Բելառուս	Ղրղզստան	Ուզբեկստան	
Լատվիա	Ռուսաստան	Վրաստան	Տաջիկստան	Մոլդովա	
Ղազախստան	Թուրքմենստան	**Հայաստան**			
		Ադրբեջան			
		Ուկրաինա			

2004 թվականին Հայաստանը, Ադրբեջանը, Ուկրաինան և Վրաստանը Համաշխարհային բանկի կողմից ցածր եկամտով երկրներից վերադասակարգվել են որպես միջին եկամտով երկրներ՝ պայմանավորված այս երկրների մեկ շնչին բաժին ընկնող ՀԱԱ աճով:

Ընդ որում, 2004 թվականին Վրաստանում նախորդ տարվա համեմատ լավացել են նաև արտաքին պարտքի կայունությունը գնահատող ցուցանիշները, ինչի արդյունքում այն արտաքին պարտքի միջին բեռով երկրից վերադասակարգվել է որպես արտաքին պարտքի թեթև բեռով երկիր: Սակայն վերջինս հիմնականում տեղի է ունեցել Վրաստանի 2004 թվականի ՀՆԱ-ի և արտահանման ծավալների աճի շնորհիվ, և երկրի արտաքին պարտքի բեռը դեռևս չի կարելի համարել կայուն: Վրաստանի արտաքին պարտքի բեռի նվազմանը նպաստել է նաև 2004 թվականին Փարիզյան ակումբում Հյուստոնյան պայմաններով իրականացված Վրաստանի արտաքին պարտքի թվով երրորդ վերաձևակերպումը, համաձայն որի՝ վերաձևակերպվել է մոտ 161 մլն դոլար արտաքին պարտք (Փարիզյան ակումբում Վրաստանի արտաքին պարտքը վերաձևակերպվել է նաև 2001 և 2002 թվականներին. վերաձևակերպված գումարները համապատասխանաբար կազմել են 114 մլն դոլար և 128 մլն դոլար): Ինչպես նշեցինք, ՀՆԱ աճի շնորհիվ 2004 թվականին բավականին լավացել է Վրաստանի արտաքին պետական պարտքի կայունությունը գնահատող արտաքին պետական պարտք/ՀՆԱ հարաբերությունը, ինչը 2004 թվականին կազմել է 33.7 %՝ նախորդ տարվա 43.9 %-ի փոխարեն, այն դեպքում երբ Վրաստանի արտաքին պետական պարտքի անվանական ծավալները աճել են և 2004 թվականին կազմել 1762 մլն դոլար՝ 2003 թվականի 1754 մլն դոլարի փոխարեն:

Նախորդ տարվա համեմատ նախկին ԽՍՀՄ երկրներից վատացել է միայն Ղազախստանի արտաքին պարտքի վիճակը, ինչի արդյունքում այն արտաքին պարտքի միջին բեռով երկրից վերադասակարգվել է որպես արտաքին պարտքի ծանր բեռով երկիր: 2004 թվականին, նախորդ տարվա համեմատ, Ղազախստանի արտաքին պարտքը ավելացել է մոտ 40 %-ով և կազմել 32.0 մլրդ դոլար: Արտաքին պարտքի ավելացումը բանկային համակարգի և այլ մասնավոր հատվածի կողմից ներգրավված երկարաժամկետ վարկերի աճի հետևանք է (բանկային համակարգի և այլ հատվածի երկարաժամկետ վարկերը նախորդ տարվա համեմատ աճել են 48.7%-ով և կազմել 22.9 մլրդ դոլար կամ ամբողջ արտաքին պարտքի 71.5%-ը): Ընդ որում, պետական արտաքին պարտքը նախորդ տարվա համեմատ նվազել է 11%-ով և կազմել 2.7 մլրդ դոլար, ինչը ամբողջությամբ պետական կառավարման մարմինների պարտքն է, քանի որ դրամավարկային կարգավորման մարմինները արտաքին պարտավորություններ չունեն: Նշենք

[7] *«Համաշխարհային բանկի վարկառուների հաշվետվությունների համակարգին» (DRS) տվյալներ են տրամադրում 136 երկրներ (այդ թվում՝ Հայաստանը):*


[8] *Օգտագործված են Համաշխարհային բանկի կողմից 2005 թվականին հրատարակած «Գլոբալ զարգացման ֆինանսավորում» (Global Development Finance) տեղեկագրի տվյալները:*

նաև, որ Ղազախստանի 2004 թվականի արտաքին պարտքի մոտավորապես կեսը կազմել են միջֆիրմային վարկերը (16.7 մլրդ դոլար), և եթե հաշվի առնենք այն փաստը որ միջազգային պրակտիկայում այս վարկերը համարվում են ավելի քիչ ռիսկային և այն զտենք արտաքին պարտքից, ապա Ղազախստանի արտաքին պարտքի ցուցանիշները բավականին կլավանան: Մասնավորապես, արտաքին պարտք/ ՀՆԱ ցուցանիշը կկազմի 37.7%՝ 78.6%-ի փոխարեն, իսկ արտաքին պարտք /ապրանքների և ծառայությունների արտահանում ցուցանիշը՝ 67.6 %՝ 140.9% –ի փոխարեն:

Ինչ վերաբերում է միջին եկամտով և պարտքի ծանր բեռով մյուս երկու երկրներին՝ Էստոնիային և Լատվիային, ապա այս երկու երկրներում նախորդ տարվա համեմատ պահպանվել է արտաքին պարտքի նույն կառուցվածքը՝ արտաքին պարտքի հիմնական մասը կազմել է առևտրային բանկերի և այլ մասնավոր հատվածի արտաքին պարտքը (91.2% Լատվիայում և 96.2% Էստոնիայում): Հետևաբար, արտաքին պարտքը այս երկրներում ավելացել է հիմնականում այդ երկու հատվածների արտաքին պարտավորությունների աճի հաշվին: 2004 թվականին Լատվիայում արտաքին պարտքը նախորդ տարվա համեմատ աճել է 4.0 մլրդ դոլարով, որից բանկային համակարգի և այլ մասնավոր հատվածի արտաքին պարտքի աճը կազմել է 3.6 մլրդ դոլար, իսկ Էստոնիայի արտաքին պարտքը աճել է 3.1 մլրդ դոլարով, որից բանկային համակարգի և այլ մասնավոր հատվածի արտաքին պարտքի աճը կազմել է 3.0 մլրդ դոլար: Տարվա ընթացքում աճել է նաև Լատվիայի պետական կառավարման մարմինների արտաքին պարտքը՝ 39.4 %-ով, ինչը պայմանավորված է կառավարության կողմից տարվա ընթացքում մոտ 400 մլն եվրոյի եվրոպարտատոմսերի թողարկմամբ:

2004 թվականին դեռևս շարունակում է պարտքի ծանր բեռով երկիր մնալ Ղրղզստանը, որի արտաքին պարտքի կայունացման նպատակով 2005 թվականին Փարիզյան ակումբում նախատեսվում է Հյուստոնյան պայմաններով իրականացնել արտաքին պարտքի ևս մեկ վերածնակերպում: 2004 թվականին Ղրղզստանի արտաքին պարտքը, նախորդ տարվա համեմատ, աճել է 103.3 մլն դոլարով և կազմել 2427 մլն դոլար, ընդ որում՝ աճել է պետական արտաքին պարտքը՝ 181.5 մլն դոլարով, իսկ բանկային համակարգի ու այլ մասնավոր հատվածի արտաքին պարտքը նվազել է 78.3 մլն դոլարով: Նշենք, սակայն, որ Ղրղզստանում արտաքին պարտքի խնդիրները կապված են պետական արտաքին պարտքի հետ, որը թեև հիմնականում ներգրավված է արտոնյալ պայմաններով (պետական պարտքի 83 %-ը կազմում է արտոնյալ արտաքին պարտքը), սակայն ունի բավականին մեծ ծավալներ՝ 2004 թվականին կազմել է ամբողջ պարտքի 80.6%-ը կամ 1955 մլն դոլար: 2004 թվականին Ղրղզստանի պետական հատվածի հիմնական վարկատուներն են հանդիսացել միջազգային կազմակերպությունները, մասնավորապես՝ Համաշխարհային բանկը, ԱՄՀ-ն, Եվրոպական բանկը, Եվրոմիությունը:

Նախկին ԽՍՀՄ երկրների արտաքին պարտքի կառուցվածքը 2004 թվականին (%)



**Ադրբեջանը և Վրաստանը չեն ներառվել, քանի որ մասնավոր հատվածի պարտքի վերաբերյալ տվյալներ չկան:*

Արտաքին պարտքի իրացվելիությունը գնահատող արտաքին պետական պարտքի և ապրանքների ու ծառայությունների արտահանում հարաբերակցությունը նախկին ԽՍՀՄ երկրների համար 2002-2004 թվականներին ունեցել է հետևյալ դինամիկան:

Աղյուսակ 6. Արտաքին պետական և պետական երաշխիքով պարտք/ապրանքների և ծառայությունների արտահանում (առավելագույն սահմանը՝ 275%):

Երկիր	2002	2003	2004	Միջին (2002-2004)
Ադրբեջան	47.0	46.9	35.5	43.2
Էստոնիա	4.6	5.0	4.4	4.7
Լատվիա	20.0	15.7	18.8	18.2
Լիտվա	32.4	27.5	25.2	28.4
Հայաստան	**147.0**	**121.5**	**120.1**	**129.5**
Ղազախստան	30.1	24.2	12.1	22.1
Ղրղզստան	247.6	238.0	207.5	231.0
Մոլդովա	112.8	95.4	67.1	91.7
Ռուսաստան	86.6	69.5	51.6	69.2
Վրաստան	178.7	137.7	108.0	141.5
Ուկրաինա	43.7	37.5	32.5	37.9
Միջին	**79.8**	**68.8**	**62.1**	**68.7**

2002 - 2004 թվականներին նախկին ԽՍՀՄ երկրներում նշված ցուցանիշը չի գերազանցել առավելագույն սահմանը, թեև Վրաստանում, Ղրղզստանում, Հայաստանում այն բավականին բարձր է: Ընդ որում, Հայաստանի արտաքին պետական պարտքի իրացվելիությունը գնահատող ցուցանիշները զգալիորեն փոխվում են, երբ ապրանքների արտահանումը դիտարկվում է առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի արտահանման ծավալների: Խնդիրն այն է, որ նշված ապրանքախմբի գերակշիռ մաս կազմող մշակված ադամանդի արտահանումը համարվում է վերաարտահանվող ապրանք, դրանից ստացվող հասույթը իրականում միայն այդ ապրանքի մշակման համար կատարվող աշխատանքն է: Հայաստանի արտաքին պետական պարտք/ապրանքների և ծառայությունների արտահանում ցուցանիշը, առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի արտահանման ծավալների, 2004 թվականի համար կազմում է 172.5%[9], որը թեև չի գերազանցում առավելագույն սահմանը, սակայն բավականաչափ բարձր է:

Միևնույն ժամանակ, «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» հոդվածը կազմում է ամբողջ արտահանման մոտ 48%-ը (2002 - 2004 թվականների միջին), այսինքն՝ արտահանումը բավականին բևեռացված է, ինչն էլ, արտաքին պարտքի իրացվելիության առումով, մեծացնում է երկրի խոցելիության աստիճանը արտաքին աշխարհի հնարավոր ազդեցությունների նկատմամբ:

Նշենք, որ նախկին ԽՍՀՄ երկրներից արտահանման բևեռացվածության նման բարձր գործակից ունեն նաև Ղրղզստանը («Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» հոդվածը՝ արտահանման մոտ 44%-ը), Ռուսաստանը «Հանքահումքային արտադրանք» հոդվածը՝ մոտ 58%-ը), Ուկրաինան («Ոչ թանկարժեք մետաղներ» հոդվածը՝ մոտ 40%) և Ադրբեջանը («Հանքահումքային արտադրանք» հոդվածը՝ մոտ 82%):

Արտաքին պարտքի կայունությունը գնահատող մյուս ցուցանիշի՝ արտաքին պետական պարտք / ՀՆԱ դինամիկան 2002-2004 թվականներին նախկին ԽՍՀՄ հանրապետություններում հիմնականում ունի բարելավման միտում:

[9] Ապրանքների արտահանման ծավալներից «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի արտահանման ծավալները հանվել են ամբողջությամբ, քանի որ վերամշակման ընթացքում Հայաստանում նշված ապրանքախմբի համար սահմանված ավելացված արժեքի վերաբերյալ տվյալները բացակայում են: Սակայն, եթե ընդունենք, որ նշված ապրանքախմբի արտահանման ծավալների մոտ 20%-ը ստեղծվել է Հայաստանում և ավելացնենք այդ 20%-ը ապրանքների արտահանման մեջ, ապա արտաքին պետական պարտք/ապրանքների և ծառայությունների արտահանում ցուցանիշը կկազմի 158.7%:

Աղյուսակ 7. Արտաքին պետական և պետական երաշխիքով պարտք/ՀՆԱ (առավելագույն սահմանը՝ 50%):

Երկիր	2002	2003	2004	Միջին (2002-2004)
Ադրբեջան	20.6	19.7	17.7	19.3
Էստոնիա	3.4	3.7	3.5	3.5
Լատվիա	8.2	6.7	8.2	7.7
Լիտվա	17.2	14.3	13.3	14.9
Հայաստան	**43.2**	**38.9**	**32.6**	**38.2**
Ղազախստան	14.4	12.1	6.5	11.0
Ղրղզստան	98.2	91.6	88.4	92.7
Մոլդովա	59.5	51.0	34.1	48.2
Ռուսաստան	30.3	24.4	18.1	24.3
Վրաստան	52.3	43.9	33.7	43.3
Ուկրաինա	24.1	21.6	19.9	21.9
Միջին	33.8	29.8	25.1	29.5

Արտաքին պետական պարտքի վիճակը բնութագրող արտաքին պարտք/ՀՆԱ ցուցանիշը 2004 թվականին նախորդ տարվա համեմատ լավացել է բոլոր երկրներում, բացառությամբ Լատվիայի: Նշված ցուցանիշը հատկապես լավացել է Մոլդովայում, Վրաստանում, Ռուսաստանում և Հայաստանում:

2004 թվականին Մոլդովայի արտաքին պետական պարտքի բեռի գնահատման ցուցանիշների լավացումը պայմանավորված է Մոլդովայի կառավարության կողմից տարվա ընթացքում արտաքին պետական պարտքի հետգնման և վերածնակերպման պայմանագրերի կնքմամբ[10]: Արդյունքում՝ Մոլդովայի արտաքին պետական և պետական երաշխիքով պարտքը 2004 թվականին, նախորդ տարվա համեմատ, նվազել է 12.5 %-ով և կազմել 884.1 մլն դոլար: Ի տարբերություն արտաքին պետական պարտքի, Մոլդովայի արտաքին պարտքը տարվա ընթացքում չի փոխվել և կազմել է 1924.5 մլն դոլար: Փոփոխվել է միայն արտաքին պարտքի կառուցվածքը, այսինքն, եթե մինչև 2003 թվականը արտաքին պարտքի 50%-ից ավելին կազմել է արտաքին պետական և պետական երաշխիքով պարտքը, ապա 2004 թվականին արտաքին պարտքի 46%-ը կազմել է արտաքին պետական և պետական երաշխիքով պարտքը, իսկ 54%-ը՝ մասնավոր հատվածի արտաքին պարտքը: Ընդ որում, մասնավոր հատվածի արտաքին պարտքը 2004 թվականին ավելացել է 13.8 %-ով և կազմել 1040.4 մլն դոլար, ինչը հիմնականում տեղի է ունեցել վարկերի և առևտրային վարկերի աճի հաշվին:

2004 թվականին Ռուսաստանի արտաքին պետական պարտքի բեռի գնահատման ցուցանիշները լավացել են, քանի որ պետական արտաքին պարտքի անվանական արժեքը նվազել է, իսկ ՀՆԱ-ն և ապրանքների ու ծառայությունների արտահանումը՝ աճել: 2004 թվականին պետական արտաքին պարտքը կազմել է 105.1 մլրդ դոլար, որտեղ ԽՍՀՄ-ից փոխանցված արտաքին պարտքը նախորդ տարվա համեմատ նվազել է 2.2 մլրդ դոլարով և կազմել 55.9 մլրդ դոլար, իսկ նոր պարտքը ավելացել է 1 մլրդ դոլարով և կազմել 39.6 մլրդ դոլար: ԽՍՀՄ-ից «ժառանգած» արտաքին պարտքը հիմնականում նվազել է Միջազգային ներդրումային բանկի և Տնտեսական համագործակցության միջազգային բանկի հանդեպ պարտավորությունների վերածնակերպման արդյունքում: Ընդ որում, 2004 թվականին արտաքին պետական պարտքը կազմել է ամբողջ պարտքի 49.8 %-ը, իսկ ամբողջ արտաքին պարտքը նախորդ տարվա համեմատ ավելացել է 25.7 մլրդ դոլարով և կազմել 211.4 մլրդ դոլար:

Եզրակացություն

Վերջին տարիներին Հայաստանի արտաքին պետական պարտքի արդյունավետ կառավարման արդյունքում զգալիորեն բարելավվել են երկրի արտաքին պարտքի բեռը գնահատող ցուցանիշները, ընդհանուր պարտքի մեջ ավելացել է արտոնյալ պայմաններով ներգրավված արտաքին պարտքի կշիռը, ինչպես նաև չեն կուտակվել ժամկետանց պարտավորություններ: Բացի այդ, արտաքին պարտքի ցուցանիշ-

[10] Մոլդովայի կառավարությունը Գազպրոմից գեղչով հետ է գնել 114 մլն դոլար անվանական արժեքով պետական պարտատոմս, վերածնակերպել է Թուրքիայի և Ռումինիայի հետ նախկինում կնքած երկկողմանի համաձայնագրերը, ինչպես նաև մարել է Յուլետ Պակարտ կազմակերպության պարտքի մի մասը, իսկ մյուս մասը ներվել է:

ների վրա դրական ազդեցություն է ունեցել նաև վերջին տարիներին արտահանման և ՀՆԱ ծավալների բարձր աճի տեմպը, ինչը նույնպես հնարավորություն է տվել խուսափել արտաքին պարտքի խնդիրներից: Նշենք, սակայն, որ Հայաստանի արտահանման կենտրոնացվածությունն ըստ ապրանքատեսակների դրսևորում է աճի միտում (մասնավորապես՝ 2004 թվականին «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ և դրանցից իրեր» և «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբերը կազմել են արտահանման մոտ 60.4%-ը), ինչն էլ, արտաքին պարտքի իրացվելիության առումով, զգալիորեն մեծացնում է երկրի խոցելիության աստիճանը արտաքին աշխարհի հնարավոր ազդեցությունների նկատմամբ:

Հայաստանի արտաքին պետական պարտքի վիճակի լավացումը երևում է, երբ համադրում ենք նախկին ԽՍՀՄ երկրների արտաքին պետական պարտքի համապատասխան ցուցանիշների հետ: Ընդ որում, դեռևս 2000-2002 թվականներին Հայաստանը, Ղրղզստանը, Վրաստանը, Մոլդովան, Տաջիկստանը և Ուզբեկստանը ցածր եկամտով ԱՊՀ այն երկրներից էին, որոնք ունեին արտաքին պետական պարտքի կայունության խնդիրներ: Սակայն ներկայումս Հայաստանը ոչ միայն չունի արտաքին պարտքի վճարունակության և իրացվելիության խնդիրներ, այլև նրա արտաքին պարտքի բեռը բնութագրող ցուցանիշները, վերոնշյալ երկրների համեմատությամբ, բավականին բարելավվել են:

Ըստ Համաշխարհային բանկի դասակարգման՝ 2004թ. Հայաստանը համարվել է միջին եկամտով երկիր, ինչը ենթադրում է, որ Համաշխարհային բանկի կողմից Հայաստանին արտոնյալ պայմաններով տրամադրվող վարկերը արդեն փոխարինվելու են ոչ արտոնյալ պայմաններով տրամադրվող վարկերով: Մասնավորապես, համաձայն Համաշխարհային բանկի կողմից Հայաստանում իրականացվող ռազմավարության՝ 2005-2008 թվականներին Հայաստանում գործելու է «Երկրի օժանդակման ռազմավարության» թվով 4-րդ ծրագիրը, որի շրջանակներում Հայաստանին Միջազգային զարգացման գործակալությունը (IDA) տարեկան տրամադրելու է մոտ 45 մլն դոլար: Իսկ արդեն 2008 թվականից նախատեսվում է, որ Հայաստանին ավելի ցածր արտոնյալության աստիճանով վարկեր է տրամադրելու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկը (IBRD): Հետևաբար, արտաքին պետական պարտքի կառավարման տեսանկյունից կարևորվում է ապագայում նոր պետական պարտքի ներգրավման ծավալների հնարավորինս կրճատումը: Այսինքն՝ արտաքին պետական պարտքի կառավարման ռազմավարությունը պետք է ուղղված լինի Հայաստանի արտաքին պարտքի մեջ պետական պարտքի տեսակարար կշռի նվազմանը: Նախկին ԽՍՀՄ երկրներից՝ Էստոնիայի, Լատվիայի, Լիտվայի, Բելառուսի և Ղազախստանի պետական հատվածի արտաքին պարտքը կազմում է այդ երկրների ամբողջ արտաքին պարտքի շատ փոքր մասը (2003-2004 թվականներին այս երկրների ընդամենը պարտքի մեջ արտաքին պետական պարտքի տեսակարար կշռի միջին ցուցանիշը կազմել է մոտ 14%), իսկ ինչ վերաբերում է Ռուսաստանին, Մոլդովային, ապա այս երկրներում 2004 թվականին արձանագրվել է ընդամենը արտաքին պարտքում պետական պարտքի տեսակարար կշռի նվազում, ինչի միջինացված ցուցանիշը այս երկրների համար 2004 թվականին կազմել է 50%՝ նախորդ տարվա 57%-ի փոխարեն:

Օգտագործված գրականություն

1. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2005 թվականի հունվար-մայիսին, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2005
2. Հայաստանի Հանրապետության վճարային հաշվեկշիռ 2000-2004, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2005
3. “Global development finance: Mobilizing finance and Managing vulnerability”, World bank, 2005
4. Ղազախստանի, Լատվիայի, Մոլդովայի և Ադրբեջանի Ազգային բանկերի 2004 թվականի տարեկան հաշվետվություններ
5. Ïëàòåæíûé áàëàíñ è âíåøíèé äîëã Ðîññèéñêîé Ôåäåðàöèè 2004 ãîäà, Öåíòðàëüíûé áàíê ÐÔ, Ìîñêâà, 2005
6. Դրամավարկային և բանկային վիճակագրության տեղեկագիր, Վրաստանի ազգային բանկ, 2004
7. International Financial Statistics, September 2005, IMF, Washington, 2005

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌՆ ՈՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԴԻՐՔԸ 2004 ԹՎԱԿԱՆԻՆ

Վիճակագրության վարչություն
Արտաքին հատվածի վիճակագրության բաժին

Վճարային հաշվեկշիռն ու միջազգային ներդրումային դիրքը[1] տվյալ երկրի և արտաքին աշխարհի միջև իրականացված տնտեսական բոլոր գործառնությունների վիճակագրական արտացոլումն է: Եթե վճարային հաշվեկշիռը արտացոլում է ժամանակի որոշակի միավորի ընթացքում՝ 1 տարում իրականացված գործառնությունները, ապա միջազգային ներդրումային դիրքն արտացոլում է նախկինում իրականացված բոլոր տնտեսական գործառնությունների հետևանքով արտաքին աշխարհի նկատմամբ ձևավորված երկրի ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները ժամանակի որոշակի պահի դրությամբ:

Երկրի վճարային հաշվեկշիռն ու միջազգային ներդրումային դիրքը, վիճակագրական ցուցանիշներ ընդգրկելուց բացի, կարևորագույն բնութագրիչներ են ինչպես տնտեսական քաղաքականություն մշակողների և իրականացնողների, այնպես էլ ներդրողների և ընդհանրապես, տնտեսավարող սուբյեկտների համար: Դա է պատճառը, որ հատկապես վերջին տարիների տնտեսական ինտեգրման, ինչպես նաև ֆինանսական ճգնաժամերից հետո, բավականին լուրջ ուշադրություն է դարձվում ինչպես վերը նշված ցուցանիշների հավաքագրման վիճակագրության կատարելագործմանը, այնպես էլ առկա ցուցանիշների վերլուծություններին:

Վճարային հաշվեկշռում արտացոլվող ցուցանիշների վերլուծություններ իրականացվում են տարբեր նպատակներով, սակայն նման վերլուծությունները հատկապես կարևոր են կենտրոնական բանկերի համար՝ դրամավարկային քաղաքականության արդյունավետությունը բարձրացնելու տեսանկյունից: ՀՀ ԿԲ-ն ևս դրամավարկային քաղաքականություն իրականացնելիս լուրջ ուշադրություն է դարձնում ՀՀ վճարային հաշվեկշռի հիմնական ցուցանիշների վարքագծին ու դրանց դինամիկային, որոնք իրենց արտացոլումն են գտնում նաև ՀՀ ԿԲ կողմից պատրաստվող տարբեր նյութերում ու աշխատանքային փաստաթղթերում:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

2004 թվականին ՀՀ վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի պակասուրդը, ի տարբերություն նախորդ՝ 2003 թվականի, նվազել է՝ պահպանելով 1998թ-ից սկսված նվազման միտումը: Տեղի են ունեցել կառուցվածքային զգալի փոփոխություններ ամբողջ ընթացիկ հաշվում: Պետք է նշել, որ ընթացիկ հաշվի պակասուրդը ձևավորող երկու հիմնական հոդվածների՝ «Ապրանքների» և «Ծառայությունների» հաշվեկշիռների բացասական մեծության աճը 2004 թվականին ավելի փոքր է եղել, քան նախորդ տարիներին: 2004 թվականին արտաքին տնտեսական գործառնությունների արդյունքում գրանցվել է ինչպես արտահանման, այնպես էլ ներմուծման ծավալների աճի տեմպերի նվազում, ինչը «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի ինչպես արտահանման, այնպես էլ ներմուծման ծավալների զգալի նվազման հետևանք էր:

---

[1] Հայաստանում վճարային հաշվեկշռի և միջազգային ներդրումային դիրքի վերաբերյալ վիճակագրության հավաքագրողն ու պաշտոնական հրապարակողը Ազգային վիճակագրական ծառայությունն է (ԱՎԾ): ՀՀ կենտրոնական բանկը հավաքագրում, ամփոփում, մշակում և ԱՎԾ-ին է ներկայացնում բանկային համակարգին առնչվող տեղեկատվությունը, ինչպես նաև պետական հատվածին առնչվող գործառնությունների մի մասը:

Տարվա ընթացքում զգալիորեն ավելացել են ՀՀ-ից սեզոնային աշխատանքի մեկնածների կողմից ուղարկված միջոցների և արտերկրներից ստացված մասնավոր տրանսֆերտների ծավալները՝ նպաստելով տնտեսությունում տնօրինվող եկամուտների աճին: Ընթացիկ հաշվի վրա նշված հոդվածների աճի ազդեցությունը կարելի է համարել երկակի, քանի որ մի կողմից՝ դրանք ուղղակիորեն նպաստել են ընթացիկ հաշվի պակասուրդի կրճատմանը, մյուս կողմից՝ եկամուտների աճի միջոցով՝ ներմուծման ծավալների աճին: 2004 թվականին զգալիորեն ավելացել են ուղղակի ներդրումով ձեռնարկությունների եկամուտները: Արդյունքում՝ եկամուտների հաշվեկշռում արտացոլվել է վճարված եկամուտների բարձր մակարդակ, որոնց զգալի մասը, սակայն, վերաներդրվել է:

Կապիտալի և ֆինանսական հաշվում աճել է ֆինանսական հաշիվը, նվազել՝ կապիտալ հաշիվը: Կապիտալ հաշվում կտրուկ նվազել են կապիտալ տրանսֆերտները: Ֆինանսական հաշվի աճը պայմանավորված է ուղղակի ներդրումների գրեթե կրկնակի աճով:

Չնայած տարվա ընթացքում կապիտալ հաշվի կրճատման հետևանքով կապիտալի ու ֆինանսական հաշվի նվազմանը, վերջինս գերազանցել է ընթացիկ հաշվի պակասուրդը՝ նպաստելով ՀՀ միջազգային պահուստների համալրմանը:


Աղյուսակ 1. ՀՀ վճարային հաշվեկշիռը 2003-2004 թվականներին (մլն դոլար)

Ցուցանիշներ	2003					2004				
	I եռ.	II եռ.	III եռ.	IV եռ.	2003	I եռ.	II եռ.	III եռ.	IV եռ.	2004
Ընթացիկ հաշիվ	**-57**	**-63**	**-31**	**-38**	**-189**	**-76**	**-47**	**-28**	**-11**	**-162**
Ապրանքներ	-86	-127	-103	-118	-434	-102	-111	-127	-118	-458
Արտահանում	138	184	190	184	696	151	191	172	225	738
Ներմուծում	-224	-311	-293	-302	-1130	-252	-302	-299	-343	-1196
Ծառայություններ	-13	-14	-22	-20	-68	-18	-19	-15	-19	-71
Արտահանում	39	53	58	58	207	45	65	71	65	247
Ներմուծում	-52	-67	-79	-77	-276	-63	-84	-87	-84	-317
Եկամուտներ	13	24	27	31	94	-3	6	13	21	37
Եկամուտ աշխատուժից	22	36	37	40	134	20	42	62	55	179
Եկամուտ ներդրումներից	-9	-12	-10	-8	-39	-23	-37	-49	-34	-142
Ընթացիկ տրանսֆերտներ	29	55	67	68	218	47	77	102	104	330
Պետական	2	15	23	20	60	8	12	18	23	61
Մասնավոր	27	39	44	48	158	39	65	84	81	269
Կապիտալի և ֆինանսական հաշիվ *(առանց ԿԲ ՁԱՄ փոփոխության)*	**38**	**79**	**68**	**51**	**236**	**54**	**38**	**39**	**59**	**190**
Կապիտալ հաշիվ	9	28	31	22	90	7	9	11	8	34
Ֆինանսական հաշիվ	29	51	38	29	146	47	29	28	52	156
Ուղղակի ներդրումներ	18	5	87	11	121	66	33	55	63	217
Պորտֆելային ներդրումներ	-1	1	0	0	0	-31	26	1	1	-3
Այլ ներդրումներ	12	45	-49	18	26	12	-30	-27	-12	-58
Ակտիվներ	-4	-27	-13	-20	-64	-20	-20	-65	-37	-142
Կառավարություն	1	2	0	-1	2	0	-1	-13	-6	-20
Բանկեր	1	-30	-8	-16	-53	1	-9	-46	-8	-63
Այլ հատվածներ	-6	1	-5	-3	-13	-21	-10	-6	-23	-60
Պարտավորություններ	16	71	-36	38	89	32	-10	37	25	84
Կառավարություն	4	29	-52	16	-3	-19	2	18	37	38
Բանկեր	-6	8	3	6	11	36	-20	25	-9	33
Այլ հատվածներ	19	35	12	16	82	15	7	-6	-3	13
ԿԲ ՁԱՄ փոփոխություն	**25**	**-22**	**-25**	**-24**	**-45**	**15**	**11**	**-10**	**-43**	**-28**
Սխալներ և բացթողումներ	**-6**	**6**	**-13**	**10**	**-1**	**7**	**-1**	**-2**	**-5**	**-1**


Ապրանքների արտահանում

Ապրանքների արտահանումը (կրեդիտ) 2004 թվականին կազմել է 738.3 մլն դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով 6.1%-ով (FOB գներով արտահանումը կազմել է 722.9 մլն դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով 5.4%-ով): Ընդ որում, առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» հոդվածի ցուցանիշի, արտահանումն աճել է 27.1 %-ով՝ նախորդ տարվա 35.2% աճի փոխարեն: 2004 թվականին «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի արտահանման ծավալները նախորդ տարվա համեմատ զգալի նվազել են՝ 51.4 մլն ԱՄՆ դոլարով կամ 14.7%-ով: Նման նվազումը կապված էր Ռուսաստանի չմշակված ալմաստների շուկայի ազատականացմամբ, որի հետևանքով բարձրացան ներմուծվող հումքի գները, ինչպես նաև հնարավոր դարձավ այդ երկրից չմշակված ալմաստները արտահանել այլ՝ Հայաստանի համեմատ ավելի էժան աշխատուժ ունեցող երկրներ և մշակել դրանք այնտեղ:

«Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի և այլ ապրանքախմբերի արտահանման դինամիկան



Արտահանման կառուցվածքն ըստ ապրանքախմբերի



2004 թվականին կտրուկ ավելացել են «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» և «Հանքահումքային ապրանքներ» ապրանքախմբերի արտահանման ծավալները՝ պայմանավորված ինչպես նշված ապրանքախմբերի ծավալների աճով, այնպես էլ միջազգային շուկայում ոչ թանկարժեք մետաղների գների բարձրացմամբ: Այսպես օրինակ՝ սև մետաղների գները տարվա ընթացքում


բարձրացել են մոտ 20 %-ով, իսկ պղնձինը՝ մոտ 60 %-ով: Հիմնականում ավելացել է երկաթամիահալվածքի, պղնձի և մոլիբդենի արտահանումը: Առանց վերոնշյալ երկու ապրանքախմբերի արտահանման ծավալները հաշվի առնելու՝ արտահանումը նվազել է 10.9 %-ով: 2004 թվականին նվազել է արտահանվող ապրանքների ապրանքային բևեռացման[2] ցուցանիշը՝ կազմելով 49.1% (նախորդ տարի՝ 54.9%)՝ հիմնականում արտահանման մեջ «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի տեսակարար կշռի նվազման հաշվին: Չնայած ցուցանիշի նվազմանը, բևեռացումը դեռևս մնում է բարձր, ինչի մասին է վկայում այն փաստը, որ 2004 թվականին 3 հիմնական ապրանքախմբեր կազմել են ամբողջ արտահանման 74.2%-ը:

Աղյուսակ 2. Արտահանման ապրանքային և աշխարհագրական բևեռացում (%)

	1999	2000	2001	2002	2003	2004
Ապրանքային բևեռացում	49.0	47.2	43.8	54.4	54.9	49.1
Աշխարհագրական բևեռացում	43.3	34.8	31.6	33.0	34.1	30.3

2004 թվականին արձանագրվել է նաև արտահանման աշխարհագրական բևեռացման ցուցանիշի[3] նվազում՝ 30.3 %՝ նախորդ տարվա 34.1%-ի փոխարեն:

Արտահանման կառուցվածքը ըստ հիմնական երկրների



1. Ռուսաստան, 2. Բելգիա, 3. Շվեյցարիա, 4. Գերմանիա, 5. Իսրայել, 6. Իրան, 7. ԱՄՆ, 8. Այլ երկրներ

2004 թվականին ԱՊՀ անդամ երկրներից ավելացել են Վրաստան (արտահանվում է հիմնականում էլեկտրաէներգիա, ցեմենտ և սուրճ) արտահանվող ապրանքների ծավալները՝ 10.3 մլն դոլարով: Այլ երկրներից՝ ավելացել են արտահանման ծավալները Գերմանիա՝ 38.8 մլն դոլարով (արտահանվում է հիմնականում ոչ թանկարժեք մետաղներ, դրանցից իրեր և դրանց հանքանյութեր), Չինաստան՝ 17.2 մլն դոլա-

---

[2] *Հաշվարկվում է հետևյալ բանաձևի օգնությամբ.*

$$K = \frac{\sqrt{\sum_{i=1}^{n} x_i^2}}{X} * 100,$$ *որտեղ՝*

K-ն բևեռացման գործակիցն է, x_i-ը՝ i ապրանքի արտահանման (ներմուծման) ծավալը, X–ը՝ Հայաստանի ամբողջ արտահանման (ներմուծման) ծավալը: Մեկ ապրանքի արտահանման (ներմուծման) դեպքում ցուցանիշը հավասար կլինի 100%-ի. որքան ապրանքախմբերի թվաքանակը մեծ է, այնքան բևեռացման ցուցանիշը փոքր է:

[3] *Հաշվարկվում է հետևյալ բանաձևի օգնությամբ.*

$$K = \frac{\sqrt{\sum_{i=1}^{n} x_i^2}}{X} * 100,$$ *որտեղ՝*

K-ն բևեռացման գործակիցն է,
X_i-ը՝ արտահանման (ներմուծման) ծավալն է i երկիր,
X –ը՝ Հայաստանի ամբողջ արտահանման (ներմուծման) ծավալը:

րով (արտահանվում է հիմնականում մոլիբդենի հանքաքար և խտանյութ), ԱՄՆ՝ 14.5 մլն դոլարով (արտահանվում է ոսկերչական իրեր, ոսկի, նիկելի արտադրանք), Շվեյցարիա՝ 12.7 մլն դոլարով (արտահանվում է հիմնականում կիսամշակ և անմշակ ոսկի, երկաթամիահալվածք, պղնձի հանքանյութ), Իտալիա՝ 9.1 մլն դոլարով (արտահանվում է հիմնականում մանածագործական իրեր): Մյուս կողմից՝ կտրուկ նվազել են արտահանման ծավալները Իսրայել՝ 44.0 մլն դոլարով (արտահանվում է հիմնականում ադամանդ) և Մեծ Բրիտանիա՝ 41.1 մլն դոլարով (արտահանվել է հիմնականում ժամացույցներ և դրանց մասեր): Ավելի փոքր չափով նվազել են արտահանման ծավալները Ռուսաստան, Բելգիա և ԱՄԷ:

Աղյուսակ 3. Ըստ ապրանքների արտահանման բևեռացման ցուցանիշը (%) [4]

Երկիր	2003	2004
Ադրբեջան	86.2	82.5
Էստոնիա	35.1	35.6
Լիտվա	33.3	34.8
Լատվիա	40.3	37.1
Հայաստան	54.9	49.1
Ղրղզստան	49.5	47.7
Մոլդովա	45.7	42.8
Ռուսաստան	59.9	60.1
Ուկրաինա	44.1	44.9
Միջին	***49.9***	***48.3***

Աղյուսակ 4. Արտահանման աշխարհագրական բևեռացման ցուցանիշը (%)

Երկիր	2003	2004
Ադրբեջան	53.7	47.2
Էստոնիա	34.0	32.1
Լատվիա	40.0	37.5
Լիտվա	26.3	25.1
Հայաստան	34.1	30.3
Ղրղզստան	40.7	40.7
Մոլդովա	47.3	44.7
Ռուսաստան	21.1	21.5
Ուկրաինա	23.3	22.8
Միջին	***35.6***	***33.6***

Հայաստանի ապրանքային բևեռացման ցուցանիշը, ի տարբերություն աշխարհագրական բևեռացման ցուցանիշի, բարձր է նախկին ԽՍՀՄ երկրների համարժեք ցուցանիշի միջին արժեքից (աղյուսակներ 3, 4): ԱՊՀ այլ երկրներից հատկապես բարձր է Ադրբեջանի ինչպես ըստ ապրանքների, այնպես էլ ըստ երկրների բևեռացման ցուցանիշը: Ապրանքներում դա պայմանավորված է «Հանքահումքային մթերքների» արտահանման զգալի ծավալներով (հիմնականում՝ նավթ, նավթամթերք), ինչը կազմում է ամբողջ արտահանման 82.3%-ը, իսկ արտահանվող ապրանքների 44.7%-ը արտահանվում է Իտալիա՝ հանգեցնելով արտահանման աշխարհագրական բևեռացման բարձր մակարդակի: Բարձր է նաև Ռուսաստանի արտահանման ապրանքային կենտրոնացվածությունը, ինչն էլ հետևանք է «Հանքահումքային ապրանքներ» ապրանքախմբի արտահանման մեծ ծավալների (հիմնականում՝ էներգակիրներ): Նշված ապրանքախումբը կազմում է արտահանման 57.7%-ը: Ղրղզստանում մեծ կշիռ ունեն «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի արտահանման ծավալները (հիմնականում՝ ոսկի)՝ ընդհանուր արտահանման մոտ 43.5 %-ը, ինչպես նաև վառելիքի արտահանումը: Ղրղզստանի հիմնական գործընկեր երկիրն է ԱՄԷ-ն, որին բաժին է ընկնում արտահանման մոտ 30 %-ը,

[4] *Նշված երկրների վերաբերյալ տեղեկատվությունը վերցված է ԱՄՀ-ի IFS ամսական պարբերականից և համապատասխան երկրների կենտրոնական բանկերի և ազգային վիճակագրական ծառայությունների՝ INTERNET-ում տեղադրված տնային էջերից:*

մեծ են նաև Ռուսաստան և Ղազախստան արտահանման ծավալները: Նշված գործոնների հետևանքով Ղրղզստանում համեմատաբար մեծ է ինչպես ըստ ապրանքների, այնպես էլ ըստ աշխարհագրական բաշխվածության բևեռացումը: Մոլդովայում ևս զգալի է ինչպես ըստ ապրանքախմբերի, այնպես էլ ըստ երկրների արտահանման բևեռացման ցուցանիշը: Այստեղ արտահանման ծավալների մոտ 65%-ը կազմում են 3 ապրանքախմբեր՝ պատրաստի սննդամթերք, այդ թվում՝ խմիչք, մանածագործական արտադրանք և բուսական ծագման արտադրանք: Արտահանվող ապրանքների շուրջ 59.7%-ը արտահանվում է 3 երկրներ՝ Ռուսաստան (35.7%), Իտալիա (13.9%) և Ռումինիա (10.1%):

Ապրանքների ներմուծում


2004 թվականին ներմուծումը (դեբետ) կազմել է 1196.3 մլն դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով 5.8%-ով (CIF գներով ներմուծումը՝ 1350.7 մլն դոլար, նախորդ տարվա համեմատ աճել է 5.6%-ով): Տարվա ընթացքում ավելացել են հիմնականում «Բուսական ծագման արտադրանք», «Հանքահումքային մթերքներ», «Պատրաստի սննդի արտադրանք» և «Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» ապրանքախմբերի ներմուծման ծավալները՝ համապատասխանաբար 34 մլն դոլարով, 30 մլն դոլարով, 19 մլն դոլարով և 14 մլն դոլարով: Զգալի նվազել են «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» և «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբերի ներմուծման ծավալները՝ համապատասխանաբար 41.6 մլն դոլարով և 15.9 մլն դոլարով:

Ի տարբերություն արտահանման, ներմուծվող ապրանքախմբերի ցրվածությունը ավելի բարձր է: Այդ է վկայում նաև արտահանման նկատմամբ ներմուծման համեմատաբար ցածր բևեռացման ցուցանիշը, ինչը նախորդ տարվա համեմատ ևս նվազել է՝ կազմելով 33%:

Նախորդ տարվա համեմատ 2004 թվականին նվազել է նաև ներմուծման աշխարհագրական բևեռացման ցուցանիշը և կազմել 25.1%: Բևեռացման ցածր ցուցանիշը հետևանք է այն բանի, որ տարիների ընթացքում ավելանում է Հայաստան ապրանքներ ներմուծող գործընկեր երկրների թիվը՝ նվազեցնելով երկրի կախվածությունը այս կամ այն երկրի անբարենպաստ տնտեսական միջավայրի հնարավոր ազդեցություններից:


Աղյուսակ 5. Ներմուծման ապրանքային և աշխարհագրական բևեռացում (%)

	1999	2000	2001	2002	2003	2004
Ապրանքային բևեռացում	32.3	33.1	32.0	33.6	35.0	33.0
Աշխարհագրական բևեռացում	29.1	27.7	28.6	27.7	26.6	25.1



ԱՊՀ անդամ երկրներից ներմուծումը զգալի ավելացել է Ուկրաինայից (հիմնականում ներմուծվում են սիգարետներ և սիգարներ, սև մետաղներ)՝ 25.5 մլն դոլարով, Եվրոմիության անդամ երկրներից՝ Գերմանիայից (հիմնականում ներմուծվում են ծխախոտ, տարբեր սարքեր, մեքենաներ, դեղամիջոցներ և այլն)՝ 20.3 մլն դոլարով, ինչպես նաև Շվեյցարիայից (հիմնականում ներմուծվում է ոսկի)՝ 18.5 մլն դոլարով և Ռումինիայից (հիմնականում ներմուծվում է նավթամթերք)՝ 17.5 մլն դոլարով[5]:

Ներմուծման կառուցվածքը ըստ հիմնական երկրների



1. Ռուսաստան, 2. Բելգիա, 3. Շվեյցարիա, 4. Գերմանիա, 5. Իսրայել, 6. Իրան, 7. ԱՄՆ, 8. Այլ երկրներ

Ի տարբերություն արտահանման, ներմուծման բևեռացումը բավականին ցածր է նախկին ԽՍՀՄ երկրներում (բացառությամբ՝ ըստ ապրանքախմբերի ներմուծումը Ռուսաստանում, Ուկրաինայում և Ադրբեջանում): Ռուսաստանում դա պայմանավորված է այն հանգամանքով, որ ներմուծման ծավալների մոտ 41.2%-ը կազմում են մեքենա- սարքավորումները, գյուղատնտեսական ապրանքները և քիմիական ու հարակից ճյուղերի արտադրանքը, Ուկրաինայում 53.8%-ը կազմում է հանքահումքային մթերքների ու մեքենա-սարքավորումների ներմուծումը, Ադրբեջանում 62.7%-ը կազմում են մեքենա-սարքավորումները, ոչ թանկարժեք մետաղներն ու հանքահումքային մթերքները: Ուկրաինայում ներմուծման 47%-ը իրականացվում է Ռուսաստանից: Ղրղզստանի ներմուծման 51.6%-ը՝ Ռուսաստանից և Ղազախստանից, ինչի հետևանքով էլ մեծ են նշված երկրների ներմուծման աշխարհագրական բևեռացման ցուցանիշները:

Աղյուսակ 6. Ըստ ապրանքների ներմուծման բևեռացման ցուցանիշը (%)

Երկիր	2003	2004
Ադրբեջան	38.4	40.2
Էստոնիա	36.2	36.3
Լիտվա	33.9	34.3
Լատվիա	31.7	31.7
Հայաստան	35.0	33.0
Ղրղզստան	35.6	36.3
Մոլդովա	32.4	32.0
Ռուսաստան	47.1	48.7
Ուկրաինա	44.9	43.6
Միջին	***37.2***	***37.3***

[5] Ուկրաինայից, Գերմանիայից, Շվեյցարիայից և Ռումինիայից ապրանքների ներմուծումը հաշվարկված է ըստ ծագման երկրի հայտանիշի կազմված տվյալների հիման վրա:

Աղյուսակ 7. Ներմուծման աշխարհագրական բևեռացման ցուցանիշը (%)

Երկիր	2003	2004
Ադրբեջան	25.6	25.9
Էստոնիա	25.8	30.8
Լիտվա	33.4	32.8
Լատվիա	38.7	38.0
Հայաստան	26.6	25.1
Ղրղզստան	40.3	41.8
Մոլդովա	37.7	39.0
Ռուսաստան	24.1	24.4
Ուկրաինա	40.5	43.2
Միջին	*32.6*	*33.4*

Ներմուծման միջին հակվածության ցուցանիշը՝ ներմուծում/ՀՆԱ հարաբերակցությունը 2004 թվականին նվազել է՝ ապրանքների ու ծառայությունների ներմուծման աճի տեմպերի նկատմամբ համախառն ներքին արդյունքի առաջանցիկ աճի հետևանքով: Ընդ որում, դոլարային արտահայտությամբ համախառն ներքին արդյունքի աճը զգալիորեն գերազանցել է դրամային արտահայտությամբ համախառն ներքին արդյունքի աճը՝ պայմանավորված դրամի արժեքավորմամբ: Ուսումնասիրված երկրներում ևս գրանցվել են ԱՄՆ դոլարի նկատմամբ ազգային արժույթների արժեքավորման միտումներ, սակայն որոշ երկրներում ապրանքների ու ծառայությունների աճի տեմպերը գերազանցել են արժեքավորման աճի տեմպերը, հետևաբար նաև՝ դոլարային արտահայտությամբ ՀՆԱ աճի տեմպերը, և նշված երկրներում ավելացել է ներմուծման նկատմամբ միջին հակվածությունը: Օրինակ՝ Ռուսաստանում, Մոլդովայում և Ուկրաինայում ազգային արժույթի արժեքավորման հետևանքով դոլարային արտահայտությամբ ՀՆԱ աճի տեմպերը զգալի են եղել, ինչն էլ գերազանցել է ապրանքների ու ծառայությունների ներմուծման աճի տեմպերը և հանգեցրել ներմուծման նկատմամբ միջին հակվածության ցուցանիշի նվազմանը: Մյուս երկրներում, օրինակ Ադրբեջանում, նշված ցուցանիշի զգալի աճը հիմնականում պայմանավորվել է նավթի արդյունահանման ճյուղում կատարված խոշոր ներդրումների արդյունքում ներկրվող սարքավորումների ու միջազգային պայմանագրերով ոչ ռեզիդենտների կողմից այդ հատվածում մատուցվող ծառայությունների աճով: Էստոնիայում ևս ապրանքների ու ծառայությունների ներմուծումը զգալիորեն գերազանցել է ՀՆԱ աճի տեմպերը:

Աղյուսակ 8. Ներմուծման միջին հակվածության ցուցանիշը (%)

Երկիր	1999	2000	2001	2002	2003	2004
Ադրբեջան	41.9	38.4	37.3	51.3	65.6	74.1
Էստոնիա	81.8	91.6	87.5	81.3	81.9	86.1
Լատվիա	54.2	49.5	51.7	51.3	55.1	59.5
Լիտվա	49.2	51.2	55.4	58.4	57.7	59.0
Հայաստան	49.8	50.8	46.3	46.6	49.8	41.7
Ղազախստան	38.5	49.0	49.6	47.9	44.4	44.9
Ղրղզստան	56.5	47.9	37.6	44.6	45.2	51.3
Մոլդովա	67.4	75.4	73.5	77.9	87.3	82.1
Ռուսաստան	27.2	23.5	24.3	24.5	23.9	22.4
Վրաստան	38.8	39.0	40.0	42.4	46.5	47.6
Ուկրաինա	49.5	57.4	53.8	50.7	55.2	53.7
Միջին	*50.4*	*52.2*	*50.6*	*52.5*	*55.7*	*56.6*

Ապրանքների հաշվեկշիռ

Արտաքին ապրանքաշրջանառությունը 2004 թվականին կազմել է 1934.6 մլն դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով 5.9%-ով: Ապրանքների հաշվեկշռի պակասուրդը կազմել է 458.0 մլն դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով 5.5%-ով: Առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» հոդվածի ցուցանիշի՝ ապրանքաշրջանառությունը կազմել է 1343.8 մլն դոլար՝ նա-

խորդ տարվա համեմատ աճելով 17.6 %-ով, իսկ ապրանքների հաշվեկշռի պակասուրդը կազմել է 465.7 մլն դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով 3.1%-ով:

2003-2004 թվականներին ըստ օգտագործման ուղղությունների արտահանվող և ներմուծվող ապրանքախմբերի դինամիկան էականորեն չի տարբերվել նախորդ տարվա ցուցանիշներից, թեև կան որոշ քանակական բարելավումներ:

Աղյուսակ 9. Արտահանման ու ներմուծման կառուցվածքը՝ ըստ ապրանքախմբերի օգտագործման ուղղությունների

Ապրանքախումբ	Ծավալ, մլն դոլար				Տեսակարար կշիռը, %			
	Արտահանում		Ներմուծում		Արտահանում		Ներմուծում	
	2003	2004	2003	2004	2003	2004	2003	2004
Սպառողական ապրանքներ[6]	139.6	159.6	358.7	415.1	20.4	22.1	28.0	30.7
այդ թվում՝								
Մթերք և խմիչքներ	76.4	76.9	165.5	216.5	54.7	48.2	46.1	52.2
Արդյունաբերական պաշարներ	498.0	510.4	546.1	500.6	72.6	70.6	42.7	37.1
Վառելիք և վառելանյութ	11.0	19.8	169.4	202.3	1.6	2.7	13.2	15.0
Կապիտալ ապրանքներ	22.5	23.6	124.0	127.8	3.3	3.3	9.7	9.5
Տրանսպորտային սարքավորումներ, սարքեր և դրանց մասեր	14.5	9.6	80.7	104.3	2.1	1.3	6.3	7.7
Այլ ապրանքներ	0.0	0.0	0.5	0.6	0.0	0.0	0.0	0.0
Ընդամենը	685.6	722.9	1279.5	1350.7	100.0	100.0	100.0	100.0

Տվյալները ցույց են տալիս, որ զգալի ավելացել են տրանսպորտային սարքավորումների, սարքերի և դրանց մասերի ներմուծման ծավալները, ընդ որում, այս ապրանքախմբի ներմուծման զգալի մասը իրականացվում է ֆիզիկական անձանց միջոցով: «Արդյունաբերական պաշարներ» ապրանքախմբի ներմուծման ծավալների նվազումը կապված է հիմնականում «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի ներմուծման ծավալների նվազման հետ: Արտահանման մեջ այդ նվազումը ուղեկցվել է «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի աճով, ինչի շնորհիվ արդյունաբերական պաշարների արտահանումը տարվա ընթացքում ավելացել է:

Աղյուսակ 10. Արտաքին առևտրի փոփոխությունը նախորդ տարվա համեմատ (%)

Ցուցանիշ	Աճ (+), Նվազում (-)	Այդ թվում՝ փոփոխություններ՝ կապված	
		ֆիզիկական ծավալների հետ	գների հետ (դոլարային) [7]
Ապրանքների արտահանում (FOB գներով)	+ 5.4	+8.1	-2.6
Ապրանքների ներմուծում (CIF գներով)	+5.6	-2.3	+7.8

Աղյուսակ 11. Արտահանման գնի և ծավալի փոփոխություն (%) [7]

Ապրանքախումբ	2003			2004		
	Աճ (+), Նվազում (-)	Այդ թվում՝ փոփոխություններ կապված՝		Աճ (+), Նվազում (-)	Այդ թվում՝ փոփոխություններ կապված՝	
		ֆիզիկական ծավալների հետ	գների հետ		ֆիզիկական ծավալների հետ	գների հետ
Ընդամենը	**35.7**	**29.4**	**6.3**	**5.4**	**8.1**	**-2.6**
Մանածագործական իրեր, կաշի և կոշկեղեն [8]	8.8	0.3	8.5	40.7	16.4	24.3

[6] *Ընդգրկված է նաև ֆիզիկական անձանց կողմից առևտրային նպատակներով կատարվող արտահանումն ու ներմուծումը (բացառությամբ մեքենաների ներմուծման և արտահանման, որոնք ներառված են «Տրանսպորտային սարքավորումներ, սարքեր և դրանց մասեր» հոդվածում):*

[7] *Արտահանման և ներմուծման գների հաշվարկման մեթոդաբանությունը տրված է ՀՀ ԿԲ դրամավարկային քաղաքականության վարչության կողմից:*

[8] *Ներառում է «Մանածագործական իրեր», «Կոշկեղեն, հովանոցներ, գլխարկներ», «Կաշվե հումք, մորթի, կաշի և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբերը:*

Թանկարժեք քարեր և մետաղներ	35.8	35.1	***0.7***	-14.7	-4.6	***-10.0***
Հանքահումքային մթերքներ և քիմիական արտադրության ապրանքներ[9]	11.9	-4.3	16.2	92.1	84.7	7.5
Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատ. իրեր	101.9	81.8	***20.0***	52.3	47.5	***4.7***
Գյուղատնտեսական մթերքներ[10]	37.1	27.8	***9.4***	2.1	12.2	***-10.1***
Մեքենաներ, սարքեր և տրանսպորտային միջոցներ[11]	18.7	7.4	***11.3***	-41.9	-46.3	***4.4***
Այլ ապրանքներ[12]	25.7	22.3	3.5	-11.1	-16.2	5.1

Աղյուսակ 12. Ներմուծման գնի և ծավալի փոփոխություն (%) [7,13]

Ապրանքախումբ	**2003**			**2004**		
	Ընդհանուր (+), (-)	Այդ թվում՝ փոփոխություններ՝ կապված		Ընդհանուր (+), (-)	Այդ թվում՝ փոփոխություններ՝ կապված	
		ֆիզիկական ծավալների հետ	գների հետ		ֆիզիկական ծավալների հետ	գների հետ
Ընդամենը	**29.6**	**24.8**	**4.8**	**5.6**	**-2.24**	**7.8**
Մանածագործական իրեր, կաշի և կոշկեղեն[8]	9.1	10.8	-1.7	18.2	15.6	2.6
Թանկարժեք քարեր և մետաղներ	56.0	41.1	15.0	-12.5	-10.1	-2.3
Հանքահումքային մթերքներ և քիմիական արտադրության ապրանքներ[9]	12.0	10.3	1.7	14.2	0.0	14.2
Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատ. իրեր	37.8	35.2	2.5	-20.8	-32.2	11.5
Գյուղատնտեսական մթերքներ[10]	12.0	12.8	-0.7	26.3	16.6	9.7
Մեքենաներ, սարքեր և տրանսպորտային միջոցներ[11]	50.5	46.0	4.5	4.1	-6.0	10.1
Այլ ապրանքներ[12]	21.8	15.9	5.9	16.5	11.0	5.5

Արտահանման գները նվազել են 2.6%-ով: Պետք է նշել, որ զգալի նվազել են ադամանդի, կոնյակի գները, իսկ մյուս կողմից՝ զգալի բարձրացել են պղնձի և այլ ոչ թանկարժեք մետաղների գները (օրինակ՝ պղնձի միջազգային գները բարձրացել են մոտ 60 %-ով): Այսպես, «Թանկարժեք քարեր, մետաղներ» ապրանքախմբի գները նվազել են մոտ 10.0 %-ով, գյուղատնտեսական մթերքներինը[10] 10.1 %-ով, իսկ մանածագործական իրեր, կաշի և կոշկեղենի[8] գները բարձրացել են մոտ 24.3%-ով:

Ներմուծվող ապրանքատեսակների գները բարձրացել են մոտ 7.8%-ով, բացառությամբ «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի ներմուծման գների, մյուս ապրանքախմբերի ներմուծման գները բարձրացել են: Հատկապես մեծ աճ են ունեցել «Հանքահումքային մթերքներ և քիմիական արտադրության ապրանքների», «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրերի» և «Մեքենաներ, սարքեր և տրանսպորտային միջոցների» գները՝ համապատասխանաբար 14.2%, 11.5% և 10.1%: Տարվա ընթացքում զգալի բարձրացել են նավթամթերքի գները. Մեծ Բրիտանական Brent տեսակի նավթի գները տարվա ընթացքում աճել են մոտ 32.7 %-ով (միջինը՝ մոտ 35.3 %-ով): Եթե նավթամթերքի գները մնային նախկին մակարդակի վրա, ապա ներմուծումը մոտ 20 մլն դոլարով ավելի քիչ կլիներ, իսկ ներմուծման գները կաճեին ընդամենը 4.9 %-ով:

Արտահանման և ներմուծման գների նման դինամիկայով պայմանավորված՝ վատացել են ՀՀ արտաքին առևտրի պայմանները[14]:

---

[9] Ներառում է «Հանքահումքային մթերքներ», «Քիմիական արտադրության ապրանքներ», «Պլաստմասսա, կաուչուկ, ռետին և դրանցից պատրաստված իրեր», «Իրեր քարից, գիպսից, ցեմենտից» ապրանքախմբերը:


[10] Ներառում է «Կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք», «Բուսական ծագման արտադրանք», «Կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր», «Պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբերը:

[11] Ներառում է «Մեքենաներ և սարքավորումներ», «Տրանսպորտային միջոցներ», «Սարքեր և ապարատներ» ապրանքախմբերը:

[12] Ներառում է «Փայտ և փայտյա իրեր», «Թուղթ և թղթյա իրեր», «Կահույք և խաղալիքներ», «Արվեստի ստեղծագործություններ» ապրանքախմբերը:

[13] 2003 թվականի ներմուծման գները հաշվարկված են ըստ առևտուր անող երկրի հայտանիշի կազմված տվյալների հիման վրա, իսկ 2004 թվականինը՝ ըստ ծագման երկրի հայտանիշի կազմված տվյալների հիման վրա:

[14] Արտահանման գների ինդեքս / ներմուծման գների ինդեքս:



2004 թվականին զգալիորեն նվազել է տնտեսության բացվածության ցուցանիշը[15] և կազմել 68.9%: Ցուցանիշի նման զգալի նվազումը պայմանավորված էր ինչպես ՀՆԱ-ի՝ ապրանքների ու ծառայությունների արտաքին շրջանառության համեմատ առաջանցիկ աճի տեմպերով, այնպես էլ դոլարի նկատմամբ դրամի արժեքավորման հետևանքով դոլարային արտահայտությամբ ՀՆԱ-ի զգալի աճով: Նշված ցուցանիշի դինամիկան նախկին ԽՍՀՄ երկրներում հիմնականում ունի աճի միտում, թեև մի քանի երկրներում (Մոլդովա, Ռուսաստան) գրանցվել է ցուցանիշի նվազում:


Աղյուսակ 13. Բացվածության ցուցանիշ (%)

Երկիր	1999	2000	2001	2002	2003	2004
Ադրբեջան	69.9	78.5	78.9	95.2	107.6	123.8
Էստոնիա	157.7	179.4	171.2	155.5	156.2	164.3
Լատվիա	98.0	91.6	93.3	92.3	97.4	103.3
Լիտվա	88.3	96.1	105.4	111.4	109.4	111.8
Հայաստան	70.6	74.2	71.8	76.0	81.8	68.9
Ղազախստան	78.0	105.5	97.4	95.8	94.2	98.8
Ղրղզստան	98.7	89.8	74.2	84.3	83.6	93.9
Մոլդովա	119.5	125.2	123.4	130.7	140.8	132.9
Ռուսաստան	70.6	67.6	61.3	59.5	59.0	57.4
Վրաստան	58.3	60.8	65.3	71.7	78.4	78.8
Ուկրաինա	104.9	119.9	109.2	105.8	112.9	115.0
Միջին	***92.2***	***99.0***	***95.6***	***98.0***	***101.9***	***104.4***

Ուսումնասիրելով բացվածության ցուցանիշի առանձին բաղադրատարրերի՝ արտահանում/ՀՆԱ և ներմուծում/ՀՆԱ ցուցանիշները՝ կարելի է նկատել, որ Հայաստանը գտնվում է ոչ այնքան բարենպաստ վիճակում, ավելին, ներմուծում/ՀՆԱ հարաբերությունը ոչ միայն գերազանցում է արտահանում/ՀՆԱ հարաբերությանը, այլև այս ցուցանիշով Հայաստանը զիջում է նշված շատ երկրների: Արտահանում/ՀՆԱ ցուցանիշը միջինը զգալիորեն գերազանցում է ներմուծում/ՀՆԱ ցուցանիշը միայն հումք արտահանող երկրների՝ Ռուսաստանի, Ղազախստանի և Ուկրաինայի դեպքում: Ըստ 1999-2004 թվականներին նախկին ԽՍՀՄ երկրներում արտահանում/ՀՆԱ և ներմուծում/ՀՆԱ միջին ցուցանիշների հիման վրա հաշվարկված տվյալների՝ արտահանում/ՀՆԱ հարաբերակցության մեկ միավոր աճը ներկայացված երկրներում ուղեկցվել է ներմուծում/ՀՆԱ հարաբերակցության մոտ 0.8 միավոր աճով:


*[15] Բացվածության ցուցանիշ = (ապրանքների և ծառայությունների արտահանման և ներմուծման գումար ((արտաքին առևտրի շրջանառություն)*100/ՀՆԱ):*


Ապրանքների և ծառայությունների արտահանում/ՀՆԱ և ներմուծում/ՀՆԱ ցուցանիշները (միջին 1999-2004թթ. համար) նախկին ԽՍՀՄ երկրներում (%)



Ծառայությունների հաշվեկշիռ

Տարվա ընթացքում «Ծառայություններ» հոդվածի պակասուրդը խորացել է 3.5 %-ով՝ կազմելով 70.7 մլն դոլար՝ նախորդ տարվա 68.3 մլն դոլարի փոխարեն: Թեև «Ծառայություններ» հոդվածը աճել է աննշան չափով, սակայն նրա տարրերում զգալի տեղաշարժեր են տեղի ունեցել: Այսպես, տրանսպորտային ծառայություններ հոդվածի բացասական հաշվեկշիռը աճել է 26.8 մլն դոլարով (34.2%): Ընդ որում՝ կապված արտահանման և ներմուծման աճի ցածր տեմպերի հետ՝ բեռնատար տրանսպորտային ծառայությունները աճել են ընդամենը 4.7 մլն դոլարով: Զգալի աճել է ճանապարհորդություններ հոդվածի դրական հաշվեկշիռը՝ 15.1 մլն դոլարով կամ 265.2%-ով: Դրական են եղել նաև կապի ծառայությունների և համակարգչային ծառայությունների հաշվեկշիռները. նախորդ տարվա նկատմամբ աճել են համապատասխանաբար 5.1 մլն դոլար (89.2%) և 6.0 մլն դոլարով (58.5%):






ՀՀ վճարային հաշվեկշռի «Եկամուտներ» և «Ընթացիկ տրանսֆերտներ» հոդվածները 2004 թվականին ունեցել են դրական մնացորդ՝ հանդիսանալով «Ապրանքներ» և «Ծառայություններ» հոդվածների բացասական ճեղքվածքի ֆինանսավորման հիմնական աղբյուրներ: Ընդ որում՝ նշված հոդվածների միջոցով ֆինանսավորվել է ապրանքների ու ծառայությունների հաշվեկշռի բացասական մնացորդի մոտ 69.4%-ը:

Եկամուտների հաշվեկշիռ

«Եկամուտներ» հոդվածի ցուցանիշը կազմել է 36.7 մլն դոլար՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 57.8 մլն դոլարով: Նշված հոդվածի կտրուկ նվազումը կապված է այս հոդվածի արտահոսքի գծով շարժերի կտրուկ աճով: Առաջին հերթին վերջինս աճել է ոչ ռեզիդենտների նախկին ներդրումների դիմաց վճարված եկամուտների կտրուկ աճի հետևանքով: Ընդ որում, աճը գրեթե ամբողջությամբ պայմանավորված է ուղղակի ներդրումների գծով վճարված եկամուտներով, որոնք նախորդ տարվա համեմատ աճել են 102.9 մլն դոլարով: Մյուս կողմից, գրանցվել է նաև սեզոնային աշխատողների եկամուտների արտահոսք, ինչը կազմել է 116.3 մլն դոլար՝ նախորդ տարվա 19.1 մլն դոլարի փոխարեն[16]:



Ընթացիկ տրանսֆերտներ

Ընթացիկ տրանսֆերտները կազմել են 330.4 մլն դոլար. նախորդ տարվա համեմատ ավելացել են 111.9 մլն դոլարով: Ընդ որում, ընթացիկ տրանսֆերտների նման ավելացումը ամբողջությամբ պայմանավորված է մասնավոր հատվածի տրանսֆերտներով: Պետական տրանսֆերտներն ավելացել են չնչին չափով՝ ընդամենը 0.8 մլն դոլարով: Վերջինս տարվա ընթացքում կազմել է 61.0 մլն դոլար, որից 30.4 մլն դոլարը մարդասիրական օգնությունն է, 13.5 մլն դոլարը՝ տեխնիկական օգնությունը, իսկ 19.1 մլն դո-

լարը՝ ֆինանսական օգնությունը: Մասնավոր տրանսֆերտները կազմել են 269.4 մլն դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով 70.2%-ով[16]:

Գործնականում բավականին դժվար է սեզոնային աշխատողների աշխատավարձը մասնավոր տրանսֆերտներից տարանջատելը: Տարանջատման նպատակով, վիճակագրության բացակայության դեպքում, սովորաբար կիրառվում են որոշակի համամասնություններ, բայց վերլուծությունների ընթացքում նպատակահարմար է դրանք դիտարկել միասին՝ որպես ոչ առևտրային բնույթի փոխանցումներ: Այսպես, 2004 թվականին, ըստ վճարային հաշեկշռի, ոչ առևտրային նպատակով իրականացված միջոցների՝ ընթացիկ մասնավոր տրանսֆերտների ու սեզոնային աշխատողների կողմից փոխանցված աշխատավարձի ներհոսքը կազմել է 621.2, իսկ արտահոսքը՝ 173՝ նախորդ տարվա համեմատ ավելանալով համապատասխանաբար 85% և 295 %-ով: Նշված միջոցներից բանկային համակարգով ստացվել են շուրջ 644.3 մլն դոլարի և դուրս են փոխանցվել 171.9 մլն դոլարի միջոցներ: Փոխանցումների ինչպես ներհոսքում, այնպես էլ արտահոսքում զգալի կշիռ ունեն Ռուսաստանն ու ԱՄՆ-ն՝ ներհոսքում համապատասխանաբար 65.0% և 12.2%, իսկ արտահոսքում՝ 39.7% և 12.0%:

Հարկ է նշել, որ նման միջոցների մեծ ներհոսք ունեն նաև նախկին ԽՍՀՄ մի շարք այլ երկրներ՝ պայմանավորված արտասահմանում ապրող միգրանտների և սեզոնային աշխատողների մեծ ծավալներով:


Աղյուսակ 14. Մասնավոր հատվածի ընթացիկ տրանսֆերտների և սեզոնային աշխատողների աշխատավարձի (զուտ) տեսակարար կշիռը ՀՆԱ-ում (%)

Երկիր	2000	2001	2002	2003	2004
Էստոնիա	0.5	0.5	0.4	0.5	1.2
Լատվիա	2.9	2.7	3.9	5.5	5.8
Լիտվա	1.7	2.2	1.4	1.3	2.2
Հայաստան	8.5	8.3	9.4	10.3	12.4
Ղազախստան	-0.4	-0.6	-1.0	-2.0	-2.8
Ղրղզստան	2.3	0.6	1.5	4.2	5.2
Մոլդովա	16.9	18.3	19.8	27.2	29.2
Ռուսաստան	0.1	-0.1	-0.2	-0.3	-0.3
Միջին	***4.1***	***4.0***	***4.4***	***5.8***	***6.6***

Չնայած ՀՀ-ում նշված ցուցանիշի մեծ ծավալներին, ըստ ՀՀ կենտրոնական բանկի գնահատումների՝ դրանք վճարային հաշեկշռում դեռևս թերհաշվառված են: Այսպես, բնակչության ունեցած կանխիկ արտարժույթի գնահատման նպատակով ԿԲ-ն 2004թ. իրականացրել է հարցում, որի արդյունքները ցույց են տալիս, որ մասնավոր, ոչ առևտրային նպատակով փոխանցված միջոցների 53 %-ը ստացվում է բանկային համակարգի միջոցով, իսկ մնացած մասը՝ այլ՝ չհաշվառվող ճանապարհներով: Սակայն այսօր ՀՀ վճարային հաշվեկշռում գրեթե ամբողջությամբ արտացոլվում են միայն բանկային համակարգով կատարված փոխանցումները, ընդ որում՝ որոշ չափով նույնիսկ նվազեցված ցուցանիշով: Օգտագործելով հարցումների ընթացքում ամփոփված տվյալները՝ կարելի է նշել, որ վճարային հաշվեկշռում ոչ առևտրային նպատակով ստացված միջոցների՝ գործոնային եկամուտների ու ընթացիկ տրանսֆերտների թիվը գրեթե կրկնակի թերհաշվառված է:

---

[16] Նշված հոդվածի նման կտրուկ աճը կապված է նաև տվյալների հավաքագրման վիճակագրության բարելավման հետ: Բանն այն է, որ ՀՀ կենտրոնական բանկը ՀՀ առևտրային բանկերից եռամսյակային պարբերականությամբ հավաքագրում է տեղեկատվություն ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և ՀՀ ֆիզիկական անձանց կողմից արտերկիր կատարված փոխանցումների վերաբերյալ, որոնք ներառվում են ՀՀ վճարային հաշվեկշռի մասնավոր տրանսֆերտներ (Ընթացիկ տրանսֆերտներ) և սեզոնային աշխատողների աշխատանքի դիմաց եկամուտներ (Եկամուտ) հոդվածներում: ՀՀ կենտրոնական բանկը բավարար տվյալների բացակայության պատճառով մինչև 2004 թվականը որպես ոչ առևտրային նպատակով իրականացված փոխանցումներ էր դիտարկում բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց անունով և նրանց կողմից կատարված ամբողջ փոխանցումներում միայն դրամական համակարգերի միջոցով (Money Gram, Western Union և այլն) կատարված փոխանցումները: 2004 թվականից ՀՀ կենտրոնական բանկի կողմից մշակված և ներդրված հաշետվական ձևի փոփոխության արդյունքում ամբողջ փոխանցումներն արդեն առևտրային բանկերի կողմից տարանջատվում են ըստ նպատակի՝ առևտրային և ոչ առևտրային և որպես մասնավոր տրանսֆերտներ (ընթացիկ տրանսֆերտներ) և սեզոնային աշխատողների աշխատանքի դիմաց եկամուտներ (եկամուտ) դիտարկվում են վերջիններս, որոնց մեջ ընդգրկված են ինչպես վերը նշված դրամական համակարգերով կատարված փոխանցումները, այնպես էլ ֆիզիկական անձանց կողմից կատարված սովորական բանկային փոխանցումները, որոնց նպատակը ոչ առևտրային է: Նշված փոփոխության արդյունքում աճել է ինչպես ոչ առևտրային նպատակով իրականացված փոխանցումների ներհոսքը, այնպես էլ արտահոսքը:



Ընթացիկ հաշվի բաղադրատարրերի՝ վերը նշված դինամիկաների արդյունքում 2004 թվականին 14.7%-ով նվազել է ընթացիկ հաշվի պակասուրդը և կազմել 161.6 մլն դոլար, որի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում կազմել է 4.5 %՝ նախորդ տարվա 6.7%-ի փոխարեն:

Աղյուսակ 15. Ընթացիկ հաշվի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում (%)


Երկիր	1999	2000	2001	2002	2003	2004
Ադրբեջան	-13.1	-3.2	-0.9	-12.6	-27.8	-30.4
Էստոնիա	-5.7	-5.4	-5.7	-10.1	-12.1	-12.7
Լատվիա	-9.8	-4.6	-7.6	-6.7	-8.3	-12.3
Լիտվա	-11.0	-5.9	-4.7	-5.1	-6.9	-7.1
Հայաստան	-16.6	-14.6	-9.5	-6.2	-6.7	-4.5
Ղազախստան	-1.0	2.0	-6.5	-4.2	-0.9	1.3
Ղրղզստան	-14.7	-9.1	-3.7	-5.0	-5.1	-4.6
Մոլդովա	-6.7	-8.4	-2.3	-4.3	-6.6	-4.4
Ռուսաստան	12.6	18.0	11.0	8.4	8.2	10.3
Վրաստան	-7.1	-8.8	-6.6	-6.5	-9.4	-8.1
Ուկրաինա	5.4	4.7	3.7	7.5	5.8	10.5
Միջին	***-6.2***	***-3.2***	***-3.0***	***-4.1***	***-6.4***	***-5.6***

Ուսումնասիրելով նախկին ԽՍՀՄ հանրապետությունների՝ ՀՆԱ-ում ընթացիկ հաշվի պակասուրդի տեսակարար կշռի դինամիկաները, կարելի է նկատել, որ երկրների մի մասում նկատելի է այս ցուցանիշի նվազման միտում, մի քանի երկրներում էլ ավելացել է դրական ընթացիկ հաշիվը, մյուսներում գրանցվել է ցուցանիշի կտրուկ վատացում: Արդյունքում՝ դժվար է միանշանակ դատողություններ անել երկրներում դրսևորված միտումների մասին: Ադրբեջանում, օրինակ, ընթացիկ հաշվի պակասուրդի խորացումը պայմանավորված էր ապրանքների և ծառայությունների ներմուծման մոտ կրկնակի աճով՝ նավթի արդյունաբերության ճյուղում առավելապես սարքավորումների ու մեխանիզմների ներմուծման ծավալների աճի հետևանքով, ինչն ավելի քան չեզոքացվել է ուղղակի ներդրումների կտրուկ աճով:

ԿԱՊԻՏԱԼԻ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇԻՎ

Վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի պակասուրդի նվազումը ուղեկցվել է կապիտալի ու ֆինանսական հաշվի նվազմամբ: Վերջինս (առանց ԿԲ զուտ արտաքին ակտիվների փոփոխության) 2004 թվականին կազմել է 190.1 մլն դոլար՝ նախորդ տարվա 236.3 մլն դոլարի փոխարեն: Նախորդ տարվա համեմատ նվազել է հատկապես կապիտալ հաշիվը, իսկ ֆինանսական հաշիվը մի փոքր աճել է՝ միաժամանակ դրսևորելով զգալի կառուցվածքային փոփոխություններ:

ՀՀ վճարային հաշվեկշռի կապիտալի ու ֆինանսական հաշվի
բաղադրատարրերի դինամիկան 1999-2004 թվականներին




Կապիտալ հաշիվ

Կապիտալ հաշվի հիմնական բաղադրատարր հանդիսացող կապիտալ տրանսֆերտները տարվա ընթացքում կազմել են 34.3 մլն դոլար: Նշված ցուցանիշը նախորդ տարվա համեմատ նվազել է 61.9 %-ով կամ 55.6 մլն դոլարով: Կապիտալ տրանսֆերտների նվազումը կապված է Լինսի հիմնադրամի գործունեության ավարտով, որի հետևանքով դադարեցվեց ֆինանսական միջոցների ներհոսքը Հայաստան: Համեմատության համար նշենք, որ 2003 թվականին Լինսի հիմնադրամի շնորհիվ մոտ 70.8 մլն դոլար ներհոսք է տեղի ունեցել, իսկ 2004 թվականին՝ ընդամենը 4.9 մլն դոլար: Կապիտալ տրանսֆերտներ հոդվածում 2004 թվականին առաջին անգամ գրանցվել է մասնավոր հատվածի կապիտալ տրանսֆերտների ներհոսք՝ մոտ 16.9 մլն դոլար:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇԻՎ

Ուղղակի ներդրումներ


2004 թվականին ուղղակի ներդրումները նախորդ տարվա համեմատ ավելացել են 96.0 մլն դոլարով (79.7%-ով) և կազմել 216.5 մլն դոլար: Ուղղակի ներդրումներից մոտ 31.0 մլն ԱՄՆ դոլարը Ռուսաստանի հետ «Գույք՝ պարտքի դիմաց» ծրագրի շրջանակներում գրանցված ներդրումներն են: Առանց նշված գործարքի՝ ոչ ռեզիդենտների կողմից ՀՀ ձեռնարկությունների բաժնետիրական կապիտալում կատարված ուղղակի ներդրումները կազմել են 57.6 մլն դոլար՝ նախորդ տարվա 12.4 մլն դոլարի փոխարեն: 107.6 մլն դոլարը նախկինում կատարված ուղղակի ներդրումների արդյունքում ձեռնարկություններում վերաներդրված շահույթն է (2003 թվականին՝ 27.2 մլն դոլար), որն առաջին անգամ գերազանցել է բաժնետիրական կապիտալում ուղղակի ներդրումները: 2004 թվականին գրանցվել են նաև փոքր ծավալով ուղղակի ներդրումներ արտասահմանում՝ 2.3 մլն դոլար: 2004 թվականին աճել են նաև բանկային համակարգում ուղղակի ներդրումները՝ կազմելով 6.1 մլն դոլար՝ նախորդ տարվա ընդամենը 0.8 մլն դոլարի փոխարեն:



Տարվա ընթացքում իրական հատվածում ուղղակի ներդրումների շուրջ 80.7%-ը կատարել են Ռուսաստանի, Հունաստանի, Գերմանիայի, Ֆրանսիայի և Արգենտինայի ներդրողները, ընդ որում, Ռուսաստանի ներդրողները ներդրումների գերակշիռ մասը իրականացրել են գազի բաշխման և ֆինանսական միջնորդության ոլորտներում, Հունաստանի ներդրողները՝ կապի, Գերմանիայի ներդրողները՝ հանքարդյունաբերության, Ֆրանսիայի ներդրողները՝ սննդամթերքի, ներառյալ խմիչքների արտադրության, Արգենտինայի ներդրողները՝ օդային տրանսպորտի ոլորտներում:

Աղյուսակ 16. Ուղղակի ներդրումներ (զուտ) / ՀՆԱ (%)


Երկիր	1999	2000	2001	2002	2003	2004
Ադրբեջան	11.1	2.4	4.0	17.5	31.5	27.6
Էստոնիա	4.3	5.9	5.7	2.2	8.1	6.9
Լատվիա	5.0	5.2	1.4	2.7	2.4	3.9
Լիտվա	4.4	3.3	3.6	4.9	0.8	2.3
Հայաստան	6.6	5.5	3.3	4.7	4.3	6.0
Ղազախստան	9.0	7.0	13.4	9.0	7.4	13.2
Ղրղզստան	3.1	-0.5	-0.1	0.3	2.4	5.9
Մոլդովա	3.2	9.8	3.6	7.9	3.6	3.3
Ռուսաստան	0.6	-0.2	0.1	0.0	-0.4	0.4
Ուկրաինա	1.6	1.9	2.0	1.6	2.8	2.6
Միջին	***4.9***	***4.0***	***3.7***	***5.1***	***6.3***	***7.2***



Հայաստանում և նախկին ԽՍՀՄ հանրապետություններում ուղղակի ներդրումներ/համախառն ներքին արդյունք հարաբերակցության ցուցանիշը բավականին անկանոն վարքագիծ է դրսևորում: Ընդ որում, երկրների հիմնական մասում նկատելի է նշված հարաբերակցության անկում, ինչը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ մի քանի երկրներում սկսել են ավելանալ արտերկրներում կատարվող ուղղակի ներդրումները, ինչի արդյունքում զուտ ներդրումները նվազել են: Նշված երկրներից կարելի է առանձնացնել Ռուսաստանը, որտեղ թեև մեկ շնչի հաշվով ուղղակի ներդրումները և ուղղակի ներդրումներ/ՀՆԱ հարաբերությունը ամենափոքրն են, սակայն իրականում այստեղ կատարվում են մեծ ծավալի ներդրումներ: Պատճառը հիմնականում այլ երկրներում մեծ ծավալի ուղղակի ներդրումներն են, տնտեսության մեծ չափերը: Ղազախստանում ուղղակի ներդրումների վերջին տարվա աճը հիմնականում պայմանավորված է ղազախական ձեռնարկություններին տրված միջֆիրմային վարկերի աճով, մյուս կողմից՝ արտասահմանում նմանատիպ վարկերի մարմամբ:

Պորտֆելային ներդրումներ

2004 թվականին ևս, ինչպես և նախորդ տարիներին, պորտֆելային ներդրումների ծավալները մեծ չեն եղել և կազմել են ընդամենը -2.9 մլն դոլար (զուտ), թեև եռամսյակների ընթացքում դրանք զգալի ծավալներ են ունեցել, սակայն դրանց կարճաժամկետ բնույթի հետևանքով տարեկան ցուցանիշը բավականին փոքր է գրանցվել: Պորտֆելային ներդրումներում համեմատաբար մեծ տեսակարար կշիռ են ունեցել ՀՀ բանկերի կապիտալում ոչ ռեզիդենտների պորտֆելային ներդրումները, որոնք կազմել են 1.4 մլն դոլար: Մյուս կողմից, էապես նվազել են ՀՀ կառավարության թողարկած և ոչ ռեզիդենտների կողմից ձեռք բերված պարտատոմսերը, որոնք տարվա ընթացքում նվազել են 3.7 մլն դոլարով: 2004 թվականի վերջի դրությամբ ոչ ռեզիդենտների մասնաբաժինը շրջանառության մեջ գտնվող՝ ՀՀ կառավարության կողմից թողարկված պետական պարտատոմսերի ընդհանուր ծավալում կազմել է ընդամենը 0.2 %՝ նախորդ տարվա վերջի 4.8%-ի փոխարեն:



Այլ ներդրումներ

Վճարային հաշվեկշռի մեթոդաբանության համաձայն՝ «Այլ ներդրումներին» են դասվում այն ֆինանսական հոսքերը, որոնք ֆինանսական հաշվի ուղղակի և պորտֆելային ներդրումներում ներառված չեն: Դրանք դասակարգվում են ըստ հետևյալ հիմնական ֆինանսական գործիքների՝ առևտրային վարկեր, բանկային վարկեր և փոխառություններ, կանխիկ արտարժույթ և ավանդներ, այլ ակտիվներ ու պարտավորություններ:

Պետք է նշել, որ «Այլ ներդրումներ» հոդվածը ավանդաբար հանդիսացել է ընթացիկ հաշվի պակասուրդի ֆինանսավորման կարևոր աղբյուր: Սակայն 2004 թվականին շարունակվել է 1996 թվականից սկսված՝ այս հոդվածի նվազման միտումը, և արդյունքում «Այլ ներդրումներ» հոդվածի հաշվեկշիռը տարվա ընթացքում նվազել է 86.7 մլն դոլարով և կազմել -59.0 մլն դոլար: Նվազումը պայմանավորվել է մի կողմից՝ արտաքին ակտիվների զգալի աճով, մյուս կողմից՝ պարտավորությունների նվազմամբ:

Պետական հատված

2004 թվականին ՀՀ պետական հատվածի արտաքին պարտավորություններն[17] ավելացել են 38.5 մլն դոլարով՝ նախորդ տարվա 24.7 մլն դոլարի փոխարեն:

Ընդ որում, պետական հատվածի վարկերի ներհոսքը տարվա ընթացքում կազմել է 87.7 մլն դոլար՝ նախորդ տարվա 92.3 մլն դոլարի փոխարեն: Ներհոսքի 94.2%-ը կազմել են Համաշխարհային բանկի, 5.7%-ը՝ Գերմանիայի կառավարության, 0.1%-ը՝ Եվրոպական բանկի կողմից տրամադրված վարկերը՝ նախորդ տարվա համապատասխանաբար՝ 92.7%, 6.9% և 0.4%-ի փոխարեն:


Տարվա ընթացքում պետական հատվածի վարկերի արտահոսքը (վարկերի մարումը) կազմել է 49.3 մլն դոլար՝ նախորդ տարվա 67.6 մլն դոլարի փոխարեն: Արտահոսքի ծավալների նվազումը հիմնականում պայմանավորված էր նախորդ տարի Ռուսաստանի հետ կնքած «Գույք՝ պարտքի դիմաց» պայմանագրի շրջանակներում 62.8 մլն դոլար նախկինում կուտակված պարտքի փոխարեն Ռուսաստանին Հայաստանի մի քանի պետական ձեռնարկությունների բաժնետոմսերի տրամադրմամբ, ինչի արդյունքում, համաձայն վճարային հաշվեկշռի կազմման մեթոդաբանության, այն գրանցվել է մի կողմից՝ որպես նշված գումարի չափով պարտքի մարում (հիմնական գումարի մարում), իսկ մյուս կողմից՝ ՀՀ-ում կատարված ներդրումներ, իսկ ընթացիկ տարում իրականացվել է այս պայմանագրի եզրափակիչ մասը՝ ընդամենը 31.0 մլն դոլար:

Առևտրային բանկեր

Առևտրային բանկերի զուտ արտաքին ակտիվներն[18] ավելացել են մոտ 30.1 մլն դոլարով: Ընդ որում, արտաքին ակտիվներն աճել են 62.9 մլն դոլարով, իսկ պարտավորությունները՝ 32.8 մլն դոլարով: Ակտիվների նման աճը պայմանավորված էր արտերկրներում ՀՀ առևտրային բանկերի կարճաժամկետ ավանդների (ներառյալ թղթակցային հաշիվները) զգալի աճով: Նշված ավանդների աճի պատճառը ՀՀ առևտրային բանկերում ռեզիդենտների՝ արտարժույթով ավանդների շուրջ 106.6 մլն դոլարով աճն էր: Ընդ որում, հիմնականում ավելացել են ռեզիդենտների՝ արտարժույթով ցպահանջ ավանդների ծավալները: ՀՀ առևտրային բանկերի ավանդների աճը արտերկրներում, տնտեսությունում ֆինանսական միջոցների նկատմամբ պահանջարկի պայմաններում, վկայում է, որ իրական հատվածի ֆինանսավորման ռիսկը դեռևս մնում է բարձր, և բանկերը գերադասում են ֆինանսական միջոցները ներդնել ավելի ցածր տոկոսադրույքով, սակայն արտասահմանյան բանկերի բարձր իրացվելի ակտիվներում:

Պարտավորությունների աճը առավելապես պայմանավորված էր ՀՀ առևտրային բանկերի կողմից ոչ ռեզիդենտներից ներգրավված կարճաժամկետ ավանդների ծավալների աճով:

Առևտրային բանկերի զուտ արտաքին ակտիվները 1996-2004 թվականներին



[17] *ՀՀ 2004 թվականի արտաքին պետական պարտքի մանրամասն վերլուծությունը ներկայացված է ՀՀ կենտրոնական բանկի 2004 թվականի II եռամսյակի բաներում հրատարակված՝ «ՀՀ արտաքին պարտքը 2004 թվականին» նյութում:*

[18] *Ի տարբերություն դրամավարկային վիճակագրության, վճարային հաշվեկշռի կազմման մեթոդաբանության համաձայն, առևտրային բանկերի արտաքին ակտիվներ և պարտավորություններ ձևավորող գործառնությունների փոփոխությունը հաշվարկվում է առանց վերագնահատման և ներառում է նաև ոչ փոխարկելի արտարժույթով գործառնությունները:*

Ուսումնասիրելով ՀՀ առևտրային բանկերի զուտ արտաքին ակտիվների դինամիկան՝ կարելի է նկատել, որ վերջին 6 տարիներին գրանցվել է զուտ արտաքին ակտիվների աստիճանական աճ, իսկ սկսած 2002 թվականից՝ արտաքին ակտիվները գերազանցել են արտաքին պարտավորությունները:

Նախկին ԽՍՀՄ երկրներում առևտրային բանկերի զուտ արտաքին ակտիվների դինամիկան ցույց է տալիս, որ երկրներում, կախված տարբեր հանգամանքներից, զուտ արտաքին ակտիվների միտումները տարբեր են: Զուտ արտաքին ակտիվների աճ է նկատվում Ադրբեջանում, Հայաստանում, իսկ մնացած երկրներում հակառակը՝ գրանցվել է զուտ արտաքին ակտիվների նվազում: Վերջին խումբ երկրներից Ղազախստանում, Մերձբալթյան երկրներում բանկերը զգալի միջոցներ են ներգրավում արտերկրներից, մասնավորապես՝ Ղազախստանում խոշորագույն բանկերը թողարկում են եվրոպարտատոմսեր, Մերձբալթյան երկրներում, օրինակ՝ արտաքին ակտիվների նվազումը հիմնականում պայմանավորված է պարտավորությունների՝ ոչ ռեզիդենտներից ներգրաված ավանդների աճով:

Աղյուսակ 17. Առևտրային բանկերի զուտ արտաքին ակտիվները (մլն դոլար) [19]

Երկիր	1999	2000	2001	2002	2003	2004
Ադրբեջան	93.3	289.3	98.1	100.8	115.6	116.1
Էստոնիա	-315.5	-360.8	-115.0	-477.7	-1432.8	-2750.0
Լատվիա	-8.0	-5.9	-378.3	-716.7	-1383.7	-2461.8
Լիտվա	-99.4	190.2	152.0	-103.5	-889.7	-876.3
Հայաստան	-42.6	-25.8	-15.0	28.7	70.6	112.2
Ղազախստան	338.5	3.8	-426.2	-470.4	-1902.7	-3529.1
Ռուսաստան	5967.0	7617.6	8732.2	4959.7	1291.9	-4947.5

Մասնավոր հատված (առանց առևտրային բանկերի)

Տարվա ընթացքում մասնավոր հատվածի այլ ներդրումները կազմել են -44.9 մլն ԱՄՆ դոլար, ընդ որում՝ ակտիվներն ավելացել են՝ 58.1 մլն դոլարով, իսկ պարտավորությունները՝ 13.1 մլն դոլարով: Ակտիվները 22.1 մլն դոլարով ավելացել են առևտրային վարկերի, 19.2 մլն դոլարով՝ վարկերի և 16.9 մլն դոլարով՝ կանխիկ արտարժույթի հաշվին: Նշված հոդվածներից վարկերը 2004 թվականին գրանցվել են առաջին անգամ և, ըստ էության, այս հատվածի համար նոր երևույթ է: Առևտրային վարկերի ձևով իրականացվող արտահանումը կազմել է ապրանքների արտահանման 3.0 %-ը՝ նախորդ տարվա 3.4%-ի փոխարեն:

Պարտավորություններում, նախորդ տարվա համեմատ, զգալիորեն նվազել են առևտրային վարկերը (22.4 մլն դոլարով) և մասնավոր հատվածի կողմից ներգրավված վարկերը (33.8 մլն դոլարով)՝ կազմելով համապատասխանաբար 23.8 մլն դոլար և -1.7 մլն դոլար: Առևտրային վարկերի ձևով կատարված ներմուծումը կազմել է ապրանքների ներմուծման 2.0 %-ը՝ նախորդ տարվա 4.1 %-ի փոխարեն:

Համախառն արտաքին պահուստներ


Վճարային հաշվեկշռի վերոնշյալ գործառնությունների արդյունքում գրանցված դրական մնացորդի շնորհիվ 26.3 մլն դոլարով ավելացել են ՀՀ կենտրոնական բանկի համախառն արտաքին պահուստները և կազմել 547.8 մլն դոլար[20]: Տարվա ընթացքում Կենտրոնական բանկը արտարժույթի շուկայից գնել է 18.6 մլն դոլարի արտարժույթ:


Ներմուծման ծածկույթի ցուցանիշը տարվա ընթացքում կազմել է 4.3՝ պահպանելով նախորդ տարվա մակարդակը: Հայաստանում նշված ցուցանիշը բարձր է միջազգային պրակտիկայում զարգացող երկրների համար որպես նշված ցուցանիշի ընդունելի սահման համարվող 3 ամսվա նշագծից:

Նախկին ԽՍՀՄ անդամ երկրներում 2004 թվականին ամենազգալի ներմուծման ծածկույթի ցուցանիշը գրանցվել է Ռուսաստանում: Ընդ որում, Ռուսաստանում նշված ցուցանիշը կտրուկ աճել է նախորդ տարվա համանման ցուցանիշի համեմատ, ինչը հիմնականում պայմանավորված էր նավթի միջազգային գների բարձրացման արդյունքում Ռուսաստան ներհոսող արտարժութային ակտիվների զգալի ծավալների շնորհիվ միջազգային պահուստների կտրուկ աճով:

---

[19] Առևտրային բանկերի զուտ արտաքին ակտիվների ցուցանիշների աղբյուրը դրամավարկային վիճակագրությունն է, որտեղ ներառված են հաշիվների վերագնահատումը, սակայն ներառված չեն ոչ փոխարկելի արտարժույթով գործառնությունները:
[20] Առանց սեփականաշնորհման հաշվի մնացորդի՝ փաստացի փոխարժեքով:





Համախառն արտաքին պահուստների բավարարության գնահատման մյուս կարևորագույն ցուցանիշը դրամային զանգված/համախառն արտաքին պահուստներ ցուցանիշն է, որը ցույց է տալիս, թե ինչպիսին է ամբողջ դրամային զանգվածը արտարժույթով փոխարկելու հնարավորությունը: Նշված ցուցանիշը 2004 թվականին կազմել է 54.7%՝ նախորդ տարվա 46.9%-ի փոխարեն:

Աղյուսակ 18. Դրամային զանգված / համախառն արտաքին պահուստներ (%)

Ցուցանիշ	1999	2000	2001	2002	2003	2004
Դրամային զանգված/համախառն արտաքին պահուստներ	35.3	44.2	45.1	49.1	46.9	54.7

Աղյուսակ 19. Ֆինանսական հաշվի կառուցվածքը (ծավալը՝ մլն ԱՄՆ դոլար, տեսակարար կշիռը՝ %)

Ցուցանիշ	2001		2002		2003		2004	
	ծավալ	տես. կշիռ	ծավալ	տես. կշիռ	ծավալ	տես. կշիռ	ծավալ	տես. կշիռ
Ուղղակի ներդրումներ (զուտ)	69.9	44.0	110.7	130.8	120.5	119.4	216.5	168.7
Պորտֆելային ներդրումներ (զուտ)	-5.7	-3.6	1.5	1.8	0.3	0.3	-2.9	-2.2
Այլ ներդրումներ (զուտ)	114.4	72.0	53.5	63.2	27.6	27.4	-59.0	-46.0
Պահուստային ակտիվների փոփոխություն	-19.6	-12.4	-81.1	-95.8	-47.3	-46.8	-26.3	-20.5
Ընդամենը	158.9	100.0	84.6	100.0	100.9	100.0	128.3	100

Վճարային հաշվեկշռի «Սխալներ և բացթողումներ» հոդվածում 2004 թվականին գրանցվել է բացասական ցուցանիշ՝ 1.0 մլն դոլար (նախորդ տարի ևս բացասական էր՝ 1.4 մլն դոլարով): Նշված ցուցանիշը բավականին փոքր ցուցանիշ է, եթե համեմատենք այլ երկրների նույն ցուցանիշի հետ:

Վերջին շրջանում երկրների կենտրոնական բանկերում նկատվում է վճարային հաշվեկշռի՝ մոնետար մոտեցմամբ ներկայացման միտում: Ավելին, Եվրոպական կենտրոնական բանկը ամսական պարբերականությամբ հրապարակում է եվրոգոտու վճարային հաշվեկշիռը՝ մոնետար մոտեցմամբ:

Մոնետար մոտեցմամբ վճարային հաշվեկշռի ներկայացումը ենթադրում է վճարային հաշվեկշռի ներկայացում ըստ տնտեսական գործունեություն իրականացնող սուբյեկտների, ընդ որում՝ սուբյեկտները տարանջատվում են ըստ ավանդային (ներառյալ կենտրոնական բանկը) և ոչ ավանդային կազմակերպությունների: Ընդհանուր առմամբ, նշված մոտեցմամբ վճարային հաշվեկշռի ներկայացումը ցույց է տալիս, թե որքան է ավանդային կազմակերպությունների մասնակցությունը վճարային հաշվեկշռի պակասուրդի կամ ավելցուկի ձևավորման մեջ: Այն արտացոլում է նաև դրամավարկային քաղաքականության ազդեցությունը արտաքին հաշվեկշռվածության ձևավորման վրա: Մոնետար մոտեցմամբ վճարային հաշվեկշիռը կարելի է ներկայացնել մի կողմից՝ որպես ոչ ավանդային կազմակերպությունների գործառնություններ, իսկ մյուս կողմից՝ ավանդային հաստատությունների զուտ արտաքին ակտիվների փոփոխություն: Ընդ որում, պետք է որոշակի ճշգրտումներ կատարվեն ավանդային կազմակերպությունների զուտ արտաքին ակտիվների փոփոխությունների նկատմամբ՝ վերագնահատման և ոչ գործառնությունների հետևանքով առաջացած փոփոխությունները հարթելու նպատակով:

Մոնետար մոտեցմամբ վճարային հաշվեկշիռը կազմվում է հետևյալ կերպ.

Ընթացիկ հաշիվ + Կապիտալ հաշիվ + Ոչ ավանդային կազմակերպությունների ֆինանսական գործառնությունների հաշվեկշիռ + Սխալներ և բացթողումներ = Ոչ ֆինանսական հատվածի վճարային հաշվեկշիռ

Կենտրոնական բանկի ֆինանսական գործառնություններ + Ավանդային կազմակերպությունների ֆինանսական գործառնություններ = Ավանդային կազմակերպությունների վճարային հաշվեկշիռ (ԶԱՄ)

Ոչ ֆինանսական հատվածի վճարային հաշվեկշիռ = Ավանդային կազմակերպությունների վճարային հաշվեկշիռ (ԶԱՄ)

Ժամանակահատված	Ընթացիկ և կապիտալ հաշիվ	Ուղղակի ներդրումներ*	Портфельային ներդրումներ	Այլ ներդրումներ	Սխալներ և բացթողումներ	Ոչ ավանդային կազմակերպությունների հաշվեկշիռ	Ավանդային կազմակերպությունների ԶԱՄ **	Ավանդային կազմակերպությունների ԶԱՄ***
2003-1	-48.3	17.9	-0.9	17.7	-5.6	-19.3	19.13	11.5
2003-2	-34.9	5.4	0.4	66.7	6.0	43.9	-43.9	-33.7
2003-3	-0.4	86.5	0.5	-44.6	-12.5	29.5	-29.5	-33.6
2003-4	-15.9	11.0	0.5	28.1	-10.4	34.2	-34.7	-31.0
2004-1	-68.7	65.9	-0.2	-23.9	6.9	-20.0	20.0	7.6
2004-2	-38.4	33.3	-0.3	-1.3	-1.2	-8.0	8.0	12.6
2004-3	-16.6	54.6	-2.8	-6.2	-2.0	27.0	-27.0	-27.9
2004-4	-3.6	63.2	0.9	5.0	-4.7	60.9	-60.9	-62.4

** Ըստ վճարային հաշվեկշռի մոնետար մոտեցմամբ ներկայացման մեթոդաբանության՝ այստեղ ներառվում են նաև ֆինանսական կազմակերպությունների բաժնետիրական կապիտալում կատարված օտարերկրյա ներդրումները:*

*** Ըստ վճարային հաշվեկշռի: Ներառված են ոչ փոխարկելի արտարժույթով գործառնությունները, ընդգրկված չեն վերագնահատման հետ կապված փոփոխությունները:*

**** Ըստ դրամավարկային վիճակագրության:*

Ինչպես երևում է աղյուսակից, 2003-2004 թվականներին ոչ-ավանդային կազմապերպությունների վճարային հաշվեկշիռը հիմնականում համապատասխանել է փողի զանգվածի ԶԱՄ փոփոխություններին, չնայած գոյություն ունեն որոշակի շեղումներ: Կարելի է նկատել նաև հետևյալ հանգամանքը. ընդհանուր առմամբ տարեկան կտրվածքով ոչ ավանդային կազմակերպությունները ավելի շատ արտաքին պարտավորություններ են ձեռք բերում, ի տարբերություն ավանդային կազմակերպությունների, որոնց արտաքին պահանջները գերակշռում են պարտավորությունները:

Միջազգային ներդրումային դիրք

2004 թվականի վերջի դրությամբ Հայաստանի զուտ ներդրումային դիրքը, ինչպես նախորդ տարիներին, այս տարի ևս բացասական էր և կազմել է 1686.3 մլն դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով 109.0 մլն դոլարով: Ընդ որում, ակտիվներն ավելացել են 191.5 մլն դոլարով, իսկ պարտավորությունները՝ 300.5 մլն դոլարով:

Ըստ ներդրումային դիրքի՝ Կառավարության կողմից ներգրավված վարկերի գծով պարտքը 2004 թվականի վերջի դրությամբ կազմել է 937.3 մլն դոլար, իսկ ԿԲ վարկերի գծով պարտավորությունները՝ 240.5 մլն դոլար: Արդյունքում, ընդհանուր պարտավորությունների շուրջ 1178.1 մլն դոլարը (44.2%) կազմել են պետության պարտավորությունները, իսկ մնացած 1486.6 մլն ԱՄՆ դոլարը (55.8%)՝ մասնավոր հատվածինը, որի մեջ զգալի են ուղղակի ներդրումներն (67.6%) ու առևտրային վարկերը (14.0%):

ՀՀ ռեզիդենտների կողմից տնօրինվող կանխիկ դրամական միջոցները, ըստ ՀՀ միջազգային ներդրումային դիրքի, կազմել են ընդամենը 19.6 մլն դոլար, մինչդեռ 2004 թվականին ՀՀ կենտրոնական բանկի կողմից բնակչության կանխիկ արտարժույթի գնահատման նպատակով իրականացված հարցման արդյունքները ցույց են տալիս, որ բնակչության կանխիկ արտարժութային միջոցները կազմում են մոտ 913 մլն դոլար, այսինքն՝ ՀՀ միջազգային ներդրումային դիրքում նշված ցուցանիշը մի քանի տասնյակ անգամ թերագնահատված է: Եթե նշված ցուցանիշը ճշգրտվի հարցումների արդյունքում ստացված ցուցանիշի հիման վրա, ապա որոշակի ճշգրտումների կարիք կունենան նաև վճարային հաշվեկշռի որոշ հոդվածներ, որոնք, ինչպես նշվել է, ևս թերհաշվառված են:

Աղյուսակ 20.Հայաստանի ներդրումային դիրքը 2003-2004 թվականներին (մլն դոլար)

Ցուցանիշ	Ներդրումային դիրքը 2003թ. վերջին	Ներդրումային դիրքը 2004թ. վերջին
Զուտ ներդրումային դիրքը	**-1577.3**	**-1686.3**
Ակտիվներ	**786.9**	**978.3**
Ուղղակի ներդրումներ արտերկրում	0.4	2.7
Պորտֆելային ներդրումներ	4.4	4.6
Այլ ներդրումներ	278.0	421.0
Առևտրային վարկ	66.0	73.1
Վարկեր	29.2	60.1
Կանխիկ դրամական միջոցներ և ավանդներ	180.8	282.5
Այլ ակտիվներ	1.9	5.4
Պահուստային ակտիվներ	504.1	550.0
Պարտավորություններ	**2364.2**	**2664.7**
Ուղղակի ներդրումներ ՀՀ-ում	793.4	1005.1
Պորտֆելային ներդրումներ	6.4	4.2
Այլ ներդրումներ	1564.4	1655.3
Առևտրային վարկ	229.7	208.6
Վարկեր	1194.7	1289.0
Դրամավարկային կարգավորման մարմիններ	230.4	240.5
Պետական կառավարման մարմիններ	860.2	937.3
Բանկեր	14.6	22.2
Այլ հատվածներ	89.6	89.1
Կանխիկ դրամական միջոցներ և ավանդներ	78.6	98.3
Այլ պարտավորություններ	61.3	59.4

Եզրակացություն

Ամփոփելով 2004 թվականի ընթացքում Հայաստանի արտաքին տնտեսական գործունեության հետևանքով ձևավորված վճարային հաշվեկշռի առանձին հոդվածների դրսևորած վարքագիծն ու դրանց միտումները՝ կարելի է նշել, որ տարվա ընթացքում զգալիորեն բարելավվել է արտահանման ծավալների աճը (աճել է 26.5%)՝ առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» հոդվածի ցուցանիշը հաշվի առնելու: Միևնույն ժամանակ, դեռևս մնում է բարձր ապրանքների

արտահանման բևեռացման մակարդակը: Որպես դրական երևույթ կարելի է դիտարկել նաև վերջին տարիներին գործընկեր երկրների կազմի փոփոխությունը (հակվածությունը դեպի եվրոպական երկրներ): Միևնույն ժամանակ, դեռևս բարձր են մասնավոր տրանսֆերտների ու սեզոնային աշխատողների աշխատանքի դիմաց ստացվող միջոցների ծավալները (որոնք, ըստ ՀՀ ԿԲ գնահատումների, դեռևս թերհաշվառված են): Նշված միջոցների ներհոսքի մեծ ծավալները նպաստում են ապրանքների ու ծառայությունների բացասական ճեղքվածքի ֆինանսավորմանը, սակայն, միևնույն ժամանակ, մեծացնում են երկրի խոցելիությունն արտաքին աշխարհի անբարենպաստ միտումների նկատմամբ: Օրինակ, ՀՀ բանկային համակարգով ստացվող նշված միջոցների միջինը մոտ 65.0 %-ը ստացվում է Ռուսաստանից:

Կապիտալի ու ֆինանսական հաշվում առկա միտումներից կարելի է նշել այն, որ դեռևս զգալի են պետական հատվածի գործառնությունները: Այլ հատվածների վարքագծից կարելի է եզրահանգել, որ առկա են օտարերկրյա ուղղակի ներդրումների հագեցման միտումներ, և նոր ներդրումների զգալի մասը իրականացվում է վերաներդրման հաշվին:

Խնդիրներից կարելի է առանձնացնել ինչպես վճարային հաշվեկշռում, այնպես էլ միջազգային ներդրումային դիրքում ֆինանսական հոսքերի թերհաշվառման խնդիրը, ինչը խեղաթյուրում է տնտեսության իրական պատկերը և, հետևաբար, նվազեցնում պաշտոնական վիճակագրության վրա կառուցվող դատողությունների և իրականացվող քաղաքականության ազդեցությունը:

Օգտագործված գրականություն

1. Հայաստանի Հանրապետության վճարային հաշվեկշիռ 2000-2004, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2005
2. Հայաստանի Հանրապետության միջազգային ներդրումային և արտաքին պարտքի դիրքերը 1998-2004, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2005
3. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2005 թվականի հունվար-փետրվարին, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2005
4. «ՀՀ կանխիկ դոլարայնացման մակարդակի գնահատում», ՀՀ ԿԲ բանբեր, 2005 թ. 1-ին եռամսյակ
5. International Financial Statistics September 2005, IMF, Washington, 2005
6. Ïëàòåæíûé áàëàíñ è âíåøíèé äîëã Ðîññèéñêîé Ôåäåðàöèè 2004 ãîä, Öåíòðàëüíûé áàíê ÐÔ, Ìîñêâà, 2005

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

•

ՀՀ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԲԱՆԿ

Երևան 10,
Վ. Սարգսյան փող. 6
http://www.CBA.am

•

Չափսը՝ 60 x 84 1/8:
24.18 պայմ. տպ. մամուլ:
Տպաքանակ՝ 120:

© Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ, 2005